Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

HRANT
ALEXANYAN

PLAYS

Stepanakert, 2021

ՀՐԱՆՏ
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԹԱՏԵՐԱ ԽԱՂԵՐ

Ստեփանակերտ, 2021

ՀՏԴ 821.19-2 Ալեքսանյան
ԳՄԴ 84(5Հ)-6
Ա 296

Ալեքսանյան Հրանտ
Ա 296 **Թատերախաղեր** / Հ. Ալեքսանյան
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի», 2021, 408 էջ:

Ժողովածուում ամփոփված են Հրանտ Ալեքսանյանի թատերախաղերը՝ տարբեր ժանրային ու թեմատիկ ընդգրկումներով:

Ստեղծագործությունները հիմնականում գրվել են վերջին հինգ տարիներին:

ՀՏԴ 821.19-2 Ալեքսանյան
ԳՄԴ 84(5Հ)-6

ISBN 978-9939-1-1334-0

© Հրանտ Ալեքսանյան, 2021

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԴԵՂԱՏՈՒՆ

ՄԽԻԹԱՐՎԱԾ ԽԵՆԹԸ

ԴԱՐՊԱՍԻ ՄՈՏ ՆՍՏԱԾ ԳԱՅԼԸ

ԱՐԱՄԱԶԴԻ ՅՈԹԵՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԸ

ԱՊՈԼՈՆԸ ԲԵՎԵՌԱՅԻՆ ՊՈՂՈՏԱՅՈՒՄ

ԴՐԱՄԱՆԵՐ

ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ ԿԱՄ՝ ՈՒՄ ՆՎԻՐԵԼ ՍԻՐՏԸ

ՆԱԻՐՅԱՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

ՏԻՐԱՆ. ՈՍԿԵԲԵՐԱՆ ԱՅՐԸ

ԱՐՔԱՆ ԵՎ ՀԵՐՈՍՆԵՐԸ

ԿԱՌԱՓՆԱՐԱՆԻՆ ԻՋԱԾ ԱՂԱՎՆԻՆ



ԳԻՇԵՐԱՅԻՆ ԴԵՂԱՏՈՒՆ

/սոցիալ-քաղաքական դրամա/

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

ՄԱՐՈՒԾ
ՄԻՀՐԱՆ
ԱՐԵՎԻԿ
ՏԱՐԵՑ ՁՈՒՅԳ՝ ԿԻՆ ԵՎ ՏՂԱՄԱՐԴ
ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ
ԱԿՆՈՑԱՎՈՐ ԿԻՆ
«ԾՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ» ԵՐԵՔ ԱԾԽԱՏԱԿԻՑ
ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ
ԿԱՐՄԻՐ ՓՈՂԿԱՊՈՎ ՏՂԱՄԱՐԴ
ՎԱՌ-ԿԱՐՄԻՐ ԾՐԹՆԵՐԿՈՎ ԱՂՋԻԿ
ՊԱՐՄԱՆՈՒՀԻ
ԵՐԻՏԱՍԱՐԴ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ
ՄԻՐՈՒՔՈՎ ՏՂԱՄԱՐԴ
ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ
ՏՆՕՐԵՆ
ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏԻԿԻՆ
ԿԻՍԱՃԱՂԱՏ ՏՂԱՄԱՐԴ
ԿԻԲԵՐՄԱՐՏԻԿ ՀԱԿՈԲ
ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ
ԵՐԿՈՒ ՈՍՏԻԿԱՆ

Գործողությունները տեղի են ունենում 21-րդ դարի 10-ական թվականներին, հայկական քաղաքում:

(Բեմում ժամանակակից դեղատանը վայել կահավորանք է: Պատերին փակցված դեղաբանական գովազդների հարեւանությամբ աչքի է զարնում «Առողջ հոգին ու առողջ մարմինը անչափ սիրում են միմյանց» խոշորատառ պաստառը: Բեմադրության ողջ ընթացքում, մերթընդմերթ, լսվում են՝ ասես հեռուներից խորհրդավոր տոնով արտաբերվող խոսքերը՝ «Դուք ականջ դրեք ձեր մարմնի ձայներին եւ նրանք ձեզ կհուշեն, թե ինչ է կամենում ձեր հոգին եւ որտեղ են թաքնված կյանքի իրական լույսերը»: Բայց ոչ ոք ասես չի լսում կրկնվող այդ ուղերձը, յուրաքանչյուրը խաղում է իր դերը՝ ամենեւին չարձագանքելով վերահնչող հորդորին:

Ներկայացումը սկսվում է Մարուշի (կապույտ խալաթով) եւ Արեւիկի (սպիտակ խալաթով) թեժ երկխոսությամբ):

ՄԱՐՈՒԾ- Չէ-չէ, Արեւիկ ջան, դու չպետք է գիշերը մնաս դեղատանը, քո փոխարեն ես տնօրենին պատասխան կտամ: Վերադարձիր տուն եւ մնա երեխայիդ մոտ: Հիվանդ փոքրիկը, նախեւառաջ, մոր կարիքն ունի:

ԱՐԵՎԻԿ- Մայրս երեխայի մոտ է, նա հոգ կտանի: Նանարիս ջերմությունն արդեն իջել է 38… Վերջին ամսվա մեջ ես շատ եմ բացակայել գործից, վախենամ՝ տնօրենը այլեւս չցանկանա ինձ տեսնել դեղատանը, եւ նա իրավացի կլինի՝ ո՞ւմ է պետք հաճախ բացակայող աշխատողը…

ՄԱՐՈՒԾ- Օրենքն ու արդարությունը փոքր երեխայամոր կողմն են: Հետո էլ՝ մորդ վրա պետք չէ լրիվ հույս դնել. նա տարեց կին է, հիվանդ, ինքը խնամքի ու հոգատարության կարիք ունի: Եվ ամենակարեւորը, Արեւ ջան. մի մոռացիր, որ մենք, իրոք, ամեն ինչ անում ենք հանուն երեխաների, դա մեզ համար կեղծ լոզունգ չէ… Աստված չանի, եթե երեխայիդ ջերմությունը նորից կտրուկ բարձրանա եւ դու կողքին չլինես, հետո ինքդ շատ մեղավոր կզգաս, իսկ երեխան մեծանալով՝ քեզ մեկ-մեկ կհիշեցնի, որ դու իր կողքին չէիր, երբ հիվանդ ջերմում էր...

ԱՐԵՎԻԿ- Նա դեռ չորս տարեկան չկա, կհիշի՞ որ…

ՄԱՐՈՒԾ- Չկասկածես. ցավի հիշողությունը շատ ուժեղ է, հատկապես՝ երեխաների մոտ:

(Ներս է մտնում տարեց զույգը՝ իրար ձեռք բռնած ու ժպտերես: Մի պահ շրջապատը զննելուց հետո նրանք, միաժամանակ, համերաշխորեն ասում են).

ՏԱՐԵՑ ԶՈՒՅԳ- Ձեզ բարի երեկո…

ՄԱՐՈՒԾ ԵՎ ԱՐԵՎԻԿ- Բարի երեկո:

ԱՐԵՎԻԿ *(ցածրաձայն, Մարուշին)*- Նրանք մեր ամենահետաքրքիր ու հա-

ձելի այցելուներից են: Հիմա դուք փորձեք նրանց սպասարկել. համարեք, որ ես էստեղ չեմ:

ՄԱՐՈՒԾ- Լավ:

ՏԱՐԵՑ ԿԻՆ- Ամուսնուս հիշողության դեղը կտա՞ք... Ճիշտ է՝ դա էնքան էլ չի օգնում, բայց մենք դեռ փորձում ենք:

ՄԱՐՈՒԾ- Հիշողության դե՞ղ... Դուք ունե՞ք դեղատոմս...

ՏԱՐԵՑ ԿԻՆ- Օ՛, ոչ: Ձեր դեղատանը գիտեն, թե մեզ ինչ է պետք, մենք վաղուց բժշկի մոտ չենք գնում... դեղատոմսի համար:

ՄԱՐՈՒԾ *(Արեւիկին, կամացուկ)*- Հիմա ես ի՞նչ պետք է անեմ...

ԱՐԵՎԻԿ- Լավ, թողեք՝ ես շարունակեմ... Վարդիթեր մայրիկ, ես հիմա կտամ ձեր ամուսնու դեղը: *(Վերցնում է մի դեղատուփ եւ այնտեղից հաբեր լցնում փոքր տոպրակի մեջ: Խնամքով այն փակում է եւ տալիս տարեց կնոջը):* Ահա եւ ձեր ամուսնու դեղը:

ՏԱՐԵՑ ԿԻՆ- Շնորհակալ եմ, աղջիկս... Ամուսինս ասում է, որ մենք ամուսնացած ենք արդեն 40 տարի եւ մեր հարսանիքի քավորը եղել է Անդոն վարժապետը: Ճիշտ չէ, մեր ամուսնությունն ընդամենը 15 տարեկան է: Մենք ջահել զույգ ենք, իսկ մեր հարսանիքի քավորը... նրա անունը չեմ հիշում, բայց վարժապետ Անդոնը չէր... Դե լավ, ձեզ բարի գիշեր:

(*Տարեց զույգը դանդաղ հեռանում է: Ցիասած մուտքին՝ շրջվում ու վերադառնում են վաճառասեղանի մոտ):*

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ- Ներեցեք, քիչ մնաց մոռանայի... Կնոջս դեղը կտա՞ք...

ԱՐԵՎԻԿ- Իհարկե, Հարութ հայրիկ, հիմա: *(Նույն դեղահաբերից լցնում է մի նոր տոպրակի մեջ եւ տալիս տարեց տղամարդուն):* Սա էլ՝ ձեր կնոջ դեղը:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ- Ապրես, աղջիկս: Սա կօգնի, չէ՞, կնոջս՝ վերականգնել հիշողությունը... Նա ասում է, թե մեր հարսանիքին իմ նվիրած հարսնազգեստը մոխրագույն էր... Չէ, ի՞նչ մոխրագույն... ձերմակ, գեղեցիկ, երկարափեշ զգեստ էր: Ես այն գնել եմ քաղաքի կենտրոնական հանրախանութից... Դե լավ, մենք գնանք, դեռ պետք է մի քանի բարեկամների այցելենք:

ԱՐԵՎԻԿ- Բարի գիշեր եւ հաջողություն ձեզ: Ձեր հիշողությունը... *(Ընդհատում է խոսքը, Մարուշին).* Ես որ նրանց հիմա դժբախտ չեմ համարի:

(Տարեց զույգը հեռանում է):

ՄԱՐՈՒԾ- Ովքե՞ր են էդ մարդիկ, մեր քաղաքի՞ց են...

ԱՐԵՎԻԿ- Այո: Նրանք արդեն 10 տարի ծերանոցում են ապրում, մեկ տարի առաջ էնտեղ էլ ամուսնացան:

ՄԱՐՈՒԾ- Իսկ ու՞ր են նրանց ընտանիքները... Երեխաներ ունե՞ն...

ԱՐԵՎԻԿ- Կինը վաղուց միայնակ է. առաջին ամուսնությունից, ասում են, տղա երեխա ուներ, որ մահացել է 4 տարեկանում: Հետո չի ծննդաբերել, եւ ամուսինը նրան թողել է: Իսկ տղամարդը երեք երեխա ունի՝ երկու որդի եւ աղջիկ: Նրա կինը մահացել է մոտ 15 տարի առաջ: Հարութ հայրիկը մենակ է մնացել, չգիտեմ՝ զավակները չեն տիրություն անու՞մ, թե՞ հայրը չի ցանկանում նրանց խնամքին մնալ…

ՄԱՐՈՒԾ- Ոչ մի խելամիտ ծնող չէր ցանկանա զավակներից առանձին ապրել: Երեւի նրանց վերաբերմունքը Հարութ հայրիկին չի գոհացրել, եւ նա գերադասել է ծերանոցը… Տխուր է: Ո՞նց կարող են ընտանիքից դուրս մղվել ծնողահարգությունն ու ծնողասիրությունը: Ախր մեր զորությունը ավանդական, կայուն ընտանեկան-հարազատական կապերի մեջ է: Երբ քայքայվում են ընտանիքները, քայքայվում են նաեւ ազգերն ու երկրները… Ես չէ՝ իմաստուն մարդիկ են դա ասել:

ԱՐԵՎԻԿ- Ի՞նչ ասեմ, նոր ժամանակներ, նոր բարքեր…

ՄԱՐՈՒԾ- Էդ նոր գեշ բարքերը մենք ստեղծում՝ ժամանակների վրա ենք բարդում: Ժամանակը մենք ենք: *(Մտախոհ լռում է):* Իսկ ի՞նչ դեղեր տվեցիր նրանց…

ԱՐԵՎԻԿ- Սովորական վիտամիններ: Դրանք անվճար տալիս ենք նման դեպքերում:

ՄԱՐՈՒԾ- Տնօրենը գիտի՞…

ԱՐԵՎԻԿ- Հա, հազիվ համոզեցինք նրան, որ էդպիսի իրավիճակներում դա լավ ելք է: Ի՞նչ վճար վերցնես էդ մոլորվածներից…

ՄԱՐՈՒԾ- Հետաքրքիր է, որ նրանք գիշերն են գալիս դեղերի համար… Հասկանում եմ՝ անքնություն ունեն, հիշողության խափանումներ եւ…

ԱՐԵՎԻԿ- …եւ մոտեցող մահվան շունչը… Նրանք արթուն վիճակում են ուզում վայելել կյանքի մնացորդը: Եթե այսօր նրանք նորից հայտնվեն, չզարմանաք: Նրանք ուրիշ տեղ չունեն գնալու. ծերանոցն է եւ մեր դեղատունը:

ՄԱՐՈՒԾ- Լավ, դու գնա, ուշանում ես, վազիր երեխայի մոտ… Ո՞նց ես տուն հասնելու, տաքսի կանչե՞մ…

ԱՐԵՎԻԿ- Ծնորհակալ եմ, պետք չէ, ոտքով մի 10 րոպեից տուն կհասնեմ: *(Սպիտակ խալաթը հանում, հագնում է կանացի բաճկոն: Հայելու առջեւ մի փոքր իրեն հարդարում է՝ մազերն արձակելով):* Աղջիկս սիրում է, երբ մազերս արձակում եմ… Դե ես գնամ, բարի գիշեր: *(Մոտենում է ելքին):*

ՄԱՐՈՒԾ- Բարի գիշեր, Արեւ ջան, աղջկադ իմ կողմից պաչիկ արա եւ մաղթիր արագ ապաքինում:

ԱՐԵՎԻԿ- Լավ, անպայման: *(Ետ՝ մոտենում է Մարուշին):* Մարուշ մորքուր, համենայն դեպս, գուցե՞ զանգենք Ծուշիկին, որ քեզ ընկերակցի,

հը՞... Դու նրան չես հավանում, գիտեմ, բայց նա կգա եւ կողքիդ կմնա ողջ գիշեր, չի մերժի, անհոգի աղջիկ չէ:

ՄԱՐՈՒԾ- Գուցեեւ կգա... չեմ ուզում, նա, ո՞նց ասեմ՝ շատ է մատչելի, բոլորի հետ կարող է գործարքի մեջ մտնել: Ինչպես ասում են՝ ես նրա հետ մարտի չեմ գնա. գիշերը՝ հատկապես: Հետո էլ՝ Շուշիկին ինչու՞ անհանգստացնենք: Ես մենակ կհերթապահեմ, սրանից շատ ավելի ծանր գիշերներ եմ հերթապահել:

ԱՐԵՎԻԿ- Մենք դժվար հաճախորդներ ունենք, նրանք ոնց որ թե շատանում են գիշերը: Նրանց մեծ մասին դուք դեռ չգիտեք:

ՄԱՐՈՒԾ- Անհոգ մնա, դիրքս լավ կպահեմ: Դե վազիր... Հա, քիթդ էլ մի կախիր, Սարոդ անպայման կվերադառնա: Հետո ի՞նչ, որ մի վեց ամիս քեզ չի զանգել: Երեւի գործերն էնքան էլ լավ չեն, քաշվում է. կկարգավորի ու կգա: Քեզ նման արեւից միայն հիմարը կհրաժարվի: Ոչ մի օտարուհի քեզ փոխարինել չի կարող:

ԱՐԵՎԻԿ *(թույլ ժպտում է)*- Չգիտեմ... Բարի գիշեր, Մարուշ մորքուր, հանգիստ հերթապահություն ձեզ:

ՄԱՐՈՒԾ- Բարի գիշեր:

(Արեւիկը շտապ դուրս է գնում: Մարուշը սկսում է որոշ վերադասավորումներ կատարել դեղադարակներում, կամացուկ երգելով՝ «Իմ փոքրիկ քաղաքում իմ մեծ սերն է ապրում...»: Ներս է մտնում թմրադեղի գնորդը):

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Բարի երեկո... բոլորիդ, ձեր ցավը տանեմ...

ՄԱՐՈՒԾ *(ընդգծված զուսպ)*- Բարի երեկո...

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Դուք ո՞վ կլինեք, քուրո ջան... Նոր աշխատո՞ղ եք:

ՄԱՐՈՒԾ- Այո, ի՞նչ եք կամենում...

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Իսկ կասե՞ք ձեր չքնաղ անունը:

ՄԱՐՈՒԾ *(չոր)*- Մարուշ:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Հոյակա՛պ, հոյակա՛պ... Դուք ճիշտ նկատեցիք, Մարուշ քույրիկ, ես կամենում եմ...

ՄԱՐՈՒԾ- Ի՞նչ...

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ *(կռանում է եւ կամաց ինչ-որ բան ասում Մարուշին)*- Ընդամենը 10 սրվակ... մի շաբաթվա պաշարս...

ՄԱՐՈՒԾ- Դեղատոմս ունե՞ք...

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Հիանալի հարց՝ դեղատո՛մս... Լիովին անկեղծ կլինեմ՝ ես զուրկ եմ դեղատոմսից, ես ան-դե-ղա-տոմս եմ... Էդպիսին է իմ ներկա կարգավիճակը...

ՄԱՐՈՒԾ- Առանց դեղատոմսի, էն էլ կնքված, ԼՍԴ վաճառելը կտրականապես արգելվում է:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Կտրականապե՛ս... Ճիշտն ասած՝ անդուր բառ է, մի տեսակ կացնային՝ կտրականապես...

ՄԱՐՈՒԾ- Կացնային չէ, ուղղակի օրինական է: Կբերեք պահանջվող դեղատոմսը՝ կստանաք թմրադեղը:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Ոնց չեմ սիրում, երբ «դեղատոմս» եւ «գնել» բառերը հայտնվում են իրար մոտ:

ՄԱՐՈՒԾ- Ի՞նչ է՝ դուք անվճա՞ր եք ստանում էդ դեղը…

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Չէ, ի՞նչ անվճար, ես նույնիսկ հաճախ ավելին եմ տալիս… երբ փող է լինում մոտս… Տեսնեիր, թե Շուշիկի աչքերը ոնց են կայծկլտում նման պահերին… Հըմ, ասում եք՝ Շուշիկը էսօր չի՞ գա…

ՄԱՐՈՒԾ- Շուշիկն աշխատանքի կլինի առավոտյան 9-ից:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Շատ ուշ է, քուրո ջան, շատ ուշ… *(Գլուխը կախ՝ մտածկոտ ու նյարդային ետ ու առաջ է քայլում վաճառասրահում: Կտրուկ կանգնում եւ աղերսանքով դիմում է Մարուշին).* Գոնե մի սրվակ… դրա փողն ունեմ… Կրկնակին, եռակին կտամ…

ՄԱՐՈՒԾ- Ոչ, ես նման անօրենություն չեմ անի: Գումարած, որ ձեզ հիմա թմրադեղ տալով՝ կնպաստեմ ձեր հիվանդության խորացմանը: Նման սխալ թույլ չեմ տա, դա իմ սեփական կանոնագրքի մեջ չի մտնում:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Կանոնագի՛րք, ասել է թե՝ սկզբունքնե՛ր… Իսկ ո՞ր սկզբունքով եք թույլ տալիս, որ ես տանջահար լինեմ մինչեւ առավոտյան 9-ը…

ՄԱՐՈՒԾ- Դեռ հարց է՝ դուք էդ ժամին կստանա՞ք ձեր ուզածը, թե՝ ոչ…

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Ոնց թե, Շուշիկը ինձ կփրկի:

ՄԱՐՈՒԾ- Չի փրկի, դա իսկի էլ փրկություն չէ: Ձեզ պետք է բուժվել, որ այլեւս էսպիսի տհաճ իրավիճակներում չհայտնվեք: Դուք պետք է վերականգնեք ձեր խաթարված առողջությունը:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Պետք է, պետք է… Ինձ պետք է էդ դեղի ընդամենը մեկ սրվակ, հիմա, միայն մեկ սրվակ… Ինչու՞ եք անգութ իմ նկատմամբ, ես ձեզ երբեւէ վատություն չեմ արել:

ՄԱՐՈՒԾ- Հիմա որ՝ անում եք: Գթության մասին էլ սխալ պատկերացում ունեք. եթե դուք իմանայիք, թե ինչ է իսկական գթությունը… այն, որ հիմա ուզում եմ կիրառել ձեր հանդեպ…

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Լավ, քեզ հասկացա, ես դեռ էդքան չեմ բթացել, քուրո ջան: Կարո՞ղ եմ մի քանի րոպե նստել էստեղ, շունչ առնել ու նոր գնալ…

ՄԱՐՈՒԾ- Կարող եք: Հանգստացեք, վերադարձեք տուն, իսկ առավոտյան՝ ուղիղ դիսպանսեր: Սա է իմ պայմանը:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Տուն, դիսպանսե՛ր… Ծանրագույն բառեր: *(Լռում է եւ աչքի պոչով զննում դեղադարակները: Մարուշը վերսկսում է կիսատ թողած գործը՝ վերադասավորում է դեղատուփերը: Թմրադեղի գնորդի ուշադրությունը սեւեռվում է դեղադարակներից մեկին: Ակնթարթորեն նա ոստ-*

նում է տեղից, անցնում վաճառասեղանից այնկողմ, ճանկում մի դեղատուփ, ետ դառնում եւ աճապարում դեպի ելքը: Բայց անակնկալ նա բախվում է ներս մտնող Միհրանին եւ տապալվում գետնին: Մարուշը ապշած ու քարացած՝ հետեւում է կատարվածին):

ՄԻՀՐԱՆ- Էս ո՞վ է… *(Կռանում եւ ուզում է ճանաչել ընկածին):* Էս ու՞ր է փոթորկի բերանն ընկած տակառի պես գլորվում… Վեր կաց, ընկեր, վեր կաց՝ տեսնենք ինչ եղավ քեզ… Կարո՞ղ ես ոտի կանգնել…

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Հա… *(Չարացած, դեռեւս պառկած դիրքից նայում է Միհրանին):* Դու էլ իմ բախտից տնկվեցիր դեմս… ախպերս: *(Վեր է կենում, ծուլորեն թափ տալիս շորերը, մոայլ նայում մերթ Մարուշին, մերթ Միհրանին):* Ձեր թույլտվությամբ ես գնամ, հա՞…

ՄԱՐՈՒԾ *(սթափվելով ու զգաստանալով)*- Ոչ, ետ դարձեք, վերադարձրեք դեղատուփը… Միհրան, օգնիր նրան, որ հետ գա:

ՄԻՀՐԱՆ *(զարմացած)*- Մարու՞շ… Դու հիմա էստե՞ղ ես աշխատում…

ՄԱՐՈՒԾ- Հա, Միհրան… Հետ բեր էդ ճողոպրողին, խնդրում եմ:

ՄԻՀՐԱՆ- Ընկեր, առաջ: *(Բռնում է թմրադեղի գնորդի թեւից եւ փորձում թեթեւակի առաջ հրել: Վերջինս անշարժ կանգնած տեղում՝ չլսելու է տալիս հրահանգը, նայում է շուրջը, ապա փորձում պոկվել Միհրանի ձեռքից: Միհրանը ետեւից բռնում է նրան, երկու ձեռքը ոլորում ետ):* Չէ, ընկեր, չես փախչի: Եթե Մարուշն ասել է, ուրեմն դու դեռ պետք ես էստեղ… Դե հիմա խելոք մոտեցիր վաճառասեղանին: Զգուշացնում եմ՝ փախուստի նոր փորձ չանես, թե չէ արդեն ստիպված կլինեմ դիմել կարատեի…կամ ուշուի… նման մի բան: Ես դեռ լավ մարզավիճակում եմ:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Լավ, ախպերս, հասկացա, ձեռքերս էդքան ուժեղ մի ոլորիր: *(Միհրանի դրդմամբ մոտենում է Մարուշին եւ նրան վերադարձնում դեղատուփը):*

ՄԱՐՈՒԾ- Հիմա ո՞նց վարվենք ձեզ հետ… Նախ, ուզում էիք դեղատնային կարգը խախտել, ապա՝ ինձ կաշառել, իսկ վերջում գողության փորձ կատարեցիք:

ՄԻՀՐԱՆ- Ա՛, ունիվերսալ տղա է երեւում, բազմաշնորհ…

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Խնդրում եմ, քուրո ջան, ինձ ոստիկանություն չհանձնեք:

ՄԱՐՈՒԾ- Չէ, ոստիկանության ժամանակը չէ, ձեզնով շտապ պետք է զբաղվի այլ ծառայություն… Միհրան, մի բոպե:

(Մարուշն ու Միհրանը առանձնանում են եւ ցածրաձայն խորհրդակցում՝ շարունակ հետեւելով թմրադեղի գնորդին: Ապա Մարուշը վերադառնում է իր տեղը, իսկ Միհրանը բջջային հեռախոսով զանգում է եւ խոսում):

ՄԻՀՐԱՆ- …Այո, այո, տիկին Մարուշի հանձնարարությամբ… Այո, նա էստեղ է… Շատ լավ, սպասում ենք: *(Մարուշին)* Քեզ իսկույն ճանաչեցին,

ասացին՝ մեր հերոս բուժքույրն է, նրա խոսքը մերժել չենք կարող:

ՄԱՐՈՒԾ- Դե ի՞նչ հերոս, հերիք է, մարդիկ կորցրել են չափի զգացումը:

ՄԻՀՐԱՆ- Ճիշտն ասած՝ ես 03-ի էդ կնոջ հետ լրիվ համաձայն եմ. հերոս չեք՝ ի՞նչ եք: Սա ասում եմ նաեւ իմ խիստ չափանիշներով… Պատերազմի ժամանակ ծառայել եք բուժական գումարտակում, նույն պատերազմում կորցրել եք ձեր ամուսնուն՝ քաջ ու լուսահոգի Միերին… Երկար տարիներ բուժքույրություն եք արել բանակի հոսպիտալներում, միայնակ մեծացրել եք… Մարուշ ջան, քանի՞ երեխա ունեք, մոռացել եմ, կներեք…

ՄԱՐՈՒԾ- Երեք:

ՄԻՀՐԱՆ- Միայնակ մեծացրել եք երեք երեխա:

ՄԱՐՈՒԾ- Չէ, էնքան էլ մենակ չեմ մեծացրել. օգնել են Միերի ծնողները, նաեւ՝ իմ ծնողները, օգնել են ընկերներ ու բարեկամներ, պետությունը, առանձին բարերարներ ու կազմակերպություններ. բոլորին երախտապարտ եմ: Բայց ընտանիքի հոր բացակայությունը միշտ սրությամբ զգացել ենք, էդ բաց տարածությունը ոչնչով չես լցնի… Թող ոչ մի կին չպարծենա, թե միայնակ կարող է երեխաներ մեծացնել ու դաստիարակել… համեստ աշխատավարձով ու նպաստով, էսպիսի դժվար պայմաններում:

(Թմրադեղի գնորդը կրկին փորձում է փախուստի դիմել, սակայն Միհրանը վրա է հասնում եւ ճարպիկ հնարքով գետնում նրան):

ՄԻՀՐԱՆ- Ախր ու՞ր ես ճողոպրում, այ ծակվող…

ՄԱՐՈՒԾ- Միհրան, մի վիրավորիր:

ՄԻՀՐԱՆ- Ասացին, չէ՞, հանգիստ տեղդ մնա…

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ *(խիստ սրտնեղած)*- Էս անգամ ուրիշ նպատակով եմ ուզում փախչել:

ՄԻՀՐԱՆ- Ի՞նչ նպատակով…

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Ես ճանաչեցի նրան *(ցույց է տալիս Մարուշին)*… Պատերազմի օրերի հայտնի բուժքույրն է, ինձ էլ է վիրակապել ու խնամել իրենց դաշտային հոսպիտալում… Չեմ ուզում, որ նա ինձ ճանաչի:

ՄԻՀՐԱՆ- Մարու՞շ… քո նախկին վիրավորներից է:

(Մարուշը մոտենում է թմրադեղի գնորդին ու մի պահ ակնդետ նայում նրան):

ՄԱՐՈՒԾ- Գարի՞կ… էս ի՞նչ օրն ես ընկել… Վեր կաց:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ *(ոտքի է կանգնում, ինքն իրեն)*- Ճանաչեց… էս ո՞նց խայտառակվեցի…

ՄԱՐՈՒԾ- Ականջատակիդ սպին մնացել է… Շատ լուրջ էիր վիրավորված, բայց չէիր կորցնում քեզ, հաճոյախոսություններ էիր անում:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Երանի՞ չէր էն օրերին…

ՄԱՐՈՒԾ- Երանի՞… Էդ ի՞նչ երանիի մասին ես խոսում… Մի մոլորեցրու քեզ ու ուրիշներին:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Հա, երանի:

ՄԱՐՈՒԾ- Մեր տղերքն ու հարազատներն էին զոհվում, մեր արյունն էր հոսում, մեր բնակավայրերն էին ավերվում, մեր ազատությունն էր բռնադատվում... վերջապես՝ մեզ ուզում էին բնաջնջել: Էդ ամենի մեջ երանություն կա՞...

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Բայց միասնական էինք ու հավատով, իրար հավասար էինք բոլորս, նույն նպատակին մղված:

ՄԱՐՈՒԾ- Ազատամարտի ժամանակ տականքներ ունեինք նաեւ մենք. դասալիքներ, վախկոտներ ու մորթապաշտներ, որ դուրս չէին գալիս նկուղներից կամ փախել էին երկրից... Փառք Աստծո, նրանք փոքրաթիվ էին, մեծամասնությունը կողք-կողքի մարտնչում էր: Բայց երանի մի տուր, մենք ոչնչացման ու հայրենազրկման վտանգի առաջ էինք կանգնած...

(Ներս են մտնում «Շտապ օգնության» երեք աշխատակից՝ երկու կին եւ մի տղամարդ: Բարեւում են):

Շ.Օ. 1-ին աշխատակից- Ո՞վ է մեր այցելուն...

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Ես եմ... Բուժքույր Մարուշ, հիմա գնա՞մ նրանց հետ, թե՞...

ՄԱՐՈՒԾ- Գնա, Գարիկ, քեզ շտապ բուժվել է պետք: Ամեն ինչ լավ կլինի: Կգանք քեզ տեսության... չէ՞, Միհրան...

ՄԻՀՐԱՆ- Իհարկե, ժենգյալով հաց կտանենք նրան:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ- Դե լավ... Դու նույն ընտիր բուժքույրն ես: Գնացի:

(Թմրադեղի գնորդը «Շտապ օգնության» աշխատակիցների ուղեկցությամբ դուրս է գնում):

ՄԱՐՈՒԾ- Համոզված եմ՝ նա կբուժվի: Դիսպանսերից չի փախչի... Լավ, իսկ դու ինչու՞ ես դեղատուն եկել, Միհրան, առողջական խնդիրներ ունե՞ս...

ՄԻՀՐԱՆ- Ո՞նց ասեմ... Հիմա իմ շատ գիշերներ ցերեկվանից առանձնապես չեն տարբերվում. արդեն տարուց ավել է՝ ստեղծագործելու ցանկությունը չունեմ... Նոր զբաղմունքի եմ անցել:

ՄԱՐՈՒԾ- Ի՞նչ զբաղմունք...

ՄԻՀՐԱՆ- Երեկոյան ժամերին սեփական մեքենայովս դուրս եմ գալիս տաքսի ծառայության:

ՄԱՐՈՒԾ- Ահա թե ինչ. գիշերները, ուրեմն, տաքսիստ, ցերեկը՝ նկարիչ:

ՄԻՀՐԱՆ- Ավելի ճիշտ՝ ցերեկը պարապ-սարապ, երեկոյան՝ տաքսիստ:

ՄԱՐՈՒԾ- Լավ չէ՞՝ էդ պարապ-սարապության փոխարեն ցերեկներն էլ տաքսիստություն անես, մինչեւ ճգնաժամդ անցնի...

ՄԻՀՐԱՆ- Ցերեկները մի տեսակ ամաչում եմ:

ՄԱՐՈՒԾ- Հասկանում եմ: Իսկ դասաժամե՞րդ... Վերջին անգամ, երբ հանդիպեցինք, ասացիր, որ դասավանդում ես նաեւ:

ՄԻՀՐԱՆ- Դա երեք տարի առաջ էր… Թողեցի դուրս եկա: Գեղանկարչության բաժնի վարիչի հետ անհնար է աշխատել, տգետի ու կաշառակերի մեկն է: Ես պնդում էի, որ ավելի լավ է 3-4 շնորհալի ուսանող ունենալ եւ կենտրոնանալ նրանց զարգացման վրա, քան ընդունել 2 տասնյակ ապաշնորհ երեխեքի եւ ժամանակ ու միջոցներ վատնել նրանց վրա… Գիտե՞ս՝ ինչ էր պատասխանում էդ ողորմելին. «Դու ժամանակակից մտածելակերպ չունես… եթե քեզ չի բավարարում, հեռացիր»: Եվ հեռացա:

ՄԱՐՈՒԾ- Երեւում է՝ դեռ շատ ես զայրացած նրա վրա:

ՄԻՀՐԱՆ- Հա, ո՞նց չզայրանամ. ախր արդեն 10 տարուց ավելի է՝ էնտեղ էդ ստահակը վարիչություն է անում, բայց մինչ օրս ոչ մի լավ ու հեռանկարային գեղանկարիչ չի թողարկել, եղած հատուկենտ շնորհալի ուսանողներն էլ կորչում են նրա ցածրակարգ վարժապետության մամլիչի տակ:

ՄԱՐՈՒԾ- Չգիտեմ, ես ձեր ասպարեզում լավ չեմ կողմնորոշվում, բայց քո պրոֆեսիոնալիզմին չեմ կասկածում:

ՄԻՀՐԱՆ- Ծատերը հաճույքով էդ պրոֆեսիոնալիզմն էլ ոտի տակ կտան:

ՄԱՐՈՒԾ- Դե էդքան հոռետես մի եղիր… Լավ, ավելի հասկանալի հարցերից խոսենք: Եզրակացնում եմ, որ նկարներիդ վաճառքն այժմ խիստ նվազել է, եւ ընտանիքդ փորձում ես կերակրել տաքսիով, հա՞…

ՄԻՀՐԱՆ- Ես հիմա մենակ եմ ապրում, Մարուշ:

ՄԱՐՈՒԾ- Ինչու՞, ի՞նչ է պատահել…

ՄԻՀՐԱՆ- Բաժանվեցինք: Կինս աղջկաս վերցրեց ու՝ թըը՛ռ Ամերիկա…

ՄԱՐՈՒԾ- Ցավում եմ… Իսկ տղա՞դ…

ՄԻՀՐԱՆ- Բեռլինում է, տեղի կոնսերվատորիայում ստաժիրովկա է անցնում… Ասում է՝ կվերադառնամ ու կդառնամ Հայոց երկրի թիվ մեկ դիրիժորը:

ՄԱՐՈՒԾ- Ողջունելի երազանք… Բայց անկեղծորեն ասա, Միհրան, հավատո՞ւմ ես, որ տղադ կվերադառնա: Գերմանիայում, ախր, կարող է գայթակղվել…

ՄԻՀՐԱՆ *(մի պահ մտածելով)*- Տղայիս որ հավատում եմ:

(Հապճեպ ներս է մտնում ակնոցավոր, միջահասակ մի կին եւ Մարուշին մեկնում դեղատոմսը):

ԱԿՆՈՑԱՎՈՐ ԿԻՆ- Ունե՞ք էդ դեղից…

ՄԱՐՈՒԾ *(նայելով դեղատոմսը)*- Ունենք:

(Ակնոցավոր կինը նայում է Միհրանին, ապա թեքվում եւ շշուկով խոսում է Մարուշի հետ: Վերջինս գլխով համաձայնության նշան է անում, վերցնում դեղատուփերից մեկը եւ տալիս ակնոցավոր կնոջը: Նա արագ ուղղվում է դեպի դուրս: Հասնելով դռանը՝ շրջվում եւ վերադառնում է: Մարուշին կամաց, բայց լսելի ասում է).

ԱԿՆՈՑԱՎՈՐ ԿԻՆ- Գրեք իմ հեռախոսահամարն ու հասցեն, որ ձեզ մոտ կասկածներ չլինեն: Դուք նոր աշխատող եք:

ՄԱՐՈՒԾ- Պետք չէ, մի անհանգստացեք: Ես ձեզ վստահում եմ:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ԿԻՆ- Լավ, շնորհակալ եմ: *(Հեռանում է):*

ՄԻՀՐԱՆ- Ինչ-որ արտակարգ դե՞պք է…

ՄԱՐՈՒԾ- Ոչ, շատ սովորական դեպք է: Կինը փող չունի, իսկ ամուսնուն շտապ դեղ է պետք, ասթմատիկ է: Պարտքով տվեցի դեղը, ասաց՝ փողը կտա մի շաբթից, երբ ամուսնու թոշակը կստանան: Դե, գիտես, հաճախ են լինում այդօրինակ դեպքեր, մարդիկ խանութներից հաց ու մթերք են վերցնում պարտքով:

ՄԻՀՐԱՆ- Գիտեմ, իհարկե: Ուրեմն ձեր դեղատունն էլ ունի «նիսյայի» տետր:

ՄԱՐՈՒԾ (*թեթեւակի ծիծաղում է)*- Պարտքերի տե՞տրը…

ՄԻՀՐԱՆ- Հա:

ՄԱՐՈՒԾ- Չգիտեմ՝ մեր աշխատակիցները պահու՞մ են նման տետր, թե՝ չէ, ես որ՝ չեմ պահում. մի տեսակ վիրավորական է… Մի շաբաթ է՝ էստեղ եմ, արդեն 4 հոգու պարտքով դեղ եմ տվել: Հերթապահության վերջում իմ դրամապանակից լրացնում եմ դրամարկղը, որ պակաս գումար չգրանցվի: Ժամանակին, պատահել է, ես էլ եմ «նիսյա գրվել»:

ՄԻՀՐԱՆ- Հաշիվը պետք է պահել գրավոր, բա որ մոռացա՞ր…

ՄԱՐՈՒԾ- Նրանք հո պարտավոր են հիշել:

ՄԻՀՐԱՆ- Դե, մարդիկ են, կարող է եւ մոռանան, անգամ՝ դիտավորյալ, հատկապես՝ կարիքի դրդմամբ:

ՄԱՐՈՒԾ- Ես կարծում եմ, որ կարիքն ու ապահովությունը մարդկային իրական նկարագրի հետ արմատական կապ չունեն: Լավ մարդը լավ է մնում նաեւ թշվառության օրոք, իսկ այլանդակը նույնն է եւ անապահովության, եւ գերճոխության մեջ:

ՄԻՀՐԱՆ- Ճշմարիտ ես: Ոմանք ուղղակի մակերեսային տպավորությամբ ասում են, թե կարիքավորները չարացած ու անհուսալի մարդիկ են, իսկ ունեւորները կիրթ ու բարեհոգի են… Մինչդեռ ես տեսել եմ ունեւորների չարացածությունն ու գծուծությունը: *(Դադար):* Մարուշ, դու չասիր, թե ինչու ես էստեղ, ինչո՞ւ ես լքել հոսպիտալը:

ՄԱՐՈՒԾ- Չեմ լքել: Իսկապես կուզենայի դեռ շարունակել ծառայությունս: Բայց հիսունս լրացավ եւ ինձ զորացրեցին: Հիմա թոշակառու եմ, իսկ աշխատել պետք է:

ՄԻՀՐԱՆ- Այ քեզ բան… Ուրեմն՝ արդեն հիսունն անց ես, իսկ տեսքից… ըմմ… հազիվ քառասուն ես երեւում:

ՄԱՐՈՒԾ- Դե լավ, կատակներդ քեզ պահիր: Սովորական ընթացքով ծերանում եմ:

ՄԻՀՐԱՆ- Չէ-չէ, միանգամայն անկեղծորեն եմ ասում. դու դեռ երիտասարդ ու գեղեցիկ ես, ամենեւին էլ հիսունամյա կնոջ տեսք չունես: Դժվար կյանքն ասես շրջանցել է քեզ, վախեցել՝ աղավաղել դեմքդ ու մարմինդ: Դեռ հմայիչ ես, ցանկալի, կարող ես նորահարսի տեղ անցնել:

ՄԱՐՈՒԾ *(դառը ժպտում է)*- Երգիր, երգիր ու հաճոյախոսիր, քեզ թույլ եմ տալիս, արվեստագետ ես: Բայց հուսամ՝ գիտես չափը…

(Ներս է մտնում միջին տարիքի գինովցած մի տղամարդ, երգելով՝ «Գիշերները, յարո ջան, թովռամ քո դոշին…»):

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ- Բարեւ գիշերային հրեշտակներին… *(Զարմացած նայելով Մարուշին):* Ա՛, իսկ Ծուշիկը չկա՞…

ՄԱՐՈՒԾ- Ոչ, էսօր ես եմ հերթապահում:

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ- Մենա՞կ… Արեւիկն էլ չկա՞… մյուս հրեշտակը:

ՄԱՐՈՒԾ- Ոչ:

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ *(շողոմ ժպիտով նայելով Մարուշին)*- Բայց դու էլ պակաս հրեշտակը չես… Լավ, քեզ հետ մի ուրիշ անգամ կուրախանանք… Կտա՞ք էն բանից, մի 10 հաբ: Էս գիշեր դեռ երկուսի հետ զվարճանալու եմ… Գիշերները, յարո ջան, թովռամ քո դոշին… *(Ձեռքը պարզում է, որ շոյի Մարուշի դեմքը):*

ՄԱՐՈՒԾ *(ետ ընկրկելով)*- Ձեռքերդ հեռու, քեզ կարգին պահիր… զգուշացնում եմ:

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ- Թե չէ՝ ի՞նչ… վագրիկս… Նազ եք անում ձեզ ու ձեզ, իսկ հետո սողոսկում եք տակս, հենց որ ցույց եմ տալիս, թե շռայլության ի՞նչ պաշար ունեմ: *(Ցույց է տալիս պիջակի ծոցագրպանը, որտեղ փողի տրցակ կա):*

ՄԱՐՈՒԾ- Տականք… *(Վերցնում է ինչ-որ դեղ, փաթեթավորում, որ տա գինովցած տղամարդուն):*

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ- Պապային մի նեղացրու, քեզ էնպիսի լավ բանե՛ր կանեմ… *(Ձեռքը մեկնում է դեպի Մարուշի կուրծքը: Մարուշը վաճառասեղանի տակից վայրկենապես հանում է մի փայտե մուրճ եւ հատու զարկում գինովցած տղամարդու գլխին: Վերջինս ընկնում է գետնին):*

ՄԻՀՐԱՆ *(ակնապիշ հետեւելով կատարվածին)*- Ի՞նչ հոյակապ հարված… Դա էլ քո ինքնապաշտպանական զե՞նքն է *(ցույց տալով փայտե մուրճը):*

ՄԱՐՈՒԾ- Հա, սա լավ է աշխատում. մահացու չէ եւ դաստիարակիչ մեծ ուժ ունի:

ՄԻՀՐԱՆ- Եվ շատերի՞ն ես մինչեւ հիմա մրճահարել:

ՄԱՐՈՒԾ *(մի պահ մտածելով)*- Դե… մի 15-ը կլինեն…

ՄԻՀՐԱՆ- Էսպիսի՞ք էին *(ցույց տալով գինովցած տղամարդուն):*

ՄԱՐՈՒԾ- Ոչ միայն. նրանց մեջ կային հրամանատարներ… նախարար-

ներ… բիզնեսմեններ… դասախոսներ… անհուսալի սիրահարվածներ… պատահական կնամոլներ…

ՄԻՀՐԱՆ- Տպավորիչ ցանկ է: Իսկ դու մրճահարում ես միայն վավաշոտների՞ն…

ՄԱՐՈՒԾ- Չէ, պատահել է՝ խփել եմ նաեւ նրանց, ովքեր անարդար են վարվել մարդկանց նկատմամբ. ասենք՝ չեն կատարել իրենց պաշտոնական պարտականությունները մեր քաղաքացիներին վերաբերող կենսական հարցերում, խաբել ու մոլորեցրել են նրանց:

ՄԻՀՐԱՆ- Հա, նման խաբեբաները շատ են, բոլորին քո մուրճը չի հերիքի: *(Դադար):* Հիմա սրան ի՞նչ ենք անելու *(ցույց տալով ընկածին),* ե՞րբ ուշքի կգա…

ՄԱՐՈՒԾ- Մի երեք-չորս րոպեից ուշքի կգա, արդեն՝ մի փոքր խելոքացած: *(Մի բաժակ ջուր է տալիս Միհրանին):* Շփիր երեսին, խնդրում եմ:

(Միհրանը ջուրը շփում է գետնին ընկած գինովցած տղամարդու դեմքին):

ՄԻՀՐԱՆ- Մարուշ ջան, տեսնում եմ՝ դու վտանգավոր տեղամասում ես աշխատում. ես կմնամ էստեղ մինչեւ հերթապահությանդ ավարտը, քեզ մենակ պետք չէ թողնել:

ՄԱՐՈՒԾ- Չէ-չէ, Միհրան, գնա տուն եւ հանգստացիր, արդեն կեսգիշերն անց է… Ինձ հետ ոչինչ չի պատահի, մենակ գլուխ կհանեմ: Գնա տուն, շոյված եմ քո ուշադրությունից: Լսիր *(երկիմաստ ժպտալով),* իսկ քոնը ի՞նչ կարգի ուշադրություն է… Չլինի՞՝ դու էլ նկրտումներ ունես իմ հանդեպ, պարզապես ամեն ինչ արվեստով ու կիրթ ես անում, հը՞…

ՄԻՀՐԱՆ- Աստված սիրես, Մարուշ, ի՞նչ նկրտումներ… Դե գիտես՝ գեղեցկության ու կանանց հանդեպ անտարբեր չեմ… դե արվեստագետի խառնվածք է, բայց քո պարագան լրիվ ուրիշ է. քո հանդեպ ես ունեմ… բացառիկ ակնածանք:

ՄԱՐՈՒԾ- Ահա թե ինչ…

ՄԻՀՐԱՆ- Կարելի է ասել, որ մենք զինակիցներ ենք, միասին ծառայել ենք, չէ՞: Ես չեմ կարող քո նկատմամբ ետին մտքեր ունենալ:

ՄԱՐՈՒԾ- Շնորհակալ եմ: Բայց լավ ասիր՝ զինակիցնե՛ր… Դու ընդամենը հասցրիր երկու ամիս ծառայել մեզ հետ. համարձակ սանիտար էիր, առաջինը դու էիր գնում վիրավորներին հանելու մարտադաշտից… *(Դադար):* Կոնտուզիադ հիմա ո՞նց է…

ՄԻՀՐԱՆ- Կոնտուզիա՞ս… ընտիր: Հիմա գլխացավեր ավելի հաճախ եմ ունենում, բայց դեռ անմռունչ հաղթահարում եմ:

ՄԱՐՈՒԾ- Ես լավ հիշում եմ ռմբակոծության էդ օրը… սարսափելի էր: Փառք Աստծո, դու ողջ մնացիր, իսկ ահա մեր անձնակազմից Վահանը զոհվեց, իսկ Մարոն ծանր վիրավորվեց: Դա մեր ամենածանր օրն էր ողջ պատերազմի ընթացքում:

ՄԻՀՐԱՆ- Ո՞նց է հիմա Մարոն, վաղուց նրան չեմ տեսել:

ՄԱՐՈՒԾ- Դե, կարելի ասել՝ ոնց որ մյուս հաշմանդամները… Կնոջ համար շատ ավելի դժվար է համակերպվել հաշմանդամությանը: *(Դադար):*

ՄԻՀՐԱՆ- Հիշում եմ, բոլորին մեկ առ մեկ հիշում եմ, եւ զոհվածներին, եւ վիրավորներին, որոնց հետ առնչվել եմ: Նրանց բոլորի գծանկարները ես հետո հիշողությամբ արել եմ. իմ արվեստանոցում են, մի օր ցույց կտամ քեզ:

ՄԱՐՈՒԾ- Այո՞… Շատ կարեւոր գործ ես արել, Միհրան:

(Գինովցած տղամարդը ուշքի է գալիս, շշմած հայացքով նայում շուրջը):

ՄԻՀՐԱՆ *(մոտենալով գինովցած տղամարդուն)*- Դե, ո՞նց ես… սեքսուալ մանյակ…

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ- Օֆ, գլուխս ցավում է… *(Նայում է Մարուշին)*: Ուժեղ է հարվածել…

ՄԻՀՐԱՆ- Բողոքո՞ւմ ես… գուցե բողոքի գիրքը տամ՝ գրառե՞ս տպավորություններդ…

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ- Դու ո՞վ ես…

ՄԻՀՐԱՆ *(կեղծ պաշտոնական)*- Ներկայանամ՝ Միհրան Գաբոյան: Ճանաչո՞ւմ ես…

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ *(ուշադիր նայելով Միհրանին)*- Նկարիչը… *(ծիծաղելով):* Ուզում ես նկարե՞լ ինձ…

ՄԻՀՐԱՆ- Քո ի՞նչը նկարեմ, այ ցուլ… ես հիմա էս դեղատան անվտանգության աշխատակիցն եմ: Դու վտանգավոր տիպ ես:

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ- Ինչու՞… որ ուզում էի նրա հետ մի քիչ սիլի-բիլի անե՞լ…

ՄԻՀՐԱՆ- Քո վարքը վտանգավոր է հասարակական կարգի ու բարոյականության տեսանկյունից: Տիկին Մարուշ, ի՞նչ վճիռ ենք կայացնում սրա նկատմամբ… հանձնենք ոստիկանությա՞նը…

ՄԱՐՈՒԾ- Չէ, նա դեռեւս ոստիկանության սուբյեկտը չէ: Նրանով պետք է զբաղվի հասարակությունը:

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ *(քմծիծաղով)*- Որտե՞ղ է էդ հասարակությունը…

ՄԱՐՈՒԾ *(չլսելու տալով)*- Դու խոստանո՞ւմ ես, որ այլեւս որեւէ կնոջ հանդեպ նման ոտնձգություն ու գռեհկություն չես անի…

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ *(մի պահ չռած աչքերով նայում է Մարուշին, ապա գլխով անում)*- Ըհը…

ՄԱՐՈՒԾ- Չէ, հստակ լեզվով եւ ավելի բարձրաձայն:

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ- Խոստանում եմ:

ՄԱՐՈՒԾ- Դե հիմա արի վերցրու քո էս էռեկցիոնը եւ՝ ուղիղ տուն: Եվ խոստացիր, որ դա միայն կնոջդ հետ կօգտագործես:

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ *(կամաց)*- Ըհը… *(Տեսնելով Մարուշի խիստ հա-*

յացքը՝ բարձրաձայն)՝ Խոստանում եմ: *(Վեր է կենում եւ գլխիկոր կանգնում Մարուշի դիմաց):*

ՄԻՀՐԱՆ- Դու պետք է նաեւ հետեւես սեռական հիգիենայի կանոններին, հասկացա՞ր… Թե չէ քաղաքով մեկ կանեմ քո օյինբազությունները… ծաղրանկարներով…

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ- Չէ-չէ, ախպեր, պետք չէ: Քո ասածն էլ ընդունելի լինի:

ՄԻՀՐԱՆ- Ուրեմն՝ ներողություն խնդրիր տիկին Մարուշից եւ երդվիր, որ անխախտ կպահես խոստումներդ, նաեւ՝ լրիվ թարգում ես «լեւի» արշավներդ. սա էլ իմ կողմից պահանջ: Պայմանավորվեցի՞նք…

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ- Պայմանավորվեցինք… Ներողություն, տիկին Մարուշ, էլ նման հիմարություն չեմ անի: *(Վճարում է, վերցնում փաթեթը):* Մանրը թող մնա ձեզ:

ՄԱՐՈՒԾ *(չոր)*- Վերցրեք ձեր մանրը:

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ- Դե եղածը մի բան չէ, դա էլ թող լինի իմ… փոխհատուցումը… *(Մարուշը ձեռքն է վերցնում փայտե մուրճը եւ խստահայաց նայում գինովցած տղամարդուն):* Լավ, լավ, ի սեր Աստծո, ես մեղա… *(Շտապ վերցնում է մանրը):* Կներեք… շնորհակալություն… Բարի գիշեր ձեզ: *(Դուրս է գալիս):*

ՄԻՀՐԱՆ- Առաջին անգամ եմ տեսնում՝ զարկվես ու ասես շնորհակալություն:

ՄԱՐՈՒԾ *(կամացուկ ծիծաղում է)*- Եթե կինն է տեղին բռնություն գործադրում տղամարդու հանդեպ, ապա դա երբեմն անսպասելի դրական հետեւանքներ է ունենում:

ՄԻՀՐԱՆ- Իրո՞ք… չգիտեի: Չեմ զարկվել երբեւէ կնոջից… բայց մեկ-մեկ հիստերիկայով հոգիս են բռնաբարել: *(Դադար):* Մարուշ ջան, գիտե՞ս՝ որքան է մեզ՝ նորմալ տղամարդկանցս ոգեւորում այն, որ մեր զոհվածների այրիները մնում են իրենց վերապահված բարոյական բարձրության վրա:

ՄԱՐՈՒԾ- Եվ շատ տխրում եք, երբ նրանք գլորվում են անբարոյականության ճահիճը…

ՄԻՀՐԱՆ- Այո… Ցավոք, մեր ժամանակներում նման դեպքեր պատահում են: Ճակատագրի խիստ քննությանը մեր այրիներից ոմանք չեն դիմանում… *(Դադար):* Մեր շենքում զոհվածի մի այրի կա, վերջերս է տեղափոխվել, երեւի հետքերը մաքրելու համար… չգիտեմ: Հարեւաններն ասում են, որ նա անցած տարիներին ազատ ֆոֆռում էր եւ հաճախ դիմում հղիության արհեստական ընդհատման: Ասում են՝ նույնիսկ տառապել է վենեռական ինչ-որ հիվանդությամբ:

ՄԱՐՈՒԾ- Նրանց դատապարտելուց առաջ պետք է օգնել, զորավիգ լինել: Բոլորը չէ, որ ինքնուրույն կարող են կրել այրիության ծանր ու փշոտ

բեռը: Դու չգիտես, թե հոգեկան ու ֆիզիկական ինչ ուժեր են պետք քո ասած բարձրության վրա մնալու համար:

ՄԻՀՐԱՆ- Դու արդարացնո՞ւմ ես... շեղվածներին...

ՄԱՐՈՒԾ- Ոչ, բայց ես միաժամանակ չեմ ուզում մեղադրել ու պարսավել նրանց. դա էնքա՜ն հեշտ է անելը: Նրանք մեր քույրերն են, պետք է նրանց ձեռքը բռնել եւ պահել ճիշտ ճանապարհի վրա:

ՄԻՀՐԱՆ- Մի քանի տարի առաջ... ուզեցի մեկի ձեռքը բռնել ու ետ պահել գեշ ճանապարհից: Ասացի էդ կնոջը՝ նայիր քո բախտակիցներից շատերին, տես՝ ինչ խնկարկելի վարք են դրսեւորում: Ասաց՝ ես սրբանալու ցանկություն չունեմ, ես մի սովորական թույլ կին եմ:

ՄԱՐՈՒԾ- Գովելի պատասխան չէ... Ոչ ես, ոչ ինձ նմանները (նրանք իսկապես շատ են) սրբանալու մտադրություն չունեն, Միհրան: Մենք պարզապես ապրում ենք խղճի մտոք, հոգու մեր պարտքն ենք կատարում: Եվ հետո՝ շարքային հայ կինը թույլ չէ, նա շատ ուժեղ տեսակ է:

(Ներս են մտնում վայելուչ-պաշտոնական հագնված մի տղամարդ եւ մի աղջիկ՝ սովորականից խայտաբղետ հարդարված-խնամված: Տղամարդը կարմիր փողկապով է, աղջիկը՝ վառ-կարմիր շրթներկով: Աղջիկը շարունակ մաստակ է ծամում եւ հեգնախառն ժպիտով զննում շրջապատը):

ԿԱՐՄԻՐ ՓՈՂԿԱՊՈՎ ՏՂԱՄԱՐԴ- Բարեւ ձեզ... Ծուշիկը չկա՞... չի՞ հերթապահում էսօր...

ՄԱՐՈՒԾ- Ոչ, ես եմ հերթապահում: Ինչո՞վ կարող եմ օգնել...

ԿԱՐՄԻՐ ՓՈՂԿԱՊՈՎ ՏՂԱՄԱՐԴ- Ըմմմ... նուրբ հարց է... Համենայն դեպս, դիմեմ ձեզ, հուսամ՝ կընդառաջեք... Կարո՞ղ ենք մի փոքր առանձնանալ...

(Մարուշը լուռ մի կողմ է քաշվում, կարմիր փողկապով տղամարդը մոտենում է նրան եւ կամաց, գրեթե անլսելի ինչ-որ բան սկսում բացատրել Մարուշին, միաժամանակ գրպանից հանելով դրամապանակը եւ փորձելով թղթադրամներ խցկել նրա ձեռքը):

ՄԱՐՈՒԾ */կտրուկ բարձրացնելով ձայնը/*- Սա ի՞նչ լկտիություն է... Սա դեղատուն է, ոչ թե փողոցայինների համար խրախճանավայր: Դուրս եկեք, շուտ, հեռացեք էստեղից:

ԿԱՐՄԻՐ ՓՈՂԿԱՊՈՎ ՏՂԱՄԱՐԴ- Դե պետք չէ բարձրաձայնել, քույրիկ, համաձայն չեք՝ հանգիստ մերժեք, ուրիշ տեղ կգտնենք:

ՄԱՐՈՒԾ */կարմրատակած/*- Հեռացեք, արագ: Ամենուր մի ապականեք, թողեք մաքուր տեղեր մնան մեր շրջապատում:

ԿԱՐՄԻՐ ՓՈՂԿԱՊՈՎ ՏՂԱՄԱՐԴ- Առանց աղմուկի, խնդրում եմ... Մենք գնացինք: */Նշան է անում ուղեկից աղջկան եւ նրա հետ շարժվում դեպի ելքը/:*

ՎԱՌ-ԿԱՐՄԻՐ ԾՐԹՆԵՐԿՈՎ ԱՂՋԻԿ- Երեւի քիչ փող ես առաջակել նրան,

պարոնս, որ չհամաձայնվեց: Միշտ էդպես է՝ մեր ձախորդությունների ու դժբախտությունների պատճառը տղամարդու ժլատությունն է:

ԿԱՐՄԻՐ ՓՈՂԿԱՊՈՎ ՏՂԱՄԱՐԴ- Ձենդ, լկստված, ասել եմ՝ բերանդ փակ կպահես: Ոչինչ, շուտով ես կփակեմ բերանդ ոնց-որ պետք է…

ՎԱՌ-ԿԱՐՄԻՐ ԾՐԹՆԵՐԿՈՎ ԱՂՋԻԿ- Դե ի՞նչ ասի որ… */Շուռ գալով, Մարուշին/* Համ էլ փողոցայինը դու ես…

ԿԱՐՄԻՐ ՓՈՂԿԱՊՈՎ ՏՂԱՄԱՐԴ- Դե համը հանեցիր, լիրբ, կտրիր ձենդ՝ ասացի… */Աղջկան կոպտորեն հրում է առաջ: Մարուշին/* Ներող եղեք, բարի գիշեր ձեզ:

/Կարմիր փողկապով տղամարդը եւ աղջիկը դուրս են գալիս/:

ՄԱՐՈՒԾ */դեռ վրդովված/*- Էս ի՞նչ այլասերվածություն է… դեղատունը հասարակաց տուն են ուզում սարքել…

/Շփոթահար ու վախվորած ներս է մտնում գզգզված մազերով, լացակուսած մի պարմանուհի/:

ՊԱՐՄԱՆՈՒՀԻ- Ներեցեք, Արեւիկին կարելի՞ է…

ՄԱՐՈՒԾ */վերգտնելով իրեն, սրտացավորեն/*- Ի՞նչ է եղել, աղջիկս, Արեւիկը տանն է… */Պարմանուհին սկսում է հեկեկալ: Ետ է շրջվում, որ հեռանա/:* Սպասիր, ու՞ր… Ի՞նչ է պատահել, ասա, ես կօգնեմ:

ՊԱՐՄԱՆՈՒՀԻ */վերադառնալով Մարուշի մոտ/*- Կարո՞ղ եմ գիշերել էստեղ… */Շարունակում է հեկեկալ/:*

ՄԱՐՈՒԾ- Գիշերել էստե՞ղ… Տուն չունե՞ք…

ՊԱՐՄԱՆՈՒՀԻ- Ունենք… բայց…

ՄԱՐՈՒԾ- Ի՞նչ, ինչու՞մն է բանը, օրիորդ…

ՊԱՐՄԱՆՈՒՀԻ- Հայրս էլի հարբած եկավ ու կռիվ սարքեց տանը… Ծեծեց մորս, փոքր եղբորս ու ինձ… Արդեն մի քանի ամիս է՝ էս մղձավանջի մեջ ենք, էլ չեմ կարող, ինձ քնել-հանգստանալ է պետք: Հայրս ողջ գիշեր գոռգոռում է ու հայհոյում… Ես սկսել եմ հաճախ բացակայել դասերից:

ՄԱՐՈՒԾ- Հասկացա, աղջիկս, հարբեցող հոր հետ շատ դժվար է համակերպվել:

ՊԱՐՄԱՆՈՒՀԻ- Հայրս հարբեցող չէր, շատ լավ, հոգատար հայրիկ էր, Էն օրից, ինչ աշխատանքը կորցրեց, իրեն տվեց հարբեցողությանը…

ՄԱՐՈՒԾ */մոտենալով եւ շոյելով աղջկա գլուխը/*- Ոչինչ, աղջիկս, պատահում է… Շուտով հայրդ կգտնի նոր աշխատանք եւ ամեն ինչ իր տեղը կընկնի: Անգործ տղամարդիկ հաճախ են էդ ձեւով փորձում հաղթահարել իրենց ճգնաժամերը: Ձեր հայրը վիրավորանքից ու անհարմարության զգացումից է խմում: Պետք է հասկանալ հայրիկիդ եւ օգնել, որ նա շուտ աշխատանք գտնի:

ՊԱՐՄԱՆՈՒՀԻ */մի փոքր հուսադրված/*- Հա՞… ամեն ինչ իրոք կնորմալանա՞ մեր տանը, ասում եք…

ՄԱՐՈՒԾ- Այո, աղջիկս: Մենք միասին կօգնենք ձեր հայրիկին: Իսկ հիմա արի ու էն ետեւի սենյակում հանգիստ քնիր, էնտեղ բազմոց կա:

/Մարուշը պարմանուհուն ուղեկցում է ետնասենյակ եւ շուտ վերադառնում/:

ՄԻՀՐԱՆ- Չէ՛, Մարուշ ջան, դու իսկապես վտանգավոր ու պատասխանատու տեղ ես աշխատանքի անցել:

(Զանգում է Մարուշի բջջային հեռախոսը):

ՄԱՐՈՒԾ */պատասխանում է հեռախոսազանգին/*- Հա, Նարե ջան, ի՞նչ կա էս ուշ ժամին… Լավ, մի անհանգստացիր, ես կփորձեմ կապվել Նաիրիկի հետ: *(Անջատում է հեռախոսը եւ մի փոքր տագնապած նայում Միհրանին):*

ՄԻՀՐԱՆ- Ի՞նչ են ասում, ինչու՞ տագնապեցիր:

ՄԱՐՈՒԾ- Հարսս է, ասում է՝ լսել է, որ ժամեր առաջ դիվերսիա է եղել Նաիրիկենց դիրքերի ուղղությամբ… Փորձում է կապվել նրա հետ, բայց հեռախոսը չի պատասխանում:

ՄԱՐՈՒԾ- Ո՞վ է Նաիրիկը:

ՄԱՐՈՒԾ- Տղաս: Վաշտի հրամանատար է, հիմա սահմանային դիրքերում է:

ՄԻՀՐԱՆ- Հա, ներիր, մոռացել էի տղայիդ անունը… Ուրեմն արդեն սպա է… Դե էլ ի՞նչ ես սպասում, զանգիր՝ տես ինչ կա:

ՄԱՐՈՒԾ- Երբ լարված իրավիճակ է լինում, նա չի պատասխանում մեր զանգերին, ասում է՝ գործի պահին եւ զինվորների ներկայությամբ պետք չէ ընտանեկան խոսակցություններ ունենալ հեռախոսով:

ՄԻՀՐԱՆ- Հեռախոսահամարն ասա՝ ես զանգեմ: Գուցե անծանոթ համար տեսնի՝ կարծի, թե ռազմական ստորաբաժանումներից են, պատասխանի:

ՄԱՐՈՒԾ- 205115

ՄԻՀՐԱՆ- Լավ, հիմա: *(Բջջային հեռախոսով հավաքում է համարը: Սպասում է պատասխանի: Լռությունը ձգվում է):* Ալո, Նաիրի՞… Բարեւ ձեզ, նախկին բուժսանիտար եւ նկարիչ Միհրան Գաբոյանն է խոսում: Ո՞նց եք, ո՞նց է վիճակը ձեզ մոտ… խնդրում եմ՝ մի երկու բառով… *(Դադար):* Ուրեմն՝ ամեն ինչ կարգի՞ն է… Լավ, տղաս, հիմա մայրիկիդ մի երկու բառ փոխանցիր… խնդրում եմ: *(Հեռախոսը տալիս է Մարուշին):*

ՄԱՐՈՒԾ- Բարեւ, տղաս, լա՞վ ես… *(Դադար):* Չէ, մեզ մոտ ոչ մի խուճապային տրամադրություն էլ չկա, սովորականի պես անհանգստանում ենք… *(Դադար):* Իմ նախկին զինակիցն է, հայտնի ու տաղանդավոր նկարիչ… Դեղատանն ենք, իմ հերթապահության օրն է… Լավ, Նաիրի ջան,

քեզ լավ պահիր, բարեւիր ընկերներիդ… բարի գիշեր: *(Հեռախոսն անջատում է: Մտահոգ ձայնով)*՝ Կրակոցների ձայները դեռ լսվում են հեռվից, երեւում է՝ լարվածությունը նրանց դիրքերում լրիվ չի անցել… *(Դադար):* Հոր տղան է, կրակի մեջ էլ՝ խանդը չի թաքցնում: Հարցնում է՝ էդ ո՞վ է կողքիդ հեռվից հեռու հայրություն անում ինձ…

ՄԻՀՐԱՆ *(ծիծաղում է)*- Դե նա խանդելու ոչ մի պատճառ չունի, բայց ես նրան լրիվ հասկանում եմ: Հոր ձայնն է նրա մեջ հնչում:

(Շտապ ներս է մտնում մի երիտասարդ զինվորական, ձախ ձեռքի վիրակապով):

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ- Բարեւ ձեզ… կներեք, Մարուշ մորքուր, Հրայրը ձեզ է ուզում, ասում է՝ կանչեք՝ թող ինքը գա վիրակապը փոխի. հերթապահ բուժքրոջը թույլ չի տալիս, բժշկին՝ նույնպես: Արնահոսություն է սկսվել…

ՄԱՐՈՒԾ- Ի՞նչ խնդիր կա, ինչու՞ թույլ չի տալիս…

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ- Հրայրն ինձ գաղտնի ասել է պատճառը, բայց ավելի լավ է՝ դուք նրանից լսեք… Փորձում են զոռով վիրակապել նրան… ձեռուոտով նրանց ետ է մղում, հիստերիկ գոռգոռում ու ձեզ կանչում…

ՄԱՐՈՒԾ- Ովքե՞ր են հիմա հերթապահում…

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ- Բժիշկ Դադայանը եւ բուժքույր Սուսաննան:

ՄԱՐՈՒԾ- Մի րոպե: *(Բջջային հեռախոսով զանգում է):* Բժիշկ Դադայա՞ն… բարեւ ձեզ, ներեցեք, ի՞նչ է կատարվում վիրավոր Հրայրի հետ… *(Դադար):* Գուցե՞ ես նրա հետ հեռախոսով խոսեմ… *(Դադար):* Լավ, գալիս եմ… *(Անջատում է հեռախոսը):* Միհրան, կարո՞ղ ես մի 15-20 րոպե հսկել դեղատունը, շտապ գնամ տղայի վիրակապը փոխեմ ու վերադառնամ, չեմ ուշանա, գիտես՝ հոսպիտալը մոտիկ է:

ՄԻՀՐԱՆ- Իհարկե, Մարուշ ջան, դա ի՞նչ հարց է: Գնա, ես էստեղ տիրություն կանեմ մինչեւ վերադարձդ… Հրայրին էլ արագ ապաքինում մաղթիր իմ կողմից: *(Երիտասարդ զինվորականին):* Ձեռքիդ ի՞նչ է եղել…

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ- Բան չկա, անցնում է, մի երկու օրից դիրքեր կվերադառնամ:

ՄԱՐՈՒԾ *(պատրաստվելով հեռանալ)*- Հրայրն ու Գեւորգը *(ցույց տալով երիտասարդ զինվորականին)* նույն տեղում եւ նույն ժամին են վիրավորվել, դիրքում, բայց մինչեւ վիրավորվելն իրենց դասակի տղաների հետ լավ ջարդ են տվել դիվերսանտ թուրքերին:

ՄԻՀՐԱՆ- Ապրեք: Անփորձանք ծառայություն քեզ ու ընկերներիդ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ- Շնորհակալություն… Բարի գիշեր:

ՄԻՀՐԱՆ- Հաջողություն, տղաս:

ՄԱՐՈՒԾ- Միհրան, այցելուներին ասա, որ մի քիչ սպասեն, շուտ կգամ,

սեղանին էլ գրքեր կան, կարդա, որ չձանձրանաս:

ՄԻՀՐԱՆ- Շատ լավ:

(Մարուշն ու երիտասարդ զինվորականը շտապ դուրս են գալիս: Միհրանը միաժամանակ նայում է հեռացած Մարուշի ետեւից, ապա, ասես ոգեշնչվելով, արտիստիկ մենախոսում է).

-Օ կին զարմանահրաշ, օ հեքիաթային հայուհի… առեղծվածային հրաշք կանայք, որքան ցանկալի եք դուք, որքան անմատչելի… Ձեզ հետ շփվելը իսկական տոն է տղամարդու համար… Թաքուն թե բացահայտ՝ միշտ ձեր երկրպագուն եմ, ձեր զորակիցն ու նվիրյալը, եթե անգամ լքում եք դուք ինձ՝ տեղի թե անտեղի… Կարծես շատ բան գիտեմ ձեր մասին, օ հանելուկ կանայք, բայց ժամանակի ու փորձառության հետ հասկանում եմ, որ կնագիտական իմ իմացությունը շարունակ նվազում է մեր դեմ հառնող ձեր հոգեւոր մեծության առաջ… Բայց մի կայուն գիտելիք ունեմ արդեն՝ սքանչելի կնոջ սքանչելի կերպարն է առաջին պահապանը ազգի ու երկրի, ինչպես, օրինակ, Մարուշը: Կանանց իսկական թագուհի է նա՝ չթագադրված թեպետ ու չհռչակված… Իսկ անզուգական թագուհուն այդ ո՞ր տղամարդը չի տենչում… Բայց, Մարուշ ջան, թող սա մնա իմ մեծագույն գաղտնիքը. կարծում եմ՝ ես այնքան ուժ կունենամ, որ չգաղտնազերծվեմ քո առաջ, քանզի ինչ թագուհի, եթե նա չի շողում տղամարդկային թաքուն ու գեղեցիկ երազանքների գագաթին… *(Դադար: Շուրջն է նայում՝ վերգտնում իրեն ընթացիկ դեպքերի շղթայում):* Էս դեղահոտ տարածքի տերը հիմա ես եմ… Բայց լավ արվեստանոց կլիներ, հա՛… *(Մոտենում է վաճառասեղանին, վերցնում այնտեղ դրված երկու գիրք, ընկողմանում վաճառասրահի բազմոցին եւ նայում գրքերից մեկը):* Ըհը… Հրանտ Մաթեւոսյան. «Տերը»: Լավ, լավ, իսկ մյուսը… Պարույր Սեւակ. «Եղիցի լույս»… Օ՛ 1969 թվի առաջին հրատարակությունը… Հետաքրքիր է՝ որտեղի՞ց Մարուշին էս գիրքը… երեւի նվեր է ստացել: Ժամանակին ես շատ էի ուզում ունենալ էս գրքից, չհաջողվեց: Հիմա մոռացել եմ իմ այդ ցանկության մասին: *(Թերթում է գիրքը):* Ահա եւ իմ սիրած բանաստեղծությունը.

Աշխարհին, այո, մաքրություն է պետք՝
Այն հերոսների տխրունակ տեսքով,
Որոնք մեռնում են… անգործությունից…
Նաեւ այն կանանց, որոնք մինչեւ մահ
Ճանաչում են լոկ մեկ տղամարդու…
Իսկ երբ…

(Սկսում է ննջել: Ներս է մտնում միրուքով, երկար մազերով եւ ուսապարկով մի տղամարդ):

ՄԻՐՈՒՔՈՎ ՏՂԱՄԱՐԴ *(նայելով ննջող Միհրանին)*- Թեեւ դու ննջում ես, բայց արթուն է հոգիդ, որդիս:

(Եկվորի ձայնից Միհրանը բացում է աչքերը եւ ընդոստ վեր կենում):

ՄԻՀՐԱՆ *(փոքր-ինչ շվարած)*- Բարեւ ձեզ, ի՞նչ կկամենաք…

ՄԻՐՈՒՔՈՎ ՏՂԱՄԱՐԴ- Աստծու բարին… Դուք ունե՞ք խղճի հաբեր…

ՄԻՀՐԱՆ *(տրորում է աչքերը՝ լրիվ սթափվելու համար)*- Խղճի հաբե՞ր… *(Նայում է դեղադարակների կողմը):* Ոչ, ցավոք, վերջացել են, առաջիկա օրերին կստանանք, համեցեք:

ՄԻՐՈՒՔՈՎ ՏՂԱՄԱՐԴ- Իսկ բարության հաբե՞ր…

ՄԻՀՐԱՆ- Նույնի կատարմամբ… Ինչպե՞ս դիմել ձեզ…

ՄԻՐՈՒՔՈՎ ՏՂԱՄԱՐԴ- Պարզ է՝ սիրո եւ ազնվության հաբերը նույնպես վերջացել են:

ՄԻՀՐԱՆ- Ոչ, սիրո հաբեր ունենք, նոր մեկին տվեցինք… հիմա կբերեմ: *(Արագ անցնում է վաճառասեղանի ետեւ եւ բերում մի դեղատուփ: Միրուքով տղամարդը թեթեւակի հայացք է նետում տուփին եւ գլուխը տարուբերում):*

ՄԻՐՈՒՔՈՎ ՏՂԱՄԱՐԴ- Ոչ, դա չէ, դու սեռական սիրո հաբեր ես առաջարկում, իսկ իմ ասածը իսկական սիրո մասին է, հոգու սիրո: *(Բացում է ուսապարկը եւ հանում ճերմակ գույնի, մեծ չափի մի տոպրակ եւ տալիս Միհրանին):* Ահա ձեզ խղճի հաբերը: *(Հանում է կապույտ մի տոպրակ):* Ահա ձեզ բարության հաբերը: *(Հանում է վարդագույն մի տոպրակ):* Ահա ձեզ սիրո հաբեր: *(Հանում է մանուշակագույն մի տոպրակ):* Ահա եւ ազնվության հաբերը… Բաժանիր դրանք կարիքավորներին, անվճար… չզլանաս, որդիս:

ՄԻՀՐԱՆ- Բայց կարիքավորները… նյութական օգնության կարիք ունեն… նախեւառաջ:

ՄԻՐՈՒՔՈՎ ՏՂԱՄԱՐԴ- Ոչ, որդիս, իմ խոսքը շատ ավելի հրատապ կարիքի մասին է՝ խղճի, բարության, սիրո ու ազնվության…

ՄԻՀՐԱՆ- Բայց… բայց ես ո՞նց իմանամ՝ ով է դրանց կարիքը զգում… Եթե սխալվեմ, մարդիկ կնեղանան ինձնից… Կամ եթե դրանց կարիքն ունեցողը հրաժարվի՞… Ո՞նց վարվեմ…

ՄԻՐՈՒՔՈՎ ՏՂԱՄԱՐԴ- Եթե դու իրոք մարդկանց բժշկության հետ գործ ունես, թեկուզ դեղավաճառի մակարդակով, դու սրանք մարդկանց հասցնելու հնարը կգտնես: *(Ներողամտորեն ժպտում է):* Հաջողություն քեզ, որդիս: *(Շրջվում է, որ հեռանա):*

ՄԻՀՐԱՆ- Բայց դուք ո՞վ եք…

ՄԻՐՈՒՔՈՎ ՏՂԱՄԱՐԴ- Եթե ցանկանաս, կհիշես: *(Ժպտում է):* Հաջողություն քեզ, որդիս: *(Հեռանում է):*

(Միհրանը տարակուսած հայացքով ուղեկցում է նրան մինչեւ ելքը, մի պահ սուզվում մտորումների մեջ, ապա տոպրակները դնում է վաճառասեղանին եւ մտամոլոր կանգնում: Կրկին տրորում է աչքերը):

ՄԻՀՐԱՆ- Տեսի՞լք էր, թե՞... Գուցե՞ Աստված էր... նրան շատ է նման... Չէ՛, կարծես թե Աստված տեսել եմ, հիմա էլ նմանություններ եմ գտնում... Ավելի շատ հավատացյալ Սուրենին էր նման... Չէ՛... *(Մտածում է):* Գուցե՞ հայրս էր, հարություն առել ու կերպարանափոխված եկել է ինձ այցի, որ ստուգի, թե ես ինչ վիճակում եմ... Հայրս քսան տարի առաջ է մահացել, հնարավո՞ր է, որ նա էն աշխարհում շատ է փոխվել՝ ուստի ճանաչելի չէ... Չէ՛, ես ոնց որ հիմարություններ եմ դուրս տալիս... Մարուշին կհարցնեմ, երեւի դեղատան օյինբազ հաճախորդներից է: *(Նստում է բազմոցին, վերցնում գիրքը, որ շարունակի ընթերցանությունը):* Աշխարհին, այո, մաքրություն է պետք... եւ հասկացվածություն:

(Ներս են մտնում Արդարության ցուցարարները՝ 7 հոգի: Տեսնելով նրանց վճռական դեմքերը՝ Միհրանը ինքնիրեն ասում է).

Սրանք էլ երեւի սատանաներն են... Չէ՛, մի տեսակ շատ իրական ու մարդկային են երեւում... Ովքե՞ր եք, ի՞նչ եք ուզում...

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ *(խմբովին)*- Մենք Արդարությյան ցուցարարներն ենք... Մենք խաղաղ ցուցարարներ ենք:

(Ցուցարարներից մեկը կանգնում է առջեւում, իսկ մյուսները՝ երեքական երկու շարք են կազմում: Առջեւի կանգնածը բարձրացնում է մի ցուցանակ, որի վրա գրված է՝ «Ի սկզբանե Արդարությունն էր»: Առաջին եռյակը պարզում է մի ցուցապաստառ՝ «Արդարություն ամենեցուն» գրությամբ: Ապա երկրորդ շարքի եռյակն է պարզում իր ցուցապաստառը, որի վրա գրված է՝ «Արդարների ժամանակը»: Որպեսզի հանդիսատեսին տեսանելի լինեն գրությունները, առաջին եւ երկրորդ շարքերը հաջորդիվ իջեցնում եւ բարձրացնում են ցուցապաստառները):

ՄԻՀՐԱՆ *(մոտենալով առջեւում կանգնածին)*- Դու նրանց առաջնո՞րդն ես:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Ոչ, ուղղակի էսօր ես եմ հերթապահում առաջին գծում: Վաղը ուրիշը կլինի: *(Հպարտորեն)* Ամեն օր փոխվում ենք առաջին դիրքում:

ՄԻՀՐԱՆ- Օ՛, շատ չե՞ք շուտ-շուտ փոխվում...

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ *(խմբովին)*- Ոչ, ոչ...

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Հենց մեկը մի երկու-երեք օր առաջին գծում կանգնում է, իրեն անփոխարինելի առաջնորդ է երեւակայում. սկսում է արհամարհել մյուսներին եւ կամայականություններ անել:

ՄԻՀՐԱՆ- Դե ասեք՝ ձեզ մոտ բացարձակ ժողովրդավարություն է, էլի...

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Չէ, դեռեւս խնդիրներ ունենք էդ կապակցությամբ:

ՄԻՀՐԱՆ- Իսկ ինչու՞ գիշերն եք ցուցարարություն անում... *(Մի փոքր մեկուսանալով, խոսքն ուղղելով դահլիճին, քմծիծաղով)*՝ Երեւի սրանք էլ են անքնությամբ տառապում...

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Մենք ցերեկները աշխատում ենք: Էս գործի համար առայժմ հարմար է գիշերը:

ՄԻՀՐԱՆ- Իսկ ձեզ հանգստանալ պետք չէ՞ գիշերը, հատկապես աշխատանքից հետո:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Մենք առայժմ երկու օրը մեկ ենք դուրս գալիս ցույցերի, մեր ուժերը բավարարում են:

ՄԻՀՐԱՆ- Իսկ դուք չե՞ք վախենում, որ ձեր հրապարակային ակտիվության համար ձեզ կհեռացնեն աշխատանքից, ավելին՝ կբռնանան ձեզ վրա:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ *(խմբովին)*- Թույլ չենք տա… թույլ չենք տա:

ՄԻՀՐԱՆ- Բայց դուք սակավաթիվ եք… հաջողությունների չեք հասնի:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Շուտով մեր շարքերը կխտանան, մենք շատ-շատ կլինենք: Մարդկանց մեծամասնությունը կհասկանա, որ իրենց դժվարությունների ու հիմնախնդիրների առյուծի բաժինը արդարության պակասից են ծագում:

ՄԻՀՐԱՆ- Իսկ ինչու՞ ցույց չեք անում փողոցներում ու հրապարակներում, դեղատունը, ախր, ի՞նչ ցույցի վայր է… Թեպետ… սպասեք… փիլիսոփայական տեսանկյունից դեղատունն էլ մի հրապարակ է, ուր շատ խնդիրներ են ի ցույց հանվում:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Հա, ճիշտ ես: Որտեղ բաց դուռ ենք տեսնում եւ վառվող լույս, էնտեղ մտնում եւ բարձրաձայնում ենք մեր կարգախոսները:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ *(խմբովին)*- Արդարություն՝ վերեւից ներքեւ: Արդարություն՝ լայնք ու երկայնքով: Արդարություն՝ ամենուր: Արդարություն՝ ամենեցուն:

ՄԻՀՐԱՆ- Լա՛վ… Մեջս մի հին ու հաճելի զգացում արթնացավ… Վաղուց ցույցի չեմ մասնակցել… Հիշո՞ւմ եք՝ «Արդար պահանջ, ոչ մի նահանջ»…

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ *(զվարթորեն, կրկնելով իրար)*- Ո՞նց չենք հիշում, հիշում ենք, հիշում:

ՄԻՀՐԱՆ- Հրա՛շք օրեր էին…

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Դու մերոնքական ես երեւում, միացիր մեզ:

ՄԻՀՐԱՆ- Ըմմմ… ես նկարիչ եմ, ես իմ ցույցը անում եմ նկարչությամբ: *(Մեկուսանալով, խոսքն ուղղելով դահլիճին).* Ասածս հիմա մի փոքր սուտ է հնչում, ախր վաղուց չեմ նկարում; *(Դիմելով ցուցարարներին).* Բայց ձեր կարգախոսներից մեկը կարտագրեմ ու կփակցնեմ մեքենայիս հետնապակուն:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ- Ո՞րը, ո՞ր կարգախոսը…

ՄԻՀՐԱՆ- Ըը… այ սա՝ «Արդարություն ամենեցուն»:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Գոհ ենք նաեւ դրա համար, եղբայր:

ՄԻՀՐԱՆ- Բայց, ճիշտն ասած՝ ձեր կարգախոսները շատ ընդհանրական են, մի քանի անգամ լսելուց հետո մարդկանց ուղեղները դրանք կընդունեն որպես ծեծված խոսք ու պարապ ձայներ:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Մենք ունենք նաեւ շատ կոնկրետ հարցադրումներ: Էսօր մենք դրանք լա՛վ հնչեցրինք օլիգարխներից մեկի դղյակի բակում:

ՄԻՀՐԱՆ- Ո՞ր օլիգարխի, ի՞նչ էիք ասում...

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Դե էն օլիգարխ Փոփոշի, որ մենաշնորհ ունի ձավարեղենի ներկրման գործում: *(Դիմելով ընկերներին).* Տղերք, չկրկնե՞նք...

3-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Հա, թող մեր ընկերը տեսնի, թե մենք ոնց ենք ճնշում էդ կարգի տոզածներին:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ- Հա, անցնենք գործի:

(Ցուցարարները շրջանի մեջ են առնում Միհրանին եւ սկսում կրքոտորեն հնչեցնել իրենց հարցերը՝ իրարից խոսք խլելով ու չսպասելով պատասխանի):

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Արդա՞ր է, որ պատերազմում հաղթանակած եւ ազատություն նվաճած ժողովրդի մեծ մասը շարունակում է ապրել կարիքի մեջ, իսկ մի բուռ մարդիկ հսկայական հարստություն են կուտակել եւ զխկվում են զեխության մեջ...

2-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Արդա՞ր է, որ վերեւներում տեղավորվածները նաեւ պետական միջոցներն են ծառայեցնում իրենց ու հարազատներին, իսկ շարքային քաղաքացիները հազիվ ստանում են իրենց փոքր հասանելիքը...

3-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Արդա՞ր է, որ մեր սահմանները պաշտպանում են հասարակ քաղաքացիների որդիները, իսկ մեծագլուխների, օլիգարխների, խարդախ-ճարպիկների զավակները կամ ազատվում են բանակից, կամ ծառայում են տաքուկ ստորաբաժանումներում...

4-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- ... նույնիսկ ձեւի համար, մի անգամ սահմանային դիրք չեն բարձրանում... Արդա՞ր է, որ էդ կարգի լակոտները հետո փափուկ տեղավորվում են պետական հիմնարկներում, շատ արագ կարիերա անում եւ չարախնդալով՝ իրենց կեղտոտ կամքն են թելադրում ազնիվ ու օրինական աշխատողներին...

5-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Արդա՞ր է, որ մեր շատ արժանավոր երիտասարդ քաղաքացիներ հաճախ նորմալ գործ ու ուշադրություն չեն գտնում, եւ նրանց մի մասը վիրավորված ու հուսաբեկ լքում է երկիրը, մեկնում օտար ափերում բախտ որոնելու...

6-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Արդա՞ր է, որ բոլոր աղբյուրներից օգտվելու հնարավորություն ունեն իշխանավորներն ու նրանց մերձավորները, իսկ մյուսների առաջ գրեթե բոլոր կարեւոր դռները փակ են...

7-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Արդա՞ր է, որ մենաշնորհներով ասպարեզներ են զավթում, որ ազնիվ մրցակցության փոխարեն ուժեղանում են կեղտոտ գոր-

ծարքներն ու հովանավորչությունը, եւ վերեւներում շատանում են անարժանները: Նրանք ավելանում են իշխանությունում. կորչեն անարժանները:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Արդա՞ր է, որ առանցքային օղակներում լավ դիրքավորված են գործարար ունեւորները՝ սերտաճելով պետության հետ. նրանց համակել է ագահության մոլուցքը, պետական-հասարակական լիարյուն գործիչները անկյուններ են քշված... Հա, դա նաեւ իրենց մեղքով, նրանք լավ չեն պայքարում հանուն պետության ու ժողովրդի, հեշտ են տեղի տալիս... Արդա՞ր է...

2-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Արդար չէ, որ ընտրությունների ժամանակ մեծաքանակ մարդիկ ազատորեն չեն քվեարկում. կաշառվում են, ենթարկվում թելադրանքների, նրանց կամքը բռնաբարվում է:

3-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Արդա՞ր է, որ օրենքը գործում է գերազանցապես շարքային քաղաքացիների համար, իսկ աստիճանավորներն ու ունեւորները ապրում են՝ իրենց պատվի գործը համարելով օրինականությունը, բարոյականությունն ու հանրային շահերը շրջանցելը:

4-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Արդար չէ, երբ մեզ ստիպում են ձայն չբարձրացնել հանուն արդարության ու ճշմարտության, իբր ջուր ենք լցնում թշնամու ջրաղացին, իսկ իրենք վերեւներում գաղտնի մութ գործեր են անում մեր ընդհանուր ունեցվածքի, մեր հավասարության, իրավունքի, արժանապատվության ու առաջադիմության հաշվին...

5-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Արդա՞ր է, որ մարդկանց մեծ մասը իրենց իրական ու հասանելի բարօրության, իրենց ժառանգների լուսավոր ապագայի համար պայքարելու փոխարեն հարմարվում են, լռում, աչք փակում, հանդուրժում անարդարությունը, կաշառվում, վախենում, փոխզիջումների գնում ստահակների հետ...

6-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Արդա՞ր է, որ շատերին թվում է, թե ինքը անուժ մի մասնիկ է, ոչինչ չի կարող բարեփոխել, թե մեր ազգը փոքր է, պիտի հնազանդվի խոշորների կամքին,- եւ այդ մտայնությունը ո՞նց է տկարացնում շատերի ոգին...

7-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Արդա՞ր է, որ էսպիսի փչովի, այլանդակորեն մեծ պետական-իշխանական ապարատ է ձեւավորվել մի փոքր երկրում, երբ իրական արդյունքներ ստեղծում են քչերը. սակավ են քրտնողները, ձրիակերները՝ շատ... արդա՞ր է...

ՄԻՀՐԱՆ- Լավ, լավ, լավ... արդար չէ, գիտեմ, ես ինքս շատ եմ նեղվում էդ հիմնահարցերից... Էդ ամենը ասել եք Փոփոշի երեսի՞ն... թեեւ նա ինչ երես ունի որ...

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ- Բա ոնց, էն էլ ոնց, քիչ էր մնում աչքը հանեինք...

ՄԻՀՐԱՆ- Իսկական ռոմանտիկներ եք, բայց եւ ուժեղ եք, տեսնում եմ... Եվ ի՞նչ պատասխանեց Փոփոշը...

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Դե նա պատասխան էլ չունի: Քմծիծաղեց, հետո կանչեց իր հաստավիզ թիկնապահներին, սրանք էլ մեզ դուրս արեցին:

ՄԻՀՐԱՆ- Ուժո՞վ…

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Մի փոքր հրմշտոց եղավ: Մենք հակված չենք բախումների, մենք խաղաղ ցուցարարներ ենք: Մեր ոտքով դուրս եկանք նրա վիթխարի տան բակից:

2-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Իսկ երբ հսկա դարպասը փակեցին մեր քթի տակ, մենք հենց դարպասի մոտ մի լա՛վ պարեցինք… Երեւի Փոփոշը իր դղյակի վերին պատուհանից նայում էր մեզ, գուցե արդեն առանց քմծիծաղի:

ՄԻՀՐԱՆ- Պարեցի՞ք…

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Հա… Հիմա ցույց կտանք՝ ոնց ենք պարել… Ի՞նչ կասեք, տղերք…

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ- Պարենք, պարենք, թող նկարիչն էլ տեսնի:

(Ցուցարարները, միացնելով բջջային հեռախոսի ոգեշունչ երաժշտությունը, ինքնաբուխ պարում են՝ իրենց մեջ ներառելով Միհրանին: Ներս է մտնում դեղատան տնօրենը. մուտքի մոտ կանգնած՝ նա զարմացած-զայրացած նայում է պարողներին, ապա փութաջանորեն մոտենում է նրանց):

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ- Միացիր մեզ, եղբայր, պարիր մեզ հետ…

ՏՆՕՐԵՆ *(կարմատակած գոռում է)*- Կանգնեք, վերջ տվեք, վերջացրեք…

(Ցուցարարները եւ Միհրանը ընդհատում են պարը, զարմացած նայում տնօրենին):

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Ի՞նչ ես գոռում, եղբայր, ինչի՞ չես թողնում պարենք…

ՏՆՕՐԵՆ *(փրփրակալած)*- Ովքե՞ր եք, էս ի՞նչ հարսանիք եք սարքել էստեղ…

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ *(իրար լրացնելով)*- Մենք Արդարության ցուցարարներն ենք, Փոփոշին ուղղված պարն ենք նորից պարում…

ՏՆՕՐԵՆ- Ի՞նչ արդարության ցուցարարներ, ի՞նչ Փոփոշ… Սա դեղատուն է, սա պարահրապարակ չէ… Հապա մի ցրվեք էստեղից:

ՄԻՀՐԱՆ- Իսկ դուք ո՞վ կլինեք, պարոն…

ՏՆՕՐԵՆ- Ես էս դեղատան տնօրենն եմ, սեփականատերը: Իսկ դու ո՞վ կլինես…

ՄԻՀՐԱՆ- Օ՜… Ես նկարիչ Միհրան Գաբոյանն եմ, նաեւ… ժամանակավորապես, ընդամենը մի հերթափոխով, էս դեղատան անվտանգության աշխատակիցը:

ՏՆՕՐԵՆ- Անվտանգության աշխատակի՞ցը… Մենք այլեւս նման հաստիք չունենք, կրճատել եմ, դրա փոխարեն անվտանգության սարքեր եմ տեղադրել, տեսախցիկներով: *(Ցույց է տալիս առաստաղի տակ կախված տեսախցիկները: Նմանակելով Միհրանին).* Իսկ ձեզ ո՞վ կլինի նշանակած…

ՄԻՀՐԱՆ- Մարուշը: Էսօր ինքն է, չէ՞, դեղատան տիրուհին…

ՏՆՕՐԵՆ *(նայելով շուրջը)*- Իսկ ո՞ւր է նա… Մյուս հերթապահն ո՞ւր է…

ՄԻՀՐԱՆ- Մարուշը… ըմմմ… մի երկու րոպեով դուրս եկավ մաքուր օդ, ինչ-որ լավ չէր զգում:

ՏՆՕՐԵՆ *(գազազած)*- Ես կհեռացնեմ նրան աշխատանքից, մյուս հերթապահին էլ:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ *(համախմբվելով, միաբերան)*- Թույլ չենք տա:

ՏՆՕՐԵՆ *(անակնկալի գալով, ապա պոռթկումով)*- Ի՞նչ… դուք ովքե՞ր եք, որ ինձ արգելեք իմ աշխատողների նկատմամբ կիրառել իմ իրավունքները… Հապա մի դուռս կորեք էստեղից…

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ- Իյա՛… *(Շրջապատում են տնօրենին):*

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Հայտարարում եմ կոնֆլիկտային իրավիճակ… Հանգի՛ստ, հանգի՛ստ… բոլորին է վերաբերում: *(Տնօրենին)* Մենք էլ մեր իրավունքներն ունենք, չէ՞, թե՞ կարծում եք, թե քո իրավունքներն ավելի առաջնային են, քան մերը…

ՏՆՕՐԵՆ- Դուք հարսանիք եք սարքել դեղատանը… իմ տարածքում, եւ դեռ իրավունքի՞ց եք խոսում…

2-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Դեղատո՛ւն, իմ տարա՛ծք… Էնքան էլ լավ չեն կապակցվում իրար:

3-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Մենք նաեւ պարով ենք արդարության մեր ձայնը հասցնում մարդկանց…

ՏՆՕՐԵՆ- Գնացեք՝ դա արեք փողոցներում ու հրապարակներում, դեմ չեմ… թեեւ ձեզ լսողն ո՞վ է… Բայց դեղատունը չի կարելի սարքել բողոքի հրապարակ:

4-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Դուք կրկին սխալվում եք, մենք մեր խոսքը ազատորեն արտահայտելու իրավունք ունենք մեր երկրի յուրաքանչյուր քառակուսի մետրում, լինի այն պետական, թե մասնավոր:

5-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Բացի անձնական տարածքներից: Դրանց անձեռնմխելիության դեմ ոչինչ չունենք:

ՏՆՕՐԵՆ- Լավ, եթե Մարուշին հեռացնեմ գործից, իբր դուք ի՞նչ պիտի անեք…

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Ըմմմ… հաճախորդներին կհանենք բողոքի ցույցի: Կամ կասենք, որ դուք ժամկետանց դեղեր եք վաճառում. հաճախորդների մեծ մասը քո դեղատուն այլեւս չի մտնի, եւ դու հսկայական կորուստներ կկրես:

ՏՆՕՐԵՆ- Դա հերյուրանք է, այլեւս մեզ մոտ ժամկետանց դեղեր չեն վաճառվում:

2-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ- Կդիմենք հարկայինին…

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ- Ճիշտ է, ճիշտ է…

ՏՆՕՐԵՆ- Որ ի՞նչ, ի՞նչ պիտի անեն ինձ հարկահավաքները… Ես միշտ նրանց հետ լեզու եմ գտնում:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Լրատվամիջոցներում կհայտարարենք, որ դուք ամբողջությամբ ցույց չեք տալիս ձեր ապրանքաշրջանառությունը… հարկերի կեսը չեք մուծում:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ- Հա, հա, մեծ ստվեր ունեք:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Ձեր մյուս դեղատներն էլ ստուգել կտանք: Հիմա քանի՞սն են դրանք… Մարդկանց մեծ մասի նյութական վիճակը չի լավանում, շատ հիվանդներ իրենց նշանակված դեղերը չեն կարողանում գնել, իսկ դուք բարգավաճում եք, նոր դեղատներ եք բացում, էդ ո՞նց…

ՏՆՕՐԵՆ *(այլայլվում, ապա զսպում է իրեն, հաշտվողաբար)*- Լավ, լավ… հասկանանք իրար: Դե բան է՝ ասացի ջղայնության պահին, ու՞մ հետ չի պատահում… Մարուշը կշարունակի աշխատել:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ- Հաստա՞տ…

ՏՆՕՐԵՆ- Հաստատ, խոսք եմ տալիս:

(Ներս է մտնում Մարուշը, տեսնում է խմբված մարդկանց՝ ափիբերան կանգնում է մուտքի մոտ, երկմտում է մոտենալ: Նրան միառպահ չեն նկատում):

ՄԻՀՐԱՆ- Պարոն տնօրեն, բայց ձեզ չէր խանգարի, եթե դուք գոնե մեկ ամիս օգտագործեիք խղճի հաբեր: Համոզված եմ՝ էդ դեպքում ոչ թե Մարուշին հեռացնելու մտադրություն կունենայիք, այլ կավելացնեիք նրա աշխատավարձը:

ՏՆՕՐԵՆ- Ի՞նչ խղճի հաբեր, ի՞նչ աշխատավարձի բարձրացում… Հիմա էլ ձե՞ռ եք առնում ինձ…

ՄԻՀՐԱՆ- Չէ-չէ, իսկապես, էս գիշեր ստացանք խղճի, բարության, սիրո ու ազնվության հաբեր… մի-մի տոպրակ: Ահա դրանք *(ցույց է տալիս վաճառասեղանի վրա դրված չորս պարկերը: Տնօրենը զարմանքով մոտենում է դրանց):*

ՏՆՕՐԵՆ- Էս ի՞նչ տոպրակներ են…

ՄԻՀՐԱՆ- Ասացի, չէ՞, խղճի, բարության, սիրո ու ազնվության հաբերով տոպրակներն են:

(Տնօրենը մեկ-մեկ բացում է տոպրակները, հաբերը հանում, մի պահ ուշադիր զննում եւ լցնում իրենց տեղը):

ՏՆՕՐԵՆ- Առաջին անգամ եմ տեսնում էսպիսի հաբեր: Երեւում է՝ շատ բարձր տեխնոլոգիայով են պատրաստված… Ո՞վ է տվել սրանք…

ՄԻՀՐԱՆ- Ըմմմ… Աստված…

ՏՆՕՐԵՆ- Ուրեմն՝ դու որոշել ես ինձ ձեռ առնել: *(Նկատում է դռան մոտ կանգնած Մարուշին):* Մոտ եկեք, տիկին Մարուշ… *(Մարուշը մոտենում է հավաքվածներին):* Էս որտե՞ղ էիք, էս ի՞նչ է կատարվում դեղատանը… Ու՞ր

է Արեւիկը, կարծեմ՝ էսօր նա պիտի հերթապահեր ձեզ հետ:

ՄԱՐՈՒԾ- Արեւիկին ես տուն ուղարկեցի, նրա երեխան բարձր ջերմություն ունի. նման պահերին մոր ներկայությունը երեխայի մոտ պարտադիր է:

ՏՆՕՐԵՆ- Հասկացա, իսկ ինչու՞ նրա փոխարեն Ծուշիկին չկանչեցիք:

ՄԱՐՈՒԾ- Չուզեցի, գերադասեցի մենակ:

ՏՆՕՐԵՆ- Լավ, էդ հանգամանքը հետո կպարզեմ... Իսկ էս նկարչից ի՞նչ անվտանգության աշխատակից... Նրան ո՞նց կարող եք վստահել դեղատունը... թեկուզ մի երկու րոպեով... Բայց ավելի երկար բացակայեցիք, չէ՞...

ՄԱՐՈՒԾ- Ուղիղ 20 րոպե... ես նրան վստահում եմ, նա իմ նախկին զինակից ընկերն է, նա թույլ չի տա, որ դեղատնից բան պակասի եւ... անկարգություններ լինեն:

ՄԻՀՐԱՆ *(ուրախ)*- Մարուշ ջան, ընդհակառակը, ավելացրել ենք. այ էն տոպրակները՝ գեղեցիկ, բարձր տեխնոլոգիայով պատրաստված հաբերով լի, էն էլ ինչպիսի՛ հաբեր՝ խղճի՛, բարության, սիրո՛, ազնվության... Պարոն տնօրեն, չեք զղջա, փորձեք մեկական հաբ:

ՏՆՕՐԵՆ- Դե թող անհամ կատակներդ, ես դրանց կարիքը չունեմ, ինքդ փորձիր:

ՄԱՐՈՒԾ- Որտեղի՞ց էդ տոպրակները, Միհրան:

ՄԻՀՐԱՆ- Աստված է բերել... կամ նրա նման մեկը: Չգիտեմ, էդ հարցը ինձ համար էլ առեղծված է:

ՏՆՕՐԵՆ *(Մարուշին)*- Բայց չասացիք՝ որտեղ էիք. ինչու՞ եք լքել ձեր դիրքը... հարգելի տիկին Մարուշ:

ՄԱՐՈՒԾ- Հոսպիտալից շտապ կանչեցին, գնացել էի մի վիրավոր զինվորի գլխի վիրակապը փոխելու:

ՏՆՕՐԵՆ *(թեթեւ հեգնանքով)*- Ի՞նչ է՝ հոսպիտալը առանց ձեզ վիրակապ չի՞ փոխում...

ՄԱՐՈՒԾ- Էդ զինվորն իմ կարիքն ուներ:

ՏՆՕՐԵՆ- Ա՛... Անփոխարինելի եք, տիկին Մարուշ, անփոխարինելի... Լավ, իսկ ձեր անվտանգության աշխատակիցը ինչու՞ էր ստում, ասելով, թե մի երկու րոպեով եք դուրս եկել... մաքուր օդի...

ՄԻՀՐԱՆ- Դե ձեզ ո՞նց ասեմ. Մարուշի համար ուրիշներին օգնելը մաքուր օդի պես մի բան է:

ՏՆՕՐԵՆ- Չեմ վիճում, հասկացա: *(Դադար):* Հիմա ի՞նչ ենք անում... Ցուցարարներ, կարո՞ղ եք հեռանալ, որ դեղատունը շարունակի աշխատել նորմալ ռեժիմով, մենք նոր այցելուներ ունենք, նրանց սպասարկել է պետք *(ցույց է տալիս աննկատելի ներս մտած, մուտքի մոտ սպասող հաճախորդներին):*

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Հիմա կարող ենք հանգիստ հեռանալ, ճի՞շտ է, տղերք…

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ- Հա, կարող ենք գնալ:

ՏՆՕՐԵՆ- Դե, տիկին Մարուշ, հուսամ, որ ձեր հերթապահությունն այսուհետ կանցնի աշխատանքային նորմալ մթնոլորտում:

ՄԱՐՈՒԾ- Խնդիրներ չեն լինի:

ՏՆՕՐԵՆ- Իսկ դուք, հարգելի նկարիչ եւ… անվտանգության աշխատակից… եւ տիկին Մարուշի նախկին զինակից, հուսամ՝ մինչեւ առավոտյան ժամը 9-ը էստեղ նոր պարահրապարակներ չեք բացի:

ՄԻՀՐԱՆ- Հուսացեք… Գիշերը միայն մեկ անգամ են սրտանց պարում:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Իսկ դուք՝ միշտ լեզու գտնող պարոն տնօրեն, տիկին Մարուշի ներկայությամբ վերահաստատեք, որ նրա նկատմամբ կարգապահական տույժ չեք կիրառի:

ՏՆՕՐԵՆ- Վերահաստատում եմ:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ- Հիմա հանգիստ կարող ենք գնալ: Գնացինք, տղերք:

ՄԻՀՐԱՆ- Սպասեք, մի րոպե: *(Վերցնում է 4 տոպրակները եւ մեկական հանձնում ցուցարարներին):* Ես հարցը դուք ավելի լավ կարող եք լուծել, ձեզ նման արդարամիտ ու համառ մարդիկ: Խնդրում եմ՝ էդ հաբերը բաժանեք նրանց, ովքեր չունեն խիղճ, բարություն, սիրո կարողություն ու ազնվություն:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ- Լավ, կանենք:

ՏՆՕՐԵՆ *(հաճախորդներին)*- Մոտեցեք, հիմա ձեզ կսպասարկեն, եւ նեղրող եղեք, որ մի փոքր ուշացրինք:

(Տնօրենն ու ցուցարարները հեռանում են: Հաճախորդները մոտենում են վաճառասեղանին, Մարուշը արագորեն սպասարկում է նրանց: Մնում են Մարուշն ու Միհրանը):

ՄԱՐՈՒԾ- Ի՞նչ վարչական տույժի մասին էր խոսքը, Միհրան…

ՄԻՀՐԱՆ- Քեզ աշխատանքից ազատել եւ կրկին վերականգնել են… ցուցարարների շնորհիվ:

ՄԱՐՈՒԾ- Այո՛, էդպես հաճախ է պատահում ինձ հետ… Իսկ էդ հաբերը, իրոք, ո՞վ է բերել…

ՄԱՐՈՒԾ– Ազնիվ խոսք, Մարուշ ջան, չգիտեմ: Ես էլ կարծում էի, թե ձեր խփնված հաճախորդներից է:

ՄԱՐՈՒԾ- Լավ, մի մտածիր, մի օր կպարզվի… Էդ հաբերը երեւի, պլացեբոյի համար են:

ՄԻՀՐԱՆ- Պլացեբոն ի՞նչ է…

ՄԱՐՈՒԾ- Բժշկական հետաքրքիր մեթոդ է. կարծեցյալ հիվանդներին անվնաս հաբեր են տալիս եւ ասում, որ դրանք հենց իր անհանգստությունները վերացնելու համար են: Մարդիկ օգտագործում են, եւ հիմնականում

ազատվում ինչ-ինչ ցավերից: Այսինքն՝ հավատի վրա է հիմնված էդ մեթոդը:

ՄԻՀՐԱՆ- Լա՛վ մեթոդ է: Էդ խորհրդավոր այցելուն պիտի բերեր նաեւ հավատի, հավատարմության, համբերության, ողջախոհության եւ նմանատիպ այլ հաբեր:

(Զանգում է դեղատան քաղաքային հեռախոսը: Մարուշը պատասխանում է):

ՄԱՐՈՒԾ- Գիշերային դեղատուն, լսում եմ ձեզ… Այո, ունենք… Բայց, ներեցեք, մենք դեղերի առաքում չենք անում, ցավոք… «Ծտապ օգնություն» չե՞ք ուզում կանչել… *(Ուշադիր լսում է, թե ինչ են ասում հեռախոսով):* Հասկանում եմ… Մի րոպե, չանջատեք հեռախոսը… Միհրան, կարո՞ղ ես դեղ հասցնել հիվանդին, քո մեքենայով: Նա սրտային կաթիլներ է խնդրում ու քնաբեր հաբեր: Հաշմանդամ է, ասում է՝ տանը մենակ է մնացել, տնեցիները գյուղ՝ հարսանիք են գնացել, հիմա վատ է զգում իրեն: «Ծտապ օգնություն» էլ չի ուզում կանչել, ասում է՝ կտանեն հիվանդանոց, չի ուզում, դրա կարիքը, իր ասելով, չկա… Նա կվճարի:

ՄԻՀՐԱՆ- Իհարկե, Մարուշ ջան, կտանեմ: Հասցեն ճշտիր եւ դեղերը տուր:

ՄԱՐՈՒԾ- Շատ լավ: *(Հեռախոսով)* Ալո՞… կարո՞ղ եք ասել ձեր հասցեն… ըհը *(թղթի վրա գրառում է):* Համբերեք, շուտով դեղերը կբերեն: *(Արագ փաթեթավորում է դեղերը):* Ահա, Միհրան, սա էլ՝ հասցեն: *(Փաթեթն ու թուղթը հանձնում է Միհրանին):*

ՄԻՀՐԱՆ *(կարդում է)*- Գրիգոր Լուսավորչի 51, բն. 27… Լավ, գնացի:

ՄԱՐՈՒԾ- Երկրորդ մուտք, երրորդ հարկ… Դե, կարծում եմ՝ չես մոլորվի:

ՄԻՀՐԱՆ- Անհոգ մնա, էդ փողոցը ես լավ գիտեմ, ժամանակին հաճախ էի ժամադրվում Լուսավորչի վերին խաչմերուկի մոտ:

ՄԱՐՈՒԾ- Ուրեմն՝ էդ վերհուշներով էլ գնա… Սպասում եմ վերադարձիդ:

ՄԻՀՐԱՆ- Շուտով կգամ: *(Ծտապ դուրս է գալիս):*

(Մարուշը բջջային հեռախոսով համար է հավաքում):

ՄԱՐՈՒԾ- Նարե՞, դեռ արթու՞ն ես… Չկարողացա շուտ քեզ տեղյակ պահել, մի քիչ խառն էի… խոսեցի Նաիրիի հետ… լավ է, երկու օրից կգա: Երեխեքը քնա՞ծ են… դու էլ քնիր, բարի գիշեր: *(Նոր հեռախոսահամար է հավաքում):* Հո չարթնացրի՞, Արեւիկ ջան… Ո՞նց է երեխան… Շատ լավ… Ամեն ինչ կարգին է մեզ մոտ, մի անհանգստացիր… Բարի գիշեր:

(Մարուշը կամաց երգում է՝ «Իմ փոքրիկ քաղաքում իմ մեծ սերն է ապրում…» եւ զննում դեղադարակները: Ներս է խուժում սեւ դիմակով երիտասարդը եւ ատրճանակը ուղղում Մարուշի վրա):

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ *(հրամայական տոնով)*- Ինչքան փող կա քեզ մոտ, տուր, շուտ, ժամանակ չկա:

ՄԱՐՈՒԾ *(զուսպ)*- Խելացի կարգադրություն չես անում, երիտասարդ:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ- Ոչ մի խոսք, արագ:

(Մարուշը անխոս հանում է դրամարկղի եւ իր դրամապանակի փողերը, դնում վաճառասեղանին):

ՄԱՐՈՒԾ- Էնքան էլ շատ գումար չէ կողոպուտի համար... ընդամենը՝ 63 հազար դրամ:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ- Էլ չկա՞...

ՄԱՐՈՒԾ- Չկա, սա եղածն է: *(Ուշադիր նայում է իրեն ուղղված ատրճանակին ու մեկեն ծիծաղում):*

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ- Ինչու՞ ես ծիծաղում... Ինձ վրա՞ ես ծիծաղում...

ՄԱՐՈՒԾ- Չէ, քո ատրճանակի... էդ խաղալիքո՞վ ես կողոպուտի եկել...

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ *(խուճապահար)*- Ո՞նց իմացար...

ՄԱՐՈՒԾ- Դե, պատերազմի տարիներին առիթ եմ ունեցել շփվելու նաեւ իսկական զենքի հետ... Էդ խաղալիքից թոռս էլ ունի:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ *(կարկամած)*- Հա... սա խաղալիք է... Ես իսկական ատրճանակով էսպիսի բան չեմ անի: *(Զեռքը իջեցնում է, ատրճանակը դնում գրպանը):*

ՄԱՐՈՒԾ- Բայց արածդ, համենայն դեպս, տգեղ է... անօրինական: Քեզ կարող են պատժել քրեական հոդվածով:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ- Պատժե՞լ... Դե ես հիմա փողը կվերցնեմ ու կհեռանամ եւ ոչ ոք ինձ չի բացահայտի... որքան էլ նկարագրեք ինձ, ես դիմակով եմ:

ՄԱՐՈՒԾ- Պիտի ասեմ, որ դեղատունը տեսանկարահանվում է, դու հիմա էնտեղ ես *(ցույց է տալիս վերեւի տեսախցիկները):*

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ- Ես դիմակով եմ, ինձ չեն ճանաչի:

ՄԱՐՈՒԾ- Դու գիտե՞ս, թե քրեագիտությունը որքան զարգացած է հիմա, ուզենան՝ քեզ արագ կգտնեն:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ- Չեմ կարծում, թե 63 հազարի համար էդքան հարայիրոց անեն:

ՄԱՐՈՒԾ- Տնօրենը՝ որպես տուժող կողմ, կպահանջի ու՝ կանեն: Եթե կողոպուտը չեն բացահայտում, նոր կողոպուտները շատանում են:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ- Ես ուրիշ կողոպուտի մտադրություն չունեմ:

ՄԱՐՈՒԾ- Լավ, ասենք՝ տվեցի էս փողը, ինչի՞ վրա ես ծախսելու... Քո կողմից գողացված ու արդեն կեղտոտված փողերը...

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ- Իսկ մաքուր փող լինու՞մ է...

ՄԱՐՈՒԾ- Լինում է՝ ազնվորեն վաստակածը: Կասե՞ս, թե ինչ նպատակ ես հետապնդում քո էս արարքով...

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ *(մտածում է)*- Չգիտեմ էլ՝ արժե՞ ասել...

ՄԱՐՈՒԾ- Ասա, գուցե դա քեզ օգնի...

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ- Սիրած ընկերուհուս համար ուզում եմ թանկարժեք զարդեր գնել:

ՄԱՐՈՒԾ- Ուրեմն՝ դու դեռ նշանված էլ չես, այո՞…

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ *(տխուր)*- Այո:

ՄԱՐՈՒԾ- Իսկ մտադի՞ր ես ամուսնանալ նրա հետ:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ- Շատ եմ ուզում, բայց ընկերուհիս ձգձգում է, ասում է՝ դու դեռ պատրաստ չես… Ես ուզում եմ նրան ապացուցել, որ կարող եմ լավ նշանդրեք ու հարսանիք կազմակերպել… կարգին նվերներով… Առանց ծնողներիս օգնության, նրանք թոշակառուներ են:

ՄԱՐՈՒԾ- Այսինքն՝ դու քո ամուսնության հիմքերն ուզում ես գողությամբ դնել… Ի՞նչ ես կարծում՝ դա հուսալի ու հեռանկարային ամուսնությունն կլինի… *(Դադար):* Ընկերուհուդ ուզածն այն է, որ դու ամեն ինչ անես քո վաստակով, եւ շատ աշխատես, ոչ թե գողանաս: Աշխատո՞ւմ ես…

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ- Հա, բայց քիչ եմ վաստակում, դեռեւս…

ՄԱՐՈՒԾ- Կասեմ հետեւյալը. քո եւ ընկերուհուդ միջեւ առայժմ լիակատար փոխըմբռնում չկա, պետք է մի քիչ էլ համբերել, մինչեւ էդ պահը գա:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ- Իսկ եթե չգա՞… Ես նրան սիրում եմ եւ չեմ ուզում նրան կորցնել:

ՄԱՐՈՒԾ- Մի բան կհորդորեմ քեզ, երիտասարդ. սիրուն երբեք գողություն եւ այլ կեղտեր չխառնես: *(Դադար):* Հիմա ինչպե՞ս վարվենք քեզ հետ…

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ- Փողը պետք չէ, ես գնամ, հա՞…

(Ներս են մտնում երկու ոստիկան: Դիմակավոր երիտասարդը արագ շրջվում եւ հանում է դիմակը, այլայլված ու գրեթե շշուկով դիմում Մարուշին).

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ- Էդ դու՞ք կանչեցիք նրանց…

ՄԱՐՈՒԾ *(նույնպես կիսաձայն)*- Ոչ, Աստված սիրես… Նրանք սովորականի պես շրջում են գիշերը աշխատող օբյեկտներով:

1-ԻՆ ՈՍՏԻԿԱՆ- Բարի երեկո ձեզ: Ո՞նց եք, տիկին Մարուշ, ձեզ մոտ ամեն ինչ կարգի՞ն է…

ՄԱՐՈՒԾ- Չեմ բողոքում:

2-ՐԴ ՈՍՏԻԿԱՆ- Բարեւ ձեզ… Սա էն երիտասարդը չէ՞, որ մի ժամ առաջ պտտվում էր ներքեւի սուպերմարկետի շուրջ…

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ *(կեղծ զարմանքով)*- Ի՞նչ սուպերմարկետ…

1-ԻՆ ՈՍՏԻԿԱՆ- Դու էիր, հա… Տիկին Մարուշ, նա ի՞նչ գործով է մտել դեղատուն:

ՄԱՐՈՒԾ *(մի փոքր երկմտելուց հետո)*- Նրան դեղահաբեր են պետք… իր սիրած աղջկա համար: Մեր ունեցածը էնքան էլ արդյունավետ չէ, նրան դա էի բացատրում, բայց նա պնդում էր, որ էդ հաբերից տանք: Հիմա չի պնդում:

1-ԻՆ ՈՍՏԻԿԱՆ- Այսինքն՝ նա զոռով բա՞ն էր ուզում…

ՄԱՐՈՒԾ- Դե, էնքան էլ զոռով չէր… Երիտասարդ է, տաքարյուն, նպատակին ուզում է արագ հասնել: Շուտով կամուսնանա… բայց կիրթ պահվածքի ու հասարակական կարգի մասին նա էնքան էլ ճիշտ պատկերացումներ չունի: *(Մի պահ մտածում է):* Կարո՞ղ եմ ձեզ մի բան խնդրել…

ՈՍՏԻԿԱՆՆԵՐ- Այո, իհարկե, տիկին Մարուշ, չէ՞ որ մենք ձեր պահապան հրեշտակներն ենք:

ՄԱՐՈՒԾ- Էս երիտասարդին տարեք եւ նրա հետ մի քիչ զրուցեք բարեկրթության, համբերատարության, օրինավորության, հասարակական կարգի թեմաներով. մի 15-20 րոպե զրուցեք, նա ընկալունակ է, արագ կըմբռնի: Զրուցեք ու ազատ թողեք նրան, լա՞վ, նա անձնուրաց ամուսին է լինելու:

1-ԻՆ ՈՍՏԻԿԱՆ- Լավ, լավ, տիկին Մարուշ, մենք նրան կլուսավորենք ու բաց կթողնենք, անհոգ եղեք… Դե, երիտասարդ, առաջ… Խաղաղ հերթապահություն ձեզ, տիկին Մարուշ:

ՄԱՐՈՒԾ- Ձեզ՝ նույնպես: Շնորհակալ եմ: Հուսամ՝ ձեր հաջորդ այցին կպատմեք, թե ինչպես է անցել ձեր դասախոսությունը:

ՈՍՏԻԿԱՆՆԵՐ- Անպայման, ցտեսություն ձեզ:

(Դիմակով երիտասարդն աննկատ փողը վերադարձնում է Մարուշին: Ոստիկանները եւ դիմակով երիտասարդը դուրս են գնում: Նույն պահին ներս է մտնում Միհրանը՝ հարցական հայացքը սեւեռելով հեռացողների վրա):

ՄԻՀՐԱՆ- Մարու՞շ… դարձյալ արտակարգ դե՞պք… փայտե մուրճո՞վ…

ՄԱՐՈՒԾ *(ծիծաղում է)*- Չէ, խաղալիք ատրճանակով… Ուզեց կողոպտել *(ցույց է տալիս ետ ստացած թղթադրամները):* Դե, չհաջողեց սիրահարը:

ՄԻՀՐԱՆ- Ոստիկանները նրան կալանելու՞ տարան…

ՄԱՐՈՒԾ- Չէ, տարան դաստիարակչական զրույցի: Դեղերը տվի՞ր հաշմանդամ հիվանդին:

ՄԻՀՐԱՆ- Անշուշտ, ահա դեղավճարը *(փող է հանձնում Մարուշին):* Տվեց նաեւ տաքսիի փողը, չվերցրի:

ՄԱՐՈՒԾ- Ապրես:

ՄԻՀՐԱՆ- Պատերազմի հաշմանդամ է, սայլակին գամված… Հա, ասաց, որ ճանաչում է քեզ, նա ձեր նախկին վիրավորներից է, Ձախլիկ Խեչո են ասում նրան: Հիշու՞մ ես նրան…

ՄԱՐՈՒԾ *(վերհիշելով)*- Հա, Ձախլիկ Խեչոն… Խիզախ զինվոր էր… Շրջապատումից դուրս էր եկել թշնամու մի ամբողջ դասակ ոչնչացնելով… Առողջություն նրան… Շնորհակալ եմ, Միհրան, դու օգնեցիր մեզ:

ՄԻՀՐԱՆ- Միշտ պատրաստ եմ, Մարուշ:

(Միհրանը նստում է բազմոցին, վերսկսում ընթերցանությունը, բայց շուտով ննջում է: Ներս են մտնում գանգրահեր տիկինն ու կիսաճաղատ տղա-

մարդը եւ տեսնելով ննջող Միհրանին՝ կամացուկ բարեւում են Մարուշին եւ գրեթե անլսելի՝ զրույցի բռնվում նրա հետ: Կարճ ժամանակ անց Միհրանը անհանգիստ շարժումներ է անում եւ «Կորեք, կորեք» բացականչելով՝ արթնանում ու ոտքի է կանգնում: Մարուշն ու հաճախորդները ընդհատում են զրույցը եւ տարակուսած նայում Միհրանին):

ՄԱՐՈՒԾ- Ի՞նչ եղավ քեզ, Միհրան…

ՄԻՀՐԱՆ- Էլի նույն գեշ երազը տեսա…

ՄԱՐՈՒԾ- Ի՞նչ երազ է…

ՄԻՀՐԱՆ- Հոհոում ու քրքջում են՝ լպիրշ, կարմրած դեմքերով մարդիկ, մոտենում՝ քաշքշում են շորերս, նկարչական ներկերս թափում են գլխիս, նկարներս ոտնատակ են տալիս…

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏԻԿԻՆ- Դա նրանից է, որ դուք դեպրեսիայի ու սթրեսի մեջ եք:

ԿԻՍԱՃԱՂԱՏ ՏՂԱՄԱՐԴ- Եթե մեր դեղաբույսերն օգտագործեք եւ ոչ թե էս թունաքիմիկատները *(ցույց է տալիս դեղադարակները),* դուք շատ արագ կլավանաք, այլեւս մղձավանջային երազներ չեք տեսնի, կքնեք առողջ մանկան պես:

ՄԻՀՐԱՆ *(քրթմնջալով)*- Հա, էս դեպրեսիան, էս սթրեսը…

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏԻԿԻՆ- Մարդկանց մեծ մասը տառապում է դրանցով, շատերը թաքցնում են դա, բժշկի չեն դիմում եւ չունեն կարգին գիտելիք, որ մեր հայրենի խոտերով ապաքինեն իրենց:

ԿԻՍԱՃԱՂԱՏ ՏՂԱՄԱՐԴ- Գիտե՞ս՝ ինչ զորավոր խոտեր կան մեր հանդերում. Էլ ուրց ու դաղձ, էլ անթառամ ու առյուծագի…

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏԻԿԻՆ- Էլ անանուխ ու ազնվամորի, էլ եղեսպակ ու եղինջ…

ՄԱՐՈՒԾ- Էլ երիցուկ ու խավրծիլ, էլ մասուր ու մանանեխ…

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏԻԿԻՆ- Էլ թրթնջուկ ու ավելուկ, էլ շրմշուղ ու շուշան…

ԿԻՍԱՃԱՂԱՏ ՏՂԱՄԱՐԴ- Էլ սպանախ ու շաղգամ… ո՞ր մեկն ասենք…

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ- Էն է՝ կովերն ու ոչխարներն են դրանք ուտում, եւ նրանք բոլորից առողջ են:

ՄԻՀՐԱՆ- Դուք դե՞մ եք էս դեղորայքին *(ցույց տալով դեղադարակները):*

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏԻԿԻՆ – Բացառությամբ մի քանի դեղի ու էս՝ խոտաբույսերի բաժնի *(ցույց է տալիս),* բայց սրանք գնողներն ու օգտագործողները քիչ են:

ԿԻՍԱՃԱՂԱՏ ՏՂԱՄԱՐԴ- Ես ու կինս քարոզում ենք, որ մարդիկ, նախ, օգտագործեն դեղաբույսերը, բնական միջոցներով պահպանեն ու վերականգնեն իրենց առողջությունը, թե չէ սրանցով մարդիկ ավելի շուտ արագացնում են իրենց կործանումը:

ՄԻՀՐԱՆ *(մեկուսի)*- Քարոզիչնե՛ր: Ցուցարարների հետ հետաքրքիր ու

նշանակալից ուժ կլինեն: Տնօրենն էստեղ լիներ՝ լսեր նրանց քարոզը… *(Հաճախորդներին).* Ես հաշվի կառնեմ ձեր քարոզը:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏԻԿԻՆ- Եթե որոշեք անցնել դեղաբույսերի, համեցեք մեր տուն, մենք ձեզ շատ բան կարող ենք առաջարկել … անվճար… հատկապես, որ ձեզ ճանաչում ենք: Ձեր նկարները տեսել ենք պատկերասրահում, դուք հիանալի բնապատկերներ եք նկարում:

ՄԻՀՐԱՆ- Ծնորհակալ եմ: Կարծում եմ՝ մենք կհանդիպենք… ձեր տանը:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏԻԿԻՆ- Ուրախ կլինենք: Մեր հասցեն տիկին Մարուշը ձեզ կփոխանցի:

ԿԻՍԱՃԱՂԱՏ ՏՂԱՄԱՐԴ- Միասին մասուրի եւ ուրցի թեյ կխմենք:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏԻԿԻՆ- Դե, տիկին Մարուշ, մենք գնանք, շուտով լույսը կբացվի: Ձեզ լավ պահեք: Մի շաբթից այցի կգանք ձեզ… լավ պաշարով: Ցտեսություն ձեզ:

ԿԻՍԱՃԱՂԱՏ ՏՂԱՄԱՐԴ- Մինչ նոր հանդիպում:

ՄԱՐՈՒԾ ԵՎ ՄԻՀՐԱՆ- Ցտեսություն, հաջողություն ձեզ:

(Գանգրահեր տիկինն ու կիսաճաղատ տղամարդը հեռանում են):

ՄԻՀՐԱՆ- Ովքե՞ր են էդ մարդիկ, Մարուշ:

ՄԱՐՈՒԾ- Լավ ու հետաքրքիր մարդիկ են: Ուսուցիչներ են՝ մանկավարժական զույգ: Զբաղվում են նաեւ դեղաբույսերի հավաքչությամբ: Արդեն հարուստ գիտելիքներ ու փորձ ունեն էդ ասպարեզում: Գնում են մեր ալպյան գոտիները՝ նոր խոտեր հավաքելու: Դպրոցական արձակուրդները սկսվել են, նրանք, ինչպես միշտ, իրենց հանգիստը կանցկացնեն բնության գրկում:

ՄԻՀՐԱՆ- Իսկ ինչու՞ են եկել գիշեր օրով:

ՄԱՐՈՒԾ- Ինձ համար չորացրած ուրց ու մասուր են բերել… Առավոտ վաղ են ճամփա ընկնելու, ոտքով… Մենք ընտանիքներով բարեկամներ ենք դարձել: Ամուսինը՝ Սարգիսը, երբ վիրավորվել էր, նախ, մեր դաշտային հոսպիտալում էր ապաքինվում… Դե գիտես, նման ծանոթությունները հաճախ բարեկամությամբ են շարունակվում:

ՄԻՀՐԱՆ- Կամ՝ սիրով…

ՄԱՐՈՒԾ- Իմ պարագայում, գիտես, նման բան չկա: Դու էլ պատերազմական շրջանից բարեկամներ ունես:

ՄԻՀՐԱՆ- Ունեմ, բայց նրանց թիվը նվազում է: *(Դադար):* Մարուշ ջան, չհասցրիր ասել՝ ո՞նց է վիրավորը, ինչու՞ էր քեզ կանչում…

ՄԱՐՈՒԾ- Ա՛, Հրա՞յրը… Գնացի՝ խաղաղվեց, վիրակապը փոխեցի, մի քիչ զրուցեցինք: Ասաց՝ բուժքրոջ բերանից ծխախոտի հոտ է գալիս, դրա համար մոտ չէր թողնում: Ասում է՝ զզվելի է նման կնոջ հետ շփվելը… Ավանդապահ տղա է:

ՄԻՀՐԱՆ- Իսկ բժշկին ինչու՞ չէր թողնում վիրակապել…

ՄԱՐՈՒԾ- Ասում էր՝ նրա բերանից էլ սպիրտի հոտ է գալիս, բժշկին վայել չէ... Բայց, գիտեմ, բժիշկ Դադայանը երբեք հարբած չի լինում:

ՄԻՀՐԱՆ- Այ քեզ բծախնդիր զինվոր:

ՄԱՐՈՒԾ- Հա, բծախնդիր էր նաեւ էն ժամանակ, երբ թուրք դիվերսանտները մոտեցան նրանց դիրքերին: Առաջինը Հրայրն էր մարտի բռնվել: Ասում են՝ կռվել է մինչեւ վերջին փամփուշտը, վիրավոր վիճակում...

ՄԻՀՐԱՆ- Նրա ձեռքից քանի՞ ասկյար ոտքերը տնկեց...

ՄԱՐՈՒԾ- Ինքը չխոսեց էդ մասին, բժիշկն ասաց, որ երեքին հաստատ խփել է:

ՄԻՀՐԱՆ- Իսկ էդ ծխախոտի ու սպիրտի թեմայով խոսեցի՞ր գործընկերներիդ հետ:

ՄԱՐՈՒԾ- Խոսեցի, դե խոստացան զերծ մնալ նման հոտերից... տեսնենք:

(Շտապ ներս է մտնում կիբերմարտիկ Հակոբը՝ նոթբուքով):

ԿԻԲԵՐՄԱՐՏԻԿ- Կներեք, վայֆայ ունե՞ք... հա, բարեւ ձեզ:

ՄԻՀՐԱՆ- Տղա ջան, դուք դեղատուն եք մտել, ոչ թե ինտերնետ-ակումբ:

ՄԱՐՈՒԾ- Մի վայրկյան, Միհրան... Երիտասարդ, դուք կարեւո՞ր գործով եք եկել:

ԿԻԲԵՐՄԱՐՏԻԿ- Հա, մորքուր ջան, մեր շենքում հոսանքը անջատվեց հանկարծ, հարեւան շենքում եմ ապրում, տեսա՝ դուք աշխատում եք, շտապեցի ձեզ մոտ: Ես հիմա մի ուժեղ օպերացիայի վրա եմ աշխատում՝ նրանց կայքերի դեմ, եթե էս դադարը երկարի, մեր խմբի աշխատանքը ջուրը կընկնի:

ՄԻՀՐԱՆ- Դու հաքե՞ր ես... *(Մեկուսի).* Թե՞ ինտերնետային վիրուս է...

ԿԻԲԵՐՄԱՐՏԻԿ- Ես կիբերմարտիկ եմ, Հակոբ է անունս:

ՄԱՐՈՒԾ- Հակոբ ջան, վայֆայ կա մեզ մոտ, նստիր ու աշխատիր:

ԿԻԲԵՐՄԱՐՏԻԿ- Շատ շնորհակալ եմ:

(Հակոբը նստում է բազմոցին եւ սկսում տենդագին տկտկացնել նոթփուքի ստեղնաշարը):

ՄԻՀՐԱՆ *(Մարուշին, կամաց)*- Էդ վայֆայն ինչու՞ եք միացրել դեղատանը:

ՄԱՐՈՒԾ- Ես խնդրեցի տնօրենին՝ արեց: Աշխատողներս ենք օգտվում, նաեւ հաճախորդները, երբ ուզում են շտապ ճշտել ինչ-որ դեղերի անուններ կամ դրանց դեղաբանական տվյալները: Դե, ժամանակից ինչու՞ հետ ընկնենք...

ՄԻՀՐԱՆ- Այ դա չգիտեի. դու նաեւ արդիական մտածելակերպ ունես:

ՄԱՐՈՒԾ *(ժպտում է)*- Աղջիկս պլանշետ է նվեր ուղարկել ինձ ծննդյանս օրը, դե ես էլ ստիպված... արդիականացա: *(Ցույց է տալիս պլանշետը):*

ՄԻՀՐԱՆ- Ի՞նչ է անում աղջիկդ...

ՄԱՐՈՒԾ- Փո՞քրը… նա սովորում է բժշկական համալսարանում, մի տարուց կավարտի, ակնաբուժության մեջ է հմտանում: Ասում է՝ մամ, մենք միասին մեր ակնաբուժական կլինիկան կստեղծենք, դու էլ կլինես իմ բուժքույրը:

ՄԻՀՐԱՆ- Շատ ուժեղ նպատակ ունի, պիտի աջակցել:

ՄԱՐՈՒԾ- Հա, տեսնենք… Իր ուսումնական նյութերն ուղարկում է ինձ, ես էլ ազատ ժամանակս պլանշետով դրանք կարդում-յուրացնում եմ, ճիշտ որ՝ ուսանողի պես:

ՄԻՀՐԱՆ- Դե դու մի լավ բժշկի գիտելիքներ ունես:

ՄԱՐՈՒԾ- Չէ, սովորելու էնքա՛ն բան կա… Հա, աղջիկս ասում է նաեւ, որ մարդիկ պետք է լավ տեսողություն ունենան… գիտե՞ս՝ ինչի համար… Ասում է՝ որ լավը իսկապես լավ տեսնեն, իսկ վատը՝ վատ:

ՄԻՀՐԱՆ- Թող նման ակնոցներ ստեղծի, ես էլ կկրեմ:

ՄԱՐՈՒԾ- Կարծում ես՝ հնարավո՞ր է…

ՄԻՀՐԱՆ- Դե էս նոր տեխնոլոգիաներն էնպիսի թափով են զարգանում, որ շատ բան է սպասելի… Այ, ես կուզենայի նաեւ էնպիսի սարք, որ ցույց տա հոգով իրար նման մարդկանց, ընդհանրապես՝ լավ ու վատ հոգիները զանազանի… Իսկ մեծ աղջիկդ ի՞նչ գործի է…

ՄԱՐՈՒԾ- Հայոց լեզվի ուսուցչուհի է: Նա շատ անհանգստանում է, որ մեր հայրենակիցները մեր հայերեն գեղեցիկ լեզուն վատ են օգտագործում, շատերը օտար լեզուներով են խոսում էստեղ՝ իրենց հայրենիքում: Ասում է՝ սա մեր ամենամեծ ամոթն է:

ՄԻՀՐԱՆ- Լիովին համաձայն եմ աղջկադ հետ: *(Մտահոգ).* Պատմության ընթացքում մեր կորուստների գլխավոր պատճառներից մեկն եղել է էդ օտարասիրությունը եւ օտարներին ապավինելը: *(Լռում է, մոտենում դեղատան ելքին եւ մի պահ նայում դուրս):* Շուտով լուսաբաց կլինի, հորիզոնը շառագունում է… Շատ եմ հուզվում էդ բոսոր բնապատկերից, պատանու պես եմ հուզվում: Միշտ ցանկացել եմ նկարել էդ տեսարանը, բայց մի բան շարունակ ինձ ետ է քաշում…

ՄԱՐՈՒԾ- Երեւի էդ բոսորը քո ներսի գույնն է, չէ՞, Միհրան…

ՄԻՀՐԱՆ- Ճիշտ կռահեցիր, Մարուշ ջան, սուր աչք ունես:

ՄԱՐՈՒԾ- Բայց դու էդպես էլ չասացիր, թե իրականում ինչի համար ես եկել դեղատուն… Գուցե Շուշիկը քեզ էլ է հրապուրել, հը՞…

ՄԻՀՐԱՆ- Չէ-չէ, նույնիսկ նման բաների ցանկություն չկա վաղուց… Գիտե՞ս՝ միայնակ մարդիկ նման են լույսի վրա թռնող թիթեռների. գիշերը դեղատան լույսը վառ է, դուռն էլ՝ բաց:

ՄԱՐՈՒԾ- Ուրեմն՝ քեզ էստեղ է բերել միայնությունը… տրտմությունը… հուսալքությունը… մի խոսքով՝ խորը ընկճախտը:

ՄԻՀՐԱՆ- Այո, Մարուշ… Իմ ներսում ոնց որ համաշխարհային թախծի

տոնահանդես է: *(Դադար):* Բայց քո ներկայությամբ անցած էս գիշերային ժամերն անհետեւանք չեն անցել. իմ ներսում ձնհալ եմ զգում հիմա…*(Ավելի է մոտենում Մարուշին եւ ուղղակի նայում նրա աչքերին):* Ի՞նչ կլինի, Մարուշ, որ միասին ծերանանք… այսուհետ…

ՄԱՐՈՒԾ *(հետքայլ է անում)*- Ի՞նչ… դու լո՞րջ ես խոսում… Արդեն ծրագրե՞ր ունես իմ վերաբերյալ…

ՄԻՀՐԱՆ- Չէ, Աստված սիրես, Մարուշ, ոչ մի ծրագիր, ոչ մի նկրտում: *(Դադար):* Շատ անսպասելի ու ինքնաբուխ ստացվեց առաջարկությունս… ներիր:

ՄԱՐՈՒԾ- Քեզ թվում է՝ ես կփոխե՞մ իմ հոգին, ճակատագիրս, պատիվս…

ՄԻՀՐԱՆ- Չի թվում, դու անշեղելի ես, Մարուշ:

ԿԻԲԵՐՄԱՐՏԻԿ- Առ քեզ, առ քեզ… ուռա, ջարդեցինք…

ՄԻՀՐԱՆ *(մոտենում է կիբերմարտիկին)*- Ինչքա՞ն ջարդեցիք…

ԿԻԲԵՐՄԱՐՏԻԿ- Արդեն 50-ից ավել, եւ ինչպիսի՛ կայքեր… Ամեն ինչ լավ եղավ… (*Նայում է դուրս):* Ոնց որ մեր շենքի լույսը միացրել են: Ես գնամ՝ տանը շարունակեմ… Շատ շնորհակալ եմ, մորքուր ջան, ձեզ էլ, պարոն, շնորհակալություն եւ հաջողություն ձեզ:

ՄԱՐՈՒԾ ԵՎ ՄԻՀՐԱՆ- Հաջողություն:

(Կիբերմարտիկը փակում է նոթբուքը եւ արագաքայլ հեռանում: Նույն պահին ներս է մտնում Արեւիկը՝ ժպտերես, ուրախ: Թռուցիկ բարեւում է Միհրանին):

ԱՐԵՎԻԿ- Մարուշ մորքուր, ես եկա: Տեղս տեղ չէր տալիս, որ քեզ մենակ եմ թողել: *(Զգեստափոխվում է, հագնում սպիտակ խալաթը):*

ՄԱՐՈՒԾ- Դե ախր ինչու՞ ես եկել, հո ինձ չեն փախցնելու, դեղատունն էլ չեն թալանելու: Ասացի, չէ՞, մնա երեխայի մոտ… Հը, ո՞նց է աղջիկդ:

ԱՐԵՎԻԿ- Շնորհակալ եմ, հիմա լավ է, ջերմությունն իջավ, հանգիստ քնած է: Մի լավ լուր էլ…

ՄԱՐՈՒԾ- Ի՞նչ լուր, Արեւ ջան…

ԱՐԵՎԻԿ- Սարոն գալիս է… մի շաբթից: Զանգեց, ասում է՝ այլեւս արտագնա աշխատանքի չեմ գնա:

ՄԱՐՈՒԾ- Շատ ուրախ եմ, աղջիկս: Ասում էի, չէ՞, որ նա անպայման կգա, ինչ էլ լինի՝ հետ կգա, ոնց կարող է քեզ նման արեւին լքել… Բայց խոստացիր, որ դու նրան այլեւս չես նեղացնի, պահանջկոտությունդ կչափավորես: Թող էստեղ ինչքան կարողանում է՝ աշխատի: Հարազատ միջավայրում ապրելն ու աշխատելն անգին բան է, ոչնչի հետ փոխանակելի չէ:

ԱՐԵՎԻԿ- Ես դա արդեն հասկացել եմ, Մարուշ մորքուր. պետք լինի՝ ես կաշխատեմ, նրան էլ կպահեմ, աղջկաս էլ:

ՄԱՐՈՒԾ- Ապրես, Արեւիկ, այ էդ տրամադրվածությունն արդեն բավա-

կան է, որ ամեն ինչ այսուհետ լավ ընթանա: *(Դադար):* Արեւիկ ջան, իմացիր, որ էս գիշեր ինձ ընկերակցել է իմ նախկին զինակից ընկերը՝ նկարիչ Միհրան Գաբոյանը:

ԱՐԵՎԻԿ- Նա ամբողջ գիշեր էստե՞ղ էր…

ՄԱՐՈՒԾ- Այո:

ԱՐԵՎԻԿ- Այսինքն՝ նա փոխարինե՞լ է ինձ…

ՄԱՐՈՒԾ- Կարելի է եւ էդպես ասել, բայց նա *(ծիծաղելով)* անվտանգության ծառայողի գործն էր անում:

ԱՐԵՎԻԿ- Շնորհակալություն, պարոն Գաբոյան: Ես ձեզ գիտեմ, դուք մեկ-մեկ մտնում եք մեր դեղատուն, հատկապես ուշ ժամերին… բայց դեղ չեք գնում, ուրեմն՝ առողջական խնդիրներ չունեք:

ՄԻՀՐԱՆ- Շնորհակալ եմ, որ դուք ինձ նկատում եք: Դեռ դեղերի ժամանակը չի եկել: *(Դադար):* Դե, ես գնամ, Մարուշ ջան: Գնամ արվեստանոց, կարծես թե մուսաս վերադառնում է…

ՄԱՐՈՒԾ- Լավ կլիներ, նախ, տուն գնայիր հանգստանալու, չէ՞ որ դու անհանգիստ ու աղմկոտ գիշեր ես անցկացրել… Գուցե՞ հակաընկճախտային հաբեր տամ…

ՄԻՀՐԱՆ- Չէ, շնորհակալ եմ, ես հաբեր չեմ օգտագործում, մորս պես. նա թեեւ բուժաշխատող էր, երբեք դեղ չխմեց կյանքում, չէր հավատում դեղամիջոցներին, եւ երկար ապրեց, 90 տարուց ավելի: Երբ վատ էր զգում, ոտքերի տաք լոգանք էր ընդունում միայն… Աստված նրա հոգին լուսավորի:

ՄԱՐՈՒԾ- Դու է՞լ ես էդպես վարվում, երբ վատ ես զգում:

ՄԻՀՐԱՆ- Այո:

ՄԱՐՈՒԾ- Ուրեմն՝ դուք ունեք ձեր ընտանեկան ավանդույթը… Դե, շնորհակալ եմ, Միհրան, գիշերային ընկերակցության համար:

ՄԻՀՐԱՆ- Ի՞նչ շնորհակալություն, Մարուշ ջան, էդ ես եմ քեզ երախտապարտ… Գնամ, լավ հսկեք դեղատունը… Հա, եթե ցուցարարները հաջորդ գիշեր երեւան, ինձ կանչեք… Գնամ, բարի լույս ձեզ:

ՄԱՐՈՒԾ ԵՎ ԱՐԵՎԻԿ- Բարի լույս, հաջողություն:

(Միհրանը գնում է դեպի ելքը, ապա շրջվում, ետ է գալիս):

ՄԻՀՐԱՆ- Մարուշ ջան, խնդրում եմ՝ մոռացիր, ինչ-որ քիչ առաջ ասացի:

ՄԱՐՈՒԾ- Ի՞նչը…

ՄԻՀՐԱՆ- Միասին ծերանալը:

ՄԱՐՈՒԾ- Արդեն մոռացել եմ, անհոգ մնա: Դու ավելի ճիշտ ու հրատապ գործեր ունես, նկատի ունեմ հատկապես նկարչությամբ զբաղվելը եւ վերամիավորվելը ընտանիքիդ հետ:

ՄԻՀՐԱՆ- Առաջինն արդեն սկսված է, ճիշտ է՝ դեռ մտովի, իսկ երկրորդը… շատ դժվար հարց է, չգիտեմ՝ ինչ կլինի:

ՄԱՐՈՒԾ- Կինդ ու աղջիկդ կվերադառնան քեզ մոտ, տղադ՝ նույնպես: Դու թեեւ ազատ, բայց եւ հուսալի, նվիրյալ մարդ ես, նրանք քեզ մենության ու այլոց ձեռքը չեն մատնի:

ՄԻՀՐԱՆ- Իրո՞ք… Տա Աստված… Իմ նոր նկարը, գիտե՞ս՝ ինչ է լինելու…

ՄԱՐՈՒԾ- Ի՞նչ…

ՄԻՀՐԱՆ- Պիտի անեմ քո խոշոր, գունագեղ դիմանկարը՝ բոսոր հորիզոնի ֆոնին: Բայց պիտի կարողանամ ցույց տալ, որ քո ներսի լույսն ավելին է ու իշխող, քան՝ շրջապատինը: Դու լուսեղեն մարդ ես, Մարուշ… Դու ոնց որ ամենքիս մայրն ու քույրը լինես՝ բարի, խիստ, տոկուն, առաքինի ու սրբանկար: Դու հավատով ու համոզիչ հուսադրում ես մեզ, իսկ դա այնքան պետք է միայնակներիս, ընկճահարներիս, հուսալքվածներիս… Շնորհակալ եմ քեզ, Մարուշ, որ հնարավորություն տվիր՝ քեզ լիովին ճանաչելու եւ կյանքի իմաստը վերգտնելու համար:

ՄԱՐՈՒԾ *(ծիծաղում է)*- Երգի՛ր, երգի՛ր… ուզում ես երե՞ս տալ ինձ… Լինելու բան չէ… Լավ, հաջողություն քեզ, երբ նկարը պատրաստ լինի, իմաց տուր՝ գանք տեսնելու:

ՄԻՀՐԱՆ- Անպայման: Տղայիդ էլ՝ Նաիրիին էլ կբերես հետդ: Հա, Արեւիկն էլ թող գա:

ՄԱՐՈՒԾ- Լավ, պայմանավորվեցինք: Ցտեսություն:

ԱՐԵՎԻԿ- Ցտեսություն ձեզ:

ՄԻՀՐԱՆ- Մինչ նոր հանդիպում… կյանքի հրապարակներում եւ արվեստի հրաշալի աշխարհում:

(Միհրանը դուրս է գնում: Ետնասենյակից բեմ է մտնում պարմանուհին):

ԱՐԵՎԻԿ *(պարմանուհուն)*- Դու՞ … Դու էլի էստե՞ղ ես քնել…

(Պարմանուհին մեղավոր ժպիտով գլխով է անում):

ՄԱՐՈՒԾ- Ոնց քնեցիր, բալես…

ՊԱՐՄԱՆՈՒՀԻ- Շնորհակալություն, լավ… Նույնիսկ լավ երազներ տեսա:

ՄԱՐՈՒԾ- Ապրես, երազից սկսվող կյանքը հուսադրող ու ոգեւորիչ է լինում:

/Ներս է մտնում տնօրենը/:

ՏՆՕՐԵՆ- Բարի լույս բոլորիդ… */Ներկաները արձագանքում են՝ բարի լույս/:* Դե, ո՞նց անցավ հերթապահությունը…

ՄԱՐՈՒԾ- Լավ: Կարելի է ասել՝ հաջող: Բավարար վաճառք է եղել եւ … ունենք մարդկային ձեռքբերումներ:

ՏՆՕՐԵՆ- Մարդկային ձեռքբերումնե՞ր… այսի՞նքն…

ՄԱՐՈՒԾ- Դե ո՞նց ասեմ… Դա հեշտությամբ չես ձեւակերպի պարզ խոսքերով:

ՏՆՕՐԵՆ- Լա՛վ… Տեսնում եմ՝ Արեւիկը պոստ է վերադարձել… Լա՛վ… */նայելով պարմանուհուն/* Օրիորդ, քեզ էլի եմ տեսել էստեղ եւ գիտեմ՝ դու գնորդ չես:

ՄԱՐՈՒԾ- Նա մեր ասած մարդկային ձեռքբերումներից է…

ՏՆՕՐԵՆ- Մ՜՜… Կռահում եմ: */Դադար/:* Լավ, հետո կխոսենք էս թեմայով… Իսկ ո՞ր է մեր անվտանգության աշխատակիցը… ձեր զինակի՛ցը, տիկին Մարուշ:

ՄԱՐՈՒԾ- Նա ավարտեց իր գործը եւ գնաց… նկարելու:

ՏՆՕՐԵՆ- Եվ ինչպե՞ս ապահովեց ձեր անվտանգությունը…

ՄԱՐՈՒԾ- Հիանալի, գոհ եմ նրա ծառայությունից: Ասացի՝ միայն ձեռքբերումներ ունենք:

ՏՆՕՐԵՆ- Էնպես եք ասում, ասես նրան պիտի պարգեւատրեմ:

ՄԱՐՈՒԾ- Դե չէ, դրա կարիքը չկա: Ավելի տեղին է, երբ ինքներս ենք մեզ պարգեւատրում… օգտակար ու գեղեցիկ արարքների համար:

(Ներս է մտնում տարեց զույգը՝ իրար ձեռք բռնած: Բոլորն ուրախ դիմավորում են նրանց: Բեմը ողողվում է բոսորագույն լույսերով):

ՎԵՐՋ

հունվար-փետրվար, 2016թ.

ՄԽԻԹԱՐՎԱԾ ԽԵՆԹԸ

Բայրոնի հայկական ռոմանսը

/Գեղարվեստա-փաստագրական դրամա տաս պատկերով/

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

Լորդ Բայրոն- /բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոն/
Աբբահայր- /արքեպիսկոպոս Ստեփաննոս Ագոնց/
Հայր Հարություն /հայր Պասկալ/- /Վարդապետ Հարություն Ավգերյան/
Հայր Սուքիաս- /քահանա Սուքիաս Սոմալյան/
Ժանդարմ սպա
Ժանդարմ զինվոր
երկու երիտասարդ վանական
Կոմս Կվիչիոլի
Թերեզա
Վանականներ

Դեպքերը տեղի են ունենում ս.Ղազար կղզում եւ Վենետիկում /Իտալիա/, 1810-1820-ական թվականներին:

ՊԱՏԿԵՐ Ա

/Գրադարանում դանդաղ շրջում է հ.Հարությունը՝ ծերունական տարիքն առած, ձերմակափայլ մորուքով, եկեղեցական-տոնական հանդերձով ու ձեռնափայտով: Նա ձեռքը սահեցնում է գրադարակների գրքերի վրայով, հետո վերցնում գրասեղանին դրված օրագիրը, թերթում, ապա ինչ-որ բան վերհիշելով՝ առաջանում է բեմեզր: Նրա ձայնը մի փոքր դողդոջուն է հնչում, բայց՝ պարզ ու ներշնչված/:

Հ.Հարություն- Իմ երկար կյանքի մայրամուտին ուզում եմ մեկ անգամ եւս վերհիշել այն պայծառ ու երանելի, ոգեշունչ ու հուզախռով օրերը, երբ մեզ մոտ՝ Մխիթարյաններիս միաբանությունում հյուրընկալեցինք անգլիացի բանաստեղծ Ջորջ Բայրոնին… Ինձ համար հիշողության տաղավար տոն եմ հայտարարում այսօր… այո, թող այդպես կոչվի: Շատ բան արդեն պահ եմ տվել օրագրիս, բայց ուզում եմ ձեզ համար հատուկ նկարագրել անցյալի այն ամբողջ պատկերաշարը, որ հսկայական պաննոյի պես դրված է աչքերիս դեմ՝ իբրեւ անձնական կյանքս ամփոփող ավետարանի շքեղ տիտղոսաթերթ: */Դադար/:* Նրա ստեղծագործությունները ոսկով էին կշռվում այն ժամանակ… հիմա՝ նույնպես, այո-այո: Մի կարճ ժամանակ ես եղա նրա ուսուցիչը, բայց պիտի խոստովանեմ, որ մեզ տված նրա դասերը պակաս կարեւոր չէին… Նա շատ կրակոտն էր, բռնկուն ու կրքոտ, ուրախ ու աշխույժ, բայց եւ անհավասարակշիռ էր ու դյուրաբորբոք, նրա անսովոր շարժումները հաճախ մեր ժպիտն ու տարակուսանքն էին հարուցում… Մի խոսքով՝ խենթի մեկն էր, բայց ինչպիսի՜ հոգի ուներ, ինչպիսի՜ մեծահարշք խելք, հանճարի դրոշմը կար նրա գեղեցկափայլ դեմքին: Նա երիտասարդության ճառագայթող մարմնացում էր, մի հրեղեն մրրկահավ, որ հայտնագործեց հավերժական թռիչքի օրենքը: */Դադար/:* Ձախ ոտքից թեթեւակի կաղում էր, սակայն իր մարմնական կարողություններով նա գերազանցում էր շատ-շատերին, անգամ՝ աժդահաների. Եվրոպայում բյուր խավարամիտներ նրան դեւ էին համարում, մինչդեռ նա Աստծո սիրելի ընտրյալն էր, քերովբե՜… */Դադար/:* Ես պետք է իմ պատմությունն անեմ իմ հարազատ ու սքանչելի հայերենով, որպեսզի իմ հայ ունկնդիրների համար թյուրիմացություններ չծագեն… Բայրոնի հետ մենք առավելապես խոսում էինք նրա մայրենի բարբառով՝ անգլերենով, հաճախ՝ իտալերենով, մեկ-մեկ՝ հայերենով… Կթարգմանեմ նույնիսկ նրա բանաստեղծական այն տողերը, որ նա մեզ համար կարդաց ձիթենիների պուրակում: */Դադար/* Արդեն անցել է մոտ քառասուն տարի. գուցե եւ որոշ մանրամասներ մոռանամ դեպքերն ու նրան վերհիշելիս, գուցե եւ ժամանակագրության մեջ

երկրորդական կարգի խճողումներ թույլ տամ, բայց գլխավորում չեմ մեղանչի՝ նրա կերպարը ձեզ կմատուցեմ անխաթար. նրա մասին իմ հոգու հիշողությունը չափազանց վառ ու հստակ է, իսկ նրա ոգու սլացքը, որի ականատեսը եղանք, պարզապես անմոռանալի է… Եվ այսպես՝ 1816 թվականի դեկտեմբերի մեկն էր…

ՊԱՏԿԵՐ Բ

/Իր առանձնասենյակում ծերունազարդ աբբահայրը, գրասեղանի առջեւ նստած՝ թղթեր է կարդում եւ նշումներ անում: Ներս են մտնում լ.Բայրոնը եւ հ.Սուքիասը/:

Հ.Սուքիաս- Աստված օգնական, աբբահայր */մոտենում եւ համբուրում է աբբահոր աջը/:*

Աբբահայր- Աստված օգնական, որդիս:

Լ.Բայրոն- Իմ բարեմաղթանքները ձեզ, աբբահայր */խոնարհվում է նրա աջին/:* Ես ձեր անկոչ հյուրն եմ:

Աբբահայր- Հյուրն Աստծունն է, որդիս… Հրամմեցեք, նստեք:

Լ.Բայրոն- Ձերդ վեհափառությունը ստիպում է ինձ կանգնած մնալ. հարգանքներիս հավաստիքը:

Հ.Սուքիաս- Սրբազան հայր, լորդ Ջորջ Գորդոն Բայրոնն է, բանաստեղծ՝ Անգլիայից: Մեզ հասած տեղեկություններով՝ նա արդեն մեծ հուչակի տեր քերթող է, չնայած երիտասարդ տարիքին: Տիար լորդը մեզ այցելել է որոշակի նպատակով, մեզ համար սրտահաճո մտադրությամբ:

/Աբբահայրը հարցական նայում է լ.Բայրոնին/:

Լ.Բայրոն- Մեծարգո աբբահայր, կկամենայի ձեր վանքում սովորել ձեր հնագույն լեզուն, այն ինձ գրավում է խորհրդավոր հավքի պես: Ես կանխազգում եւ կանխատեսում եմ, որ հայերենի յուրացմամբ ես կգտնեմ մի նոր հոգեւոր հայրենիք, որի կարիքը այնպես զգում եմ հիմա:

Աբբահայր- Դուք փրկությունն եք փնտրում, որդիս… Ձեր խոսքը մի տեսակ հալածականի շեշտ ունի:

Լ.Բայրոն- Օ՜ աբբահայր, դուք իսկական պայծառատես եք: */Դադար/:* Իմ հայրենի Անգլիայում ինձ անխնա հալածել են վերջին տարիներս. լորդերն ու կառավարիչները, նրանց ծախու գրչակները, բարձրաստիճան կղերականները, փարիսեցիները եւ այլ սինլքորներ կամենում են ինձ կործանել որպես բանաստեղծի, քաղաքական գործչի ու քաղաքացու… Եվ ես հարկադրյալ վտարանդվեցի գիշատիչ Ալբիոնից՝ այլեւս այնտեղ չվերադառնալու անսասան որոշմամբ:

Աբբահայր- Ծանր խոսքեր են, որդիս: Ինչպե՞ս կարողացաք զայրացնել անգլիական վերնախավին: Դուք ապստամբե՞լ եք…

Լ.Բայրոն- Դե ապստամբելը մի քիչ չափազանցված է իմ վարքի պարագայում, բայց, ինչպես հարկն է՝ ես մի լավ ձաղկել եմ նրանց… առայժմ խոսքով ու գրչով միայն: Ես պարզապես ազատամիտ մարդ եմ, աբբահայր, անուղղելի ազատամիտ: Դա ինձ տրված մի բացառիկ շնորհ է, որին ես ուզում եմ տիրություն անել ցմահ:

Հ.Սուքիաս- Բայց ավելի բացառիկ շնորհ էլ ունի նա, սրբազան. նա մե՜ծ բանաստեղծ է: Հայր Հարությունը հաստատուն պնդում է, որ լորդ Բայրոնի մեծության քերթող այժմ մեկ ուրիշը չկա Եվրոպայում, գուցե եւ չկա ողջ աշխարհում:

Լ.Բայրոն */ուրախացած/*- Ձեր այդ հայր… Հա-ռու-թյունը */դժվարությամբ է արտաբերում/* քաջատեղյակի մեկն է երեւում: Հրաշալի անակնկալ է՝ այդպիսի գիտունի ներկայություն այստեղ: Հուսամ՝ դուք ինձ կծանոթացնեք նրա հետ:

Աբբահայր- Հայր Սուքիաս, խնդրեմ՝ համեցեք մեզ մոտ հրավիրել հայր Հարությունին:

Հ.Սուքիաս- Սիրով, աբբահայր: */Դուրս է գնում/:*

Աբբահայր- Լորդ, ասացեք, խնդրեմ՝ Ալբիոնի ձեր տեր այրերը գիտե՞ն, թե դուք հիմա որտեղ եք գտնվում…

Լ.Բայրոն- Վստահ եմ, որ նրանք շարունակում են հետեւել ինձ եւ տեղյակ են, թե ինչով եմ իրականում զբաղված… Ցավոք, նրանց ձեռքերը երկար են, բայց ինձ ձանկել չեն կարող, աբբահայր: Ես անձարակ ու թուլակամի մեկը չեմ, գիտեմ՝ ինչպես պաշտպանել ինձ ու իմ բարեկամներին: Ուզում եմ փափագել, որ դուք եւ ձեր միաբանությունը կդառնաք իմ մեծագույն ու պահանջված բարեկամը:

Աբբահայր- Դա Աստծո կամենալիքն է, որդիս:

Լ.Բայրոն- Աբբահայր, պիտի խոստովանեմ ձեզ, որ ես գովելի հավատացյալ չեմ եւ իմ գործերը Աստծո հույսին չեմ թողնում: Ես նախեւառաջ հավատում ու վստահում եմ ինձ եւ ազնիվ ու պատվական մարդկանց: Հենց նրանց շնորհիվ են աշխարհում ավելանում բարին ու գեղեցիկը:

Աբբահայր- Բայց Աստծո սերն ու օրհնությունը ուրիշ է, որդիս: Հնարավոր չէ առանց Աստծո սիրո ու ողորմածության արարել այս աշխարհում եւ հաշտ լինել այլոց հետ:

Լ.Բայրոն- Ես շատերի հետ հաշտ եմ եւ շատերի հետ՝ անհաշտ, աբբահայր, եւ այդ իրավիճակների համար պատասխանատու ենք ես եւ այդ շատերը: Ինձ առաջնորդում է իմ ներքին ձայնը: Աստված մասնակցություն չունի մեր անձնական, հանրային ու ազգամիջյան խրթին հարաբերություններին:

Աբբահայր */ներողամտորեն նայելով զրուցակցին/*- Հասկացա, դուք ազատամիտ մարդ եք, հուսամ՝ ոչ հերետիկոս:

Լ.Բայրոն- Ես ամենից առաջ բանաստեղծ եմ, աբբահայր: Իմ քայլերի մեծ մասը կատարում եմ նրա նշանի տակ, ես մշտապես ու ամենուր պոեզիա եմ փնտրում. քաղաքականության պոեզիան, պայքարի պոեզիան, սիրո պոեզիան… Մի խոսքով՝ կյանքի պոեզիայի հետեւից շնչասպառ վազողի մեկն եմ:

Աբբահայր- Ուզում եմ խորհել, որ ձեզ մի օր կհամակի նաեւ մաքուր քրիստոնյայի հավատքի պոեզիան:

Լ.Բայրոն- Ինչու չէ: Բայց, ինչպես դուք կասեք, դա թողնենք Աստծո հայեցողությանը: */Դադար/:* Աբբահայր, ես ավելի կարեւոր տեղեկություն պիտի հաղորդեմ ձեզ. ինձ ձեր կղզին է բերել ճակատագրի պոեզիան:

/Ներս են մտնում հ.Սուքիասը եւ հ.Հարությունը: Լ.Բայրոնը ուշադիր, ակնածալից հայացքով նայում է հ.Հարությունին: Նա ընդհատված խոսքը շարունակում է ավելի ոգեշունչ տոնով/:

Թող խլանան ու կուրանան ճակատագրի բոլոր մունետիկները, եթե ես հորինում եմ չզգացած ու մտովի չվերապրած բաներ… Ես մեկ ժամ առաջ գոնդոլով զբոսնում էի Լագունի ծովալճակում, երբ տեսա ձեր կղզյակը. միանգամից զմայլվեցի նրա գեղեցկությամբ ու բիբլիական խաղաղավետությամբ: Իմ թիավար Տիտոն պատմեց, թե ինչ դրախտային հրաշալիք է այս վայրը: Ոտք դնելով՝ ես անմիջապես կամեցա լինել Հայոց կղզու՝ սուրբ Ղազարի բնակիչն ու նրա նորահայտ երգիչը: Ես ուզում եմ միանալ պատվարժան հայ վանականների միաբանությանը, սակայն՝ որպես գրող ու աշխարհիկ մարդ: Ես դա ուզում եմ անել հայ լեզուն սովորելու գնով: Արգո հայրեր, խնդրում եմ՝ օգնեք ինձ սովորելու ձեր լեզուն: */Դիմելով հայր Սուքիասին/.* Տեր հայր, ինչպե՞ս կոչեցիք ձեր միաբանության անունը…

Հ.Սուքիաս- Մխիթարյանների միաբանություն, լորդ Բայրոն:

Լ.Բայրոն- Այո… Մխի-թար-յան-ների */արտասանում է դժվարությամբ/:* Ներեցեք, որ դեռեւս ստուգապես չեմ արտասանում ձեր միաբանության անունը: Ուզում եմ հուսալ, որ մոտ ապագայում, երբ կսովորեմ հայերեն, սահուն կասեմ եւ անսխալ կգրեմ հայկական բոլոր կարեւոր անվանումները:

Աբբահայր- Դա դեռ կտեսնենք… Հիմա, միլորդ, ծանոթացեք հայր Հարությունի հետ. նա հիանալի գիտե անգլերեն, իտալերեն, հունարեն…

Հ.Սուքիաս- Եվս հինգ լեզու, ընդամենը՝ ինը:

Աբբահայր- Այո, նա շատ գիտուն է, բանիմաց՝ աստվածաբանության, բանասիրության ու պատմության մարզերում: Հայր Հարությունը ցանկալի զրուցակից կարող է լինել ձեզ համար:

/Լ.Բայրոնը փութաջան մոտենում է հ.Հարությունին, թեթեւակի խոնարհվում եւ ողջագուրվում նրա հետ/:

Լ.Բայրոն- Անչափ ուրախ եմ, հայր… Հա-րու-թյուն, ձեզ հետ ծանոթանալու համար */աչքով է անում նրան/:* Մենք այնքա՜ն հետաքրքիր թեմաներ կարծարծենք:

Հ.Հարություն- Նմանապես ուրախ եմ, տիար: Ես այդպես էլ ձեզ պատկերացնում էի՝ զվարթ, հախուռն ու անկեղծ մի այր:

Լ.Բայրոն- Դուք ծանո՞թ եք իմ ստեղծագործություններին, հայր… ըմմմ… թույլ կտա՞ք, որ ես ձեզ միառժամանակ կոչեմ… ասենք՝ հայր Պասկալ:

Հ.Հարություն- Մի կարճ ժամանակամիջոց՝ այո, եթե խոստանաք, որ արագ կսովորեք անվանս հայերեն արտասանությունը:

Լ.Բայրոն- Պայմանավորվեցինք… հայր Պասկալ… Լսեցի, որ դուք մի չլսված բայրոնագետ եք:

Հ.Հարություն- Ես դեռեւս նման գիտական աստիճան չունեմ, բայց կասեմ, որ կարդացել եմ ձեր բոլոր հրատարակած ստեղծագործությունները… ձեր մայրենի անգլերենով: Պիտի ասեմ, որ ձեր բանաստեղծական լեզուն հիասքանչ է: Շատ խորն եք ճանաչում մարդկային հոգու թռիչքներն ու անկումները: Դուք վեհի, պանծալիի բանաստեղծ եք:

Լ.Բայրոն */ծիծաղում ու ծափ է զարկում/-* Հապա մի տեսեք՝ այս օտար մարդը ավելի շիտակ ու իմաստալից գնահատական է տալիս իմ ստեղծվածքներին, քան դա կարողանում են անել իմ անգլիացի գրադատ կոչեցյալներից շատերը, որոնք հետամուտ են՝ պիղծ ու անպիտան հռչակելու իմ տաղանդը… Նրանք ջանում են փոշիացնել իմ պոեզիան… եւ ամայացնել անգլիական ժամանակակից գրականությունը:

Հ.Հարություն- Միանգամայն զուր ջանքեր, լորդ Բայրոն: Դույզն իսկ մի հավատացեք, թե ձեր հակառակորդները կարող են կյանքի մեծազոր օրենքներից դուրս թողնել ձեր հրաշակերտ քերթվածները, օրինակ՝ «Ծովահենը», «Շիլիոնի կալանավորը», «Պրոմեթեւսը», «Լարան», «Երազը», մյուս պոեմները. դրանք անզուգական ու մշտահունչ ստեղծագործություններ են:

Լ.Բայրոն- Շնորհակալ եմ եւ ոգեշնչված ձեր գնահատանքից, հայր աբբա: Դուք շատ քաջալերեցիք ինձ: Իմ հալածական հոգին կարիք ունի նման մխիթարության… Ես տեսնում եմ, որ հոգեկից ընկեր եմ գտել: */Ձեռքը դնում է հ.Հարությունի ուսին/:*

Աբբահայր- Դրանում դեռ պետք է համոզվել, լորդ, երբ միասին որոշ ճանապարհ կանցնեք… Հայր Հարություն, չէի՞ք հաճի լինել մեր հյուր բանաստեղծի ուսուցիչը, նա կամենում է հայերեն սովորել…

Հ.Հարություն- Սիրով եւ ուրախությամբ, աբբահայր: Ինձ համար հոգու մեծ պարգեւ կլինի՝ դառնալ լորդ Բայրոնի ուսուցիչը: Ես այսպիսի մեծատաղանդ սան երբեւէ չեմ ունեցել:

/Լ.Բայրոնը ուրախությունից պտտվում է տեղում, գրկում ու համբուրում հ.Հարությունին, ապա՝ աբբահորն ու հ.Սուքիասին: Այնուհետեւ պարային գեղեցիկ մի կարճ կտոր է ցուցադրում: Դա կաղ մարդու մի յուրահատուկ, իսկական «կաղապար» է: «Խենթ է, խենթ է այս մարդը»,- ինքնաբուխ ու կամաց արտաբերում են աբբաները/:

Լ.Բայրոն */կտրուկ դադարեցնելով պարը/*- Սիրելի հայրեր, ես հավիտյանս երախտապարտ կմնամ ձեզ: Բայց մի խնդրանք եւս ունեմ. թույլ տվեք բնակվել ս.Ղազարում, գոնե միառժամանակ, մինչեւ հայերենի դասերիս ավարտը: Ես կսովորեմ ու կբանեմ ձեզ հետ, կհետեւեմ ձեր հանձնարարականներին… Հը՞. տիարք, իմ հյուրընկալ հայրեր… */Հայրերը երկմտած միմյանց են նայում, ապա՝ լ.Բայրոնին: Լռություն/:* Ինչու՞ եք լռում… Ես վարձահատույց կլինեմ ձեզ նաեւ նյութապես. չէ՞ որ ես լորդ եմ, միջոցների տեր… առատաձեռն պարոն եմ, ոչ թե աղքատ ու աղերսարկու մեկը:

Հ.Հարություն- Աբբահայր, գուցե՞…

Հ.Սուքիաս- Աբբահայր, գուցե՞…

Աբբահայր */Կասկածանքով նայում է լ.Բայրոնին, հետո՝ կշտամբալից հայացքը հառում աբբաներին: Ի վերջո կրկին ակնդետ սեւեռվում է լ.Բայրոնի վրա/:* Տիար Բայրոն, խնդրեմ՝ մի պահ մեզ մենակ թողեք հայրերով: Մենք պետք է խորհրդակցենք:

Լ.Բայրոն- Խնդրեմ, աբբահայր: Բայց դուք իմաստուն ու արժանի վճիռ եք կայացնելու, չէ՞… «Ինձ չմատնեք բախտի գիշանգղերի՞ն, ձեր խաչը սրտիս չդնեք»: */Երգելով դուրս է գալիս/:*

Աբբահայր- Հայրեր, մենք պետք է մի լավ կշռադատենք մեր վերաբերմունքը լորդ Բայրոնի հանդեպ: Տեսնում ենք, որ նա պատահական ու երկրորդական անձ չէ. նրա հետ հակամարտության մեջ է Անգլիայի իշխող վերնախավը: Կարո՞ղ ենք մենք ապաստան տալ մեկին, ով անօրեն է հայտարարված բրիտանական կառավարիչների կողմից… Լորդ Բայրոնը քիչ առաջ իր շուրթերով մեզ հիշեցրեց, որ Ալբիոնի ձեռքերը շատ երկար են, դրանք կարող են նաեւ մեզ հասնել: */Դադար/:*

Հ.Սուքիաս- Աբբահայր, կարծում եք, որ անգլիացիները մեզ կանհանգստացնե՞ն…

Աբբահայր- Համոզված եմ դրանում:

Հ.Հարություն- Աբբահայր, իսկ չե՞ք կարծում, որ մերժելով Բայրոնին ապաստան տալը, մենք նրա աչքին անհյուրընկալ ու ավելորդ զգուշավոր կերեւանք, եթե չասեմ՝ վախկոտ… ինչ է թե՝ Ալբիոնը կարող է զայրանալ մեզ վրա…

Աբբահայր- Միաբանությանս շահերն են թելադրում, որ մենք զգուշավոր լինենք: Եվ թող Բայրոնն ինքը պատասխանատու լինի իր կարծիքի ու տպավորությունների համար:

Հ.Սուքիաս- Աբբահայր, զգում եմ, որ մենք ունենք բարեպատեհ առիթ՝ նշանավոր ու բարեհաճ բանաստեղծի միջոցով բարձրացնելու մեր հեղինակությունն ու անունը եվրոպացիների աչքին:

Աբբահայր- Մենք պատրանքներով չենք կարող առաջնորդվել, հայր Սուքիաս: */Դադար/:* Մենք այս նուրբ ու խրթին իրավիճակում պարտավոր ենք ընտրել ոսկե միջինի ուղին՝ լինել բարեկիրթ ու հյուրասեր, ինչպես վայել է մեր ազգին ու քրիստոնեական ոգուն, այլեւ՝ լինել զգուշավոր ու հեռատես՝ օտար եզերքում օտարական բիրտ ու անակնկալ հարվածներից խույս տալու համար: Համաձա՞յն եք, հայրեր…

Հ.Հարություն- Համամիտ եմ ձեզ հետ, աբբահայր:

Հ.Սուքիաս- Համաձայն եմ:

Աբբահայր- Ուրեմն՝ ներս հրավիրենք մեր հյուրին եւ հայտնենք մեր վճիռը:

/Հ.Սուքիասը դուրս է գնում եւ արագ վերադառնում լ.Բայրոնի հետ/:

Լ.Բայրոն- Ես խոնարհաբար կլսեմ ձեր վճիռը: Հուսամ՝ ինձ չեք վտարի ձեր դրախտից՝ որպես վտանգավոր մեղսավորի ու վերջին թափառականի…

Աբբահայր- Տիար, մենք հայրերով անկեղծ խորհուրդ արինք ու վճռեցինք հետեւյալը. դուք վանքում հայերենի դասեր կառնեք հայր Հարությունից, որքան ժամանակով որ կամենաք: Բայց սուրբ Ղազարում գիշերելու, իմա՝ լիովին հանգրվանելու արտոնություն ձեզ չենք տալիս… իրավիճակի հրամայականով: Դուք Վենետիկում ապահով կացարան ունե՞ք, լորդ…

Լ.Բայրոն- Այո, աբբահայր, չեմ դժգոհում, վենետիկյան կացարանս հարմարավետ է, բայց կգերադասեի փոխադրվել ձեր միաբանության աշխարհը… թեեւ տեսնում եմ՝ դուք արդեն վճռել եք մերժել ինձ:

Աբբահայր- Լորդ Բայրոն, ձեզ մերժում ենք սոսկ բնակության հարցում, եւ, հավատացեք՝ խիստ հիմնավոր պատճառներով: Ս.Ղազարի վանքը ձեզ համար չի կարող լինել գիշերային օթեւան, բայց կարող է լինել լավ ուսումնարան ցերեկվա ողջ ժամերին:

Լ.Բայրոն */մի պահ մտորելով, ապա զվարթ ձայնով/-* Լիովին համաձայն եմ ձեզ հետ, արգո հայրեր: Եւ երախտապարտ եմ ձեզ՝ ինձ մատուցվող ընծայական հնարավորության համար: Ես ամեն օր առավոտյան այստեղ կգամ՝ հայերեն պարապելու հայր Պասկալի հետ, ապա երեկոյան կողմ կվերադառնամ Վենետիկ:

Աբբահայր- Շատ լավ, լորդ: Հայր Հարությունը ցույց կտա ձեր պարապմունքների սենյակը եւ կտեղեկացնի ուսուցման կարգի ու ժամանակացույցի մասին: Գնացեք մեր հայրերի հետ, նախ, մի փոքր հանգիստ առեք ու հյուրասիրվեք ճաշով, ապա անցեք գործի: Թող ձեզ պահապան լինեն Աստված… եւ մեր հավերժախոս հայրենը:

Լ.Բայրոն- Շնորհակալություն, աբբահայր: Դուք իմաստուն մարդ եք, ես երեւի մի օր անդրադառնամ ձեր լուսաճաճանչ կերպարին իմ ստեղծագործություններից մեկում… Ցտեսություն:

Աբբահայր */մեղմ հանդիմանանքով/*- Գնացեք, գնացեք… Եթե փնովանքի էլ չարժանանամ ձեր կողմից, դարձյալ գոհ կմնամ:

/Լ.Բայրոնը, հ.Հարությունը եւ հ.Սուքիասը ծիծաղելով դուրս են գնում/:

ՊԱՏԿԵՐ Գ

/Համեստ ու կոկիկ գրադարան. հ. Հարությունը եւ լ.Բայրոնը շրջում են գրապահարանների առջեւով եւ զրուցում/:

Հ.Հարություն- Սա մեր Գրչագրաց մատենադարանն է, կամ, ինչպես մենք ենք հաճախ ասում՝ փոքր գրադարանը: Այստեղ էլ ձեզ հետ կպարապեմ: Հայերենից բացի, լորդ Բայրոն, ձեզ կուսուցանեմ նաեւ հայոց պատմություն եւ մշակույթ, եթե, իհարկե, ցանկություն ունեք խորամուխ լինելու այդ գիտությունների մեջ:

Լ.Բայրոն- Ցանկությո՞ն… ի՞նչ եք ասում, հայր Պասկալ, ես ուղղակի տենչում եմ յուրացնել հայերի հետ կապված բոլոր կարեւոր գիտելիքները: Դուք ինձ համար մի նոր Քեմբրիջ բացեք այստեղ, ես միայն պարտական կլինեմ ձեզ: */Զարմանքով ու հիացական նայելով գրապահարանների գրքերին/:* Այս բոլոր գրքերը հայերե՞ն են, հայր Պասկալ…

Հ.Հարություն- Մեծամասնությունը հայերեն են՝ եւ տպագիր, եւ ձեռագիր, կան նաեւ օտար լեզուներով գրքեր՝ հունարեն, լատիներեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն…

Լ.Բայրոն- Գլխավորապես աստվածաբանակա՞ն գրքեր են…

Հ.Հարություն- Ոչ, լորդ, մեր գրապահոցներում շատ կան նաեւ պատմական, մշակութաբանական մատյաններ, դրանց մի մասը բացառիկ են, պահվում են միայն մեզ մոտ:

Լ.Բայրոն- Պիտի հետո աղաչեմ ձեզ, որ դուք ծանոթացնեք ինձ ձեր բացառիկ գանձերի հետ, խոստանում եմ դրանք չթռցնել:

Հ.Հարություն */խստացնելով ձայնը/*- Թույլ չենք տա, լորդ, մենք ուժեղ ենք վերահսկում մեր գրապահոցները… Հա, պիտի ասեմ նաեւ, որ մեզ մոտ պահվող տպագիր գրքերի մեծ մասը հրատարակել ենք այստեղ՝ միաբանության տպարանում:

Լ. Բայրոն- Դուք նաեւ տպարա՞ն ունեք…

Հ.Հարություն- Այո, եւ մերն իր կարողություններով բնավ չի զիջում Եվրոպայի լավագույն տպարաններին:

Լ.Բայրոն- Հիացած եմ, Տեր հայր: */Վերցնում է առանձին գրքեր եւ հապճեպ զննում/:* Այո, բարձրակարգ տպագրություն է… Հայաստանու՞մ էլ կան արդիական տպարաններ:

Հ.Հարություն- Դեռեւս ոչ, լորդ:

Լ.Բայրոն- Ցավալի է... Ես դեռ չեմ եղել Հայաստանում, հուսով եմ՝ մի օր կգնամ այդ բիբլիական ու առեղծվածային երկիրը: Կգնամ ձեր եւ մյուս վանականների ուղեկցությամբ, կգնանք մե՜ծ առաքելությամբ:

Հ.Հարություն- Ի՞նչ առաքելությամբ, լորդ Բայրոն...

Լ.Բայրոն- Որ ազատագրենք ձեր երկիրը օտար բռնակալներից: Կարո՞ղ է, արդյոք, դրանից առավել վեհ ու ազգանվեր առաքելություն լինել...

Հ.Հարություն */Կասկածալից հայացքով նայում է զրուցակցին, ապա մտախոհ, ասես ներամփոփվելով իր մեջ՝ արձագանքում/-* Երազանքնե՜ր, երազանքնե՜ր... Ձեզ համար՝ բանաստեղծական երազանքներ... Մենք թեեւ հավատավոր ժողովուրդ ենք, բայց գիտենք, թե որքան անասելի ծանր է անգամ Աստծո օրենությամբ կյանքի կոչել մեր անթառամ բաղձանքները: */Դադար/:* Լորդ, երեւում է, դուք որոշ բաներ գիտեք հայերի ու Հայաստանի մասին, եւ կարծում եմ՝ դուք այնքան էլ պատահականորեն չեք հայտնվել մեր կղզում: Ճշմարի՞տ է...

Լ.Բայրոն- Հայր Պասկալ, պատահականությունները հաճախ մեծ դեր են խաղում իմ կյանքում, այս դեպքում էլ առկա է պատահականության տարրը: Բայց, ինձ թվում է՝ ներքին մղումով եմ հասել այս բարեպատեհությանը... Ես քիչ, կցկտուր տեղեկություններ ունեմ հայերի մասին, ընդամենը այն, որ հայերը հին ու փոքրաթիվ քրիստոնյա ազգ են եւ վաղուց տառապում են թուրք ու պարսիկ բռնակալների ճնշումների տակ: Եվ նրանք շատ վտարանդիներ ունեն աշխարհի տարբեր անկյուններում: Բայց դեռ կենդանի է ձեր երկիրը եւ սպասում է իր վերածնությանը, իր ազատ արշալույսներին...

Հ.Հարություն- Այո, դուք կարեւորի մասին տեղեկացված եք: Իսկ ի՞նչ գրքերից եք քաղել ձեր տեղեկությունները:

Լ.Բայրոն- Չէի ասի, թե մինչ օրս շատ բան եմ կարդացել հայկական թեմայով, հիմնականում բանավոր-թռուցիկ պատումներ եմ լսել զանազան մարդկանցից: Հայերի մասին առաջին հիշատակությանը հանդիպել եմ Շիլլերի «Ոգետեսը» վեպում, որի գլխավոր հերոսը հայ է: Այդ օրվանից հետաքրքրված եմ ձեզնով:

Հ.Հարություն- Եվ դուք անմոռունչ եկել եք ձեր հետաքրքրության հետեւից:

Լ.Բայրոն- Միանգամայն ճիշտ եք, աբբա: Երբ գոնդոլավար Տիտոն հայտնեց, որ այս կղզում հայ վանականների միաբանություն է հիմնված, վայրկենապես անզուսպ փափագ զգացի՝ աղերսվել ձեզ հետ, շոշափել ձեր ազգային էությունը, տեսնել, թե իրականում ինչ մարդիկ են այս հայերը, ինչով են նրանք խորհրդավոր ու յուրահատուկ: */Դադար/:*

Հ.Հարություն- Լորդ Բայրոն, խնդրում եմ՝ ասեք ամենայն անկեղծու-

թյամբ. սոսկ այդ դրդապատճառներո՞վ եք մեզ հետ հարաբերվել կամենում, թե՞ կան այլ շարժառիթներ եւս… դե ասենք՝ ինչ-որ հատուկ հանձնառություն, կամ ասենք՝ կնոջ, իմա՝ սիրո խնդիր կա, հը՞… Գուցե Վենետիկում գեղեցիկ, հպարտ ու երիտասարդ հայուհու եք հանդիպել եւ հիմա ուզում եք նրա սիրտը շահել նրա իսկ մայրենի բարբառով… եւ եկել եք արագորեն սովորելու հայերեն մի քանի նախադասություն՝ սիրային բովանդակությամբ…

Լ.Բայրոն */ծիծաղում է եւ գլուխը բացասաբար շարժում/*- Օ ինչ փայլուն երեւակայություն ունեք, հայր Պասկալ… Ոչ-ոչ, ինչ-որ հիշատակեցիք՝ դրանք ոչ մի առնչություն չունեն ինձ հետ: Ես ինքնագլուխ ու ինքնասածի մարդ եմ, աբբա: Բայց կգերադասեի, որ գեղեցիկ հայուհու մասին ձեր վարկածը իրական լիներ: */Դադար/:* Իմ նախորդ պարզաբանումներին, աբբա, կավելացնեմ միայն հետեւյալը. ես խորը ընկճախտի ու հուսաբեկության մեջ եմ, ինձ հոռի մտքերը հանգիստ չեն տալիս… Անգլիայում դատապարտեցին ինձ եւ խլեցին ընտանիքս՝ կնոջս ու դստերս, ինչ է թե իմ վարքը նրանց կեղծավորության շրջանակում համատեղելի չէ: Ինձ նաեւ կամենում են ոչնչացնել իմ ճառերի համար, որոնցով լորդերի պալատում դիմակազերծել եմ անգլիացի կեղեքիչներին ու գաղութարարներին: Չլսված բան է, աբբա, նրանք անգամ չեն խնայում սեփական աշխատավոր մարդկանց. եթե իմանայիք, թե նրանք ինչ օրն են գցել մեր խեղճ ջուլհակներին… Ես մի մեծ փուշ եմ՝ մեծապատիվ, իրականում՝ զազիր ու ընչաքաղց Ալբիոնի կոկորդում խրված: Եվ ես հիմա հալածյալ եմ, հայր… Հա-րու-թյուն… Ես միայնակ մի բանաստեղծ եմ, որին հոշոտել կամեցողների թիվը մեծ է ոչ միայն Բրիտանիայում: */Դադար, ապա տխուր արտասանում է/.*

Արդ, մենակ եմ ես աշխարհում ու տխրադեմ.
Լայն ու արձակ ծովի վրա հավետ անմար,
Ուրիշների համար ինչու՞ արցունք թափեմ,
Երբ ոչ մի մարդ չի հառաչում կյանքիս համար…

Ես երեկ տեսա մի փորագրություն ձեր կղզու ժայռի վրա. «Ով մենություն՝ միակ երջանկություն». հավերժական ու դառը ճշմարտություն է: Ինձ ներկայումս պետք է մի ահռելի ու գեղեցիկ հափշտակություն, մի զորավոր հրապուրանք, մի չնաշխարհիկ հոգեզմայլանք, որով կարողանամ մեղմել իմ սուրսայր ու դառնաղետ մտքերը եւ մի փոքր հանգստություն տալ իմ միայնակ հոգուն:

Հ.Հարություն- Դուք չափազանց դառնացած ու վիրավորված եք… եւ հիմա փրկության կղզի եք երազում:

Լ.Բայրոն- Ճշմարի՜տ, ճշմարի՜տ, Տեր հայր… Ես այսօր ներըմբռնեցի, որ ցանկալի հոգեզմայլանքի դերը փայլուն կարող են կատարել հայկակա-

նության հետ կառուցելիք իմ հարաբերությունները… Թույլ տվեք, հայր Պասկալ, իմ հոգու ու մտքի բոլոր ելեւեջումներով աղերսվել ձեզ հետ եւ վերածնվել յուրովի: Եթե ոչ, ապա հենց հիմա վտարեք ինձ ձեր կղզյակից՝ որպես մի եսասեր արարածի, որպես մի չարքի, որը խռովել է կամենում ձեր դժվար վաստակած անդորրը: */Մոտենում է եւ խոնարաբար գլուխը հակում հ.Հարությունի առաջ/:*

Հ.Հարություն- Բարձրացրու գլուխդ, մի կորցրու արիությունդ, որդիս: */Մի փոքր պաշտոնական ձայնով/:* Ձեզ ոչ ոք վտարելու միտք չունի, ես՝ առավելս: Դուք մեր թանկագին հյուրն եք, եւ մենք ձեզ կշրջապատենք սիրով ու հոգատարությամբ: */Մտերմաբար/:* Ես եւ հայր Սուքիասը կլինենք ձեր պահապան հրեշտակները… Դուք Անգլիայի մեծագույն բանաստեղծն եք, եւ մի՞թե երջանկություն չէ՝ պատվել ու փայփայել իսկական քերթողին… */Դադար/:* Մի նոր փափագ ծնվեց հոգուս մեջ…

Լ.Բայրոն- Ի՞նչ փափագ, հայր Պասկալ…

Հ.Հարություն- Կուզենայի, որ ապագայում, երբ հայերենը լավ յուրացրած լինեք, դառնայիք նաեւ մեր՝ հայերիս բանաստեղծը… բանաստեղծություններ երկնեիք նաեւ մեր ոսկեղենիկ հայերենով:

Լ.Բայրոն- Թող դա լինի նաեւ իմ երազանքներից մեկը, աբբա: Իսկ որպեսզի դա իրականանա, պետք է նպատակասլաց ջանք թափի իմ ուսուցիչը՝ դուք, հայր… Հա-րու-թյուն, որպեսզի ես լավ տիրապետեմ հայերենին, այնքան, որ նրանով բանաստեղծություն գրելու ցանկություն ծնվի իմ մեջ: Իսկ մինչ այդ պիտի կարդամ հայ բանաստեղծության ընտիր հատվածները ձեր բացատրություններով:

Հ.Հարություն- Նպատակասլացություն խոստանում եմ իմ կողմից, բանաստեղծ: Սակայն նկատի ունեցեք ի սկզբանե, որ ամենաշնորհալի ուսուցիչն անգամ անզոր է լավագույնս ուսուցանել ապաշնորհ եւ ծույլ աշակերտին:

Լ.Բայրոն- Ես ժրաջան ու շնորհաշատ աշակերտ կլինեմ: */Կատակով ու զվարթ/.* Պատրաստեք ձեր պատվոգրե՜րը, միաբան հայրեր…

Հ.Հարություն */ժպտալով/-* Տաղանդավոր բանաստեղծ լինելը դեռ չի նշանակում նաեւ տաղանդավոր աշակերտ լինել օտար լեզվի յուրացման գործում: Լորդ, պիտի ձեզ նախապես զգուշացնեմ, որ հայոց լեզուն դժվարագյուտ բարբառ է, շատերը լուրջ բարդություններ են ունենում այն սովորելու ընթացքում:

Լ.Բայրոն- Ես եռանդ չեմ խնայի, որպեսզի ձեր շնորհիվ առաջիկա ամիսներին խոսեմ ու գրեմ հայերեն:

Հ.Հարություն- Տա Աստված: Եվ դուք պետք է ապացուցեք, որ օժտված եք նաեւ լեզվաընկալունակությամբ, ավելին՝ հայերենի լեզվազգացողությամբ պետք է աչքի ընկնել: Ես կջանամ այդ ջիղը հայտնաբերել ձեր մեջ:

եթե ձախողվեք հայերենում, դա մեծ դժբախտություն չհամարեք, լորդ, քանզի, կրկնեմ՝ հայերենը բավականաչափ դժվարագյուտ լեզու է, նրա առջեւ հաճախ ընկրկում են կիրթ ու ուսումնատենչ շատ օտարազգիներ:

Լ.Բայրոն- Ես ընկրկողներից չեմ, հայր Պասկալ, կձգտեմ բացառիկ լինել այդ պատվախնդիր գործում:

Հ.Հարություն- Դրանով մեծ բավականություն եւ ուրախություն պատճառած կլինեք մեզ: Այս թեման ուզում եմ եզրափակել մի զվարճալի ու ուսանելի պատմությամբ... Չորս տարի առաջ ֆրանսիացիներն այստեղ հիմնեցին հայագիտական ամբիոն. քսան աշակերտ անդամագրվեցին ուսումնառությանը՝ լի ազնիվ եռանդով, պայծառ երիտասարդությամբ ու անզուգական ճարտարությամբ: Նրանք իրենց ազգին ու աշխարհակալ հաղթությանն արժանի քաջությամբ... դիմակայեցին ընդամենը... չորս օր, մինչեւ որ նրանցից տասնհինգը ուժասպառ ընկան հայոց այբուբենի քսանվեցերորդ տառի վրա... Դա այբուբենի մի իսկական Վաթեռլո էր նրանց համար:

Լ.Բայրոն */ծիծաղելով/*- Դա այնքա՞ն բնորոշ է ֆրանսիացիներին, աբբա. այբուբենի հետ վարվել այնպես, ինչպես վարվեցին իրենց թագավորների հետ՝ լքել եւ մեկին, եւ մյուսին: Իսկը նրանց համար է ասված հին առակը. «Վերցրու մի բան, եւ տուր մի բան: Վերցրու արքա եւ տուր արքա»:

Հ.Հարություն */ժպտում է/*- Ուրեմն ձեր անգլիական ավյունով դուք պատրա՞ստ եք հանուն հայոց այբուբենի ձեր Վաթեռլոն շահել...

Լ.Բայրոն- Անշուշտ, հայր Պասկալ, անշուշտ: Ես այդ ճակատամարտը կավարտեմ հաղթությամբ:

Հ.Հարություն- Բարի, Աստված մեզ օգնական:

Լ.Բայրոն */մեկուսանալով, ցածրաձայն, խոսելով աներեւույթ զրուցակցի հետ/*- Իսկ եթե կարողություններս չներեն եւ ինձ անմատչելի մնա հայերենը, չնայած աբբայի գործադրած ջանքերին, ես ի՞նչ երեսով պիտի նայեմ ուսուցչիս, աբբահորը, հայր Սուքիասին, մյուս վանականներին... Չէ, պետք է ասպետական երդում տալ, որ հաջողությամբ կպսակեմ այս արկածախնդրությունը: */Դադար/:* Ինքս ինձ հետ ուխտ եմ կնքում, որ ես չեմ պարտվի հայերենի յուրացման պայքարում, եւ այդ պայքարում... */արդեն բարձրաձայն, արձագանքելով հ.Հարությունին/* թող մեզ ապավեն լինեն մեր նախնյաց գիտուն ոգիները:

ՊԱՏԿԵՐ Դ

/Աբբահայրն իր առանձնասենյակում ցածրաձայն աղոթում է Աստվածամոր սրբապատկերի առջեւ: Շփոթահար ու փութաջան ներս է մտնում հ.Սուքիասը/:

Հ.Սուքիաս- Ներեցեք, աբբահայր… */Աբբահայրը չի լսում, շարունակում է աղոթել: Հ.Սուքիասը տագնապահար կրկնում է/.* Աբբահայր… ներեցեք…

Աբբահայր */դանդաղ շրջվում է եւ զարմացած նայում եկվորին/-* Ինչ կա, հայր Սուքիաս, մի տեսակ տագնապած դեմք ունես…

Հ.Սուքիաս- Աբբահայր, մեր կղզին ու վանքը խուզարկում են:

Աբբահայր- Խուզարկո՞ւմ են… ովքե՞ր, ինչու՞…

Հ.Սուքիաս- Վենետիկի ժանդարմներն են, նրանք զենք են փնտրում այստեղ:

Աբբահայր- Զե՞նք, ի՞նչ զենք…

Հ.Սուքիաս- Չգիտեմ, սրբազան: Խուզարկու ջոկատի հրամանատարն ինձ թռուցիկ ասաց միայն, որ ենթադրում են՝ իբր սուրբ Ղազարում զենք է դիզվում:

Աբբահայր- Սուբ Ղազարում զե՞նք է դիզվում… Տեր Աստված, էս ի՞նչ բանդագուշանք է… */Դադար/:* Էդ խուզարկու հրամանատարին կանչիր ինձ մոտ:

Հ.Սուքիաս- Հիմա: */Շտապ դուրս է գնում/:*

Աբբահայր */մենախոսում է/-* Էդ ո՞ր սատանի մտքով է անցել մեր այս անմեղ ու փոքրիկ կղզին զինանոց դարձնել… Թե՞ դա մի ստուգիչ քայլ է՝ տեսնելու, թե մենք ինչ կեցվածք ունենք Իտալիայում կատարվող դեպքերի վերաբերյալ… Կամ սա մի չար կատակ է… Կամ մենք կասկածյալների ու անվստահելիների մեջ ենք՝ Վենետիկի ավստրահաճո կառավարության աչքին… Իսկ եթե, այնուհանդերձ, մեկնումեկի խելքին փչել է զենք թաքցնել մեր կղզում… Բայց ո՞վ կարող է լինել այդ հանդուգն սրիկան, ո՞վ է փորձում վտանգել մեր խաղաղ ու անշառ գոյությունը, վնասել մեր բարի համբավը… Ո՞վ է մտադիր մեզ փորձության տանել… */Կանգնում, մտորում եւ հանկարծ հոնքերը վեր է տանում/:* Էդ անգլիացի՞ն… Չէի ուզենա հավատալ:

/Ներս է մտնում հ.Սուքիասը՝ ուղեկցելով ժանդարմ սպային: Վերջինս թեթեւ գլուխ է տալիս աբբահորը/:

Հ.Սուքիաս- Աբբահայր, ահա խուզարկուների գլխավորը, պարոն… ըմմմ…

Ժանդարմ սպա- Պարոն Պաոլո Կացինի՝ ինքս: Աբբահայր, ներողամիտ եղեք մեր անակնկալ ներխուժման համար, հրաման է:

Աբբահայր- Հրամա՞ն… Ի՞նչ հրաման, ումի՞ց…

Ժանդարմ սպա */խոսելու ընթացքում քայլում եւ խուզարկու աչքով զննում է սենյակը/*- Դե հրամանները միշտ գալիս են վերեւներից: Մենք ծանրակշիռ կասկած ունենք, որ ձեր այցելուներից մեկը, հնարավոր է՝ զենք է պահեստավորում ձեր վանքում, մտածելով, որ այս վայրը ժանդարմերիայի տեսդաշտից դուրս է:

Աբբահայր- Մեր ո՞ր այցելուի մասին է խոսքը, պարոն, մենք ամեն օր այստեղ շատ այցելուներ ենք ունենում:

Ժանադարմ սպա- Այդ տիպը շատ առանձնահատուկ այցելու է, եւ դեռ մեզ հայտնի չէ, թե նա ինչու է իր հիմար ծրագրերի համար միջոց ընտրել նաեւ ձեր կղզին:

Աբբահայր- Ու՞մ նկատի ունեք, պարոն:

Ժանդարմ սպա- Անգլիացի լորդին, աբբահայր… Նրան, ով արդեն մի ամիս ամեն օր գալիս է ձեր վանքը:

Աբբահայր- Ուրեմն ձեր կասկածը լորդ Բայրոնի վրա՞ է… */Տարակուսանքով նայում է ժանդարմին, ապա՝ հ.Սուքիասին/:*

Հ.Սուքիաս- Գիտցեք, պարոն ժանդարմ, որ լորդ Բայրոնը մեծ բանաստեղծ է եւ անվիճելի մարդասեր, միանգամայն անկեղծ ու ազնիվ մարդ. նա մեր բարեկամն է եւ նա մեր կղզում երբեք չի կատարի մեզ համար անցանկալի ու անհաճո քայլեր:

Ժանդարմ սպա- Իսկ գուցե՞ դա ցանկալի ու հաճելի է ձեզ… Իսկ գուցե՞ նա զենքն այստեղ թաքցնում է ձեր գիտությամբ ու համաձայնությամբ…

Աբբահայր */խիստ ձայնով/*- ժանդարմ, ձեզ հաշիվ տվեք ձեր խոսքերի համար, դուք շատ հեռուն գնացիք: Ձեր մութ կասկածները մի փոեք մեզ վրա: Ստիպված եմ իրազեկել ձեզ, որ Մխիթարյանների միաբանությունը իր հիմնադրման օրվանից ի վեր զբաղված է բացառապես եկեղեցական-գիտական գործերով. մեր հիմնարկի կարգավիճակը վավերացված է Նապոլեոն կայսեր ձեռամբ: Մենք երբեւէ չենք խառնվել ու չենք խառնվում հասարակական-քաղաքական խմորումներին: Եթե անգամ ովեւէ մեկը, լինի դա լորդ, կառավարիչ, զինվորական, թե գոնդոլավար, ինչ-որ անօրենություն կատարի այստեղ, ապա, նախեւառաջ, մենք կդատապարտենք նրան, ապա կհանձնենք իշխանություններին: Իսկ եթե մեկնումեկը չար կատակ է խաղում մեզ հետ, ապա, պարոն, մենք եւս շահագրգռած ենք, որ նա հայտնաբերվի ու պատժվի: Այդ հարցում մենք համախոհներ ենք:

Ժանդարմ սպա- Հարգարժան աբբաներ, ձեզ հայտնի՞ է, որ լորդ Բայրոնը ներգրավված է Իտալիայի կարբոնարիստական շարժման մեջ:

Աբբահայր- Ոչ: */Հարցական նայում է հ.Սուքիասին/:*

Հ.Սուքիաս- Ոչ, մեզ հայտնի չէ նման տեղեկություն: */Թաքցնում է հա-*

յացքը, որպեսզի ժանդարմը չտեսնի իր դեմքին հանկարծակի գծագրված ժպիտը/:

ժանդարմ սպա- Ուրեմն՝ իրազեկվեք, աբբաներ, որ անգլիացի լորդը ոչ միայն կարբոնարիստների գաղափարակիցն է, այլեւ սեփական միջոցներով զինում է նրանց, որպեսզի նրանք զինված ապստամբություն բարձրացնեն եւ Իտալիան ազատագրեն Ավստրո-Հունգարիայի տիրապետությունից: Հա-հա՜…

Հ.Սուքիաս */պոռթկուն ու ուրախ/*- Հիանալի՜…

ժանդարմ սպա- Ի՞նչ…

Աբբահայր */կանխելով հ.Սուքիասին/*- Նա ուզում է ասել՝ հիանալի է, որ այդ մասին ժամանակին իրազեկում եք մեզ: Մենք կարեւորում ենք ձեր փոխանցած տեղեկությունը, պարոն ժանդարմ:

ժանդարմ սպա */կասկածանքով նայելով հ,Սուքիասին, ապա աբբահորը/*- Հիանալի՛… ասում եք…

/Փութով ներս է մտնում ժանդարմ զինվորը, պատիվ տալիս սպային, ապա թեթեւակի գլուխը հակում աբբաների կողմ/:

ժանդարմ զինվոր- Պարոն, թույլ տվեք զեկուցել՝ խուզարկությունն ավարտեցինք:

ժանդարմ սպա- Եվ ի՞նչ…

ժանդարմ զինվոր- Ոչինչ, պարոն, ոչինչ, կղզին մաքուր է:

Աբբահայր */ուրախացած/*- Տեսնո՞ւմ եք, սպա, մեր այցելուները պարկեշտ ու հավատացյալ մարդիկ են, նրանք անօրեն քայլեր չեն կատարում այստեղ:

Հ.Սուքիաս */խորհրդավոր տոնով/*- Ավելին՝ մենք հպարտանում ենք մեր այցելուներով եւ աղոթում նրանց կյանքի ապահովության համար:

ժանդարմ սպա */մեկ անագամ եւս խուզարկու հայացքով զննելով սենյակը/*- Դե, հարգարժան աբբաներ, կրկին ներողամիտ եղեք մեր հանկարծակի այցի համար. բոլոր կասկածները չէ, որ հաստատվում են… ինչ արած: Մենք կատարում ենք մեր պարտականությունները, որ չխաթարվի մեր երկրի խաղաղ կյանքը: Համենայն դեպս, ես նույնպես ուրախ եմ, որ դուք մասնակից չեք ինչ-որ դավադրության: Հաջողություն ձեզ, աբբաներ: Հուսամ՝ մեզ համար եւս կաղոթեք:

Աբբահայր- Հաջողություն եւ ձեզ: Թող Աստված բարին կատարի:

/ժանդարմները դուրս են գնում/:

Հ.Սուքիաս */ժանդարմների հետեւից ցույց է տալիս ծալված աջ բազուկը/*- Առ, հա, կաղոթենք ձեզ համար. բա ի՞նչ…

Աբբահայր */կշտամբանքով/*- Հայր Սուքիաս, մի՞թե չես կարող քեզ ավելի զուսպ պահել… «հիանալի», «առ հա»… Դու կրակի հետ ես խաղում: Զուսպ ու զգուշավոր եղիր, որդիս, մենք դժվար ու սայթաքուն ժամանակ-

ներում ենք գոյատեւում… Թեպետ հարյուր տարի է արդեն, ինչ մեր միաբանությունը գործում է այստեղ, մենք վերստին նրանց համար մնացել ենք նույն օտարները, եւ տեղիս տիրակալների հարվածը մեզ վրա սովորականից առավել բիրտ ու ցավոտ է լինելու: */Դադար/:* Հայր Սուքիաս, հիմա մենք մենակ ենք, ասա ինձ անկեղծորեն՝ լորդ Բայրոնը կարո՞ղ է մեզ փորձության ենթարկել… անխոհեմ ու անհեռատես ինչ-ինչ արարքներով:

Հ.Սուքիաս- Ոչ, սրբազան, ոչ: Ասում եմ՝ լիովին հավատալով նրան, ոչ: Նա ասես լուսապսակով մարդ լինի, նա խորզգա նվիրյալ է, նա երբեւէ մեր հանդեպ գեշ արարք չի գործի: Նրա հոգու պոեզիան բնավ թույլ չի տա, որ ինքը հայտնվի ճղճիմ իրադրություններում, վարկաբեկելով նաեւ այլոց… Դե, կանանց հետ կապված պատմությունները մի կողմ, դրանք զուտ այրական չարաճճիություններ են:

/Շեմքին աննկատ հայտնվում է հ.Հարությունը/:

Աբբահայր- Իսկ ի՞նչ կասի հայր Հարությունը, նա պետք է որ ավելի լավ ճանաչած լինի լորդին, չէ՞ որ նրա ուսուցիչն է եւ ամեն օր երկարաժամ շփումներ է ունենում իր տարօրինակ սանի հետ:

/Հ.Հարությունը առաջանում է դեպի աբբահայրն ու հ.Սուքիասը/:

Հ.Հարություն- Պիտի խոստովանիմ, աբբահայր, որ լորդ Բայրոնը շարքային տարօրինակ մարդ չէ, այլ մի վսեմ ու հանճարեղ խենթ. նա ունակ է միայն վեհ ու արտակարգ գործերի: Նա բանաստեղծ է ոչ միայն գրական ասպարեզում, այլեւ կյանքում է բանաստեղծ, պոետ՝ ինչպես ասում են եվրոպացիք: Իսկ պոետները երբեք չեն դավաճանում իրենց լուսեղեն մուսաներին: Մենք՝ մեր միաբանությունը, մեր փոքրիկ սուրբ Ղազարը լուսեղեն մուսա ենք հիմա բանաստեղծ Բայրոնի համար: Նա մեզ երբեք չի մատնի փորձության, գուցե ավելի շուտ պատրաստ լինի գնալ զոհողության վասն իր սիրելիների: Մենք նրա սիրելի հայերն ենք:

/Աբբահայրը հոգոց է հանում եւ նայում հայրերին: Նրա ծերունական ու վեհաշուք դեմքին խոր տրտմություն է դրոշմվել: Հ.Սուքիասը գրկում է հ.Հարությունին/:

Հ.Սուքիաս- Եղբայր Հարություն, հիանալի ու ճշմարիտ խոսեցիք: Աստված թող կորով տա ձեր մեծ սրտին եւ զորություն՝ ձեր ճարտար լեզվին:

Աբբահայր */ասես վերգտնելով իրեն/-* Լավ, հիմա որոշենք մեր անելիքը… Հայր Հարություն, որտե՞ղ է Բայրոնը:

Հ.Հարություն- Նա ժամ առաջ վերադարձավ Վենետիկ. շատ ոգեւորված էր, ասաց, որ կարեւոր հանդիպում ունի իտալացի ընկերների հետ, պիտի մի քիչ շուտ գնա, որ նախապատրաստվի այդ հանդիպմանը:

Աբբահայր- Իսկ չասա՞ց, թե ինչ հարցեր է քննարկելու իտալացի… կարբոնարիստների հետ:

Հ.Հարություն- Ոչ, աբբահայր: Նա ինձ հետ քաղաքական հարցերից չի խոսում, նրբանկատորեն ձեռնպահ է մնում նման թեմաներից:

Հ.Սուքիաս */կատակով/-* Կանանցի՞ց էլ չի խոսում, եղբայր Հարություն…

Աբբահայր- Սուքիաս, ասացի՝ զուսպ պահիր քեզ */խստահայաց նայում է հ.Սուքիասին: Դադար/:* Լավ, բարի: Ուրեմն՝ ինչպե՞ս ենք վարվում լորդ Բայրոնի առնչությամբ… */Դադար/:* Ավելի հոգատար ու ուշադիր եղեք նրա նկատմամբ, հայրեր, այնպես, որ նա իրեն հիանալի զգա մեր կղզյակում: Խնդրանքս փոխանցեք մյուս վանականներին եւս:

Հ.Սուքիաս- Հիանալի՜, աբբահայր, հիանալի՜… */Ձեռքերը հաղթական վեր է բարձրացնում/:*

Հ.Հարություն- Շնորհակալ եմ, սրբազան: Ձեր խնդրանքը կկատարվի ճշտորեն:

/Հ.Հարությունը եւ հ.Սուքիասը համերաշխորեն դուրս են գնում/:

Աբբահայր */միայնակ մնալով/-* Մի օր ես կխենթանամ էս խենթերի ձեռքին: */Մոտենում է Աստվածամոր սրբապատկերին եւ շարունակում ընդհատված աղոթքը/:*

ՊԱՏԿԵՐ Ե

/Գրադարանում են լ.Բայրոնը եւ հ.Հարությունը: Նրանք բարձր տրամադրությամբ զրուցում են/:

Լ.Բայրոն- Բայց ձեր հայկական գինին ընտիր է, հայր Պասկալ, ես ոչ թե խմում, այլ ըմբոշխնում եմ այն: Այդ գինու մեջ նաեւ բիբլիական Արարատի ցոլանքը կա: Ես այն տեսնում եմ:

Հ.Հարություն- Ի՜նչ նրբազգաց քիմք ունես, Ջորջ: Երբ որ գինովանում ես, դու ավելի խենթ ես դառնում, բայց եւ ավելի համակրելի ու խելացի:

Լ.Բայրոն- Օ՜ շնորհակալ եմ, իմ ամենատես ուսուցիչ: Դուք գիտեք, թե ձեր անկեղծ գնահատականները ոնց են թեւավորում ինձ… Հիմա ուզում եմ սավառնել ու հասնել ձեր երկիրը, տեսնել, թե հայ հոգին ինչպես է զգում իրեն հայրենի հողի վրա… Ջրհեղեղից հետո այնքա՜ն ժամանակ է անցել, ո՞վ գիտե, թե դեպի ուր են թեքվել հայ հոգին ու ոգին… Դե, պարզ է, ուզում եմ տեսնել նաեւ փառահեղ Մասիսները… Հավանաբար այդ տեսակցությունից հետո կծնվի իմ հայկական պոեմը:

Հ.Հարություն- Քո բանաստեղծական երազանքները չափազանց գրավիչ ու հաճելի են, սիրելի Ջորջ, բայց ժամանակն է, որ մենք վերսկսենք պարապմունքը: */Նայում է սեղանին դրված թղթերը, ապա վերցնում մի գիրք/:* Հիմա դու պետք է կարդաս մի երկու հատված Նարեկացու Մատյանից, տեսնենք՝ ինչպես ես առաջադիմում ընթերցանության մեջ, նաեւ՝ ինչ-

պես ես հասկանում կարդացածդ: */Գիրքը դնում է լ.Բայրոնի առջեւ/:* Ահա, կարդա այս էջից:

Լ.Բայրոն */ընթերցում է՝ հեգելով ու վանկարկելով/-*

Մատյանն այս ողբերի, որ քո անունով սկսեցի, բարձրյալ,
Թող կենսատու դեղ ու դարման լինի
Եվ բժշկի քո արարածների հոգու եւ մարմնի ցավերը բոլոր:
Սկսածն այս՝ իր ավարտին հասցրու դու,
Եվ թող քո Հոգին խառնվի սրան…

/Կտրուկ ընդհատելով ընթերցանությունը/:

Դե, ինչպե՞ս եմ Նարեկացի կարդում, ուսուցիչ, ի՞նչ եք գնահատում…

Հ.Հարություն- Գնահատականները վերջում, Ջորջ: Մի հատված էլ կարդա, ահա… */թերթում է Մատյանը եւ դնում լ.Բայրոնի առջեւ/,* կարդա ահա այս էջից, հետո փոքրիկ ամփոփում կանենք:

Լ.Բայրոն */դժվարությամբ կարդում է/-*

Ցույց տուր Աստծուն պարտությունը քո հալածյալ անձի,
Որպեսզի ընդունես դու փոխատուից պարտքերիդ թողություն:

Հ.Հարություն- Բավ է, ապրես, Ջորջ: Ընթերցանության մեջ առաջադիմում ես: Դու կարծես թե արդեն զգում ես հայերենի շնչառությունը…

Լ.Բայրոն- Ուսուցիչ, ավելի շուտ ես զգում եմ հայերենի ալեկոծությունը…

Հ.Հարություն */ժպտալով/-* Դա նույնպես լավ է: Իսկ ի՞նչ հասկացար քո կարդացածից, Ջորջ, ի՞նչ մրմնջաց Նարեկացին քո ականջին…

Լ.Բայրոն- Բոլոր բառերը չեն, որ հասկանալի եղան ինձ, ուսուցիչ: Երկար բառեր շատ ունեք, դժվար են կարդացվում ու հիշվում: Դուք ինձ հետո կբացատրեք, չէ՞, այդ երկար անհասկանալիների իմաստը:

Հ.Հարություն- Այո, այո, անհոգ եղիր:

Լ.Բայրոն- Ուրեմն՝ ընդհանրական իմաստով ասեմ, որ, ինչպես եւ նախորդ օրերին կարդացած հատվածներում, Նարեկացին լիովին ապավինում է Աստծուն, պատրաստ է անգամ իր պարտությունը ի ցույց հանել նրան: Հեղինակը մարդ-անհատին չի վերապահում ինքնուրույն գործելու եւ հաղթելու առաքելություն… Մի տեսակ շատ նիհիլիստական է, ինչը իմ սրտով չէ: Ես ուզում եմ մարտնչել ու հաղթել՝ ինքնապավեն, առանց հույս դնելու Աստծո վրա:

Հ.Հարություն- Ինքնապավե՞ն… Ախ, Ջորջ, Ջորջ, իմ խենթ սանիկ: Դու շատ յուրովի ես մեկնաբանում Նարեկացուն, կարելի է ասել՝ հակառակ ծայրից: Գուցե դրա իրավունքն ու մտահասությունն ունես, բայց գիտցիր, որ մենք՝ հավատացյալ քրիստոնյա հայերս, երբեք չենք համաձայնի քո տեսակետի հետ:

Լ.Բայրոն */շտապելով/-* Ինչու՞, հայր, ինչու՞…

Հ.Հարություն- Որովհետեւ Մատյանը մեզ համար հոգու փրկության մի աշխարհ է, անփոխարինելի մի տիեզերք: Որովհետեւ Մատյանը՝ Նարեկը, բժշկում է մեր հիվանդ հոգիները եւ հուսադրում:

Լ.Բայրոն- Չեմ վիճի ձեզ հետ, ուսուցիչ, նման շռայլություն ինձ չեմ վերապահի: Ավելի էական ասելիք ունեմ. ես խորին հարգանք, կասեի՝ ակնածանք եմ տածում ձեր ազգի՝ Նարեկացու հանդեպ ունեցած սրբազան սիրո վերաբերյալ: Դուք անվերապահորեն սիրող ազգ եք, իսկ ինձ համար դա չափազանց կարեւոր է:

Հ.Հարություն- Ապրես, Ջորջ, խորապես շոյված եմ քո հոգեբուխ խոսքից: */Դադար/:* Ի դեպ, դու խոսեցիր Նարեկացու չեղած նիհիլիզմից… Իսկ ձեր երկերում շատ են թախծամոլությունն ու մելամաղձոտությունը, սակայն իմ մտքով չի անցնում ձեզ քննադատել ինչ-որ անկումայնության՝ նիհիլիզմի համար:

Լ.Բայրոն- Մ՛, վերջապես գտա իմ չտված հարցերից մեկի պատասխանը. հայր Պասկալ, դուք այդ թախծամոլության ու մելամաղձության պատճառո՞վ չեք թարգմանում իմ ստեղծագործությունները… Ինձ թվում է՝ իմ երկրպագու գիտունը պետք է որ հակում ունենա թարգմանելու իմ երկերը… Բայց դուք ուրիշ անգլիացի գրողների եք թարգմանում, որոնց երեսն անգամ տեսած չկաք, եւ կասկածում եմ, որ ճիշտ եք հասկանում նրանց:

Հ.Հարություն- Բայրոն, ես ձեր երկերը չեմ թարգմանում, որովհետեւ դեռեւս պատրաստ չեմ նման խիստ պատասխանատու աշխատանքի: Ես դեռ պետք է հասնեմ գեղարվեստական ընկալումի այդ մակարդակին:

Լ.Բայրոն- Լավ-լավ, թողնենք այդ հանելուկային հարցը: */Հրուցակցի հոգու հետ խաղալով/.* Հայր Պասկալ, ասում եք՝ բժշկու՞մ է Նարեկը… Ես մի քանի ցավեր ունեմ ահա էս տեղերում */ցույց է տալիս մարմնի տարբեր մասեր/,* ինձ կասե՞ք, թե Մատյանի որ հատվածները կարդամ, որպեսզի ապաքինվեմ…

Հ.Հարություն- Դե, Ջորջ, դու անբուժելի հիվանդ ես, քեզ ոչ մի Նարեկ չի փրկի: */Ներողամտորեն ժպտում է/:* Լավ, լրջանանք ու շարունակենք պարապմունքը: Հիմա գրավոր առաջադրանքի ժամն է. փորձիր անսխալ գրել,- թաքուն չարտագրես, Ջորջ,- փորձիր գրել, նախ, անունդ: Գրիր գեղատառ հայերենով:

/Լ.Բայրոնը դանդաղ գրում է թղթի վրա: Քիչ անց նա թուղթը մեկնում է հ.Հարությունին/:

Լ.Բայրոն- Ահա, ուսուցիչ: Հայերենս կարծես թե անգլերենից ավելի վայելչագիր է ստացվում…

Հ.Հարություն- Ինքնագովաշ… */Ուշադիր նայում է գրվածին/:* Դեռ թերություններով ես գրում, բարեկամս: «Լորդը» լրիվ չես գրել, վերջին երկու տառը բաց ես թողել: */Լրացնում է բացակա տառերը եւ ցույց տալիս/:*

Լ ո ր դ՝ վերջում՝ որդ... Իսկ Բայրոնը ճիշտ ու գեղեցիկ ես գրել: Լավ է, դու հայերեն արդեն կարող ես ստորագրել... Այժմ գրիր՝ Նարեկացի, Նարեկ, Մատյան:

Լ.Բայրոն */չարաճճիորեն/-* Բայց, հայր Պասկալ, դա գրելուց հետո էլ ես չեմ փոխի կարծիքս Նարեկի մասին:

Հ.Հարություն- Դե-դե գրիր, Ջորջ, դա հետո կերեւա: Աշխատիր տառասխալներ չանել... Նա-րե-կա-ցի, Նա-րեկ, Մատ-յան...

/Լ.Բայրոնը դանդաղ ու կենտրոնացած գրում է: Հ.Հարությունը գրապահարանից մի մեծադիր գիրք է վերցնում եւ արագ սուզվում ընթերցանության մեջ/:

Լ.Բայրոն- Վերջացրի, ուսուցիչ, ահա, նայեք: */Մոտենում եւ թուղթը տալիս է հ.Հարությունին: Վերջինս նայում է թղթին/:*

Հ.Հարություն- Նարեկացին եւ Նարեկը ճիշտ ես գրել, իսկ ահա Մատյանում երկու սխալ ես թույլ տվել. ոչ թե Մաթիան, այլ՝ Մատյան: */Ուղղում է գրությունը եւ թուղթը տալիս զրուցակցին/:* Ջորջ, Մատյանի գրության ճիշտ ձեւը դա է:

Լ.Բայրոն */հոնքերը վեր պարզած նայելով թղթին/-* Պարզ է, պարզ է, ուսուցիչ, այլեւս չեմ սխալվի:

Հ.Հարություն- Ցանկալի կլինի, որ Մատյանի հարցում ընդհանրապես չսխալվես... Լավ, հիմա մի փոքր ամփոփենք անցած երկու ամիսների մեր պարապմունքների արդյունքները: Միանգամից ասեմ, թանկագին Ջորջ Բայրոն, որ ընդհանուր առմամբ գոհացուցիչ են այս ընթացքում հայագիտությունից ձեռք բերած քո գիտելիքները: Դու նորելուկ հայագետի անուն ստանալու ճանապարհին ես: */Կատակով/:* Հնարավոր է՝ գոնե դրա համար քեզ Անգլիայում արժանիորեն գնահատեն:

Լ.Բայրոն */տխուր ձայնով/-* Նրանք հիմա ունակ չեն ինձ գնահատելու եւ ոչ մի հարցում:

Հ.Հարություն- Մի սեւեռվիր այդ խնդրի վրա, կգան նոր ժամանակներ, եւ դու կլինես Անգլիայի սիրելին: Բայց չշեղվենք մեր գործից: */Դադար/:* Դու արդեն տիրապետում ես հայոց այբուբենի բոլոր 39 տառերին՝ անսխալ կարդում եւ գրում ես դրանք. այբուբենի Վաթեղոն շահել ես: Սկսել ես յուրացնել հայերենի քերականությունը, անգամ ձգտում ունես հայ բանաստեղծության տաղաչափության մեջ խորամուխ լինելու: Խոսակցական հայերենի տիրույթում արագ առաջադիմում ես, արդեն բավական գիտելիքներ ես ձեռք բերել հայոց պատմությունից եւ մշակույթից:

Լ.Բայրոն */պարծենկոտաբար/-* Դե, իհարկե, ուսուցիչ. գիտեմ, օրինակ, թե ինչպես է հայոց Արշակ երկրորդ արքան հայրենի հողի վրա կանգնելով՝ անվախորեն հոխորտում իրեն բանտարկած պարսից շահի դեմ... կամ՝ ով է մանրանկարիչ Թորոս Ռոսլինը. ինչ աստվածային վրձին ունի

նա: */Խոսքի տոնը կտրուկ փոխելով, տխրագին ձայնով/:* Ի դեպ, հայր Պասկալ, ձեր քաջակորով արքայի արարքը ինձ համար ընդօրինակելի չէ. եթե հիմա բանտարկեն ինձ եւ իմ ոտքերի տակ անգլիական հող փռեն, ապա այն ինձ խիզախություն եւ ավյուն չի հաղորդի, վախենամ, թե այդ հողը վառվի ոտքերիս տակ... Մի՞թե նզովյալ Անգլիան կարող է ինձ ոգեշնչել որեւէ կերպ...

Հ.Հարություն */մի պահ լարված ու ակնդետ նայում է լ.Բայրոնին/-* Լորդ Բայրոն, մի նզովեք ձեր հայրենի Անգլիան, որքան էլ նա վիրավորած լինի ձեր զգայուն սիրտը... Անգլիան, ինչպես դու ես դիպուկ բնութագրում՝ ագահ, բիրտ ու գաղութարար լորդերը եւ իշխանավորները չեն, Անգլիան հասարակ, հավատացյալ ժողովուրդն է՝ իր հայրենիքով, եւ դուք, տիար, ձեր հոգու խորքում անչափ սիրում եք ձեր հայրենիքը:

Լ.Բայրոն- Շնորհակալ եմ, հայր Պասկալ, որ դուք ինձ հիշեցնում եք անողոք ու անջնջելի ճշմարտություններ: */Կրկին վերգտնելով զվարթ տոնը/:* Ուսուցիչ, խնդրում եմ, ասեք անկեղծորեն՝ ձեր Տրդատ թագավորը իր ինքնաբուխ հավատքի ուժո՞վ է քրիստոնեությունը պետականացրել Հայաստանում, թե՞ դա արել է այլ հանգամանքների դրդմամբ...

Հ.Հարություն- Հավատքի ուժով է արել, որդիս:

Լ.Բայրոն- Իսկ ես այլ տպավորություն ունեմ, վարդապետ. կարծում եմ՝ նա պարզապես երախտահատույց է եղել քրիստոնյա Գրիգորին, Լուսավորչին, ինչպես դուք եք ասում, քանզի վերջինս բուժել է նրան ծանր հիվանդությունից: Մահից մազապուրծ եղածը ի՞նչ խենթություններ ասես՝ կանի:

Հ.Հարություն- Դու հաճախ ես այլ կարծիք ունենում, Ջորջ, չնայած պատմության անհերքելի փաստերին. հաճախ հակված ես բանավիճելու: Երեւի ազատամիտ մարդու լավագույն շնորհը հենց դա է... Ինչեւէ, որդիս, շարունակենք ուսումնառության հետ կապված մեր խոսակցությունը:

Լ.Բայրոն- Հայր Պասկալ, խնդրում եմ՝ մի պահ դադար տվեք ուսումնական թեմային... Ես մի առաջարկություն ունեմ. հիմա ուզում եմ մի փոքր էլ ես ուսուցանեմ ձեզ:

Հ.Հարություն */հեգնանքով/-* Հայագիտությո՞ն...

Լ.Բայրոն- Չէ, չէ, դա ձեր մենաշնորհն է: Ես ձեզ հիմա մի քիչ կսովորեցնեմ... սուսերամարտ...

Հ.Հարություն- Ի՞նչ...

/Լ.Բայրոնը շտապ մոտենում է գրապահարաններից մեկին եւ դրա ետեւից հանում հաստ շորով պատանքված մի երկար փաթեթ, բացում է այն եւ երկու սուսեր առած՝ մոտենում հ.Հարությունին/:

Լ.Բայրոն */ոգեւորությամբ/-* Ահա, հայր Պասկալ, վերցրեք: */Սուսերներից մեկը տալիս է հ.Հարությունին. վերջինս ընկրկում է/:* Վերցրեք, հայր Պաս-

կալ, վերցրեք սուսերը, մի վախեցեք: Ես ձեզ ցույց կտամ, թե ինչպես են բանեցնում սա մարտում... Վերցրեք:

Հ.Հարություն- Բայց ինչի՞ համար, ես չեմ ուզում, ես վանական եմ, զենքի հետ գործ չունեմ, Ջորջ, ինձ մի ստիպիր... Ընդհանրապես ինչու՞ ես զենք բերել մեզ մոտ, դա վաղու՞ց է այստեղ:

Լ.Բայրոն- Ոչ, այսօր եմ բերել, կարող եմ հենց այսօր էլ ետ տանել: Բայց ուզում եմ ձեզ մի քիչ մարտարվեստ սովորեցնել:

Հ.Հարություն- Ինչու՞...

Լ.Բայրոն- Որ կարողանաք ինքնապաշտպանվել, երբ դրա կարիքը լինի:

Հ.Հարություն- Հիմա հրազեն են ավելի շատ օգտագործում, սուսերն՝ ի՞նչ. եթե ուզենան՝ հրացանով կամ ատրճանակով հեռվից ինձ կխոցեն, էլ չեմ ասում՝ թնդանոթով...

Լ.Բայրոն- Ճիշտ է: Հետո ձեզ կսովորեցնեմ նաեւ հրազեն բանեցնել, հայր Պասկալ, բայց, նախ՝ սուսեր, այն դեռ կարեւոր զենք է: Ասենք, երբ ավազակները մտնեն ձեր վանքը եւ ցանկանան կողոպտել, դուք, առանց բարձր տրաքոցների, սուսերով կարող եք նրանց հախիցը գալ, վախեցնել ու քշել նրանց, դե, հարկ եղած դեպքում նաեւ գետնին տապալել:

Հ.Հարություն- Բայց ես ի՞նչ զինյալ...

Լ.Բայրոն- Հայր Պասկալ, դուք գիտեք, չէ՞, թե Արեւելքում վանականները ինչքան հմուտ են մարտարվեստում:

Հ.Հարություն- Գիտեմ:

Լ.Բայրոն- Դե, ուրեմն օրինակ վերցրեք նրանցից: Կյանքն է դա ստիպում: */Հ.Հարությունը ի վերջո վերցնում է համառորեն իրեն մեկնված սուսերը/:* Հիանալի, հիմա սկսում ենք սուսերամարտի դասը... Հայր Պասկալ, աշխատեք ուշադիր լինել եւ ճշտորեն կատարել իմ ցուցումները: Ես անհամբեր ուսուցիչ եմ, հնարավոր է եւ՝ զայրանամ, ներող կլինեք... Դե, սկսեցինք: */Մի փոքր հեռանում է եւ սուսերամարտիկի կեցվածք ընդունում/:* Ընդօրինակեք ինձ... Սուսերը բռնում են ահա այսպիսի մարտական դիրքում... */Հ.Հարությունը կրկնում է լ.Բայրոնի շարժումները/:* Լավ է, իսկ այսպես առաջանում ենք դեպի հակառակորդը եւ ձգտում նրան խոցել: */Հ.Հարությունը հետ է քաշվում/:* Մի վախեցեք, ես ձեզ չնչին իսկ վնաս չեմ պատճառի, սա ընդամենը դաս է... Ահա այսպես սկսում ենք ճոճել սուրը, որ վախեցնենք հակառակորդին: */Հ.Հարությունը կրկնում է նույն շարժումը/:* Ավելի ակտիվ ու համառ շարժեք սուրը, հայր Պասկալ... Լավ է...

/Մտնում է հ.Սուքիասը եւ զարմացած կանգնում՝ տեսնելով, թե ինչ է կատարվում/:

Հ.Սուքիաս- Օհո՜, Գրչագրաց մատենադարանը վերածվել է սուսերամարտի վարժասրահի. հետաքրքի՜ր է... */Ծիծաղում է/:* Եղբայր Հարություն,

սուրը սազում է ձեզ, իսկ դուք, սիրելի Բայրոն, սրով ուղղակի անզուգական եք:

Լ.Բայրոն- Ուզո՞ւմ եք, հայր Սուքիաս, մի քիչ էլ դուք պարապել… Հայր Պասկալը թող շունչ քաշի:

Հ.Սուքիաս- Իհարկե, ուզում եմ: */Մոտենում է հ.Հարությունին եւ նրանից վերցնում սուսերը/:*

Լ.Բայրոն- Հայր Սուքիաս, նախ՝ այսպիսի կեցվածք ընդունիր: */Լ.Բայրոնը հ.Սուքիասին նույնությամբ ցույց է տալիս այն, ինչ սովորեցնում էր հ.Հարությունին: Հ.Սուքիասն ավելի եռանդով ու ճարպիկ է կատարում սուսերամարտի ուսուցողական գործողությունները/:* Լավ է, շատ լավ է, հայր Սուքիաս… Դուք ավելի ընդունակ աշակերտ եք, քան հայր Պասկալը:

/Երեքով համերաշխ ծիծաղում են: Հ.Սուքիասը սուսերը հանձնում է հ.Հարությունին/:

Հ.Սուքիաս- Դուք շարունակեք պարապել, եղբայր Հարություն… Հա, ի դեպ, քիչ մնաց մոռանայի. եկա ձեզ հայտնելու, որ աբբահայրը այսօր տկարություն ունի, խնդրեց, որ այցելու նորապսակների ուխտը դուք ընդունեք:

Հ.Հարություն- Լավ, շուտով կգնամ աբբահորը տեսակցության… Հա, եղբայր Սուքիաս, ինչ-որ տեսաք՝ դա միայն երեքիս գաղտնիքն է:

Հ.Սուքիաս- Իհարկե, անհոգ եղեք, կարիք չկա զգուշացնելու: Մի՞թե ես ձեր վստահելի եղբայրը չեմ, հայր Հարություն…

Հ.Հարություն- Անշուշտ, եղբայր Սուքիաս:

Հ.Սուքիաս- Բարի… Դե ես գնամ, աբբահայրը ուրիշ հանձնարարություններ էլ է տվել, պիտի հասցնեմ կատարել: Իսկ դուք սուսերամարտում չթերանաք: */Դուրս է գնում/:*

Հ.Հարություն- Լավ, Բայրոն, թողնենք սուսերամարտը. զենքը թաքցրու, ու արի ավարտին հասցնենք մեր այսօրվա պարապմունքը:

Լ.Բայրոն- Ըստ ձեր ասածի, ուսուցիչ: */Սուսերները փաթաթում է շորի մեջ եւ դնում նույն պահարանի հետեւը/:*

Հ.Հարություն- Ոչ, Բայրոն, այդտեղ շատ ապահով չէ, թող… */Գնում, հանում է սուսերներով փաթթոցը եւ տեղափոխում խորքի սենյակ: Վերադառնալով՝ հանգիստ շունչ է քաշում/:* Այնտեղ չեն գտնի:

Լ.Բայրոն- Հետո, հայր Պասկալ, մի ուրիշ հարմար օր, այնտեղ՝ Լիդոյում, ես ձեզ կսովորեցնեմ հրաձգություն, նաեւ՝ ձիավարություն:

Հ.Հարություն- Հա, վենետիկցիներն ասում են, որ դու լավ ձիավար ես, նաեւ՝ հաղթական լողորդ:

Լ.Բայրոն- Իսկ ուրիշ ի՞նչ են ասում… Որ ես անառակի մե՞կն եմ… */Հ.Հարությունը ժպտալով լռում է/:* Դե վենետիկցիները ինձ լոկ նման կողմերից են ճանաչում: Այ, որպես բանաստեղծի՝ Վենետիկում միայն դուք՝ հայ վանականներդ եք ինձ մեծարում:

Հ.Հարություն- Կգա ժամանակը եւ քեզ ամենուր կմեծարեն, Ջորջ Բայրոն: */Դադար/:* Լավ, շուրունակենք մեր անդրադարձը հայագիտական գիտելիքներիդ… Ջորջ, կարծում եմ՝ դու պետք է կամաց-կամաց սկսես թարգմանություններ կատարել հայերենից: Դրա համար դու արդեն ունես նվազագույն պաշար: Անգլիական գրականությունը կարող ես հարստացնել արժեքավոր թարգմանական էջերով:

Լ.Բայրոն- Մեծագույն սիրով ու պատրաստակամությամբ, ուսուցիչ… եթե, իհարկե, դուք ինձ սիրահոժար օգնեք:

Հ.Հարություն- Մի կասկածիր, այդ գործում ամենայն օգնությունն՝ իմ կողմից:

Լ.Բայրոն- Իսկ ես մինչեւ երկինք երախտապարտ կլինեմ ձեզ… Չէ, երախտագիտությունս այստեղից կձգվի մինչեւ Հայաստան:

Հ.Հարություն */Ժպտում է/-* Լավ, ի՞նչ կկամենայիր թարգմանել. արդեն ծանոթ ես հայերեն տասնյակ գրքերի ու թղթերի, եւ նախասիրություններ էլ ունես…

Լ.Բայրոն- Ասեմ, հայր Պասկալ. նախ, կցանկանայի թարգամնել Ներսես Շնորհալու «Հիսուս որդուց» այն հատվածը, որ նվիրված է Հռիփսիմեին. հանճարեղ երգ է, ինձ շատ դուր եկավ: Հետո՝ կթարգմանեի մի քանի գլուխ Խորենացու «Հայոց պատմությունից», այն գլուխները, որոնք ես առավել արժանահավատ ու հետաքրքիր եմ համարում…

Հ.Հարություն- Ուրեմն՝ ուզում ես թարգմանել «Ը» եւ «Թ» գլուխները:

Լ.Բայրոն- Կուզենայի, նաեւ, ուսուցիչ, անգլերեն թարգմանել սուրբ Պողոսի նամակագրությունը կորընթացոց հետ, այն երկու թուղթը, որոնց բնագիրը կորած է համարվում, իսկ հայերեն թարգմանությունը պահպանվում է ձեզ մոտ: Այ թե անգլիացի քրիստոնյաների համար ինչ գյուտ է լինելու դա… Ուրիշ թարգմանական գաղափարներ էլ ունեմ…

Հ.Հարություն- Ասենք՝ Լամբրոնացու «Ճարտասանությունը», ճի՞շտ է…

Լ.Բայրոն- Ճշմարիտ:

Հ.Հարություն- Բարի, որդիս, դու գրական լավ ճաշակ ունես: Դու կարող ես սկսել այդ երկերի թարգմանությունը, ես քեզ բազմակողմանի աջակցություն ցույց կտամ:

Լ.Բայրոն- Շնորհակալություններս, ուսուցիչ: Վաղն եւեթ կսկսեմ:

Հ.Հարություն- Հիանալի, Ջորջ: Հավատում եմ, որ դուք չեք մոռացել նաեւ համատեղ մեր իրագործելիք այն ծրագրերը, որոնց շուրջ երկար քննարկումներ ենք ունեցել մեկ ամիս առաջ:

Լ.Բայրոն- Ոչինչ էլ չեմ մոռացել, հայր Պասկալ… Հա, ի դեպ, ու՞ր մնաց անգլերեն-հայերեն քերականության ձեր հեղինակած ձեռնարկը, այն դեռ տպարանու՞մ է…

Հ.Հարություն- Այո, լորդ:

Լ.Բայրոն- Ձեզ խոստացել եմ սրբագրել այդ գրքի անգլերեն էջերը: Խոստացել եմ նաեւ հոգալ գրքիդ տպագրության ծախքը. խոստումներս ուժի մեջ են: Ու՞ր մնացին սրբագրության էջերը, հայր Պասկալ, տվեք, այսօր իսկ կսկսեմ մաքրել:

/Շեմքին հայտնվում է մի երիտասարդ վանական՝ թղթերով/:

Հ.Հարություն */նկատելով եկվորին/-* Ի՞նչ կա, որդյակ…

Երիտ. վանական- Հայր Հարություն, տպարանից են փոխանցել այս թղթերը, խնդրեցին՝ ձեզ հանձնեմ */մոտենում եւ թղթերը դնում է սեղանին/:*

Հ.Հարություն- Ապրես, որդիս: */Նայում է բերած թղթերը: Երիտասարդ վանականը քրիստոնեաբար ողջունում է լ.Բայրոնին, ապա հուշիկ հեռանում/:* Բարեկամս, ահա եւ քերականության էջերը:

Լ.Բայրոն- Տվեք ինձ, երկու-երեք օր անց սրբագրված կվերադարձնեմ ձեզ: */Հ.Հարությունից վերցնում է թղթերը/:*

Հ.Հարություն- Շնորհակալ եմ, Բայրոն:

Լ.Բայրոն- Շնորհակալության կարիք չկա, հայր Պասկալ: Այսօր-վաղը ճշտեք ու հայտնեք ինձ, թե ինչ է արժենալու այս գրքի տպագրությունը:

Հ.Հարություն- Բարի, լորդ:

Լ.Բայրոն- Հենց որ այս ձեռնարկի հրատարկությունն ավարտենք, ձեռնամուխ կլինենք հայերեն-անգլերեն քերականության դասագրքի կազմմանը. ժամանակն է, որ անգլիացիները եւս սովորեն հայերեն… Այդ գրքի տպագրության ծախքը դարձյալ ես կհոգամ: Հայր Պասկալ, մեր ոչ մի լավ ու պիտանի մտահղացում անկատար չենք թողնի:

Հ.Հարություն- Այսինքն՝ լույս կընծայենք նաեւ անգլերեն-հայերեն բառարանը…

Լ.Բայրոն- Անշուշտ: Նոր գաղափարներ եւս կառաջարկեք: */Պարծենկոտաբար/* Հայագետիս պարտքը լինի՝ ծառայե՛լ հայ ազգին:

Հ.Հարություն */բայրոնավարի/-* Իսկ մեր պարտքն է՝ ծառայե՛լ բանաստեղծ Բայրոնին:

/Բարեկամաբար գրկախառնվում են/:

ՊԱՏԿԵՐ Ձ

/Ձիթենիների տակ, նստարանին լ.Բայրոնը թղթեր է կարդում եւ նշումներ անում, ապա փակ աչքերով մտորում է: Հուշիկ նրան են մոտենում հ.Հարությունը եւ հ.Սուքիասը/:

Հ.Հարություն */գրեթե շշուկով/-* Նա ստեղծագործում է, հայր Սուքիաս:

Հ.Սուքիաս- Գիտեմ, եղբայր Հարություն, գիտեմ: Ես քանիցս նրան տեսել եմ նման իրավիճակներում:

/Լ.Բայրոնը բացում է աչքերը, տեսնում եկվորներին եւ զվարթագին գոչում/.

Լ.Բայրոն- Օ՜ սիրելի հայրեր… Դուք լսում էիք իմ մտքե՞րը… */Մոտենում է նրանց/:*

Հ.Սուքիաս- Սիրելի Բայրոն, հազիվ թե մենք նման շնորհքով օժտված ենք… Նոր քերթվա՞ծ եք գրում…

Լ.Բայրոն */ներշնչված/-* Այո, բարեկամներս, այո: Դուք հրաշալի գիտեք, թե սուրբ Ղազարի ծովեզրյա այս ձիթենիների պուրակը որքան ներշնչող է: Այստեղ իմ մուսան քառապատիկ ուժեղ ու շռայլ է: Ձեր կղզին իսկը պոեզիա երկնելու համար է… Լսեք, հայրեր, մի առաջարկություն ունեմ. եկեք աբբահորը դիմենք, որ թույլ տա սուրբ Ղազարը վերածենք նաեւ բանաստեղծների կղզու. այստեղ հրավիրենք հայ եւ եվրոպացի լավագույն պոետներին, որպեսզի նրանք, ձեր ընկերակցությամբ, միառժամանակ հանգրվանեն այստեղ ու ստեղծագործեն: Գիտե՞ք, թե կարճ ժամանակամիջոցում համաշխարհային պոեզիան ինչպես կհարստանա բազում գոհարներով… Հը, ի՞նչ կասեք, հայրեր, հանճարեղ գաղափար է, չէ՞…

Հ.Հարություն- Աբբահայրը կասի, որ մի խենթին ավելանալու են բազումք, մենք */ցույց տալով իրեն ու հ.Սուքիասին/՝* ներառյալ. մի խոսքով՝ իսկական գժանոց է լինելու… */ծիծաղում է, նրա հետ միասին՝ հ.Սուքիասը/:* Դե, Բայրոն, եթե անգամ լրջորեն քննարկելու լինենք ձեր առաջարկությունը, պիտի ասեմ, որ մենք՝ վանականներս, հազիվ թե կարողանանք երկար վայելել մեծաթիվ պոետների ընկերակցությունը… Դուք գիտեք, լորդ, որ պոետներն առավելապաշտ մարդիկ են, նրանք որոշ ժամանակ անց մեզ վտարելու են այստեղից՝ իրենք տիրանալով սուրբ Ղազարին:

Հ.Սուքիաս */երկիմաստ տոնով/-* Սիրելի բանաստեղծ, իսկ չի՞ լինի, որ դուք ձեռնադրվեք վանական ու անդամագրվեք մեր միաբանությանը. եւ կբանաստեղծեք, եւ կաղոթեք… ձեր փոթորկված հոգու խաղաղության համար:

Լ.Բայրոն- Բայց ես արդեն վանական եմ, ահա իմ սքեմը */ցույց է տալիս նստարանին դրված սքեմը/:*

Հ.Հարություն- Դե դու ստեպ-ստեպ ես վանական… հատուկ նշանակությամբ:

/Հ.Հարությունը եւ հ.Սուքիասը նայում են իրար եւ ծիծաղում/:

Լ.Բայրոն- Դուք արդեն գիտե՞ք իմ գաղտնիքը…

Հ.Սուքիաս- Այո, միամիտ բանաստեղծ: Դա գիտեն մեր բոլոր իննսուն վանականները, եւ այստեղ եկող վենետիկցի գոնդոլավարները:

Լ.Բայրոն */զարմանքից մի պահ քարանալով, ապա՝ խնդագին/-* Մ՜հ, ամենատես վանականներ… Դատապարտու՞մ եք ինձ իմ այդ չարաճճիության համար…

Հ.Հարություն- Դե, առանձնապես ոչ, բայց հուսանք, որ դուք պարկեշտությունը չեք սահմանազանցի:

Լ.Բայրոն- Չէ-չէ, չափի մեջ կմնամ: Կսիրահետեմ միայն անմեղ պատանու պես: Պլատոնաբար:

Հ.Սուքիաս- Բայց ձեզ վանականի սքեմը սազում է, լորդ Բայրոն: Դուք այդ հանդերձով աշխարհի ամենագեղեցիկ վանականն եք:

Լ.Բայրոն- Շոյված եմ, հայր Սուքիաս: */Դադար/:* Սիրելի հայրեր, ներողամիտ եղեք, որ սքեմով մեկ-մեկ հագուրդ եմ տալիս իմ այրական բնատուր հետաքրքրությանս: Ես միայն ծիկրակում եմ եւ մեկ-երկու բառ փոխանակում սիրունիկ նորահարսերի հետ:

Հ.Սուքիաս- Իսկ եթե բախտդ բերում է, նաեւ ժամադրում ես նրանց…

Հ.Հարություն- Ոչինչ, որդյակ իմ, ոչինչ. մենք հասկանում ենք քեզ, ներում: Համարենք, որ դու մեր անառակ որդին ես: Սա ասում եմ՝ որպես քո ուսուցիչ, Ջորջ:

Լ.Բայրոն */կարմրատակում է, ապա ուրախ արձագանքում/-* Ընդունա՛յն լինի ձեր խոսքը, ուսուցիչ:

Հ.Սուքիաս- Լորդ Բայրոն, մենք, սակայն, կցանկանայինք ձեզ հետ խոսել մեզ համար էական ու հրատապ հարցերից:

Լ.Բայրոն- Ուշի-ուշով լսում եմ ձեզ, հայրեր, պատրաստ եմ ձեզ ծառայելու հոգով, սրտով ու իմ միջոցներով:

Հ.Հարություն- Լորդ, շուտով հայր Սուքիասը եւ հայր Սարգիսը Անգլիայի վրայով պիտի մեկնեն Հնդկաստան՝ կարեւոր գործով: Կարո՞ղ եք դիմել անգլիացի ձեր բարեկամներին, որպեսզի նրանք որեւէ կերպ դյուրացնեն մեր աբեղաների ուղեւորությունը:

Լ.Բայրոն- Անշուշտ, հայր Հարություն, ուրախությամբ օգտակար կլինեմ այդ հարցում: Այսօր իսկ նամակ կգրեմ իմ հրատարակիչ Մըրրեին, որպեսզի նա անհրաժեշտ հանձնարարական նամակներ պատրաստի հայ աբեղաների բարեհաջող ճամփորդության համար: Մըրրեն կապեր ունի Հնդկաստանում գործարքներ անող անձանց ու ընկերությունների հետ, նա լավ գիտե, թե ովքեր են նման հարցերը կարգավորում… Ուրի՞շ, ուրիշ ի՞նչ խնդիրք ունեք, սիրելի հայրեր, ասեք առանց քաշվելու:

Հ.Հարություն- Շնորհակալ ենք, թանկագին լորդ, ուրիշ խնդիրք չունենք:

Հ.Սուքիաս */շտապելով/-* Ես ունեմ… Տիար բանաստեղծ, չէի՞ք բարեհաճի մի քանի խոսք ասել ձեր նոր ստեղծագործությունների մասին, որ մտահղացել եք սուրբ Ղազարում, եւ մեզ համար կարդալ որոշ հատվածներ:

Լ.Բայրոն- Սիրով, սիրով, հայրեր: */Ոստարանից վերցնում է իր թղթերը, մի կարճ պահ ուսումնասիրում դրանք/:* Նախ, պիտի ասեմ, որ ես այս կղզ-

յակում վերգտել եմ իմ ստեղծագործական արգասավոր ընթացքը: Գրական իմ այս փուլը կարող եք կոչել սուրբղազարյան շրջան: Անցած երեք ամիսներին ես խորին ներշնչանքով գրեցի ... «Չայլդ Հարոլդի» չորրորդ նվագը /կարծում եմ՝ այն ամենագեղեցիկ հատվածն է այդ պոեմի/, գրել եմ «Բեպպո» պոեմը, «Դոն Ժուանի» առաջին երկու երգերը, «Մանֆրեդի» մի արար... առանձին բանաստեղծություններ:

Հ.Հարություն- Թող Աստված օրհնի ու նոր զորություն տա ձեր մեծ ձիրքին, Բայրոն, թող միշտ այդպես շնորհառատ լինեք... Իսկ հայկական նյութ ներառե՞լ եք ձեր նոր երկերում, որդիս:

Լ.Բայրոն- Դե, հայր Պասկալ, քանի որ դուք սուր աչք ունեք, երբ կարդաք նշածս եւ այլ գրելիք գործեր, այնտեղ կտեսնեք հայկական հետաքրքիր հետքեր... Բայց ավելի որոշակի ասեմ հետեւյալը. «Մանֆրեդի» գործող անձերից մեկի՝ քահանայի կերպարը կերտելիս ես որպես նախատիպ նկատի եմ ունեցել ձեզնից մեկին, իմ թանկագին հայրեր... */Ժպտալով մատնացույց է անում հ.Հարությունին եւ հ.Սուքիասին: Խորհրդավոր տոնով/.* Իսկ թե անձամբ ում եմ նկատի ունեցել, դա առայժմ թողնենք իբրեւ գաղտնիք, ինքներդ հետագայում կհստակեցնեք այդ հարցը:

Հ.Սուքիաս- Գլուխկոտրուկ է առաջարկում... Լավ, կփորձենք լուծել այն: Ի դեպ, Բայրոն, երիտասարդ վանականների հետ միտք ունենք բեմադրել ձեր «Երկիր եւ երկինք» թատերգությունը: Կօգնե՞ք մեզ՝ բեմադրությունը գլուխ բերելու...

Լ.Բայրոն */զարմանքով/*- Այդ միստիկական գործը գրավել է ձեզ այն աստիճան, որ բեմադրե՞լ եք ցանկանում... */Հ.Սուքիասը գլխով է անում/:* Հասկանում եմ, դրամայի գործողությունները տեղի են ունենում Արարատի լանջերին... Իսկ որտե՞ղ պիտի բեմադրեք, այստեղ՝ վանքու՞մ...

Հ.Սուքիաս- Ոչ, կխաղանք Վենետիկի թատերասրահներից մեկում: Վենետիկի մեր հայրենակիցները նույնպես խոստացել են օգտակար լինել այդ հարցում:

Լ.Բայրոն- Լավ. կօգնեմ ձեզ, որ ճիշտ մեկնաբանեք այդ թատերախաղը: Դե, բեմադրական այլ կարգի օգնություն էլ ցույց կտամ, բարի՞...

Հ.Սուքիաս- Շատ շնորհակալ ենք, սիրելի Բայրոն... Այժմ մեզ համար մի քիչ չե՞ք ընթերցի ձեր նորագիր քերթվածներից:

Լ.Բայրոն- Հաճույքով, հայր Սուքիաս: */Առանձնացնում է ձեռքի թղթերից մեկը/:* Կարդամ... «Դոն Ժուանի» առաջին օկտավներից... Հա, դուք իմ առաջին ունկնդիրներն եք, այնպես որ... խանդավառվեք... */Կարդում է/.*

Հերոս եմ փնտրում,- գուցե անսովոր
Մի ցանկություն է զարթնել իմ հոգում,-
Երբ հերոսներ են ծնվում ամեն օր,
Թերթերը նրանց փառքն են խնկարկում,

Բայց հերոսներ չեն ճշմարիտ ու նոր:
Ոչ, նման հերոս չեմ ընտրել կյանքում,
Ինձ Դոն Ժուանն է գրավում միայն,
Ում դեռ պատանի՝ դյութեց սատանան…

/Ընդհատում է ընթերցանությունը/:

Բայց ոչ, ձեզ համար ավելի հետաքրքիր հատվածներից կարդամ. թող մի քիչ տաքանան ձեր մարմիններն ու հոգիները:

/Առանձնացնում է ուրիշ թղթեր, շարունակում կարդալ, ապա անցնում է արտիստիկ աստմունքի: Նրա շուրջ անաղմուկ խմբվում են այլ վանականներ եւ համակ ուշադրությամբ լսում/:

Երկիրն է դառնում իր առանցքի շուրջ,
Նրա հետ հավերժ՝ մի ողջ մարդկություն,
Մենք պիտի տանենք մեր բախտն անտրտունջ,
Մեր իսկ շապիկը պարզելով քամուն:
Արքան, բժիշկը, քահանան խիստ լուրջ
Տնօրինում են մեր բախտն անանուն,
Մեզ պարգեւում են սեր, գինի ու փառք,
Բայց կյանքը, ավա՜ղ, անցնում է արագ:

Իմ Դոն Ժուանը Քադիս ուղարկվեց,-
Չքնաղ քաղաքն այդ ես միտս եմ բերում,
Նա առ ու ծախի շուկա էր շատ մեծ,
Երբ շղթաները չէր փշրել Պերուն:
Այնպես սիրուն են աղջիկներն այնտեղ,
Նրանց քայլվածքից սիրտդ է թրթռում,
Լուսնի տակ ծնված եւ ոչ մի գրիչ
Զորու չէ ցույց տալ քայլերն այդ դյութիչ:

/Աստմունքի ընթացքում աչքունքով է անում վանականներին/:

Արաբիո ոչ մի գեղեցիկ աշխետ,
Ոչ մի հեզ եղնիկ, ոչ մի նուրբ գազել
Չեն կարող մրցել նրանց քայլքի հետ:
Ինչպիսի՜ ոտքեր, ինչպիսի՜ մազեր,
Ինչպիսի՜ քնքուշ դեմքի քող, զգեստ:
Գովքի մի ամբողջ երգ պիտի ասել…

/Հանկարծ ընդհատում է ելույթը եւ չքմեղանքով նայում հավաքվածներին/: Ամբողջ միաբանությունն է հավաքվել այստեղ, թե՞ բացականեր կան… */Վանականները ժպտալով միմյանց են նայում, ապա՝ բանաստեղծին/:* Լավ, պոեզիայի ժամն ավարտենք: Խնդրում եմ՝ գնացեք ձեր գործին,

թե չէ աբբահայրը կհանդիմանի ինձ, թե ես կաթվածահար եմ արել միաբանության աշխատանքը:

/Լ.Բայրոնին է մոտենում երիտասարդ մի վանական մատուցարանով, վրան՝ թխվածք/:

Երիտ. վանական- Հյուրասիրվեք, միլորդ, հայկական գաթա է:

Լ.Բայրոն- Օ, մեծ ախորժակով: */Վերցնում է գաթան՝ հաճույքով ուտում/:* Քաղցր ու համով է: Սրա բաղադրատոմսը կտա՞ք ինձ, որ Վենետիկի իմ ընկերուհիներից մեկին խնդրեմ, որպեսզի այս գաթայից թխի ինձ ու եվրոպացի հյուրերիս համար. հաջորդ շաբաթ նրանց պիտի ընդունեմ իմ կացարանում:

Երիտ. վանական- Սիրով, միլորդ, կգրեմ բաղադրատոմսը ու կփոխանցեմ ձեզ, նախքան կղզուց կմեկնեք:

Լ.Բայրոն- Շնորհակալ կլինեմ… Երիտասարդ, դուք ամուսնանալու՞ եք…

Երիտ. վանական */ամոթխածորեն/-* Երեւի այո, միլորդ, ես սրբակրոն քահանա չեմ ձեռնադրվի… Այդպես եմ մտադրվել:

Լ.Բայրոն- Հիանալի՜, ուրեմն ես քեզ համար արժանավոր հարսնացու կգտնեմ՝ կույս եւ գեղեցիկ… հա, որ լինի նաեւ հայուհի: */Վանականները ծիծաղում են/:* Դե, դե ցրվեք, գնացեք, թե չէ աբբահոր ձեռից այս անգամ չեմ պրծնի:

/Վանականները հեռանում են, բացի հ.Հարությունից եւ հ.Սուքիասից: Նրանք մի կողմ են քաշվում եւ կամացուկ զրուցում: Լ.Բայրոնը նստում է նստարանին եւ փորձում կրկին տրվել ստեղծագործական վայելքին: Ոռպե անց կանգնում է եւ ուշադիր նայում հեռուն/:

Լ.Բայրոն- Ի՜նչ գեղեցիկ է Ադրիատիկ ծովը իր խաղաղ ծփանքով, ասես նա բոլոր հրաշալի երազներն է ներծծել իր մեջ… */Ուրախացած/:* Գոնդո՜լ է մոտենում մեր ափին… Նորապսակնե՜ր են… */Շտապ հագնում է սքեմը եւ թաքնվում ս.Կույսի արձանի հետեւում: Ներս է մտնում նորապսակ զույգը՝ տարեց մի տղամարդ՝ կոմս Կվիչիոլին եւ երիտասարդ ու գեղեցիկ մի կին՝ Թերեզան՝ հարսանեկան շորով: Լ.Բայրոնը տեղում անհանգիստ ճոճվում է եւ եկվորների համար անլսելի բացականչում/.*

Աստվա՜ծ իմ, էդ ստահակ կոմսը ամուսնանում է չնաշխարհիկ Թերեզայի հետ:

/Թերեզան ծնրադրում է ս.Կույսի արձանի առջեւ եւ սկսում ջերմեռանդորեն աղոթել: Կոմսը մի պահ կանգնում է նրա մոտ՝ չիմանալով անելիքը: Նրան է մոտենում հ.Սուքիասը/:

Հ.Սուքիաս- Բարի գալուստ, կոմս:

Կոմս Կվիչիոլի- Բարեւ, աբբա: */Թերեզային/.* Լավ, սիրելիս, դու աղոթիր, իսկ ես գնամ աբբահոր մոտ:

Հ.Սուքիաս- Այո, կոմս, ես կուղեկցեմ ձեզ: */Կոմսը եւ հ.Սուքիասը հեռանում են/:*

Լ.Բայրոն */Արձանի հետեւից կամաց կանչում է/-* Թերեզա՛, Թերեզա՛, հրեշտակս…

Թերեզա */Ընդհատում է աղոթքը եւ ապշած նայում վանականի սքեմով լ.Բայրոնին/-* Հարո՛լդ, Ջո՛րջ, սիրելի՛ս… Էս ի՞նչ է՝ սքեմի մեջ ես… վանակա՞ն ես դարձել…

Լ.Բայրոն- Դե չէ, պարզապես մի քիչ ցուրտ է, աբբաները տվին՝ հագնելու: */Միանգամից տխուր ձայնի անցնելով/:* Դու ամուսնանում ես էդ քավթառ կոմսի հե՞տ…

Թերեզա- Ի՞նչ անեմ, ծնողներս են ստիպում: Բայց դու գիտես, որ իմ իսկական սիրելին դու ես, Հարոլդ-Ջորջ:

Լ.Բայրոն- Իսկ այս գիշերը նա է անցկացնելու քեզ հետ:

Թերեզա- Երանի՜ քեզ հետ լինեին իմ առաջին ու հետագա բոլոր գիշերները…

/Լ.Բայրոնը շտապ մոտենում է Թերեզային, գրկում եւ պինդ ու երկար համբուրում/:

Թերեզա */դժվարությամբ պոկ գալով գրկախառնությունից/-* Թող, հերիք է… շունչս կտրվեց:

Լ.Բայրոն- Դու պինդ ու երկար համբույրներին դեռ չես դիմանում, Թերեզա: Ոչինչ, հետո էդ կարեւոր փորձառությունը ձեռք կբերես:

Թերեզա- Էդ ե՞րբ, թանկագինս, կոմսի հետ ի՞նչ փորձառություն…

Լ.Բայրոն- Շուտով: Ես չեմ թողնի քեզ էդ սրիկայի ձեռքին, կպոկեմ նրանից, եւ կդառնաս իմ կինը:

Թերեզա */ծիծաղելով/-* Ի՜նչ անուղղելի ռոմանտիկն ես, Հարոլդ, անվերջ երազում ես:

Լ.Բայրոն- Դե կտեսնես: Միայն թե դու ցանկանաս, հանկարծ չհրաժարվես մեր սիրուց:

Թերեզա- Չեմ հրաժարվի, սիրելիս: Բայց չգիտեմ, թե դու ինչպես պետք է գլուխ բերես էդ գործը… Կոմսը չի զիջի ինձ, հայրս էլ չի համաձայնի:

Լ.Բայրոն- Երկուսն էլ կհամաձայնեն ի վերջո, որ դու ինձ պատկանես: Սիրո օրենքն անողոք է… Հա, կամուսնանք, եւ դու որպես նորահարս երկրորդ անգամ կգաս սուրբ Ղազար, որ օրինականացնես երկրորդ… հուսամ՝ արդեն վերջին ամուսնությունդ:

Թերեզա- Ի՜նչ ռոմանտիկն ես, իրոք, Ջորջ, միշտ երազանքների մեջ ես, եւ ո՞նց եմ քեզ սիրում դրա համար… */Վախեցած/:* Գալիս են, թաքնվիր:

/Վերադառնում են կոմս Կվիչիոլին եւ հ.Սուքիասը/:

Հ.Սուքիաս- Արգո կոմս, մեկ ագամ եւս անչափ շնորհակալ ենք ձեր առատաձեռն նվիրատվության համար:

Կոմս Կվիչիոլի- Դե, ամեն օր հո չենք ամուսնանում... */ցույց է տալիս Թերեզային/* այն էլ այսպիսի գեղեցկուհու հետ: */Մեկեն նկատում է արձանի հետեւում կանգնած լ.Բայրոնին եւ գոռում/.* Ի՞նչ, դու այստե՞ղ էլ ես հետապնդում իմ կնոջը... այս վանականների մե՞ջ... Անիծյալ անգլիացի, դեռ կլսես իմ անունը: */Դառնալով հ.Սուքիասին/:* Ծղթայեք այս սանձարձակ գիշատչին մի խուլ խցում, որպեսզի երկար ժամանակ արեւի երես չտեսնի: */Փութով ու մոլեգին հեռանում է՝ հետեւից քարշ տալով Թերեզային/:*

Հ.Հարություն */ով հեռվում կանգնած՝ քթի տակ խնդմնդալով հետեւում էր այդ միջադեպին, մոտենում է լ.Բայրոնին եւ հ.Սուքիասին՝ օրորելով գլուխը/-* Դոն Ժուանի հերթական ձախավեր արկա՜ծը... */Ապա մտահոգ ձայնով/:* Ծերուկը վրիժառությամբ լցվեց:

Լ.Բայրոն- Ես սիրում եմ Թերեզային, ափսոս է, որ նման վարդը թոշնի էդ կատաղած ծերուկի ոսկրոտ բազուկներում:

Հ.Հարություն- Սիրու՛մ եմ, սիրու՛մ եմ... Լավ, խորհենք՝ ինչ ենք անելու...

Հ.Սուքիաս- Բայրոն, չմտահոգվեք, մենք թույլ չենք տա, որ կոմսի խանդոտ ու բիրտ ձեռքը հասնի ձեզ:

Հ.Հարություն */լ.Բայրոնին/-* Ուրեմն այսպես. բացառության կարգով այսօր կգիշերես մեզ մոտ, վանքում, պետք չէ Վենետիկ վերադառնալ, ո՞վ գիտե, թե կոմսը ինչեր կարող է ձեռնարկել քո հանդեպ. թող մի փոքր ժամանակ անցնի, եւ նա կխաղաղվի:

Հ.Սուքիաս- Հիանալի միտք է, եղբայր Հարություն, աբբահորն էլ կխդրենք, որ միջոցներ ձեռնարկի՝ այս գիշեր կղզին առավել ուժեղ հսկողության տակ առնելու համար: Մեզ պետք չեն... գիշերային վարձկաններ:

Լ.Բայրոն */Հասկանալով ասվածի ողջ իմաստը/-* Երախտապարտ եմ ձեզ, սիրելի հայրեր: */Ուրախացած/:* Ուրեմն՝ բուռն գիշե՛ր է սպասվում մեզ... Դուք ինձ կհյուրասիրեք ձեր անուշահամ գինուց, իսկ ես ձեզ համար բանաստեղծություններ կկարդամ:

Հ.Սուքիաս- Կարծում եմ՝ սուսերները պետք է փոքր մատենադարանից տեղափոխել մեր գիշերակացի սենյակ... կարող են պետք գալ:

Լ.Բայրոն- Շատ ճիշտ առաջարկություն է:

/Հ.Հարությունը գլխով համաձայնության նշան է անում/:

Հ.Սուքիաս- Ափսոս, ընդամենը երկու սուսեր կա, գոնե երրորդն էլ լիներ. երեքով ենք, չէ՞...

Լ.Բայրոն- Շուտով երրորդն էլ կունենանք, եւ այդպես կստեղծենք սուրբ Ղազարի ինքնապաշտպանական ջոկա՜տը...

Հ.Հարություն- Դե, այդքան մի ոգեւորվիր, Բայրոն, խոսքն ընդամենը մի գիշերվա մասին է:

Լ.Բայրոն- Ո՞վ գիտե, թե էլ ինչ անհանգիստ գիշերներ կարող են լինել այստեղ…

Հ.Հարություն- Լավ, գնացինք, Աստված մեզ պահապան:

Հ.Սուքիաս- Աստված մեզ պահապան… մեր սրերի հետ: */Աչքով է անում լ.Բայրոնին: Երեքով հեռանում են/:*

ՊԱՏԿԵՐ Է

/Վանքի բակը: Լիալուսին: Աբբահայրը դանդաղ ու զգուշորեն շրջում է՝ ստեպ-ստեպ ականջ դնելով հեռավոր ձայներին եւ շուրջը նայելով/:

Աբբահայր */հանգիստ մենախոսում է/*- Վաղուց այսպիսի լիալուսին չեմ տեսել… */Նայելով վերեւ/:* Հրա՜շք է իսկական, Աստված մեզ հոգ է տանում նաեւ գիշերով՝ իր լույսով ու գեղեցկությամբ… Ո՞ր տմարդը կարող է խանգարել մեր խաղաղ քունը այսպիսի հրաշալի ժամերին…. Թեեւ, ավա՜ղ, չարի համար գեղեցկություն ու մարդկայնություն գոյություն չունի: */Դադար/:* Մեր արածը մի մեծ բան չէ, ընդամենը օտարազգի մարդ ենք հյուրընկալել մեր հարկի տակ… Նա մեր հանդեպ շատ հարգանք ու սեր է տածում, չպաշտպանե՞նք նրան… Մենք էլ նրան ենք սիրում ու հարգում: */Դադար/:* Նա էլ մեզ նման մի հալածական տարագիր է… Մեր ճակատագրերը նման են իրար, մենք իրար պաշտպանում ենք ընդամենը, եւ Աստված օգնական է մեզ: */Մոտենալով վառվող ճրագով մի պատուհանի՝ տեսնում է՝ երկու երիտասարդ վանական ուշք են դրել լուսավորված սենյակից լսվող ուրախ աղմուկին ու երգեցողությանը/:* Որդիք, այս ի՞նչ գործի եք…

/Երիտ. վանականներն անակնկալի են գալիս՝ տեսնելով իրենց թիկունքում կանգնած աբբահորը/:

Երիտ. վանական Ա */կմկմալով/*- Ներող եղեք… աբբահայր… Նրանք այնքան զվարճալի ու հետաքրքիր են զրուցում */ցույց տալով լուսավոր պատուհանը/:*

Աբբահայր- Ովքե՞ր են…

Երիտ. վանական Բ - Հայր Հարությունը, հայր Սուքիասը եւ լորդ Բայրոնը: Նրանք մի փոքր գինովցած են, բայց զարմանալի-ուշագրավ դատողություններ են անում… եւ հիանալի երգում են:

Աբբահայր- Բայրոնն է՞լ է երգում…

Երիտ. վանական Ա- Այո, սրբազան, նաեւ՝ հայերեն… դե, ձայնակցում է հայրերին… Ծվի նվագող էլ կա:

Աբբահայր- Հա՞… */Ունկ է դնում: Լսվում է ուրախ խմբի, թեեւ ոչ այնքան ներդաշնակ, բայց գրավիչ ու միահամուռ երգը շվիի ընդհատուն նվա-*

գակցությամբ. նրանք երգում են հայկական ժողովրդական սիրային մի ուրախ երգ/: Այո՜… Լավ, թող երգեն, իսկ մենք գնանք մեր բանին: */Երիտ. վանականներին/:* Միառպահ շրջեք խարսխաափին, հետո գնացեք հանգիստ առնելու:

Երիտ. վանականներ- Բարի, աբբահայր: */Հեռանում են/:*

Աբբահայր */Դանդաղ քայլում է: Մի պահ կանգնում, շրջվում ու ետ է նայում լուսավոր պատուհանի կողմը/*- Խենթե՜ր են… Երանի՜ ձեզ… դեռ ջահել եք ու խենթությամբ լի… */Հեռանում է/:*

ՊԱՏԿԵՐ Ը

/Աբբահոր առանձնասենյակը. նստած են աբբահայրը, հ.Հարությունը, հ.Սուքիասը, եւս չորս վանական: Նրանք մտահոգ ու անհանգիստ են, ծանր լռություն է տիրում/:

Աբբահայր- Ինչու՞ է լորդը ուշանում, նա խոստացավ, չէ՞, հայր Հարություն, որ այս ժամին կլինի մեզ մոտ:

Հ.Հարություն- Այո-այո, աբբահայր, հիմա կգա, շատ չի ուշանա… Գուցե մի փոքր տարվել է էլի…

Հ.Սուքիաս- Նա երբեմն անկանխատեսելի է դառնում, բայց մեր առնչությամբ սովորաբար ձգտում է լինել բարեխիղճ:

/Արագաքայլ ու ուրախ ներս է մտնում լ.Բայրոնը/:

Լ.Բայրոն- Խորին հարգանքներիս հավաստիքը, իմ սիրելի հայրեր: Ներողամիտ եղեք, որ մի փոքր ուշացա: Եթե դուք տեսնեիք, թե ինչ գեղեցկուհի՜ էր էդ հարսնացուն… ափսոս, նա էլ է ինչ-որ տարեց կոմսի հետ ամուսնանում: */Ներկաներից ոմանք փոթկացնում են/:* Բայց դե գեղեցկուհի է, հա՜… */Նկատելով աբբահոր, ինչպես եւ մյուսների տխուր ու խոժոռ դեմքերը/:* Էս ի՞նչ է պատահել ձեզ… Ի՞նչ եք երկնքի սեւ ամպերն առել ձեր դեմքերին… Կորո՞ստ ունեք… Դե ի՞նչ է պատահել, ինչու՞ եք ինձ կանչել…

Աբբահայր- Լորդ Բայրոն, այստեղ հավաքված է մեր միաբանության գիտական խորհուրդը: Մենք որոշեցինք խորհրդի միասնական կարծիքը փոխանցել ձեզ:

Լ.Բայրոն- Ի՞նչ կարծիք, աբբահայր… Էլի ինչ-որ զանցա՞նք եմ թույլ տվել…

Աբբահայր- Մեր կարծիքը հայր Հարությունի կազմած հայերեն-անգլերեն քերականության ձեռնարկի համար ձեր գրած առաջաբան խոսքի վերաբերյալ:

Լ.Բայրոն- Մ՜… սիրտս թեթեւացավ, իսկ իմ մտքով վատ բաներ էին անցնում… Դե ինչ, պատրաստ եմ լսելու ձեր գովեստի խոսքերը իմ համեստ առաջաբանի վերաբերյալ:

Աբբահայր- Թանկագին Բայրոն, նախ, հայտնեմ ձեզ, որ մենք երկար ենք քննարկել ձեր գրվածքը, եւ պիտի ասեմ՝ նույնիսկ սուր բանավեճ ունեցանք:

Լ.Բայրոն */խիստ զարմացած/*- Բանավե՞ճ... Բայց հայր Հարությունը մի քանի օր առաջ ինձ հայտնել էր, որ հիացած է իմ առաջաբանով, եւ իր գիրքը մեծ արժեք ու նշանակություն է ունենալու նաեւ առաջաբանի շնորհիվ... ես ճի՞շտ եմ վերաարտահայտում ձեր գնահատականը, հայր Հարություն...

/Հ.Հարությունը գլուխը կախ՝ մռայլորեն լռում է/:

Աբբահայր- Հայր Հարությունին չմեղադրեք, լորդ, նա անկեղծ է իր կարծիքում: Բայց այս կարգի հարցերը վճռում ենք միասնաբար՝ ելնելով մեր միաբանության շահերից... Մեր խորհրդի վերջնական եզրակացությունն այն է, որ ձեր խոսքն այս տեսքով չենք կարող հրապարակել:

Հ.Հարություն- Որդիս, գուցե՞ մի նոր առաջաբան գրես, ավելի մեղմ ու անվնաս մի խոսք...

Լ.Բայրոն- Բայց ինչու՞, հայր Պասկալ, մի՞թե ես վատ եմ գրել. իմ ճշմարիտ միտքն ու հոգին եմ դրել այդ գրության մեջ:

Աբբահայր- Ոչ-ոչ, Բայրոն, ամեն ինչ փայլուն ու իմաստալից եք գրել, մենք նույնիսկ մի պահ ոգեշնչվեցինք:

Լ.Բայրոն- Չեմ հասկանում՝ այդ դեպքում ի՞նչն է ձեզ մտահոգում... Ինչպե՞ս կարելի է հրաժարվել փայլուն ու իմաստալից խոսքից:

Աբբահայր- Քաղաքական հանգամանքներն են խանգարում, լորդ, բացառապես՝ քաղաքական:

Լ.Բայրոն- Այսինքն՝ մտավախություն ունեք, որ իմ առաջաբան խոսքը կարող է քաղաքական վտա՞նգ հարուցել ձեր միաբանության համար... Կարող է խաթարել ձեր անդո՞րը...

Աբբահայր- Այո, լորդ Բայրոն, հենց այդ մտավախությամբ ենք մերժում ձեր առաջաբանի հրապարակումը: Դուք կծու բառեր եք օգտագործել թուրքերի ու պարսիկների հասցեին. նրանք կկարդան եւ ձեր Անգլիայի ու Իտալիայի կառավարությունների ձեռքերով մեզ կպատժեն:

Լ.Բայրոն- Մի վայրկյան, աբբահայր... */Աբբահոր առջեւից վերցնում է մի թուղթ/:* Կարդամ այդ հակաթուրքա-պարսկական հատվածը, տեսնենք՝ որտեղ եմ ես չափն անցել. «... դրախտի անհետացման հետ սկսվեց նաեւ Հայաստանի տարաբախտությունը, որովհետեւ, թեպետեւ երկար ժամանակ նա եղավ մի զորավոր թագավորություն, բայց հազիվ երբեք անկախ մնաց. եւ պարսից սատրապները, եւ թուրք փաշաները հավասարապես անապատ դարձրին այն երկիրը, ուր աստված ստեղծել էր մարդուն ըստ իր հատուկ պատկերի»: */Զարմացած նայում է ներկաներին/:* Այս բառերի համա՞ր եք տագնապ բարձրացրել, աբբաներ... */Լռություն/:* Եվ ի՞նչ կանեն

ձեզ, ուրիշների ձեռա՞մբ, ձեր հակառակորդները, երբ կարդան այս տողերը… */Հեգնանքով/:* Միաբանությունը կփակեն ու կվտարե՞ն ձեզ Վենետիկից, բա՞նտ կնետեն, խարույկ ու կախաղա՞ն կհանեն ձեզ…

Աբբահայր- Հավանաբար նման մի պատիժ կլինի:

Լ.Բայրոն- Մի՞թե դուք այդքան թույլ ու անպաշտպան եք պատկերացնում ձեզ…

Աբբահայր- Լորդ, մենք ընդամենը կղերական-գիտական հիմնարկ ենք մի օտար երկրում, մեզ հեշտ է գցել քաղաքական խարդավանքների ծուղակը… Տիար, մեծարգո բարեկամ, առաջարկում ենք փոխզիջումային տարբերակ. համաձայնվեք ձեր գրությունից հանել այդ… թուրքա-պարսկական գլխացավանքը, եւ մենք կհրապարակենք առաջաբանը: Մնացած հատվածներն եւս շատ ծանրակշիռ ու այժմեական են… Լորդ Բայրոն, մի զրկեք մեզ ու ձեզ այդ հիանալի գրվածքը տպագրված տեսնելու հաճույքից ու օգտակարությունից:

Լ.Բայրոն */բացականչում է/*- Ո՜չ, աբբահայր, ո՜չ, համաձայն չեմ, որքան էլ ձեր առաջարկությունը բարի փոխզիջում կոչվի: Կամ դուք իմ խոսքը հրապարակում եք ամբողջովին, ինչպես հանձնել եմ ձեզ, կամ այն չի հրապարակվում: Եվ մի դատեք ինձ իբրեւ կամակորի: Հարցը բարոյական ու գաղափարական սկզբունքայնության մեջ է:

/Լռություն/:

Աբբահայր- Լորդ Բայրոն, մենք չենք կարող թույլ տալ, որ մի գրության պատճառով մենք փորձության ենթարկվենք:

Լ.Բայրոն- Եվ դա ձեզ համար ընդամենը մի գրությո՞ն է… */Պոռթկալով/* Ես իմ խոսքի մեջ ցույց եմ տալիս իմ խորին-անկեղծ սերը հայ ազգի ու Հայաստանի հանդեպ. այնտեղ ընդամենը մեղմ ակնարկով եմ նշել ձեր երկրի ներկայիս դժբախտության հեղինակներին: Դուք վախենում եք հրապարակավ ասել, թե ովքեր են Հայաստանի ներկայիս կեղեքիչներն ու բռնակալները… Չեմ ուզում հավատալ, որ դուք այդ աստիճանի վախկոտ եք, հայ հայրեր… Դուք նույնիսկ ավետարանն եք անտեսում. գրված է, չէ՞՝ հավատացեք, ու երբեք չեք վախենա: Դուք ավետարան էլ չեք կարդում:

Հ.Հարություն- Բայրոն, հանգստացիր, վիրավորական խոսքեր մի ասա:

Լ.Բայրոն */ավելի պոռթկուն/*- Ո՜չ, վարդապետ, ո՜չ: Հիմա ես պետք է ձեզ սովորեցնեմ. զսպվածությունը, ավելորդ զգուշավորությունն ու սարսափը վտանգներից՝ հաճախ կործանման են հանգեցնում եւ մարդուն, եւ ազգերին: Նրանց պետք է պայքարի կոչել՝ հանուն իրենց ազատության… Դուք գիտե՞ք ձեր հայրենիքի իրական վիճակը, թե՞ այս անդորրավետ կղզին վերջնականապես ընդարմացրել է ձեր ազգային հպարտությունն ու հայրենական գիտակցությունը… Ես պետք է մարտակո՜չ գրեի ձեզ համար, ես

պետք է ի զե՞ն կոչեի աշխարհի ողջ հայերին՝ հանուն իրենց հին ու մաքառուն, պանծալի ու հետաքրքիր, բայց հիմա՝ լլկվող ու ոչնչացող երկրի ազատագրության համար: Հարկ է, հանուն հայության ազատության ու անկախության, շեփորներ հնչեցնել ու ծիրանագույն դրոշներ ծածանել հայկական հողի վրա... Ես թաքուն հույս ունեի, որ մի օր դուք՝ կիրթ ու գիտուն աբեղաներ, որ հայ ազգի սերուցքը կարող եք լինել... որ մի օր դուք կդառնաք հայոց արժանապատվության, ազատագրության ու վերածնության դրոշակակիրն ու ջահակիրը, եւ ես պիտի լինեի ձեզ հետ՝ պատրաստ ուս-ուսի մարտնչելու վայրագների դեմ ու հաղթելու, կամ՝ զոհվելու... Այո, ես մինչ օրս պատրաստ էի զոհվել Հայաստանի համար՝ ձեր նվիրումի, պայքարի, քաջության ու աղոթքների տակ: Ես համարում էի, որ սուրբ Ղազարը Հայաստանի անկախության շտաբն է, այդ մասին հպարտանալով ասում էի իտալացի կարբոնարիստ իմ ընկերներին... Ինչպիսի՜ հուսախաբություն, հայոց պատվական ազգի ինչպիսի՜ մորթապաշտ ու խղճուկ շառավիղներ:

Հ.Հարություն */այլայլված/*- Բայրոն, վերջ տուր վիրավորական խոսքերիդ, մենք արժանի չենք դրանց: Պետք չէ ծայրահեղական խոսքեր հեղել պահի տակ: Դու իսկապես խենթացել ես:

Լ.Բայրոն – Խենթ հա խենթ... միանգամից ասեք սատանա՝ պրծնենք */հեգնալից ծիծաղում է/:* Գուցե դուք է՞լ եք էն գերմանացի ցնդած փիլիսոփայի պես կարծում, թե ես շփվում եմ սատանայի հետ...

Աբբահայր – Հարգարժան լորդ, մենք չենք կիսում այլոց անհաճո կարծիքները ձեր վերաբերյալ: */Լ.Բայրոնը հարցական հայացքով նայում է Աբբահորը, ապա մյուսներին/:* Դե, օրինակ, Տոսկանայի իշխանավորներն այն միահամուռ կարծիքին են, որ դուք... անառակ նոբլմեն եք... այլեւ՝ վտանգավոր ազատամիտ, լիբերալիզմի էմիսար եւ պետք է գտնվեք մշտական հսկողության տակ:

Լ.Բայրոն – Եվ դուք համամիտ եք նրանց հետ:

ՆԵՐԿԱՆԵՐ – Ոչ-ոչ-ոչ:

Լ.Բայրոն – Կարծում եք՝ ձեր այդ ոչ-ի դիրքորոշումն ինձ ոգեւորու՞մ է... Լսեք, ես երբեւէ այսքան սթափ ու ողջախոհ չեմ եղել, ուստի ձեզ կասեմ ամենայն անկեղծությամբ */կտրական մատնացույց անելով ներկաներին, բարձր ու դատապարտող տոնով/* Ստրուկներ ու վախկոտնե՜ր, դուք արժանի եք բռնակալների ու ստորացման... դուք... դուք արժանի՜ չեք այն մեծ ազգին, որից ծագում եք: */Ձեռքի թուղթը ճմռթում ու նետում է հատակին, ապա փութով դուրս է գալիս: Վանականները տագնապած խաչակնքում են՝ «Տեր Հիսուս» մրմնջալով: Քար լռություն է տիրում մի պահ/:*

Աբբահայր */նվաղուն ու տրտմալից ձայնով/*- Խենթ է այդ տղան, իսկական խենթ:

/Հ.Հարությունը եւ հ.Սուքիասը դուրս են գալիս լ.Բայրոնի հետեւից: Մյուսները շվար ու գլխիկոր մնում են նստած/:

ՊԱՏԿԵՐ Թ

/Լ. Բայրոնի վենետիկյան սենյակը: Նստած գրում է: Ներս է մտնում Թերեզան/:

Թերեզա */Մոտենում, մի պահ անշարժանում է լ.Բայրոնի դիմաց: Վերջինս չի նկատում նրան/-* Ներիր, սիրելիս, որ պիտի խանգարեմ քեզ:

Լ.Բայրոն */Վերջապես գլուխը բարձրացնում է/-* Ի՞նչ կա, աղունիկս…

Թերեզա- Ուզում եմ հիշեցնել այսօրվա համար տվածդ խոստումը:

Լ.Բայրոն- Ի՞նչ խոստում…

Թերեզա- Ի՞նչ մոռացկոտն ես, Ջորջ… Մի օր էլ ինձ էդպես կմոռանաս:

Լ.Բայրոն- Դե ասա, թանկագինս, միտքս շատ զբաղված է հիմա, կարող է եւ ինչ-որ բան մոռանամ:

Թերեզա- Այսօր լրանում է մեր ամուսնության առաջին տարեդարձը:

Լ.Բայրոն- Օ՜ հրաշալի է… Մի՞թե դա մոռանալու բան է… Բայց քեզ լավ պոկեցի, չէ՞, էդ ագահ կոմսից… Մի փոքրիկ փրկագինը բավ էր, որ քեզնից հրաժարվեր:

Թերեզա- Հա, թանկագինս, դու լավ ազատագրեցիր ինձ: Շնորհակալ եմ կրկին: */Համբուրում է լ.Բայրոնին, ապա մի կարճ սիրախաղ է տեղի ունենում նրանց միջեւ/:*

Լ.Բայրոն- Լսիր, Թերեզ, բայց էդ խորամանկ կոմսն էլ է շահած դուրս եկել իրավիճակից. եւ փող է ստացել, եւ ազատվել անհավատարիմ կնոջից: Հա-հա-հա… */կեղծավոր ծիծաղում է/:*

Թերեզա- Ես սրտով երբեք էլ նրա կինը չեմ եղել, մի անտեսիր էդ կարեւոր հանգամանքը… Լավ, սիրելիս, հիշեցնեմ. դու խոստացել ես, որ ինձ այսօր կտանես Վենետիկի հարուստ խանութները՝ գնումների, իսկ հետո կընթրենք Լիդոյի քո նախասիրած պանդոկում: Էդպես կտոնենք մեր ամուսնության առաջին տարեդարձը… Հա, խոստացածդ նվերն էլ չմոռանաս:

Լ.Բայրոն- Խոսքիս տերն եմ, անուշիկս, միայն թե մի քիչ համբերիր՝ վերջացնեմ նամակներս, նոր գնանք:

Թերեզա- Մ՜, մոռացել էի՝ երկուշաբթին քեզ համար նամակագրության օր է… Դեռ շա՞տ ունես գրելու… */Մի փոքր հեռանում է լ.Բայրոնից/:*

Լ.Բայրոն */Շարունակում է գրել ու միաժամանակ զրուցել Թերեզայի հետ/-* Մի նամակ մնաց…

Թերեզա- Թույլ կտա՞ս կարդամ… Չիմանա՞մ՝ գուցե կանանց էլ ես գրում…

Լ.Բայրոն- Ուզում ես՝ կարդա… քանի դեռ ծրարների մեջ չեմ դրել:

Թերեզա- Իհարկե՝ ուզում եմ: */Վերցնում է սեղանի թղթերից մեկը եւ կարդում, նախ, անձայն, ապա՝ բարձր/.* «Պարոն Մըրրեին… կուզենայինք իմանալ, թե կա՞ն, արդյոք, հայերեն տպատառեր եւ հայ մամուլ Անգլիայում՝ Օքսֆորդում, Քեմբրիջում կամ որեւէ այլ տեղ: Դուք, իհարկե, տեղյակ եք, որ շատ տարիներ առաջ Վիստոնները Անգլիայում հրատարակեցին «Հայոց պատմության» բնագիրը՝ իրենց կատարած լատիներեն թարգմանության հետ մեկտեղ: Գոյություն ունե՞ն, արդյոք, այդ տպատառերը եւ որտեղ են դրանք: Խնդրում եմ՝ հարց ու փորձ արեք ձեր քաջատեղյակ ծանոթներին»… Շատ մասնագիտական նամակ է: */Թուղթը դնում է սեղանին, վերցնում մեկ ուրիշը: Կարդում է/.* «Հայերեն քերականությունը հրատարկվում է, բայց հայերենի դասերս առայժմ ընդհատվել են, մինչեւ որ գլխացավս մի քիչ մեղմանա…»: Սիրելիս, քո գլխացավն էդքան ուժե՞ղ է, որ դրա մասին Անգլիա ես գրում… Գուցե՞ իմ պատճառով է գլխացավդ…

Լ.Բայրոն- Դե չէ, դա ավելի շատ գրել եմ փոխաբերական իմաստով:

Թերեզա- Լավ, համոզեցիր: */Վերցնում է մի ուրիշ թուղթ, կարդում/:* «Ինչու՞ չուղարկեցիք նամակիս պատասխանը եւ հայկական Եվսեբիոսի թարգմանության բաժանորդների ցուցակը, որի հայտագրի օրինակները ուղարկեցի ձեզ երկու ամիս առաջ… Դուք չպետք է անուշադրության մատնեք իմ հայերին»… Իմ հայերի՞ն… Ի դեպ, ամուսնյակս, վաղուց չես այցելում քո հայերին… ինչու՞, նեղացե՞լ ես նրանցից…

Լ.Բայրոն */Մի պահ ակնդետ նայում է Թերեզային/-* Քո խելքի բանը չէ… Վերջացնում եմ, հագնվիր՝ դուրս գանք:

/Թերեզան դուրս է գալիս, ապա քիչ անց վերադառնում՝ տոնականորեն հագնված/:

Թերեզա- Ես պատրաստ եմ… Սիրելիս, պիտի քեզ հիշեցնեմ մի խոստումդ եւս. մենք դեռեւս չենք գնացել սուրբ Ղազար՝ օրինականացնելու մեր ամուսնությունը. ե՞րբ ենք գնալու…

Լ.Բայրոն- Շուտով:

Թերեզա- Ուռա՜… Ես էլ քեզ պես սիրում եմ էդ կղզին… էդ բարեհամբույր ու գեղեցկատես հայ աբեղաներին՝ նույնպես: */Չարաճճիորեն նայում է լ.Բայրոնին/:*

Լ.Բայրոն- Դու իմ հոգու հետ չխաղաս: */Նամակները տեղադրում է ծրարներում, ծրարները՝ պայուսակի մեջ: Հագնվում է/:* Կհիշեցնես, որ նամակները ճանապարհին հանձնեմ փոստատուն:

Թերեզա- Լավ, սիրելիս:

/Թեւանցուկ դուրս են գնում/:

ՊԱՏԿԵՐ Ժ

/Չիթենիների պուրակում հանգիստ շրջում են հ.Հարությունը եւ հ.Սուքիասը: Կանգ են առնում եւ մտասույզ նայում հեռուն/:

Հ.Հարություն- Ինչքա՞ն կարոտ կա իմ մեջ… եւ իմ բաղձանքները հեռուներում են…

Հ.Սուքիաս- Եղբայր Հարություն, հիշո՞ւմ եք՝ այսօր ինչ օր է…

Հ.Հարություն */կարոտալից ձայնով/-* Հիշում եմ, եղբայր Սուքիաս, հիշում եմ… Ուղիղ վեց տարի է, ինչ Բայրոնը առաջին անգամ ոտք դրեց մեր կղզին:

Հ.Սուքիաս- Այո՜… Թվում է, թե հեռավոր անցյալում է այդ 1816 թվականի դեկտեմբերի 1-ը, չէ՞, եղբայր…

Հ.Հարություն- Այո-այո… Ես ամեն օր հիշում եմ նրան՝ իմ խենթ աշակերտին:

Հ.Սուքիաս- Ես նույնպես կարոտում եմ նրան… Նա մեզ լքեց խռոված հոգով, մենք խորապես խոցել ենք նրա դյուրազգաց ու ազատասեր սիրտը: Նա հազիվ թե երբեւէ ցանկանա վերականգնել կապերը մեզ հետ:

Հ.Հարություն */տխրագին/-* Մենք ուժգին ենք վիրավորել նրան… դե նա էլ՝ մեզ. շատ հուսախաբված գնաց մեզնից: Դեռ էլի ժամանակ է պետք, որպեսզի լիովին խաղաղվի ու ների մեզ:

Հ.Սուքիաս- Արդեն հինգ տարի է՝ նա ոտք չի դնում այստեղ:

Հ.Հարություն- Հավատա, եղբայր Սուքիաս, մի օր մեր խենթը կվերադառնա… Ես հավատում եմ դրան, ես նրան ճանաչում եմ:

Հ.Սուքիաս- Երանի ձեր ասածը ճշմարիտ լինի, եղբայր Հարություն: Թող Աստված լսի մեր կարոտի ձայնը: */Դադար: Հեռվում նկատելով ինչ-որ բան՝ արդեն փոքր-ինչ զվարթ անդրադառնում է/.* Գոնդոլ է մոտենում մեր ափին… երեւի դարձյալ նորապսակներ են… Չէ, երկու տղամարդ են՝ թիավարը եւ…

Հ.Հարություն */բացականչում է/-* Բայրո՞նը…

Հ.Սուքիաս- Ի՞նչ, գուշակությո՞ւն եք անում… Այստեղից դեռ հստակ չի երեւում եկողի դեմքը:

Հ.Հարություն- Սիրտս է վկայում, եղբայր, Բայրոնն է:

/Դադար: Սպասում են այցելուների մոտենալուն/:

Հ.Սուքիաս */հախուռն ուրախությամբ բացականչում է/-* Այո՜, Բայրո՞ն է… եղբայր Հարություն, դուք իսկական պայծառատես եք, Բայրո՞ն է…

Հ.Հարություն- Հրաշալի, հրաշալի… */Ինքնիրեն, կամաց/.* Վերադարձավ մեր անառակ որդին:

/Ներս է մտնում լ.Բայրոնը՝ ուսապարկը ձեռքին եւ ներողամտորեն ժպտալով/:

Լ.Բայրոն- Իմ սիրելի հայրե՛ր, հազար ողջույն ձեզ: */Ողջագուրվում է նրանց հետ/:* Ես ձեզ անչափ կարոտել եմ…

Հ.Հարություն */հայրաբար/-* Հազար ողջույն, Ջորջ:

Հ.Սուքիաս- Ողջույննե՛ր, Բայրոն: Մեր աչքը ջուր կտրեց՝ ձեզ սպասելով: Բարի վերադարձ… Այսօր մի լավ կտոնենք ձեր վերադարձը:

Լ.Բայրոն- Հա՞… էն գինուց դեռ մնո՞ւմ է…

Հ.Սուքիաս- Տակառիկները լի՝ սպասում են մեզ:

Լ.Բայրոն- Իմ բաժինը կպահեք, հետո կվայելենք… Դե, ինչպե՞ս եք, թանկագին հայրեր… Լավ է՝ տեսնում եմ՝ ողջ-առողջ եք: */Կեղծ կշտամբանքով/.* Իմ կարոտից չեք նիհարել բնավ:

/Երեքով հանգիստ ծիծաղում են/:

Հ.Հարություն- Դու ինչպե՞ս ես, որդիս… Արեւհարված ես, նիհարած… Երեւի շատ ես ձիավարում, լողում…

Հ.Սուքիաս- Կամ՝ կանանց ձեռքին չարչարանքներ կրում…

Լ.Բայրոն- Դե չէ, ես Իտալիայում շարունակ ճամբորդությունների մեջ էի այս վերջին երեք-չորս տարիներին… դե … կարբոնարիստների գործերով…

Հ.Հարություն- Հա՛… Ուրեմն՝ մոռացել ես հայերենը…

Լ.Բայրոն- Չեմ մոռացել, ուսուցիչ, ձեր տված հայերեն գրքերը կարդում էի ազատ ժամանակս, բայց դե նոր թարգմանություններ չեմ կատարել:

Հ.Հարություն- Ուրեմն պետք է վերսկսենք հայերենի պարապմունքները:

Լ.Բայրոն- Ուրախ կլինեի դրա համար, բայց ներկայումս ես սեւեռված եմ մի շատ կարեւոր առաքելության վրա:

Հ.Սուքիաս */կասկածամտորեն/-* Գուցե՞ հայկական ոլորտն այլեւս քեզ համար հետաքրքրություն չունի, Բայրոն…

Հ.Հարություն- …կամ՝ մոռացել ես ուրիշ սուր խոսքեր, եւ հիմա եկել ես, որ դրանք էլ նետես մեր երեսին… Արժանի էինք:

Լ.Բայրոն- Չէ-չէ, հայր Սուքիաս, հայր Հարություն, մոռացեք այդ ամենը, գժտության միջադեպը վաղուց անցյալում է, պետք չէ այն փորփրել ու ջրի երես հանել: Ես չարություն ու ոխ չեմ տածում ձեր հանդեպ, ես ձեր նկատմամբ նման տմարդի վարմունքի ընդունակ չեմ: Դուք իմ հոգու լավագույն կղզյակում եք, ես միշտ կսիրեմ ձեզ… Ես շա՜տ եմ պարտական ձեզ:

Հ.Հարություն- Բայրոն, դուք ոչնչով պարտական չեք մեզ:

Լ.Բայրոն- Ուսուցիչ, ես երախտամոռի մեկը չեմ: Ես հիշում ու չափազանց արժեւորում եմ այն ամենը, ինչ դուք՝ հայ հայրեր, արեցիք ինձ համար: Հիշում եմ ամեն ինչ՝ ձեր սերն ու հոգատարությունը, ձեր անաղմուկ ջանքերը, որ ես փրկվեմ խորը ընկճախտից ու հուսալքությունից, որ պաշարել էին ինձ Անգլիայից վտարանդվելուց հետո… Ինձ չափազանց ոգեշնչեց ձեր հին ու գեղեցիկ, բայց եւ բարդ ու դժվարին լեզուն՝ ձեր գրաբարն ու աշխարհաբարը, ինձ նոր երազանքների մղեց հայ ազգի իմաստալից ու

խայտաբղետ պատմությունը… Հայերը եղան իմ մեծ սերը: Ես իմ մեծ սերերից ոչ մեկը անտերության չեմ մատնում… Այս տարիներին՝ ուր որ եղել եմ, ինչ կիրթ մարդկանց հանդիպել եմ՝ պատմել եմ ձեր մասին եղբայրական գորովով: */Սիրառատ հայացքով նայում է աբբաներին/:* Իմ սիրելի՜ հայրեր… ես եկել եմ ձեզ հրաժեշտ տալու:

Հ.Հարություն եւ հ.Սուքիաս */միաբերան/*- Հրաժե՞շտ…

Լ.Բայրոն- Այո, բայց, նախ, թույլ տվեք գնալ աբբահորն ու մյուս վանականներին հրաժեշտ տամ… Թեպետ շատ եմ շտապում, ձեզ հետ մի փոքր երկար կզրուցեմ… Հայրեր, քիչ մը սպասեք, շուտով կվերադառնամ: */Շտապ հեռանում է/:*

Հ.Հարություն- Ո՞ւր է մեկնում այս տղան, հը՞, եղբայր Սուքիաս… Սիրտս ինչ-որ տագնապ խուժեց…

Հ.Սուքիաս- Կարող եմ միայն կռահել. նա մեկնում է… ինչ-որ թեժ երկիր, ուր ազատության համար պայքար է ծավալվում…

Հ.Հարություն */տագնապած/*- Այսինքն՝ գնում է կռվելո՞ւ…

Հ.Սուքիաս- Կարծում եմ՝ այո… Գնում է մարտնչելու եւ…

Հ.Հարություն- Եվ ի՞նչ… */Դադար/:*

Հ.Սուքիաս- Եղբայր Հարություն, ավելի լավ է՝ մի քիչ սպասենք, հիմա նա կգա՝ ինքն էլ կպատմի իր գալիք արկածախնդրությունների մասին:

Հ.Հարություն- Բայց նա չի կարող խոստովանել այն, ինչն Աստծո ու ճակատագրի գործն է:

Հ.Սուքիաս- Այո, եղբայր, դա կարող ենք կռահել մենք, որ այդքան սիրեցինք նրան… եւ մեծ տագնապ ունենք նրա ապագայի վերաբերյալ:

/Տրտում նայում են հեռուն՝ ունկնդրելով ծովի մեղմ շառաչը: Ներս են մտնում աբբահայրը եւ լ.Բայրոնը/:

Լ.Բայրոն- Սիրելի հայրեր, աբբահոր հետ եկել ենք հրաժեշտ տալու… Նա գալիս է ինձ հետ:

Աբբահայր- Դե, նա կատակելու սիրտ ունի նույնիսկ… Ես եկա, որ ծովափին միասին հրաժեշտ տանք մեր խռովարար բանաստեղծին:

Հ.Հարություն- Ո՞ւր ես մեկնում, որդիս…

Լ.Բայրոն */ոգեւորությամբ/*- Հունաստան, հայր Հարություն, Հունաստան:

Հ.Սուքիաս- Ասում էի, չէ՞, որ թեժ երկիր է գնում:

Հ.Հարություն- Ի՞նչ ես կորցրել Հունաստանում, որդիս… Այնտեղ ապստամբություն է բորբոքվում թուրքերի դեմ, արյուն է հեղվում:

Լ.Բայրոն- Այո՜…. */Արտասանում է/.*

Շուրջդ դրոշ, դաշտ արնածուփ,
Սուր, Հունաստան եւ բեմ փառքի,
Իսկ դու հպարտ սպարտացուց՝
Վահանակիր…

Հ.Հարություն- Դա հույների գործն է, պետք չէ խառնվել, կարող են քեզ ճիշտ չհասկանալ, որդիս…

Լ.Բայրոն- Ովքե՞ր ճիշտ չեն հասկանա ինձ, հայր Հարություն… Անգլիացի՞ք, թուրքե՞րը, որոնք արդեն ինձ «բարձր դռան» թշնամի են հայտարարել… Դե դա իսկապես նրանց գործը չէ: Հայր ուսուցիչ, Հունաստան մեկնելը նաեւ իմ գործն է, իմ՝ անգլիացի բանաստեղծ Բայրոնի, ով տանել չի կարող բռնություն ու կեղեքում, որ երկրում էլ դրանք գործադրվեն: Ես մի՞թե նաեւ աշխարհի զավակը չեմ, մի՞թե իմ ձայնը չպետք է միանա աշխարհի յուրաքանչյուր անկյունում ազատության համար վեր բարձրացող ձայներին… Հունաստանը հիմա ազգի գերեզման է առավելս ու աստվածների հին բնակատեղի, ուր խորանների վրա այլեւս լույսեր չեն վառվում. ո՞վ պետք է այդ լույսերը վառի… «Այնտեղ նստած է մուսուլմանը, թեթեւամիտ հույնն է անցնում երգելով»… Եվ ի՞նչ պիտի թելադրի ինձ այդ ծանր կացությունը… */Արտասանում է/.*

Լինի այդտեղ դամբանը քո,
Քեզ զինվորի շիրիմ հարմար,
Փնտրիր անդող, գտիր քեզ հող
Եվ հանգիստ առ:

/Դադար/: Գիտեմ՝ թագավորների ժամանակներն արագորեն մոտենում են իրենց վախճանին: Արյունը հոսելու է ինչպես ջուր, իսկ արցունքն՝ ինչպես մառախուղ, բայց վերջ ի վերջո հաղթելու են ժողովուրդները: Ես չեմ ապրելու այնքան, որ տեսնեմ այդ օրերը, բայց ես այդ բանը գուշակում եմ: */Աբբահորը եւ հ.Սուքիասին/:* Եթե այս պահին ազատագրական պայքար լիներ Հայաստանում, ես անմիջապես կմեկնեի այնտեղ, կմիանայի ազատատենչ իմ հայ եղբայրներին: */Խորհրդավոր ձայնով/.* Դե, իմաստուն հայրեր, ե՞րբ եք ազատության ջահերը վառելու Հայաստանում, ես կտեսնե՞մ այդ օրը… */Լռություն/:* Լավ, ձեզ չտանջեմ հրաժեշտի պահին… Հա, չմոռանամ տանել հետս, ես ձեզ համար նվերներ եմ բերել: */Ուսապարկից հանում է գրքեր եւ երկու փաթեթ, հանձնում հ.Հարությունին եւ հ.Սուքիասին/:* Աբբահորը արդեն տվել եմ… Հայր Հարություն, դրանք այն գրքերն են, որ խոստացել էի Անգլիայից ստանալ ձեզ համար. դուք ուզում էիք այդ ստեղծագործությունները հայերեն թարգմանել:

Հ.Հարություն- Շնորհակալ եմ, որդիս: */Նայում է գրքերից մեկը/:* Այո, վաղուց փափագում եմ Միլտոնի «Դրախտ կորուսյալը» թարգմանել… Ջորջ, ինձ կօգնես, չէ՞, այս գործում:

Լ.Բայրոն- Եթե դրա հնարավորությունն ընձեռվի, անշուշտ, ուսուցիչ… Ես հեռուներում կլինեմ երկար ժամանակով… Դե, ոչինչ, հայր Հարություն, իմ օգնության կարիքը կարող է առանձնապես չզգացվել. դուք լավ եք տիրապետում անգլերենին, ոչ այնպես, ինչպես ես՝ հայերենին… եւ արդեն ու-

նեք ձեր իսկ կազմած անգլերեն-հայերեն հարուստ բառարանը… Ասում եք՝ քանի՞ բառ եք ընդգրկել այնտեղ…

Հ.Հարություն- Քառասուն հազար:

Լ.Բայրոն- Հոյակապ է, քեմբրիջյան հրատարակություններին հավասարազոր աշխատություն է. արդեն տպագրե՞լ եք…

Հ.Հարություն- Այո, Բայրոն, քեզ համար հատուկ օրինակ եմ պահել, բայց կհանձնեմ քեզ, երբ վերադառնաս… Խոստանում ես, չէ՞, որ կվերադառնաս…

Լ.Բայրոն */մտածկոտ/*- Կվերադառնամ, հայր Հարություն… բայց դե ճակատագրի հետ պիտի խոսեմ այդ հարցով:

Հ.Սուքիաս- Բայրոն, կարո՞ղ եմ միանալ ձեզ…

Լ.Բայրոն */զվարթացած/*- Մարտիկի ոգի՜ն արթնացավ ձեր մեջ… Բայց՝ ոչ, հայր Սուքիաս, հիմա՝ ոչ: Դուք դեռ պետք է մնաք սուրբ Ղազարում: */Ուրախ դեմքով նայում է ներկաներին/:* Դուք նույնպես ազատասեր ու լուսավոր մարդիկ եք. կարծում եք՝ չգիտե՞մ, որ դուք համակրում եք իտալացի կարբոնարիստներին… Ես իմ կարողությունների չափով օգտակար եղա նրանց այս տարիներին, բայց պայքարը դեռեւս մեր ցանկալի հունով չի ընթանում… Հիմա Հունաստանի ժամն է, ինձ Զեւսն ու Ապոլլո՞ն են կանչում, հայրեր…

/Ներկաներին անաղմուկ միանում են այլ վանականներ՝ հրաժեշտին մասնակցելու/:

Աբբահայր */համբուրում է լ.Բայրոնի ճակատը/*- Պահպանիր քեզ, որդիս, մեր օրհնությունն ու բարի կամքը քեզ հետ են:

Հ.Հարություն */համբուրելով լ.Բայրոնի ճակատը/*- Պահպանիր քեզ, որդիս, մենք կաղոթենք քո վերադարձի համար:

Հ.Սուքիաս */սուսերամարտի ձեւական շարժում անելով/*- Բայրոն, թող նաեւ մեր հայ աստվածները պահապան լինեն ձեզ: Ձեր ողջության համար ես ամեն օր կաղոթեմ:

Լ.Բայրոն- Շնորհակալ եմ, հայ հայրեր, շնորհակալ ու զգացված եմ խորապես… Բայց, հայր Սուքիաս, իմ հոգին առավել փառավորված կզգա, եթե ինձ համար աղոթելու փոխարեն ձեր ազգին նախապատրաստեիք ազատագրական պայքարի… Բայց դե դուք ավելի լավ գիտեք, թե ինչ պետք է անել: */Դադար/:* Ձեր ազգը, զարմանալի՜ է, դարավոր բռնությունից չի կորցրել իրեն, չի աղավաղվել ու չի այլասերվել, նա մի ազգ է, որ հակառակ պարտության, անաղարտ է պահել իր ավանդույթների վեհությունը եւ իր հին համոզմունքների գեղեցկությունը… Եվ հետո, խնդրում եմ՝ չմոռանաք իմ այս կանխագուշակությունը. ինչպիսին էլ եղած լինի հայերի ճակատագիրը,- իսկ դա անցյալում դառն է եղել,- ինչպիսին էլ լինի նա ապագայի մեջ, նրանց երկիրը հավետ պիտի մնա որպես աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը:

Հ.Սուքիաս- Բանաստեղծ. մենք չենք մոռանա ձեր ոչ մի հայկական խոհ ու պատգամ:

Լ.Բայրոն- Աբբահայր, դուք եք ինձ ասել, չէ՞, որ Հայաստանում հինավուրց ավերակները պահպանում են անհետացած փառքի եւ կորած երջանկության հոյակապ պատմությունը, այդ պատմությունը շարունակել է պետք… ես ընդամենը հիշեցրի ձեզ:

/Լ.Բայրոնը ողջագուրվում է հայրերի հետ /:

Լ.Բայրոն- Հայր Հարություն, ողջ եղեք, ձեր գիտությամբ ու բարությամբ այնպե՜ս ողողել եք ինձ… Հայր Սուքիաս, դուք իմ հույսերից եք, կորով ու լուսեղեն հեռատեսություն ձեզ, ողջ եղեք: */Համբուրում է աբբահոր աջը/:* Գերապայծառ աբբահայր, ողջ եղեք, ձեր իմաստնությամբ ներշնչված եմ… Ես գնում եմ՝ սքանչելի սուրբ Ղազարը սրտիս մեջ… Մնաք բարյավ, շնորհափա՜յլ հայ հայրեր: */Հրաժեշտ է տալիս նաեւ մյուս վանականներին եւ հեռանում/:*

Աբբահայր- Օրհնյալ լինես, որդիս, գնաս բարյավ…

Հ.Հարություն- Օրհնյալ լինես, որդիս, գնաս բարյավ…

Հ.Սուքիաս- Գնաս բարյավ, Բանաստեղծ…

Վանականներ- Գնաք բարյա՜վ…

/Արդեն հեռվից լսվում է լ.Բայրոնի բացականչությունը/.

Լ.Բայրոն- Ես մխիթարվա՜ծ եմ հեռանում ձեզնից, Մխիթարյանն՜ե՜ր…

/Աբբաները, մյուս վանականները ժպտում են եւ սրբում արցունքներն աչքերից/:

Հ.Հարություն- Գնա՜ց մեր խենթը… Աստված իմ, թող նա իսկապես մխիթարված հեռանա մեզնից:

Հ.Սուքիաս- Բայրոնը գնաց Հունաստանում կերտելու իր եւ հայրենի Անգլիայի նոր փառքը…

Աբբահայր- Նա գնաց այնտեղ իրեն զոհաբերելու…

Հ.Հարություն- Բայրոնը Հունաստանում կզոհվի նաեւ Հայաստանի համար…

/Ներկաները տրտմագին նայում են միմյանց եւ գլխով համաձայնության նշան անում, ապա բոլորը հայացքները հառում են հեռուն: Լսվում է ծովի սաստկացող ալեկոծությունը/:

ՎԵՐՋ

հոկտեմբեր, 2018 թիվ

Ծանոթագրություն.

Թատերախաղում Բայրոնից մեջբերված չափածո հատվածների թարգմանությունը՝ Հենրիկ Սեւանի:

ԴԱՐՊԱՍԻ ՄՈՏ ՆՍՏԱԾ ԳԱՅԼԸ

/դրամա չորս արարով/

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

Հովսեփ պապ՝ մոտ 65 տարեկան
Հեղինե տատ՝ մոտ 60 տարեկան
Մեսրոպ՝ Հովսեփի ու Հեղինեի որդին՝ մոտ 35 տարեկան
Մարո՝ Մեսրոպի կինը՝ մոտ 35 տարեկան
Արայիկ՝ Մեսրոպի եւ Մարոյի որդին՝ 10 տարեկան
Զվարթիկ՝ Մեսրոպի եւ Մարոյի դուստրը՝ 8 տարեկան

ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ

/Ընդարձակ խոհանոցում Հեղինե տատը նախաճաշի սեղան է պատրաստում: Տագնապած ներս է մտնում Հովսեփ պապը՝ որսորդական երկփողանի հրացանով ու փամփշտակալով, եւ անխոս նստում սենյակի հեռավոր մի անկյունում դրված աթոռին/:

Հեղինե- Հովսե՞փ… Էդ ինչի՞ հետ եկար… Վա՞տ ես զգում…

Հովսեփ- Չէ… այսինքն՝ հա…

Հեղինե- Սի՞րտդ է էլի… Առանց դեղը խմելու՞ ես դուրս եկել…

Հովսեփ- Չէ, սրտի հարց չէ, այլ…

Հեղինե- Այլ՝ ի՞նչ…

Հովսեփ- Հոգու:

Հեղինե- Հոգու՞… Էդ ինչի՞ մասին ես խոսում…

Հովսեփ- Գայլի…

Հեղինե- Գայլի՞… */Մոտենում է Հովսեփին եւ ձեռքով շփում նրա ճակատը/:* Դե հիմա ավելի պարզ խոսիր:

Հովսեփ- Դարպասի մոտ գայլ կա…

Հեղինե- Ի՞նչ գայլ… ինչու՞ է էնտեղ կանգնել…

Հովսեփ- Կանգնած չէ, նստած է. երեւի ամբողջ գիշեր էնտեղ սպասում էր… Հոգնել է ու նստել:

Հեղինե- Ու՞մ է սպասում…

Հովսեփ- Ինձ:

Հեղինե- Ինչու՞, քեզ հետ ի՞նչ հաշիվ ունի:

Հովսեփ- Ինձ հետ… մեծ հաշիվ ունի…

Հեղինե */վախեցած/*- Էդ ի՞նչ ես արել նրան, որ եկել՝ հաշիվ է պահանջում քեզնից…

Հովսեփ- Նրա ձագերին սպանել եմ:

Հեղինե- Ի՞նչ… հո խելքդ չե՞ս թոցրել, ինչի՞ ես սպանել ձագերին…

Հովսեփ- Էդպես ստացվեց… Չէի ուզում, բայց սպանեցի:

Հեղինե- Ինքնապաշտպանվելու համա՞ր ես դա արել… */Հովսեփը լռում է/:* Ձեն հանիր, այ մարդ, դե ասա, որ ինքնապաշտպանության նպատակով ես սպանել…

Հովսեփ- Չէ:

Հեղինե- Ի՞նչ… բա ինչի՞ համար ես սպանել ձագերին…

Հովսեփ */կմկմալով/*- Չգիտեմ… դժվարանում եմ բացատրել… Մայր գայլը ինձ շատ կատաղեցրեց…

Հեղինե- Մորը սպանեիր… ձագերի՞ն ես սպանել… */Դադար/* Քանի՞ հատ էին…

Հովսեփ- Չորս:

Հեղինե- Խե՜ղճ ձագուկներ… Հիմա էդ դրանց մե՞րն է մեր դարպասի մոտ նստած…

/Հովսեփը գլխով է անում: Աշխուժորեն ներս են մտնում Մարոն, Արայիկն ու Զվարթիկը: Նրանք «Բարի լույս» են մաղթում պապիկին ու տատիկին/:

Մարո- Մայրիկ, երեխեքի՝ դպրոց տանելու բուտերբրոդներն է՞լ ես պատրաստել…

Հեղինե */տխուր/*- Հա, էն է… */Ցույց է տալիս խոհարարական տախտակի վրա դրված երկու տոպրակը/:* Բայց դուրս չգաք, դեռ պիտի սպասեք…

Արայիկ- Ինչու՞, տատիկ, բա որ ուշանանք դպրոցից…

Զվարթիկ- Սպասենք՝ հայրի՞կն էլ միանա մեզ…

Հովսեփ- Նախաճաշեք, հետո կասենք՝ ինչ անեք…

Արայիկ- Պապիկ, էսօր որսի մի՞ս ես բերելու…

Մարո */մոտենալով գլխիկոր նստած Հովսեփին/*- Ինչ-որ բա՞ն է պատահել, հայրիկ…

Հովսեփ- Հա… Դարպասի մոտ գայլ կա… Դեռ դուրս չգաք, մինչեւ նրա հարցը չլուծենք…

Մարո- Գա՞յլ… ի՞նչ գայլ…

Արայիկ- Գա՞յլ…Պապիկ, բա ինչի՞ չես գնում նրան սպանես, նա կարող է մեզ հոշոտել, չէ՞…

Հովսեփ- Հա, նա հենց հոշոտելու համար էլ եկել է:

Զվարթիկ- Պապիկ, նա Կարմիր գլխարկի գայլի նման՞ է…

Մարո */խիստ վախեցած/*- Ու՞մ է ուզում հոշոտել… */նայում է երեխաների կողմը/* Էդ գայլը ի՞նչ գործ ունի մեզ հետ…

Հովսեփ- Գործ ունի… Հիմա Մեսրոպը կիջնի ու մենք միասին կորոշենք մեր անելիքը: */Հանում է փամփշտակալը եւ հրացանի հետ դնում սենյակի մի անկյունում/:*

Մարո- Որսորդը դու ես, հայրիկ, ինչու՞ չես գնում էդ գայլին սպանես…

Հովսեփ- Չեմ կարող… իրավունք չունեմ… վտանգավոր է…

Մարո- Վախենու՞մ ես… Մեսրոպը կգնա ու կսպանի: Հո չենք թողնի, որ նա հարձակվի երեխաների… մեզ վրա… */Փութով գնում է ու երեխաներին առնում թեւերի տակ/:*

Հեղինե- Սպասիր, Մարո ջան, խուճապի մի մատնվիր: Մենք պիտի մի լավ կշռադատենք ու նոր որոշում կայացնենք:

Մարո */գրեթե ճչալով/*- Ի՞նչ կշռադատելու բան կա, գայլը մեր դռանը սպասում է, որ մեզ հոշոտի, իսկ մենք չգիտե՞նք ինչ անել… Մեսրո՜պ…

/Ներս է մտնում Մեսրոպը/:

Մեսրոպ- Էս ի՞նչ աղմուկ է, ի՞նչ է պատահել, Մարո… Հայրի՞կ, մայրի՞կ…

Մարո- Մեսրոպ, դարպասի մոտ գայլ կա… նրան սպանել է պետք:

Մեսրոպ- Գա՞յլ… ի՞նչ գայլ… Մարո, ինչե՞ր ես մոգոնում…

Մարո- Հայրիկին հարցրու…

Մեսրոպ- Հայրիկ, ի՞նչ գայլի մասին է խոսքը… որտե՞ղ է նա…

Հովսեփ- Դարպասի մոտ նստած է, դրսից…

Մեսրոպ- Դու նրան տեսե՞լ ես…

Հովսեփ- Հա:

Մեսրոպ- Հապա ինչու՞ չսպանեցիր…

Հովսեփ- Շատ դժվար հարց է, տղաս…

Մեսրոպ- Ի՞նչն է դժվար… Եթե վախեցել ես, ասա, ես կգնամ ու կսպանեմ, տուր հրացանը…

Հովսեփ- Սպասիր, Մեսրոպ, դու չգիտես, թե դա ինչ գայլ է… ինչու է էնտեղ…

Մեսրոպ- Դե գայլը գայլ է, էլի, ինչ տարբերություն, թե որ ոհմակից է…

Հովսեփ- Հարցն էդքան էլ պարզ չի, տղաս… Էդ գայլը մեզ հետ հաշիվ ունի… պիտի մտածենք ու ճիշտ որոշում կայացնենք:

Մեսրոպ- Հաշիվ ունի մեզ հե՞տ… Հայրիկ, ինչի՞ մասին ես խոսում…

Հովսեփ- Ես երեկ սպանել եմ նրա ձագերին… Նա հիմա եկել ու իր վրեժն է ուզում լուծել… */Լսվում է գայլի ոռնոց/:* Նա է, ինձ է կանչում կամ…

Մեսրոպ- Կամ՝ ու՞մ…

Հովսեփ- Երեխաներին…

Մեսրոպ եւ Մարո */միասին/*- Ի՞նչ…

Զվարթիկ- Ես վախենում եմ գայլից…

Հեղինե- Այ մարդ, ի՞նչ ես լեղաճաք անում երեխեքին, ի՞նչ ես էդ գայլից սրտապատառ եղել, գնացեք ու սպանեք նրան… Տեսնու՞մ ես՝ ոնց են վախենում */ցույց է տալիս երեխաների կողմը/:*

Հովսեփ- Նրանց ոչինչ չի պատահի: */Գոռում է/* Թույլ չե՛մ տա…

Մեսրոպ- Հայրիկ, հանգստացիր, ես հիմա կգնամ ու կսպանեմ էդ գայլին: Դու ինձ լավ կրակել ես սովորեցրել, չէ՞… չեմ վրիպի: */Մոտենում եւ վերցնում է անկյունում դրված հրացանը, լիցքավորում այն/:*

Հովսեփ- Սպասիր, Մեսրոպ… Նա շատ խելացի ու ճարպիկ գայլ է, էդքան հեշտ չի լինի նրան սպանելը… Պետք է, նախ, մի լավ մտածել…

Մեսրոպ */մոտենում է պատուհանին ու դուրս նայում/*- Չի երեւում… հա, դարպասի մյուս կողմում է… Ուրեմն՝ կգնամ՝ այգու վերեւի կողմից դուրս կգամ, հետո աննկատ մոտենալով՝ կկրակեմ… Նրան էդպես անակնկալի կբերեմ:

Հովսեփ- Չէ, չի ստացվի էդպես. նա խույս կտա քո գրոհից ու ինքը կհարձակվի քեզ վրա: Դու չես հասցնի նորից այգի մտնել ու թաքնվել…

Մեսրոպ- Հայրիկ, ինչու՞ ես էդքան գերագնահատում էդ գայլին, նա հո բացառիկ չէ՞… Հո օժտված չէ՞ գերբնական կարողություններով…

Հովսեփ- Ասացի՝ ձագերը կորցրած մայր գայլ է, գումարած՝ շատ խորամանկ ու ճարպիկ: Նա լավ մտածել է իր անելիքը, նախքան հասել է մեր դարպասի մոտ:

Արայիկ- Պապիկ, բայց իսկապես զարմանալի է՝ ո՞նց է նա մեր տունը գտել… որտեղի՞ց գիտի, որ դու … մենք էստեղ ենք ապրում…

Հովսեփ- Արդարացի վրեժի զգացումը կենդանուն խելոք, հնարամիտ ու անզսպելի է դարձնում… Նա եկել է իմ հոտի վրա՝ վրիժառության իր սուր բնազդով: */Դադար/* Ներող եղեք, մեղքը ես եմ գործել, բայց պատասխան ենք տալիս բոլորս…

Մեսրոպ- Լավ, հայրիկ, էդքան մի թանձրացրու գույները: Ես էդ գայլին կոչնչացնեմ, */մյուսներին/,* մի անհանգստացեք, թույլ չեմ տա, որ ինչ-որ մի գազան վնասի մեր ընտանիքը… Մե՞նք ենք ուժեղ, թե՞ նա…

Արայիկ եւ Զվարթիկ */միասին/*- Մե՞նք…

Մեսրոպ- Ապրեք… Հայրիկ, մեկ-երկու հարց էլ ճշտեմ ու նոր գնամ գայլին սպանելու… Նա շատ արագավա՞զն է…

Հովսեփ- Շատ… մինչեւ հասցնում ես հրացանը բարձրացնել ու նշան բռնել, նա մի հիսուն մետրից վայրկենապես հայտնվում է քո դիմաց…

Մեսրոպ- Իսկ լսողությունն ինչպիսի՞ն է…

Հովսեփ- Շատ ուժեղ լսողություն ունի, մի հարյուր մետրից ոտնաձայներդ լսում է խշշացող անտառում…

Մեսրոպ- Ուրեմն պարզ է՝ ինչ տեսողություն ունի:

Հովսեփ- Հա, տղաս, նա արծվի պես սուր տեսողություն ունի… Երբ մենք հետապնդում էինք միմյանց, մի պահ մառախուղի մեջ հայտնվեցինք, թաքնվեցի մի հաստաբուն կաղնու ետեւում, հուսալով, որ նա ինձ չի նկատի, բայց էլի հայտնաբերեց տեղս… Կրակում ու նրան ետ էի քշում…

Մեսրոպ- Դու լավ որսորդ ես, հայրիկ, ո՞նց եղավ, որ չկարողացար նրան կպնել…

Հովսեփ- Չգիտեմ… Երեւի մի քսան անգամ կրակել եմ նրա ուղղությամբ… իզուր…

Մեսրոպ- Իսկ ձագերին ո՞նց սպանեցիր… Ո՞նց եղավ, որ նման հնարամիտ գայլը չկարողացավ պաշտպանել իր ձագերին…

Հովսեփ */պատմում եւ ցույց է տալիս իր գործողությունները/*- Տարօրինակ բան տեղի ունեցավ, ես մինչեւ հիմա էլ լավ չեմ հասկացել նրա արարքը, միայն կռահում եմ… */Դադար/* Մեր մենամարտից մի երկու ժամ էր անցել, երբ մի քանի րոպե գայլին այլեւս չէի նշմարում իմ տեսադաշ-

տում… Մտածեցի, որ նա հեռացել է: Ես ցանկացա տուն վերադառնալ, բայց որոշեցի մի անգամ էլ նայել անտառի էն բացատը, որտեղ սկսվեց իմ ու գայլի պատմությունը… Հիմա եմ հասկանում, որ մեծ սխալ եմ գործել՝ վերադառնալով բացատ… Մի երկու րոպե էդ բացատի տեղանքը հեռակա տնտղելուց հետո ուզում էի ետ գնալ, երբ հանկարծ գայլը նորից հայտնվեց մոտ քառասուն մետր հեռավորության վրա… Ես կրակեցի նրա ուղղությամբ, բայց նա դարձյալ հաջողությամբ խույս տվեց իմ կոտորակից ու մի պահ չքացավ աչքիցս… Ես առաջացա դեպի բացատի կենտրոն, կարծելով, որ գայլը կարող է պտույտ գործել ծառերի արանքով ու հայտնվել իմ թիկունքում եւ էնտեղից հարձակվել ինձ վրա, ինչը մահացու կլիներ ինձ համար… Հասա բացատի կենտրոն ու կանգ առա՝ սպասելով, թե որտեղից նա կսկսի իր նոր հետապնդումը… Էդ անգամ շատ էի վճռական տրամադրված, ուզում էի անպայման գայլի վերջը տալ, հատկապես, որ ինձ մոտ մնացել էր ընդամենը երկու փամփուշտ… Մեկեն նորից հայտնվեց գայլը… աջ կողմից… իր չորս ձագերի հետ… ու հանգիստ առաջացավ դեպի ինձ… Նա ինչ-որ բան էր ուզում ինձ ասել իր էդ… ընտանեկան շքերթով, բայց քանի որ ես սաստիկ վախեցած ու շփոթված էի, ուղեղս պատրաստ չէր ճիշտ ընկալելու գայլի անսովոր արարքը… գիտակցաբա՞ր, թե՞ ինքնապաշտպանական բնազդից մղված՝ ես կրակեցի… գայլուկների վրա… կրակեցի երկու անգամ… Մայր գայլը քարացավ տեղում, ապա սկսեց դանդաղ պտտվել իր ընկած ձագերի շուրջ… Ես ետ-ետ գնացի, տեսնելով, որ թփերից դուրս եկավ եւս մի գայլ… արուն էր… Նրանք երկուսով կանգնել՝ ոռնում էին… */Դադար/:*

Մեսրոպ- Ուրեմն՝ արուն էլ կա…

Հովսեփ- Հա…

Արայիկ- Հովսեփ պապիկ, էդ մայր գայլը իր ո՞րջն էր պաշտպանում՝ քեզ հետապնդելով…

Հովսեփ- Հա, բալիկս, ես դա միայն հասկացա հետո, երբ այլեւս ուշ էր… Մայր գայլն ուզում էր ինձ հեռու քշել իր որջից… Ընդամենը…

Մարո- Իսկ ինչու՞ էդ վերջին անգամ նա քո դեմ դուրս եկավ իր ձագերի հետ…

Հովսեփ- Նա ուզում էր, որ ես խնայեմ իրեն ու իր ձագերին… եւ չկրակեմ… Դա էր ուզում ինձ հասկացնել:

Մեսրոպ- Այսինքն՝ եթե դու էդ պահին չկրակեիր, գայլը չէ՞ր հարձակվի քեզ վրա…

Հովսեփ- Հաստատ չէր հարձակվի: Նա ուզում էր պայմանավորվել ինձ հետ էդ հարցով…

Մեսրոպ- Բայց դու էդ պահին դա չհասկացար…

Հովսեփ- Հա, տղաս, ներող եղիր… վախը մթագնում է մարդու ուղեղը:

Հեղինե- Թե՞ ավելի եսամոլ է դարձնում նրան…

Հովսեփ- Դեպքից հետո հեշտ է խորիմաստ մեկնաբանություններ անելը… Հիմա մենք գրեթե նույն բարդ իրավիճակում ենք… Դրա համար եմ ասում, որ պետք է լավ կշռադատել ու նոր գործել…

Մեսրոպ- Հայրիկ, բայց մենք ունե՞նք ուրիշ ընտրություն, քան գայլին սպանելը…

Մարո */կիսահեգնական/*- Հո չենք կարող գնալ ու ասել գայլին, թե՝ հարգելի գայլ, ներող եղեք մեր կատարած հանցանքի համար, խորապես ցավակցում ենք, այլեւս նման բան չենք անի, անաղմուկ հեռացեք մեր դարպասի մոտից ու թողեք, որ մենք խաղաղ ու հանգիստ ապրենք եւ մեր գործերով զբաղվենք… Գայլն էլ կլսի մեր մեղայականն ու ցավակցականը եւ կհեռանա ընդմիշտ… */Դադար/* Տեր Աստված, մենք արդեն դասերից բավական ուշացել ենք:

Մեսրոպ- Հիմա դասերն ամենաերկրորդական հարցն է, որ պիտի մեզ հուզի… Մարո, երեխեքին վերցրու՝ բարձրացեք վերին հարկ, փակվեք մեր սենյակում ու միաժամանակ մնացեք էնտեղ, մինչեւ գայլի հարցը լուծենք…

Մարո- Լավ, բայց խնդրում եմ, Մեսրոպ, մեզ շուտ հանեք էս տագնապալի վիճակից… Գնացինք, երեխեք…

Արայիկ- Հայրիկ, ես մնամ, հա՞… Ասում ես, չէ՞, որ ես արդեն տղամարդ եմ: Տղամարդիկ պիտի գործ ունենան գայլի հետ, չէ՞…

Մեսրոպ- Առայժմ բարձրացիր վեր, տղաս, երբ քո օգնության կարիքը լինի, կկանչեմ… Գնացեք:

Հովսեփ- Եվ ոչ մի զանգ ուրիշներին… էս հարցով:

Մեսրոպ- Լսու՞մ եք… Ոչ մի հեռախոսազանգ ուրիշներին:

Արայիկ- Լավ, հայրիկ… Տես՝ քո կանչին եմ սպասում, ինձ չմոռանաս:

/Մարոն ու երեխաները, ձեռք-ձեռքի տված, դուրս են գնում/:

Մեսրոպ- Հայրիկ, մայրիկ, դուք մնացեք էստեղ, ես շուտով կգամ: */Գնում է դեպի ելքը/:*

Հեղինե- Սպասիր, Մեսրոպ ջան…

Հովսեփ- Կաց, Մեսրոպ… Նախ, մի անգամ էլ ես գնամ, եթե չհաջողվի սպանել, նոր կգնաս դու:

Մեսրոպ- Հայրիկ, բայց դու արդեն մի անգամ գնացել ես, չէ՞… Դու շատ վախեցած ես, պետք չէ երկրորդ փորձն անել… դա կարող է շատ վատ հետեւանք ունենալ…

Հովսեփ- Դա անակնկալ հանդիպում էր գայլի հետ, ես միանգամից շփոթվեցի… Հիմա սառնասրտությունս վերգտել եմ… պատրաստ եմ նրա հետ կռվելու:

Մեսրոպ- Հայրիկ, մեզ նրա հետ կռիվ պետք չէ, մեզ պետք է արագ

փակել մեր հաշիվը նրա հետ, սպանել… կամ քշել հեռու, այնպես, որ նա այլեւս չվերադառնա… Չէ, ի՞նչ եմ ասում, նրան պետք է միայն սպանել:

Հովսեփ- Տղաս, դու իրավիճակը հասկացար, բայց, միեւնույն է, առաջինը ես պիտի գնամ փորձեմ… ես հիմա զգում եմ մի էնպիսի այրող ու շամփրող պատասխանատվություն, որ երբեւէ չեմ զգացել նույնիսկ պատերազմի ծանր տարիներին, երբ մի ամիս չգիտեի ձեր գտնվելու վայրը… կարծում էի՝ գերի եք ընկել…

Հեղինե- Դու էնքան էլ լավ չէիր փնտրում մեզ, ուշքդ լրիվ կռվի վրա էր…

Մեսրոպ- Մայրիկ, խնդրում եմ՝ նորից չվիճեք էդ թեմայով, հերիք է, հատկապես հիմա դրա ժամանակը չէ:

Հովսեփ- Ճիշտ է, հիմա պետք է համախմբվել ու միասնական գործել, եւ պետք է ենթարկվեք ձեր հրամանատարին… ինձ… Ես մի ժամով ռազմական դրություն եմ հայտարարում մեր տանը… Ուրեմն, Մեսրոպ տղա, տուր հրացանը եւ մայրիկի հետ սպասեք էստեղ կամ ավելի լավ է՝ գնացեք հյուրասենյակ, էնտեղից բակն ու դարպասը լավ են երեւում: */Մեսրոպից վերցնում է հրացանը, ապա ամրացնում փամփշտակալը/:*

Հեղինե- Հովսեփ, իսկ ինչու՞ Մեսրոպի հետ միասին չեք գնում… իրար օգնելով՝ գայլի հախիցը կգաք…

Մեսրոպ- Ճիշտ որ… Հայրիկ, միանամ քեզ…

Հովսեփ- Լավ գաղափար է, բայց անհրաժեշտության դեպքում էդ քայլին կդիմենք: Հիմա իմ գնալու ժամանակն է… Դե, պինդ կացեք, մինչեւ վերադառնամ:

Մեսրոպ- Հաջողություն, հայրիկ… Մենք հյուրասենյակի մեծ պատուհանից կնայենք: Հենց դժվարացար, ձեն տուր, իսկույն կգամ…

Հեղինե- Զգույշ եղիր, Հովսեփ…

/Լսվում է գայլի ոռնոց: Հովսեփը շտապ դուրս է գնում/:

ԱՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ

/Հյուրասենյակում են Հեղինեն ու Մեսրոպը: Նրանք պատուհանից դուրս են նայում/:

Մեսրոպ- Իզուր հայրիկը չհամաձայնվեց՝ գնայի հետը… Թեեւ ասում է՝ սառնասրտությունը վերգտել է, ես ավելի շուտ շփոթվածություն ու տագնապ տեսա նրա մեջ, երբ դուրս էր գալիս… Իսկ նման իրավիճակում էդպիսի վրիժառու գայլին չես ոչնչացնի…

Հեղինե- Հերդ իրեն չի ների, եթե էդ գայլի հարցը ինքը չլուծի. ես Հով-

սեփին լա՜վ եմ ճանաչում... Նա մարտադաշտը լքողներից չէ... Բայց ավելի կարեւոր հարց էլ կա...

Մեսրոպ- Ի՞նչ հարց, մայրիկ...

Հեղինե- Նա մեր ընտանիքի մեծն է՝ գլխավոր պատասխանատուն. նա ամեն ինչ կանի, որ իր ընտանիքը չտուժի, դրա համար նա իրեն էլ կզոհաբերի: Դրանից բացի... */Դադար/:*

Մեսրոպ- Դրանից բացի՝ ի՞նչ...

Հեղինե- Նա կրկնակի է պարտավորված զգում, քանի որ նրա մեղքով է գայլը հայտնվել մեր դարպասի մոտ... Ուստի շա՜տ է ձգտում, որ էս խնդիրն ինքը կարգավորի:

Մեսրոպ- Այսինքն՝ հայրիկի խիղճն է՞լ է անհանգիստ...

Հեղինե- Հա, տղաս... Հերդ նաեւ խղճի մարդ է:

Մեսրոպ- Իսկ որ նա սպանել է ձագերին, հետո նրանց մորը պիտի սպանի, դա նրա խղճի վրա շատ ծանր չի՞ նստի...

Հեղինե- Իհարկե, նա կտանջվի դրանից, բայց ոչ էնպես, եթե նրա ընտանիքին վատ բան պատահի... առավել եւս՝ իր պատճառով: Պիտի ընտրություն կատարել, թե խիղճդ առավելս որ դեպքում է տանջում... Հովսեփը իր ընտանիքի նվիրյալ պահապանն է... Տեսնո՞ւմ ես, թե գայլը ոնց է ուզում պաշտպանել իր ընտանիքի պատիվը...

Մեսրոպ- Ստացվում է, որ հայրիկն ու... գայլը իրենց բարոյական նկարագրով նո՞յնն են...

Հեղինե- Կարելի է նման համեմատություն անել... */Դադար/* Գիտե՞ս՝ մեծ հաշվով նշանակություն չունի, թե ով կլինի հաղթողը՝ Հովսե՞փը, թե՞ գայլը...

Մեսրոպ- Էդ ի՞նչ ես ասում, մայրիկ, ինչպե՞ս թե՝ նշանակություն չունի... Հայրիկը պիտի հաղթի, եւ նա ողջ-առողջ պիտի վերադառնա էդ մենամարտից...

Հեղինե- Ես աղոթում եմ դրա համար, որդիս: Ես ուղղակի ուզում էի ասել, որ երկու դեպքում էլ հաղթում է կենդանի արարածին վերապահված բարոյականությունը...

Մեսրոպ- Մայրիկ, դու Աստծո դիտանկյունից ես դատողություններ անում, մինչդեռ մեր ընտանիքի շահը թելադրում է շատ որոշակի կեցվածք:

Հեղինե- Այո... Այսպես թե այնպես՝ գայլին պետք է հեռացնել մեր դարպասից: Թող Աստված օգնական լինի մեզ... */Խաչակնքում է/:*

/Հեռվից լսվում է հրացանի կրակոց: Լռություն/:

Մեսրոպ- Ինձ թվում է՝ հայրիկը վրիպել է...

Հեղինե- Ինչի՞ց ենթադրեցիր...

Մեսրոպ- Եթե գնդակը կպած լիներ, գայլի մահագույժ կաղկանձյունը կլսվեր…

Հեղինե- Հա՜…

Մեսրոպ- Թեեւ կարող է եւ սպանած լինել, չէ՞ որ մենք անսովոր գայլի հետ գործ ունենք… Հնարավոր է՝ նա գերադասում է շունչը փչել անաղմուկ, առանց կաղկանձյունի… հպարտ ու ասպետաբար…

Հեղինե- Դու էդ գայլին կարծես թե արդեն լավ ճանաչում ես… */Հեռանում է պատուհանից եւ նստում աթոռին/:*

Մեսրոպ- Հա… նա ասես թե միշտ կար իմ մտապատկերում… Ահա, հայրիկը գալիս է… Բայց ձեռքը ոնց որ թե վնասել է…

/Հեղինեն շտապ մոտենում է պատուհանին, մի պահ կանգնում, ապա մոտենում է դռանը: Ներս է մտնում Հովսեփը՝ արյունոտված ձեռքով/:

Հեղինե- Ի՞նչ է եղել ձեռքիդ, Հովսեփ… Սպասիր՝ տեսնեմ…

Մեսրոպ- Ի՞նչ է եղել, հայրիկ…

/Հեղինեն կոմոդի դարակից շտապ հանում է բինտ, բամբակ, սպիրտի սրվակ, մաքրում է Հովսեփի վնասված ձեռքը եւ վիրակապում/:

Հովսեփ- Ցանկապատն անցնելիս վնասեցի ձեռքս:

Հեղինե- Սպանեցի՞ր գայլին…

Հովսեփ- Չէ… */Դադար/* Թվում է՝ կոտորակն անցնում է նրա միջով, բայց չի վնասում…

Հեղինե- Դե ասա ուրվականի պես է քո էդ գայլը, էլի…

Հովսեփ- Հա, ուրվականի պես է… Երբ նշան բռնեցի, նա շրջվեց իմ կողմը… գիտեր, որ ես այգու հեռավոր անկյունադարձի մոտ եմ… Նստած դիրքով շրջվեց իմ կողմը, առջեւի ոտքերը վեր բարձրացրեց, ասես ինձ հուշելով, որ կրծքաբաց պատրաստ է ընդունելու իմ կրակոցը… Կրակեցի… Մի պահ չքացավ աչքիցս, ապա կրկին հայտնվեց նույն, նախկին դիրքով նստած… ու էլի հանգիստ նայում է… եկեղեցու ուղղությամբ… էլի սպասում է… Ուզեցի երկրորդ անգամ կրակել, բայց մտածեցի, որ դա զուր է, դրանով ես միայն ավելորդ աղմուկ կառաջացնեմ ավանում եւ կվախեցնեմ մարդկանց…

Հեղինե- Մարդիկ կայի՞ն մեր առանձնատան ճամփի վրա…

Հովսեփ- Չէ, ոչ ոք չէր երեւում: */Դադար/* Պիտի հիմա խորհրդակցենք, թե հետո ինչ պիտի անենք…

Մեսրոպ- Հիմա ես կգնամ ու գայլին վերջնականապես կոչնչացնեմ. չենք կարող էսպես երկար ձգել… Հայրիկ, դու մի տեսակ պատրանքի մեջ ես ընկել… բարդույթավորվել ես գայլի հետ ծագած հարաբերություններից: Ես սթափ աչքով կնայեմ… Նրան էդքան մեծ նշանակություն չեմ տա, մի փոքր կմոտենամ… հիմա՝ այգու աջ անկյունից նշան կբռնեմ ու կփռեմ

գետնին… */Դադար/* Իսկ եթե անսպասելի բացեմ դարպասի դռնակը ու միանգամից կրակեմ նրա վրա՞… հը՞, հայրիկ…

Հովսեփ- Ոչ-ոչ, տղաս, էդ մեկը հաստատ չանես, թույլ չեմ տալիս… Դռնակը չես հասցնի բացել՝ նա կցատկի ու ժանիքներով կբռնի կոկորդդ… Փորձիր այգու աջ անկյունից մի փոքր մոտենալ ու կրակել… Հա, դա ավելի խելամիտ մարտավարություն է:

Հեղինե- Նորից եմ ասում՝ գնացեք երկուսով…

Մեսրոպ- Չէ, հայրիկը վիրավոր է, թող հանգստանա, կգնամ մենակ, էդպես ավելի սառնասրտորեն կգործեմ:

Հովսեփ- Լավ, գնա:

/Մեսրոպը Հովսեփից վերցնում է փամփշտակալը՝ ամրացնում իրեն եւ լիցքավորում հրացանը/:

Հեղինե- Շատ զգույշ եղիր, տղաս, հենց վտանգ զգացիր՝ փախիր՝ տուն արի: Ուրիշ տարբերակ կմտածենք…

Մեսրոպ- Մի անհանգստացիր, մայրիկ… Հայրիկի հետ հաճախ ենք վտանգավոր իրավիճակներում հայտնվել որսի ժամանակ. երբեք չեմ վախեցել ու խուճապի չեմ մատնվել, չէ՞, հայրիկ…

Հովսեփ- Մի անգամ վախեցար կարգին… երբ արջը դուրս եկավ որջից…

Հեղինե- Պարտադի՞ր էր դա հիմա հիշեցնել…

Մեսրոպ- Դե առանձնապես չվախեցա… առաջին անգամ էի արջ տեսնում… էդքան մոտիկից…

Հովսեփ- Հա, բնական է… Մեսրոպ, եթե առաջին կրակոցով չսպանես, երկրորդ կրակոց չարձակես. պետք չէ, տղաս, իրարանցում սարքել վատ տեսածի շուրջ…

Մեսրոպ- Ես պատրանքին չեմ տրվի, հայրիկ… Դե գնացի…

Հեղինե- Չվախենաս, մենք քեզ հետ ենք, տղաս, զգույշ եղիր…

/Կրկին լսվում է գայլի ոռնոցը/:

Մեսրոպ- Հիմա էլ ինձ է կանչում, գնամ…

/Մեսրոպը դուրս է գնում/:

Հովսեփ- Ինձ թվում է՝ Մեսրոպը կկարողանա էդ գայլի հարցը լուծել…

Հեղինե- Վստա՞հ ես…

Հովսեփ- Դե, ոչ էնքան, բայց նա իմ համեմատությամբ առավելություն ունի:

Հեղինե- Մեսրոպը շատ առավելություններ ունի քո համեմատ:

Հովսեփ- Ես դրա համար միայն ուրախ եմ: */Մոտենում է պատուհանին, հետո նրան միանում է Հեղինեն/:* Մեսրոպը ավելի ազատ, անկաշկանդ կարող է գործել գայլի դեմ… Նա չէ ձագուկներին սպանողը:

Հեղինե- Գայլը կարո՞ղ է հասկանալ, որ Մեսրոպը քո ժառանգն է…

Հովսեփ- Հա, կհասկանա:

Հեղինե */վախեցած/*- Էդ դեպքում գայլը նրա դեմ կգործի նույն ագրեսիվությամբ, ինչպես տրամադրված է քո հանդեպ…

Հովսեփ- Չէ… ավելի մեղմ կվերաբերվի…

Հեղինե- Ինչու՞. չէ՞ որ նա իրավունք ունի… թող լեզուս պապանձվի… իր ախոյանի զավակներին տեսնել նույն ճակատագրով դատապարտված, ինչին արժանացան իր ձագերը…

Հովսեփ- Սկզբից ես էլ էի էդպես մտածում… Հիմա կարծում եմ, որ նրա միակ թիրախը ես եմ…

Հեղինե- Համոզվա՞ծ ես…

Հովսեփ- Լիովին ոչ… Դե գազանի… կենդանի արարածի հարցում չի կարելի կատարյալ վստահություն ունենալ: Գայլը դարպասի մոտ ինձ է սպասում, առաջին հերթին՝ ինձ…

Հեղինե- Իսկ երեխաներին նա ձեռք չի՞ տա…

Հովսեփ- Կարծում եմ՝ ոչ… Նա չի ուզենա տեսնել նույն ողբերգությունն ուրիշի ընտանիքում…

Հեղինե- Ի՞նչ հիմք ունես նման ենթադրություն անելու, նա ընդամենը գազան է:

Հովսեփ- Նա, նախ, կենդանի արարած է՝ բնության մի մաս, Աստծո ստեղծվածք… աստվածային նույն բարոյականությամբ արարված…

Հեղինե- Բնապաշտ, աստվածապաշտ փիլիսոփա՜… Քո տեսությունը փորձով հիմա ապացուցելու իսկական ժամանակն է:

Հովսեփ- Ես կարծում եմ՝ գայլը հաշիվ ունի պահանջելու միայն ինձնից:

Հեղինե- Դու ընդամենը կարծում ես… Հիմա կարո՞ղ ենք երեխաներին անվնաս դուրս տանել դարպասով… գայլի կողքով…

Հովսեփ- Դե ես գայլից գրավոր երաշխավորագիր չունեմ երեխաների մասով:

Հեղինե- Դու դեռ կատակո՞ւմ ես… Ո՞նց կարողացար սպանել գայլուկներին…

Հովսեփ- Ես արդեն պատմել եմ… չգիտեմ… դա իմ կյանքի ամենամեծ թյուրիմացությունն է… */Դադար/:*

Հեղինե- Ճիշտն ասա, Հովսեփ, դու Նորայրիկի առիթո՞վ ես սպանել գայլի ձագերին… Ուզում էիր ինչ-որ ձեւով վրեժ առնել ու հոգիդ խաղաղեցնե՞լ… */Հովսեփը շրջում է գլուխը, լռում/:* Մեր որդու մահվանից երեսուն տարի է անցել, Հովսեփ, բայց դեռ հոգիդ չի հանգստանում… Իմն էլ չի հանգստանում, սակայն դա չպիտի պատճառ լինի, որ ուրիշներին վնասենք, հատկապես մեզ հետ առնչություն չունեցող արարածներին… Դա ի՞նչ չարություն է… Դու էն ժամանակ ուզում էիր էն բժշկին սպանել, Նո-

ռայրիկի մահվան մեջ նրան էիր մեղադրում... Բայց դու գիտես, Հովսեփ... */լացակումած/* որ մեր երեխան անբուժելի հիվանդ էր... Գուցե մի քանի օր էլ հնարավոր էր երկարեցնել նրա կյանքը, ոչ ավելին... Բժիշկը առանձնապես մեղք չուներ... Դու նրա քողարկված վրեժն էիր ուզում լուծել, ճի՞շտ է... Երբ գայլուկներին նշան էիր բռնում, պատկերացնում էիր, որ դրանք բժշկի զավակնե՞րն են... Աստված իմ, պետք չէ... */Դադար/* Լավ, ներիր, գիտեմ, որ տանջվում ես... */Բռնում է Հովսեփի վիրավոր ձեռքը, շոյում: Դադար/:*

Հովսեփ- Ամռանը քեզ ծովափ կտանեմ, աշխարհի լավագույն ծովափերից մեկը... Երեխեքին էլ կտանենք:

Հեղինե */ժպտում է/-* Համարենք դա տղամարդու խոստում:

Հովսեփ- Հա, մի կասկածիր:

/Լսվում է կրակոցի ձայն: Հովսեփն ու Հեղինեն ակնապիշ նայում են պատուհանից դուրս: Լռություն/:

Հեղինե- Սպանե՞ց...

Հովսեփ- Ոչ... վրիպեց: */Լսվում է երկրորդ կրակոցը: Լռություն/:* Դարձյալ վրիպեց... Բայց ես խնդրեցի Մեսրոպին՝ երկրորդ կրակոց չարձակել, ինչու՞ է նա իզուր տաքացել...

Հեղինե- Մեսրոպը ուզում է արագ վերջակետ դնել էս անախորժ պատմությանը...

Հովսեփ- Զուր, սա շտապելու գործ չէ, այլ՝ մանրակրկիտորեն պլանավորելու...

Հեղինե- Հիմա ի՞նչ ենք անելու...

Հովսեփ- Սպասենք՝ Մեսրոպը գա, կորոշենք:

/Հովսեփը նստում է աթոռին եւ մտախոհ գլուխը հակում ցած: Հեղինեն շարունակում է նայել պատուհանից դուրս/:

Հեղինե- Եկա՜վ Մեսրոպը...

/Քիչ անց ներս է մտնում Մեսրոպը՝ հուզախռով ու կարմրատակած/:

Հովսեփ- Տուր հրացանն ու փամփշտակալը, տղաս...

/Մեսրոպը լուռումունջ Հովսեփին է տալիս զենք-զինամթերքը: Վերջինս դրանք զգույշ տեղավորում է սենյակի հեռավոր անկյունում/:

Հեղինե- Էնտեղ ի՞նչ եղավ, Մեսրոպ, վրիպեցի՞ր, թե՞...

Մեսրոպ- Ասես գնդակները... հատուկ շեղվում եւ խույս էին տալիս... Անհասկանալի բան կատարվեց...

Հովսեփ- Նա նստա՞ծ էր...

Մեսրոպ- Հա:

Հովսեփ- Ծրջվե՞ց քո կողմը...

Մեսրոպ- Ոչ:

Հովսեփ- Ուրեմն ճիշտ է՝ նա իմ ժառանգների հետ հաշիվ չունի:

Մեսրոպ- Իսկ գնդակները ինչու՞ չէին կպնում նրան, Էդ ի՞նչ ուժ էր շեղում կոտորակների ընթացքը…

Հովսեփ- Երեւի արդար վրիժառության ուժը…

Մեսրոպ- Հիմա ի՞նչ… էդ գայլն անսպանելի՞ է…

Հովսեփ- Էս պահին՝ այո… Նրա հետ շփվել է պետք… անկեղծ ու ազնվորեն… Նրան պետք է իմ արյունը… կամ՝ իմ սիրտը…

Հեղինե */բորբոքված ու բարձր, գրեթե գոռալով/*- Դե հերիք է սոփեստություններ դուրս տաք… Տվեք ինձ էդ հրացանը… */Արագ գնում է՝ հրացանը վերցնում, ապա փորձում փամփշտակալը ամրացնել գոտկատեղին: Հովսեփն ու Մեսրոպը աճապարանքով մոտենում են Հեղինեին/:*

Մեսրոպ- Մայրիկ, պետք չէ, տուր հրացանը… */Փորձում է հրացանը Հեղինեից ետ վերցնել/:*

Հովսեփ- Հեղինե, հիշիր՝ ռազմական դրություն է հայտարարված տանը, կամայական գործելակերպն արգելված է. ցած դիր հրացանը, դա քո գործը չէ: Մենք ամեն ինչ կկարգավորենք:

Հեղինե */բացականչելով/*- Ե՞րբ կկարգավորեք, ինչքան ժամանակ է՝ երեխեքը էնտեղ վախից հա դողացնում են… Գնում-գալիս եք՝ հեքիաթ ու ավետարան կարդում գլխիս… */Լաց է լինում/:*

Մեսրոպ- Հանգստացիր, մայրիկ… Մի քիչ շունչ քաշենք ու հետո կանցնենք… վճռական քայլերի…

Հեղինե */լացելով/*- Էդ գայլը ձեզնից եւ ուժեղ է, եւ խելոք, եւ արդարամիտ, եւ հնարամիտ, եւ… գեղեցիկ…

/Հովսեփն ու Մեսրոպը փոթկացնում են/:

Մեսրոպ */ծիծաղը զսպելով/*- Հա, մայրիկ, իրոք որ գեղեցիկ գայլ է… խոշոր, շագանակագույն աչքերով, գորշասպիտակավուն մազերով… ժանիքներն ու ականջները՝ խնամված…

/Հեղինեն չկամենալով՝ հրացանը տալիս է Մեսրոպին, ապա ցած է դնում փամփշտակալը/:

Հովսեփ ու Մեսրոպ- Այ էդպե՜ս…

/Մեսրոպը հրացանն ու փամփշտակալը դնում է նույն անկյունում/:

Հեղինե */մի փոքր խաղաղված/*- Հիմա ի՞նչ եք առաջարկում… */Հովսեփին/* Հրամանատար, մի խելոք բան հրամայիր…

Հովսեփ- Լավ, մի րոպե թողեք՝ մտածեմ… */Դադար/:*

Մեսրոպ- Հայրիկ, առաջարկում եմ օժանդակ ուժ հրավիրել օգնության…

Հովսեփ- Ի՞նչ օժանդակ ուժ…

Մեսրոպ- Ասենք՝ փրկարարներին…

Հեղինե- Հա, ճիշտ է, թող գան ու իրենք վերացնեն էդ գայլին… Թող փրկեն մեզ էս վիճակից:

Հովսեփ- Դուք ուզում եք՝ խայտառա՞կ լինենք ողջ ավանով մեկ… ասեն՝ տան երեք տղամարդիկ… Արայիկն էլ մեզ հետ… չկարողացան մի գայլի հախիցը գալ… Հետո էլ կիմանան, որ գայլուկների եմ սպանել… պետք չէ…

Մեսրոպ- Հա՛, պիտի փրկենք եւ մեր անձը, եւ մեր անունն ու պատիվը: */Դադար/:*

Հովսեփ- Մեսրոպ, մորդ արդեն ասել եմ, քեզ էլ պարզաբանեմ. գայլին ես եմ պետք, միայն ես… Էս անգամ էլի ես կգնամ, բայց ոչ թե սպանելու, այլ կգնամ նրա հետ դեմ առ դեմ հանդիպման, բանակցելու, հենց դարպասի մոտ, որտեղ նստած է…

Հեղինե- Վերջ տուր, Հովսեփ, գայլը քեզ կհոշոտի… Քեզ բաց չենք թողնի, հաստատ իմացիր…

Մեսրոպ- Հայրիկ, քեզ մենակ բաց չենք թողնի նրա մոտ. մայրիկը ճիշտ է ասում՝ գայլը քեզ կհոշոտի:

Հովսեփ- Չէ… կարծում եմ՝ ինձ հասցրած մի քանի ճանկռվածքներով նա կբավարարվի ու կհեռանա… Մահացու ինձ չի հոշոտի:

Հեղինե- Էս մարդը էնպե՛ս է խոսում, ասես գայլի մտքերը թղթի վրա գրված-դրված են աչքի դեմ, ինքն էլ գերազանցիկ աշակերտի պես մեկ առ մեկ դրանք անսխալ կարդում է…

Հովսեփ- Հա, համարիր էդպես:

Մեսրոպ- Հայրիկ, էդ քո դեմ առ դեմ հանդիպման գաղափարն իրոք ինձ դուր չի գալիս… Արի մի քսան-երեսուն րոպե զինադադար հայտարարենք, հանգստանանք ու նոր որոշում կայացնենք:

Հովսեփ- Լավ… զինադադար քսան րոպեով… Հեղինե ջան, մեզ թեյ հյուրասիրիր:

ԱՐԱՐ ԵՐՐՈՐԴ

/Ընջասենյակում Մարոն է երեխաների հետ: Մարոն դանդաղ ու մտահոգ քայլում է: Արայիկը մահճակալի եզրին նստած՝ տարված է պլանշետով, իսկ Հվարթիկը ծնկներին դպրոցական դասագիրք կա, սակայն նա չի կարդում, սեւեռուն նայում է դիմացը/:

Մարո */խոսում է ինքնիրեն, կամաց, բայց գրգռված տոնով/*- Արդեն ժամից ավել է՝ էստեղ ենք պատանդների պես… Էդ մեր տղամարդիկ, ի՞նչ է, չե՞ն կարողանում մի գայլի հարց լուծել… Մեր առանձնատունը իսկական պաշարման մեջ է առել ինչ-որ մի գայլ… Ճիշտ է՝ ինչ-որ չէ, ճագերը կորցրած, ցավով ու վրիժառությամբ լցված մայր գայլ է, բայց, համենայն

դեպս... որքան էլ գազազած լինի, մի՞թե նա էդքան ուժ ու կարողություն ունի, որ մեզ սարսափի մատնի ու իր կամքը թելադրի...

Արայիկ- Մայրիկ, նայիր, գայլերի մասին հետաքրքիր էջ գտա համացանցում... Լսիր՝ ինչ է գրված, Զվարթիկ, դու էլ լսիր... */Կարդում է/* Գայլերը միշտ կարեւոր դեր են խաղացել մարդու կյանքում. նրանք աստվածներ են համարվել, օրինակ, նորվեգական դիցաբանությունում, կերակրել են Ռոմուլին ու Ռեմային, հիմնադրել են Հռոմը: Նրանք առաջին կենդանիներն են, որոնց վարժեցրել է մարդը...

Զվարթիկ - Գայլերին վարժեցնու՞մ են... Մայրիկ, արի էդ... մեր գայլին վարժեցնենք...

Մարո- Հիմա գայլն է մեզ վարժեցնում...

Արայիկ */շարունակում է կարդալ պլանշետից/*- Գայլերը միշտ եղել են մարդու լավագույն ընկերները, ոգեշնչման աղբյուրը, բայց մենք իրականում քիչ բան գիտենք նրանց մասին...

Մարո- Այո, եթե շատ բան իմանայինք նրանց մասին, էս օրը չէինք ընկնի: */Դադար/:* Արայիկ ջան, ի՞նչ կասես, չզանգե՞մ քեռի Գրիգորին, որ գա իր զինվորներով ու զինտեխնիկայով... մեզ ազատագրի...

Զվարթիկ - Ուռա՜, մայրիկ, զանգիր, թող քեռի Գրիգորը գա իր տանկով...

Արայիկ- Հայրիկն ու պապիկը չասացի՞ն՝ ոչ մի զանգ ուրիշներին...

Մարո- Հա, ասել են, բայց...

Արայիկ- Չէ, մայրիկ, մի զանգիր, չի կարելի, արի լսենք մեծերին, նրանք գիտեն՝ ինչ են անում...

Մարո- Լավ, դեռ համբերենք, թեեւ, կարծում եմ՝ նրանք չգիտեն ինչ անել...

Արայիկ- Սպասենք, մայրիկ, սպասենք... Լավ կլինի:

Մարո- Դասերից բացակայեցիք, ես էլ՝ աշխատանքից...

Արայիկ- Բան չկա, մայրիկ, ես ու Զվարթիկը բաց թողած դասերը կսովորենք... Դե դու էլ... բժշկական տեղեկանք կտանես տնօրենիդ... Միշտ էդպես ես անում, չէ՞, երբ բացակայում ես...

/Մարոն թեթեւակի ժպտում է/:

Մարո- Լավ, երեխեք, եկեք մի հետաքրքիր ու օգտակար բանով զբաղվենք, որպեսզի ժամանակն արագ անցնի եւ չտրվենք վախին ու ճնշող տրամադրությանը... Դե, ի՞նչ առաջարկություններ ունեք...

Զվարթիկ - Մայրիկ, էսօր ես պարի պարապմունք ունեմ դասերից հետո... Արի իմ պարը միասին պարապենք...

Մարո- Լավ առաջարկություն է... Ի՞նչ պար է դա...

Զվարթիկ - Արայիկը գիտի... Արայիկ, միացրու, խնդրում եմ՝ էդ պարեղանակը...

Արայիկ- Հիմա…

/Հնչում է պարային դիսկո ոճի երաժշտություն: Զվարթիկը ցույց է տալիս պարաքայլերը, ապա սկսում է պարել Մարոյի հետ: Նրանց մի փոքր ուշացումով միանում է Արայիկը: Պարը, նախ, ընթանում է խառնակ ձեւով, ապա՝ համաշարժ ու ներդաշնակորեն/:

ԱՐԱՐ ՉՈՐՐՈՐԴ

/Հյուրասենյակում են Հովսեփը, Հեղինեն ու Մեսրոպը՝ սեղանին դրված թեյի բաժակների շուրջ նստած/:

Հովսեփ- Լավ, զինադադարն ավարտվեց, անցնենք մեր գործին… Էսպես, դուք մնում եք էստեղ, ես անզեն գնում եմ գայլի հետ հանդիպման… այսպես ասած՝ խորհրդակցելու եւ համաձայնության գալու նրա հետ:

Մեսրոպ- Չէ-չէ-չէ, հայրիկ, համաձայն չեմ… Դու լավ գիտես, թե գայլը քեզ ինչ կանի, մենք էլ գիտենք… Մենք չենք կարող թույլ տալ, որ դու քո ոտքով գնաս ու… զոհաբերվես… Մեզ նման կորստով փրկություն պետք չէ: Ոչ, հայրիկ, ուրիշ բան մտածենք…

Հեղինե- Ես էլ կտրականապես դեմ եմ… Հովսեփ, քեզ որ հոշոտեց գայլը, մենք էլ իբր փրկվեցինք, կարծում ես՝ դա փրկությո՞ն է լինելու մեզ համար, դու իրո՞ք էդպես ես կարծում… Ախր ողջ կյանքում մենք տանջվելու ենք քո պատճառով, էլ փրկությունն ու՞ր մնաց, ի՞նչ փրկություն, երբ հոգիդ խաղաղ չէ, խիղճդ հանգիստ չէ… Ոչ, Հովսեփ, դու այլեւս մենակ չես գնա գայլի դեմ:

Հովսեփ- Ես գայլի դեմ չեմ գնում, այլ՝ նրա դեմը:

Հեղինե- Հերթական սխալդ ես ուզում գործել. ոչ, համաձայն չեմ, չես գնա:

Մեսրոպ- Հայրիկ, մենք ընդամենը սովորական մարդիկ ենք, մենք չենք կարող մեր ուսերին վերցնել մի էնպիսի բեռ, որը տանել չենք կարող… Եվ քանի որ սովորական մարդիկ ենք, մենք էս խնդիրը պիտի լուծենք մարդա-վարի… Այսինքն՝ պիտի հաղթենք գայլին, բայց եւ ցույց տանք նրան, որ մենք գազաններ չենք…

Հեղինե- Մեսրոպս էլ է փիլիսոփա… Էդ ո՞նց հանկարծ էդքան պերճախոս, իմաստախոս դարձաք… էդ գայլի՞ց եք ազդվել էդպես… Հետաքրքիր է՝ էդ վայրի կենդանին բարերար ազդեցություն է գործել ձեզ վրա… Լավ, ես իմ տարբերակն եմ առաջարկում, պիտի համաձայնվեք:

Հովսեփ- Ասա:

Հեղինե- Գայլի հետ հանդիպման գնում եմ ես, նա ինձ հետ մեղմ կվե-

ռաբերվի… դե ես նրա ողբերգության համար ուղղակի պատասխանատու չեմ, ինչպես դու, Հովսեփ… Նաեւ, որ մի որդեկորույս մայր էլ ես եմ… նրա հետ որոշ չափով բախտակիցներ ենք… Նա կհասկանա ինձ եւ կընդունի մեր առաջարկությունը…

Հովսեփ- Ի՞նչ առաջարկություն…

Հեղինե- Չգիտեմ, ի՞նչ ենք առաջարկում նրան, դուք ասեք…

Հովսեփ- Հա… պիտի գայլի հետ համաձայնության գանք հետեւյալում. նա հեռանում է իր անտառը, այլեւս ոտք չի դնում էստեղ, ես էլ պարտավորվում եմ այլեւս որս չանել նրա տարածքներում… Կատարվածը կատարված է:

Մեսրոպ- Չէ, հայրիկ, պիտի պարտավորվես՝ այլեւս ընդհանրապես որս չանել:

Հեղինե- Ճիշտ է:

Հովսեփ- Տխուր բան եք ասում, բայց ստիպված եմ համաձայնվել:

Մեսրոպ- Քո էս կենսաթոշակային շրջանը հետաքրքիր դարձնելու ուրիշ միջոցներ կգտնենք… Տեսնում եմ՝ երկու տարի է՝ թոշակի ես անցել, բայց դեռ տեղդ չես գտնում…

Հովսեփ- Հա, հեշտ չէ ինձ համար, տղաս, ակտիվ կյանքից հետո էսպես… պասիվ կենսակերպի անցնել… */Դադար/* Բայց գայլի հետ բանակցողը միայն Հեղինե՞ն լինի… Ես թեեւ էդ գայլին ճանաչեցի խորքով, սակայն վախենամ՝ նա ցավալի անակնկալ մատուցի… ի վերջո գազան է: */Հեղինեին/* Իսկ որ հարձակվեց քեզ վրա՞…

Հեղինե- Դե հերիք է վախենաս, Հովսեփ… Նա ինձ վրա չի հարձակվի… սիրտս է հուշում:

/Լսվում է գայլի ոռնոց: Ապա հաջորդում է մեկ ուրիշ ոռնոց/:

Հովսեփ */տագնապած/*- Ի՞նչ…

Մեսրոպ- Էլի ու էլի ոռնում է, երեւի շտապեցնում է մեզ, որ հարցը արագ կարգավորենք… Գայլը ուզում է անտառ վերադառնալ…

Հովսեփ- Չէ, ուրիշ բան կա… Արուն է եկել էգին միացել… Էն երկրորդ ոռնոցը արուինն է:

Մեսրոպ- Համոզվա՞ծ ես…

Հովսեփ- Հա… Հիմա երկուսով են… Հիմա, երեւի, կրկնակի դժվար է նրանց հետ պայմանավորվելը… Կամ գուցե հակառակը…

Հեղինե */տագնապած/*- Իսկ եթե նրանց ողջ ոհմակը գա՞…

Հովսեփ- Դե չէ, էդ մեկը՝ չէ… Դա լոկ էդ զույգի ընտանեկան հոգսն է:

Հեղինե */համարձակորեն/*- Լավ… քանի դեռ ոհմակը չկա, գնամ ու հանդիպեմ նրանց… Հնարավոր է՝ էգ-արուի հետ ավելի հեշտ լինի լեզու գտնելը… */Մի պահ տնտղում է իրեն/:* Փոխվեմ ու նոր գնամ… */Արագ դուրս է գնում/:*

Մեսրոպ- Հայրիկ, իսկապե՞ս մայրիկին բաց ենք թողնում մենակ…

Հովսեփ- Մի վախեցիր, մայրիկին ոչինչ չի պատահի… Նա իրավիճակը սկսել է ճիշտ հասկանալ:

Մեսրոպ- Այնուհանդերձ, նա պիտի շփվի գայլերի հետ, կատակ բան չէ, հայրիկ… Գայլերից ամեն ինչ սպասելի է…

Հովսեփ- Էս պահին մենք ուրիշ լավ քայլ չունենք… Համ էլ, գիտե՞ս, տղաս, մայրիկը արդեն տեսել է գայլի աչքերը, որ ավելի սարսափազդու էին. նա էդ վախը ժամանակին հաղթահարել է զարմանալի հաջողությամբ… Պատերազմի ժամանակ նա է, չէ՞, որ միայնակ ձեզ՝ քեզ ու քույրիկիդ, հանել է պաշարված մեր գյուղաքաղաքից եւ ձեզ անվտանգ տեղ հասցրել… ոտքով… գիշերով, երբ թշնամին սաստիկ հրետակոծում էր… Գիտես, որ մեր համաքաղաքացիներից ոմանք վախեցան դուրս գալ թաքստոցներից ու հեռանալ, վախեցան արկերից ու… զոհվեցին… Հեղինեն մեկ-մեկ ինձ կշտամբում է, թե ինչու ես չեկա ժամանակին ու ինքս ձեզ չտարա քաղաքից հեռու՝ ապահով տեղ… Ես չգիտեի, ոչ ոք չգիտեր, որ թշնամին էդքան արագ կմոտենա մեր քաղաքին… Եվ հետո՝ ես մեր ջոկատի հետ շատ կարեւոր դիրք էի պահում, չէի կարող դիրքս լքել ու գալ… Ես հավատում էի Հեղինեի խիզախությանն ու պատասխանատվությանը… Հավատում էի, որ նա իր ընտանիքը չի թողնի բախտի քմահաճույքին… Բայց ես հետո շատ-շատ եմ տանջվել… մինչեւ ձեզ գտնելը…

/Ներս է մտնում Հեղինեն՝ բաց մոխրագույն զգեստով ու սպիտակ պիջակով, ձեռքին՝ սպիտակ հեղուկով լի մի շիշ/:

Մեսրոպ */զարմացած/*- Մայրիկ, էս ի՞նչ հագուստ ես հագել… Կարծես տոնակատարության ես գնում… կամ առաջին ժամադրության…

Հովսեփ */ժպտալով/*- Նա ուզում է գայլերին դուր գալ… Ճիշտ է անում, Էդպես ավելի հեշտ կլինի ընդհանուր լեզու գտնելը:

Հեղինե- Հովսեփը խանդի տեսարան չի սարքում էս կրիտիկական պահին, դա լավ է… */Իրեն զննում է հայելու առաջ/:*

Մեսրոպ- Մայրիկ, իսկ էդ ի՞նչ շիշ է ձեռքիդ…

Հեղինե- Հովսեփը պիտի որ իմանա… Դե ես գնացի, խելոք մնացեք: */Դուրս է գնում/:*

Մեսրոպ- Հայրիկ, մայրիկը էն ի՞նչ շիշ տարավ հետը…

Հովսեփ- Կաթ է…

Մեսրոպ- Կա՞թ… գայլերի համա՞ր… պիտի խմեցնի՞ նրանց…

Հովսեփ- Դե ո՞նց բացատրեմ… Դա էն սպանված ձագերի պատվին է տանում… նրանց հիշատակի համար: */Մոտենում է պատուհանին: Նրան է միանում Մեսրոպը/:*

Մեսրոպ- Հայրիկ, գիտե՞ս, մայրիկը մինչեւ հիմա էլ մտածում է, որ դու էն ժամանակ… մեր տեղահանության օրը, դու իբր լքել ես մեզ…

Հովսեփ- Գիտեմ… Ես չեմ կարող նրա մտածելակերպը փոխել, բայց ես իմ վարքով հետո արժանացել եմ նրա ներումին ու փոխըմբռնմանը…

Մեսրոպ- Հա, նա քեզ արժանիորեն գնահատում է… բայց եւ շարունակում է իր կարծիքին մնալ:

Հովսեփ- Հեղինեին բնորոշ է իսկական կնոջ, իսկական մոր մտածելակերպը… ընտանիքի մոր մտահոգությամբ է նա լեցուն: */Դադար/* Գիտե՞ս՝ մոր ամենագլխավոր մտահոգությունն իր ընտանիքն է, նրանից առաջ ու վեր նա այլ բան չի ճանաչում… Հեղինեն իր մայրական առողջ բնազդով համոզված է, որ ցանկացած իրավիճակում պետք է, նախ, հոգ տանել ընտանիքի մասին. եթե ընտանիքը չկա, մնացած ամեն ինչ անկարեւոր է… Բայց դու գիտես, տղաս, որ մենք՝ տղամարդիկս, ընտանիքի հայրերը, ավելի լայն հոգեբանության կրողներ ենք… Ես իրոք էն համոզմանն եմ, որ ընտանիքդ չի կարող երջանիկ ու ապահով լինել, եթե քո համայնքում, քո երկրում տագնապալի է ու ծանր կացություն… Ընտանիքի հայրերը միայն ընտանիքի համար չեն պատասխանատու, այլեւ՝ հայրենի տիրույթի… եթե կուզես՝ աշխարհի համար…

Մեսրոպ- Հա, հայրիկ, լավ եմ հասկանում քեզ, ինձ հոգեհարազատ է քո մտածելակերպը… Մենք էս թեմայով երբեւէ չենք խոսել, բայց դու քո պահվածքով, թվում է, ինձ ամեն օր ասել ես էդ խոսքերը… */Դադար/* Քո բոլոր գործողությունները, հայրիկ, ինձ համար միանգամայն հասկանալի եւ գնահատելի են, բացառությամբ մեկի…

Հովսեփ- Ո՞րը, տղաս…

Մեսրոպ- Երբ դատավորի հետ գնացել ես հանդիպման… նրանց տանը…

Հովսեփ- Ո՞վ է ասել քեզ էդ մասին…

Մեսրոպ- Հորեղբայր Հենոն:

Հովսեփ- Չպիտի ասեր: */Դադար/* Տղաս, մեզնից անկախ կատարվող տխուր դեպքերին պիտի դիմակայենք, հակառակ դեպքում շատ անիմաստ կորուստներ կունենանք…

Մեսրոպ- Եթե չգնայիր դատավորի հետ խոսելու, կարծում ես՝ քեզնից կնեղանայի՞… Ես պիտի պատասխան տայի, չէ՞, իմ արարքի համար…

Հովսեփ- Դու իրավունք ունես էդպես մտածելու, տղաս, իսկ ես իրավունք ունեմ վարվելու էնպես, ինչպես իմ հոգին է թելադրում, եւ… խիղճը…

Մեսրոպ- Շնորհակալ եմ, հայրիկ, ես շատ վախեցած էի էն ժամանակ… */Դադար/* Մայրիկը գալիս է…

Հովսեփ- Այո՜…Քայլվածքից դատում եմ, որ Հեղինեն խնդիրը լուծել է…

Մեսրոպ- Հա՞… գայլերին ե՞տ է ուղարկել…

Հովսեփ- Թող ինքն ասի:

/Ներս է մտնում Հեղինեն՝ ցասկոտ հայացքով/:

Հեղինե- Մեսրոպ տղա՞... Էդ դու ի՞նչ շանտղայություն ես արել, որ մինչեւ հիմա ես տեղյակ չեմ... ի՞նչ գեշ արարք ես գործել ու թաքցնում ես մեզնից...

Մեսրոպ */շփոթված/*- Մայրիկ, ինչի՞ մասին ես խոսում... */Կարկամած/* Դու էն ասա՝ գայլերը գնացի՞ն, թե՞ դեռ սպասում են մեզ...

Հեղինե- Եթե դու չասես քո վատ գաղտնիքը, գայլերը չեն գնա, տղաս... Դե ասա՝ ի՞նչ ես արել, որի մասին մենք տեղյակ չենք...

Հովսեփ- Էդ դու տեղյակ չես, Հեղինե... Մենք քեզ խնայել ենք:

Հեղինե- Հա՞...Մեսրոպ, ի՞նչ ես արել...

Հովսեփ- Ասա, տղաս, արդեն անցած բան է:

Մեսրոպ- Մայրիկ, ես մի երեխայի եմ ավտոյի տակ գցել...

Հեղինե */վախեցած/*- Ե՞վ... նա մահացա՞վ...

Մեսրոպ- Չէ, մայրիկ, բարեբախտաբար ողջ մնաց, բայց...

Հեղինե- Հաշմանդամ է դարձել...

Մեսրոպ- Հա... Բժիշկները, սակայն, ասում են, որ լրիվ առողջանալու հավանականություն կա... ողնաշարի հետ է կապված:

Հեղինե- Աղջի՞կ է, տղա՞...

Մեսրոպ- Աղջիկ է... տասնմեկ տարեկան էր...

Հեղինե- Ե՞րբ էր պատահարը եղել... որտե՞ղ...

Մեսրոպ- Հինգ տարի առաջ... Երեւանի կենտրոնում...

Հեղինե- Եվ դուք էսքան ժամանակ թաքցնո՞ւմ էիք ինձնից... Իրավապահներից է՞լ եք թաքցրել... Մարոն գիտի՞ էդ մասին..

Մեսրոպ- Չէ, Մարոն էլ չգիտի... Իրավական գնահատական եղավ, մայրիկ... ես անմեղ էի... Էդ աղջիկը՝ Վարդուշիկը, վազքով հանկարծակի հայտնվել էր փողոցի արգելված մասում, էդ հատվածով միայն ավտոները կարող են անցնել, հետիոտներին արգելված է... Շատ անսպասելի ձեւով նա հայտնվեց իմ դիմաց:

Հեղինե- Արա՞գ էիր քշում... հո խմած չէի՞ր...

Մեսրոպ- Չէ, մայրիկ, դու գիտես, որ ես չեմ խմում: Թույլատրելի արագությամբ էլ քշում էի. կտրուկ արգելակեցի, թե չէ հետեւանքն ավելի վատ էր լինելու... Վարդուշիկը ջարդվածքներ ստացավ... Տեղափոխեցի հիվանդանոց: Նրա բուժման ծախսերը վերցրինք մեզ վրա... հայրիկի հետ...

Հեղինե- Քեզ դատե՞լ են...

Մեսրոպ- Դատ եղավ... Ինձ արդարացրին, քանի որ ես ոչ մի խախտում չէի կատարել... Տուժող կողմն էլ որեւէ պահանջ չուներ ինձնից, ընդունեցին, որ աղջկա մեղքով է եղել պատահարը:

Հեղինե- Պարզ է, ուրեմն Հովսեփը էն ժամանակ ծախսել է մեր խնա-

յողությունները… */Հովսեփին/* Իսկ ասում էիր, թե մի ինչ-որ բիզնեսի մեջ ես դրել տնից վերցրած գումարը ու վառվել… Սուտասան Հովսեփ, դու ինձ, միեւնույն է, պիտի ասեիր կատարվածի մասին…

Հովսեփ- Դա զուտ տղամարդկային հարց էր, պիտի ինքներս կարգավորեինք:

Հեղինե */մի փոքր ջղային տոնով/*- Դե վերջ տուր քո էդ սովորությանը, հարցերին հա սեռական բնութագիր ես տալիս… */Դադար/* Լավ, հասկանում եմ ձեզ… Հիմա ինձ ասա, Մեսրոպ ջան, դու էդ վրաերթից խուսափելու շանս ունեի՞ր… Կարո՞ղ էիր մի կերպ խույս տալ ու չհարվածել աղջկան… Հետո, երբ վերլուծել ես իրավիճակը, նման հնարավորություն տեսա՞ր…

Մեսրոպ */դժվարությամբ արտաբերելով բառերը/*- Հա, մայրիկ… հետո հասկացել եմ, որ կարելի էր երեխայից աջ թեքվել ու… բախվել բետոնե էլեկտրասյանը…

Հեղինե- Էդպես դու շատ կվնասվեիր… */Դադար/* Պարզ է, քո մեջ բնականորեն գործել է ինքնապաշտպանական բնազդը, բայց հետո գիտակցությունդ լուսավորվել է եւ… խիղճդ մինչ օրս տանջում է քեզ, տղաս… Քեզ թվում է, թե դու դեռ պատասխան պիտի տաս կատարվածի համար, սպասում ես, որ մի օր կհայտնվի հիմնավոր փոխհատուցում պահանջողը, էն արդարամիտ պահանջատերը… Դու միշտ սպասել ես նրան… Եվ նա հայտնվել է, տղաս… հայտնվել է ուրվական-գայլի տեսքով, ինչպես քո հոր պարագայում է… Էդ երկրորդ գայլի ոռնոցը, որ լսել ես, քեզ էր ուղղված, տղաս… Իսկ մինչ այդ ոռնում էր Հովսեփի դատավոր-ուրվական-գայլը… Մեսրոպ, դու հեշտությամբ տեսար քո հոր գայլին, որովհետեւ խիղճդ էնքան պրկված է, որ պարզ տեսնում ես հարազատներիդ հասցեին ոռնացող արարածներին… Եվ էդ պահին քո ներսում սկսել է ոռնալ քո գայլը, քո պահանջատեր գայլը… Դու տեսել ես նաեւ նրան… */Տրտմալից ձայնով/.* Էդ ինչքա՞ն զգայուն ես, տղաս… */Դադար/* Ես էս ամենը կռահեցի, երբ մի քանի րոպեով ետ ու առաջ արի մեր փողոցով, ապա նստեցի մեր դարպասի մոտի նստարանին… Չե՞ք նկատել, որ էդ նստարանը հեռվից նման է շան կամ գայլի…

/Հովսեփն ու Մեսրոպը տարակուսած միմյանց են նայում/:

Հովսեփ- Հիմա գայլերը էնտեղ չե՞ն…

Հեղինե- Չէ, Հովսեփ, ես նրանց ձեր եւ իմ անունից խնդրեցի անհետանալ, խոստացա, որ դուք… մենք այլեւս չենք շեղվի մեզ համար սահմանված մարդկային երկար ու ոլորապտույտ ճանապարհից… */Մոտենում է պատուհանին, բացում այն եւ գոռում/.* Գայլե՜ր, հեռացեք մեր դարպասից, հեռացեք մեր քաղաքից, հեռացեք մեր երկրից, հեռացեք աշխարհից… Մենք խոստանում ենք այլեւս չկատաղեցնել ձեզ… */Դադար/* Էնտեղ՝ դարպասի մոտ, հիմա գայլ չկա, կարող եք դուրս գալ:

Մեսրոպ- Իսկապե՞ս, մայրիկ…

Հեղինե- Այո, որդիս… Դու, Հովսեփը այսուհետ ավելի հանգիստ կլինեք, բայց հիշեք՝ գայլերը կարող են նաեւ վերադառնալ…

Մեսրոպ */գրկում է մորը/*- Ծնորհակալ եմ, մայրիկ… Դու մեզ էս անգամ էլ կարողացար տեղահանել անվտանգ տեղ:

Հովսեփ */գրկում է Հեղինեին ու Մեսրոպին/*- Ծնորհակալ եմ, Հեղինե:

Հեղինե */կամացուկ հեռանալով նրանցից/*- Երեկոյան գնանք Վարդուշիկին տեսության… Նա հիմա փաստորեն տասնվեց տարեկան է, հա՞…

Մեսրոպ- Հա, մայրիկ:

Հեղինե- Եվ գամված է սայլակին…

Հովսեփ */գլխով է անում/*- Նա գեղեցիկ աղջիկ է, խելացի, մարդասեր… Նա էն դժբախտ պատահարի օրը վազում էր հիվանդ մոր համար դեղ գնելու…

Հեղինե- Խե՜ղճ աղջիկ…

Մեսրոպ- Մայրիկ, հույս կա, որ նա կարող է ոտքի կանգնել…

Հեղինե- Լավ, կանչիր երեխեքին, թող իջնեն ու հանգիստ գնան իրենց գործին:

Մեսրոպ- Հիմա: */Շարժվում է դեպի դուռը/:*

Հեղինե- Սպասիր… Ինչպե՞ս պիտի կատարվածը բացատրես երեխեքին ու Մարոյին…

Մեսրոպ- Կասեմ, որ մայրիկը քշեց գայլերին…

Հեղինե- Չէ, ասա, որ մենք քշեցինք */ցույց է տալիս նրան, Հովսեփին ու իրեն/:*

Հովսեփ- Հա, Մեսրոպ, էդպես ասա, գայլերին մենակ քշելը հեշտ չէ, կնոջ համար՝ առավել եւս:

Հեղինե- Մեսրոպ, Մարոյին մենք կպատմենք քո պատահարի մասին…

Հովսեփ- Հա, տղաս, ավելի լավ է՝ էդ հին նորությունը մենք ասենք կնոջդ… Նա մեզ ավելի է հավատում… Թող քեզնից կասկած չմնա նրա մեջ:

Մեսրոպ */ժպտում է/*- Լավ, ինչպես կասեք… */Դուրս է գալիս/:*

Հեղինե */մոտենալով Հովսեփին/*- Ասում ես՝ ամռանը լողա՞փ ես տանելու մեզ…

Հովսեփ- Աշխարհի լավագույն լողափը՝ քեզ…

/Հովսեփը գրկում է Հեղինեին: Լսվում են տան ներքին աստիճաններով ցած իջնող երեխաների աշխույժ բացականչությունները «Մերոնք քշեցին գայլերին»/:

ՎԵՐՋ

նոյեմբեր-դեկտեմբեր, 2018թ.

ԱՐԱՄԱՉԴԻ ՅՈԹԵՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԸ

/առասպել-դրամա 5 արարով/

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

Արամազդ
Վահագն
Նանե
Միհր
Տիր
Արաց
Մեհեկան
Նախագահ
Զինվորականներ
Գեներալ
Ռուզան
Նանար
Լալա
Մատնահարդարվող կին
Լեւոն՝ մամուլի քարտուղար
Լրագրողներ
Անվտանգության աշխատակիցներ
Ոստիկան
Անահիտ՝ Նանարի դուստրը
Սեփականատեր

ԱՐԱՐ 1

/Մեհյանի ընդարձակ սրահի գահին նստած է Արամազդը: Նրա դիմաց երկշարք կանգնած են Վահագնը, Նանեն, Միհրը, Տիրը, Արացը եւ Մեհեկանը/:

Արամազդ- Տեսնում եմ՝ բոլոր հրավիրվածները ներկա են: Ուստի հայտնեմ ձեզ մեր այս հավաքի խորախորհուրդ պատճառը... Թե՞ Տիրը իր կանխագուշակությամբ արդեն լուսավորել է ձեզ...

Տիր- Ոչ-ոչ, մեծ ու արի Արամազդ, ես նրանց ոչինչ չեմ ասել ձեր հրավերի բովանդակության մասին:

Վահագն- Մեզ ոչինչ հայտնի չէ ձեր ծրագրերի մասին, վսեմափայլ Արամազդ:

/Մյուսները նույնպես հաստատում են Վահագնի խոսքը՝ աճապարանոք կրկնելով իրար. «Մենք լրիվ անտեղյակ ենք, մենք չգիտենք, թե մեզ ինչու եք կանչել, մեծն Արամազդ»/:

Արամազդ- Լավ-լավ, հանգստացեք, ես հարցաքննություն չեմ սկսել ձեզ հետ, պարզապես ցանկացա մի փոքր տնտղել ձեր մտքերը ու տեսնել, թե դրանք դեպի ուր են սեւեռված... Ուրեմն հայտնեմ ձեզ, որ մենք վաղը մեկնում ենք շատ կարեւոր առաքելության, պիտի ասեմ՝ պատմական հույժ կարեւոր առաքելության... */Խորհրդավոր հայացքով նայում է ներկաներին/:*

Նանե- Ուզում եք մեզ տանել Բաբելոնի ազնվականության ու երիտասարդության հետ հանդիպելու՞, նաեւ՝ տեսարժան վայրե՞րը ցույց տալու, հայր Արամազդ... Դուք դա վաղուց եք խոստացել մեզ:

Արամազդ- Բաբելոն միշտ էլ կարող ենք գնալ, դուստր Նանե... երբ մի քանի անհոգ օր ունենանք: Հիմա մենք առաջնահերթ անելիքի առջեւ ենք կանգնած, եւ այն չենք հետաձգի ոչ մի պայմանով:

Արաց- Մենք գնում ենք պատերազմելու նորահայտ թշնամիների դե՞մ, մեծն Արամազդ...

Արամազդ- Ոչ, սիրելի Արաց, ինչու՞ պետք է մենք մեր կյանքը շարունակաբար պատերազմական առօրյայի վերածենք...

Մեհեկան- Օլիմպո՞ս ենք գնալու... օլիմպիական աստվածների հետ մեր հարաբերությունները կարգավորելու՞, պայծառափայլ Արամազդ...

Արամազդ- Ոչ, գեղաժպիտ Մեհեկան... Մենք մտահոգվելու լուրջ պատճառ չունենք Օլիմպոսի առնչությամբ. քո այդ աստվածային ժպիտը բավ

է, որ մենք բարեհաճորեն տրամադրենք դեպի մեզ մեր բոլոր ընդդիմախոսներին ու չարակամներին, սիրելի Մեհեկան:

Միհր- Ուրեմն գնում ենք հիմնելու մի նոր սահմանային քաղաք՝ արեւաշող, արեւասեր ու անառիկ…

Արամազդ */ծիծաղում է/*- Դե, եթե Տիրն է անուժ ճիշտ գուշակելու, դու ինչպե՞ս կարող ես կռահել մեր վաղվա ուղին, արեգնափայլ Միհր: Մեզ բավական է եւ այն, որ դու մեզ ու մեր Հայոց աշխարհը արեւով ու նրա կենարար ջերմությամբ ողողես, գուշակությունը թող այլոց…

Տիր */երգեցիկ/*- Ես Արարատի պատկե՛րն եմ տեսնում, ես Էրեբունու ձայնե՛րն եմ լսում…

Արամազդ- Մ՛, վերջապես Տիրը հայտնվեց ճիշտ գուշակության ուղու վրա… Լավ, անտեղի չբորբոքեմ ձեր հետաքրքրասիրությունը… */Կանգնում է/* Ի լուր ձեր հոգուն ու մտքին հայտարարում եմ, որ վաղը մենք՝ այս յոթ հոգանոց պատվիրակությամբ, մեկնում ենք 21-րդ դարի Հայաստան…

Նանե */գրեթե ցնծագին/*- Երեւա՞ն ենք գնում… Հրաշալի՛, հրաշալի՛… Ո՞նց էի փափագում դա, ո՞նց էի երազում երկար դարեր…

/Մյուսները ուրախությամբ արձագանքում են՝ «Մենք Հայաստան ենք գնում…»/:

Արամազդ- Ինձ ձեր ուրախությունը չափազանց ոգեշնչում է, իմ սիրելիներ: Ուրեմն ձեր հոգին լի է հայկականությամբ ու ազնվությամբ: Բայց ձեզ պիտի նախապես զգուշացնեմ, որ մենք զբոսաշրջային այցով չենք մեկնում արդի Հայաստան…

Վահագն- Իսկ ի՞նչ նպատակով ենք գնում, վսեմաշուք Արամազդ… Այնտեղ տագնապալի իրավիճա՞կ է, թե՞ մեծ տոնախմբություն է սպասվում…

Արամազդ- Դուք մոռացել եք, որ մենք աստվածային պարտավորություն ունենք մեր հովանու տակ գտնվող Հայոց աշխարհի ու նրա ժողովրդի հանդեպ…

Տիր- Ի՞նչ պարտավորություն, հայր դիցն ամենայնի… */Արագորեն ծոցից հանում է մի մատյան ու թերթում/:* Մ՛, հիշեցի… Իմ օրացույցում այդ առաքելությունը կարմիրով է նշված… Հազար տարին մեկ մեծն Արամազդը իր շքախմբով, աստվածային իր նստավայրից ու ժամանակից տեղափոխվում է իրական Հայաստան…

Արամազդ- Այո, Տիր, ինչպե՞ս կարելի է մոռանալ նման պարտավորյալ առաքելությունը… */Խիստ տոնով/* Դու իմ ատենադպիրն ես, Տիր, իմ քարտուղարը, այդ դու պետք է հիշեցնես ինձ իմ վաղվա անելիքները…

Տիր */մեղավոր տոնով/*- Ներեցեք, Աստվածահայր, այսուհետ չեմ թերանա, ավելի ուշադիր կլինեմ… Հա, հիշեցնեմ, որ ձեր գլխավորած պատվիրակությունը, ըստ ավանդույթի, պետք է բաղկացած լինի յոթ հոգուց եւ

դուք, որպես ընծաներ, պետք է տանեք ծիրանագույն մետաքս ու Հայոց օրագրության հերթական Մեծ մատյանը…

Արամազդ- Պատրա՞ստ է այդ մատյանը, Տիր, այն արդեն կազմվա՞ծ է…

Տիր- Այո, մեծն Արամազդ, յոթերորդ Մեծ մատյանն արդեն կազմված է արծաթով, այնտեղ հանգամանորեն գրառված են հայոց կյանքի անցած հազար տարվա կարեւոր անցքերն ու ձեր աստվածային խորհուրդներն այդ կապակցությամբ:

Արամազդ- Հրաշալի՜… Այդ դեպքում այսօր լավ հանգստացեք, կարգի բերեք ձեզ, որ վաղը սրընթաց մեկնենք Հայաստան: Այնտեղ մեզ շատ գործ է սպասվում:

Միհր- Հայր Արամազդ, մի փոքր չէի՞ք մանրամասնի, թե ինչ պետք է անենք Հայաստանում…

Արամազդ- Մենք պետք է ուսումնասիրենք հայոց ներկա կյանքը, պարզենք երկրի ու ժողովրդի իսկական կացությունը, արձանագրենք լավն ու վատը, եզրակացություններ անենք ու խորհուրդներ տանք: Հարկ եղած դեպքում ուղղակի կսատարենք մարդկանց՝ առանձին կենսական ու անհետաձգելի գործերում:

Տիր- Մեծն Արամազդ, պարտքս եմ համարում ձեզ եւ ներկաներին հիշեցնել, որ Հայոց երկիրը, արդեն հազար յոթ հարյուր տարի, պետականորեն քրիստոնեական հավատքի մեջ է:

Արամազդ- Այո, եւ մենք պետք է առավելագույնս նրբանկատ լինենք մարդկանց հետ հարաբերվելիս… Մենք խորագին հարգանք կդրսեւորենք հայերի քրիստոնեական դավանանքի հանդեպ, բայց եւ սիրալիորեն կհիշեցնենք, որ մենք նրանց առաջին եւ հավատարիմ աստվածներն ենք եւ այցելել ենք՝ նրանց վերստին ծառայելու ամենաբարի մտադրությամբ…

Վահագն- Ես համոզված եմ, որ նրանք իրենց աստվածներին չեն մոռացել եւ սպասում են նրանց հերթական գալստյանը… Հայոց աստվածները արժանի չեն մոռացության:

Արամազդ- Այո, հազար տարի առաջ, մեր վերջին այցի ժամանակ, շատ ուրախություն տեսանք մարդկանց մոտ, երբ շփվում էինք նրանց հետ:

Մեհեկան- Իսկ եթե մեր այցելության օրերին Քրիստոսն էլ ժամանած լինի Հայաստա՞ն… Մենք իրար չենք խանգարի՞…

Արամազդ- Մեհեկան, սիրելիս, բարի աստվածները երբեք իրար չեն խանգարում… Իսկ եթե անհաճո իրավիճակ էլ ծագի, դու քո աստվածային ժպիտով կհարթես վերահաս անախորժությունը:

Մեհեկան- Անշուշտ, վսեմափայլ Արամազդ, անշուշտ:

Արամազդ- Եթե հարկ լինի, մենք քրիստոնյա հայորդիների հետ մոմեր կվառենք եկեղեցիներում… Մենք Հայաստան չենք գնում մեր կորսված

պաշտամունքը վերգտնելու կամ վերականգնելու համար, մենք գնում ենք ծառայության... Այնտեղ հիշաչարության ոչ մի նշույլ չպետք է առկայծի մեր վարքում ու խոսքում, պա՞րզ է, արամազդյան աստվածներ...

Աստվածներ- Պարզ է, պարզ է, Աստվածահայր...

Միհր- Մեծն Արամազդ, իսկ մենք ուշ-ուշ չե՞նք այցելում իրական Հայաստան... Գուցե՞ հազար տարվա ժամկետը փոխենք ու դարձնենք հինգ հարյուր տարի...

Նանե- Ճշմարիտ է. այսուհետ հինգ հարյուր տարին մեկ գնանք մեր հովանավորյալներին այցի, հայր Արամազդ: Խնդրում եմ՝ այդ առաջարկությունը նկատի առեք: Համոզված եմ՝ մենք հիմա ավելի շատ ենք պետք Հայոց աշխարհին:

Արամազդ- Ես մտավախություն ունեմ, որ մեր հաճախակի այցերը կարող են խանգարել մարդկանց՝ լինելու առավել ինքնավստահ ու պատասխանատու իրենց կյանքի ու երկրի համար... Բայց, այնուհանդերձ, ծանրութեթեւ անելու պահանջ կա այդտեղ, ուստի այդ հարցը մեր վերադարձից հետո կքննարկենք աստվածային մեծ խորհրդում, դուստր Նանե:

Արաց- Ես ուրիշ հարց ունեմ, մեծն Արամազդ, կարելի՞ է...

Արամազդ- Ասա, քաջարի Արաց:

Արաց- Ինչու՞ իմ հայր Հայկ Աղեղնավորը չկա պատվիրակների մեջ, մի՞թե նա արժանի չէ...

Արամազդ- Հայկ Աղեղնավորը ամենաարժանավոր մեկը կլիներ այս պատվիրակության մեջ, Արաց... Բայց ես չեմ կարող մեր աստվածային աշխարհը թողնել անպաշտպան եւ բոլոր զորեղ ու ղեկավար ուժերն առած մեկնել... Հայկ Աղեղնավորը իմ փոխանորդը կլինի մեր բացակայության օրերին. ես նրա հետ խոսել եմ այդ հարցով, եւ նա լիակատար ըմբռնումով է գնահատում իմ որոշումը: Հայկը չկա պատվիրակների մեջ, բայց մեզ հետ կլինեն նրա երեք զավակները՝ դու, Արաց, Տիրը եւ Մեհեկանը... Ի դեպ, մեր նախորդ առաքելությունում Աղեղնավորը մեզ հետ էր, բացակայում էր Վահագնը:

Արաց- Ես ձեր վճռի վրա կասկած չունեմ, մեծն Արամազդ, ուղղակի այսօր, երբ պատրաստվում էի գալ ձեզ մոտ, հորս տխրամած տեսա...

Արամազդ- Դա նրանից է, որ Հայկ Աղեղնավորը կարոտում է Հայաստանը... Մեր բոլոր աստվածներն ու դիցերն են կարոտում:

Տիր- Հայկ Աղեղնավորը տխրամած էր նաեւ այն պատճառով, որ գիշերվա իր երազում մորեխներ է տեսել...

Արաց- Իսկ դա ի՞նչ է նշանակում...

Տիր- Որ երկրում այս տարի քիչ բերք է լինելու: */Դադար/:*

Նանե- Կուզենայի, որ մեր պատվիրակության մեջ լիներ նաեւ իմ մեծ քույր, ոսկեծղի Անահիտը... Նրան Հայաստանում այնքա՜ն շատ են սիրում...

Արամազդ- Այո… Պիտի խոստովանեմ, որ դժվարությամբ համոզեցի Անահիտին՝ մնալ եւ Հայկ Աղեղնավորի հետ հսկել մեր աստվածային տիրույթները…

Նանե- Անահիտը այնքա՞ն սեր ու գորով ունի բաշխելու իր հազարավոր երկրպագուներին…

Արամազդ- Անահիտը դա կանի մեր մյուս այցի օրոք, կամ գուցե նրա ու Հայկ Աղեղնավորի համար առանձին ուղեւորություն սահմանեմ… */Դադար/:* Լավ, մեկնումից առաջ լսեք իմ վերջին հրահանգները. լուսափայլ ու վիշապաքաղ Վահագն, աննկատ կշրջես Հայոց զորաբանակներում, կզրուցես զինականների հետ՝ աստիճանավոր, թե շարքային, կլսես նրանց խոկումներն ու դիտողությունները, վարժանքներ կանես նրանց հետ, բայց առանց խենթության ու մեծամտության…

Վահագն- Բարի, մեծն Արամազդ:

Արամազդ- Միհր, կուղեկցես Վահագն աստծուն եւ կօգնես նրան ի կատար ածելու առաջադրանքը:

Միհր- Հրամանդ ի կատար, մեծն Արամազդ:

Արամազդ- Դիցուհի Նանե, Մեհեկանի հետ կշրջեք Հայոց ընտանիքներում, կծանոթանաք նրանց նիստուկացին, բացահայտեք, թե ինչ հոգս, ցավ ու ուրախություն ունեն հայ ընտանիքները, անհրաժեշտության դեպքում՝ սփոփեք ու անմիջական օգնություն ցուցաբերեք կարիքավորներին:

Նանե եւ Մեհեկան- Սիրով ի կատար կածենք ձեր առաջադրանքը, պայծառափայլ Արամազդ:

Արամազդ- Արաց, կուղեկցես դիցուհիներին, պաշտպանիր ու օգնիր նրանց շրջագայության ընթացքում:

Արաց- Հաճույքով ու ասպետաբար կանեմ ձեր հրահանգը, մեծն Արամազդ:

Արամազդ- Ես կհանդիպեմ երկրի առաջնորդ այրերի հետ, կշրջեմ ժողովրդի մեջ… Տիր, դու կուղեկցես ինձ եւ կգրառես կարեւոր փաստերն ու հիշատակումները… Դե, այդ ամենը՝ հակիրճ, աշխատիր տեսածիդ ու լսածիդ մեծ մասը մտապահել, որ հետագայում արձանագրես Մեծ մատյանում:

Տիր- Կջանամ լավագույնս ի կատար ածել ձեր հրահանգը, վսեմափայլ Արամազդ: Նաեւ կօգնեմ, որ դուք տեղյակ լինեք մարդկանց թաքուն մտքերին ու հակումներին, կվերծանեմ նրանց տեսած ու գալիք երազները…

Արամազդ- Զգույշ կլինես, Տիր, շատ չխորանաս մարդկանց… այդ ինչպե՞ս էիր ասում…

Տիր- Ենթագիտակցության մեջ:

Արամազդ- Այո, մարդկանց ենթագիտակցությունը հանգիստ թող: */Դադար/* Այսպես, ուրեմն, իմ սիրելի աստվածներ ու դիցեր, մենք Հայաստա-

նում կմնանք յոթ օր, ամեն օրվա վերջին կհավաքվենք Գառնի տաճարում:

Միհր- Հրաշալի՜…

Արամազդ- Այո, Միհրին դա շատ դուր կգա… Դուք չեք մոռացել, չէ՞, որ Գառնին կառուցվել է Միհրի պատվին…

Ներկաներ- Հիշում ենք, հիշում…

Արամազդ- Ուրեմն՝ ամեն օրվա երեկոյան հավաքվում ենք Գառնիում եւ ամփոփում տվյալ օրվա մեր կատարած գործն ու ստացած տպավորությունները. պա՞րզ է…

Ներկաներ- Պարզ է, մեծն Արամազդ, պարզ է…

Արամազդ- Դե, եթե ամեն ինչ պարզ է, հանգստանանք, որ վաղը առույգ հոգով ու մարմնով տեղաշարժվենք Հայոց աշխարհ… Բարի ճանապարհ ամենքիս:

Ներկաներ- Բարի ճանապարհ մեզ:

/Բացի Արամազդից, մյուսները միմյանց հետ ոգեշունչ զրուցելով՝ ցրվում են: Արամազդը մեկուսի ու ինքնամփոփ քայլում է սրահում, ապա անհանգիստ կանգնում/.

Արամազդ- Հայաստան գնալուց առաջ ինչու՞ եմ այսպես միշտ դողացնում… Ի՞նչ տարօրինակ սարսուռ է հոգիս կրակի մատնում…

ԱՐԱՐ 2

/Հրաձգարանի տարածքում Վահագնն ու Միհրը փորձում են նետաձգության պարապմունք անցկացնել մի խումբ զինվորականների հետ/:

Վահագն- Այո, մենք տեսանք՝ դուք շատ ուժեղ զինատեսակներ ունեք, մեր՝ աստվածներիս սպառազինության մեջ դրանք չկան, սակայն դա չի նշանակում, թե դուք պետք է անտեսեք մեր հին ու անդավաճան զենքերը՝ նետուաղեղը, սուրը, տեգը…

/Զինվորականները ծիծաղում են/:

Զինվորական 1- Դե մինչեւ մենք նետուաղեղը լարենք, անօդաչուները, «գրադներն» ու «սմերչները» մեզ հողին կհավասարեցնեն…

Զինվորական 2- Կամ մինչեւ հասցնենք սուրը հանել պատյանից, թշնամիները մեզ արկերի ու գնդակների տարափով կբնաջնջեն…

Միհր- Մենք չենք ասում, թե դուք հրաժարվեք ձեր արդիական զինավառությունից… Այո, հիմա էդ… հրետանին, հրասայլերը… էդ Սու-երն ու Միգ-երը ձեզ շատ-շատ են պետք: Մենք ասում ենք, որ ձեր զինատեսակները համալրեք նաեւ նետուաղեղով, սրով ու նիզակներով: Կլինեն ռազմական իրավիճակներ, որ հենց նման զենքերի կարիք կլինի, դրանք ձեզ լրացուցիչ ուժ կտան:

Զինվորական 3- Լավ, կարող եք մեզ մի քիչ նետաձգություն սովորեցնել, մենք մեր հանգստի այս կես ժամը դրան կնվիրենք:

Զինվորական 4- Կարծում եմ՝ նետերը կարելի է օգտագործել հատուկ առաջադրանքների ժամանակ, դրանք շատ ավելի անաղմուկ են, ի տարբերություն հրազենի:

/Մյուս զինվորականներն արձագանքում են՝ այո, այո/:

Վահագն- Հիմա ես ու Միհրը ցույց կտանք, թե ինչպես պետք է բռնել աղեղը, լարել նետը ու արձակել…

/Վահագն ու Միհրը սկսում են նետաձգության պարապմունքը: Զինվորականներին է մոտենում Գեներալը: Բոլորը զգաստ կանգնում են, բացի Վահագնից ու Միհրից/:

Գեներալ- Ի՞նչ է կատարվում ձեզ մոտ… ովքե՞ր են այս մարդիկ */ցույց է տալիս Վահագնին ու Միհրին/,* ի՞նչ գործ ունեն այստեղ… քաղաքացիական… տարօրինակ հագուստով… */Զարմանքով տնտղում է նրանց/:*

Զինվորական 3- Թույլ տվեք զեկուցել, պարոն գեներալ… Մենք հյուրեր ունենք… նախկին զինվորականներ պարոն Վահագնը եւ պարոն Միհրը: Նրանք ուզում են մեզ նետաձգություն սովորեցնել:

Գեներալ- Նետաձգությո՞ւն… */Դիմելով Վահագնին ու Միհրին/* Դուք երեւի նետաձգության գծով մարզիկներ եք, այո՞… թե՞ հնադարից եք հայտնվել մեզ մոտ */ինքնագոհ ծիծաղում է/:*

Վահագն */կամացուկ, Միհրին/*- Մարզիկը ի՞նչ է…

Միհր */կամացուկ/*- Չգիտեմ:

Վահագն- Արգո գեներալ, թույլ տվեք ներկայանալ՝ Վիշապաքաղ Վահագն աստված:

Միհր- Իսկ ես Միհրն եմ՝ արեւի աստվածը հայոց դիցարանում:

/Ներկաները ծիծաղում են/:

Զինվորական 3- Պարոն գեներալ, մեզ նույնպես այդպես ներկայացան… Մտածեցինք, թե ազգային հին հագուկապի սիրահար դերասաններ են, ուզում են մեզ մի քիչ զվարճացնել…

Զինվորական 2- Թաքնված տեսախցիկով…

Գեներալ */խիստ տոնով/*- Եվ դուք շարունակում եք գլուխ դնել նրանց հետ, առանց պարզելու, թե իրականում ովքեր են այս անկոչ մարդիկ… Իսկ եթե լրտեսնե՞ր են… որտե՞ղ է զեր զգոնությունը, լեյտենանտ… Սա ռազմական բազա՞ է, թե՞ թատրոն… */Մոտենում է Վահագնին ու Միհրին/:* Ասում եք, ուրեմն, աստվածնե՞ր եք…

Վահագն- Այո, արգո գեներալ: Հայոց աստվածներից ենք, եկել ենք անմիջականորեն ծանոթանալու մեր հայ զորականների կյանքին ու մարտական պատրաստությանը, եւ օգնության ձեռք մեկնել… ըստ անհրաժեշտության…

Միհր- Մենք միշտ հետեւում էինք ձեզ ու սատարում մեր աստվածային աշխարհից, բայց հիմա պարտավորություն ունենք մեր կենդանի ներկայությամբ լինել ձեր մեջ, իրազեկվել եւ քաջալերել ըստ ամենայնի…

Գեներալ */ծաղրական տոնով/*- Իրազեկվե՞լ ուրեմն… Եվ ձեր հավաքագրած տեղեկություններն ո՞ւմ պիտի փոխանցեք…

Վահագն- Մեծն Արամազդին:

Գեներալ- Ո՞ր երկրին կամ ո՞ւմ է ծառայում ձեր այդ… Արամազդը…

Միհր- Հայաստանին, միայն Հայաստանին:

Վահագն- Վաղուց մեր հայոց աստվածները հոգում են սոսկ հայ ազգի կարիքները:

Գեներալ- Ահա թե ինչ, դուք որոշել եք մեզ ձեռ առնել… Դուք գիտե՞ք, որ գտնվում եք ռազմական բազայում, որտեղ կողմնակի մարդկանց մուտքն արգելված է:

Վահագն- Մենք աստվածներ ենք, մեզ համար փակ դռներ չկան: Մենք ազատորեն հայտնվում ենք այնտեղ, որտեղ նպատակահարմար ենք գտնում:

Միհր- Մենք թույլտվություն չենք հայցում մեր շրջագայության ընթացքում, բայց այնտեղ, ուր մեզ անբարեհաճորեն են հյուրընկալում, մենք անաղմուկ հեռանում ենք…

Վահագն- Այո, կամքը ձերն է, գեներալ, եթե չեք հաճում, որ մենք այստեղ էլի մի որոշ ժամանակով մնանք ու զինվորականներին նետաձգություն ուսուցանենք, հիմա իսկ կհեռանանք…

Գեներալ- Սպասեք, դուք ուզում եք ճողոպրել, թույլ չենք տա: Մենք դեռ պիտի պարզենք, թե իրականում ովքեր եք դուք… */Դանդաղ պտտվում է հյուրերի շուրջ/:* Ընդհանրապես, կարծում եմ՝ դուք ճարպիկ խաբեբաներ եք, իսկ ավելի որոշակի՝ լրտեսներ. մենք դա կապացուցենք… լիարժեք հետաքննություն կանցկացնենք: Իսկ առայժմ պիտի կալանավորենք ձեզ… Լեյտենանտ, կալանավորեք այս… կեղծ աստվածներին ու տարեք առանձին մենախցերում պահեք, առայժմ…

/Զինվորականները մոտենում են, որ կալանավորեն Վահագնին ու Միհրին: Վերջիններս ձեռքի մի թեթեւ շարժումով նրանց ետ են վանում՝ այդպես ցուցադրելով իրենց գերբնական ուժը: Զինվորականները զարմացած նրանց են նայում/:

Վահագն- Խնդրում եմ՝ անտեղի ուժ չկիրառեք մեր հանդեպ, դա անօգուտ է: Մահկանացու շարքային մարդիկ չեն կարող վնասել աստվածներին… Գժտություն մի բորբոքեք ձեր աստվածների դեմ:

Գեներալ- Դուք կարծես թե փորձում եք մեզ համոզել ձեր խոսքերի իրավացիությունը… Բայց ես գիտեմ, որ մեր աստվածները վաղուց կապ չունեն մեր երկրի ու ժողովրդի հետ… նրանք վաղուց մեռած են:

Վահագն */կտրուկ/*- Ոչ, նրանք մեռած չեն, նրանցից երկուսը հիմա կանգնած են ձեր դիմաց եւ պատրաստ են ծառայելու ձեզ: Եվս հինգը այս պահին գտնվում են Հայաստանում:

Զինվորական 5- Անահիտ ու Նանե դիցուհիներն է՞լ են եկել...

Վահագն- Միայն Նանեն, Անահիտն ու Հայկ Աղեղնավորը կգլխավորեն մեր աստվածաշխարհի պաշտպանությունը, մինչեւ մեծն Արամազդի հետ մեր վերադարձը:

Միհր- Հիմա Հայաստանում են նաեւ Մեհեկան դիցուհին եւ քաջորդի Արացը, հայր Արամազդի ու մեր մասին էլ արդեն ասվեց: */Դադար/* Տեսնում եք, չէ՞, ամպամած եղանակ է, ուր որ է՝ անձրեւ կգա... Ուզո՞ւմ եք՝ արեւ լինի, տաք ու պայծառ եղանակ...

Զինվորականներ- Ուզո՞ւմ ենք... Դե արեւ տուր մեզ, Միհր... Արեւ-արեւ, եկ-եկ...

/Միհրը ձեռքի շրջանաձեւ մի շարժում է անում երկնքի ուղղությամբ, եւ հայտնվում է արեւը՝ լույս ու ջերմություն սփռելով ներկաների վրա: Զինվորականները ապշած նայում են մերթ վերեւ՝ արեւին, մերթ Միհրին. նրանք հիացական կրկնում են՝ «Հրաշք եղավ, հրաշք»/:

Վահագն- Տեսնո՞ւմ եք... Միհրը կարող է գործել նաեւ այլ հրաշքներ... Դե դա նրա սովորական գործն է:

Գեներալ */Վահագնին/*- Իսկ դու ի՞նչ կարող ես անել... զարմանալի... աստվածային...

Վահագն- Դե, եթե կամենում եք, ինչ-որ մի բան էլ ես ցույց տամ... */Կապարձից հանում է նետերի մի փունջ եւ նետում մեծ հեռավորության վրա գտնվող թիրախի ուղղությամբ; Ներկաները տեսնում են, որ բոլոր նետերը ցցվել են թիրախի կենտրոնում/:*

Զինվորականներ- Անհավատալի՜ է, ինչպիսի՜ դիպուկություն...

Գեներալ- Ընդամենն այդքա՞նը... Դրան կարելի է հասնել պարապելով-մարզվելով...

Վահագն- Լավ, ուրիշ բան ցույց տամ... */Մի պահ խորհում է անելիքը/:* Հիմա որոտ ու կայծակ կլինի... Գեներալ, ցույց տվեք, թե հեռվում երեւացող հրանոթներից որն է թշնամունը...

/Գեներալը հեռադիտակով զննում է հեռուն/:

Գեներալ- Այ ձախ կողմի վերջին բլրի վրա կանգնած հրանոթը թշնամական է... */Հեռադիտակը ուզում է տալ Վահագնին, որ վերջինս ճշտի թիրախը/:*

Վահագն- Ինձ հեռադիտակ պետք չէ, ես անզեն էլ եմ տեսնում հեռուները: */Վահագնը ձեռքերի շարժումներով երկնքում որոտ ու կայծակ է առաջացնում, ապա որսում է կայծակներից մեկը եւ նետում թշնամական հեռավոր հրանոթի վրա/:*

Գեներալ */հեռադիտակով զննում է հեռուն/*- Այո, թիրախը ոչնչացված է:

/Զինվորականները ցնծագին բացականչում են՝ «Կայծակով մոխրացրե՛ց հրանոթը… Վահա՛գնը, Վահա՛գնը… Ուռա՜…»/:

Գեներալ- Դու միշտ կարո՞ղ ես այդպես անել… Հիմա կարո՞ղ ես ոչնչացնել թշնամու բոլոր հրանոթներն ու հրասայլերը, որ կանգնած են սահմանի երկայնքով…

Վահագն- Ցավոք, ոչ, արգո գեներալ. մեր աստվածային օրենքները սահմանափակում են մեր իրավունքներն ու կարողությունները: Մենք այնքան զորություն ունենք, որ պաշտպանենք մեզ օտար աստվածներից եւ սատարենք ու քաջալերենք մեր հայորդիներին հայրենի երկրում…

Միհր- Մենք միշտ պաշտպանում ենք ձեզ՝ անկախ նրանից՝ մենք մեր աստվածային աշխարհու՞մ ենք, թե՞ բուն Հայաստանում…

Գեներալ- Այսինքն, եթե հիմա ռազմական գործողություններ սկսենք թշնամու դեմ, դուք կկռվե՞ք մեր կողմից…

Վահագն- Անշուշտ:

Միհր- Անպայման:

/Գեներալը մտորում է մի պահ, մեկուսանում ներկաներից, ձեռքի հեռախոսով զանգում է եւ կամացուկ խոսում. մեկ-մեկ լսվում են՝ նախագահ, հարձակում, աստվածներ բառերը: Վերջացնում է խոսակցությունը, մոտենում Վահագնին ու Միհրին/:

Գեներալ- Մենք մի տարի առաջ թշնամուն հարկադրված զիջել ենք մոտ հազար հեկտար տարածք, այն վերադարձնելու համար վաղը ռազմական գործողություն ենք ուզում ձեռնարկել. դուք պատրա՞ստ եք մեզ հետ մասնակցել հարձակմանը…

Վահագն- Ուրախությամբ միասին կկռվենք թշնամու դեմ, արգո գեներալ. հանուն մեծն Արամազդի, հանուն մեր սուրբ աստվածության, հանուն Հայոց աշխարհի:

Միհր- Երդվում ենք, որ վաղը այդ հազար հեկտարը նորից մերը կլինի, գեներալ:

Գեներալ- Հիանալի՜… Դա ինձ համար նաեւ պատվի հարց է, սիրելի աստվածներ… Իմ հրամանատարության ժամանակ է եղել տարածքային այդ կորուստը, երկու տարի առաջ… Ճիշտ է՝ այն ռազմավարական նշանակություն չունի, բայց բարոյահոգեբանական առումով նշանակալից դեր է խաղում մեզ համար: */Դադար/* Դե, մեզ հուզող հարցերը կարծես թե ճշտեցինք… Իսկ դուք հարցեր չունե՞ք…

Վահագն- Ունեմ, գեներալ. ես զինվորների մոտ ինքնավստահության ու ոգու պակաս եմ տեսնում, ի՞նչն է նրանց ընկճում… երկրում շա՞տ է անարդարությունը, այդ պատճառո՞վ են նրանք հաճախ երկմտանք ապրում ծառայության ժամանակ…

Գեներալ- Մենք հաղթական բանակ ունենք, Վիշապաքաղ Վահագն, բայց կասեմ, որ ինչ վիճակ տիրում է երկրում, գրեթե նույնը տեղ է գտնում բանակում, թեպետ մենք ջանք ենք թափում, որ բանակը զերծ մնա հասարակական ախտերից... Ավելին չեմ կարող ասել, աստվածներ, ես զինվորական եմ, ոչ թե քաղաքական գործիչ:

Միհր- Իսկ ի՞նչ տարբերություն կա զինվորի ու գեներալի մասնավոր կացությունների միջեւ... Այդ խզումը շա՞տ է մեծ...

Գեներալ- Դե, գեներալներն ու նրանց ընտանիքները համեմատաբար ավելի լավ պայմաններում են ապրում... ինչ խոսք... */Զինվորականները քմծիծաղում են: Նրանց դիմելով/.* Ի՞նչ, դուք շատ ավելի վա՞տ եք ապրում...

Զինվորական 1- Պարոն գեներալ, պիտի ասեմ, որ զինվորականներիս ընտանիքները դեռ շատ կարիքներ ունեն... բնակարան, ֆինանսավորում...

Գեներալ- Չհամարձակվես մեր պետության ջանքերն արհամարհել, սերժանտ... Վերջերս բարձրացրին ձեր ռոճիկները, չէ՞...

Զինվորական 2- Փոքր չափով բարձրացրին:

Գեներալ- Էլի կբարձրացնեն, համբերեք... Զգա՜ստ, թափթփված չպահեք ձեզ:

/Զինվորները զգաստ ձգվում են/:

Վահագն */դիմելով զինվորականներին/*- Իսկ ձեզ լա՞վ են սնում ծառայության ընթացքում...

Զինվորականներ- Դե, հա, էդ մեկից առանձնապես գանգատ չունենք... Հանդերձանքն էլ տեղն է:

Զինվորական 3- Էսօր կգաք մեզ հետ զինվորական ճաշարան՝ ընթրիքի, հյուրասիրում ենք:

Վահագն եւ Միհր- Շնորհակալ ենք, ձեզ հետ հաճույքով հաց կկիսենք:

Գեներալ- Հանգի՜ստ... Աստվածներ, երեկոյան դուք կլինեք իմ թանկագին հյուրերը. առանձին կզրուցենք ընթրիքի սեղանի շուրջ: Ուրիշ հարցեր չունե՞ք...

Վահագն- Առայժմ՝ ոչ:

Միհր- Ոչ:

Գեներալ- Իսկ դուք չե՞ք ուզում հարցնել, թե ինչու այսպես դժվարությամբ ենք հավատում, որ մեր աստվածները դեռ մեզ հետ են...

Վահագն- Մենք գիտենք պատճառները: Հիմա ջանում ենք, որ այդ հավատը շուտ վերականգնվի ձեր մեջ. դա ձեզ շատ է պետք, դա նաեւ մեզ է անչափ պետք:

Գեներալ- Մենք ձեզնից դժգոհելու լուրջ հիմքեր ունենք... բայց եկեք չբանավիճենք, սիրելի աստվածներ... Խնդրում եմ՝ դուք շարունակեք նե-

տաճգություն պարապել զինվորների հետ, իսկ ես գնամ շտաբ, որ մանրակրկիտ մշակեմ վաղվա հարձակման պլանը…

Վահագն- Գեներալ, պիտի ձեզ զգուշացնենք, որ մենք քարտեզներով չենք առաջնորդվում, մենք կռվում ենք մեր տեսածի ու զգացողության համաձայն:

Գեներալ- Հա՜, ձեզ մոտ ամեն ինչ աստվածատուր է, հասկացա… Լավ, համենայն դեպս, պիտի համադրենք մեր գործողությունները:

Վահագն- Կհամադրենք, գեներալ, անհոգ եղեք:

/Գեներալը հեռանում է: Վահագն ու Միհրը վերսկսում են նետաձգություն պարապել զինվորականների հետ/:

ԱՐԱՐ 3

/Գեղեցկության սրահում վարսահարդար Ռուզանը հաճախորդ կնոջ նոր սանրվածքն է կարգի բերում, իսկ մատնահարդար Նանարը զբաղված է իր հաճախորդով: Ներս են մտնում Նանեն, Մեհեկանը եւ Արացը/:

Նանե- Ողջո՛ւյն հայոց տիկնանց:

Մեհեկան եւ Արաց- Ողջո՛ւյն ձեզ, հայ քույրեր:

Ռուզան- Բարով եկաք… համեցեք, նստեք-սպասեք, շուտով վերջացնում եմ:

/Նանեն ու Մեհեկանը մոտենում եւ ուշադիր նայում են վարսահարդարուհու վարժ շարժումներին, իսկ Արացը զարմանքով հետեւում է հեռվից/:

Նանե- Դուք փոխում եք նրա սանրվա՞ծքը, ինչու՞…

Մեհեկան- Մի՞թե նա իր մշտական սանրվածքը չունի… */Մոտենում է մատնահարդարին/* Ինչու՞ եք ներկում նրա եղունգները, մի՞թե նրա եղունգները փայլուն չեն…

Նանար- Ավելի եմ գեղեցկացնում, վա՞տ է…

Մեհեկան- Դե, մենք միայն բնական գեղեցկությունն ենք գնահատում: Մենք չենք ուղղում աստվածների շնորհած պատկերները:

Նանե- Իսկ մի՞թե ամեն կին ի վիճակի չէ ինքնուրույն հարդարելու իրեն… դրա համար այցելում են ուրիշների՞ն… տարօրինակ է…

Ռուզան- Ի՞նչ տարօրինակ բան կա, ազիզ, ամեն կին հո չի կարող այ էսպիսի սիրուն սանրվածք անել */ցույց է տալիս իր հաճախորդին/:* Լալա, նրանց խոստովանիր, որ դու չես կարող նորաձեւ սանրվածք անել:

Լալա- Իրոք, չեմ կարող, Ռուզանը ճիշտ է ասում, դրա համար գալիս եմ գեղեցկության սրահ… հատկապես կարեւոր առիթներով… Վաղը Սերոբիկիս հանդեսն է դպրոցում… Լավ տեսքո՞վ չգնամ…

Նանե- Ուրեմն մենք եկել ենք գեղեցկության սրա՞հ…

Ռուզան- Այո, տիկին… Սպասեք, սա ի՞նչ թատրոն է… դուք չգիտե՞ք, հա՞, ուր եք եկել…

Նանե- Ոչ… Մենք քայլում էինք փողոցում, տեսանք հարդարման այս հետաքրքիր արարողությունը եւ ներս մտանք:

Ռուզան */դիմելով մատնահարդարին/-* Նանար, առավոտն ասի, չէ՞, որ անհասկանալի երազ եմ տեսել… Ահա, երազս ոնց որ թե աչքիս առաջ է… */Նանեին/* Իսկ դուք եւ ձեր ընկերուհին շատ օրիգինալ հագուստ եք կրում, ձեր ուղեկից տղամարդը՝ նույնպես */գլխով ցույց է տալիս Արացին/:* Դուք մոդելնե՞ր եք, նորաոճ հագու՞ստ եք գովազդում, թե՞ սովորական պճնամոլ-ցուցամոլներ եք…

Նանե- Ի՞նչ է նշանակում մոդել… Այդ բառը մեզ անծանոթ է, բացատրեք, խնդրեմ:

Ռուզան- Սրանք ոնց որ թե լուսնից են ընկել… Մոդելը նա է, քույրիկ, ով նորաձեւ հագուստ է ցույց տալիս մարդկանց, որպեսզի սրանք էդ հագուստից առնեն… ու հաճախ խաբվեն…

Նանե- Չէ-չէ, մենք մոդելներ չենք:

Մեհեկան- Մենք աստվածուհիներ ենք… հայոց աստվածուհիներ… Նա Նանե դիցուհին է, իսկ ես՝ Մեհեկանը:

Արաց */շտապ մոտենալով կանանց/-* Ես էլ Արացն եմ, Հայկ Աղեղնավորի որդին, Մեհեկանը քույրս է, դե, Նանե դիցուհու անունը գոնե պետք է լսած լինեք */հեռանում, կանգնում է նախկին տեղը/:*

Նանար- Ես գիտեմ, կարդացել եմ այդ մասին… Կա նաեւ Անահիտ դիցուհին:

Նանե- Այո, քույրս… Նա չեկավ մեզ հետ, Աստվածահայրը այդպես կարգադրեց:

Ռուզան- Ո՞վ կարգադրեց…

Մեհեկան- Մեծն Արամազդը, հայոց աստվածների առաջնորդը:

Ռուզան- Նրա մասին նույնպե՞ս կարդացել ես, Նանար…

Նանար- Հա, ճիշտ է ասում, Արամազդը մեր հայոց աստվածների մեծն է. Էդպես է գրված մեր դիցաբանությունում… Նանե անունն էլ տարածված ու սիրված է հայերիս մեջ, վիճակագրությունն է ասում:

Ռուզան- Կարդացած ջանիդ մեռնեմ, էդքան բան գիտես ու եկել սրանրա եղունգներն ես ներկում…

Նանար- Բա ի՞նչ անեմ, քանի տարի է՝ սպասում եմ, որ դպրոցում ինձ գոնե մի քանի ժամ տան, չեն տալիս, արդեն մոռանում եմ, որ մասնագիտությամբ ուսուցիչ եմ… Ամուսինս չի հասցնում, երեք երեխա ունեմ, նրանց կերակրել է պետք:

Ռուզան */դիմելով հյուրերին/-* Լավ, հիմա ինձ ասեք՝ իրականում ի՞նչ նպատակով եք մտել մեզ մոտ… Հո հարկայինից չե՞ք…

Մեհեկան- Հարկայինն ի՞նչ է…

Ռուզան- Լավ-լավ, տեսնում եմ՝ ամեն ինչից անգետ եք ձեւանում…

Նանե- Մենք չենք ձեւանում, մենք ուզում ենք մի քիչ զրուցել ձեզ հետ, իմանալ ձեր ցավն ու հետաքրքրությունները… Մեզ հարուստ տեղեկություններ են պետք ձեր մասին:

Ռուզան- Մեր գեղեցկության սրահի՞ մասին…

Նանե- Չէ, ընդհանրապես հայ կանանց, երեխաների, ընտանիքների… ժողովրդի մասին… Մեզ այդ տեղեկությունները պետք են, որպեսզի ճշտենք, թե այսուհետ որքան նպատակային ձեւով պիտի օգնենք ձեզ… Չէ՞ որ մենք՝ աստվածներս, ամեն ինչ չէ, որ գիտենք հանգամանորեն: Ուստի եկել ենք Հայաստան, որ անմիջականորեն իմանանք կացությունը:

Ռուզան- Որտեղի՞ց եք եկել…

Մեհեկան- Հայոց աստվածների աշխարհից:

Ռուզան- Օհո՜… եւ մենք միամտորեն պիտի հավատանք, որ դուք աստվածնե՞ր եք…

Նանե- Այո, Ռուզան քույրիկ. այդպես է, չէ՞, ձեր անունը… */Ռուզանը գլխով է անում/* Եթե հավատաք մեր աստվածությանը, այս պահին ձեր կյանքում կարող է մի լավ բան փոխվել… Մեհեկան քույր, կանանց պատվիր քո աստվածային ժպիտով:

Մեհեկան- Սիրով: */Նա մեկ առ մեկ ժպտում է սրահի կանանց, որոնք իրենց հերթին լայնորեն ու անկեղծորեն ժպտում են Մեհեկանին ու մյուս հյուրերին/:*

Նանե- Լավ, տեսնում եմ, որ հաղորդակցումը տեղի ունեցավ… Սիրելի կանայք, նաեւ ասեմ ձեզ, որ այս պահին մենք մարդ-աստվածներ ենք, արտաքնապես ձեզնից չենք տարբերվում, բայց էությամբ աստվածներն ենք… Հիշեցնեմ, որ ես իմաստության, ընտանիքի պահապան դիցուհին եմ, շատ բան գիտեմ կանանց ու երեխաների մասին… Այ, կարող եմ ասել, որ այն մատնահարդարվող կինը հղի է, եւ հինգ ամիս հետո նա կծննդաբերի երկու արու զավակ:

Մատնահարդարվող կին- Ի՞նչ… Ես երկու տղա զավա՞կ եմ ունենալու… Դա ճի՞շտ է, Նանե…

Նանե- Այո, միանգամայն ճշմարիտ եմ ասում:

Մատնահարդարվող կին- Տեր Աստված, ի՜նչ ուրախալի բան ասիր… Իսկ ես չէի ուզում գնալ ու նախապես ճշտել երեխաների սեռը: Ես արդեն երկու աղջիկ ունեմ, վախենում էի՝ նորից աղջիկներ լինեն, ամուսինս շատ կտխրեր… Էսօր նրանից մեծ մաղարիչ պիտի ուզեմ… Աստված քեզ պահապան, Նանե դիցուհի, դու երջանկացրիր ինձ:

Նանե- Իսկ որտե՞ղ եք նախածին երեխաների սեռը ճշտում… գուշակների մո՞տ…

/Սրահի կանայք ծիծաղում են/:

Նանար- Չէ՜, ժամանակակից սարքեր կան հիմա. գնում ենք ծննդատուն, եւ բժիշկը սոնոգրաֆիկ եղանակով տեսնում է մեր պտղի ինչ լինելը…

Նանե- Օ, ձեր այդ սարքերը սկսել են աստվածների գործն անել…

Ռուզան- Դե, եթե աստվածները անգործության են մատնված, ուրեմն պիտի գլխներիս ճարը տեսնենք…

Նանե- Կարո՞ղ եք մեզ վաղը տանել որեւէ ծննդատուն… Կուզենայինք տեսնել, թե այնտեղ ինչ պայմաններ կան:

Մատնահարդարվող կին- Սիրով կուղեկցեմ ձեզ այն ծննդատունը, որտեղ ես հաշվառված եմ… Դե, առիթը, կարծում եմ, կօգտագործեք եւ այնտեղ կվերացնեք որոշ… անցանկալի բարքեր…

Նանե- Լավ, կտեսնենք…

Մեհեկան */Ռուզանին/*- Իսկ դուք քանի՞ երեխա ունեք…

Ռուզան */տրտում/*- Ես երեխա չունեմ… Ամուսնացել ու բաժանվել եմ:

Նանե- Ինչու՞…

Ռուզան- Երեխա չունենալու պատճառով… Ես անպտուղ եմ, իսկ ամուսինս երեխա էր ուզում… շատ երեխաներ…

Նանե- Մի ընկճվիր, անպտղությունը վերջնական դատավճիռ չէ: */Ձեռքը դնում է Ռուզանի կրծքին, ապա դանդաղ իջեցնում որովայնին/:* Դուք կարող եք ձեր նախկին ամուսնուն հայտնել, որ մեկ ամսից պատրաստ եք երեխա ունենալ… Թող կրկին միանա ձեզ:

Ռուզան- Ճի՞շտ… հո չե՞ք կատակում…

Մեհեկան- Նանե դիցուհու յուրաքանչյուր խոսք աստվածային ճշմարտությամբ է ողողված:

Նանե */Ռուզանին/*- Այսօր իսկ հայտնեք ձեր տղամարդուն այդ կարեւոր լուրը:

Ռուզան- Ոնց եմ երախտապարտ ձեզ */փաթաթվում է Նանեին/:* Բայց ես չեմ ուզում իմ նախկին ամուսնու հետ միավորվել, նա արժանի չէ դրան… Նա ինձ անմիջապես լքեց, երբ բժիշկները հաստատեցին, որ ես դատապարտված եմ անպտղության… Նանե դիցուհի, թույլ տվեք՝ ինքս որոշեմ իմ ապագա երեխաների հորը…

Նանե- Մի կողմ թող հիշաչարությունը, դու կին ես:

Նանար- Դե, գիտե՞ք, Նանե քույրիկ, ժամանակակից կանայք հիմա նաեւ ինքնուրույն են վճիռներ կայացնում, երբ խոսքը վերաբերում է իրենց ճակատագրին ու պատվին…

Մեհեկան */ուրախացած/*- Արաց. լսո՞ւմ ես, կանայք ինքնուրույն վճիռներ են կայացնում… Քո կնոջը շատ չճնշե՜ս…

Արաց- Ես նրան չեմ ճնշում, Մեհեկան: Նա խոնարհաբար լսում է ինձ:

Նանե- Լավ, Մեհեկան, աստվածային մեր ընտանիքի խնդիրներն այստեղ չենք քննարկի:

Լալա- Դուք է՞լ ունեք խնդիրներ…

Նանե- Չկա ընտանիք առանց խնդրի, լինի աստվածային, թե մարդկային…

Լալա- Այո-այո, այդպես է, ցավոք…

Նանե- Իսկ դուք ի՞նչ խնդիր ունեք…

Լալա- Ես երկու երեխա ունեմ… Փոքրը՝ աղջիկս՝ Գոհարիկը… տառապում է ծանր աուտիզմով… Դուք գիտե՞ք՝ ինչ հիվանդություն է դա…

Նանե- Գիտեմ: Քանի՞ տարեկան է Գոհարիկը…

Լալա- Յոթ:

Նանե- Մենք վաղը կայցելենք նրան… Թեպետ մեծն Արամազդը վաղվա համար մեզ շատ հանձնարարություններ է տվել, կձգտենք անպայման այցելել Գոհարիկին… Կհասցնենք, չէ՞, Մեհեկան, Արաց…

Մեհեկան- Կհասցնենք, դիցուհի:

Արաց- Մենք սովորականից ավելի արագ կտեղաշարժվենք… կտեսնենք աղջկան:

Նանե- Բարի:

Լալա- Նա կբուժվի՞, դիցուհի:

Նանե- Կարծում եմ՝ շուտ կապաքինվի նա, բայց շտապ եզրահանգումներ չանենք. նախ, պետք է տեսնել ու շփվել դստերդ հետ:

Լալա- Շնորհակալ եմ, դիցուհի: Ես ձեզ համար կաղոթեմ:

Նանե */ժպտում է/-* Աղոթիր երեխայի համար… Տիկնայք, մեզ մի կարեւոր հարց է հետաքրքրում, խնդրում եմ՝ օգնեք՝ լավ հասկանանք. մենք արդեն երեք օր է՝ շրջում ենք Հայաստանում, եւ նկատել ենք, որ մեր հայ ընտանիքները հիմա հակված են քիչ երեխաներ ունենալու, ինչու՞… երբ կյանքը համեմատաբար այժմ ավելի բարվոք է… նախորդ հազարամյակի համեմատությամբ:

Նանար- Հազարամյակի՞… դա ի՞նչ համեմատություն է, դիցուհի. պիտի փաստել, թե կյանքը հիմա ինչպիսինն է, ասենք, մի երեսուն տարի առաջ եղածի համեմատությամբ:

Ռուզան- Այդ տեսանկյունից կյանքը հիմա այնքան էլ շատ չէ բարվոքացել, Նանե դիցուհի:

Նանար- Այ, եթե մենք շատ եկամուտներ ունենայինք, մենք ամուսնուս հետ ոչ թե երկու, այլ մի վեց-յոթ երեխա կունենայինք… Ես ու ամուսինս հիմա այնքան ենք վաստակում, որ հազիվ հերիքում է մեր չորս հոգանոց ընտանիքի գոյատեւությանը:

Նանե- Այսինքն՝ ուզում ես ասել, որ ձեր ընտանիքի հիմնական խնդիրը տնտեսական բնույթի՞ է… Եթե շատ միջոցներ ունենայիք, ավելի շատ երեխանե՞ր կունենայիք եւ ավելի երջանիկ կլինեի՞ք…

Նանար- Ես ձեզ հետ լիովի անկեղծ կլինեմ, Նանե դիցուհի… Մեր ընտանիքի գլխավոր խնդիրը նյութականը չէ:

/Աշխույժով ներս է մտնում մոտ յոթ տարեկան Անահիտը՝ դպրոցական պայուսակով/:

Անահիտ- Բարեւ ձեզ… Մայրի՛կ, 10 եմ ստացել…

Նանար- Ապրես, աղջիկս: */Գրկում եւ համբուրում է նրան/:* Ո՞ր առարկայից է էսօրվա գերազանցդ…

Անահիտ- Մայրենիից:

Նանար- Ապրես, դե հանիր պայուսակդ ու դիր՝ գիտես ուր… Էնտեղ՝ սառնարանում ուտելիք կա, վերցրու եւ մյուս սենյակում կեր:

Անահիտ- Լավ, մայրիկ: */Նրան են մոտենում Նանեն ու Մեհեկանը եւ գորովանքով սկսում շոյել աղջկան: Անահիտը զգուշորեն հետ է շարժվում/:*

Նանար- Մի վախեցիր, աղջիկս… Նրանք շատ բարի, իսկական աստվածուհիներ են: Նրանք քեզ սիրում են:

Նանե- Ի՞նչ է անունդ, սքանչելի աղջիկ:

Անահիտ- Անահիտ:

Նանե- Անահի՜տ… Քրոջս՝ մեծ դիցուհի Անահիտի անունն է… Դու գիտե՞ս, Անահիտ, որ անչափ գեղեցիկ ես…

Անահիտ- Այո: Ես մեր դասարանի ամենագեղեցիկ աղջիկն եմ:

/Ներկաները ծիծաղում են/:

Մեհեկան- Իսկ դու գիտե՞ս, որ երբ մեծանաս, բժշկուհի ես դառնալու…

Անահիտ */խիստ զարմացած/*- Դուք որտեղի՞ց գիտեք դա, մայրի՞կն է ասել…

Մեհեկան- Ոչ, նայեցի քեզ ու իմացա, որ քո մեջ բժշկի երազանք կա…

Անահիտ- Հա, բժիշկ կդառնամ ու առաջինը կբուժեմ մայրիկիս մեջքը… Նրա ողնաշարի ներքեւի հինգերորդ ու վեցերորդ ողերի տեղը միշտ ցավում է:

Նանե- Այո՞… Հապա մի տեսնենք, Նանար քույրիկ: */Շոշափում է Նանարի մեջքը/:* Հիմա չի ցավում… Դու երբ մեծանաս, ավելի լուրջ ցավեր կդարմանես, հա՞… */Համբուրում է Անահիտին/:*

Նանար- Հրա՜շք… մեջքիս ցավն անցավ… Շնորհակալ եմ, Նանե դիցուհի:

Անահիտ- Հա՞, մայրիկ… Ինչքա՜ն ուրախ եմ… */Գրկախառնվում է մոր հետ/:*

Նանար- Դե լավ, աղջիկս, գնա հացդ կեր, մի քիչ հանգստացիր ու զբաղվիր դասերովդ, մինչեւ գործը վերջացնեմ ու տուն գնանք: Իսկ մեր աստվածուհիներին չե՞ս ուզում հյուրասիրել…

Անահիտ- Իհարկե: */Բռնում է Նանեի ու Մեհեկանի ձեռքերը/:* Եկեք գնանք հաց ուտելու, սոված չե՞ք…

/Նանեն ու Մեհեկանը ծիծաղում են/:

Նանե- Շնորհակալ ենք, աղջիկս, մենք սոված չենք, գնա եւ մայրիկի ասածներն արա:

Անահիտ- Դե լավ, ոնց կուզեք: */Հեռանում է խորքի սենյակ: Այս արարի ընթացքում Անահիտը մեկ-մեկ երեւում է տեսադաշտում՝ գիրքը ձեռքին, ունկ դնելով կանանց զրույցին/:*

Նանե- Հրաշք աղջիկ ունեք, Նանար քույրիկ, մեր օրհնությունը միշտ կլինի նրա հետ:

Նանար- Շնորհակալ եմ, Նանե դիցուհի: Մենք արդեն զգում ենք ձեր աստվածային ջերմությունը:

Նանե- Լավ, շարունակենք կիսատ մնացած մեր խոսակցությունը… Դուք ընտանեկան ի՞նչ ծանր մտահոգություն ունեք, ասեք, կջանանք օգնել ձեզ, եթե այդ խնդիրը մեր զորության ու իրավասության սահմաններում է:

Նանար */տրտմությամբ/*- Ամուսինս տարված է ուրիշով, նրան թվում է, թե ես չգիտեմ այդ մասին… Մեր ընտանիքում հիմա փոխադարձ սեր չկա: Մենք, ասես, համատեղ աշխատանքի մեջ ներգրավված օտար վարձակալներ ենք… Կարո՞ղ եք այնպես անել, որ ամուսինս նախկինի պես սիրի միայն ինձ եւ մեր ընտանիքում կրկին համերաշխությունն ու սերը իշխեն…

Նանե- Իսկ դու շարունակու՞մ ես սիրել քո ամուսնուն…

Նանար- Այո:

Նանե- Այդ դեպքում, կարծում եմ, հնարավոր է վերադարձնել կորցրած սիրո երջանկությունը:

Նանար- Դա կանե՞ք մեզ համար…

/Ներս է մտնում գեղեցկության սրահի սեփականատեր տղամարդը/:

Սեփականատեր- Բարեւ ձեզ… Էս ի՞նչ խայտաբղետ բազմություն է հավաքվել մեզ մոտ… */Ձննում է Նանեին, Մեհեկանին, Արացին, ապա նորից դիցուհիներին/:* Ինչ էլ հրաշք գեղեցկություն ունեք, քույրերս… Սպասում եք հարդարվելու՞, թե՞… ինձ եք սպասում… Դե ես էլ իմ հերթին գեղեցիկ տղամարդ եմ, չէ՞… Միանգամից ասեմ, որ ձեզնից ոչ մեկը ամուսնացած չէ, իսկ մեր այս ախպերը */ցույց տալով Արացին/* ձեր թիկնապահն է…

Արաց- Ես մի հասարակ թիկնապահ չեմ, տիար… Ես Հայկ Աղեղնավորի որդին եմ, ուղեկցում եմ Նանե աստվածուհուն եւ Մեհեկան դիցուհուն՝ քրոջս:

Սեփականատեր- Ինչե՜ր եք ասում… աստվածուհի՜, դիցուհի՜… աղեղնավո՜ր… Ինչպիսի՜ հումոր…

Ռուզան- Գագո ջան, խնդրում եմ՝ բարեկրթությունը չխախտես, մենք շատ թանկագին հյուրեր ունենք. նրանք մեր աստվածներն են:

Սեփականատեր- Աստվածնե՞ր… Ռուզան, տեսնում եմ՝ քո խելքը նրանք արդեն հասցրել են ուտել…

Ռուզան- Ոչ-ոչ, Գագո ջան, ճիշտ եմ ասում, ինքդ էլ արագ կհամոզվես:

Սեփականատեր- Ուրեմն դուք էսպես հավաքվել եւ ուզում եք ինձ ֆոռացնել, հա՞… */Կրկին մոտենում է Նանեին ու Մեհեկանին/:* Իսկ գուցե այս նանարիկները… նրանցից են, հը՞… ինձ նման տղամարդու են ման գալիս, որը եւ փող ունի, եւ տղամարդկային զիլ գործիք… Լավ, երկուսիդ երեկոյան հրավիրում եմ իմ ռեստորան, քեֆ կանենք, էնտեղ էլ կգիշերեք ինձ հետ… Իսկ մեր ախպերը կհսկի մեր անվտանգությունը:

/Արացը արագ մոտենում է սեփականատիրոջը, բռնում գոտկատեղից եւ թեթեւ մի շարժումով նրան վանում դեպի սրահի մուտքը/:

Արաց- Քեզ զգուշացրին, որ բարեկիրթ լինես:

Սեփականատեր */հավաքելով իրեն/*- Թե չէ՝ ի՞նչ, ինձ վռնդելու՞ ես իմ օբյեկտից…

Արաց- Եթե կարիք լինի, այո… անկիրթ ու ինքնահավան տիար: Մեր եւ մյուս կանանց ապահովությունն ու պատիվը հիմա պահանջում են, որ ես խիստ վարվեմ ձեզ հետ: */Բռնում է սեփականատիրոջ ձեռքից եւ պտտեցնում իր շուրջ: Կանայք ծիծաղում են/:*

Սեփականատեր */մի կերպ ազատվելով Արացի ձեռքից/*- Դե թող…Դե դու ինձ երեխայի տեղ դրիր… */Ծունչը տեղը բերելով/* Հապա մի դուրս կորեք իմ շենքից… */Մոտենում է, որ հրելով դուրս հանի Նանեին ու Մեհեկանին, բայց կես քայլի վրա դեմ է առնում Արացի պարզված ուղղաձիգ ձեռնափին ու ետ շպրտվում/:*

Արաց- Ձեզ հանգիստ պահեք, տիար, ասացին… Եվ ներողություն խնդրեք մեր աստվածուհիներից՝ նրանց վերաբերյալ վիրավորական արտահայտվելու համար:

Սեփականատեր- Լավ-լավ, հասկացա… Ներողություն, աստվածուհինե՛ր… */Արացին/* Դու շատ ուժեղ ես… Ոնց որ մեջդ դիվային էներգիա կա…

Արաց- Աստվածային էներգիա:

Սեփականատեր- Թող ձեր ասածը լինի: */Ինքնիրեն/* Ինձ լրիվ ապուշի տեղ դրին… */Արացին/* Ես հիմա կգնամ… ներող եղեք: */Մոտենում է Ռուզանին/* Ռուզան, գիտես՝ ինչի համար եմ եկել… վարձը տուր՝ գնամ…

Ռուզան- Գագո ջան, չի՞ լինի՝ մի երկու օրից տամ, էս շաբաթ քիչ գործ է եղել…

Սեփականատեր- Միշտ էդպես ես ասում, Ռուզան, բայց երբ մտնում եմ էստեղ, լիքը այցելուներ եմ տեսնում… Լավ, բայց գիտես, թե էդ ուշացումներդ ինչով պիտի հատուցես, չմոռանա՛ս… */Ձեռքով թեթեւակի հարվածում է Ռուզանի թիկունքին/:*

Ռուզան- Ես ոչինչ չեմ մոռանում… Բայց էդ սեքսիզմիդ վերջ տուր, հա՞…

Սեփականատեր- Համա ասիր, հա՜... սեքսիզմ. դուրըս է գալիս էդ բառը... Դե լավ, ես գնացի, հաջողություն ձեզ... աստվածներ եւ հարդարվողներ: */Խեթ-խեթ ետ նայելով՝ դուրս է գնում/:*

Նանե- Տղամարդիկ շա՞տ են ոտնձգություններ անում կանանց հանդեպ...

Ռուզան- Շատ, դիցուհի, հատկապես սանձարձակ են իշխանություն ու փող ունեցողները: Դե, անկիրթներ էլ կան:

Ռուզան- Նանե աստվածուհի, չե՞ք կարող նրան պատժել */գլխով ցույց է տալիս հեռացած սեփականատիրոջը/:*

Նանե- Մենք սովորաբար ձեռնպահ ենք մնում մարդկային, միջանձնային նեղ հարաբերություններին միջամտելուց... Տեղիք մի տուր, Ռուզան քույրիկ, որ նա կամ որեւէ այլ մեկը բռնանա քո կամքին. կանացի պատիվը անչափ մեծ գանձ է: Բայց որպեսզի քո սիրտը մի փոքր ուրախանա, կարող եմ այնպես անել, որ... ասենք, ձեր վերակացուները գնան եւ ստուգեն նրա բոլոր գործերը եւ պատժեն ապօրինությունների համար... Տեսա, որ այդ մարդը անօրենությանը հակված տեսակից է:

Ռուզան- Արդար կլինի, էդպես արեք, Նանե դիցուհի, թող հարկայինը գնա եւ մեծ տույժ ու տուգանքներ դնի էդ լպիրշ Գագոյի բիզնեսի վրա... Ասում են՝ նրան մինչեւ հիմա ձեռք տվող չի եղել... Արտոնյա՜լ է: Մենք հարկ տալիս ենք, իսկ էդ գողը չտա՞...

Նանե- Լավ, Ռուզան, պայմանավորվեցինք: Մենք հիմա պետք է գնանք, դեռ շատ անելիք ունենք այսօր:

Արաց- Այո, Նանե դիցուհի, մենք այսօր դեռ հինգ քաղաք ու գյուղ պետք է մտնենք...

Նանե- Արաց, ծիրանագույն մետաքս նվիրիր կանանց:

Արաց- Սիրով, Նանե դիցուհի: */Ուսապարկից հանում է կտորի մի փաթեթ եւ դնում Ռուզանի առջեւ/:* Խնդրում եմ՝ այս չքնաղ մետաքսը բաժանեք չորսիդ միջեւ... մեր գնալուց հետո:

Կանայք – Շնորհակա՜լ ենք, եղբայր Արաց:

Արաց */Ռուզանին/*- Ձեզ շատ կսազի մետաքսյա զգեստը, Ռուզան քույրիկ:

Ռուզան- Երեւում է՝ դուք հետաքրքիր ճաշակ ունեք, եղբայր Արաց: */Դիմում է Նանեին ու Մեհեկանին/* Իսկ դուք չէի՞ք ցանկանա՝ մի փոքր հարդարվել մեզ մոտ՝ նոր գնալ... թեկուզ հանուն ժամանակավոր նորաձեւության...

Մեհեկան */ուրախացած/*- Ես ուզում եմ... Նանե դիցուհի, ի՞նչ կլինի՝ թողեք սանրվածքս մի փոքր փոխեմ...

Նանե- Իսկ ի՞նչ կասի Արացը՝ եղբայրդ...

Արաց- Կասեմ, որ չի կարելի, մենք ավանդապաշտ աստվածներ ենք… հետո էլ մեծն Արամազդը կզայրանա:

Մեհեկան- Դե, շատ չեմ փոխվի, ես նոր սանրվածքը կպահեմ միայն Հայաստանում գտնվելու օրերին, չորս օր մնաց միայն, չէ՞… Վերադարձին էլի նույն սանրվածքով կլինեմ:

Նանե- Լավ, Արաց, թույլ տանք՝ Մեհեկանը մի փոքր թարմացնի իր սանրվածքը, թող նա մի քիչ նորաձեւ լինի Հայաստանում: Ես կմեղմեմ Աստվածահոր զայրույթը… Մեհեկան, դու նրա աչքին կերեւաս գլխաշոր շղարշով:

Մեհեկան- Լավ, դիցուհի: Այնպես կանեմ, որ մեծն Արամազդը չնկատի: Արաց, չմատնես ինձ:

Արաց- Լավ, քույրիկ:

/Լալան վեր է կենում վարսահարդարի բազկաթոռից եւ տեղը զիջում Մեհեկանին: Ռուզանը սկսում է փոխել վերջինիս սանրվածքը/:

Նանար- Իսկ դուք, դիցուհի Նանե, գուցե՞ ներկեմ ձեր եղունգները…

Մատնահարդարվող կին */վեր կենալով աթոռից/*- Այո-այո, մի անգամ գոնե ձեր կյանքում լաքապատեք ձեր եղունգները…

Նանե- Ոչ-ոչ, ես ցանկություն չունեմ արտաքինս փոխելու, թեկուզ ժամանակավորապես եւ եղունգների չափով… Ես դրա համար երեւի այն տարիքին չեմ այլեւս:

Նանար- Իսկ դուք քանի՞ տարեկան եք…

Նանե- Դե, մեզ մոտ աստվածային ժամանակով ենք չափում դարաշրջանները… հավերժության սանդղակով… Մեր տոմարն ուրիշ է: Դա ձեզ համար ընկալելի չէ: */Մոտենալով Նանարին/* Ես չեմ մոռացել ձեր խնդրանքը. վաղը կհանդիպենք ձեր ընտանիքում. այնպես արեք, որ ձեր ամուսինը ներկա լինի:

Նանար */ուրախացած/*- Անպայման, Նանե դիցուհի… Ես ձեզ կհյուրասիրեմ նոան գինիով, ես եմ պատրաստել: Նաեւ իմ գործած բրդյա գունագեղ շալերից կնվիրեմ ձեզ, Մեհեկանին… Արացին էլ սվիտեր կնվիրեմ, իմ գործածը:

Նանե */ժպտալով/*- Ինչե՜ր չես անի հանուն սիրո…

Նանար- Իսկ դուք ու՞մ եք սիրում ձեր աստվածային աշխարհում…

Նանե- Դա մեծ գաղտնիք է, քույր, եթե ես հանկարծ բարձրաձայն արտասանեմ այդ անունը, մեր աշխարհները կցնցվեն ուժգին…

Մեհեկան */հայելու դեմ զննելով իրեն/*- Սքանչելի՜ է… Նանե դիցուհի, Արաց, նայեք՝ ինչքա՜ն հրապուրիչ տեսք ունեմ նոր սանրվածքով…

Ռուզան- Իրոք… մեր հայ տղամարդիկ անվարան սիրահարվելու են ձեզ, Մեհեկան:

Մեհեկան- Թող սիրահարվեն… վնաս չկա:

Նանե- Դե լավ, հերիք է շաղակրատես, քույր Մեհեկան, գնացինք:

/Նանեն, Մեհեկանը եւ Արացը ողջագուրվում են մյուսների հետ/:

Նանե, Մեհեկան եւ Արաց- Մինչ նոր հանդիպում:

/Կանայք արձագանքում են՝ «Մինչ նոր հանդիպում, աստվածներ»: Նրանք հիացական հայացքներով ճանապարհում են աստվածներին: Ելքից առաջ Նանեն դիմում է Արացին՝ միայն աստվածային եռյակի համար լսելի/.

Նանե- Արաց, նկատեցի, որ աչքդ չէիր կտրում վարսահարդար Ռուզանից. նա քեզ շա՞տ է դուր եկել…

Արաց- Այո, դիցուհի:

Նանե- Ուրեմն դու սիրո ճանապարհին ես… Սիրտդ մահկանացու կնոջ է կպել: Բայց ես այդ հարցում քեզ համար ոչինչ անել չեմ կարող:

/Դուրս են գալիս/:

ԱՐԱՐ 4

/Նախագահն իր առանձնասենյակում տեսակապով խոսում է կնոջ հետ/:

Նախագահ- Կնիկ, տեսնո՞ւմ ես՝ ինչ հոյակապ հյուրանոցում եք տեղավորված… Իմ ընկերների նվերն է… Ու՞ր են բա երեխեքը, չեն երեւում… Զգուշացրու, որ չափի մեջ լինեն, գումարներ շատ չշռայլեն էդ խանութներում… Հետեւիր, որ Շահենը կազինո չգնա… թող աչքի չընկնեն… Մայամիի իրավապահները սուր աչք ունեն… Հա, մի երեք-չորս օրից կմիանամ ձեզ, մի երկու խորհրդակցություն ու պաշտոնական հանդիպում ունեմ նախատեսված, ավարտեմ՝ կգամ… Հա, ավստրալացի էն գործարարը եկել է, երեկոյան Զովունիում հանդիպելու ենք…

/Ներս են մտնում Արամազդն ու Տիրը՝ յուրաքանչյուրը ձեռքերից բռնած բերելով երկուական անվտանգության աշխատակցի. վերջիններս թուլակամորեն ու հնազանդ հետեւում են իրենց տանողներին: Նախագահն անակնկալից վեր է թռչում/:

Նախագահ */վախեցած ու շփոթահար/-* Էս ի՞նչ է կատարվում… Սա ի՞նչ ներխուժում է…

Արամազդ- Հանգի՜ստ, տիար, հանգի՜ստ… Մենք ձեր բարի հյուրերն ենք: Պարզապես ձեր պահապանները չհասկացան մեզ եւ կամեցան բռնություն գործադրել մեր հանդեպ… Դե ստիպված եղանք նրանց մի փոքր կարգի հրավիրել… Ես ճի՞շտ եմ ներկայացնում միջադեպը, պահնորդներ… */Անվտանգության աշխատակիցները գլխով են անում/:*

Անվտանգության աշխատակից 1 */կարկամելով/-* Պարոն նախագահ, մենք փորձեցինք կանխել նրանց մուտքը պալատ, ապա՝ ձեր առանձնա-

սենյակ... չստացվեց... Նրանք ասես մեզ կաթվածահար արին...

Արամազդ- Դե մենք մեր ինքնապաշտպանության ձեւերն ունենք... Հիմա եթե ձեզ բաց թողնենք, դուք հանգիստ կվերադառնա՞ք ձեր տեղերը... Մենք ձեր առաջնորդին ոչ մի վնաս չենք պատճառի:

Տիր- Ընդհակառակը, նրան բարիք կմատուցենք:

/Անվտանգության աշխատակիցները գլխով են անում/:

Արամազդ- Դե, հիմա ազատ եք, գնացեք ձեր գործին, իսկ մենք ձեր մեծավորի հետ կզրուցենք: */Բաց է թողնում անվտանգության աշխատակիցներին: Նույնը անում է Տիրը/:*

Տիր- Ներող եղեք... մենք հակված չէինք կոպտության:

Անվտանգության աշխատակից 2 */կմկմալով/*- Պարոն նախագահ... մենք անզոր էինք նրանց դեմ... Ձեր թույլտվությամբ գնանք...

Նախագահ */զայրացած/*- Գնացեք, ապիկարներ, իբր որ մնաք՝ ինչ պիտի անեք... Չորսով երկուսի դեմը չեք կարող առնել: Հեռացեք, ես ձեզ հետ հետո կխոսեմ: */Անվտանգության աշխատակիցները մոտենում են ելքին/:* Սպասեք... */Այնի մեջ շփոթմունք ու վախ կա/:* Գուցե ձեր կարիքը դեռ զգացվի...

/Անվտանգության աշխատակիցները զգաստ կանգնում են դռան մոտ/:

Արամազդ- Լավ, ինչպես կամենաք. թող նրանք էլ ունկնդիր լինեն մեր զրույցին: */Դիմելով նախագահին/* Այսպիսով՝ դուք հայ ազգի առաջնորդն եք, այո՞...

Նախագահ- Դե մի փոքր չափազանցված եք ասում... Ավելի ճիշտ՝ ես Հայաստանի Հանրապետության նախագահն եմ, ընտրյա՛լ նախագահը... 80 տոկոս ձայներ ստացա:

Արամազդ- Տիր, «նախագահ» բառը կա՞ մեր մատենագրության մեջ...

Տիր- Հազվագյուտ բառ է մեզ համար, մեծ ու արի Արամազդ. գրեթե գործածական չէ: */Նոթատետրում գրառում է անում/:*

Արամազդ- Լա՜վ, թող իրենց ուզածով լինի՝ նախագա՜հ...

Նախագահ- Իսկ դուք ովքե՞ր եք... հո ծպտված ահաբեկիչներ չե՞ք...

/Արամազդն ու Տիրը ծիծաղում են/:

Արամազդ- Արդեն չորս օր է՝ մենք պարբերաբար լսում ենք այդ բառը՝ ահաբեկիչներ... ահաբեկչություն... Դա մեծ վտանգ է ներկայացնում նաեւ այստե՞ղ...

Նախագահ- Ոչ-ոչ, ահաբեկչությունը Հայաստանում տեղ չունի, թույլ չեմ տա... Բայց Աստված գիտի, թե ինչ տխուր անակնկալներ կարող են պատահել...

Արամազդ- Լավ, ներկայանանք... Ես Արամազդն եմ՝ Հայոց գերագույն աստվածը, իսկ նա */ցույց է տալիս Տիրին/* Տիրն է՝ Հայկ Աղեղնավորի ուստրը, իմ ատենադպիրն ու սուրհանդակը: Նա նաեւ գիտությունների ու

արվեստների հովանավոր աստվածն է: Տիրը գրանցում է մարդկանց չար ու բարի գործերը, մեկնում է նրանց երազները... Օրինակ, ի՞նչ երազ եք տեսել անցած գիշեր, տիար նախագահ, Տիրը հիմա կմեկնի այն:

Նախագահ- Երա՞զ... ըմմմ... Ես մի կրկնվող երազ ունեմ, գիշերը նորից տեսա... Մի խումբ մարդիկ հիացական բացականչություններով ինձ բարձրացնում են ձեռքերի վրա, տանում ինչ-որ դղյակի ուղղությամբ, բայց ճանապարհին մի խոշոր անգղ է իջնում եւ սկսում կտցահարել ինձ... Ի՞նչ է դա նշանակում...

Տիր- Դա նախազգուշական պարզ երազ է. նշանակում է, որ եթե դուք շարունակեք խաբել ժողովրդին ու մոլորեցնել նրան ձեր սին ճառերով, ապա ձեզ փառաբանող նույն այդ մարդիկ ձեզ կբզկտեն... Մի խաբեք ժողովրդին, չի կարելի:

Արամազդ- Այո, չի կարելի խաբել ոչ ժողովրդին, ոչ էլ երեխային, որ կարող է ապագայում դառնալ այս երկրի առաջնորդը... նախագա՜հը...

Նախագահ- Հասկացա, ես էլ էի մոտավորապես այդպես կռահում դաժան այդ երազի իմաստը... Լավ, գուցե՞ ավելի լրջորեն ներկայացնեք ձեր ով լինելը... Թե չէ միանգամից՝ աստվածնե՜ր...

Արամազդ- Այդպես էլ կա, տիար նախագահ, զուր ժամանակ մի կորցրեք՝ վիճարկելու մեր ինքնությունը; Հակիրճ ավելացնեմ հետեւյալը. հազար տարին մեկ Հայոց աստվածները այցելում են բուն Հայաստան՝ մոտիկից տեսնելու, թե կյանքն այստեղ ինչ հունով է ընթանում... Ի դեպ, սա իմ յոթերորդ գալուստն է Հայաստան, իսկ Տիրը եկել է...

Տիր- Չորրորդ անգամ, Աստվածահայր...

Արամազդ- Այո... Հիմա յոթ աստվածներով Հայաստանում ենք, մենք մի շաբաթ կլինենք այստեղ:

Տիր- Ավա՜ղ, ընդամենը մի շաբաթ...

Արամազդ- Այո՜... Հիմա Հայաստանի տարբեր բնակավայրերում ու օջախներում մեր հայորդիների հետ իրենց հույժ նպատակային հանդիպումներն են անցկացնում Նանե եւ Մեհեկան դիցուհիները, Վահագն, Միհր եւ Արաց աստվածները... Դե, մենք էլ որոշեցինք այսօր հյուրընկալվել ձեզ մոտ, տիար նախագահ. դեմ չե՞ք... Կարծում եմ՝ մենք կարեւոր խոսելիք ունենք:

Նախագահ- Դե, դուք իսկական կատակերգություն եք ուզում սարքել իմ առանձնասենյակում... Բայց ո՞նց կարողացաք հաղթահարել իմ ու նստավայրիս անվտանգության պատնեշը */զայրացած նայում է անվտանգության աշխատակիցների կողմը եւ գոռում նրանց վրա/.* դու՜րս կորեք էստեղից, անպիտաններ... */Անվտանգության աշխատակիցները դուրս են գալիս/:* Հիմա էլ պիտի էս թամաշան տեսնեն ու հետո ինձ ծաղրի առարկա դարձնեն ողջ հանրապետությունում...

Արամազդ- Իզուր մի զայրացեք մարդկանց վրա, նախագահ, նրանք որեւէ մեղք չունեն, մենք աստվածներ ենք, եւ մենք ազատորեն մտնում ենք այնտեղ, ուր մեզ պետք է:

Տիր- Այո, տիար նախագահ, մեզ ոչ ոք չի կարող արգելակել. բարեբախտաբար դեռ այդպես է:

Արամազդ- Պատկերացնու՞մ եք՝ աստված եք, բայց չեք կարող մուտք գործել ինչ-որ պալատի ինչ-որ առանձնասենյակ… Դե այդ դեպքում ինձնից էլ ի՞նչ Արամազդ…

Նախագահ- Գուցե միջազգային դիտորդնե՞ր եք… ինչ-որ էկզոտիկ երկրից…

Արամազդ- Էկզոտիկն ի՞նչ է, Տիր…

Տիր- Այսինքն՝ տարաշխարհիկ, մեծն Արամազդ:

Արամազդ */ահեղ ձայնով/*- Երդվում եմ արամազդյան իմ բոլոր աստվածներով՝ վերջ տվեք ձեր անհավատությանը, նախագահ, եւ անցեք մեզ հետ լուրջ խոսակցության, թե չէ դուք… պաշտոնանկ կարվեք անհապաղ…

Նախագահ */հեգնանքով/*- Դու՞ք եք ինձ պաշտոնանկ անողը…

Արամազդ- Ոչ, նրանք, ովքեր ձեզ ընտրել են… Հիմա ես կարող եմ ժողովրդին ձեր պալատի շուրջ հավաքել տալ, որ նրանք պահանջեն քո հրաժարականը…

Նախագահ */վախեցած/*- Ոչ-ոչ, պետք չէ. ես արդեն հավատում եմ, որ դուք աստվածներ եք… Հիմա ձեզ կհյուրասիրենք… սուրճով… հետո կտեսնենք…

Արամազդ- Մենք սուրճ չենք խմում:

Տիր- Մենք ալպիական խոտաբույսերով թեյ ենք խմում միայն:

Նախագահ- Հիմա հանձնարարեմ, որ գտնեն այդ ալպիական խոտաբույսերից ու թեյ պատրաստեն ձեզ համար:

Արամազդ- Սպասեք, նախագահ, դուք անընդհատ փորձում եք խույս տալ ձեր բուն անելիքից, դուք իրավիճակին համարժեք չեք գործում:

Նախագահ- Բայց ինձ ասում են, որ ես ամենադինամիկ նախագահն եմ նախորդների համեմատությամբ:

Արամազդ- Դինամիկն ի՞նչ է, Տիր…

Տիր- Այսինքն՝ գործուն… շարժուն … դրա նման մի բան */գրառում է անում նոթատետրում/:*

Արամազդ- Ծա՜տ շարժունն է… Տիար նախագահ, մեր աստվածային բարեկրթությունը պահանջում է, որ մենք ոչ մի բռնություն չգործադրենք ձեր հանդեպ, ուստի խնդրում ենք՝ բարեհաճ լինել մեր նկատմամբ եւ սիրահոժար աստվածներիս փոխանցել այն տեղեկությունները, որ մեզ կհետաքրքրեն…

Նախագահ- Դե... եթե պնդում եք, որ դուք Հայոց գերագույն աստված Արամազդն եք, ուրեմն համեցեք ու նստեք իմ բազկաթոռին, իսկ դուք, Տիր ատենադպիր, նստեք այն բազկաթոռին, ես կտեղավորվեմ այստեղ */նստում է գրասեղանի դիմաց դրված բազկաթոռներից մեկին/:*

Արամազդ- Ծոյված ենք, նախագահ: Դուք հիմա իրավիճակին համարժեք եք շարժվում */նստում է նախագահական բազկաթոռին/:* Բայց դուք, տեսնում եմ, մեր իրական ովության մեջ դեռ համոզվելու կարիք ունեք...

Նախագահ- Անկեղծ լինեմ՝ այդպես է:

Արամազդ- Ուրեմն այսպես... */Ձեռքի մի շարժում է անում եւ պատին հայտնվում է սեւ-սպիտակ մի մեծ լուսանկար, որտեղ նախագահը ավտոմեքենայում համբուրվում է մի գեղեցիկ կնոջ հետ/:* Դա ձեր կի՞նն է, նախագահ...

Նախագահ */գունատված/*- Իմ վարորդն ու թիկնապա՞հն են մատնել ինձ... Նրանք թաքուն լուսանկարել ու տվել են ձե՞զ...

Արամազդ- Ոչ-ոչ, նախագահ, ձեր սպասավորներից ոչ ոք ձեզ չի մատնել, նրանք դեռեւս հավատարիմ են ձեզ: Այդ տեսարանը մենք որսացինք այսօր առավոտյան... մեր միջոցներով: Ճիշտն ասած՝ չէինք սպասում, որ նման բանի ականատեսը կարող էինք լինել... Մենք միայն ուզում էինք ճշտել, թե ինչպես եւ որ ժամին եք գնում ծառայության...

Տիր- Եվ պարզեցինք, որ դուք շատ եք սիրում պտտվել մեքենայով, նախքան աշխատավայր հասնելը:

Նախագահ- Խնդրում եմ... աղաչում եմ՝ դա ոչ ոքի ցույց չտաք... Դա զուր... մեծ աղմուկ կառաջացնի...

Արամազդ- Ցույց չենք տա, սա նենգասպառնալիք չէ, պարզապես ուզում ենք ձեզ հավաստիացնել, որ մենք աստվածներ ենք:

Նախագահ- Հավաստիացա... հավատացի...

Արամազդ */ձեռքի մի շարժումով պատից ջնջում է լուսանկարը/*- Նախ, պիտի ասեմ, տիար նախագահ, որ դուք, հարկ է՝ զերծ մնաք անհավատությունից, դա խոցելի է դարձնում երկրի ղեկավարին:

Նախագահ- Ես քրիստոնյա եմ:

Արամազդ- Երեւի այնքան եք Քրիստոսին հավատում, որքան ինձ եւ մեր Հայոց մյուս աստվածներին...

Նախագահ- Դե, գիտե՞ք, մենք վաղուց ձեզ հետ առնչություններ չենք ունեցել...

Արամազդ- Դա նաեւ մեր մեղքն է. այսուհետ պիտի ավելի հաճախ այցելենք Հայաստան, որ չմոռանաք մեզ:

Նախագահ- Դա օգտակար կլինի, կարծում եմ, մեր ժողովրդի ու երկրի համար:

Արամազդ- Տիր, երեկոյան մեր աստվածային հավաքի ժամանակ հի-

շեցրու, որ մենք վերջնական վճիռ կայացնենք այդ հարցով:

Տիր- Հրամանդ, Աստվածահայր */գրառում է կատարում նոթատետրում/:*

Նախագահ- Իսկ դուք չէի՞ք ցանկանա... ձեր միջոցներով վերականգնել մեր ավերված հին տաճարները... Հիմա միայն Գառնին է կանգուն:

Արամազդ- Գիտենք, մենք իջեւանել ենք Գառնիում:

Նախագահ- Գառնիու՞մ... բայց այնտեղ հարմարություններ չկան... Հիմա կկարգադրեմ, որ ձեզ... ձեր ամբողջ պատվիրակությանը տեղավորեն Երեւանի ամենալավ հյուրանոցում... Արարատի տեսարանով...

Արամազդ- Շնորհակալ ենք, պետք չէ: Մենք Գառնիում մեզ շատ լավ ենք զգում: Մենք կվերակագնենք ավերված մեհյաններն ու բագինները, մյուս տաճարները... Կսկսենք այդ գործը շուտով: Մենք կարիք ենք ունենալու միայն, որ ժողովուրդը հավատով լցվի մեր հանդեպ՝ առանց վնաս պատճառելու ձեր ներկայիս հավատքին:

Նախագահ- Անկեղծ ասած, ես չգիտեմ, թե դա ինչպես պիտի կատարվի, բայց ... հավատում եմ, որ դուք՝ աստվածներդ, կգտնեք լուծումը:

Արամազդ- Կգտնենք, մի կասկածեք: Տիար նախագահ, անցած չորս օրերին ես շատ հանդիպումներ ունեցա մեր հայորդիների հետ... հողագործների, բանվորների, շինարարների, արվեստագետների, պաշտոնյաների եւ այլոց... Ուզում էինք մարդկանց տրամադրությունները լավ տնտղելուց հետո հանդիպել ձեզ հետ... Հա, իմիջայլոց, ինչու՞ Մեծ դաշտավայրում սակավաջուր են այգիներն ու ցանքերը... Ես այնտեղ մի քանի ջրհորներ բացեցի, նոր ջրուղիներ քաշեցի... Շարունակեք այդ գործը, նախագահ, առատ ջրեր կան Հայաստանի ընդերքում, բերրիացրեք արարատյան հողը:

Նախագահ- Լավ: Մենք շատ ներդրումներ ենք արել այդ ոլորտում, բայց ջուրը դեռ ամեն մշակի չի հասնում, Արամազդ աստված...

Արամազդ- Հուսամ՝ ձեր նախագահության օրոք վերջնականապես կլուծեք այդ խնդիրը...

Նախագահ- Խոստանում եմ:

Արամազդ- Հա, ձեզ պիտի ասեմ գլխավորը. մարդկանց մոտ հիմնավոր ոգեւորության պակաս նկատեցինք, լավատեսությամբ ներշնչվածների թիվը բավականաչափ չէ, ինչու՞...

Տիր- Եվ ասում են, որ օտար երկրներում ապրող հայերի թիվը կրկնակի մեծ է, քան բուն Հայաստանում ապրողներինը...

Արամազդ- Այո... արտառոց է... Դուք չե՞ք գտնում, տիար նախագահ, որ Հայաստանի կառավարումը վատ է իրականացվում, թե չէ ինչու՞ պետք է մարդկանց զգալի մասը անտրամադիր ու հոռետես լինի եւ ապրի օտար երկրներում...

Նախագահ- Դե, գիտե՞ք, մենք գտնվում ենք աշխարհագրական ու

ռազմաքաղաքական բարդ իրավիճակում, մեր շուրջ շատ թշնամիներ կան... Մարդկանց մի զգալի մասը վախենում... եւ արտագաղթում է...

Արամազդ- Այդ պատճառաբանությունը ես լսել եմ նաեւ իմ նախորդ գալստյան ժամանակ. մի՞թե անցած հազար տարվա ընթացքում այդ ուղղությամբ որեւէ էական բարեփոխում չի կատարվել...

Նախագահ- Կատարվել է, ինչու՞ չէ... Օրինակ, Հայաստանը հիմա անկախ երկիր է, ՄԱԿ-ի անդամ...

Արամազդ- ՄԱԿ-ն ի՞նչ է...

Նախագահ- Միավորված ազգերի կազմակերպությունը... */Տիրը գրառում է անում նոթատետրում/:* Մենք միավորել ենք մեր խլված նահանգներից մեկը՝ Արցախը...

Արամազդ- Գիտենք, ոգեւորիչ է իրոք:

Նախագահ- Մեր ազգային անվտանգության մակարդակը հիմա ավելի բարձր է, քան եղել է հազար տարի առաջ:

Արամազդ- Բայց հայերի մի զգալի մասը դեռ շարունակում է երջանկություն փնտրել օտար եզերքներում, ինչպես հազար տարի առաջ... Ինչու՞... Ուրեմն շատ բան չի բարեփոխվել, չէ՞, տիար նախագահ...

Նախագահ- Դե... նայած ինչ տեսանկյունից եք նայում...

Արամազդ- Նույն տեսանկյունից, նախագահ, ազգային համահավաքության ու դիմադրողականության տեսանկյունից... */Դադար/* Դուք, տիար նախագահ, կարո՞ղ եք մեզ ասել, թե այսօր Հայաստանում քանի լավատես, քանի հայասեր, քանի ստեղծագործ մարդ է ապրում... նրանք բնակչության ո՞ր մասն են կազմում...

Տիր- Նրանք նման վիճակագրություն չեն վարում, Աստվածահայր... Երեկ, հիշու՞մ եք, մեր հանդիպած վիճակագիրներից մեկը մեզ չէր կարողանում ասել նույնիսկ, թե քանի երեխա է վարժ տիրապետում հայերենին եւ քանիսն են օտար դպրոցներում ուսում առնում...

Արամազդ- Այո-այո, Տիր, հիշում եմ: Չկարողացան անգամ ասել, թե քանի հոգի են պատրաստ լքելու Հայաստանը...

Տիր- Նրանք չգիտեն, թե մայրական կաթով սնվող քանի երեխա կա ներկայումս, քանի չամուսնացած կին ու տղամարդ...

Արամազդ- Չգիտեք, նախագահ, թե քանի տաղանդավոր մարդ է անտերության մատնված երկրում եւ քանի ապիկար ու ապաշնորհ է խցկված պետական ծառայության մեջ...

Տիր- Մեծ եւ արի Արամազդ, նրանք չգիտեն, թե քանի երջանիկ մարդ կա Հայաստանում, ովքեր են նեցուկ կանգնում դժբախտներին... Չգիտեն, թե ինչ զանգված են կազմում իրական հավատավորները... Թե չէ՝ հաշվում եք, հաշվում, ինչպես կասեր բանաստեղծը...

Արամազդ- Ի դեպ, դուք անգամ ձեր բանաստեղծների ու ստեղծարար-

ների ստույգ թիվը չգիտեք, նախագահ… Ընդհանրապես, ի՞նչ տեղեկությունների հիման վրա եք կառավարում երկիրը, տիար առաջնորդ…

Նախագահ */դժվարությամբ խոսելով/*- Դե… մենք շատ վիճակագրական տեղեկություններ ենք հավաքագրում… բնակչության թվի, զբաղվածության, տնտեսական աճի եւ այլնի մասին: Բայց ձեր ասած երեւույթների վերաբերյալ, այո, վիճակագրություն չենք վարում… ցավոք… Կհանձնարարեմ, որ վաղվանից իսկ սկսեն նման կարգի ուսումնասիրություններ կատարել:

Արամազդ- Դա ձեզ շատ պետք կգա եւ երկիրն ավելի արդյունավետ ու նպատակային կկառավարեք: Թե չէ մեզ դուր չի գալիս ձեր ներկայիս կառավարումը… Տիր, ի՞նչ ես կարծում… նոր, ավելի խելացի ու նվիրյալ նախագահ չառաջարկե՞նք ժողովրդին…

Նախագահ */տագնապած/*- Ու՞մ եք ուզում առաջարկել… Մեր Նավոյանի՞ն… դուք է՞լ եք նրա կողմնակիցները… Իսկ գուցե՞ այս հանդիպումն ինքն է սարքել… հը՞, նա շատ ճարպիկն է… Նա խոսե՞լ է ձեզ հետ…

Արամազդ- Ոչ, հանգստացեք: Թեպետ նրա անունը լսել ենք, բայց մենք որեւէ մեկի կողմնակիցը չենք, մենք խոսում ենք միայն ժողովրդի տեսանկյունից:

Տիր- Մենք միայն տրամադրություններ ենք շոշափում, տիար նախագահ, տրամադրություններ… Եվ հետո՝ վատ չէր լինի, որ կատակի զգացողությունը չկորցնեք ոչ մի իրավիճակում:

Նախագահ- Հա՜, լավ, կատակ էիք անում Մեր Նավոյանի առումով… Հասկացա: Ներող եղեք:

Արամազդ- Մեր հարցը մենք հետո կքննենք մեր հավաքում… Լավ, նախագահ, հիմա ինձ ազնվորեն ասեք, թե ինչու՞ այսքան շատ աղքատներ կան Հայաստանում, եւ կան մի բուռ մարդիկ, որոնք ավելի շատ հարստություն ունեն, քան մնացյալ ողջը… Դա ի՞նչ արդարություն է… Տիր, ինքդ վկայիր, որ ես՝ Արամազդ գերագույն աստվածս, չունեմ այնքան հարստություն, որ նախանձ շարժի մյուս աստվածների ու սպասավորների մոտ… Աստվածային մեր աշխարհում առաջնահերթ դրված է արդարության հարցը:

Տիր- Վկայում եմ, ճշմարտափայլ Արամազդ. մենք արդարությամբ ենք առաջնորդվում, թե չէ վաղուց կործանված կլիներ մեր աստվածությունը:

Արամազդ- Իսկ ձեզ մոտ ի՞նչ է կատարվում, նախագահ… Պիտի ասեի՝ մեզ մոտ՝ Հայաստանում:

Նախագահ */դժվարությամբ արտաբերելով բառերը/*- Դե… գիտե՞ք… ամեն ինչ օրենքով է կատարվում… Կարող եք ստուգել հարուստների փաստաթղթերը:

Արամազդ- Ուրեմն ձեր օրենքները հարուստների օգտին են աշխա-

տում… Սխալ է, պետք է կիրառել այլ օրենքներ… Ասեմ նաեւ, որ մենք վերակացուներ չենք, նախագահ, մենք աստվածներ ենք: Մենք ուզում ենք օգնել ձեզ, որ ազատվեք ազգային ու հանրային ախտերից: Ձեր ստուգիչ մարմինները թող ազնվորեն աշխատեն եւ բացահայտեն մեքենայությունները… Մենք նրանց կաջակցենք:

Նախագահ- Լա՜վ գաղափար է… Ձեզնից մեկին ներկայացուցիչ նշանակեք Հայաստանում, թող նա հետեւի մեր բոլոր վերահսկումներին եւ զեկուցի ձեզ ու մեզ:

Արամազդ- Կխորհենք այդ մասին:

Նախագահ- Մեծն Արամազդ, մենք լուրջ հարցեր ենք քննարկում, մեր այս հանդիպմանը ներկա է ձեր… մամուլի քարտուղարը… դե ձեր Տիր ատենադպիրը… Տեսնում եմ՝ նա հիանալի որակավորում ունի եւ լավ կատարում է իր պարտականությունները: Թողեք, որ այստեղ ներկա լինի նաեւ իմ մամուլի քարտուղարը, որպեսզի մեր այս հանդիպման կարեւոր պահերի մասին տեղեկացնի մեր հանրությանը… հեռուստատեսությամբ, էլեկտրոնային եւ այլ լրատվամիջոցներով… Հրավիրեմ նրան, այո՞…

Արամազդ- Խնդրեմ, եթե դրա կարիքը տեսնում եք:

Նախագահ- Այո, Տիրի հետ էլ կծանոթանան… կոլլեգաներ են ի վերջո:

Արամազդ- Կոլլեգան ի՞նչ է, Տիր…

Տիր- Գործընկեր… պաշտոնակից, Աստվածահայր:

/Նախագահը մոտենում է սեղանի հեռախոսին եւ սեղմում կոճակը/.

Նախագահ- Լեւոն, շտապ ինձ մոտ արի… տեսախցիկներով, լրագրողներով… Ի՞նչ, դեսպանները սպասու՞մ են… թող սպասեն… շատ ավելի կարեւոր հանդիպում ունեմ: */Նստում է իր տեղում/:*

Արամազդ- Նախագահ, դուք ճի՞շտ եք համարում, որ հրաժարվել եք թագավորական կարգերից եւ Հայաստանում հաստատել եք… ինչպե՞ս եք ասում…

Նախագահ- Դեմոկրատական… ժողովրդավարական կարգեր… Այո, մեծն Արամազդ, դա ավելի արդիական ու էֆեկտիվ կառավարման համակարգ է… Թագավորականը Հայաստանի համար ժամանակավրեպ ձեւ է այլեւս:

/Արամազդը հարցական նայում է Տիրին/:

Տիր- Էֆեկտիվ՝ նշանակում է արդյունավետ…

Արամազդ- Մ՜… Մեզ մոտ՝ Հայոց դիցարանում, դեռեւս թագավորական ձեւի կառավարում է կիրառվում… Տիր, մեզ մոտ կառավարման կարգում ինչ-որ հետադիմությո՞ն է նկատվում…

Տիր- Ոչ, մեծն Արամազդ: Աստվածային մեր կարգերը նույնպես էֆեկտիվ են:

Արամազդ- Բարի: Սակայն երբ հետադիմական երեւույթներ նկատես, անպայման ինձ տեղյակ պահիր, Տիր:

Տիր- Հրամանդ, մեծն Արամազդ:

Արամազդ- Ես այդ... դեմոկրատիայի էությունը հասկացա, երբ զրուցեցի բազմաթիվ մարդկանց հետ... Լավ է, որ ժողովուրդը մասնակցում է պետության կառավարմանը, ընտրում է իշխող մարմիններ, բայց ժողովրդին... աստվածներ են պետք, նրանց հին ու հարազատ աստվածները... Ժողովրդի մեծամասնությունն էլ կարող է սխալվել, այդ դեպքում ո՞վ պետք է նրանց կրկին ճիշտ ուղու վրա բերի... Իհարկե, աստվածները... Մենք չենք լքի մեր ժողովրդին, միշտ նրա հետ կլինենք, որ մեծ վտանգների ժամանակ, ճակատագրական շրջադարձներին նրան սատարենք ճշմարտությամբ, ոգով ու բարձր գիտակցությամբ:

/Ներս է մտնում նախագահի մամուլի քարտուղար Լեւոնը՝ մի խումբ լրագրողների ուղեկցությամբ՝ զինված հեռուստախցիկներով, լուսանկարչական ու ձայնագրման սարքերով: Լեւոնը արագորեն ողջունում է ներկաներին եւ տեղավորվում նախագահի կողքին/:

Արամազդ- Օհո՜... մի ամբողջ բանակ ներխուժեց այստեղ: */Նախագահին/* Բայց ասացիք, որ միայն ձեր... քարտուղարը կներկայանա...

Նախագահ- Ներող եղեք, մեծն Արամազդ: Մեզ մոտ գործող կարգը սա է: Կարելի է եւ փակ հանդիպում անել ձեզ հետ, բայց ինչու՞... Միթե ամեն օր մենք աստվածների ենք ընդունում մեր նստավայրում...

Լրագրողներ */կամացուկ/*- Աստվածների՞...

Տիր */Արամազդին/*- Նախագահն ուզում է իր վարկանիշը բարձրացնել:

Արամազդ- Ոչինչ, թող անի, գուցե ավելի լավ ղեկավարի երկիրը...

Նախագահ */կանգնում է/*- Հարգարժան լրագրողներ, համառոտ ասեմ, որ մենք հիմա չափազանց կարեւոր ու... սպասված հանդիպում ենք անցկացնում Հայոց գերագույն աստված Արամազդի եւ նրա... ատենադպիր ու սուրհանդակ... դե մեր լեզվով ասած՝ մամուլի քարտուղար Տիրի հետ: Մենք արդեն խոսել ենք շատ-շատ կարեւոր հարցերի մասին, մանրամասները կճշտեք պարոն Տիրից եւ իմ մամուլի քարտուղարից... Հիմա մենք ուզում ենք քննարկել... */նայում է Արամազդին/* մեր հետագա համագործակցության հարցերը... Գերագույն աստված Արամազդը պատրաստակամ է օգնել մեր հին ավերակված տաճարների վերակառուցմանը: Մենք հավանաբար վաղը կամ մյուս օրը, մինչ նրանց վերադարձը, համագործակցության հուշագիր ստորագրենք... Այո՞, մեծն Արամազդ...

Արամազդ- Լավ հոետոր եք, նախագահ, եւ ուզում եք մեզ փաստի առաջ կանգնեցնել... Լավ, ընդունեմ մարտահրավերը եւ տիար նախագահի պես ասեմ իմ կարճ խոսքը. արդեն չորս օր մեր յոթ հոգանոց աստվածային պատվիրակությունը, փոքրիկ խմբերի բաժանված, շրջում է Հայաս-

տանում եւ ծանոթանում ժողովրդի ու երկրի ներկա կյանքին… Մենք մեր հանդիպումները դեռ չենք ավարտել, թեեւ արդեն ունենք կարեւոր տպավորություններ ու ձեռքբերած փաստեր. դրանց մի մասը կարող է ոմանց համար շատ անախորժ լինել: Մենք այդ ամենը կհրապարակենք մեր վերադարձի նախօրյակին… Կրկին կհանդիպենք… արդեն Գառնի տաճարում, երկու օր անց. ներկա կլինեն նախագահը՝ իր ծառայակազմով եւ մեր պատվիրակությունը… Մինչ այդ կարող եք կապվել իմ ատենադպիր Տիրի հետ, եւ նա ձեզ կհաղորդի ընթացիկ տեղեկություններ մեր շրջագայության մասին:

Տիր- Այո… Մենք էլ ենք բաց ու թափանցիկ գործում: */Ներկաները ծիծաղում են/:*

Նախագահ- Հրաշալի՜… Շնորհակալ եմ, մեծն Արամազդ, շնորհակալ եմ, պարոն Տիր: */Տիրին/* Ոչի՞նչ, որ այդպես եմ դիմում ձեզ…

Տիր- Ոչինչ:

Նախագահ- Բարի, հետո կսովորեմ ճիշտ դիմելաձեւը… Լրագրողներ, կապ պահեք նաեւ իմ մամուլի քարտուղարի հետ:

Լեւոն- Այո-այո, պարոն նախագահ, լրագրողները լրիվ տեղեկացված կլինեն այս իրադարձության մասին:

Նախագահ- Դե, այսպիսով ավարտում ենք այս պատմական հանդիպման արարողակարգային մասը: Մի քանի րոպե կարող եք շփվել մեր աստվածային հյուրերի հետ, ապա կլքեք մեզ, հարգելի լրագրողներ:

Արամազդ- Սպասեք… Տուր հայոց օրագիր մեծ Մատյանը, Տիր: */Տիրը ուսապարկից հանում եւ Արամազդին է հանձնում մի մեծ գիրք՝ արծաթավուն կազմով/:* Տեսեք՝ սա հայոց Մեծ Մատյանն է՝ անցած հազար տարվա ազգային ու աստվածային օրագրությամբ ու խորհրդատվությամբ… Արդո նախագահ, տալիս եմ ձեզ, որ կարդաք Մատյանի ողջ բովանդակությունը, այն ձեզ համար շատ օգտակար կլինի: Ապա Մատյանը ի պահ կտաք ձեր ձեռագրաց տանը:

Տիր- Մատենադարանին:

Արամազդ- Այո, մատենադարանին. թող այլոք եւս հնարավորություն ունենան կարդալու այդ հույժ կարեւոր մատյանը:

Նախագահ */վերցնելով գիրքը/*- Սիրով, մեծն Արամազդ… Մենք ազգովի կկարդանք այս գիրքը: */Լրագրողները քմծիծաղում են/:*

Լեւոն- Խնդրում եմ հետեւել կարգին… Մի քանի րոպե՝ ազատ շփումների համար:

/Լրագրողները հապճեպ շրջապատում են Արամազդին ու Տիրին: Հարցերի տարափ է տեղում նրանց վրա, մասնավորապես՝ «Կուսակցություն չե՞ք ուզում հիմնել», «Ի՞նչը ձեզ շատ դուր եկավ Հայաստանում», «Երեւանում բնակարան ունե՞ք»: Արամազդն ու Տիրը միաժամանակ ժպիտով են

պատասխանում: Լրագրողներից մեկ-երկուսը Մատյանն են նայում: Նախագահն ու Լեւոնը մի փոքր հեռանում են եւ առանձին զրուցում/:

Նախագահ- Տիրին կզինես կապի միջոցներով:

Լեւոն- Անպայման, պարոն նախագահ: Նրան կտամ հեռախոս, լուսանկարչական ապարատ, ձայնագրիչ, նոթբուք...

Նախագահ- Հազիվ թե նա կարողանա համակարգիչ օգտագործել...

Լեւոն- Դե, եթե աստված է, շուտ կյուրացնի համակարգիչը: Նրա հետ արագ մի փոքրիկ դասընթաց կանցկացնեմ:

Նախագահ- Լավ: Իսկ ի՞նչ ես կարծում, նրանց հետ ուղեկից թիկնապահներ չդնե՞նք... անվտանգության համար... Դե, չէ, ի՞նչ եմ ասում, նրանց անվտանգության ծառայողներ պետք չեն:

/Բարձր լսվում է լրագրողներից մեկի հարցը՝ «Չէի՞ք ցանկանա նախագահի թեկնածու առաջադրվել, եկող տարի ընտրություններ են»: Նախագահն ու մամուլի քարտուղարը լարված ուշադրություն են դարձնում դրան եւ գլուխները օրորում/:

ԱՐԱՐ 5

/Գառնի տաճարի սրահում աստվածները սեղանի շուրջ բոլորված՝ ուրախ տրամադրությամբ զրուցում են անցած օրերի իրենց հանդիպումների ու տպավորությունների մասին: Նրանց գինի է մատուցում Մեհեկանը/:

Մեհեկան- Ըմպեք ու ըմբոշխնեք այս հրաշալի հեղուկը. նռան գինի է, Նանե դիցուհուն նվիրեցին, երբ հյուրընկալվեցինք մի ընտանիքում:

Արամազդ- Նանե, ասում ես՝ այսուհետ այդ ընտանիքում սե՞րը կթագավորի...

Նանե- Այո, Աստվածահայր... Մի քիչ կնճռոտ հարց էր, բայց հաջողվեց լուծել: Տան տղամարդը, պարզվեց, սիրում է եւ կնոջը, եւ... ընկերուհուն...

Մեհեկան- Սիրուհուն:

Նանե- Այո... Մեհեկանի հետ կարողացանք ընտանեկան այնպիսի զգացումներ բորբոքել, որ ամուսինը կենտրոնացավ միայն սեփական կնոջ ու ընտանիքի վրա:

Արամազդ- Բարի, բարի... Իսկ Արացի հետ կապված երեկվա ձեր պատմածը կատա՞կ էր, թե՞ իրոք մեր ասպետը տարվել է այդ կնոջով...

Նանե- Աստվածահայր, կարծում եմ՝ Արացը լրջորեն սիրահարված է վարսահարդար Ռուզանին:

Մեհեկան- Եղբայրս այսօր ինձ հարցնում է, թե վաղը չե՞նք կարող, արդյոք, կրկին նրան հանդիպել...

Արամազդ- Արաց, ճի՞շտ է ասում Մեհեկանը, թե՞ հոգուդ հետ է խաղում...

Արաց */շիկնելով/*- Աստվածահայր, երկու օր է՝ ես նրան տեսնում եմ երազում... Նա ինձ նամակներ է գրում...

Տիր- Ուրեմն դեռ հեռավորության վրա է ծաղկելու ձեր սերը:

Արամազդ- Ահա թե ինչ. հարցն իսկապես լուրջ է երեւում: Բայց դեռ չգիտեմ, թե ինչպես պիտի վարվենք, որ քո սիրտը չփշրվի, Արաց... Դա ազնիվ, աստվածային սեր է, պիտի հոգ տանենք: Էն նախագահի պես չէ, որ սիրային թեթեւ կապերի մեջ է մտնում իր աշխատակից երիտասարդ կանանց հետ...

Միհր- Ես էլ կուզենայի սիրահարվել մի գեղեցիկ հայուհու...

Արամազդ- Դե լավ-լավ, ուրիշ հոգս չունե՞նք... Սե՜ր-սե՜ր... */Դադար/* Միհր, Վահագն, դուք ճշմարիտն ասեք, թե ինչպես էին մեր զինվորները իրենց դրսեւորում ձեր այդ ռազմական գործողության ժամանակ... հմու՞տ էին, քաջակորո՞վ...

Վահագն- Այո-այո, մեծն Արամազդ. փայլուն ռազմիկներ են, իրենց գործը լավ գիտեն... Մի թափով ետ վերցրինք այդ հազար հեկտահրը, հիմա այն լրիվ մերոնց վերահսկողության տակ է:

Միհր- Վահագնը թշնամու տաս հրասայլ ոչնչացրեց, ես՝ նույնքան հրանոթ:

Վահագն- Զինվորներն էլ անգործ չէին, մաքրեցին թշնամական բոլոր պահակետերը:

Արամազդ- Իսկ գեներա՞լը... հմու՞տ զորավար է...

Վահագն- Այո, կասկած չունեմ, միայն շատ է իր քարտեզներին ու թղթերին նայում մարտի ժամանակ...

Միհր- Դե ժամանակակից ռազմարվեստն այդպես է զարգանում:

Արամազդ- Լա՜վ... Ես երեկ ուզում էի ամբողջ սահմանի երկայնքով մի անդնդախոր ու լայնշի խրամատ քաշել, որ ոչ մի օձ չկարողանա հակառակ կողմից սողոսկել մեր տարածք: Բայց առայժմ հրաժարվում եմ այդ մտքից, մինչեւ տեսնենք, թե հայոց հայրենական սահմանները վերջնականապես որտեղով պետք է ձգվեն...

Տիր */գրառում անելով նոթատետրում եւ ըմպելով գինի/*- Մեծ եւ արի Արամազդ, որոշել եք նաեւ առաջնահերթ վերականգնել Զվարթնոց տաճարը... Ես արդեն գրառել եմ դա իմ նոթատետրում:

Արամազդ- Անշուշտ, Տիր: Զվարթնոցը ես շատ եմ սիրում, այն պետք է ստանա իր նախկին փառահեղ տեսքը: Գուցեեւ հետո անցնենք Անիին...

/Դրսում մարդկանց բազմության աղմուկ է լսվում: Արացը շտապ դուրս է գնում, նրան հետեւում են Վահագն ու Միհրը/:

Արամազդ- Տիր, դու էլ գնա, տես՝ ինչ է կատարվում... Մարդկանց հուզված ձայներ եմ լսում...

/Տիրը արագ հեռանում է: Դրսից լսվում են բացականչություններ՝ Արամա՛զդ, Նանե՛, Վահա՛գն/:

Նանե- Նրանք կարծես թե ուզում են խոսել մեզ հետ, Աստվածահայր…

/Ներս է մտնում Վահագնը/:

Վահագն- Մեծն Արամազդ, մարդկանց մեծ բազմություն է հավաքվել տաճարի շուրջ, նրանք ուզում են հանդիպել մեր պատվիրակության հետ:

Արամազդ- Ի՞նչ են կամենում…

/Ներս է մտնում Տիրը/:

Տիր- Մեծն Արամազդ, մարդկանց կեսը ցանկանում է, որ մենք ականջալուր լինենք իրենց հոգսերին, օգնություն է հայցում, մյուս կեսը կամենում է, որ մենք երկրի իշխանությունը վերցնենք մեր ձեռքը… ձեր գլխավորությամբ:

Արամազդ- Նրանք ուզում են մեզ փորձությա՞ն մատնել… Գուցե՞ սա սադրանք է մեր դեմ… նախագահի կողմից… Նա երեւի ուզում է ստուգել, թե մենք այստեղ ինչ քաղաքական նպատակներ ենք հետապնդում… Բայց ես նրան ասել եմ, որ մեր այցը զուտ աստվածային ու մարդկային է: Մենք քաղաքական նպատակներ չունենք մեր առջեւ դրված: */Հայրացած/* Ասել եմ, չէ՞, նրան…

/Ներս է մտնում Միհրը/:

Միհր- Աստվածահայր, սեւ դիմակավոր ու զինյալ անձինք են հեռվում խմբված… Արացը դրսում կանխում է, որ ոչ ոք մուտք չգործի տաճար առանց մեր համաձայնության:

Նանե- Գուցե՞ ես դուրս գամ ու խաղաղեցնեմ մարդկանց, Աստվածահայր…

Արամազդ- Ոչ, Նանե, ես կխոսեմ մարդկանց առաջ… */Մոտենում է մուտքին, զննում փոքր-ինչ հեռվում կուտակված բազմությունը, ապա ոգեշունչ ձայնով սկսում է իր ճառը/.* Սիրելի հայ ժողովուրդ, ես Արամազդն եմ՝ Հայոց գերագույն աստվածը, ինձ հետ են մեր աստվածներ Վահագնը, Նանեն, Միհրը, Տիրը, Մեհեկանը եւ Արացը… Սա իմ յոթերորդ գալուստն է Հայաստան… Մենք անմիջապես հասկացանք, որ ուշ-ուշ ենք այցելում ձեզ, հազար տարին մեկ գալը բավական չէ, որ ժողովուրդն ու իրենց աստվածները մնան փոխադարձ սիրո ու վստահության մեջ: Մենք մտադրվել ենք այսուհետ ավելի հաճախակի լինել Հայոց աշխարհում եւ մեր աստվածային կարողությունները ասպարեզ հանել հայոց բարօրության համար… Մենք շատ ուրախացանք, տեսնելով, թե որքան կապված եք դուք ձեր բնօրրանի հետ, որքան շատ եք կամենում, որ Հայաստանը լինի ծաղկուն ու հավերժական երկիր այս մոլորակում: Բայց եւ շատ հոգս ու ցավ տեսանք այստեղ, շատ անարդարություն… Մենք պատրաստակամ ենք՝ ամենայն աջակցություն ցույց տալ ձեզ, որ դուք արագորեն ու ճշմարտա-

պես լուծեք ազգի դեմ ծառացած խնդիրները: Սակայն մենք մտադիր չենք ձեր իրավունքներն ու պարտականությունները վերցնել մեզ վրա: Դուք պարտավոր եք նախեւառաջ ապավինել ինքներդ ձեզ, աստվածները միայն աջակցում են... */Արամազդին է մոտենում մի ոստիկան ու փսփսում նրա ականջին: Արամազդը գլխով է անում/:* Սիրելի ժողովուրդ, խնդրում եմ՝ ցրվեք ձեր տները եւ վաղվանից իսկ լծվեք ազնիվ ու ստեղծարար աշխատանքի: Մենք միշտ ձեզ հետ կլինենք՝ այստեղ, թե երկնքում... */Վերադառնում է սրահի կենտրոն: Ոստիկանը հետեւում է նրան/:*

Ոստիկան- Ներող եղեք, պարոն Արամազդ, դուք պետք է հեռանաք:

Արամազդ- Ո՞ւմ անունից եք այդ հրահանգը հաղորդում մեզ...

Ոստիկան- Նախագահի... Նա... մենք մտահոգ ենք ձեր անվտանգությամբ... եւ ժողովրդի մեջ հասունացող խռովությամբ: Աստված գիտե, թե հավաքված մարդիկ... այս ամբոխը ինչ կարող է անել ձեզ հետ հաջորդ պահին... Մարդիկ շատ արագ են դառնում ագրեսիվ:

/Արամազդը հարցական նայում է Տիրին/:

Տիր- Ագրեսիվ, այսինքն՝ հարձակողական, հարձակման պատրաստ, Աստվածահայր:

Արամազդ */ոստիկանին/*- Այս մարդիկ, ոստիկան */ցույց է տալիս դուրսը/,* մեզ վրա չեն հարձակվի, ձեզ վրա՝ գուցե... Մենք հասկանում ենք նախագահի իրական մտահոգությունը, ինչը նրա համար անպատվաբեր ու ամոթալի է: */Դադար/* Դուք մեզ մի քանի րոպեով մենակ թողեք, ոստիկան, մենք պետք է խորհրդակցենք, ապա ձեզ կհայտնենք մեր վճիռը:

Ոստիկան- Լավ, ինչպես կասեք, պարոն */դուրս է գալիս/:*

/Աստվածները նստում են իրենց նախկին տեղերը: Արամազդը ուշադիր նայում է ներկաներին/:

Արամազդ- Տիր, ներս կանչիր Արացին:

Տիր- Հիմա, Աստվածահայր: */Արագ դուրս է գնում եւ ներս գալիս Արացի հետ/:*

Արամազդ- Աստվածներ, եկեք խորհենք այս իրավիճակի վրա եւ ճիշտ վճիռ կայացնենք... Մեզ դեռ երկու օր է մնում մեր վերադարձին... Հիմա՞ ենք վերադառնում մեր աշխարհը, թե՞ այս երկու օրը եւս մնում ենք Հայաստանում՝ նոր հեռանում... Ասեք ձեր խոհեմ ու ինքնաբուխ կարծիքը... Վահագն աստված, ի՞նչ կասեք...

Վահագն- Մեծն Արամազդ... տեղական իշխանությունը կամենում է իր ուժը բանեցնել մեր նկատմամբ. դա վիրավորում է մեր աստվածային հպարտությունն ու ինքնասիրությունը. մեզ այստեղ, գիտեք, ոչ ոք չի կարող թելադրել, չէ՞ որ մենք ենք իշխում նրանց վրա եւ ոչ թե նրանք՝ մեզ... Առաջարկում եմ՝ գալիք երկու օրն էլ շրջել Հայաստանում, եւ լիովին կատարած մեր առաքելությունը՝ վերադառնալ:

Արամազդ- Բարի… Դու՝ դուստր Նանե, ի՞նչ կասես…

Նանե- Ես չէի ցանկանա, որ մենք հակադրության մեջ մտնենք հայկական առաջնորդող ուժերի հետ. նրանք ժողովրդի մեջ հակակրանք ու ատելություն կբորբոքեն մեր դեմ, եւ մեր գործը այսուհետ ավելի կբարդանա. չէ՞ որ մենք ցանկանում ենք առավել սերտացնել մեր կապերը հայ ժողովրդի հետ… Առաջարկում եմ վաղը եւեթ վերադառնալ եւ տանը նոր ծրագրեր խորհել այս նոր իրավիճակին համապատասխան…

Արամազդ- Բարի… Միհր, քո կարծիքն ասա:

Միհր- Ես կարծում եմ՝ վաղը արժե, որ մենք բանակցություններ վարենք հայկական իշխանությունների հետ, որտեղ ներկա լինեն իշխանության բոլոր թեւերի ներկայացուցիչները: Մենք պետք է հասնենք փոխըմբռնման:

Արամազդ- Բանակցություններ այն սեւ դիմակավոր զինյալների պաշարման մե՞ջ…

Միհր- Նրանց կխնդրենք, որ զինյալներ չլինեն մոտակայքում:

Արամազդ- Տիր, ի՞նչ կասես դու…

Տիր- Ես կարծում եմ, որ հարկ է առաջնորդվել հյուրընկալության նուրբ օրենքներով: Եթե տանտերերը բարեհաճ չեն հյուրի հանդեպ, ապա վերջինս պետք է անհապաղ հեռանա, տեղ թողնելով հետագա հարաբերությունների ջերմացման համար: Ես ապավինում եմ այն մտածումին, որ պետք է հեռանալ, այսօր կամ վաղը…

Արամազդ- Մեհեկան, կարծիքդ ասա, աղջիկս:

Մեհեկան- Աստվածահայր, ես կարծում եմ, որ մենք չպետք է գժտության սերմեր թողնենք այստեղ… Հայաստանը մեզ համար սուրբ երկիր է, եթե հիմա կա զոհաբերելու ինչ-որ մի բան, ապա թող զոհաբերվի մեր ինքնասիրությունը… Մենք առանց այն էլ չափազանց ուշացումներով ենք հայտնվում Հայոց աշխարհում, այնքան ուշացումով, որ բարոյական ոչ մի հիմք չունենք մեր գերազանցությունն այստեղ ապացուցելու… Վերադառնանք տուն, հետո կրկին … շուտ վերադառնանք Հայաստան…

Արամազդ- Բարի… Արաց, քո քրոջ պես կարո՞ղ ես մի իմաստուն կարծիք էլ դու հայտնել…

Արաց- Այո, Աստվածահայր: Մենք բոլոր հարցերը պետք է կարգավորենք սիրով: Բայց, անկեղծ ասած, չգիտեմ, թե այս պահին ծագած թնջուկը ոնց պիտի լուծենք սիրով…

/Ներկաները ծիծաղում են/:

Նանե- Ես մի առաջարկություն էլ ունեմ, Աստվածահայր, թույլ կտա՞ք…

Արամազդ- Լսում ենք, դուստրս:

Նանե- Արացին թողնենք Հայաստանում, իսկ մենք շտապ վերադառնանք… Արացը լուրջ պատճառ ունի Հայաստանում մնալու… Միշտ չէ, որ աստվածները նման գեղեցիկ ու մարդկային սիրով են բռնկվում… Թող

Արացը այստեղ տիրանա իր սիրուն եւ լինի մեր անմիջական նվիրակը Հայոց աշխարհում: Նա մարդկանց սրտերում նոր հուր ու հավատ կբորբոքի առ դեպի մեզ եւ առ հայ ազգ:

Տիր- Եվ առ անզուգական սերը:

Արամազդ- Ի՞նչ կասես, Արաց, դու ընդունո՞ւմ ես Նանեի առաջարկությունը…

Արաց */ուրախացած/*- Խորապես շնորհակալ կլինեմ ձեզ, մեծն Արամազդ, եթե դուք ինձ նման հնարավորություն ընձեռեք… Շնորհակալ եմ եւ ձեզ, դիցուհի Նանե, ես կանեմ այն ամենը, ինչ դուք հենց նոր պատվիրեցիք:

Արամազդ- Դա մեր բոլորիս պատվիրանն է, Արաց: */Դադար/* Ուրեմն՝ դու մնում ես, Արաց, իսկ մենք վերադառնում ենք վաղը… Բարի՞… Կա՞ն հակաճառողներ… */Լռություն/* Դե, ներս կանչեք ոստիկանին, որ նրան հայտնենք մեր վճիռը… Բայց սպասեք, Արացի առնչությամբ՝ ոչ մի խոսք: Դեռ երկար ժամանակ դա գաղտնիք պետք է մնա հայոց համար… Պայմանավորվեցի՞նք… Արաց, ներս կանչիր ոստիկանին:

/Արացը շտապ դուրս է գնում եւ վերադառնում ոստիկանի հետ/:

Ոստիկան- Հուսամ՝ ողջամիտ վճիռ կայացրիք, պարոնայք ու տիկնայք:

Արամազդ- Ոստիկան, հայտնեք ձեր մեծավորին, որ մենք վաղը վերադառնում ենք… Շնորհակալ ենք հյուրընկալության համար: Այդքանը… Հա, նաեւ փոխանցեք ձեր առաջնորդին, որ մեզնից որեւէ մեկը իշխանական նկրտումներ չունի այստեղ. դա մեր աստվածային պատվախնդրությունից ցածր է, խիստ ցածր… Եվ ասեք, որ աստվածները չեն ստում իր պես… Բարին ընդ ձեզ, հաջողություն:

Ոստիկան- Ձեր խոսքը անպայման կփոխանցեմ նախագահին, պարոն Արամազդ: Շնորհակալ եմ փոխըմբռնման համար: Ամենայն հաջողություն ձեզ… Մինչ նոր հանդիպում…

Աստվածներ- Մինչ նոր հանդիպում…

/Ոստիկանը գլուխ է տալիս ներկաներին եւ հեռանում: Դրսում աղմուկն աստիճանաբար մարում է: Աստվածները շարունակում են գինի խմել ու զրուցել: Մեհեկանը երգում է թախծոտ ու գեղեցիկ մի երգ՝ հրաժեշտի ու հանդիպման մասին: Մյուսները միանում ու ձայնակցում են նրան/:

ՎԵՐՋ

դեկտեմբեր, 2018թ.

ԱՊՈԼՈՆԸ ԲԵՎԵՌԱՅԻՆ ՊՈՂՈՏԱՅՈՒՄ

/դրամա հինգ արարով/

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

Բանաստեղծ
Դերասան
Երաժիշտ
Նկարիչ
Երգչուհի
Բալետի պարուհի
Կարգալույծ քահանա
Հուշանվերների վաճառողուհի
Ապոլոն
Քաղաքապետ
Ոստիկաններ
Երիտասարդներ
Անցորդներ
Տղա եւ աղջիկ
Եկեղեցու սպասավորներ

ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ

/Բեմը ներկայացնում է ժամանակակից լայն փողոց՝ պողոտա, որտեղ գործում են՝ աջ կողմից՝ դերասանն ու երաժիշտը, եւ բանաստեղծն ու նկարիչը՝ ձախ կողմից: Բեմի երկայնքով համապատասխանաբար դրված են՝ բանաստեղծի սեղանիկը գրքերով, թղթերով ու գրիչներով, նկարչի նկարակալը ներկապնակով ու վրձիններով, գեղանկարների կապոցով, երաժիշտի գործիքները՝ ջութակ, զուռնա ու դուդուկ, եւ դերասանի դատարկ սեղանիկը: Բեմի կենտրոնական ու վերեւի մասում տեղադրված է հուշանվերների վաճառողուհու կրպակ-տնակը, վերեւից՝ «Հուշանվերներ», ներքեւից՝ «Քավություն» գրություններով: Կարգալույծ քահանան գտնվում է վաճառողուհու հետ նույն կրպակում: Արարի սկզբում հիմնական գործող անձանցից բանաստեղծը, դերասանը, նկարիչը, երաժիշտը եւ կարգալույծ քահանան իրենց տեղերում են՝ յուրաքանչյուրը յուրովի ներամփոփված եւ մտախոհ հայացքով տնտղելով անցորդներին/:

ԴԵՐԱՍԱՆ */տեղաշարժվելով դեպի բեմի կենտրոնական առաջամաս/*- Ահա մեզ մոտ նման պարապուրդային վիճակ է արդեն... մոտ մեկ տարի... */ցույց է տալիս բեմին ներկա հերոսներին/:* Տեսնու՞մ եք՝ անցորդներից գրեթե ոչ ոք չի մոտենում մեր արվեստարարներին, ասես մենք նրանց համար ինչ-որ վարակի սպառնալիք ենք... Մեզ թվում է, որ մեր պոտենցիալ հաճախորդները պայմանավորված սաբոտաժ են սկսել մեր դեմ, թե ինչու՞՝ դեռեւս չենք բացահայտել... Սաբոտա՜ժ... Ասում են՝ սա քաղաքական երեւույթ է, ուրեմն մենք գտնվում ենք ինչ-որ քաղաքականության ազդեցության տակ... Չէ՜, համոզված եմ՝ դա կառավարության հետ կապ չունի, մեր կառավարությունն իսկապես ժամանակ չունի որեւէ կոնկրետ քաղաքականություն իրագործելու մեր՝ արվեստարարներիս վերաբերյալ: Դրա համար նույնիսկ ուրախ է մեր բանաստեղծը, նա, գիտե՞ք՝ ինչ է ասում... */մոտենում է բանաստեղծին/* Դու էլի պնդում ես, որ կառավարությունը խելամտորեն իրեն հեռու՞ է պահում մեզնից, եւ մասնակից չէ՞ էս սաբոտաժին...

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Այո, եղբայր դերասան, ես իմ համոզմունքը չեմ փոխի, եթե անգամ մեզ վտարեն այստեղից՝ Արեւային պողոտայի՜ց... Եվ ինչքան կառավարությունը իրեն հեռու պահի մեզնից, այնքան մենք լավ կտեսնենք մեր առաքելության ուժեղ ու թույլ կողմերը, եւ մենք գրեթե լիովին ազատ կլինենք ու առավել պատվախնդիր: Եղբայր դերասան, ցանկացած իշխող ուժ պետք է այնքան հեռու մնա ստեղծարարներից, որ նրանք վերջնականապես մոռանան իշխողների տեղն ու գոյությունը:

ԴԵՐԱՍԱՆ- Կարծում ես, որ մեզ կարող են անգամ վտարե՞լ այստեղից…

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Ինչու՞ չէ, մուրացկաններին վտարեցին, չէ՞… Կարծում ես՝ մենք շատ մեծ առավելությունն ունենք նրանց նկատմամբ…

ԴԵՐԱՍԱՆ- Դե դու հակված ես նսեմացնելու մեզ…

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Ամենեւին, եղբայր դերասան, ամենեւին: Թեեւ մեր մեջ ամենառոմանտիկը ինձ եք համարում, բայց ես մեր միջի ամենաիրատեսն եմ: Մի՞թե ճիշտ չեմ վարվում, որ այս Արեւային կոչեցյալ պողոտան հիմա անվանում եմ Բեւեռային… Մեկ- մեկ ինձ թվում է, թե այստեղ զբոսնում են նաեւ բեւեռային արջերը, որոնք մի օր կհոշոտեն մեզ: */Սեղանիկից վերցնում է մի թուղթ ու պատռում/:* Ինչքան էլ շենքերին փակցված ցուցանակները փոխեն եւ ավելի գեղեցիկ ու մեծատառ պաստառներ փակցնեն, այս պողոտան մեզ համար այլեւս Բեւեռային է դարձել… Մեր նկարիչ եղբայրը կարծում է նույնիսկ, որ այստեղ սողոսկած ցուրտը զգում են նաեւ ուրիշները՝ մեզ հետ արվեստային ուղղակի կապ չունեցող մարդիկ, նրանք, ովքեր ամեն օր կամ հաճախ անցնում են այս երկար ու լայնշի փողոցով: */Մոտենում է նկարչին, դերասանը վերադառնում է իր տեղը/:* Եղբայր նկարիչ, ասում ես՝ հասարակ մարդիկ է՞լ են սկսել մեզ պես մտածել մեր պողոտայի կապակցությամբ…

ՆԿԱՐԻՉ- Դե, նրանք ոչ թե մտածում են մեզ պես, այլ պարզապես զգում են, դա երեւում է նրանց վարքից. նրանք հիմա ավելի շատ են հարցեր տալիս մեր ծառայությունների վերաբերյալ եւ ավելի քիչ են օգտվում դրանցից: Նրանց մեջ ինչ-որ մեծ տագնա՞պ, թե՞ ծանր կասկած է բնավորվել, անվստահության ինչ-որ չղջիկ է թեւաբախում նրանց հոգիներում…

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Եվ այդ տագնապի դրոշմը դու տեսնու՞մ ես մարդկանց դեմքերին…

ՆԿԱՐԻՉ- Այո, եղբայր բանաստեղծ: Ես գեղանկարիչ եմ, հիմա, հանգամանքների դրդմամբ՝ ավելի շատ դիմանկարչությամբ եմ զբաղված. ես նկատում եմ բոլոր այն փոփոխությունները, որ կատարվում են մարդկանց դեմքերին: Հիմա նրանք շատ ավելի լարված են: Այժմ ինձ համար բավական դժվար է նման դեմքեր նկարելը, ինքս էլ ակամա լարվում ու տագնապում եմ…

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Գուցե դա ինչ-որ աղետի կանխազգացո՞ւմ է…

ՆԿԱՐԻՉ- Ես դժվարանում եմ որոշակի կանխատեսում անել, բայց ահա մեր երաժիշտ եղբայրը կարծում է, որ աղետը այնքան էլ հեռու չէ… */Մոտենում է երաժիշտին, բանաստեղծը վերադառնում է իր տեղը՝ շարունակելով հետեւել նկարչի գործողություններին/:* Երաժիշտ եղբայր, դու վերջերս ավելի հաճախ դուդուկ ես նվագում, կարծես քո տուփում ջութակ չկա. դա նշանակո՞ւմ է, որ տխուր ժամանակներ ենք թեւակոխում…

ԵՐԱԺԻՇՏ- Ինձ համար հաստատ էդ տխուր ժամանակներն եկել են, եղ-

բայր նկարիչ… Ինչո՞վ կարելի է լրացնել դատարկվող տարածությունն ու ժամանակը… դե, իհարկե, դուդուկի նվագով: Ես վերջին անգամ ջութակ նվագել եմ, գիտե՞ս՝ երբ… երեք ամիս առաջ. մի ծերուկ զույգ վալս պատվիրեց. ես հաճույքով նվագեցի Շտրաուսի հոգեզմայլ մեղեդիներից մեկը: Նման սքանչելի պար վաղուց չէի տեսել. ո՞նց էր պարում այդ խամրող, գեղեցիկ զույգը… */Հայտնվում է մի տարեց զույգ, վալս պարում ու հեռանում/:* Դե գիտես, նկարիչ եղբայր, երբ ես հաճույք եմ ստանում իմ նվագից, վճար չեմ վերցնում, իսկ էդ ծերուկը միանգամից ինձ հազար դոլար էր ուզում տալ… հրաժարվեցի: Ասում էր՝ փողը պիտի շռայլորեն ծախսել երաժշտության համար… արվեստի համար… Այդ խոսքերն ինձ համար ավելի թանկ էին, քան նրա առաջարկած հազարը:

ՆԿԱՐԻՉ- Երեք ամիս, ուրեմն, ջութակ չես նվագում, միայն՝ դուդուկ…

ԵՐԱԺԻՇՏ- Չէ, մի երկու անգամ զուռնա եմ նվագել… գինովցած երիտասարդների համար: Դե, էդպիսի կատարումներն ինձ համար կարեւոր չեն:

ՆԿԱՐԻՉ- Էդպիսով սկսել ես տեսնել աղետի կանխանշանները… Իսկ ի՞նչ բնույթի աղետ է քո մտապատկերը գրավել…

ԵՐԱԺԻՇՏ- Տեսնում եմ, թե ինչպես ջութակն ու դաշնամուրը, անուշադրության մատնված՝ փոշոտվում ու քայքայվում են, եւ դրանցից մարդկային դիակի հոտ է արձակվում… Այդ պատկերը կրկնվում է բոլոր մեծ ու փոքր պալատներում, տներում ու կրթարաններում, առեւտրի ու սպասարկման կենտրոններում, գրեթե ամենուր: Սակայն չորս կողմից երաժշտություն է լսվում, բայց՝ էժանագին ու պարզունակ կարգի:

ՆԿԱՐԻՉ- Իսկ ի՞նչ ես տեսնում նկարակալի, յուղաներկերի, վրձինների ու քանդակագործական հատիչների կապակցությամբ…

ԵՐԱԺԻՇՏ- Նույնը, եղբայր նկարիչ, նույնը… Բայց շատ մի տխրիր, մեր քահանան մարգարեանում է, թե ապագա երկրներում իշխելու են միայն ստեղծարարները: */Մոտենում է կրպակ-տնակին, ուր կարգալույծ քահանան մենակ է: Նկարիչը վերադառնում է իր տեղը՝ հետեւելով երաժիշտի ընթացքին/:* Բարի օր, Տեր հայր…

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ ՔԱՀԱՆԱ- Աստված քեզ պահապան, երաժիշտ որդի, բարի օր:

ԵՐԱԺԻՇՏ- Ինչու՞ մենակ ես, քահանա ջան, իսկ ու՞ր է հուշանվերների չքնաղ վաճառողուհին…

Կ.ՔԱՀԱՆԱ- Նա շուտով կվերադառնա, եղբայր, գնաց վարսերը հարդարելու: */Դեմքի խորամանկ արտահայտությամբ/* Տեսնենք՝ նոր սանրվածքո՞վ կգա…

ԵՐԱԺԻՇՏ- Ի՞նչ առիթով պիտի նոր սանրվածք անի… կամ՝ ու՞մ պատվին…

Կ.ՔԱՀԱՆԱ- Մեղա՜ քեզ, Տեր աստված, մեղա՜... Ինձ վրա չկասկածես, երաժիշտ եղբայր, մեր քույրը բոլորիս է սիրում, նա հատուկ ընտրյալ չունի այստեղ: Գուցե ինչ-որ տեղ սիրած էակ ունի, բայց այստեղ նա իրեն սրբի պես է պահում:

ԵՐԱԺԻՇՏ- Դա լավ է, լավ, եղբայր քահանա. մեր միջավայրը իսկապես սրբակեցություն է պահանջում... Տեր հայր, հիմա ոչ ոք չկա մեր կողքին, խնդրում եմ՝ գոնե ինձ ասա անկեղծորեն՝ ինչի՞ համար են քեզ իրականում կարգալույծ արել...

Կ.ՔԱՀԱՆԱ- Իմ պարզաբանումը նույնն է, եղբայր երաժիշտ, մյուսներին եւս ասել եմ ճշմարտությունը... Այսպես՝ ես պատուհանից պարբերաբար տեսնում էի, թե ինչպես է մեր արքեպիսկոպոսներից մեկը իր սենյակում հյուրընկալում տարբեր թեթեւաբարո աղջիկների եւ նրանց հետ ինքնամոռաց զբաղվում սեքսով... Մի օր համբերությունս հատեց, եւ ես լուսանկարեցի այդ վավաշոտ տեսարաններից մեկը... հեռադիտակի օգնությամբ: Հետո առիթ գտա եւ այդ լուսանկարը ցույց տվեցի Վեհափառին, խնդրելով, որ նա կարգի հրավիրի այդ սանձարձակ արքեպիսկոպոսին. զգուշացրի, որ նրա «սխրագործությունները» կարող են տեսնել նաեւ ուրիշները... Յոթ օր անց ինձ կարգալույծ արեցին՝ պատճառաբանելով, որ ես հաճախ եմ ուշանում ժամերգություններից:

ԵՐԱԺԻՇՏ- Իսկ դու կանանց հետ շփումներ չէի՞ր ունենում եկեղեցական ծառայության ընթացքում...

Կ.ՔԱՀԱՆԱ- Ունեցել եմ, բայց միշտ եկեղեցուց եւ հոգեւորականներից հեռու, ծածուկ ու ապահով վայրերում: Ես պատշաճությունը երբեք չեմ խախտել: Կանանց հետ ունեցած իմ կապերը կարելի է սեր բնորոշել, իսկ արքեպիսկոպոսինը՝ անառակություն:

ԵՐԱԺԻՇՏ- Երբ քեզ հեռացնում էին եկեղեցուց, ձեր հոգեւորականներից որեւէ մեկը չարախնդորեն չի՞ ասել, որ արքեպիսկոպոսի նման մեկն էլ դու ես, ինչի՞ ավելորդ աղմուկ ես բարձրացնում...

Կ.ՔԱՀԱՆԱ */ապշանքով/*- Հա, եղել է նման բան... Իսկ դու որտեղի՞ց գիտես, նրա՞նք են ասել քեզ...

ԵՐԱԺԻՇՏ- Ո՛չ, Տեր հայր, ես ուղղակի ենթադրում եմ. երեւի արդեն լավ գիտեմ մարդկանց բնույթը: Հիմա սերն ու անառակությունն այնպես հեշտությամբ են խառնում իրար... */Դադար/* Քահանա ջան, քո ծառայակիցները գիտեին նաեւ քո արկածների մասին. այդպիսով՝ որոշել են պատժել երեսպաշտին... Բայց մի նեղսրտվեք, արդարությունն, իրոք, ձեր կողմն է, Տեր հայր:

Կ.ՔԱՀԱՆԱ- Շնորհակալ եմ, որդիս: */Կ. քահանան խաչակնքում է, ապա մեկ-երկու հուշանվեր մաքրում եւ դնում տեղը/:*

ԵՐԱԺԻՇՏ- Հաճախորդներ ունեցա՞ք անցած օրերին...

Կ.ՔԱՀԱՆԱ- Ոչ, երաժիշտ եղբայր, ոչ… Արդեն մեկ շաբաթ է՝ ոչ ոք ինձ չի դիմել: Մինչդեռ փողոցում՝ եկեղեցուց դուրս շարունակելով իմ ծառայությունը, ես հույս էի փափագում, որ մարդիկ հիմա ավելի անկաշկանդ, անմիջականորեն կհանձնառեն իրենց մեղսաքավությունը… Առայժմ սպասելիքներս չեն արդարանում: Դեռ լավ է, որ այս կրպակում եմ կանգնած. հուշանվերների գնորդները մեկ-մեկ, հընթացս, ինձ հարցեր են տալիս մեղքի ու պատասխանատվության մասին, բայց առավել հաճախ՝ հեգնանքով ու ծաղրական տոնով: Նրանք մի տեսակ շատ շփոթված են, կարծես թե ինքնապաշտպանական նոր միջոցներ ու ձեւեր են փնտրում…

/Մոտենում է պատանի մի զույգ՝ տղա եւ աղջիկ. նրանք մի պահ զննում են հուշանվերները/:

ՏՂԱ */կ.քահանային, խնդմնդալով/-* Քեռի քահանա, իսկ դուք սպիտակ մարզաշապիկ չունե՞ք… առջեւում՝ Քավություն, մեջքին՝ 666 գրած… Այ թե կլաս կլիներ…

ԱՂՋԻԿ- Իսկ ապարանջան չունե՞ք՝ «Ես միշտ անմեղ եմ» գրությամբ…

/Զույգն ինքնագոհ ծիծաղում ու հեռանում է/:

Կ.ՔԱՀԱՆԱ */տրտում հայացքով ճանապարհելով զույգին/-* Տեսնու՞մ եք, երաժիշտ եղբայր… Սա դեռ անմեղ կատակ է, ավելի տխուր ու վիրավորական բաներ են պատահում…

ԵՐԱԺԻՇՏ- Այո, ցավալի է: Էս ջահելները սկսել են կողմնորոշվել դեպի հեգնանքը, ծաղրը, զվարճանքը…

Կ.ՔԱՀԱՆԱ- Այո, որդիս, ճշմարիտ ես դատում: Մարդիկ նյութական աշխարհի մոգության տակ խուճապահար են եղել: */Դադար/* Ճշմարիտն ասա, երաժիշտ եղբայր, իրո՞ք դու նյութականի, այսինքն՝ աշխատավարձի պատճառով ես լքել նվագախումբը…

ԵՐԱԺԻՇՏ- Դե չէ… Իսկապես ամոթալի աշխատավարձ էին տալիս, դրա համար արժեր իրոք հեռանալ, բայց ես ստեղծագործական տարաձայնության պատճառով թողեցի սիմֆոնիկը:

Կ.ՔԱՀԱՆԱ- Նվագախումբը ցածրակարգ գործե՞ր էր կատարում…

ԵՐԱԺԻՇՏ- Խնդիրը երգացանկը չէր… Նոր գլխավոր դիրիժոր բերին մեր նվագախումբ, ջահել, անվաստակ մեկին: Ես առաջին ջութակն էի նվագախմբում: Առաջին իսկ փորձի ժամանակ էս ջահելն ասաց, թե ջութակ նվագելու իմ արտիստիկ ոճը նրան դուր չի գալիս, պետք է փոխել… Ես նրան միանգամից պատասխանեցի, որ նա պետք է իր հետույքը փոխի… Ահա այդպիսի խորը տարաձայնություն:

Կ.ՔԱՀԱՆԱ- Բայց շատ էր վիրավորական, չէ՞… հետույքը փոխե՛լ…

ԵՐԱԺԻՇՏ- Ես էնքան էլ մեղք չունեմ էդ խոսքի համար: Ողջ նվագախումբն էր էդ ժամանակ խոսում, թե էդ դիրիժոր կոչեցյալը անձնական ինչ հատկանիշների շնորհիվ է գրավել հանրապետության առաջին սիմ-

ֆոնիկ նվագախմբի նվագավարի փայտիկը… Դա իսկական անարգանք էր՝ փորձառու եւ մաքուր արհեստավարժներիս ուղղված:

Կ.ՔԱՀԱՆԱ- Ձայրույթն ու մոլուցքը զսպել է պետք, որդիս: Մեր դժբախտությունների գլխավոր պատճառներց մեկը մոլությունն է, հատկապես իշխանական ու նյութական մոլությունը, ձեւավորվող բարեկեցությունն էլ խիստ երկդիմի ու խաբուսիկ է… */Վերցնում է մի հուշանվեր ու մի պահ զննում այն/:* Այ էս հուշանվերի պես…

ԵՐԱԺԻՇՏ- Ինձ թվում է, քահանա ջան, որքան մարդկանց բարեկեցությունը բարձրանում է, այնքան մեղսավորները շատանում են, եւ որքան մեղսավորները բազմանում են, նույնքան նվազում է քավության կարիք ունեցողների թիվը:

Կ.ՔԱՀԱՆԱ- Տխուր եզրահանգումներ ես անում, եղբայր: Ես իմ հերթին եմ ասում, որ հղփացման դեւը շրջում է ամենուր, իսկ արարչական ճգնավորները խղճահարված դռնեդուռ են ընկել: */Դադար/* Ակնհայտ է, որ մարդկանց հոգիներում մեծ ցնցումներ են կատարվում, սակայն անհայտ է, թե ինչու նրանք ստուգված ուղենշաններով չեն առաջնորդվում, նրանք ասես չեն նկատում, որ ընդհանրապես կան ուղենշաններ… Միեւնույն է, ես հույսս չեմ կորցնում. մարդկային այս աներգ նահանջը ժամանակվոր է:

ԵՐԱԺԻՇՏ- Ի՞նչ ուղենշանների մասին է խոսքը, Տեր հայր… Էլի նկատի ունես Աստծո՞ ճանապարհը…

/Հայտնվում է հուշանվերների վաճառողուհին՝ նոր սանրվածքով ու գեղեցիկ հարդարված/:

ԵՐԱԺԻՇՏ- Օ՜ ինչպիսի գեղեցկություն, ինչպիսի՜ վերափոխություն… Շնորհավոր նոր սանրվածքդ, քույրս…

Կ.ՔԱՀԱՆԱ- Հա, շատ գեղեցիկն է…

ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐԻ ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Շնորհակալ եմ, տղաներ: Ուրախ եմ, որ ձեզ դուր եկավ սանրվածքս. սրա համար քսան հազար դրամ եմ վճարել:

ԵՐԱԺԻՇՏ- Թույլ տվեք իմանալ, քույր, թե ի՞նչ նպատակով ես արել նման շռայլություն…

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Աննպատակ, երաժիշտ եղբայր, աննպատակ… Չէ, համենայն դեպս, նպատակս էն էր, որ ձեզ մի քիչ զվարթացնեմ ու պայծառացնեմ ձեր հայացքները… Կարծում եք՝ չե՞մ տեսնում, թե որքան տխուր ու անտրամադիր եք վերջին ժամանակներս… Ուզեցի ձեզ մի փոքր ուրախացնել նոր սանրվածքով… իմ նոր իմիջով՝ ինչպես կասեն փառասեր մարդիկ:

ԵՐԱԺԻՇՏ- Շնորհակալություն, քույրիկ, դու մեզ իսկապես ուրախացրիր: Կարծում եմ, եթե շաբաթը մեկ անգամ մեզ նման նվեր մատուցես, մենք կկարողանանք էստեղ ավելի երկար դիմակայել…

Կ.ՔԱՀԱՆԱ- Ճիշտ որ... ես կաղոթեմ դրա համար:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ */ծիծաղում է/*- Տեր հայր, աղոթքը չի օգնի: Այ ուրիշ բան, եթե դուք հերթով նոր սանրվածքիս գումարը տաք, էդ դեպքում ես պատրաստ եմ ամեն շաբաթ ձեզ նման հաճույք պատճառել:

ԵՐԱԺԻՇՏ- Հետաքրքիր գաղափար է, ես դրա մասին կմտածեմ */վերադառնում է իր տեղը/:*

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Տեսա՞ր, Տեր հայր, հենց որ գումար տալու մասին խոսք եղավ, պուկ՝ հեռացավ... Ախ, դու ժլատ երաժիշտ:

Կ.ՔԱՀԱՆԱ- Նրան մեղադրել պետք չէ. նա վերջին մեկ ամսվա ընթացքում հազիվ տաս հազար դրամ է վաստակել:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Մի՞թե... չգիտեի, որ էդպիսի խորը ճգնաժամի մեջ է մեր ընկեր երաժիշտը... Բայց ես ամեն օր տեսնում եմ, թե նա ինչպես է նվագում տարբեր մարդկանց համար...

Կ.ՔԱՀԱՆԱ- Հիմա նա եւ մյուսները հիմնականում անվճար են աշխատում:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Անվճա՞ր... ինչու՞... Որոշել են բարեգործությո՞ն անել... իրենց սովախեղդ անելով...

Կ.ՔԱՀԱՆԱ- Նրանք որոշել են փրկել իրենց արվեստը... փրկել իրենք իրենց... նաեւ՝ փրկել ուրիշներին...

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Ինչի՞ց փրկել, Տեր հայր... Հո նոր ջրհեղեղ չի՞ սպասվում... Նոր պատերա՞զմ է լինելու... ժանտա՞խտ է տարածվելու... Գլոբալ տաքացումի՞ց են ուզում մեզ փրկել... Նրանք իրենց փրկիչների տե՞ղ են դրել... */Բարձր ձայնով/* Է՛յ, տղաներ, դուք փրկիչնե՞ր եք, թե՞ արվեստագետներ... */Մոտենում է, նախ, դերասանին, ապա բանաստեղծին, նկարչին ու երաժիշտին եւ տալիս նույն անպատասխան հարցերը/.* Էս ի՞նչ դերասանություն եք սկսել... էս ի՞նչ օյինբազություն եք ուզում խաղալ մեր գլխին... */Վերադառնում է իր տեղը եւ շարունակում խոսակցությունը կ.քահանայի հետ/.* Տեր հայր, գուցե նրանք մեծ մե՞ղք են գործել, գուցե էդպես ցանկանում են քավե՞լ իրենց հանցանքը... Ավելի լավ չէ՞ր լինի՝ քեզ մոտ միանգամից խոստովանվեին...

Կ.ՔԱՀԱՆԱ- Նրանք ոչ մի հանցանք էլ չեն գործել, բայց համընդհանուր մեղքի իրենց բաժնով ուզում են հատուցել: */Դադար/* Նրանք մեկ անգամ չէ, որ քավության համար խոսել են ինձ հետ, նույնիսկ իրենց կատարած մանր չարաճճիությունների ու ստեղծագործական թնջուկների վերաբերյալ թողություն խնդրեցին... Մի անգամ */ծիծաղելով/* մեր նկարիչը մոտեցավ ինձ ու կարմրատակած ասաց...

ՆԿԱՐԻՉ */հեռակա արձագանքելով կ.քահանային/*- Ասացի՝ Տեր հայր, մի գեղեցիկ աղջկա դիմանկար եմ արել երեկ, նա անչափ գեղեցիկ է ոտից գլուխ... ես մտովի պատկերացրել եմ մարմնական այդ հրաշքի ողջ

հրապույրը եւ հետո, միայնակ պատկերել եմ նրան… մերկ… գիշերը, երբ անքնությունը դարձյալ ինձ նեղում էր… Հետո խաղաղ քնեցի… Ես մեղք եմ գործել, չէ՞, Տեր հայր, թողություն տուր մեղքիս:

Կ.ՔԱՀԱՆԱ- Ասացի՝ որդիս, դու ոչ թե մեղք ես գործել, այլ կատարել ես արվեստային սուրբ աշխատանք, դու գովերգել ես կանացի խորախորհուրդ գեղեցկությունը: Ես քեզ օրհնում եմ դրա համար: Խնդրեցի ցույց տալ այդ նկարը. հրա՜շք էր իրոք…

ՆԿԱՐԻՉ */իր տեղից ցույց է տալիս մերկ կնոջ մի գեղեցիկ գեղանկար/*- Ահա այդ նկարը…

Կ.ՔԱՀԱՆԱ- Իսկ մեր բանաստեղծը մի օր ինձ խոստովանեց, որ ամաչում է իր այն ստեղծագործությունների համար, որոնք ընթերցողների կողմից չեն ընկալվում ու գնահատվում, պարզապես չեն ընթերցվում: Նա ուզում էր վառել իր այդ թղթերը, դրանով կարծես թե մեղքի պատարագ էր ուզում անել… Ես չթողեցի: Կարդացի նրա նշած բանաստեղծությունները եւ խորապես ազդվելով՝ ասացի անկեղծորեն՝ եղբայր բանաստեղծ, քո այդ գրվածքները մի օր դասվելու են բանաստեղծական գոհարների շարքը, մի զրկիր մեզ ու գալիք սերունդներին գեղագիտական մեծ բավականությունից ու հոգեմաքրումից…

ԲԱՆԱՍՏԵՂԾ */իր տեղից արձագանքելով կ.քահանային/*- Դե, քահանայի ասածը չափազանցված կանխագուշակություն է լոկ… Ես չեմ կասկածում նրա անկեղծությանը, բայց պոեզիայի հարցում ես ավելին գիտեմ, քան նա: Պիտի ասեմ, որ այդ… չընկալվող գործերի մի մասը, համենայն դեպս, ես վառել եմ… Քահանան դա չգիտի:

Կ.ՔԱՀԱՆԱ- Ես չգիտեմ, թե ինչ ավելի խորը տվայտանքներ են ապրում մեր արվեստարարները, սակայն նրանց դեմքերին անկյալ հրեշտակների ստվերների խաղերն եմ տեսնում…

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Տեր հայր, ես էլ տեսնում եմ, որ դուք շատ բան գիտեք մեր տղաների մասին, իսկ ինձ տեղյակ չեք պահում… ինչու՞… Կարծում եք՝ ինձ չե՞ն հուզում նրանց խնդիրները, կարծում եք, թե ես ընդամենը մի շահասեր վաճառակա՞ն եմ… հա՞, եղբայր քահանա…

Կ.ՔԱՀԱՆԱ- Ոչ-ոչ, քույրս, ես նման տխուր մտքեր չունեմ ձեր վերաբերյալ:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Եթե այսուհետ էլ դուք ձեզ ծածկամիտի պես պահեք, ես ձեզ…

Կ.ՔԱՀԱՆԱ- Հասկացա, ինձ կվտարեք ձեր տնակից… որպես անհուսալի կենվորի:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Հա, հենց էդպես:

Կ.ՔԱՀԱՆԱ- Համաձայն եմ: Գիտե՞ս, քույրս, ես ուղղակի չէի ուզում քեզ

անհանգստացնել նոր հոգսերով, առանց այն էլ դու հոգսաշատ կին ես, երկու ընտանիք ես կերակրում:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Դա իմ անձնական գործն է, թե ես քանի ընտանիք եմ կերակրում, Տեր հայր, բայց չէ՞ որ ես նաեւ... էդ ո՞նց էր ասում մեր պոետ եղբայրը...

ԲԱՆԱՍՏԵՂԾ */իր տեղից արձագանքելով հ.վաճառողուհուն/*- Հասարակական էակ...

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Հա, հասարակական էակ եմ նաեւ. ձեր խնդիրները նաեւ իմ խնդիրներն են, Տեր հայր: Մի մոռացեք, որ ես բարձրագույն կրթությամբ պատմաբան եմ... Իսկ դուք իմ մեջ միայն վաճառողուհու եք տեսնում... Երբ կյանքը նորից նորմալ հունի մեջ մտնի, ես կվերադառնամ պատմագիտական իմ հետազոտություններին:

Կ.ՔԱՀԱՆԱ- Տա Աստված, ես քեզ հրատապ թեմաներ կհուշեմ եւ դու ատենախոսություններ կգրես:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Ի՞նչ թեմաներ, քահանա ջան...

Կ.ՔԱՀԱՆԱ- Ասենք... կանանց դերը Վարդանանց պատերազմի ժամանակ...

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Այո, հետաքրքիր է, ուրի՞շ...

Կ.ՔԱՀԱՆԱ- Ասենք... կանանց իրական իշխանությունը հայոց թագավորությունների օրոք:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Շատ ուժեղ կանացի թեմա է... Իսկ կանայք հայ եկեղեցու՞մ... վա՞տ թեմա է...

Կ.ՔԱՀԱՆԱ */ծիծաղելով/*- Ես էլ հաճույքով կգրեի նման մի ուսումնասիրություն:

/Բարձրանում է աղմուկ, ապա իրարանցում է սկսվում դերասանի շուրջ: Երկու երիտասարդ թեթեւակի քաշքշում են դերասանին ու կոպտորեն վիճաբանում նրա հետ: Դերասանը ուզում է ազատվել նրանցից՝ կրկնելով՝ «Դե թողեք ինձ, ես ձեզ համար ծաղրածու չեմ»: Անցորդներն անտարբեր նայում են տեսարանին ու հեռանում/:

ԵՐԻՏԱՍԱՐԴ 1- Նորից եմ ասում, ընկեր, մեզ համար Դմբուզ Գարսոյի տնազն արա...

ԵՐԻՏԱՍԱՐԴ 2- Լավ, Ռիժի Գոգոյինն արա... Ի՞նչ ա, վախենո՞ւմ ես, դե արա, է՜... փող ենք տալիս, չէ՞...

ԴԵՐԱՍԱՆ- Ես նման պատվերներ չեմ կատարում, ինձ ձեր փողը պետք չէ, բաց թողեք ինձ... Ես ծաղրածու չեմ... Ես էժանագին կոմիկ չեմ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ 1- Բա էլ ի՞նչ ես էստեղ ցցվել, իբր դերասան ես... էն ա կթողնեինք՝ էստեղ մի կոշիկ մաքրող կնստեր՝ փող կաշխատեր իր համար... Կոշիկ կարա՞ս մաքրես...

ԵՐԻՏԱՍԱՐԴ 2- Բա ի՞նչ համարներ ես կատարում, դերասան ընկեր... Մեզ քո արվեստին մի քիչ տեղյակ պահիր:

ԴԵՐԱՍԱՆ- Ես մենախոսություններ եմ կատարում Շեքսպիրից, Մոլիերից, Իբսենից, Սունդուկյանից, Պարոնյանից… Բանաստեղծություններ եմ ասմունքում մեծ պոետների գործերից:

ԵՐԻՏԱՍԱՐԴ 2- Էդ էն Շեքսպիրն ա՞, որ ասում ա՝ լինե՞լ, թե՞ չլինել…

ԵՐԻՏԱՍԱՐԴ 1- Մենք միշտ կլինենք, իսկ դու չես լինի, «դեռասա՜ն»…

ԴԵՐԱՍԱՆ- Դուք Համլետի մենախոսությունն եք ակնարկում:

ԵՐԻՏԱՍԱՐԴ 1- Համլետն ո՞վ ա… */Դիմելով ընկերոջը/* Գագ, մենք էստեղ կանգնած՝ նա ինչ-որ համլետներից է խոսում… Լավ, գնացինք, թե չէ զուր ժամանակ ենք կորցնում էստեղ: Մեր տրամադրությունը նա չի կարող բարձրացնել:

/Վիճաբանողներին շրջապատում են բանաստեղծը, նկարիչը, կ.քահանան, երաժիշտը, հ.վաճառողուհին եւ էլի մեկ-երկու պատահական անցորդ: Երկու երիտասարդները բաց են թողնում դերասանին ու պատրաստվում հեռանալ/:

ԵՐԻՏԱՍԱՐԴ 2- Մենք քեզ փող էինք տալիս մեր ուզածի համար, իսկ դու քո ուզածով հրաժարվեցիր. մեղքը քո վիզը, դերասան… Գնացինք, Հենդ…

ԴԵՐԱՍԱՆ- Ամեն ինչ չի գնվում, եղբայր:

ԵՐԻՏԱՍԱՐԴ 1- Լավ-լավ, սոփեստություններ դուրս մի տուր:

ԵՐԻՏԱՍԱՐԴ 2- Բոլորիդ էլ էսպես */ցույց տալով շրջապատողներին/* կարանք առնենք… պարզապես հիմա շտապում ենք:

/Բանաստեղծը, նկարիչը, կ.քահանան, երաժիշտը եւ հ.վաճառողուհին միասին գոչում են/.

-Ձեռքներդ հեռու մեր արվեստարարներից, մոլորվածնե՜ր…

/Երիտասարդները շշմած նայում են բացականչողներին, ապա հապճեպ հեռանում են: Բանաստեղծը, նկարիչը, երաժիշտը եւ դերասանը բոլորված՝ աջ ձեռքները դնում են իրար վրա եւ միաբերան գոչում/.

-Մենք չենք դավաճանի մեր մուսաներին…

Կ.ՔԱՀԱՆԱ- Աստված ձեզ պահապան */խաչակնքում է/:*

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Ես ձեզ հետ եմ, տղաներ:

/Հերոսները վերադառնում են իրենց տեղերը: Բանաստեղծը, նկարիչը, երաժիշտը եւ դերասանը սկսում են ստեղծագործել՝ գրել, նկարել, նվագել եւ ասմունքել՝ յուրաքանչյուրն իր կոչմանը համապատասխան: Դերասանը արտիստիկ փայլուն ոճով ներկայացնում է շեքսպիրյան Համլետի «Լինե՞լ, թե՞ չլինել» մենախոսությունը: Նրան են մոտենում երգչուհին ու բալետի պարուհին եւ հմայված դիտում կատարումը: Դերասանը նկատելով դա՝ ընդհատում է մենախոսությունը/:

ԴԵՐԱՍԱՆ- Ձեզ դու՞ր եկավ իմ կատարումը, տիկնայք…

ԵՐԳՉՈՒՀԻ- Շա՜տ…

ԲԱԼԵՏԻ ՊԱՐՈՒՀԻ- Շա՜տ…

ԵՐԳՉՈՒՀԻ- Դու՞ք որ թատրոնում էիք աշխատում… Միանգամից աչքի է զարնում, որ արհեստավարժ եք:

ԴԵՐԱՍԱՆ- Այո, ճիշտ նկատեցիք. արտիստականում էի խաղում… Վիճեցինք բեմադրիչի հետ եւ… դուրս եկա: Այնտեղ մնալն արդեն իմաստ էլ չուներ. այնպիսի ճղճիմ ու էժանագին գործեր էին սկսել ներկայացնել… Դա անպատվաբեր է իսկական դերասանի համար… Իսկ դուք ովքե՞ր եք, քույրեր, երեւում է՝ արվեստը ձեզնից անպակաս է:

ԵՐԳՉՈՒՀԻ- Ես երգիչ եմ, եղբայր դերասան, օպերայում էի երգում… Իսկ ջահել ընկերուհիս բալետի պարուհի է, նույնպես՝ օպերայից:

Բ.ՊԱՐՈՒՀԻ- Էր… Ես իմ ավագ ընկերուհու հետ հեռացա օպերայից, որ նրան մենակ չթողնեմ իր կյանքի այս անորոշ փուլում… Ես դեռ կարապ չեմ պարել… Հույս ունեմ՝ մի օր գլխավոր պարուհիներից կլինեմ «Կարապի լճում»…

ԵՐԳՉՈՒՀԻ- Այո, նա շատ տաղանդավոր է, մի օր կհասնի իր երազանքին:

ԴԵՐԱՍԱՆ- Շատ անձնուրաց ընկերուհի ունեք, քույր երգչուհի: Իսկ դուք ինչու՞ հեռացաք օպերայից…

ԵՐԳՉՈՒՀԻ- Երկու ամիս առաջ ինձ ասացին, որ իմ ձայնի կարիքն այլեւս չկա: Մի նորաթուխ երգչուհի էին վերցրել, դեռ անփորձ աղջիկ… Մի խոսքով՝ ինձ ուղղակի վռնդեցին:

ԴԵՐԱՍԱՆ- Ցավալի է, ցավալի է… Իսկ դուք ի՞նչ ձայն ունեք, քույր…

ԵՐԳԻՉ- Կոլորատուրային սոպրանո… Ուզո՞ւմ եք՝ երգեմ ձեզ համար…

ԴԵՐԱՍԱՆ- Ուրախ կլինեմ լսել ձեզ, քույր երգչուհի:

ԵՐԳՉՈՒՀԻ- Սիրով… Անուշ կերգեմ… */Երգում է մի արիա «Անուշ» օպերայից: Նրա շուրջ խմբվում են մի քանի անցորդ: Վերջացնելով՝ ներկաները ծափահարում են/:*

Բ.ՊԱՐՈՒՀԻ- Բռավո՜…

ԴԵՐԱՍԱՆ */հիացական/*- Հիանալի է, քույր, հիանալի է… Իսկ դուք ի՞նչ կասեք, սիրելի անցորդներ…

ԱՆՑՈՐԴՆԵՐ- Լավ է, լավ… */Արագ հեռանում են/:*

ԴԵՐԱՍԱՆ- Տեսա՞ք՝ արդեն այսպես է. հենց որ իրական գնահատանքի պահն է գալիս, անցորդները լքում են մեզ:

ԵՐԳՉՈՒՀԻ- Ոնց որ թե դժվար ժամանակներ են սպասվում մեզ, այո՞, եղբայր դերասան…

ԴԵՐԱՍԱՆ- Այո… */Դադար/* Դուք կարող եք տեղ զբաղեցնել իմ կողքին, քույր երգչուհի… Իսկ դուք, սիրելի պարուհի, եթե կուզեք՝ մեր բանաստեղծին ընկերակցեք… */Ժպտալով/* Այսինքն՝ բոլորը ուրախ կլինեն ձեզ հյուրընկալել իրենց հարկի տակ… Կփորձենք միացյալ ուժերով դիմակայել:

ԵՐԳՉՈՒՀԻ- Շնորհակալ ենք, եղբայր: Մենք երկար չենք մնա նույն տե-

ղում, բայց ձեր պողոտա գալով՝ կկանգնենք ձեր եւ մյուսների կողքին, հավասարապես…

Բ.ՊԱՐՈՒՀԻ- Որպեսզի խանդ չլինի:

/Դերասանը ծիծաղում է/:

ԵՐԳՉՈՒՀԻ- Գիտենք, որ առանձին տեղ զբաղեցնելու հնարավորություն չեն տա մեզ այստեղ… քաղաքապետարանն ու ոստիկանությունը կգրոհեն մեզ վրա:

ԴԵՐԱՍԱՆ- Ցավոք, այդպես է. մեզ առայժմ հանդուրժում են այստեղ… Ինչ-որ է՝ ուրախ կլինեմ ձեր ներկայությամբ… Նաեւ միասին ներկայացումներ կտանք մեր Բեւեռային պողոտայում:

Բ.ՊԱՐՈՒՀԻ- Բայց այս պողոտան Արեւային չի՞ կոչվում…

ԴԵՐԱՍԱՆ- Մեզ համար արդեն Բեւեռային է… Դուք չե՞ք լսում հյուսիսային քամու սուլոցը…

/Բարձրանում է բքաշունչ քամու ձայն/:

ԵՐԳՉՈՒՀԻ */մի պահ ականջ է դնում/*- Լսում եմ… Տարօրինակ է, իսկապես… ոնց որ թե բեւեռային գոտում գտնվենք… Այդ բքի ձայնը բոլո՞րն են լսում, եղբայր դերասան…

ԴԵՐԱՍԱՆ- Առայժմ միայն մեր արվեստարարները… եւ հատուկենտ անցորդներ, որոնք դա բացատրում են կլիմայական անոմալիայով… Բայց մենք հո գիտենք, թե իրականում ինչ է տեղի ունենում…

Բ.ՊԱՐՈՒՀԻ */շարունակելով ունկ դնել/*- Իսկ ես ինչու՞ չեմ լսում այդ քամու ձայնը…

ԴԵՐԱՍԱՆ- Ոչինչ, շուտով կլսես…

ԵՐԳՉՈՒՀԻ */դողացնելով/*- Ես միանգամից մրսեցի… Լավ, գնանք ձեր մյուս ընկերների հետ ծանոթանանք: Մենք լսել ենք ձեր խմբի մասին. ասում են՝ խելառների իսկական համույթ է, որ գրավել է պողոտայի այս հատվածը ու գիշեր-ցերեկ ներկայացումներ է տալիս…

ԴԵՐԱՍԱՆ */ծիծաղելով/*- Դե մենք ինքներս ենք մեզ խելառ կոչում… Իմաստուն գժերի մի փոքրիկ դասակ ենք, որ պահում է վսեմ ստեղծագործության բարձր դիրքը… Վերամբարձ եմ արտահայտվում, բայց այդպես է:

ԵՐԳՉՈՒՀԻ- Գեղեցիկ ու կարեւոր ճշմարտությունը միշտ վերամբարձ է հնչում, ավելի շուտ՝ վեհաշուք… */մի փոքր չքմեղանքով/* ինչպես իմ ձայնը…

ԴԵՐԱՍԱՆ- Տեղին ու ճիշտ համեմատություն է, քույր երգչուհի… Հա, մեր բանաստեղծին խնդրեք, որ իր գրած վերջին բանաստեղծությունը կարդա ձեզ համար:

ԵՐԳՉՈՒՀԻ- Լավ:

/Երգչուհին ու բալետի պարուհին մոտենում են բանաստեղծին/:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Ուզում եք ձեզ համար իմ վերջին բանաստեղծությունը կարդամ, սիրելի արվեստարար կանայք…

ԵՐԳՉՈՒՀԻ- Այո, ինչպե՞ս կռահեցիք… Դուք մեզ ճանաչո՞ւմ եք…

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Ճանաչում եմ. ես ձեզ բազմիցս տեսել եմ օպերայի բեմին, ժամանակին ձեզ շատ եմ ծափահարել ձեր չքնաղ վոկալի համար… Իսկ այ */ցույց տալով բալետի պարուհուն/* երիտասարդ տիկնոջ արվեստին դեռ ծանոթ չեմ:

ԵՐԳՉՈՒՀԻ- Նա տաղանդավոր պարուհի է, շուտով կհամոզվեք… Շատ շոյված եմ ձեր խոսքերի համար, եղբայր բանաստեղծ: Ինչ լավ է, երբ քեզ ճանաչում են ու գնահատում… Ցավոք, նույնը չեմ կարող ասել ձեր վերաբերյալ, ձեզ ու ձեր ստեղծագործությանը ծանոթ չենք… ներեցեք…

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Ոչինչ, միք նեղսրտվի, դա հիմա այնքան սովորական է…

ԵՐԳՉՈՒՀԻ- Ի՞նչն է սովորական…

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Պոեզիա չկարդալը… բանաստեղծին չճանաչելն ու նրան անտեսելը…

ԵՐԳՉՈՒՀԻ- Ամաչում եմ, որ ես հիմա այդ չկարդացողների շարքում եմ:

Բ.ՊԱՐՈՒՀԻ- Իսկ ես ինձ Տերյանի գիտակ եմ համարում… նաեւ՝ Բայրոնի… Միշտ կարդում եմ նրանց ստեղծագործությունները… Մեկը տրտմաշուք տողեր ունի, իսկ մյուսը՝ վեհաշունչ… Երկուսին մեկտեղ եմ սիրում:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Գովելի զուգադրում է, սիրելի պարուհի:

ԵՐԳՉՈՒՀԻ- Վերջին տարիներին ես միայն լիբրետոների տեքստեր էի կարդում, ինչ մեղքս թաքցնեմ: Բայց հիմա խոստանում եմ կարդալ ձեր ողջ ստեղծագործությունը… Խնդրում եմ, որ ինձ հետո տեղեկություններ տաք նաեւ ձեր տաղանդավոր գրչընկերների մասին:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Սիրով, սիրով, սիրելի երգչուհի… Ահա իմ գրքերից մեկը… */սեղանիկից վերցնում եւ երգչուհուն է մեկնում մի գիրք/* կկարդաք:

ԵՐԳՉՈՒՀԻ */ստանալով գիրքը/*- Շնորհակալ եմ անչափ, եղբայր բանաստեղծ, անպայման կկարդանք ձեր գիրքը մեր քույրիկ պարուհու հետ… Կարծում եմ՝ բանաստեղծությամբ ու երգով ես կկարողանամ վերականգնել իմ հոգեկան խաթարված հավասարակշռությունը եւ դառնալ տոկուն ու լավատես. ինձ այնքա՜ն պետք է այդ ամենը…

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Ոգեկան ու հոգեւոր այդ զենքերը դուք անպայման կստանաք, տիկին, քանի որ գիտակցում եք դրանց արժեքը:

ԵՐԳՉՈՒՀԻ- Այո-այո, տա Աստված… Իսկ հիմա՝ ձեր վերջին բանաստեղծության ընթերցումը… հատուկ մեզ համար:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Հաճույքով, երգչուհի, ես ձեզ համար պատրաստ եմ բանաստեղծություններ կարդալ գիշեր ու տիվ… */Սեղանիկից վերցնում է մի թուղթ, արագ աչքի անցկացնում եւ ապա, առանց նայելու թղթին՝ սկսում արտասանել տպավորիչ ու ազդու տոնով/.*

Պոեզիան լվացվում է այն ժիր ծերուկի տեսածիրի մեջ,
որ երազում է պահակության անցնել
բուսաբանական մատղաշ այգում...
Էլեկտրոնային խաղուն թերթերը
նման են Չարենցի «Տաղարանին»,
որ սերտում են հայ հաքերները նոր արշավանքի նախօրեին...
Ցրտահարվող երկրի ոլորաններին
հայրեն ու էպոս ասացողների ջոկատն է մաքրում
բիբլիական ձյունը ավարով ծանրաբեռ ավտոների առաջ:
Ամենուստ լսելի են ռեմիքս սաղմոսներ.
«Տեր, փարիսեցուն պարգեւիր պատվո շքանշան,
նա է հայտնաբերում ամբոխի մեջ խեղվող համեստ հանճարին...»
Պոեզիան ստիպված է շտապ վերածնվել
բոլոր կառափնարաններին ու բեմահարթակներին,
քանզի անսահման է քինախնդրությունը
պակտ ու օրենքի, մեծարման ու ձոնի տողատակերում...
/Խոնարհում է գլուխը/:

Բ.ՊԱՐՈՒՀԻ- Բռավո՜... */ծափահարում է/* Հիանալի՜ տողեր...

ԵՐԳՉՈՒՀԻ */ծափահարելով/*- Ես վաղուց այսպես չէի ազդվել բանաստեղծությունից, եղբայր բանաստեղծ:

/Հայտնվում է բարձրահասակ, սիրունատես ու խենթավուն մի երիտասարդ, որը պարբերաբար ազդարարում է/.

ԱՊՈԼՈՆ- Ես Ապոլո՞նն եմ, ես Ապոլո՞նն եմ...

ԲԱՆԱՍՏԵՂԾ */զարմանքով ու հիացական/*- Մի՞թե... վերջապե՜ս...

ԵՐԳՉՈՒՀԻ- Ո՞վ է այս խենթը, բանաստեղծ...

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Խենթ չէ, խենթավուն է, ինչպես ստեղծարարության հետ կապ ունեցող յուրաքանչյուր ոք... Աստվածները վերջապես մեզ նախանշան ուղարկեցին:

Բ.ՊԱՐՈՒՀԻ- Ի՞նչ նախանշան... Ասեք, եղբայր բանաստեղծ, ես մի տեսակ վախ եմ զգում էդ... խենթավունի ձայնից...

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Վախենալ պետք չէ, ընդհակառակը՝ ոգեւորվել է պետք: Աստվածները այս երիտասարդի միջոցով մեզ հուշում են, որ ստեղծագործական ոգին անմեռ է եւ ոչ մի ուժ չի կարող այն կասեցնել, որքան էլ սառնամանիքները տիրեն Բեւեռային եւ այլ պողոտաներում... */Մոտենում է Ապոլոնին/.* Սպասիր, Ապոլոն... Հիմա մերոնց կանչեմ՝ նշենք քո հայտնությունը, լա՞վ...

ԱՊՈԼՈՆ- Լավ... Մեկ է՝ ես Ապոլո՞նն եմ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ */կանչում է/*- Նկարի՜չ, երաժի՜շտ, Տեր հա՜յր, քո՜յր, դերասա՜ն... եկեք այստեղ... տոնակատարություն ունենք... Ապոլո՞նն է եկել:

/Արագորեն Ապոլոնի շուրջն են խմբվում մեր հերոսները: Բանաստեղծը սեղանիկի տակից հանում է մի շիշ գինի, մի կում խմում եւ տալիս մյուսներին/: Խմեք, մեր եղբայր Ապոլոնը մեզ ավետիս է բերել:

/Արվեստագետները, կ.քահանան ու հ.վաճառողուհին հերթով կում են անում շշից/:

ԱՊՈԼՈՆ- Ինձ էլ տվեք... գինին գեղեցիկ է... */Վերցնում եւ խմում է շշից, հետո այն պահում ձեռքին/.* Իմն է, իմ գեղեցիկ գինին... ոչ ոքի չեմ տա...

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Քոնը լինի, եղբայր... Դու ավելիին ես արժանի:

/Ուրախացող խմբին է մոտենում սերժանտ ոստիկանը/:

ՍԵՐԺԱՆՏ ՈՍՏԻԿԱՆ- Ի՞նչ է կատարվում էստեղ... խմո՞ւմ եք... հարբեցողությա՞մբ եք զբաղված... խենթի հետ...

ՆԵՐԿԱՆԵՐ- Չէ-չէ, ի՞նչ հարբեցողություն, ավետիս է...

ԴԵՐԱՍԱՆ- Սպասեք, ընկերներ... Պարոն ոստիկան, իմ ընկերների անունից լիազորված եմ ձեզ հայտարարելու, որ մենք այստեղ թեթեւակի... ինքնաբուխ նշում ենք մի շատ էական իրադարձություն... Ապոլոնի հայտնությունը...

Ս.ՈՍՏԻԿԱՆ- Էս խենթի՞... Ի՞նչ է, դուք նրան առաջին անգա՞մ եք տեսնում... ողջ քաղաքը նրան գիտի... Նա մեկ Մակեդոնացի է, մեկ՝ Վարդան Մամիկոնյան, մերթ Դավիթ Անհաղթ է, մերթ՝ Պլատոն... մերթ Սպարտակ, մերթ Արամազդ... էսօր ի՞նչ է... Ապոլո՞ն... */Մոտենում է Ապոլոնին, որ գինու շիշը վերցնի նրանից, սակայն վերջինս պինդ գրկում է այն եւ բացականչում/.*

ԱՊՈԼՈՆ- Չեմ տա՜... սա անմահական հեղուկ է աստվածների ու հրեշտակների համար... Հեռու կաց, մահկանացու:

/Ս.ոստիկանը հեգնալից ծիծաղով հետ է քաշվում Ապոլոնից/:

Ս.ՈՍՏԻԿԱՆ */դիմելով արվեստագետներին, քմծիծաղով/-* Եվ դուք գլուխ եք դնում էս գինեմոլ Ապոլոնի հե՞տ... Նա ընդամենը խախտված նախկին մի ասպիրանտ է... Հա, հենց ձեզ նման խախտված:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Մեզ համար կարեւորը Ապոլոնի հայտնությունն է:

ԴԵՐԱՍԱՆ- Ապոլոնն է հենց նոր մեզ ավետիս բերել, որ մեր արվեստը անմեռ է:

Ս.ՈՍՏԻԿԱՆ- Եվ դուք էդ փուչ առիթը օգտագործում եք հասարակական վայրում հարբեցողությամբ զբաղվելո՞ւ... Էդ դեպքում իմ գործն ի՞նչ է... */Հանում է սուլիչը եւ սուլում/.* Հիմա ձեզ կտանենք ոստիկանական բաժանմունք, էնտեղ գրավոր բացատրություններ կտաք ձեր էս անթույլատրելի արարքի կապակցությամբ:

/Իսկույն հայտնվում են երկու ոստիկան/:

ՈՍՏԻԿԱՆ 1- Լսում ենք, պարոն սերժանտ:

ՈՍՏԻԿԱՆ 2- Ու՞մ կալանավորենք...

Ս.ՈՍՏԻԿԱՆ- Սրանց բաժանմունք տարեք:

ՈՍՏԻԿԱՆ 1- Բոլորի՞ն...

Ս.ՈՍՏԻԿԱՆ */մի պահ զննելով ներկաներին/*- Չէ, բացի սրանից, սրանից ... */ցույց է տալիս երգչուհուն ու Ապոլոնին/* եւ բացի էս... */հեգնանքով/* աննման զույգից */ցույց է տալիս կ.քահանային ու հ.վաճառողուհուն/:* Նրանց առայժմ անմեղ համարենք:

ՈՍՏԻԿԱՆ 1- Լավ... Դե գնացինք, պարոնայք զանցարարներ. մեր մեքենան քիչ հեռվում սիրով սպասում է ձեզ:

ԴԵՐԱՍԱՆ- Մենք զանցարարներ չենք, մենք արվեստագետներ ենք:

ԵՐԱԺԻՇՏ- Բայց սա իսկական հետապնդում է մեր դեմ... Դուք այս չնչին առիթով ուզում եք մեզ կալանավորե՞լ...

Ս.ՈՍՏԻԿԱՆ- Ոստիկանության համար առիթները չնչին ու մեծ չեն լինում. կա առիթ՝ կա կալանավորում:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Բայց, նախ, զգուշացում... տուգանք է պետք կիրառել... Մենք մինչեւ հիմա ոչ զգուշացվել ենք, ոչ տուգանվել:

ՆԿԱՐԻՉ- Դուք միշտ ցանկացել եք մեզ կալանավորել, դա ձեր քայլվածքից ու դեմքի արտահայտությունից էի տեսնում արդեն վեց ամիս:

ԴԵՐԱՍԱՆ- Հա, մենք ձեզ համար աչքի փուշ ենք... դուք մեզ այս պողոտայում ավելորդ ու... վտանգավոր եք համարում:

ԵՐԱԺԻՇՏ- Եվ ոչ միայն պողոտայում...

Ս.ՈՍՏԻԿԱՆ */գրեթե գոռալով/*- Դե վերջ տվեք ձեր ենթադրություններին... Շարժվեք դեպի մեքենան:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Մենք ոստիկանական մեքենա չենք նստի, մենք ոտքով կգնանք... մեր բարի կամքով...

/Արվեստագետները նայում են միմյանց եւ հայացքներով լուռ համաձայնություն կնքում/:

ԵՐԱԺԻՇՏ */ս.ոստիկանին/*- Կարող եմ, չէ՞, գործիքներս վերցնել ինձ հետ...

Ս.ՈՍՏԻԿԱՆ- Չէ, պահ տվեք քահանային:

ՆԿԱՐԻՉ- Իսկ ես գոնե մի երկու մատիտ ու թուղթ վերցնեմ...

Ս.ՈՍՏԻԿԱՆ- Ուզում եք մեր ծաղրանկարնե՞րը անել... չէ, ոչ մի թուղթ ու մատիտ... Քահանային պահ տվեք:

ՆԿԱՐԻՉ- Ծաղրանկար չեմ անի, այլ՝ ձեր իսկական դիմանկարը:

Ս.ՈՍՏԻԿԱՆ- Ասացի՝ ոչ:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Մեզ էլ տարեք: Մենք միասին էինք, չէ՞, էդ... զանցանքը գործում...

Կ.ՔԱՀԱՆԱ- Ճիշտ է՝ արդար չէ մեզ իրարից զանազանելն ու անջատելը, Աստծուն դուր չի գա դա... Մեզ էլ կալանավորեք:

Ս.ՈՍՏԻԿԱՆ- Ես իմ վերադասին եմ հաշվետու, ոչ թե Աստծուն:

Կ.ՔԱՀԱՆԱ- Մեղա՝ քեզ, Տեր Աստված… */խաչակնքում է/:*

ԵՐԳՉՈՒՀԻ- Ես էլ եմ նրանց հետ, ինձ էլ տարեք:

Բ. ՊԱՐՈՒՀԻ- Ես ավելի քան նրանց հետ եմ: */Քիպ մոտենում է ս.ոստիկանին/* Ինձ էլ տարեք նրանց հետ:

Ս.ՈՍՏԻԿԱՆ */կամաց ետ վանելով բ.պարուհուն/*- Դու ետ գնա, սիրունիկս:

ԱՊՈԼՈՆ- Ինձ էլ տարեք, նրանք իմ հրեշտակներն են, իսկ ես Ապոլոնն եմ…

/Ոստիկանները ծիծաղում են: Մինչ այդ, միջադեպի ընթացքում անցորդներ էին խմբվել ոստիկանների եւ գործող գլխավոր անձանց շուրջ: Նրանք լարված հետեւում են ծավալվող գործողությանը/:

ԱՆՑՈՐԴ ԿԻՆ- Էդ ի՞նչ եք անում, ոստիկաններ, ձեր ուժը էս խեղճ արվեստագետների՞ն է զորում…

ԱՆՑՈՐԴ ՏՂԱՄԱՐԴ- Ամոթ է, ամոթ… գնացեք հաբոգածներին, գողերին ու մյուս հանցագործներին բռնեք, նրանք մեր միսն են կրծում…

ԱՆՑՈՐԴ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԻՆ- Երկիրը լցվել է շառլատաններով, ավանտյուրիստներով ու այլասերվածներով, իսկ սրանք արվեստագետների են կալանավորում… Բաց թողեք նրանց: */Մոտենում եւ իրենով ծածկում է բանաստեղծին: Ուրիշ անցորդներ իրենցով ծածկում ու պաշտպանում են մյուս արվեստարարներին: Հնչում են անցորդների հատու ձայները՝ «Ձեռք չտաք նրանց, թույլ չենք տա… Գնացեք իսկական հանցագործներին ու մեղավորներին բռնեք»: Ոստիկանները ընկրկում ու ետ են քաշվում/:*

Ս.ՈՍՏԻԿԱՆ- Լավ-լավ, հանգստացեք. նրանց ոչ մի տեղ չենք տանում… պրծանք: Բայց նրանց ասեք, որ հասարակական վայրում չխմեն:

ԱՆՑՈՐԴՆԵՐ- Կասենք, դուք գնացեք…

/Ոստիկանները ետ-ետ նայելով՝ հեռանում են/:

ԴԵՐԱՍԱՆ */դիմելով անցորդներին/*- Շատ շնորհակալ ենք ձեզնից, ժողովուրդ…

/Մյուս հերոսներն արձագանքում են՝ «Շնորհակալ ենք ձեզնից, շատ զգացված ենք…»/:

Կ.ՔԱՀԱՆԱ- Աստված օրհնի ձեզ, սիրելիներս: Դուք քաջ ու իմաստուն մարդիկ եք:

ԱՆՑՈՐԴ ՏՂԱՄԱՐԴ- Բա ո՞նց… էդ ոստիկանները կարծում են, թե մեր արվեստագետները անտեր են, ինչ ուզենան՝ կանեն…

ԱՆՑՈՐԴ ԿԻՆ- Հա, մենք ձեր տերն ու պաշտպանն ենք, սիրելի արվեստագետներ… Ներող եղեք, որ հիմա միայն ծայրահեղ իրավիճակներում ենք ձեռք մեկնում ձեզ…

ԱՆՑՈՐԴ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԻՆ- Հիմա էնպիսի խառնակ ժամանակներ են, որ Քրիստոսն էլ գա, կփորձեն նրան ձերբակալել…

Կ.ՔԱՀԱՆԱ- Ճշմարիտ, ճշմարիտ ես ասում, աղջիկ ջան:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Թանկագին անցորդներ, քանի որ դուք մեզ ազատել եք տհաճ իրավիճակից, մենք ուզում ենք հիմա ձեզ նվիրել մի գեղեցիկ ներկայացում... Այո՞, գործընկերներ...

/Արվեստագետները արձագանքում են՝ «Այո-այո»/:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Բնականաբար, մեր ներկայացումը կլինի անվճար:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Իսկ ես հուշանվերներ կնվիրեմ ձեզ:

ԵՐԳՉՈՒՀԻ- Ես նոր երգի առաջին կատարմամբ հանդես կգամ ձեզ համար:

Բ.ՊԱՐՈՒՀԻ- Ես սուսերով պար կպարեմ ձեզ համար:

Կ.ՔԱՀԱՆԱ- Ես էլ ձեր մեղքերին լիակատար թողություն կտամ:

ԱՆՑՈՐԴ ԿԻՆ- Լավ, էս անգամ չենք աճապարի... կլսենք ու կդիտենք ձեր ներկայացումը:

ԱՆՑՈՐԴ ՏՂԱՄԱՐԴ- Հա, սիրով կլսենք ձեզ... մեր գործերը թող սպասեն:

ԴԵՐԱՍԱՆ- Ուրեմն՝ սկսեցինք...

/Ներկաները մեծ շրջան են կազմում: Թե ինչ բովանդակությամբ համերգներկայացում է մատուցվում, դա թողնում ենք բեմադրիչի հայեցողությանը: Բեմադրիչից, սակայն, պահանջվում է, որ բանաստեղծի, դերասանի, երաժիշտի, երգչուհու եւ բ.պարուհու կատարումները լինեն արվեստի բարձրարժեք ստեղծագործություններից, իսկ նկարիչը արագորեն պետք է պատկերի մի քանի անցորդների տպավորիչ դիմանկարները: Ներկայացումը սկսվում է դերասանի կատարմամբ, նա էլ վարում է հետագա համերգը: Ապոլոնը հաճախ ընկերակցում է մենակատարներին: Ներկայացման ընթացքում հ.վաճառողուհին հուշանվերներ է բաժանում անցորդներին: Կ.քահանան հուշիկ շրջում է մարդկանց մեջ եւ ձեռքը մեկ-մեկ նրանց գլխներին դնելով՝ շշուկով մեղքերի թողություն է տալիս ու օրհնում նրանց/:

ԱՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ

/Նույն պողոտա-բեմն է, սակայն առանց արվեստարարների, իսկ տնակկրպակում միայն հ.վաճառողուհին է, կրպակի վերեւում մնացել է լոկ «Հուշանվերներ» գրությունը: Հատուկենտ անցորդներ են հատում փողոցը: Մտամոլոր շրջում է Ապոլոնը եւ դիմում անցորդներին, վերջիններս ուսերը թոթվելով կամ չարձագանքելով՝ շտապ հեռանում են/:

ԱՊՈԼՈՆ- Որտե՞ղ են հրեշտակներս... Դուք չգիտե՞ք՝ որտեղ են իմ հրեշտակները...Նրանք այնքան լավն էին, նրանք այնպես լավ էին երգում ու արտասանում... Ջութակի նվա՜գը... Երգչուհի՜ն... Պարուհի՜ն... Որտե՞ղ են հրեշտակներս, որտե՞ղ են... Նրանք էստեղ էին բնակվում, սա նրանց տա-

ձարն է… Քանի՞ օր է՝ չկան… Որտե՞ղ են հրեշտակներս… Թռան գնացի՞ն, թե՞ սատանան նրանց քշել է էստեղից… Որտե՞ղ են հրեշտակներս…

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ */կանչում է կրպակից/*- Արի էստեղ, Ապոլոն ջան, արի էստեղ, կասեմ, թե որտեղ են մեր հրեշտակները…

/Ապոլոնը մոտենում է հ.վաճառողուհուն/:

ԱՊՈԼՈՆ- Որտե՞ղ են իմ հրեշտակները…

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Նրանց կալանավորել են, Ապոլոն ջան, կալանավորել են:

ԱՊՈԼՈՆ- Բոլորի՞ն…

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Քահանայից, երգչուհուց ու պարուհուց բացի: Քահանային արգելել են ինձ հետ աշխատել էս կրպակում, ընդհանրապես արգելել են քավության կարգ անել մեր քաղաքի որեւէ անկյունում… Բացարձակ կարգալույծ են արել մեր խեղճ քահանային:

ԱՊՈԼՈՆ- Իմ հրեշտակները նրան կփրկեն:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Մեր հրեշտակները հիմա ոստիկանության նկուղում են… բանաստեղծը, դերասանը, երաժիշտը եւ նկարիչը, հասկանո՞ւմ ես…

ԱՊՈԼՈՆ- Չեմ հասկանում… Ինչու՞ են նկուղում…

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Ասում եմ՝ կալանավորել են նրանց, Ապոլոն ջան: Հիշո՞ւմ ես էն օրը… երկու շաբաթ առաջ էր, երբ մեր հրեշտակներին ուզում էին տանել ոստիկանները, անցորդները չթողին… Հետո նրանք հրաշալի համերգ տվեցին իրենց պաշտպանած անցորդների պատվին:

ԱՊՈԼՈՆ- Հիշում եմ… Նրանք այնպես լա՜վ էին երգում ու արտասանում… Ջութակի ձա՜յնը… Երգչուհի՞ն… Պարուհի՞ն… Դերասա՞նը…

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Հա, շատ լավ ես հիշում: Այ էդ օրվան հաջորդած գիշերը մեր արվեստագետները… մեր հրեշտակները որոշեցին գիշերը մնալ պողոտայում: Նրանք գիտեին, որ ոստիկանների հետ դիմակայությունն ավարտված չէ, ուզեցին մնալ իրենց տեղերում ու արժանապատվորեն պաշտպանել իրենց դիրքերը: Նրանք ուզում էին ցույց տալ, որ էս կյանքի ու էս փողոցի իրական տերերն իրենք են, եւ գիշերներն էլ մեր քաղաքը պետք է շնչի արվեստով… հասկանո՞ւմ ես… */Ապոլոնը գլխով է անում/:* Այ էդ գիշերն էլ ոստիկանները եկան եւ նրանց լցրին մեքենան ու տարան… զոռով, քարշ տալով… ծեծելով… Գիշեր էր, ոչ ոք չկար, որ նրանց պաշտպաներ… Ես էլ էստեղ չէի… Իրենք պատմեցին ինձ էս ամենը, ես նրանց տեսակցության եմ գնացել… Կարո՞ղ ես պատկերացնել, թե որքան տխուր տեսարան էր նրանց կալանավորումը…

ԱՊՈԼՈՆ- Հա… կարող եմ… */Աչքերը հառում է վերեւ եւ ունկնդրում. լսվում են ոստիկանական մեքենայի շչակի, ոստիկանների հայհոյանքի ու դագանակներով հարվածների, արվեստագետների դիմադրության ձայներ ու գոռոցներ: Այդ տեսարանը կարելի է ցույց տալ նաեւ էկրանին/:*

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Հա, այ էդքան դաժան էին նրանց հետ վարվում:

ԱՊՈԼՈՆ- Հիմա նրանք ի՞նչ են անում էդ նկուղում... Էնտեղ երգո՞ւմ են, պարում ու արտասանու՞մ են ... ջութա՞կ են նվագում...

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Չէ՜, Ապոլոն ջան, էնտեղ երգել-նվագելու տեղ չէ... Նրանք հիմա սպասում են, որ իրենց կդատեն... Բայց երեւի մի ամիս մեր հրեշտակներին պահեն ու բաց թողնեն, պայմանով, որ այլեւս չերեւան էս... Բեւեռային պողոտայում... */Լսվում է ոռնացող քամու ձայն/:* Լսո՞ւմ ես ցրտաշունչ քամու ձայնը...

ԱՊՈԼՈՆ */մի պահ ունկ դնելով/-* Հա. լսում եմ... սաստիկ քամու ձայն է:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Ապրես, դու էլ լավ լսողություն ունես: Ես միայն նրանց կալանավորելուց հետո սկսեցի լսել էդ ձայնը, մինչ էդ չէի հավատում, կարծում էի, թե մեր արվեստագետները երեւակայում են:

ԱՊՈԼՈՆ- Իսկական բուք ու բորանի ձայն է... Ամա՜ն, շուտով էստեղ խիստ ձմեռ է լինելու...

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Հա, ճիշտ ես ասում, Ապոլոն ջան, խիստ ձմեռ կգա, եթե մեր հրեշտակներին էնտեղ երկար պահեն...

ԱՊՈԼՈՆ- Երկա՞ր կպահեն...

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Ես հիմա ստորագրություններ եմ հավաքում նրանց շուտ արձակելուն հասնելու համար: Արդեն մեր կոչի տակ ստորագրել է մոտ տաս հազար մարդ... արվեստագետներ, շինարարներ, բժիշկներ, վաճառականներ, զինվորականներ, խոշոր ու մանր գործարարներ, ուսանողներ... տաքսիստներ, արտագնա աշխատանքի գնացողներ... ով ասես... անգամ խաղամոլներ, թեթեւաբարո կանայք ու մուրացկաններ... Մեզ հոժարակամ դիմել են տասնյակ փաստաբաններ՝ անվճար ու հիմնավոր դատապաշտպանության համար... Եթե պետք լինի, մեծ ցույցեր կանենք քաղաքի բոլոր հրապարակներում ու պողոտաներում... կսկսենք հենց էստեղից... */Դադար/* Ապոլոն ջան, չկասկածես՝ մեր ժողովուրդը անպաշտպան չի թողնի իր արվեստարարներին... հասկանու՞մ ես...

ԱՊՈԼՈՆ- Ինչու՞... ինչու՞ նրանց կալանավորեցին... Նրանք Էնպես լա՜վ էին երգում, պարում ու արտասանում... */Մտամոլոր նայելով շուրջը ու դանդաղ հեռանալով/.* Որտե՞ղ են իմ հրեշտակները... Նրանց ու՞ր քշեց սատանան... որտե՞ղ են իմ հրեշտակները... */Նրա ձայնի մեջ աստիճանաբար տագնապն ահագնանում է/:*

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Կգա՜ն, կգա՜ն շուտով մեր հրեշտակները, Ապոլոն...

/Հեռվում երեւում է մի ոստիկան/:

ԱՐԱՐ ԵՐՐՈՐԴ

/Ընդարձակ խուց, որտեղ երկու թախտերին փակ աչքերով պառկած են բանաստեղծը եւ նկարիչը, իսկ աթոռներին ննջում են դերասանն ու երաժիշտը: Խուցն աղոտ լուսավորված է: Բանաստեղծը շուռումուռ գալով տեղում արթնանում եւ նստում է/:

ԲԱՆԱՍՏԵՂԾ */ցածրաձայն/*- Էս անտեր չոր թախտին քնել չեմ կարողանում... Ու՞մ հերթն է, թող գա պառկի էստեղ... Դերասան... դերասան...

ԴԵՐԱՍԱՆ */բացելով աչքերը/*- Ո՞վ է ինձ կանչում իմ երազի մեջ...

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Ես էի կանչում... Պառկելու քո հերթն է, չէ՞... արի: Ես վերջացրի իմ պառկած տառապանքը: */Կանգնում է, մոտենում դերասանին. վերջինս գնում- նստում է ազատված թախտին: Բանաստեղծը նստում է աթոռին/:*

ԴԵՐԱՍԱՆ- Քանի՞սն է ժամը...

ՆԿԱՐԻՉ */պառկած տեղից/*- Ժամը... գիշերվա մեկն անց կես է... Ես էլ չեմ կարող սրա վրա երկար պառկած մնալ... Երաժիշտ, արի, թախտը քեզ եմ նվիրում:

ԵՐԱԺԻՇՏ */բացելով աչքերը/*- Գիշերակեսին էս ի՞նչ շռայլ նվիրատվությունների խոստումներ եմ լսում... Առայժմ չեմ ուզում, նկարիչ ջան, մնա քո թախտին:

ՆԿԱՐԻՉ- Ինչպես կուզես, եղբայրս, միշտ պատրաստ եմ տեղս զիջելու քեզ:

ԵՐԱԺԻՇՏ- Էդ թախտի փոխարեն ինձ էն գեղեցկուհու նկարը կնվիրես, էն, որ մեղսագործություն ես համարում:

ՆԿԱՐԻՉ- Հա՜... Լավ, դա էլ կնվիրեմ քեզ, չնայած էդ մերկ հրաշքը խոստացել եմ քահանային... Ի դեպ, արդեն քանի օր է՝ մեր քահանան մեզ տեսակցության չի գալիս, չգիտե՞ք՝ ինչ է պատահել նրան...

ԴԵՐԱՍԱՆ- Քահանան բարձր ջերմությամբ պառկած է տանը: Երեկ մեր հուշանվեր քույրը հայտնեց էդ մասին... մոռացե՞լ ես...

ՆԿԱՐԻՉ- Իրոք... Ուրեմն մենք պիտի գնանք նրան տեսակցելու... Վաղուց հիվանդատեսի չեմ գնացել:

ԵՐԱԺԻՇՏ- Հա, պատրաստվիր՝ գնանք... */Ծիծաղում են/:*

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Որտե՞ղ է մրսել քահանան... նա արդեն դրսերում չի կանգնում... Երեւի հոգին է շատ մրսել... դրանից էլ է ջերմություն բարձրանում:

ԴԵՐԱՍԱՆ- Իսկ ինձ թվում է, որ քահանային արգելել են երեւալ այստեղ...

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Քեզ թվում է, թե՞ ինչ-որ բան գիտես…

ԴԵՐԱՍԱՆ- Թվալով՝ գիտեմ: Երկու օր առաջ ոստիկանը ասաց, չէ՞, որ մեր քահանան այլեւս հիմնովին կարգալույծ է… Հիմնովին:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Այո՜… Իսկ դա նշանակում է, որ նրան ամբողջովին արգելել են հոգեւոր կերպարով երեւալ մարդկանց… Ափսոս… Բայց նա շատ հոգեւոր կերպար է… Ոչինչ, կարծում եմ՝ մենք կկարողանանք նրան օգնել, որ վերականգնվի իր նախկին պաշտոնին:

ԴԵՐԱՍԱՆ */քմծիծաղով/*- Դե, հա, մենք ամենազոր ենք, չէ՞…

ՆԿԱՐԻՉ- Իհարկե… ամեն մեկս՝ մի Տորք Անգեղ… */ծիծաղում են/:*

ԴԵՐԱՍԱՆ- Ես ավելի շատ անհամբերությամբ սպասում եմ երգչուհու եւ պարուհու հերթական այցին:

ԵՐԱԺԻՇՏ ԵՎ ՆԿԱՐԻՉ- Ես էլ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Ես նրանց տաղանդն եմ սիրում, իսկ դուք՝ նրանց կանացի գեղեցկությունը:

ԴԵՐԱՍԱՆ- Ես նրանց տաղանդն էլ եմ սիրում:

ԵՐԱԺԻՇՏ ԵՎ ՆԿԱՐԻՉ- Ես էլ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Եթե մեր կյանքը արվեստով չի պսակվում, այդ կյանքը ունայն է, բեւեռային քամի… Մեր արվեստը ամենամեծ ուժն է: */Ոգեւորված ոտքի կանգնելով/* Նկատե՞լ եք, թե ոստիկանները հիմա որքան հարգալից ու ակնածալից են վերաբերվում մեզ…

ԵՐԱԺԻՇՏ- Այո, նրանք ասես մի տեսակ հմայված են մեզնով… Դա նրանց մոտ ենթագիտակցորեն է կատարվում, գիտակից վարք չէ:

ԴԵՐԱՍԱՆ- Դե, եթե ենթագիտակցությունն է մոգական շարժման մեջ, նշանակում է արվեստն այնտեղ հաղթանակ է տոնում, այդպես չէ՞…

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Ընդհանրապես՝ այո, թեեւ այդտեղ մութ հարցեր դեռ կան… Բայց որ արվեստը ոստիկանների վրա ներգործում է, դա արդեն բոլորս ենք տեսնում. ստեղծագործությունը հնազանդեցնում է բիրտ ուժին:

ԴԵՐԱՍԱՆ- Հապա մի տեսնեիք, թե էն երկու ոստիկանները ոնց էին լսում մեր բանաստեղծի վերջին գործը. այստեղ՝ այս նկուղում… այս խցում գրվածը… Հոգու ազատության մասին նման բանաստեղծություն ես երբեւէ չէի լսել ու կարդացել… «Անապատը ծաղկում է ազատ հոգիների ավյունով ու կանչով…»՝ հոյակապ ես գրել, իմ եղբայր բանաստեղծ: Ոստիկաններն էլ դա զգացին… Ի դեպ, նրանցից մեկն այսօր խորհրդավոր մեզ ասաց, որ էս գիշեր անակնկալ են մատուցելու մեզ… Հիշու՞մ եք…

ԵՐԱԺԻՇՏ- Նման բաները չես մոռանա… Անակնկա՜լ…

ՆԿԱՐԻՉ- Դե, երեւի մեզ ոգեւորելու համար ասաց, որ հուսադրված սպասենք մինչեւ մեր դատավարությունը:

/Լույսը վառվում եւ ներս է մտնում ոստիկան 1-ը/:

ՈՍՏԻԿԱՆ 1- Կրկին բարի երեկո, սիրելի արվեստագետներ: */Ի պատաս-*

խան լսվում է ներկաների «Բարի երեկո»-ն/: Ես ձեր խուցը մտնելիս լսեցի հարգարժան նկարչի մեկնաբանությունը. ոչ, անակնկալ կլինի… հիմա… Պատրա՞ստ եք…

ԴԵՐԱՍԱՆ- Միշտ պատրաստ ենք:

ՈՍՏԻԿԱՆ 1- Շատ լավ: */Կանչում է/* Արո՜, ներս բեր մեր հյուրին…

/Ներս են մտնում ոստիկան 2-ը եւ Ապոլոնը: Ներկաները հիացական բացականչում են՝ Ապոլո՛ն, Ապոլո՛ն/:

ԱՊՈԼՈՆ- Հրեշտակնե՜րս… հրեշտակնե՜րս… որտե՞ղ էիք… */արտասվախառն ուրախությամբ ողջագուրվում է արվեստագետների հետ/:* Դուք այստեղ եք, հրեշտակներս… Ձեզ գեղեցիկ գինի եմ բերել… ահա… */շիշը տալիս է դերասանին/:*

ԴԵՐԱՍԱՆ- Ապրես, Ապոլոն ջան: Դու մեզ շատ խանդավառեցիր եւ ուրախացրիր: */Բացում, մի կում է անում շշից ու տալիս մյուսներին/:*

ԵՐԱԺԻՇՏ- Ապոլոնի կենացը … */Մյուսները կրկնում են նույնը/:*

ՈՍՏԻԿԱՆ 2- Էդ խեղճը արդեն երեք օր է՝ պտտվում է ոստիկանության շենքի շուրջը…

ՈՍՏԻԿԱՆ 1- Ի վերջո մենք երկուսով */ցույց է տալիս գործընկերոջը/* որոշեցինք մեր հերթապահության օրը նրան ներս թողնել, որ տեսակցի ձեզ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՎ ԴԵՐԱՍԱՆ- Շնորհակալ ենք:

ՈՍՏԻԿԱՆ 1- Եվ մտածել ենք մի ծրագիր. հենց նոր ընկերոջս հետ մանրամասները ճշտեցինք:

ՆԿԱՐԻՉ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐ- Ի՞նչ ծրագիր…

ՈՍՏԻԿԱՆ 1- Հիմա կկազմակերպենք ձեր փախուստը…

ԴԵՐԱՍԱՆ- Փախու՞ստ… Շատ ռոմանտիկ է… Պատրաստ ենք:

ՆԿԱՐԻՉ- Սպասիր, եղբայր դերասան… Իսկ գուցե սա ծուղա՞կ է, գուցե՞ ոստիկաններն ուզում են մեզ նոր հանցանքի մեջ ներքաշել…

ՈՍՏԻԿԱՆ 1- Ոչ-ոչ… թողեք ձեր կասկածամտությունը, պարոն նկարիչ: Փախուստի պլանը հետեւյալն է. դուք հիմա խցից դուրս եք գալիս… Ապոլոնի գլխավորությամբ… բարձրանում եք առաջին հարկ եւ կենտրոնական դռնով հեռանում եք: */Ուշադիր նայում է արվեստագետներին/* Պա՞րզ է…

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Իսկ դու՞ք… ի՞նչ կլինի ձեզ հետ…

ԵՐԱԺԻՇՏ- Ձեզ կպատժեն մեր պատճառով…

ՈՍՏԻԿԱՆ 1- Ոչինչ, մի անհանգստացեք… Մենք կփակվենք էստեղ՝ խցում… եւ տպավորություն կլինի, թե դուք փախել, իսկ մեզ փակել եք խցում…

ԴԵՐԱՍԱՆ- Լավ էլ մտածել եք… մեր հաշվին: Ապրեք, ոստիկաններ ջան… Դե մենք գնանք, իսկ ձեզ… բարի ժամանց… */Ներկաները ծիծաղում են/:*

ՈՍՏԻԿԱՆ 1- Ահա բանալին, խցի դուռը փակեք գնալուց:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Իսկ բանալին ի՞նչ անենք…

ՈՍՏԻԿԱՆ 2- Տարեք ձեզ հետ:

ՆԿԱՐԻՉ- Իսկ եթե մեզ նորից կալանավորե՞ն… ու էս փախուստն էլ գումարեն մեզ վրա…

ՈՍՏԻԿԱՆ- Հանգիստ եղեք, ձեզ այլեւս ոչ ոք չի հանդգնի կալանավորել:

ՈՍՏԻԿԱՆ 2- Էսօր գիտե՞ք՝ Ազատության հրապարակում ինչ հզոր ցույց է եղել ի պաշտպանություն ձեզ… Քաղաքի մեծ մասն էնտեղ էր… Մի՞թե չէիք լսում բարձր վանկարկումները… Մեկ առ մեկ ձեր անուններն էին տալիս…

ԵՐԱԺԻՇՏ- Ես լսում էի, բայց կարծում էի՝ ձենով եմ ընկել…

ՆԿԱՐԻՉ- Շնորհակալ ենք, եղբայրներ… Ահա ձեր դիմանկարները, իմ փոքրիկ նվերը ձեզ… Սա էլ՝ սերժանտի ծաղրանկարը: */Թղթերը տալիս է ոստիկաններին/:*

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Իսկ սա իմ վերջին բանաստեղծությունն է՝ խցում գրվածը… խցագիրը, որ հավանել եք: */Թուղթը տալիս է ոստիկան 1-ին/:*

ՈՍՏԻԿԱՆՆԵՐ- Անչափ շնորհակալ ենք:

ԴԵՐԱՍԱՆ- Լավ, գնացինք… Ողջ եղեք, ոստիկաններ ջան… */Նա եւ մյուսները գրկախառնվում են ոստիկանների հետ եւ դուրս գալիս խցից: Դերասանը փակում է վանդակադուռը, բանալին դնում գրպանը/:* Բարով մնաք, մինչ նոր հանդիպում Բեւեռային պողոտայում…

ՄՅՈՒՍ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ- Ցտեսություն, տղաներ… Բեւեռային պողոտայում կսպասենք ձեզ:

ՈՍՏԻԿԱՆՆԵՐ- Ցտեսություն, մեծ հաջողություններ ձեզ: Մենք ձեր երկրպագուներն ենք:

ԱՊՈԼՈՆ */հետ գնալով/-* Դուք էլ կդառնաք իմ հրեշտակներից… */Վանդակաճաղերի արանքով ոստիկաններին է տալիս գինու շիշը/:* Գեղեցիկ գինի է, կում-կում խմեք:

ՈՍՏԻԿԱՆ 1- Թող քո ասածը լինի, Ապոլոն:

/Բոլորը դուրս են գալիս: Ոստիկանները մնում են խցում/:

ՈՍՏԻԿԱՆ 2- Առավոտ շեֆը շատ է գոռգոռալու մեզ վրա… Մեզ կվտարեն ոստիկանությունից, առնվազն… */Կում է անում շշից, տալիս ընկերոջը/:*

ՈՍՏԻԿԱՆ 1- Չգիտեմ, տեսնենք… Գուցե վերադասի մոտ էլ վերաբերմունք փոխված լինի նրանց նկատմամբ… Էլի եմ ասում՝ էդ մարդիկ շատ կարեւոր են մեզ համար… բոլորիս համար… Չգիտեմ՝ ոնց բացատրեմ, ուղղակի զգում եմ նրանց մեծ կարեւորությունը: */Կում է անում շշից/:*

ՈՍՏԻԿԱՆ 2- Նրանք մի տեսակ խփնվածի պես են, չէ՞…

ՈՍՏԻԿԱՆ 1- Յուրահատուկ են:

ՈՍՏԻԿԱՆ 2- Բայց ինչ-որ խելացի, կասեի՝ հանճարեղ խփնվածներ են:

/Նստում է թախտերից մեկին, ձեռքով ստուգում դրա ամրությունը/: Էս թախտին ոնց-որ թե կարոտել եմ…

ՈՍՏԻԿԱՆ 1- Մի քիչ սպասենք… թող կարգին հեռանան, նոր կքնենք:

ՈՍՏԻԿԱՆ 2- Նրանք երեւի արդեն վազքով հասել են Բեւեռային պողոտա…

/Ոստիկանները կամաց զրուցում են, ապա լույսն անջատվում է/:

ԱՐԱՐ ՉՈՐՐՈՐԴ

/Քաղաքապետի ընդարձակ աշխատասենյակը. այնտեղ են քաղաքապետը, բանաստեղծը, դերասանը, նկարիչը, երաժիշտը, երգչուհին, բ.պարուհին, հ.վաճառողուհին եւ Ապոլոնը: Քաղաքապետը նստած է իր բազկաթոռին, մյուսները կանգնած են/:

ՔԱՂԱՔԱՊԵՏ- Ասում եք, ուրեմն, անհրաժեշտ ստորագրությունները բերե՞լ եք…

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Այո, ահա, խնդրեմ, երեք հազար ստորագրություն մեր պողոտայում բնակվողների, աշխատողների ու համաքաղաքացիների կողմից: */Թղթերի տրցակը դնում է քաղաքապետի առջեւ/:*

ՔԱՂԱՔԱՊԵՏ- Եվ բոլոր էդ մարդիկ ուզում են պողոտան վերանվանել Ապոլոնի՞…

ՆԵՐԿԱՆԵՐ- Այո-այո:

ԴԵՐԱՍԱՆ- Նրանք շատ սիրով համաձայնեցին մեր առաջարկությանը:

ԵՐԳՉՈՒՀԻ- Խոստացան այդուհետ կանոնավոր հաճախել օպերա:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Ոմանք նույնիսկ խոստացան, որ վերանվանումից հետո իրենց երեխաներին կտանեն արվեստի դպրոց…

ՔԱՂԱՔԱՊԵՏ- Ապոլո՞ն… */հանկարծակի բորբոքումով/* Գրողը տանի, ո՞վ է էդ Ապոլոնը, որի համար երեք հազար հոգի խելքը թռցրել է…

ԱՊՈԼՈՆ- Ես եմ Ապոլոնը… Իսկ նրանք իմ հրեշտակներն են */ցույց է տալիս ներկաներին: Քաղաքապետից բացի մյուսները ծիծաղում են/:*

ՔԱՂԱՔԱՊԵՏ- Իսկապե՞ս… էս խեթի պատվի՞ն եք ուզում վերանվանել պողոտան… Դուք ինձ ձե՞ռ եք առնում…

ԴԵՐԱՍԱՆ- Դե, ոչ, էնքան էլ էդպես չէ… Ճիշտ է՝ նա Ապոլոնն է */ցույց է տալիս Ապոլոնին/,* ճիշտ է՝ նա վերջին մեկ տարում շատ բան է արել, որ Բեւեռային պողոտան այցելուների համար լինի գրավիչ, եւ մենք հայտնվենք մարդկանց ուշադրության կենտրոնում:

Բ.ՊԱՐՈՒՀԻ- Ճիշտ է՝ նա մեզ համար աստված է…

ՆԿԱՐԻՉ- Բայց եթե ձեզ ավելի ընկալելի պատասխան ու հիմնավորում

է պետք, ապա ասենք, որ Ապոլոնը արվեստների հովանավոր աստվածն էր հին հույների մոտ:

ԵՐԱԺԻՇՏ- Մուսաների առաջնորդը:

ՔԱՂԱՔԱՊԵՏ- Ի՞նչ գործ ունեն հույներն էստեղ…

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Հունական մշակույթը վաղուց ներծծված է մեր պատմության ու ստեղծագործական ոգու մեջ:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Պարոն քաղաքապետ, մենք ամեն ինչ ուզում ենք անել օրենքով: Կա անհրաժեշտ ստորագրություններից շատ ավելին, եւ դուք, ըստ օրենքի, պարտավոր եք ընդառաջել հասարակության պահանջին:

ՔԱՂԱՔԱՊԵՏ */հեգնանքով/*- Օրենքի գիտա՞կ եք… Օրինապահնե՞ր… */Կանգնում է, մոտենում ներկաներին/:* Էս հարցը ես ինքնուրույն չեմ վճռում, ինքնուրույն լիներ, միանգամից կմերժեի… Մի՞թե վատն է էդ պողոտայի իսկական անվանումը՝ Արեւայի՞ն…

ԴԵՐԱՍԱՆ- Դրա մեջ առանձնահատուկ բան չկա, մեր ողջ երկիրն է արեւային:

ՄԱՂԱՔԱՊԵՏ- Լավ, էդ հարցը ես կդնեմ ավագանու նիստին. ըստ օրենքի՝ ավագանին պետք է որոշի՝ վերանվանե՞լ պողոտան Ապոլոնի, թե՞ ոչ… Ավելին չեմ կարող անել:

ՆԵՐԿԱՆԵՐ- Շնորհակալ ենք… շնորհակալ ենք…

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Պարոն քաղաքապետ, միայն խնդրում ենք՝ չուշացնել այդ հարցի քննարկումը:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Երկու ամիս անց մեր պողոտայում պետք է անցկացվի պոեզիայի եւ դասական երաժշտության փառատոն, կուզենայինք, որ մինչ այդ պողոտան վերանված լինի Ապոլոնի…

ՔԱՂԱՔԱՊԵՏ- Ավագանու հաջորդ նիստը երկու շաբաթ հետո է կայանալու, էդ ժամանակ էլ կքննարկենք:

ՆԵՐԿԱՆԵՐ- Լավ է, լավ…

ՔԱՂԱՔԱՊԵՏ- Բայց ինչու՞ եք վստահ, որ ավագանին դրական որոշում կկայացնի…

ԵՐԱԺԻՇՏ- Վստահ ենք, այո, որ ավագանու մեր ընտրյալ ներկայացուցիչները ճիշտ կգնահատեն մեր ընտիր առաջարկությունը:

ՆԵՐԿԱՆԵՐ- Այո, այո…

ՔԱՂԱՔԱՊԵՏ- Լավ, ուրեմն պայմանավորվեցինք:

Բ.ՊԱՐՈՒՀԻ */ուրախացած/*- Ես ասում էի ձեզ, չէ՞, որ քաղաքապետը մեզ կհասկանա… Ապրեք, պարոն քաղաքապետ */մոտենում եւ համբուրում է քաղաքապետին/:* Ես ձեզ համար հաճույքով կպարեի հիմա…

ԱՊՈԼՈՆ- Պարիր, հրեշտակս:

Բ.ՊԱՐՈՒՀԻ- Հիմա:

ՔԱՂԱՔԱՊԵՏ- Սպասեք… սա պաշտոնական աշխատասենյակ է, չի կարելի:

ԵՐԳՉՈՒՀԻ- Կարելի է, պարոն քաղաքպետ, կարելի է… Ձեր այս մեծ աշխատասենյակը հենց իսկական պարահրապարակ է:

/Ներկաները շրջան են բացում, եւ բ.պարուհին մի կարճ հատված է պարում Ա.Խաչատրյանի «Դիմակահանդես» բալետից: Ներկաները ծափահարում են եւ պատրաստվում հեռանալ/:

ԴԵՐԱՍԱՆ- Դե հիմա գնանք… Մեր առաքելությունն այստեղ ավարտված է:

ՆԿԱՐԻՉ- Ցտեսություն, պարոն քաղաքապետ, ձեր դիմանկարը՝ իմ կողմից:

ԴԵՐԱՍԱՆ */ցածր ձայնով, նկարչին/*- Ծաղրանկա՞րը…

ՆԿԱՐԻՉ- Նայած՝ ինչ որոշում կկայացնեն…

Բ.ՊԱՐՈՒՀԻ- Չմոռանաք ներկա լինել մեր փառատոնին, մեզ ըմբռնումով մոտեցած թանկագին քաղաքապետ… Ձեզ հրավեր կուղարկենք: Ցտեսություն:

ԵՐԳՉՈՒՀԻ- Մեր փառատոնում ընտիր երաժշտություն ու երգային կատարումներ կլսեք: Դե բոլորովին ոչ նման էն ցածրորակ, էժանագին երաժշտությանը, որ լսում եք ամենուր:

ԵՐԱԺԻՇՏ */շարունակելով երգչուհուն/*- Ձեր աշխատասենյակում, ավտոմեքենայում… Ասում են՝ ձեր ընտրարշավի ժամանակ էդ ցածրորակ երաժշտության տակ եք ձայներ հավաքագրել…

ՔԱՂԱՔԱՊԵՏ- Դե… դե պետք չէ անցնել մեղադրանքների:

ԴԵՐԱՍԱՆ- Բայց ասեք՝ ո՞ւմ մեղադրենք այս հոգեւոր համաձարակի համար…

ՔԱՂԱՔԱՊԵՏ- Չգիտեմ, ես դրանում կոնկրետ մեղք չունեմ: Եթե կա համաձարակ, պետք է… կարանտին հայտարարել ու բուժել մարդկանց… Դե դուք էլ բուժեք, ձեր ոլորտն է:

ԵՐԱԺԻՇՏ- Եվ կբուժենք… Լավ, հիմա մենք ձեզնից շնորհակալությամբ գնում ենք, ցտեսություն:

ՔԱՂԱՔԱՊԵՏ- Ցտեսություն:

/Բոլորը «Ցտեսություն» ասելով՝ դուրս են գալիս, բացի քաղաքապետից/:

ԱՐԱՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

/Եկեղեցում կ.քահանան եկեղեցական սպասավորների հետ ժամերգության կարգ է կատարում: Սրահում այլոց հետ, իրար մոտ կանգնած են բանաստեղծը, դերասանը, նկարիչը, երաժիշտը, երգչուհին, բ.պարուհին,

հ.վաճառողուհին եւ ոստիկաններ 1-ն ու 2-ը՝ քաղաքացիական հագուստով: Խորանից նկատելով խմբված ընկերներին՝ կ.քահանան մոտենում եւ սրահի մուտքի մոտ կամաց զրուցում է նրանց հետ/:

Կ.ՔԱՀԱՆԱ- Էս ի՞նչ եք կարգապահ համադասարանցիների պես հավաքվել... Ի՞նչ է պատահել...

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Թողեք ես ասեմ: */Սրբում է արցունքները/:* Տեր հայր, Ապոլոնը չկա... մահացավ:

Կ.ՔԱՀԱՆԱ- Ինչպե՞ս թե, ինչու՞... */խաչակնքում է/* Մեղա քեզ, Տեր Աստված:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Նա անբուժելի հիվանդություն ուներ... ոչ մեկս չգիտեր էդ մասին:

ԴԵՐԱՍԱՆ- Թե չէ ժամանակին բուժման կտանեինք նրան:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Վաղը Ապոլոնի հուղարկավորությունն է... մենք ենք կազմակերպում:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Կգա՞ք, Տեր հայր, նրա համար հրաժեշտի աղոթք կարդալու...

Կ.ՔԱՀԱՆԱ- Իհարկե, դա ի՞նչ հարց է... Գնացինք, այսօր էլ նրա հոգեհանգիստը կանենք:

ԴԵՐԱՍԱՆ- Սպասեք, Տեր հայր, ուրիշ հարցեր եւս կան:

Կ.ՔԱՀԱՆԱ- Ասեք:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Վաղը մեր պողոտան վերակոչում են Ապոլոնի անունով... Ահա այդպիսի զուգադիպություն՝ Ապոլոնը հեռանում է, Ապոլոնը գալիս է:

ԴԵՐԱՍԱՆ- Քաղաքապետարանը մի փոքր դիմադրելուց հետո համաձայնվեց մեր առաջարկությանը:

Կ.ՔԱՀԱՆԱ- Լավ է: Դա մի տեսակ նաեւ մեր այդ տղայի՝ Ապոլոնի պատվին եղավ, չէ՞...

ԵՐԱԺԻՇՏ- Այո, բայց էդ մասին քաղաքապետին բան չասեք, Տեր հայր:

Կ.ՔԱՀԱՆԱ- Հասկացա: */Դադար/* Այլեւս բեւեռային քամու ձայն չի՞ լսվում այնտեղ...

ԴԵՐԱՍԱՆ- Կարծես թե ոչ... Բայց այդ Բեւեռային անունը կպել է պողոտային:

ԵՐԳՉՈՒՀԻ- ... ու չի ուզում պոկ գալ...

Բ.ՊԱՐՈՒՀԻ- ... ու մարդիկ շարունակ այդ անուն են գործածում:

ԴԵՐԱՍԱՆ- Բոլոր դեպքերում՝ տխուր է նման... ցրտաշունչ անվանումը:

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Իսկ Արեւային՝ հին անվանումը ծիծաղելի են համարում վաղուց:

ԵՐԱԺԻՇՏ- Արեւային անվանումով ցուցատախտակները մարդիկ պոկել են ամիսներ առաջ:

ԴԵՐԱՍԱՆ- Գուցե նոր անվանումով մեր պողոտան, մեր կյանքը լցվեն իսկական ու վեհաշունչ արվեստով…

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Եթե չարդարանան մեր հույսերը, դարձյալ կվերադառնանք Բեւեռայինին…

Կ.ՔԱՀԱՆԱ- Լավ. վաղը կօրհնեմ պողոտայի վերանվանումը… Իսկ դա ո՞ր ժամին կլինի…

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Իրիկնամուտին, Ապոլոնի հուղարկավորությունն արդեն ավարտած կլինենք:

Կ.ՔԱՀԱՆԱ- Բարի:

ԴԵՐԱՍԱՆ- Եվ երրորդ խնդիրը, Տեր հայր… Մեր կալանավորումից հետո անցած մեկ տարում…

ՈՍՏԻԿԱՆ 1- Փախուստից հետո…

ԴԵՐԱՍԱՆ- Այո, ոստիկանությունից մեր այդ փառահեղ փախուստից հետո որոշ բարվոքացում կա մեր պողոտայում, բայց գիտե՞ք՝ մարդկանց մեղսակցության աստիճանը շարունակում է բարձր մնալ…

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Քավության կարիքը դեռեւս չափազանց մեծ է:

Հ.ՎԱՃԱՌՈՂՈՒՀԻ- Տեր հայր, չէի՞ք ցանկանա կրկին զբաղվել քավության գործով… Ձեզ առանձին տնակ կհատկացնենք… գեղեցիկ, տաք ու լուսավոր…

ԵՐԱԺԻՇՏ- Հա, մտնես ու միանգամից քավես մեղքերդ:

ՆԿԱՐԻՉ- Քեզ հավատում ու վստահում են մարդիկ:

ԵՐԳՉՈՒՀԻ ԵՎ ՊԱՐՈՒՀԻ- Կգա՞ք… Մենք էլ մեր մեղքերը կքավենք ձեր օգնությամբ:

/Կ.քահանան հայացքը պտտեցնելով՝ զարմացած նայում է իրեն դիմողներին, ապա զվարթագին կոչում/.

Կ.ՔԱՀԱՆԱ- Իսկ ինչու՞ ոչ… Հիանալի՜ առաջարկություն է… Այս անգամ, սակայն, ինքս պետք է կարգալուծվեմ… Ուրեմն՝ ես կրկին կդառնամ մեղքերի փողոցային… չէ՝ պողոտային քավիչ…

ԲԱՆԱՍՏԵՂԾ- Ավելի ճիշտ՝ Ապոլոն պողոտայի գլխավոր Քավչարար… կամ՝ քավարանի քարտուղար…

Կ.ՔԱՀԱՆԱ- Ընդունայն լինի… Գնացի՞նք…

/Հերոսները ժպտագին հետեւելով կ.քահանային՝ նրա հետ դուրս են գալիս: Լսվում է ժամերգությունը շարունակող հոգեւորականի ձայնը. «Տեր, լուսավորիր Ապոլոնի հոգին: Տեր, պահապան եղիր մեր ստեղծարարներին»/:

ՎԵՐՋ

դեկտեմբեր, 2018 – հունվար, 2019

ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ ԿԱՄ՝ ՈՒՄ ՆՎԻՐԵԼ ՍԻՐՏԸ

/ֆանտաստիկ-հոգեբանական դրամա երեք արարով/

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

Բժիշկ Հարություն՝ դոկտոր Հարություն Բարիկյան՝ 50 տարեկան
Զոհ 1՝ Իսահակ Գաբրիելյան՝ 60 տարեկան
Զոհ 2՝ Նազելի Սերոբյան՝ 50 տարեկան
Զոհ 3՝ Գնել Ապրեսյան՝ 45 տարեկան
Զոհ 4՝ Գոհար Սուքիասյան՝ 20 տարեկան
Զոհ 5՝ Դերենիկ Պոռշյան՝ 25 տարեկան
Բժշկի օգնական՝ Հրաչ Մուրադյան՝ 35 տարեկան
երկու մարդասպան-կողոպտիչ
երկու մարմնավաճառ աղջիկ

ԱՐԱՐ Ա

/Բեմը կահավորված է որպես դիահերձարան, որտեղ իշխում են սպիտակ գույները: Դահլիճին դիմահայաց, կողք-կողքի շարված են հինգ պատգարակ, յուրաքանչյուրը՝ համապատասխան թվանշմամբ՝ 1, 2, 3, 4, 5: Պատգարակներին պառկած են զոհերը՝ ծածկված սավաններով: Բժիշկ Հարությունը հերթականությամբ բացում եւ բամբակով ու հեղուկով մաքրում է զոհերի դեմքերը, ձեռքով թեթեւակի մերսում նրանց կոկորդները, ապա ամեն մեկի քթին մոտեցնում է մի սրվակ եւ այն պահում մի քանի վայրկյան: Նրա գործողություններին ուշադիր հետեւում է օգնական Հրաչը: Բ.Հարությունը Զոհ 4-ի մոտ կանգ է առնում, մի պահ հմայված նայում պառկածին/.

Բժիշկ Հարություն- Նույնիսկ խոցված գլխով է գեղեցիկ այս աղջիկը… Ինչու՞ են ոճրագործները կրակել նաեւ այս գեղեցկուհու վրա… Երեւի կատաղել են նրա գեղեցկությունից… */Վիրակապում է նրա ձակատը, ապա մոտենում է Զոհ 5-ին, բացում նրա դեմքը, մեղավոր ժպիտով նայում/:* Սիրունատես երիտասարդ է… դարձյալ գլխին են կրակել… */Կատարում է նույն գործողությունները, ապա վիրակապում է Զոհ 5-ի ձակատը եւս/:* Գեղեցկությունը սպանելու համար հանցագործին պետք է կրկնակի պատժել… Բայց ո՞վ կպաշտպանի իմ առաջարկած օրենքը… */Մոտակա սեղանից վերցնում է տեղեկանք-թղթերը, մի առ պահ նայում դրանք եւ կանգնում պատգարակների դիմաց՝ մեջքով դեպի դահլիճը/:* Ուշադրություն… Ուշադրություն, հարգարժան Զոհեր… Ես բժիշկ Հարությունն եմ՝ դոկտոր Հարություն Բարիկյանը… դիահերձողը, ավելի ստույգ՝ դիակենդանացնողը… Հիմա ես ձեզ կվերակենդանացնեմ, դուք նորից կլինեք կենդանի մարդիկ: */Մոտենում եւ աջ ձեռնափը լայնորեն բացած՝ հերթով շարժում է զոհերի դեմքերի վրայով, ապա վերադառնում է նախկին տեղը/:* Դուք հիմա կենդանի վիճակում եք… Եթե լսում եք իմ ձայնը, ապա, խնդրում եմ՝ թեթեւակի շարժեք ձեր գլուխները… */Մի փոքր մոտենում է պատգարակներին, որպեսզի ավելի լավ տեսնի զոհերի դեմքերը. նրանք թեթեւակի շարժում են իրենց գլուխները/:* Շատ լավ, դուք հիմա, իրոք, ողջ եք… */Հետ է քաշվում նախկին տեղը/:* Այսուհետ իմ բոլոր հրահանգները դուք պետք է կատարեք ամենայն ճշտությամբ, հակառակ դեպքում դուք նոր փորձանքի կենթարկվեք. բարի՞… Եթե ընդունեցիք իմ պայմանը, խնդրում եմ՝ դարձյալ գլխով արեք… */Զոհերը թեթեւակիորեն գլխով են անում/:* Հիանալի… Հիմա կարող եք բացել ձեր աչքերը… */Զոհերը բացում են աչքները, ապշած նայում այս ու այն կողմ: Զոհ 4-ը ճչում է: Բ.Հարությունը անմիջապես մոտենում է նրան, ձեռքը դնում ճակատին/:* Հանգստացիր, գեղեցկուհի, դու

հիմա անվտանգ ու ապահով տեղում ես… դիահերձարանում… Հանգիստ զգա քեզ, օրիորդ: */Վերադառնում է նախկին տեղը/:* Բոլորդ հիմա գտնվում եք դիահերձարանում, իմ հսկողության տակ: Խնդրում եմ՝ խուճապի չմատնվեք եւ աղմուկ չբարձրացնեք. բարի՞… */Զոհերը գլխով են անում/:* Շատ լավ: */Օգնականին/* Հրաչ, դու կարող ես գնալ, ամեն ինչ կարգին է:

Բժշկի օգնական- Լավ, դոկտոր Բարիկյան, ես կվերադառնամ պայմանավորված ժամին… Առայժմ:

Բ.Հարություն- Առայժմ, Հրաչ: */Բժշկի օգնականը դուրս է գալիս/:* Հարգելի Զոհեր… հարգարժան վերակենդանացածներ, դուք մահացու հրազենային վիրավորումներ էիք ստացել… */նայում է ձեռքի ժամացույցին/* ավելի քան վեց ժամ առաջ… Ձեր մահը մեզ մոտ պաշտոնապես արձանագրվել է մոտ հինգ ժամ առաջ… Այս ընթացքում մենք հիմնականում զբաղված էինք ձեզ վերակենդանացնելով… ինչը հաջողությամբ պսակվեց, ինչպես տեսնում ենք…

Զոհ 4 */վախեցած, գրեթե հիստերիկ տոնով/-* Մենք մահացե՞լ էինք… մեզ իրոք սպանե՞լ էին… հիմա կենդանի՞ ենք…

Բ.Հարություն- Այո-այո-այո: */Մոտենալով Զոհ 4-ին/* Հանգստացեք, օրիորդ… դուք խոստացել եք խուճապի չմատնվել ու աղմուկ չբարձրացնել:

Զոհ 4 */մի կերպ զսպելով իրեն/-* Լավ…

Բ.Հարություն- Հիանալի: */Վերադառնում է նախկին տեղը/* Հիմա կարող եք նստել… առանց կտրուկ շարժումների… Ընդհանրապես ոչ մի կտրուկ շարժում չանեք, դա վտանգավոր է ձեզ համար: Կտրուկ շարժումները խիստ նվազեցնում են ձեր կենսունակությունը եւ կենդանության ժամանակահատվածը: */Զոհերը նստում են պատգարակներին: Զոհ 1-ը դժվարությամբ կիսանստում է: Բ.Հարությունը օգնում է նրան, որ հարմարավետ նստի/:* Այսպես հարմա՞ր է…

Զոհ 1 */թույլ ձայնով/-* Այո… Շնորհակալություն, բժիշկ… ես մի շաբաթ առաջ եմ ողնաշարի ճողվածքի վիրահատություն տարել… Ցավը դեռ չի անցել:

Բ.Հարություն- Մի քանի րոպեից կանցնի էդ ցավը: */Նայում է ձեռքի թղթերից մեկը/* Պարոն… Իսահակ Գաբրիելյան… ճի՞շտ է գրանցված ձեր անուն-ազգանունը…

Զոհ 1- Այո, ես Իսահակ Գաբրիելյանն եմ:

Բ.Հարություն- Շուտով դուք ձեզ համեմատաբար լավ կզգաք: Դուք ինձ մոտ գրանցված եք նաեւ որպես Զոհ 1…

Զոհ 1- Էնքան էլ հաճելի չի հնչում…

Բ.Հարություն- Ի՞նչ արած, սա իմ աշխատանքային ներքին կարգերից մեկն է՝ թվագրել զոհերին… Գիտեմ, որ ցավագին է այդպես դիմելը, ուստի ես հաճախ կօգտագործեմ նաեւ ձեր անունները… Չեմ զլանա: Պայմա-

նավորվեցի՞նք… */Զոհերը գլխով են անում/:* Լավ, բայց մի մոռացեք, որ դուք նորից խոսելու կարողություն ունեք, օգտվեք այդ հրաշալի հնարավորությունից:

Զոհ 3- Բժիշկ, դուք ինչ-որ գիտափո՞րձ եք անում մեզ հետ…

Բ.Հարություն- Շատ խիստ ու… անարդար է ասված՝ գիտափո՜րձ… */Դադար/* Ո՞նց ասեմ… սա իմ կյանքի ամենակարեւոր գործն է… Պարզաբանեմ. ես արդեն երեք տարի է՝ արտակարգ շնորհի տեր եմ դարձել, ընդունակ եմ վերակենդանացնել սպանվածներին… Դրան հասնելու համար պարապել եմ ավելի քան քսան տարի, այսինքն՝ հեշտ չի տրվել ինձ այս հմտությունը… Աստված, իհարկե, օգնական է եղել ինձ այս հարցում, հակառակ դեպքում իմ ջանքերը զուր կանցնեին:

Զոհ 2- Եվ մենք կրկին կարող ենք ապրել մեր կյանքո՞վ…

Զոհ 3- Այո՞, բժիշկ… Մենք վերածնվե՞լ ենք…

Բ.Հարություն- Ոչ, դուք ընդամենը վերակենդանացել եք:

Զոհ 4 */նյարդային ու վախեցած/-* Հիմա կարո՞ղ ենք գնալ… Ես խոստացել եմ այսօր ծնողներիս հետ ընթրել…

Բ.Հարություն- Ոչ-ոչ… դուք միանգամից շատ բան եք ցանկանում:

Զոհ 2- Հասկացա՝ մենք ձեր պատանդներն ենք… Էստեղ էլ պատանդի բախտ ունենք:

Բ.Հարություն- Խնդրում եմ՝ այդպես խիստ ու անարդար մի դատեք, սա բոլորովին ուրիշ իրավիճակ է: Դուք պատանդներ չեք, դուք վերակենդանացածներ եք… Տեսնո՞ւմ եք՝ ինչքան մեծ է տարբերությունը…

Զոհ 3- Միեւնույն է՝ մենք ինքնուրույն ոչինչ չենք կարող ձեռնարկել, մենք լրիվ ձեր իշխանության տակ ենք, այո՞, դոկտոր…

Բ.Հարություն- Դե… այո… որովհետեւ դուք ինքնուրույն գործելու համապատասխան կենսական էներգիա եւ… հրահանգավորում դեռեւս չունեք:

Զոհ 4- Իսկ կունենա՞նք…

Բ.Հարություն- Ցավում եմ՝ ոչ: Առայժմ մենք չենք հասել նման հնարավորության:

Զոհ 2- Ուրեմն՝ մեր կարգավիճակը պիտի էսպես ձեւակերպենք՝ վերակենդանացած պատանդներ:

Զոհեր 1 եւ 3- Այո:

Բ.Հարություն- Կգա ժամանակ՝ այստեղ վերակենդանացած մարդիկ անմիջապես կգնան տուն: Մենք այդ ուղղությամբ ենք աշխատում:

Զոհ 2- Իսկ թե դա որ դարում ձեզ կհաջողվի, մեզ ու ձեզ հայտնի չէ, դոկտոր Հարություն, ճի՞շտ է… Ուստի հիմա մենք պետք է բավարարվենք ունեցած քչով: */Լռություն/* Վերակենդանացա՜ծ… համենայնդեպս, լավ է հնչում…

Զոհ 3- Պատա՜նդ… զարհուրելի է…

Զոհ 5 */խոսում է արագ ու հուզված/-* Բժիշկ, թողեք գնամ մի կարճ ժամանակով... շատ կարեւոր, անհետաձգելի գործ ունեմ. ես պետք է ընկերուհուս՝ Նունեին օդանավակայանում ճանապարհեմ Փարիզ: Նա մեկնում է էնտեղ իր ցուցահանդեսը կազմակերպելու, եթե չգնամ՝ կմտածի, որ դեմ եմ իր որոշմանը... վերջնականապես կխռովի ինձնից ու կխզի կապն ինձ հետ, չեմ ուզում... Հա՞, բժիշկ, ճանապարհեմ ու շտապ վերադառնամ... Նունեի օդանավը թռչում է */նայում է պատի ժամացույցին/* 40 րոպե հետո... քիչ ժամանակ է մնացել... ճանապարհեմ ու վերադառնամ... ես խոսքիս տեր մարդ եմ, պարտաճանաչ... բժիշկ... դոկտոր...

Բ.Հարություն- Ցավում եմ, Զոհ 5... երիտասարդ... */նայում է ձեռքի թղթերին/* Դերենիկ Պռոշյան... Անկեղծորեն ցավում եմ. ես նման իրավունք ու զորություն չունեմ՝ ձեզ թույլատրեմ ու օգնեմ, որպեսզի դուք անեք ձեր անհետաձգելի գործերը, ձեր սրտի ուզածը... Ասացի արդեն՝ մենք դեռ չենք հասել այդ մակարդակին; ես կարող եմ սպանվածներին կենդանություն տալ խիստ սահմանափակ ժամանակով եւ միմիայն մի առաքելության համար...

Զոհեր- Ի՞նչ առաքելություն...

Բ.Հարություն- Ձեզ առայժմ կենդանություն եւ ուժ ենք տալիս, որպեսզի դուք հնարավորություն ստանաք վրեժ լուծել ձեզ սպանողներից... այդ սրիկաներից ու տականքներից... Դուք արդար վրեժի համար եք վերակենդանացել:

Զոհ 1- Հասկացա... դուք մեզ արժանապատվության ու պատվախնդրության եք կոչում...

Բ.Հարություն- Այո:

Զոհ 1- Սահմանափակ... միակողմանի առաքելություն է:

Զոհ 3- Ճիշտ որ, շատ սահմանափակ նպատակի առջեւ եք մեզ կանգնեցնում:

Զոհ 1- Բայց սեփական արժանապատվությունից, պատվախնդրությունից ավելի կարեւոր գործեր կան, գրողը տանի... Ինչու՞ միայն վրեժի համար հարություն առնել դոկտոր... Բարիկյան...

Զոհ 2- Վերակենդանացածի համար վրե՞ժն է ամենագլխավոր բարիքը, դոկտոր...

Բ.Հարություն- Մենք... իմ գործընկեր, գիտնական Հրաչ Մուրադյանի հետ, Աստծո բարեհաճությամբ, նախ, սեւեռվեցինք այդ առաքելության վրա... ես անելիքների ցանկ էի առաջարկել՝ 10 կետից բաղկացած, հավատացեք: Տերը առայժմ հավանություն տվեց դրանցից մեկին միայն՝ տեղին ու հիմնավոր վրիժառությանը: Մնացածը... սիրեցյալներին հրաժեշտ տալը, անունն ու պատիվը մաքրագործելը, կիսատ մնացած հրատապ գոր-

ծերն ավարտելը, զվարճանալը… եւ այլն թողեց հետագային… երբ մարդիկ ավելի հասուն կլինեն հոգեպես ու մտոք:

Զոհ 1- Աստծո վրա եք գցում ձեր պատասխանատվությունը… չէ՝ անպատասխանատվությունը:

Բ.Հարություն- Իմացեք, որ ես նաեւ հավատացյալ մարդ եմ, առանց Աստծո հետ հաղորդվելու ես ճակատագրական որոշումներ չեմ կայացնում:

Զոհ 2- Լավ, հիմա մենք պետք է պարտադիր վրե՞ժ լուծենք էդ… խելագար ճիվաղներից…

Բ.Հարություն- Ոչ, ձեզ ոչ ոք ոչինչ չի պարտադրում: Ամեն ինչ պետք է կատարվի ձեր կամոք ու համոզմունքով:

Զոհ 4- Ես դեռ երբեք վրեժ չեմ լուծել որեւէ մեկից… Ես կույս եմ նաեւ այդ հարցում:

/Ներկաները ծիծաղում են/:

Զոհ 3 */նայելով Զոհ 4-ին/-* Հազար ափսոս… Բժիշկ, իսկ կարելի՞ է վայելել էս կուսական գեղեցկությունը… դե հետո, ասենք, վրեժից հետո…

Բ.Հարություն- Մենք չենք կարող շեղվել մեր հիմնական գաղափարից՝ վրիժառությունից: Մեր բոլոր գործողություններն այս կարճ ժամանակամիջոցում պետք է ուղղված լինեն վրեժի իրագործմանը կամ դրանից հրաժարման պատճառների քննությանը:

Զոհ 1- Դուք ինչքա՞ն ժամանակով եք մեզ վերակենդանացրել, դոկտոր…

Բ.Հարություն- Դժբախտաբար… ընդամենը 10-12 ժամով: Պատահում է՝ ոմանք այդքան էլ չեն դիմանում… վաղաժամ վերամահանում են:

Զոհ 2- Այսինքն՝ դուք եւ Աստված ընդամենը 10-12 ժամվա արտոնագի՞ր եք տվել մեզ…

Բ.Հարություն- Թող այդպես համարվի: Մեր հոգեւոր ու ֆիզիկական ներուժն առայժմ այդքան ժամանակահատվածի համար է բավարար: Գուցե հետագայում նոր էներգիա ու գիտական ներուժ ստանանք եւ կարողանանք շատ ավելի երկար ժամանակամիջոցով հարություն տալ մարդկանց… Մենք ձգտում ենք այդ նպատակին: Առայժմ մեր ունեցածն այս է:

Զոհ 3- Իսկ դուք շատերի՞ն եք վերակենդանացրել մինչեւ հիմա, բժիշկ…

Բ.Հարություն- Երեք տարվա ընթացքում ես վերակենդանացրել եմ ավելի քան 100 հոգու:

Զոհ 5- Եվ նրանցից քանի՞ հոգի են համաձայնվել վրեժ լուծել իրենց սպանողներից…

Բ.Հարություն- Կեսը… մնացածը հրաժարվել են տարբեր պատճառաբանություններով:

Զոհ 1- Ավելի հաճախ ի՞նչ պատճառաբանություն է հնչել…

Բ.Հարություն- Որ իրենք չեն ուզում մարդասպան լինել:

Զոհ 4- Բայց ոճրագործներին… ճիվաղներին սպանելը սովորական մարդասպանություն չէ, չէ՞, հատկապես, եթե դա անեն նրանց զոհերը… անմեղ զոհերը…

Բ.Հարություն- Ես ձեզ հետ լիովին համաձայն եմ, Զոհ 4… ներեցեք, գեղեցկուհի… */նայում է թղթերին/* Գոհար Սուքիասյան…

Զոհ 4- Այո, ես ինքս՝ Գոհար Սուքիասյանս… Դիահերձարանում ուրիշ կերպ է հնչում սեփական անուն-ազգանունդ, լսարանում՝ ուրիշ կերպ, երբ իրականում ողջ ես…

Զոհ 2- Ես քիչ խորհելուց հետո հայտարարում եմ. ես պաշտպանում եմ անմեղ զոհի արդար վրիժառության գաղափարը: Մարդասպան տականքներն իրավունք չունեն ապրելու էս աշխարհում, նրանք, որ անտեղի… անառիթ… անպատճառ սպանում են մարդկանց. պատահական մարդկանց, որոնց կյանքում առաջին անգամ են հանդիպել եւ նրանց հետ ոչ մի անձնական հաշիվ չունեն… Էդ կարգի մարդասպանները հիվանդ խելագարներ են:

Բ.Հարություն- Ճիշտ եք, Զոհ 2… տիկին… */նայում է թղթերին/* Նազելի Սերոբյան…

Զոհ 2- Այո, նրանց պետք է ոչնչացնել:

Բ.Հարություն- Սպասեք, մի շտապեք վճիռներ կայացնել պաթոսի տակ, պետք է համոզմունքներով առաջնորդվել: */Դադար/* Կներեք, որ պիտի հարցնեմ ձեզ. դուք լա՞վ եք հիշում, թե ինչ է կատարվել ձեզ հետ 5-6 ժամ առաջ… */Նայում է ներկաներին, նրանք գլուխները հակած՝ լռում են/:* Դուք, իհարկե, հիշում եք, եւ շատ ցավագին է այդ հիշողությունը ձեզ համար… վերակենդանանալուց հետո նույնպես:

Զոհ 1- Մենք բանկում էինք… */Դադար/*

Բ.Հարություն- Հետո՞… պարոն Իսահակ…

Զոհ 3- Ներս խուժեցին երկու հոգի…

Զոհ 2- Նրանք դիմակավորված էին, զինված… Ես անմիջապես հասկացա, որ մեր օրը վատ տեղ է մթնելու… Նրանք մտել էին բանկը կողոպտելու համար…

Բ.Հարություն- Բանկում այդ պահին շատ հաճախորդներ կային, չէ՞…

Զոհ 2- Այո:

Զոհ 5- Երեւի մի երեսուն հոգի…

Զոհ 4- Նրանք մեզ հրամայեցին պառկել գետնին… Միայն մի կին չէր ուզում կատարել զինված դիմակավորների հրամանը, ասում էր՝ ուրիշների հրամանով ես չեմ պառկում…

Զոհ 2- Էդ կինը ես էի:

Զոհ 4 */ապշած նայելով Զոհ 2-ին/*- Հա, իրոք դուք էիք… առաջինն էլ ձեզ սպանեցին…

Զոհ 2- Ոտքիս վրա էի… Իսկ ձեզ սպանեցին, երբ պառկած էիք մարմարե սառը հատակին:

Զոհ 1- Բոլորս փորձում էինք ողջ մնալ… Դրա համար պետք էր չհակառակվել զինված հարձակվողներին:

Զոհ 2- Այնուամենայնիվ, ձեզ էլ սպանեցին… զգուշավոր պարոն Իսահակ:

Զոհ 5- Մենք ուզեցինք ինչ-որ բան ձեռնարկել… բայց սխալվեցինք մեր հաշվարկում:

Զոհ 3- Պետք էր միացյալ ուժերով հարձակվել ու չեզոքացնել զինյալ ավազակներին… Ես աչքունքով համախոհներ էի փնտրում, բայց չգտա:

Զոհ 5 */Զոհ 3-ին/*- Այո, դու ինձ նշան ես արել, բայց քո նշմարից ես կողոպտիչներին չեզոքացնելու միտք չեմ կռահել: Ինձ թվացել է, թե դու ասում ես՝ պետք է թաքնվել մոտակա սյան հետեւում… Ես սկսեցի իբր աննկատ շարժվել դեպի սյունը, բայց կրակոց ստացա գլխիս:

Զոհ 3- Ափսոս, թյուրըմբռնում է եղել… Երբ սպանեցին քեզ, ես հարձակվեցի ինձ մոտ կանգնած դիմակավորի վրա, որ խլեմ նրա հրազենը, բայց նրա հանցակից ընկերը ինձ երկու կրակոցով գետին տապալեց:

Բ.Հարություն- Հետո՞…

Զոհ 1- Հետո դիմակավոր կողոպտիչները սկսել են հեռախոսով բանակցել բանկը շրջափակած ոստիկանների հետ, որ իրենց ուղղաթիռ տրամադրեն եւ թողնեն, որպեսզի իրենք անարգել ու անվնաս հեռանան, թե չէ կսպանեն բոլոր պատանդներին, այդ թվում՝ բանկի ծառայողներին… չնայած նրանք արդեն իրենց սեյֆերը բացել էին մարդասպան կողոպտիչների առաջ…

Զոհ 4- Նախքան ուղղաթիռի գալը ոճրագործները, պատահականության սկզբունքով, ոստիկանների վրա ազդելու համար, սպանել են եւս երեք հոգու, նախ… */նայում է Զոհ 1-ին/* պարոն Իսահակին, ապա մի զույգի՝ մի տարեց տղամարդու ու մի ջահել աղջկա… Աղջիկը շքեղ ու անճաշակ էր հագնված… Շատ թանկարժեք զարդեղեն կար նրա վրա:

Զոհ 5- Նրանք հայր ու աղջի՞կ էին…

Զոհ 2- Չէ՜-հա… անհամապատասխան տարիքի սիրեկաններ էին. տղամարդը մեծահարուստ էր, իսկ աղջիկը՝ թեթեւսոլիկի մեկը:

Զոհ 4- Իսկ ո՞ր են նրանք, ինչու՞ նրանք էլ այստեղ չեն…

Բ.Հարություն- Նրանց դիակները տարել են ուրիշ դիահերձարան, մեզ մոտ տեղ չկար… Սա առաջին դեպքն է, երբ ես միանգամից ընդունում եմ այսքան անմեղ սպանվածների:

Զոհ 2- Էդ անճոռնի սիրեկանների բախտը մինչեւ վերջ չբերեց… Իսկ

քե՞զ, աղջիկս… */դիմելով Զոհ 4-ին/* քեզ ո՞նց սպանեցին…

Զոհ 4- Նրանք ցանկացան ինձ իրենց հետ տանել…

Բ.Հարություն- Եվ դուք, օրիորդ… հակառակվեցիք… ընդդիմացաք ու…

Զոհ 4- Ստացա կրակոց ճակատիս… */շոշափում է վիրակապված ճակատը/.* դեռ ցավում է:

Զոհ 3- Ոարագործները ցանկացան տանել ու բռնաբարել մեր աննման կույսին… Ապրես, Գոհարիկ, հպարտանում եմ քո անձանզոհ վարքով:

Զոհ 4- Հպարտանալու էլ բան չմնաց… Այսուհետ ու՞մ են պետք իմ գեղեցկությունն ու կուսությունը…

Զոհ 5- Մի հուսահատվիր, մենք դեռ դրախտում պիտի հանդիպենք…

Զոհ 3- Ճշմարի՜տ. ահա եւ քեզ նոր փեսացու…

Զոհ 4 */Զոհ 5-ին/-* Իսկ ձեր Նունե՞ն…

Զոհ 2 */ծիծաղելով/-* Նունեն ողջ է, իսկ մեր հետագա կյանքը միայն մեռյալների միջավայրում է լինելու…

Զոհ 4 */հեկեկալով/-* Ի՞նչ տխուր բաներ եք ասում…

Բ.Հարություն- Լավ, թողնենք տխուր թեմաները. հիմա կենտրոնանք մեր բուն խնդրի վրա… Դուք, հարգարժան Զոհեր… սիրելի վերակենդանացածներ, համամի՞տ եք, որ ձեզ սպանողները նողկալի ոճրագործներ են եւ արժանի են մահապատժի…

Զոհ 2- Դուք դեռ հարցնո՞ւմ եք… Նրանց պետք է սպանել եւ լեշերը շնագայլերի առաջը գցել:

Զոհ 3- Այո, իհարկե:

Զոհ 4- Այո:

Զոհ 5- Այո, նրանք մահապատժի են արժանի:

Զոհ 1- Թող նրանց օրենքով դատեն ու մահապատժի ենթարկեն: Ոեմ կարծում, թե մեր ինքնադատը ճիշտ է…

Զոհ 2- Բայց տեղին ու արդար կլիներ, չէ՞… պարոն Իսահակ… */հեգնական նայելով նրան/.* Դե, պետք չէ սպիտակ ագռավ երեւալ, էստեղ հարմար տեղ չէ նման ցուցամոլության համար:

Զոհ 1- Ես ագռավ ու ցուցամոլ չեմ, ինձ մի վիրավորեք, Զոհ 2…

Զոհ 2- Տեսեք-տեսե՜ք… անմահիս նայեք… Զոհ երկու՜ս… Մի օր կզոջաս ինձ էդպես դիմելու համար, Զոհ 1:

Զոհ 1- Լավ, ներողություն… տիկին Նազելի Սերոբյան… Ուզում էի միայն ասել, որ մեզ կմեղադրեն ինքնադատ անելու համար… Ես հակված չեմ անօրինության:

Զոհ 5- Ես էլ, բայց էս իրավիճակում մենք շատ արդար վարված կլինենք՝ էդ վայրագ ստահակներին վերացնելով:

Զոհ 3- Դուք գիտեք, որ մեր երկրում մահապատիժը օրենքով վերացրել

են, առավելագույնը նրանց ցմահ բանտարկություն է սպասվում. այսինքն՝ նրանք շարունակելու են ապրել... թեկուզեւ բանտում. եթե, իհարկե, իրավապահները կարողանան բռնել ու դատել նրանց... Պատկերացնո՞ւմ եք՝ մարդասպանները հանկարծ մնան անորսալի... Կլինեն նոր սպանություններ ու կողոպուտներ... */Լռություն/:*

Զոհ 2- Էդ սրիկաները հիմա որտե՞ղ են, բժիշկ... ուղղաթիռով փախան ու թաքնվեցի՞ն...

Բ.Հարություն- Նրանք իբր ուղղաթիռով փախել ու թաքնվել են, այո... ըստ ոստիկանության վարկածի, եւ հիմա նրանց փնտրում են... Բայց ես մարդասպանների ստույգ տեղը գիտեմ:

Զոհեր- Որտե՞ղ են...

Բ.Հարություն- Մեզնից ոչ հեռու: Նրանք շատ ճարպիկ ու լկտի չարագործներ են, նրանք այս պահին ջահել պոռնիկների հետ զվարճանում են մեր քաղաքի գիշերային ակումբներից մեկում... «Բոմբեյում»:

Զոհ 4- Մ՛յ քեզ լկտիներ... Եվ չե՞ն վախենում բռնվելուց...

Բ.Հարություն- Նրանք լավ քողարկվում են իրենց գործակից ընկերների միջոցով... Այդ գիշերային ակումբը նման կարգի մարդկանց թաքուն հավաքատեղին է:

Զոհ 3- Եվ էդ մասին ոստիկանությանը ոչինչ հայտնի չէ՞...

Բ.Հարություն- Չգիտեմ, Զոհ 3... ներեցեք */նայում է թղթերին/* Գնել Ապրեսյան: Գուցե եւ ոստիկանությանը հայտնի է, հիմա դա չէ կարեւորը, այլ այն, թե ցանկանո՞ւմ եք, դուք՝ սպանվածներդ, վրեժ լուծել այդ ստահակներից ու ավազակներից...

Զոհեր */բացի Զոհ 1-ից/*- Այո... ցանկանո՛ւմ ենք...

Բ.Հարություն- Հիմա ավելի կոնկրետ հարց. ձեզնից ովքե՞ր են պատրաստ անմիջապես իրականացնելու այդ վրեժը... սպանել չարագործներին... ինչ-որ չափով վերականգնել արդարությունը...

Զոհեր */բացի Զոհ 1-ից/*- Ես... */բարձրացնում են ձեռքները/:*

Բ.Հարություն */մի պահ զննելով ներկաներին/*- Բարի, հինգից չորս հոգի պատրաստ են վրեժխնդրության. բարձր ցուցանիշ է: Ես ձեզ կտամ զենք՝ ատրճանակներ, եւ դուք հենց հիմա կարող եք գնալ ձեր սուրբ վրեժն առնելու... Ատրճանակները խլացուցիչով են, կրակում են գրեթե անձայն: Դա պետք է, որպեսզի ձեր շուրջը աղմուկ-իրարանցում չառաջանա:

Զոհ 4- Բայց ես կրակել չգիտեմ...

Զոհ 5- Ես էլ դեռ ատրճանակ չեմ օգտագործել, բայց գլուխ կհանեմ:

Զոհ 3 */Զոհ 4-ին եւ 5-ին/*- Ճանապարհին ձեզ կսովորեցնեմ կրակել, դա դժվար չէ: Ես զորացրված սպա եմ, ծառայությանս տարիներին շատ զինվորների եմ սովորեցրել կրակել:

Բ.Հարություն- Ճիշտ որ, պարոն Գնել Ապրեսյանը նախկին զինվորական է, նրա հետ կարելի է մարտի գնալ, ինչպես ասում են՝ փակ աչքերով ու անզեն:

Զոհ 2- Գիտե՞ք ինչ, եկեք էս երիտասարդներին չտանենք մեզ հետ. նրանք, նախ, անփորձ են կրակելու գործում, երկրորդ, պետք չէ նրանց ներքաշել սպանության մեջ էսքան ջահել տարիքում, անգամ՝ տեղին ու արդար սպանության մեջ: Թող սպանության որդը չկրծի նրանց հոգին: Մենք՝ ես եւ պարոն Գնելը, կառնենք նաեւ մյուսների վրեժը... Եթե կուզեք, կլուծենք նաեւ ձեր վրեժը, պարոն արդարադատ Իսահակ:

Զոհ 1- Ըմմմ... այո, շնորհակալ կլինեմ:

Զոհեր 4 եւ 5- Մենք էլ ենք ուզում գալ... չենք վրիպի... մեր կրակոցն ենք ուզում արձակել նրանց վրա:

Զոհ 3- Դա մենք կանենք տիկին Նազելիի հետ: Ես համաձայն եմ նրա փաստարկմանը: Դուք պետք է լսեք մեզ, գոնե հիմա պետք է հասկանանք միմյանց:

Զոհ 5- Լավ, թող ձեր ասածով լինի:

Զոհ 4- Հա, ձեր ասածով:

Զոհ 2- Դե ուրեմն, բժիշկ ջան, սպառազինեք, հագուստ տվեք, ապա մեզ ի վրեժ ճամփեք....

Զոհ 3- Այո... տվեք ատրճանակներ ու հագուստ:

Բ.Հարություն- Բարի... հիմա... */Գնում է սենյակի խորքը եւ վերադառնում երկու ատրճանակով եւ մի զույգ բժշկական հագուստով: Իրերը տալիս է Զոհ 2-ին եւ Զոհ 3-ին/:* Ահա, հագեք ու զինվեք: Բժշկական հագուստով ավելի հարմար է, գիշերային ակումբում թող կարծեն, թե «Շտապ օգնությունից» եք գնացել... Ատրճանակները լիցքավորված են, զգույշ եղեք ճամփին:

Զոհ 2 եւ 3- Լավ:

Զոհ 4- Հա, էդ սրիկաներին շտապ օգնություն է պետք... շտապ մահ:

Զոհ 5- Այո:

/Զոհ 2-ը եւ 3-ը պատգարակի վրա նստած՝ հագնվում են, ապա իջնում ու կանգնած տնտղում են իրենց ու իրար/:

Զոհ 2- Դարձանք կոկիկ բժիշկներ:

Զոհ 3- Հա:

Բ.Հարություն */նայելով զգեստավորված զոհերին/*- Հրաշալի՜... Ուրեմն այսպես. ձեզ դրսում սպասում է իմ հավատարիմ օգնական Հրաչը, նա ձեզ «Շտապ օգնության» մեքենայով կհասցնի «Բոմբեյ» գիշերային ակումբ, ուր հետին սենյակներից մեկում զվարճանում են այն երկու ճիվաղները... Նրանք ճաղատ են, գլխներին՝ օձանման դաջվածքներ, հեշտությամբ կճանաչեք նրանց... Ուշադիր եղեք՝ կրակում եք միայն մարդասպանների վրա,

պոռնիկներին… աղջիկներին չվնասեք: Ընկերս ձեզ շարունակ կպահի հսկողության տակ, որ ձեզ նոր փորձանք չպատահի… Ձեր գործը կատարում ու վերադառնում եք անմիջապես: Մեքենայով քառասունհիգ րոպե գնալ է պետք, նույնքան՝ վերադառնալու համար: Մոտ կես ժամը ձեզ լիուլի բավարար է այդ եղկելիներին տեղում գտնելու ու սպանելու համար: Այսպիսով՝ ստացվեց հարյուր քսան րոպե: Ուրեմն՝ դուք երկու ժամ անց պետք լինեք այստեղ. պա՞րզ է…

Զոհեր 2 եւ 3- Պարզ է:

Զոհ 2- Կարո՞ղ եմ ամբողջ փամփշտակալը դատարկել նրանց վրա…

Բ.Հարություն- Ինքդ որոշիր… Դա կախված կլինի վրեժի զգացման սաստկությունից:

Զոհ 1- Դոկտոր Բարիկյան, մի հարց էլ իմ կողմից, թող պարզ լինի գնացողների համար. ի՞նչ է իրականում տալու նրանց էդ վրիժառությունը… երբ, միեւնույն է, նրանք… մենք մի քանի ժամ անց նորից մեռյալի ենք վերածվելու…

Բ.Հարություն- Նման հարցի ճշմարիտ պատասխանը ստանում ես այն դեպքում, երբ երեւույթին նայում ես եսականությունից դուրս… */Զոհ 2-ին եւ 3-ին/* Վրիժառությունից առաջ ու հետո փորձեք հենց այդպիսի դիտանկյունից նայել խնդրին. համոզված եմ՝ ինքներդ եք հասկանալու ձեր ստացածի եւ ուրիշներին մատուցածի չափն ու արժեքը, հասկանալու եք արդեն առանց իմ բացատրության ու մեկնաբանության:

Զոհ 3- Մի քիչ խորհրդավոր եղավ ձեր պատասխանը, բայց ինչ-որ է՝ կարծես թե զգում եմ, թե էս թունելն ուր է տանում… Լավ, մենք գնացինք:

Զոհ 2- Գնացինք: */Թեւանցուկ անելով Զոհ 3-ին՝ շարժվում են դեպի ելքը/:*

Ներկաներ- Հաջողություն ձեզ, վրիժառուներ:

/Զոհեր 2-ը եւ 3-ը դուրս են գալիս/:

Բ.Հարություն- Հիմա դուք էլ կարող եք հանգիստ, առանց կտրական շարժումների իջնել պատգարակներից, քայլել սենյակում, նստել աթոռներին ու շարունակել զրույցը… Ծածկվեք սավաններով:

/Ներկա զոհերը սավաններով ծածկված՝ իջնում են պատգարակներից. սույն արարի հետագա ընթացքում նրանք տեղաշարժվում են ըստ իրավիճակի ու հարմարության/:

Զոհ 5- Ինչ լավ է ոտքի վրա կանգնելը…

Զոհ 4- Այո-այո, ես այնքան սիրում եմ քայլել… Ամեն օր տնից մինչեւ քոլեջ եւ հակառակ ուղղությամբ ոտքով եմ անցնում, այդպիսով՝ մի հինգ կիլոմետր… Ես մեր քոլեջի չեմպիոնն եմ երկար վազքատարածություններում:

Զոհ 5- Օ՜… շնորհավորում եմ:

/Զոհ 4-ը եւ 5-ը մի փոքր հեռանում են եւ կամացուկ շարունակում իրենց զրույցը/:

Զոհ 1 */կիպ մոտենալով բ.Հարությունին, ցածր ձայնով/*- Բժիշկ, մի աղաչանք-պաղատանք ունեմ ձեզ, չմերժեք… */Բ.Հարությունը հարցական նայում է Զոհ 1-ին/:* Թույլ տվեք գնամ մեկ-երկու ժամով… կվերադառնամ անպայման, ձեր ծրագիրը չի ձախողվի: */Ընչում է շատ ծանր, հեւասպառի պես/:* Ուզում եմ թոռնիկներիս մի վերջին անգամ տեսնել… նաեւ… տղայիս վրեժն առնել ու գալ… Նրան սպանողը դեռ ազատության մեջ է. քննիչներն իբր համոզիչ փաստեր չեն գտնում նրան ձերբակալելու համար: Բայց ես միլիոն տոկոսով գիտեմ, որ նա է մարդասպանը… Էս պահին… էսպիսի իրավիճակում նրան վերացնելը իմ մեծագույն ցանկությունն է: Ուրիշ ոչինչ ինձ համար կարեւոր չէ:

Բ.Հարություն- Բայց դուք ինքներդ ձեզ հակասում եք, Զոհ 1… պարոն Իսահակ: Քիչ առաջ ասում էիք, որ ինքնադատ պետք չէ անել, թող արդարադատությունը գործի: Հիմա դուք եք ուզում ինքնադատով վրեժ լուծել:

Զոհ 2- Ես դա ասում էի էն ոճրագործ կողոպտիչների հաշվով: Նրանք ակնհայտ հանցագործներ են, շատերի աչքի առաջ են ոճիր գործել, էդպիսով նրանք հայտնի են որպես մարդասպաններ, նրանց միայն պետք է գտնել ու պատժել… Եվ հետո. ձեր ասած վրիժառության հարցը ինձ է վերաբերում, իմ սեփական պատվին: Իսկ ահա տղայիս պարագայում էդպես չէ՝ ակնհայտ չէ սպանողը: Տղաս էլ չի կարող իր հաշիվները մաքրել, նրան ոչ ոք չի վերակենդանացրել… Ուզում եմ, որ տղայիս հոգին խաղաղվի… Թախանձում եմ՝ բաց թող ինձ մի երկու ժամով…

Բ.Հարություն- Հասկանում եմ, պարոն Իսահակ, լիովին հասկանում եմ ձեզ, բայց ներեցեք, ես չեմ կարող ձեզ թույլ տալ գնալու մի արարքի, որը դեռ կասկածելի է… Չէ՞ որ իսկապես դուք կարող եք սխալվել ու սպանել ոչ արժանի մարդու… Դուք եք համոզված մարդասպանի իսկության մեջ, իսկ ահա քննությունը դեռ լուրջ կասկածներ ունի: Պետք չէ գնալ կասկածելի վրեժխնդրության. ես դա չեմ թույլատրի: Արդեն հայտարարել եմ, որ դուք կարող եք գործել միայն մեկ արարք՝ լուծել ձեր սեփական վրեժը: Ներեցեք…

Զոհ 1- Իմ սեփական վրեժն ինձ առանձնապես չի հուզում, դոկտոր Բարիկյան, ես ունեմ դրանից ավելի կարեւոր խնդիր… Դուք մեզ պետք է հնարավորություն տաք, որ ինքներս ընտրենք վրեժի մեր հասցեն:

Բ.Հարություն- Պարոն Իսահակ, ցավում եմ, որ դեռեւս չենք կարող ազատ ընտրության հնարավորություն տալ մեր կողմից վերակենդանացվող զոհերին. այո, կգա նաեւ դրա ժամանակը: Մենք դեռ մեր աշխատանքի առաջին փուլն ենք ամբողջացնում, դեռ երկար, ծանր փորձաշրջաններ պետք է անցնել…

Զոհ 5 */տեսնելով Բ.Հարությունի եւ Զոհ 1-ի բանավեճը՝ մոտենում է նրանց/*- Բժիշկ Հարություն, իսկ դուք ի՞նչ մեթոդով եք ձեր այս հայտնագործություններն անում: Ես դիպլոմավոր բնագետ եմ, եթե մի երկու բառով ասեք, կհասկանամ, թե կյանքի գիտությունը ինչ ուղղությամբ է շարժվում…

Զոհ 4 */մոտենալով նրանց/*- Իրոք որ, դոկտոր Բարիկյան, ինչպե՞ս վերակենդանացրիք մեզ…

Զոհ 1 */քմծիծաղով/*- Հարալեզի պես… Կարծում եմ՝ հատկապես Գոհարիկին էդ մեթոդով է վերակենդանացրել…

Զոհ 4- Դե ինչու՞ միայն ինձ…

Զոհ 5- Նա նկատի ունի, որ դու ամենագեղեցիկն ես… արժանի ես դրան:

Բ.Հարություն- Դե, եթե դուք մտադիր եք ծիծաղել իմ գիտագործի վրա… ես կլռեմ…

Զոհ 5- Չէ-չէ, դոկտոր, բացատրեք, խնդրեմ, ձեր մեթոդի բնույթը: */Դադար/*

Բ.Հարություն- Լավ, մի երկու բառով ասեմ: Հուսամ՝ դուք իմ գիտական գաղտնիքները չեք հասցնի փոխանցել ուրիշների…

Զոհ 5- Դուք գաղտնի՞ եք աշխատում…

Բ.Հարություն- Հիմա՝ այո: Սկզբում ամեն ինչ օրինական էր. ես մեծ լաբորատորիա էի ղեկավարում բժշկական համալսարանում, մեր հետազոտությունների համար ֆինանսավորում էինք ստանում… Հետո փակեցին լաբորատորիան, պատճառաբանեցին, թե չեն ուզում կոնֆլիկտի մեջ մտնել երկրի ղեկավարության, եկեղեցու, միջազգային կազմակերպությունների հետ… Ես տեղափոխվեցի քաղաքի այս մեծ հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունք, միաժամանակ ստանձնեցի դիահերձարանի ղեկավարումը… Անաղմուկ-գաղտնի շարունակեցի հետազոտությունները, եւ շուտով հասա հաջողությունների…

Զոհ 4- Բժիշկ, մենք հիմա ո՞ր հիվանդանոցի դիահերձարանում ենք…

Բ.Հարություն- Էրեբունի…

Զոհ 4- Ա՜… Մորաքրոջս աղջիկը այստեղ բուժքույր է աշխատում: Կարո՞ղ եմ մի երկու րոպեով տեսնվել նրա հետ…

Բ.Հարություն- Դուք գիտեք, որ նման բաները խստորեն արգելված են: Մենք չենք կարող բացահայտվել:

Զոհ 5- Հենց դրա մասին էի ուզում հարցնել. իսկ չե՞ք վախենում, բժիշկ, որ ձեզ կարող են բացահայտել ու դատել…

Բ.Հարություն- Այդ մտահոգությունը կա, բայց ես նաեւ համոզմունք ունեմ, որ մեծ, համամարդկային նշանակության գործ ենք կատարում… Այս աշխատանքում ինձ մեծ օգնություն է ցույց տալիս իմ գործընկեր, տաղան-

դավոր գիտնական Հրաչ Մուրադյանը, նա, որ մեր վրիժառուներին տարավ՝ իրենց առաքելությունը կատարելու: Հրաչը, ինչպես ասում են՝ իմ աջ ձեռքն է… Եթե մենք այս հետազոտությունները չանենք, ուրիշները կանեն ու կհասնեն հաջողության: Ինձ հայտնի է, որ այլ երկրներում եւս նման գիտափորձեր են կատարվում: Ես ուզում եմ, որ մենք լինենք առաջամարտիկը այս ոլորտում, թող մեր երկիրը գլխավորի գիտության այս ասպարեզը, որը շատ բան է խոստանում մարդկությանը…

Զոհ 4- Ի՞նչ է խոստանում, բժիշկ…

Բ.Հարություն- Իմ խորին համոզմամբ՝ վերկենդանացած… հարություն առած մարդը շատ ավելի է հակված լինելու բարի ու նպատակասլաց, էական գործեր կատարելու, նա իրեն վերստին տրված կյանքի այդ հատվածը ապրելու է առավել իմաստալից, կյանքի ողջ գեղեցկությունը վայելելով… Շատ պայծառ ու օգտակար գործեր կատարվելու են հենց երկրորդ կյանքի շրջանում: Մարդը նորովի՝ ավելի մարդկային, ստեղծագործ ու գեղեցիկ կերպար է ստանում հարությունից հետո. մեր հետազոտությունների առաջին արդյունքները հենց դա են հաստատում:

Զոհ 1- Եսակենտրոն վրիժառությունը նույնպես այդ գեղեցիկ կերպարի մա՞ս է…

Բ.Հարություն- Կասեի՝ այո: Եթե մարդը նվաստացած է, ստորացված, հոգեպես թե մարմնապես բռնադատված, նա լիարժեք չի կարող ապրել ու գործել: Դրա համար սպանվածներին մենք առաջնահերթ շանս ենք տալիս՝ գոնե որոշ չափով վերականգնելու իրենց խարխլված ես-ի ամբողջությունը…

Զոհ 5- Բժիշկ, ձեր գիտական մեթոդների մասին չմոռանաք…

Բ.Հարություն- Այո, ես շեղվեցի ձեր առաջին հարցից, բայց կարծում եմ՝ իմ տված տեղեկատվությունը ձեզ համար հետաքրքիր է…

Զոհ 5- Այո-այո:

Բ.Հարություն- Մեթոդների մասին. մենք մեռած մարդուն ներարկում ենք իր իսկ ճարպային հյուսվածքներից ու պերիֆերիկ արյունից ստացված ցողունային բջիջներ, օգտագործում ենք պեպտիդային կոկտեյլ, դիմում ենք էլեկտրաստիմուլյացիային ու տրանսկրանիալ թերապիային…

Զոհ 5- Մ՞…

Բ.Հարություն- Իմ ասածներից շատ բան կարող եք չհասկանալ, բայց երեւի պետք էլ չէ: */Դադար/* Այժմ մի առաջարկություն ունեմ, կարծում եմ՝ ձեզ դուր կգա… Ես հիմա մոտիկ ռեստորանից կպատվիրեմ լավ ուտելիք, հյութեր ու խմորեղեն եւ մենք մի ուրախ երեկույթ կկազմակերպենք, մինչեւ կվերադառնան վրիժառուները: Ի՞նչ կասեք…

Զոհ 5- Լավ գաղափար է:

Զոհ 4- Տեր Աստված, ինչքա՜ն քաղցած եմ… ասես քսան տար ոչինչ չեմ կերել… Երաժշտություն էլ կլինի՞, բժիշկ…

Բ.Հարություն- Կարծում եմ՝ բացառության կարգով կարող ենք այս անգամ երաժշտություն միացնել, բայց՝ ցածր…

Զոհ 1- Խմիչք էլ պատվիրեք, դոկտոր Հարություն: Մեր հրաժեշտի կենացը կխմենք:

Բ.Հարություն- Դարձյալ պետք է բացառություն անենք… լավ: Հիմա մեզ մնաց… */նայում է ձեռքի ժամացույցին/* մոտ հինգ ժամ, ուրեմն այն օգտագործենք գեղեցիկ ու նպատակային: */Մի քանի վայրկյան նայում է Զոհերին/.* Այնտեղ՝ զգեստապահարանում բժշկական հագուստ կա, կարող եք վերցնել ու հագնվել: */Գրպանից հանում է ձեռքի հեռախոսը եւ զանգում: Զոհերը մոտենում են զգեստապահարանին/:*

ԱՐԱՐ Բ

/Գիշերային ակումբի էրոտիկ սենյակում երկու մարդասպան-կողոպտիչներն են՝ երկու կիսամերկ մարմնավաճառ աղջիկների հետ. նրանք զվարճանում են: Մարդասպանները խոշոր պայուսակից թղթադրամների կապուկներ են հանում, դրանցով գրգռում աղջիկներին, կրկնելով՝ «Հը, քեզ շա՞տ է դուր գալիս, ի՞նչ կարող ես անել սրա դիմաց»: Մարմնավաճառները քրքջում են, լկստվում մարդասպանների հետ, երբեմն փոխելով նրանց: Ներս են խուժում Զոհ 2-ը եւ Զոհ 3-ը՝ ատրճանակները միանգամից պարզելով մարդասպան-կողոպտիչների վրա: Աղջիկները ճչում են/:

Զոհ 3- Չշարժվեք… սրիկաներ, ոչ մի ավելորդ շարժում:

Զոհ 2- Մարմնավաճառներ, դուք արագ հեռացեք հետին դռնով եւ սսկվեք դրսում:

/Մարմնավաճառ աղջիկները հապճեպ լքում են սենյակը՝ իրենց հետ տանելով տրված փողի մի մասը/:

Զոհ 3- Զվարճանում եք, հա՞, հաջող կողոպուտից հետո…

Զոհ 2- Հաջող մարդասպանությունից հետո…

/Մարդասպանները ապշած նայում են Զոհերին/:

Մարդասպան-կողոպտիչ 1 */կմկմալով/-* Դու էն կնիկն ես… որին թրխկացրի առաջինը… Դու սպանված չե՞ս…

Զոհ 2- Էի, հիմա հարություն եմ առել… որ քեզ սատկացնեմ:

/Մարդասպան-կողոպտիչ 1-ը փորձում է ձեռքը տանել գրպանը՝ ատրճանակը հանելու, Զոհ 2-ը անմիջապես կրակում է ուղիղ նրա ձեռքին: Վիրավոր մարդասպանը ցավից գալարվում է/:

Զոհ 3 */Զոհ 2-ին/-* Բայց դու լավ կրակում ես:

Զոհ 2- Առաջին անգամ չեմ սրիկայի վրա կրակում… փորձ ունեմ:

Զոհ 3- Ու՞մ վրա ես կրակել…

Զոհ 2- Քրոջս բռնաբարողի վրա:

Զոհ 3- Սպանե՞լ ես…

Զոհ 2- Հա… Հինգ տարի բանտ եմ նստել դրա համար:

Մարդասպան-կողոպտիչ 2- Բայց դուք իրավունք չունեք ինքնադատ անելու մեզ… Մեզ ոստիկանություն հանձնեք:

Զոհ 2- Լռիր, ժամկետանց վիժվածք: «Իրավունք» բառը մի պղծիր քո կեղտոտ բերանում:

Զոհ 3- Դու միայն սատկելու իրավունք ունես: */Կրակում է մարդասպան-կողոպտիչ 2-ի ծնկանը: Վերջինս գալարվում է ցավից/:* Ուզում ես ցմահ բանտարկությամբ դեռ ապրե՞լ… գուցե նաեւ փախուստի փորձ անել, հը՞… Այ դրան մենք կտրականապես դեմ ենք:

Մարդասպան-կողոպտիչ 2 */ցավից տնքալով/-* Ես քեզ սպանել էի, բայց դու էլ ես հարություն առել:

Զոհ 3- Հա, սպանել էիր, շակալ, բայց հիմա, տեսնում ես՝ ես եմ տնօրինում քո բախտը… տիկին Նազելիի հետ… Աստված մեր կողմն է:

Մարդասպան-կողոպտիչ 2- Աստված ձեզ հարություն է տվել, որ վրե՞ժ լուծեք մեզնից…

Զոհ 2- Հա, հենց էդպես… Դուք կրկնակի հանցանք եք գործել՝ սպանել ու գողացել եք… անհավատ շներ… Դուք չե՞ք զղջում ձեր վայրագության համար… գոնե հիմա…

/Մարդասպանները տնքում ու քրքջում են/:

Մարդասպան-կողոպտիչ 1- Եթե մենք զղջալու ընդունակ լինեինք, էս գործով չէինք զբաղվի:

Մարդասպան-կողոպտիչ 2- Մենք փողին ու զենքին ենք հավատում, միայն:

Զոհ 2- Դա երեւում է ձեր գայլային աչքերից:

Մարդասպան-կողոպտիչ 1- Բայց ասեք՝ ո՞նց գտաք մեզ… դա ոստիկանության խելքի բանը չէ: Մենք ի՞նչն ենք աչքաթող արել, որ էսպես թակարդն ընկանք…

Զոհ 3- Դուք աչքաթող եք արել մարդու ազնիվ միտքն ու հոգին… աչքաթող եք արել մարդկային անմեռ արժանապատվությունը:

Զոհ 2- Ձեր տեղը բժիշկ Հարությունը հայտնեց:

Մարդասպան-կողոպտիչ 2- Ո՞վ է էդ… ամենատես բժիշկը…

Զոհ 2- Ձեր սպանության պատվիրատուն… մեր վրեժի հոգեհայրը: Նա Աստծո հետ է հաղորդակցվում:

Մարդասպան-կողոպտիչ 1- Մենք Աստված չունենք:

Զոհ 2- Չունեք… հաստատ չունեք Աստված: Դուք հիմա մահ ունեք մի-

այն: Մենք ձեզնից՝ չարագործներիցդ վրեժ ենք լուծում մեր գեղեցկուհի Գոհարիկի, Դերենիկի համար, պարոն Իսահակի համար… այն անճոռնի զույգի՝ տարեց մեծահարուստի ու նրա ջահել սիրուհու համար…

Զոհ 3- Տիկին Նազելիի ու ինձ համար:

Զոհ 2- Մեր վրեժը սուրբ է, անվիճելի: Մեր խիղճը երբեք մեզ չի տանջի, որովհետեւ դուք ճիվաղներ եք, ձեզ նմանները չպետք է ապրեն էս լուսավոր աշխարհում… դուք չարի կամակատարներն եք՝ սատանայի ճտերը:

Մարդասպան-կողոպտիչ 2- Բարին էլ դու՞ք եք…

Զոհ 3- Այո. մենք ուրիշի կյանքի, արժանապատվության ու ունեցվածքի վրա չենք բռնանում:

Մարդասպան-կողոպտիչ 1- Բայց հիմա դուք էլ եք մարդասպանություն գործում, դուք մեզ նման եք:

Զոհ 2- Սխալվում ես, տականք… Նախ, դուք մարդ չեք կարող կոչվել, դուք ճիվաղներ եք: Երկրորդ, մենք արդար ու տեղին վրեժ ենք լուծում. ձեզ սպանելով՝ երկու չարիք կվերանա աշխարհից… մաքուր օդը մի փոքր կշատանա մեր շրջապատում: */Կրակում է Մարդասպան-կողոպտիչ 1-ի ճակատին, վերջինս մեռածի պես փովում է/:* Գնել, դու ուզում ես կրակել մյուսի՞ վրա…

Զոհ 3- Իհարկե: */Կրակում է Մարդասպան-կողոպտիչ 2-ի ճակատին, նա էլ է փովում անշունչ/:*

Զոհ 2 */սեւեռուն նայելով ընկած մարդասպաններին/-* Մեր գործը հստակ կատարեցինք: */Դադար/* Բայց, Գնել, ես ուզում էի քեզ զերծ պահել սպանությունից…

Զոհ 3- Ինչու՞… Ես իմ կրակոցները պիտի արձակեի:

Զոհ 2- Հակառակ դեպքում քո տղամարդկային արժանապատվությունը ստորացված կմնար, այո՞…

Զոհ 3- Այո:

Զոհ 2- Հիմա լա՞վ ես զգում քեզ…

Զոհ 3- Համեմատաբար՝ այո:

Զոհ 2- Գիտե՞ս՝ սպանությունը ծանր դեպք է, եթե անգամ սրիկաների ես սպանում. դրա թողած սեւ նստվածքն երկար ժամանակ հոգիդ քայքայում է տակից… կամաց-կամաց… Դրա համար ուզում էի, որ դու էդ նստվածքից չունենաս ու չնեղվես նույնիսկ էն աշխարհում, ուր շուտով գնալու ենք… Ո՞վ գիտի՝ մեկ էլ տեսար՝ նորից հարություն տվին մեզ…

Զոհ 3- Հա, բա ոնց, մի նոր դոկտոր Հարություն է հայտնվելու, պեղելու է մեր ոսկորները եւ վերակենդանացնելու…

Զոհ 2- Որպեսզի նոր վրեժ լուծենք… */Ծիծաղում են/:*

Զոհ 3- Իսկապես, եթե վրեժի իմ բաժինը ես իմ ձեռքով չկատարեի, ես

ինձ լիարժեք չէի զգալու, տանջվելու էի ե՛ւ այս, ե՛ւ այն աշխարհում:

Զոհ 2- Լավ, հասկացա քեզ, Գնել: Դու բարձր տղամարդ ես, ուրախ եմ, որ իմ կյանքի… իմ երկրորդ կյանքի էս կարճատեւ ընթացքում քեզ ճանաչեցի, ու կարեւոր առաքելություն իրագործեցինք միասին:

Զոհ 3- Ես նույնպես ուրախ եմ դրա համար, տիկին Նազելի: Թույլ տվեք անկեղծորեն ասել՝ առանց պատշաճության պարտադրանքի. դուք բարձր կին եք, մարդկային անվեհեր հոգի, որ պատրաստ է հարազատներին ու ընկերներին, իրեն ու Աստծուն պաշտպանել դժբախտությունից ու փորձանքից, չարագործներից ու նրանց հոխորտանքից:

Զոհ 2- Շնորհակալ եմ, կարծում էի՝ նման հուզիչ ու ազնիվ խոսքեր ես երբեւէ չեմ լսի… հասցրի լսել, շնորհակալ եմ Գնել: */Գրկախառնվում է Զոհ 3-ի հետ/:* Վերջացրի՞նք մեր անելիքը, գնա՞նք… Դռան հետեւում բժշկի ընկերը երեւի անհամբերությունից եղունգներն է կրծում:

Զոհ 3- Կարծես թե վերջացրինք… */Մոտենում է սպանվածներին, մի պահ ուշադիր նայում նրանց/:* Գիտե՞ք, տիկին Նազելի, սրանք մեռած վիճակում փոքր-ինչ մարդկային տեսք ունեն:

Զոհ 2- Նման տականքները ոչ մի իրավիճակում մարդկային տեսք ձեռք չեն բերում: Նրանք մեռած էլ կարող են վտանգավոր լինել…

Զոհ 3- Մի տարօրինակ միտք ծագեց գլխումս…

Զոհ 2- Ի՞նչ միտք…

Զոհ 3- Կարո՞ղ է՝ կա մի ուրիշ վերակենդանացնող, բժիշկ Հարությունի հակաօրինակը, ով հարություն է տալիս սպանված չարագործներին…

Զոհ 2- Այսինքն՝ սատանայի դոկտորի՞ն ես ենթադրում… Որ նրա հաճախորդներն էլ մեզնի՞ց վրեժ առնեն…

Զոհ 3- Հա:

Զոհ 2 */ծիծաղում է/-* Այ թե երեւակայություն ունես, Գնել… Դե վերջ տուր, նման բան չի կարող լինել: Բարին ավելի հզոր է, թույլ չի տա, որ չարագործն առաջ անցնի:

Զոհ 3- Լավ, համոզեցիր: */Սեղանից վերցնում է շշերից մեկը եւ զննում/:* Տես, է՜, հնեցված կոնյակ են խմում սրիկաները… քառասուն տարվա «Արարատ» կոնյակ է. խմելու ճաշակ ունեն էս տականքները:

Զոհ 2- Դե թող իրենց քառասունքին խմած լինեն: */Նկատելով փողով լի մեծ պայուսակը/:* Սա էլ նրանց ավարն է: */Ոտքով խփում է պայուսակին/:* Մի քանի հարյուր միլիոն է… Ի՞նչ անենք, Գնել, թողնենք էսպես ու գնա՞նք… Ակումբի տերերը կամ ծառայողները կյուրացնեն էս մեծ գումարը… թեկուզ մասամբ:

Զոհ 3- Չգիտեմ, ի՞նչ անենք…

Զոհ 2- Արի ոստիկանությանը հայտնենք:

Զոհ 3- Համաձայն եմ, բայց ինչպե՞ս…

Զոհ 2- Էսպես: */Սպանվածներից մեկի գրպանից հանում է ձեռքի հեռախոսը եւ զանգում/:* Ալո՞… ոստիկանությունն… «Բոմբեյ» գիշերային ակումբի հետնասենյակներից մեկում են ձեր փնտրած երկու սրիկաների դիակները… այո, եւ բանկից կողոպտած մեծ գումարը… Հա, որ էսօր բանկ էին թալանել ու յոթ հոգու սպանել… Ինչու են սրիկաները դիակնե՞ր… հարցնում եք, հա՞… Որովհետեւ վրեժ ենք լուծել, վրե՜ժ… Որովհետեւ դուք դրա համար դեռ անհրաժեշտ պատրաստվածությունը չունեք… Լավ, ավելորդ հարցեր մի տվեք, շտապ եկեք… Ես հիմա նրանց կլուսանկարեմ ու… կուղարկեմ ձեզ: */Նայում է սպանված մարդասպաններին, հարմար դիրք փնտրում նրանց լուսանկարելու համար/:* Գնել ջան, օգնիր ինձ… Փողի պայուսակը դնենք կենտրոնում, մարդասպաններին էլ հենենք դրան, թող պաշտպանեն փողը մինչեւ ոստիկանների գալը… Էդպես էլ լուսանկարեմ, ուղարկեմ:

Զոհ 3- Լավ, անցանք գործի: */Փողի պայուսակը տեղափոխում են սենյակի կենտրոն, մարդասպաններին մոտեցնում եւ նրանց գլուխները հենում են պայուսակին/:* Էսպես լա՞վ է…

Զոհ 2- Հա: */Հեռախոսով լուսանկարում է մարդասպաններին եւ լուսանկարը հասցեագրում ոստիկանություն: Ապա հեռախոսը նետում է ընկածներից մեկի վրա/:* Հիմա ավարտեցինք մեր անելիքը, կարող ենք գնալ:

Զոհ 3- Սպասեք, տիկին Նազելի… Մի հատ նշենք մեր առաքելության բարեհաջող ավարտը՝ նոր գնանք… */Մոտիկ սեղանից ըմպանակներ է վերցնում, կոնյակի շշից լցնում դրանք: Լեցուն ըմպանակներից մեկը տալիս է Զոհ 2-ին/:* Տիկին Նազելի, ձեր ողջության կենացը:

/Ծիծաղում են/:

Զոհ 2- Եվ քո ողջության ու ասպետականության կենացը, բարձր տղամարդ:

Զոհ 3- Գոհարիկի, Դերենիկի, Իսահակի կենացը նաեւ:

Զոհ 2- Նաեւ էն անճոռնի զույգի կենացը:

Զոհ 3- Հա… Մեր հարազատների կենացը, բարի ողջություն նրանց: */Բաժակ են զարկում, խմում/:* Հիանալի կոնյակ է:

Զոհ 2- Այո՜… */Տխուր ժպտում են միմյանց/:*

Զոհ 3- Բայց ինչու՞ էսքան տխուր է… կարծես թե հակառակը պիտի լիներ…

Զոհ 2- Որովհետեւ շուտով նորից մեռնելու ենք:

Զոհ 3- Բայց դա կարո՞ղ է ծանրակշիռ պատճառ լինել՝ էսքանից հետո տխրելու համար…

Զոհ 2- Իմ ընկեր բանաստեղծ Մովսեսն ասում է, որ տխրությունն Աստծո հայտնությունն է քո մեջ… Մենք էս պահին Աստված ունենք մեր ներսում, Գնել: */Դադար/* Բայց իսկապես… ինչ-որ տարօրինակ տխրություն է,

առեղծվածային… Աստված մի տեսակ անսովոր ձեւով է ծփում իմ մեջ… Կարծես թե ինչ-որ գեղեցիկ, հեռավոր հույսի շողեր կան էս հանելուկային տրտմության մեջ… */Դուռը ծեծում են, ներս է մտնում Բժշկի օգնականը/:*

Բ.օգնական- Խնդրում եմ՝ շտապեք, գնալու ժամանակն է: */Նայում է ընկած մարդասպաններին/.* Ինչ էլ լավ տեղավորել եք սրանց…

Զոհ 3- Հա… Մի բաժակ կոնյակ էլ դու խմիր՝ նոր գնանք: Քառասուն տարվա «Արարատ» է, լավ կզգաս: */Արագ մի ըմպանակ է լցնում եւ մեկնում Բժշկի գործընկերոջը. վերջինս քաղաքավարի վանում է այն/:*

Բ.օգնական- Չէ, շնորհակալ եմ, ես աշխատանքի մեջ եմ:

Զոհ 2- Թե՞ վերակենդանացածների հետ խմելու սովորություն չունեք…

Բ.օգնական- Չէ, պատահել է՝ խմել եմ… Բարեհաջող վերադառնանք՝ գուցե ձեզ հետ էլ էնտեղ բաժակ զարկենք…

Զոհ 3 */Ձեռքի ըմպանակը դնելով սեղանին/*- Լավ, գնացինք:

/Դուրս են գալիս: Սպանված մարդասպանները սկսում են թեթեւ շարժումներով կենդանության նշաններ ցույց տալ: Հապճեպ ներս է մտնում Զոհ 2-ը/:

Զոհ 2- Գնելի համար կոնյակի շիշը տանեմ, նրան շատ դուր եկավ: */Կոնյակի շիշը վերցնում եւ մոտենում է դռանը, վերջին պահին նկատում է ընկած մարդասպանների թույլ շարժումները/:* Ի՞նչ… Չարը չի՞ ուզում մեռնել… վերակենդանանա՞լ է ուզում… չի՜ լինի, երբե՜ք: */Հանում է ատրճանակը եւ փամփշտակալը դատարկում մարդասպանների վրա, որոնք վերջնականապես անշնչանում են/:* Հիմա իսկապես մեր առաքելությունն ավարտված է, կարող ենք հեռանալ… */Հապճեպ դուրս է գալիս: Հեռվից լսվում է ոստիկանական մեքենայի ազդանշանի ձայն/:*

ԱՐԱՐ Գ

/Դիահերձարանում բ.Հարությունը, Զոհեր 1-ը, 4-ը եւ 5-ը համեստ խնջույքի են. սեղանին ուտելիք եւ շշեր կան, հնչում է մեղմ, հաճելի երաժշտություն: Զոհեր 4-ը եւ 5-ը տանգո են պարում, բ.Հարությունը եւ Զոհ 1-ը սեղանի մոտ նստած են: Զոհ 1-ը լցնում է բաժակները/:

Զոհ 1 */զվարթ ձայնով/*- Բժիշկ Հարություն, ձեր կենացը. դուք հանճարեղ մարդ եք… դուք կարողացել եք մեզ կյանք պարգեւել… Դուք մեծ դոկտոր եք:

Բ.Հարություն */մի փոքր գինովցած ձայնով/*- Բայց, գրողը տանի, դա ի՞նչ կյանք է՝ ընդամենը մի քանի ժամ… ես ինձնից դեռ շատ դժգոհ եմ: Պետք է հասնեմ նրան, որ վերակենդանացածները կրկին երկար ապրելու հնարավորություն ունենան, թե չէ՝ մի 10-12 ժամ ընդամենը…

Զոհ 1- Ոչինչ, բժիշկ, հիմա էդքանն էլ քիչ չէ: Շատ ծնվածներ նույնիսկ էդ 10-12 ժամվան արժանի չեն, իսկ մենք էս հնարավորությունն ունենք մի կյանք ապրելուց… սպանվելուց հետո… երազել կարելի է:

Բ.Հարություն- Այսինքն՝ դուք… հարգելի պարոն Իսահակ, գո՞հ եք այս կարճատեւ վերակենդանացման համար…

Զոհ 1- Անչափ գոհ եմ, բժիշկ ջան: Եթե սա չստանայինք, չէինք ունենա էս նոր ու զարմանալի ապրումները, էս նոր հույսերը, էս նոր… ո՞նց եք ասում՝ աշխարհայացքն ու մտքերը… նոր ընկերները… մի խոսքով՝ էսքան նոր հարստություն: Հապա եթե մի քիչ ազատ գործելու հնարավորություն ունենայինք էս ժամերին, համարեք, որ մենք կարճատեւ դրախտում ենք… Հիշեք, դոկտոր, Սուրբ գրքում ասվածը՝ «Հոգին փչում է, որտեղ ինքն է ուզում»:

Բ.Հարություն- Հա, հիշում եմ, եւ նկատի եմ առնում… համենայնդեպս՝ փորձում եմ: Արդեն հայտնել եմ բոլորիդ, հարգարժան Իսահակ, որ առայժմ մենք կարողություն չունենք մեր վերակենդանացածներին բաց թողնելու, որպեսզի ինքնուրույն գործեն…

Զոհ 1- Ոչինչ, բժիշկ ջան, մի մտահոգվիր, դրա ժամանկան էլ կգա… Դու հանճարեղ մարդ ես, դրան կհասնես: Կենացդ, դոկտոր ջան:

Բ.Հարություն- Շնորհակալ եմ հուսադրող, բարի խոսքերի համար: Եվ ձեր կենացը, պարոն Իսահակ: */Դիմելով պարողներին/* Նաեւ ձեր կենացը, երիտասարդներ… Գոհարիկ, Դերենիկ…

Զոհեր 4 եւ 5- Շնորհակա՜լ ենք…

Բ.Հարություն- Մեր մյուս ընկերների կենացը, որ գնացին իրենց առաքելությունը իրագործելու… */նայում է ժամացույցին/* Նրանց վերադառնալու ժամանակն է: */Ձեռքի բաժակը ցած է դնում առանց խմելու: Չի խմում նաեւ Զոհ 1-ը/:*

Զոհ 1- Կգան, մի անհանգստացիր, բժիշկ:

Զոհ 4 */շարունակելով պարել/-* Բժիշկ Հարություն, պարոն Իսահակ, դուք այնքան նման եք իրար…

Բ.Հարություն- Այո, մարդիկ նմանվում են իրար, երբ միասին տքնում են կյանքի ու մահվան սահմանագծին:

Զոհ 1- Եվ երբ միասին համերաշխաբար խմում են:

/Ծիծաղում են: Նույն պահին ներս են մտնում Զոհեր 2-ը եւ 3-ը՝ Բժշկի օգնականի ուղեկցությամբ: Բ.Հարությունը ոստնում է տեղից եւ ընդառաջ գնում եկողներին: Նրանց արագ շրջապատում են նաեւ Զոհեր 4-ը եւ 5-ը: Զոհ 1-ը մնում է իր տեղում/:

Բ.Հարություն- Հը՞, ո՞նց անցավ…

Բ.օգնական- Լավ, ըստ պլանավորածի, դոկտոր Հարություն:

Բ.Հարություն- Շեղումներ չեղա՞ն…

Բ.օգնական- Կարելի է ասել՝ ոչ: Ամեն ինչ կարգին է:

Բ.Հարություն- Դե, փառք Աստծո: */Թեւանցուկ անելով Զոհեր 2-ին եւ 3-ին/.* Հը՞... ո՞նց եք... Հո շատ նեղսրտված չե՞ք...

Զոհ 2- Չէ-չէ, բժիշկ, ամեն ինչ լավ է: Մենք մեզ հիանալի ենք զգում: Շատ կարեւոր գործ ենք արել:

Բ.Հարություն */դիմելով Զոհ 3-ին/-* Իրո՞ք...

Զոհ 3- Տիկին Նազելին երբեք սուտ չի խոսում:

Բ.Հարություն- Բռավո, տեսնում եմ՝ դուք հասցրել եք իրար լավ ճանաչել:

Զոհ 2- Այո: Մենք՝ ես ու Գնելը, այսուհետ կարող ենք միասին մարտի գնալ... ցանկացած մարտի... հայրենական... վնասազերծման... պատժիչ...

Զոհ 3- ... եւ այլն:

Զոհ 4- Դուք հարկ եղածին պես սպանեցի՞ք էդ ճիվաղներին...

Զոհ 2- Էն էլ ո՞նց...

Զոհ 4- Նրանք այսուհետ որեւէ մեկին էլ չե՞ն վնասի...

Զոհ 3- Չէ-չէ, Գոհարիկ, նրանք լիովին վնասազերծված են:

Զոհ 2 */խորհրդավոր ձայնով/-* Եթե, իհարկե, բժիշկ Հարությունը կամ այլ մեկը նրանց չվերակենդանացնի... թեկուզ մի ժամով... նրանք էդ ժամվա ընթացքում էլ կհասցնեն արյուն հեղել:

Բ.Հարություն- Դե, դուք նման մտավախություններ մի ունեցեք, ես իմ հայտնագործություններն ու գիտական ծրագրերը ի սպաս եմ դնում բացառապես բարի նպատակների համար... Լավ, միացեք մեր համեստ խնջույքին: Մենք ձեզ համար բավարար ուտելիք ու խմելիք ենք պահել: */Պահարանից հանում է փաթեթներ, շշեր եւ դնում խնջույքի սեղանին/:* Համեցեք:

Բ.օգնական- Դոկտոր Հարություն, ես գնամ, մնալ չեմ կարող... փոքր աղջկաս ծծնդայն օրն է, Էսօր նրա յոթ տարին է լրանում, հասցնեմ գոնե մի երկու ժամ նրա հետ լինել, քանի դեռ չի քնել:

Բ.Հարություն- Այո-այո, Հրաչ, գիտեմ, հիշում եմ... */Շտապ պահարանից մի գեղեցիկ փաթեթ է հանում եւ տալիս գործընկերոջը/:* Դա տուր Աստղիկին եւ իմ կողմից մի պաչիկով շնորհավորիր: Ասա, որ իր մյուս ծննդյան տոնին Հարություն հոպարը անպայման ներկա կլինի:

Բ.օգնական- Լավ, շնորհակալ եմ, Աստղիկը կուրախանա: */Նայում է Զոհերին/* Դե... ձեզ բարի երեկույթ եւ... ամենայն բարիք:

Զոհ 1- Մի բաժակ խմեք մեզ հետ՝ նոր գնացեք, ընկեր... Աղջկադ ծննդյան առթիվ էլ մի լավ կենաց կասեմ:

Բ.օգնական- Շնորհակալ եմ: Ես իսկապես շատ եմ շտապում: Ներող եղեք ամեն ինչ համար, ես պիտի գնամ: Հաջողություն ձեզ:

Ներկաներ- Հաջողություն:

Զոհ 2- Մեր բոլոր... զոհերի անունից շնորհավորիր դստերդ: Թող նա շատ երկար ապրի ողջ ու երջանիկ եւ... վերակենդանացման կարիք չունենա:

Բ.օգնական- Լավ, շնորհակալ եմ... Ցտեսություն ձեզ... Տիկին Նազելի, դուք աննման պահեցիք ձեզ: Ցտեսություն: */Դուրս է գալիս/:*

Զոհ 2- Ցտեսությո՞ւն... Նա ի՞նչ էր ուզում ակնարկել...

Բ.Հարություն- Ցավոք, ոչինչ էլ չէր ակնարկում... պարզապես քաղաքավարական սովորություն է: Ցտեսություն պիտի ասել նաեւ նրանց, ում իսկապես այլեւս չես հանդիպելու:

Զոհ 2- Հետաքրքիր քաղաքավարություն է... Թե չէ կարող է թվալ, թե նա ժամադրվել է ինձ հետ. վստահեցնում եմ՝ նման բան չկա... Բժիշկ Հարություն, ահա ձեր ատրճանակը... փամփշտակալը դատարկ է: */Ատրճանակը տալիս է բ.Հարությունին/:*

Զոհ 3- Սա էլ վերցրեք... */բժշկին է տալիս իր ատրճանակը/* Դեռ մի քանի փամփուշտ կա:

/Բ.Հարությունը ատրճանակները հապճեպ տանում է սենյակի անտեսանելի անկյունում թաքցնում եւ վերադառնում/:

Զոհ 2- Բժիշկ, իսկ գուցե՞ զենքը թողնեք մեզ մոտ... ո՞վ գիտե, թե էն աշխարհում ինչ չարագործների ենք հանդիպելու...

Զոհ 3- Հա, ինքնապաշտպանության համար պետք կգա:

Բ.Հարություն- Չէ-չէ, թոթափեք նման մտքերը, դուք մտածեք, որ այս աշխարհից մաքուր գնաք... Դե լավ, մոտեցեք սեղանին, խնջույքը նորովի շարունակելու ժամանակն է:

/Ներկաները հավաքվում են սեղանի շուրջ/:

Զոհ 2- Իսկ մենք դատարկ ձեռքով չենք վերադարձել: */Գրպանից հանում եւ սեղանին է դնում կոնյակի շիշը/.* «Արարատ» կոնյակ՝ քառասուն տարվա: Անմահական հեղուկ է... Բժիշկ, ձեր վերակենդանացման փորձերում էսպիսի կոնյակ օգտագործո՞ւմ եք...

Բ.Հարություն */վերցնելով ու զննելով շիշը/*- Դեռ ոչ... բայց կարծում եմ՝ կարելի է փորձել... Ուրեմն անցնենք այդ փորձարարությանը:

Զոհ 3- Տես, է՜... կես շիշ օղի եւ մի շիշ գինի են արդեն դատարկել առանց մեզ...

Զոհ 1- Ձեզ սպասելը հեշտ չէր... Ստիպված խմում էինք:

/Բոլորը նստում են սեղանի շուրջ եւ տրվում հանգիստ խնջույքի: Սովորական կենացներ ու խոսքեր են հնչում: Հիմնականում լսվում է բժշկի աշխույժ ձայնը: Զոհ 1-ը գրեթե չի խոսում, նա աչքի տակով հաճախ շուրջն է նայում. հանկարծ վեր է կենում տեղից՝ ներողություն խնդրելով/.

Զոհ 1- Ցուրտ է… գնամ սավանը վերցնեմ՝ ծածկվեմ:

/Ոչ-ոք նրա վրա ուշադրություն չի դարձնում, բոլորը տարված են միմյանց հասցեագրվող հաճոյախոսություններով: Զոհ 1-ը մոտենում է զգեստապահարանին, ապա գողունի լքում սենյակը: Ներկաները շարունակում են խնջույքը: Զոհ 2-ը մեկեն աչքը հառում է Զոհ 1-ի դատարկ աթոռին, ապա հայացքը պտտեցնում սենյակով/.

Զոհ 2- Ժողովուրդ, էս ու՞ր մնաց պարոն Իսահակը…

/Բոլորը, մեկեն ընդհատելով զրույցը, իրենց շուրջն են նայում, ապա՝ իրար/:

Բ.Հարություն */տագնապած/-* Ի՞նչ… */փութով վեր է կենում տեղից, ստուգում սենյակը/:* Փախե՞լ է… */Շտապ դուրս է գալիս/:*

Զոհ 5- Նրա միտքը միշտ հեռվում էր, զգացվում էր, որ նա ինչ-որ բան է մտմտում…

/Ներս է մտնում բ.Հարությունը/:

Բ.Հարություն- Իսահակը փախել է… Ախր ինչու՞, ինչու՞… Ես զգուշացրել եմ, չէ՞, որ նման արարքները թույլատրված չեն, վտանգավոր են նաեւ… Նա կարող է վախեցնել մարդկանց… Շուտով ինչ-որ տեղ նա կմեռնի… դրանով կմատնի եւ մեզ: */Ձեռքի հեռախոսով զանգում է/.* Հրաչ, ես եմ, ներող եղիր… մերոնցից մեկը փախել է… Զոհ 1-ը՝ Իսահակը, ամենատարիքովը… Նա երեւի իր թոռնիկների մոտ է գնացել… նաեւ ուզում էր իր որդու վրեժն առնել… Չէ, ոչ մի հասցե չգիտեմ… Տես՝ ինչ կարող ես անել… Մնացել է երեք ժամ: */Հեռախոսը դնում է գրպանը/:*

Զոհ 3- Բժիշկ, եկեք գնանք բոլորս փնտրենք նրան… նա կարող է էդ երեք ժամվան էլ չդիմանալ… շուտ կմեռնի:

Բ.Հարություն- Չէ, չի կարելի:

Զոհ 2- Բժիշկ, գոնե դուք գնացեք փնտրեք… մեր ընկերոջը… Մենք էստեղ կսպասենք, չենք փախչի… չէ՞, ընկերներ… */Բոլորը լուռ են, չեն արձագանքում/:* Լավ, հասկացա ձեզ… Բժիշկ, գոնե ինձ թույլ տվեք՝ գնամ գտնեմ Իսահակին: Ես հոտառությամբ կգտնեմ նրան եւ շուտ հետ կբերեմ:

Բ.Հարություն- Չէ, պետք չէ, վտանգավոր է: Չեմ կարող նման ռիսկի գնալ:

Զոհ 4- Մի մտածեք, բժիշկ, նա կվերադառնա… Իր գործը կանի՝ կվերադառնա:

Բ.Հարություն- Դու այդպե՞ս ես կարծում, Գոհարիկ…

Զոհ 4- Այո:

Զոհ 5- Ես էլ եմ այդպես կարծում: Պարոն Իսահակը սեւեռված է իր մեծ ցանկության վրա, նա դա ի կատար կածի ու կվերադառնա: Նա ուրիշ այլ նպատակ չունի:

Բ.Հարություն- Նա նաեւ... կասկածելի սպանություն կկատարի. ապացուցված չէ, թե ով է իր որդուն սպանողը...

Զոհ 5- Հա, էդ մի խնդիրը կա:

/Քար լռություն է տիրում մի պահ/:

Բ.Հարություն- Դե ինչ, ստիպված ենք սպասել նրան: Մենք պետք է... */նայում է ժամացույցին/* նրան սպասենք մոտ երկու ժամ... Այդքան ժամանակ մնաց մինչեւ ձեր... ներեցեք... վերամահանալը:

Զոհ 2- Բժիշկ, մեր մեռնելուց հետո ի՞նչ եք անելու մեզ...

Բ.Հարություն- Պիտի դիահերձենք ձեզ:

/Զոհ 4-ը ճչում է/:

Զոհ 4- Դիահերձե՞ք... Ի՜նչ սոսկալի է... Մեր մարմիննե՜րը...

Զոհ 2 */նմանակելով Զոհ 4-ին/*- Մեր օրգաննե՜րը... */Ավելի լուրջ տոնով/.* Ի դեպ, բժիշկ, խնդրում եմ՝ իմ սիրտը... ֆորմալինի լուծույթի մեջ պահեք մի անոթում՝ որպես նվեր ձեզ... Եթե չեք ուզում՝ որպես նվեր՝ Գնելին... Նա բա՜րձր տղամարդ է... Սիրտս կպահեք ձեր ղեկավարած բաժանմունքի թանգարանում եւ ցույց կտաք մատաղ սերնդին, դոկտոր Բարիկյան:

Բ.Հարություն- Դժվար պատգամ է, բայց... լավ, կպահեմ ձեր սիրտը, տիկին Նազելի... որպես նվեր՝ ինձ ու Գնելին:

Զոհ 2- Երախտապարտ կլինեմ ձեզ, բժիշկ Հարություն:

Զոհ 4 */լացակումած/*- Իսկ իմ սիրտը, բժիշկ, կնվիրեք իմ մայրիկին ու հայրիկին... հատկապես իմ մայրիկին... */հեկեկում է եւ շարունակում արտասվախառն արտահայտվել, բոլորն ակնդետ ու լարված հետեւում են նրա ինքնաբուխ ողբին/.* Մայրիկս ինձ կեսարյան հատումով է ծննդաբերել... շատ է խիզախել ինձ լույս աշխարհ բերելու համար... Մայրս հիվանդ է, խպիպ ունի... Նրա կյանքի համար խիստ վտանգավոր էր երեխա ունենալը, բայց նա գնացել է այդ անձնուրաց քայլին... Մայրի՜կ, իմ հերոս, աննման մայրիկ... դու հյուծվել ես՝ ինձ մեծացնելով: Դու միշտ զսպել ես քո ցավը՝ ինձ չվշտացնելու համար... Ես այլեւս չեմ տեսնի քեզ... դու այլեւս չես տեսնի քո մինուճար Գոհարիկին, մայրի՜կ... Ես քեզ սիրում եմ իմ ապրած ողջ կյանքով... իմ քսան տարիներով... առավելս՝ իմ վերակենդանացման այս մի քանի ժամով... Հիմա եմ հասկանում, թե որքան ուժգին եմ սիրում քեզ, մայրիկ... Ներիր, որ երբեմն սառն էի քո հանդեպ... ներիր, որ քեզ քիչ ուրախություն եմ պարգեւել քո հանդեպ տածած իմ սիրո հազվադեպ պոռթկումներով... Ես մեղավոր եմ քո առաջ, մայրիկ, որովհետեւ իմ ամբողջ սերը քեզ ցույց չտվեցի, ես խակ երեխա էի, ինքնահավան ու կամակոր... Ներիր, մայրիկ... Ես հիմա իմաստուն... երկար ապրած մարդու պես եմ զգում մեր համատեղ կյանքի ողջ գեղեցկությունը...

Զոհ 2 */կամաց, Զոհ 3-ին/* - Էս աղջիկը լավ եղերամայր կլիներ... եթե երկար ապրեր...

Զոհ 4- Թողեք լացեմ… լացը հիմա ամենակարեւոր բանն է, որ կարող եմ անել ծնողներիս… ձեզ եւ ինձ համար… Իսկ դու, մայրիկ, շատ չլացես… շատ չլացես իմ կորստյան պատճառով… Ես հիմա ողբում եմ քո փոխարեն… Ես հիմա վերապրում եմ քո ծանր վիշտը… որպեսզի դու քեզ ավելի հանգիստ պահես ինձ հրաժեշտ տալու ժամին… եւ հետո… Որ ավելի երկար ապրես, որ անունս հաճախ տալու հաճույքն ունենաս, որ անունս արտաբերելիս ժպտաս եւ ոչ թե արտասվես… Գիտեմ, թե որքան ես ուրախանում, երբ կանչում ես՝ Գոհարի՜կ… Քո դրած անունն է… Սիրում եմ քո դրած անունը, մայրիկ… Հա, իմ անունը Վրեժն էլ է սիրում, քոլեջի իմ դասընկերը… Այնտեղ էլ վրեժի հետ գործ ունեցա… Մայրիկ, դասընկերոջս կասես, որ սիրում եմ նրան, չհասցրի դա խոստովանել… նրա հոգու հետ էի դեռ խաղում… Մայրիկ, հայրիկին կասես, որ ես նաեւ նրա փոխարեն եմ ողբացել իմ անժամանակ մահը… Հայրի՜կ… կմխիթարես մայրիկին, թույլ չտաս, որ նա հիվանդագին ապրումներով ինձ հրաժեշտ տա… Նա ներքուստ արնաքամ է լինում, նրան չի կարելի ծանր հուզմունքներ ապրել… Հայրի՜կ, քեզ էլ անչափ շատ եմ սիրում… Դու ամեն ինչ արել ես, որ ես ու մայրիկը մեզ լավ զգանք… Հայրիկ, իմ անձնազոհ հայրիկ, կասես մայրիկին, որ ես .. ես… մի օր…

/Զոհ 2-ը մայրաբար գրկում է Զոհ 4-ին, փաղաքշում/:

Զոհ 2- Հա, բժիշկ Հարությունը կասի հայրիկիդ, նա էլ մայրիկին կասի, որ դու մի օր վերադառնալու ես տուն… Ապրես, աղջիկս, պետք է ծնողներին միշտ հուսադրել: Դե, դե խաղաղվիր… հանգստացիր: */Համբուրում է նրա ճակատը/:*

Զոհ 4 */լացակումած, բայց հանգստանալով/-* Ներեցեք… ես շատ եմ հուզվում…

Բ.Հարություն- Ոչինչ, աղջիկս, մենք քեզ լիովին հասկանում ենք: Դու հիանալի զավակ ես, մայրիկդ ու հայրիկդ կարող են հպարտանալ քեզնով:

Զոհ 4- Իսկապե՞ս, բժիշկ…

Բ.Հարություն- Մի կասկածիր, Գոհարիկ ջան… Դու հպարտանալու արժանի դուստր ես:

Զոհեր- Այո… այո…

Զոհ 4- Շնորհակալ եմ: */Լռություն/* Դե շարունակեք… սիրտ նվիրել… կիսատ մնաց:

Զոհ 5- Հա, շարունակենք… Իմ սիրտը, բժիշկ Հարություն, կնվիրեք… ընկերուհուս՝ Նունեին… Ես այն աշխարհում էլ կսիրեմ նրան: */Մոտակա սեղանիկից թուղթ ու գրիչ է վերցնում եւ արագ ինչ-որ բան գրում/:* Ահա նրա հասցեն ու հեռախոսը, նա Փարիզից կվերադառնա մի շաբաթ անց:

Բ.Հարություն */վերցնելով թուղթը եւ նայելով/-* Լավ… Իսկ ձեր սիրտը ի՞նչ անեմ, Գնել…

Զոհ 3- Կարող եք գիտափորձեր անել նրանով… կամ՝ փոխպատվաստեք որեւէ արժանավոր կարիքավորի կրծքում… Նայեք, հա՜, որ նա չարամիտ մարդ չլինի…

Զոհ 2- Շատ բարոյական… գիտական ու հումանիստական է: Ասում եմ, չէ՞, Գնելը բարձր… վեհ տղամարդ է:

Բ.Հարություն- Այո, ճիշտ եք նկատել, տիկին Նազելի… Գնելի սիրտը, ուրեմն, շատ կարեւոր խնդրի կծառայեցնենք… համամարդկային նպատակի…

Զոհ 3- Իրո՞ք…

Բ.Հարություն- Դե… տեսնենք… առայժմ մտորում եմ:

/Կրկին խոր լռություն է տիրում: Բոլորը մտասույզ ու մտախոհ են: Զոհ 4-ը մի տխուր երաժշտություն է միացնում: Ոմանք փակում են աչքերը եւ կարծես թե ննջում են: Բ.Հարությունը լռելյայն, բայց տագնապած ներս ու դուրս է անում: Այս տեսարանը, բեմական լուծումներով, պետք է պատկերի մոտ մեկուկես ժամվա սպասում: Ի վերջո ներս է մտնում Զոհ 1-ը/:

Բ.Հարություն */ցնծագին/-* Եկա՜վ… */Գրկախառնվում է Զոհ 1-ի հետ, հետո տնտղում է նրան/.* Հը՞, ո՞նց ես… ողջ-առո՞ղջ ես… որտե՞ղ էիր… ի՞նչ արիր…

/Ներկաները նիրհից ու ընդարմացումից սթափվում ու մոտենում են Զոհ 1-ին/:

Զոհ 1- Կներեք, բժիշկ, կներեք, բախտակիցներ… ես հասցրի անել գրեթե էն ամենը, ինչ սիրտս էր տենչում… Հիմա կարող եք ինձ մեռցնել:

Բ.Հարություն */տագնապած/-* Սպանեցի՞ր քո տղային… սպանողին…

Զոհ 1- Չէ, էդ մեկը չհաջողվեց… Պարզվեց՝ էդ ստահակը ճողոպրել է քաղաքից… Բայց եղբորս պատվիրել եմ, որ հետապնդի նրան: Հիմա դա չէ գլխավորը… Գլխավորը էն է, որ ես վերջապես տեսա թոռնիկներիս… Երկու տարի է՝ նրանց չէի տեսել. հարսս արգելել էր… Տղայիս սպանությունից հետո մենք նրա կնոջ հետ գժտվել էինք… Հաշտվեցինք… Ի՜նչ սիրասուն բալիկներ են… Իսկույն կտակ գրեցի եւ ողջ ունեցածս փոխանցեցի նրանց: Բանկի իմ ավանդահաշվից ուզում էի մեծ գումար հանել ու տալ երեխեքին… գիտե՞ք՝ չթողին… Հիմա նրանք կստանան, երբ ուզենան… Մեկ անգամ եւս ներող եղեք… Գիտեմ, որ դա շատ հանդուգն քայլ էր, սակայն ուրիշ կերպ ես չէի կարող հրաժեշտ տալ էս աշխարհին:

Բ.Հարություն- Ձերոնց բացահայտեցի՞ր քո իսկական վիճակը… Նրանք իմացա՞ն, որ դու վերակենդանացած ես…

Զոհ 1- Չէ, նրանք դեռեւս տեղյակ չեն բանկում կատարվածից: Միայն փոքր թոռս՝ Վարդանիկը, շատ ծիծաղեց վրաս էս հագուստիս պատճառով, ասում էր՝ պապիկը շատ է փոխվել… բայց պապիկը, մեկ է՝ բժիշկ չէ:

Բ.Հարություն- Եվ ինչպե՞ս բացատրեցիր փոփոխությունդ…

Զոհ 1- Ասացի, որ հիմա սանիտար եմ… կամավորական հիմունքներով օգնում եմ հիվանդանոցի անձնակազմին:

Բ.Հարություն- Լավ… հետո կերեւա քո արարքի հետեւանքները… Դու շատ վախեցրիր մեզ, Իսահակ: Համենայնդեպս, շնորհակալ եմ, որ վերադարձար:

Զոհ 1- Ես հո հիմար արկածախնդիր չեմ: Ես իմ արդար կենսական մղումներով եմ առաջնորդվել՝ առանց ձեզնից որեւէ մեկին հարվածի տակ դնելու:

Զոհ 2- Ապրես, Իսահակ, դու էլ մի ուրիշ բարձր տղամարդ ես… Ի դեպ, ու՞մ ես ուզում սիրտդ նվիրել…

Զոհ 1- Սիրտս նվիրե՞մ…

Զոհ 2- Հա, հենց բառացի իմաստով… Ծուտով մեզ դիահերձելու են բժիշկ Հարությունի ձեռամբ:

Բ.Հարություն- Եվ իմ գործընկերոջ…

Զոհ 2- Դե գիտես, Իսահակ, դոկտոր Հարությունը մեր օրգանների հետ կարող է վարվել… ըստ մեր կամեցողության:

Զոհ 1- Ահա թե ինչ… Ես պարտադիր սիրտս պիտի ինչ-որ մեկի՞ն նվիրեմ…

Զոհ 2- Չէ, պարտադիր չէ, կարող ես թողնել, որ… նետեն աղբարկղը, ինչպես սովորաբար անում են… Մինչ քո վերադարձը մենք արդեն մեր որոշումները կայացրել ենք… Դե ասա, ու՞մ կուզենայիր, որ սիրտդ նվիրեն… Էդ հարցը կհոգա բժիշկ Հարությունը, նա խոստացել է… Չէ՞, բժիշկ…

Բ.Հարություն */դժվարությամբ արտաբերելով/-* Այո:

Զոհ 2- Դե, Իսահակ, ասա նվիրական ցանկությունդ…

Զոհ 1 */մի փոքր մտածելուց հետո/-* Սիրտս թող հանձնեն… տղայիս…

Զոհ 2- Բայց տղադ մահացած է, չէ՞, նա չի կարող իմանալ, որ նման թանկ նվեր է ստացել քեզնից… Եվ հետո՝ պահպանության խնդիր կա. նա մահացած վիճակում չի կարող պահել քո սիրտը:

Զոհ 1- Ուրեմն էդ դեպքում սիրտս նվիրեք… թոռնիկներիս… Բայց, բժիշկ, կթողնեք, որ նրանք չափահաս դառնան՝ նոր… Նրանք հիմա վեցյոթ տարեկան են, պետք չէ նրանց էդքան վաղորոք բարոյական ճնշման տակ դնել:

Բ. Հարություն- Լավ:

Զոհ 1- Եթե չստացվի, բժիշկ, սիրտս կնետես շներին… Ես շուն շատ եմ սիրում: Վերջին տաս տարում, կնոջս մահվանից հետո, ես իմ շան՝ Ռեքսի հետ եմ ապրել… Նա էլ մահացավ… մի տարի առաջ:

Բ.Հարություն */փոքր-ինչ հանդիսավոր, ոգեշնչված/-* Դուք՝ իմ հարգար-

ժան ու սիրելի Զոհեր, բոլորդ հիանալի, վսեմ արարածներ եք… Նախորդ իմ վերակենդանացրածներից ոչ ոք ցանկություն ու պատրաստակամություն չի հայտնել՝ իր սիրտը նվիրելու որեւէ մեկին, թեեւ ես նման ակնարկներ արել էի… Գիտե՞ք՝ ինչու՞…

Զոհեր- Ինչու՞…

Բ.Հարություն- Որովհետեւ մի անգամ վերակենդանանալուց հետո նրանք թաքուն հույս էին փայփայում, թե դարձյալ հարություն կառնեն ու կապրեն այս աշխարհում էլի որոշ ժամանակ… Նրանք եսապաշտ մարդիկ էին: Դուք այլ կերպ եք մտածում, առնվազն՝ ենթագիտակցորեն. որ կարելի է սեփական, հոգեւոր ու մարմնական սիրտը պարգեւել նվիրական մարդու ու վերամարմնավորման մասին չխորհել, այդպես դառնալով ավելի երկարակյաց այս աշխարհում… Ապրեք, դուք աննման մարդիկ եք, ես հիանում եմ ձեզնով:

Զոհ 2- Ահա թե ինչ՝ հիանու՛մ է դոկտորը մեզնով…

Զոհ 3- Եվ մենք ապրեցինք մինչեւ էս հիացմունքը… Եվ լացել ես ուզում, եւ ծիծաղել:

Բ.Հարություն- Լավ, խորախորհուրդ մտքերի չտրվենք. ձեզ… մեզ քիչ ժամանակ է մնացել… Մոտեցեք սեղանին՝ շարունակենք խնջույքը:

/Զոհերը դանդաղ մոտենում են սեղանին: Նախքան նստելը Զոհ 2-ը թեւանցուկ է անում Զոհ 1-ին եւ նրան կամացուկ ասում/.

Զոհ 2- Կուզե՞ս սիրտս քեզ էլ նվիրեմ…

Զոհ 1- Ինչու՞…

Զոհ 2- Որովհետեւ, ինչպես իմաստուն ընկերս կասեր՝ սիրտը մարդու մեջ Աստծո հույսն է…

Զոհ 1- Ուրեմն դու ուզում ես ինձ հու՞յս պարգեւել…

Զոհ 2- Գուցե ավելին…

/Զոհ 1-ը ժպիտով ու հարցական նայում է Զոհ 2-ին: Նրանք միանում են սեղանի շուրջ բոլորվածներին: Խնջույքը շարունակվում է/:

ՎԵՐՋ

հունվար, 2019

ՆԱԻՐՅԱՆ ՀՐԵԾՏԱԿՆԵՐ

/հեքիաթապատում դրամա չորս պատկերով/

ԳՈՐԾՈՂ ԿԵՐՊԱՐՆԵՐ.

ՍԱՍՈՒՆԻԿ՝ 12 տարեկան
ԱՐԾԻՎ
ԿԱՂ ՄԱՐԴ
ԱՆՏԱՌԱՊԱՀ
ԱՆՏԱՌԱՊԱՀԻ ԵՐԵՔ ԹՈՌԸ՝ ԱՍՏՂԻԿ, ՀՐԱՅՐ, ՁՈՐԱՅՐ
ՓՈՔՐ ՄՀԵՐ
ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ ԵՎ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ
ՉԱՐՔ
ՍԱՍՈՒՆԻԿԻ ՄԱՅՐ
ՏՂԱՆԵՐ
ՇՈՒՆ
ԳԱՅԼԵՐ
ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐ

ՊԱՏԿԵՐ Ա

/Սասունիկը արագաքայլ ճանապարհ է կտրում՝ մենախոսելով ու հանկարծակի կանգառներով. այդ պահերին նա ակնդետ շուրջն է նայում՝ ինչ-որ ծանոթ ու կարեւոր բան հայտնաբերելու ակնկալությամբ/:

ՍԱՍՈՒՆԻԿ- Նրանք պետք է որ էս տեղերում լինեն, չէ՞... Մեր պահապան հրեշտակները... Նրանք չպետք է հեռու գնացած լինեն, նրանք չեն կարող մեզ մենակ թողնել... Ես նրանց մասին էնքա՜ն բան եմ լսել ու կարդացել. ճիշտ է՝ դրանք հեքիաթներ են, բայց, ինչպես պապիկն էր ասում, ամենաճշմարիտը հենց հեքիաթներում է լինում: */Դադար/* Նրանք կան, ինչ-որ տեղ են հիմա, մոտիկ մի տեղ, պետք է միայն լավ փնտրել նրանց... երեւի նրանք կռվի սարսափելի ձայներից վախեցել ու թաքնվել են մոտիկ ինչ-որ տեղ... Նրանք հեռու չեն գնա, նրանք մեզ չեն լքի... Ես նրանց հավատում եմ...

/Հանդիպում է միջին տարիքի Կաղ մարդուն, ով սայլակը փայտով բեռնած՝ առաջ է շարժվում՝ քթի տակ կամաց երգելով/.

ԿԱՂ ՄԱՐԴ- Ծիրանի ծառ, բար մի տուր,
Ճղներդ իրար մի տուր,
Ամեն մեջդ ման գալիս՝
Ցավերս իրար մի տուր...

/Նկատում է տղային, որ կանգնած՝ ուշադիր լսում է իրեն/:

Դու էստեղ ի՞նչ ես անում, տղա ջան... քաղաքից էսքան հեռու, օրվա էս ժամին, շուտով մութը կընկնի... Ու՞ր ես գնում, մոլորվե՞լ ես...

ՍԱՍՈՒՆԻԿ- Չէ, քեռի, ես կարեւոր գործով եմ դուրս եկել քաղաքից, ես գիտեմ՝ ինչ եմ անում:

ԿԱՂ ՄԱՐԴ- Էդ ի՞նչ կարեւոր գործով ես փախել, ծնողներդ գիտե՞ն՝ որտեղ ես...

ՍԱՍՈՒՆԻԿ- Չէ, քեռի, նրանք չգիտեն, ես ծածուկ եմ հեռացել մեր ապաստարանից... բայց չեմ փախել: Եթե մայրիկին ասեի, հաստատ չէր թողնի:

ԿԱՂ ՄԱՐԴ- Իսկ հայրի՞կդ...

ՍԱՍՈՒՆԻԿ- Չէ, նրան չէի էլ կարող ասել. հայրիկս հիմա կռվում է... ռազմաճակատում է:

ԿԱՂ ՄԱՐԴ- Լավ, դե ասա՝ էդ ի՞նչ կարեւոր գործով ես ճանապարհ ընկել...

ՍԱՍՈՒՆԻԿ- Ես ուզում եմ գտնել մեր պահապան հրեշտակներին:

ԿԱՂ ՄԱՐԴ */ծիծաղելով/*- Պահապան հրեշտակնե՞րի... Մ՛յ քեզ միամիտ

տղա… Հետ գնա, հետ գնա, քեզ խաբել են, չկան պահապան հրեշտակներ, էդ ամենը հեքիաթ է, սուտ…

ՍԱՍՈՒՆԻԿ- Չէ-չէ, սուտ չէ:

ԿԱՂ ՄԱՐԴ- Որ սուտ չէ, ինչու՞ ինձ չեն պաշտպանել… Ծանր վիրավորվել եմ… ոտնաթաթս կտրել են… ընկերներիցս ոմանք զոհվել են… Էդ որտե՞ղ էին հապա քո պահապան հրեշտակները… */Դադար/* Գնա ձեր տուն, մորդ մոտ, դու կմոլորվես ու կկորչես: Էս վայրերում նույնպես վտանգավոր է, էստեղ էլ են արկեր ու ռումբեր ընկնում, ավելին՝ գայլեր կան… Տուն գնա, էնտեղ գոնե մի փոքր ապահով է, ապաստարան կա, ձերոնք էլ կողքիդ են:

ՍԱՍՈՒՆԻԿ- Չէ, հետ չեմ գնա, մինչեւ չգտնեմ մեր պահապան հրեշտակներին… Նրանք կան, հիմա ինչ-որ մի տեղ մոտերքում թաքնված են, երեւի վախենում են կռվի որոտներից… Ես պիտի նրանց գտնեմ: Ես պիտի նրանց տանեմ մեր քաղաք, որ պահպանեն երեխաներին, նրանց մեջ հիմա վիրավորներ կան… Ուզում եմ օգնել նրանց, մյուսներին…

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Դե ասա ուզում ես հերոսանալ… Դեռ վաղ է, տղա ջան, հետ արի՝ գնանք:

ՍԱՍՈՒՆԻԿ- Չէ, քեռի, ես հերոսանալու մասին չեմ մտածում, ես ուզում եմ մեր քաղաքի երեխաներին օգնել… */Տխրագին/* Երեկ, գիտե՞ք՝ երկու հոգի սպանվել են… Մեր հարեւան շենքից են, նրանք խաղում էին բակում, չհասցրին թաքնվել, երբ թշնամու ռմբակոծիչները օդից հարձակվեցին…

ԿԱՂ ՄԱՐԴ- Հա, լսել եմ, ծանր կորուստ է… երեխաներ են: Բայց դա չի նշանակում, թե էդ պատճառով դու պետք է դուրս գաս քաղաքից ու ճանապարհ ընկնես գոյություն չունեցող հրեշտակների հետեւից: */Դադար/:* Գուցե՞ դու շատ ես վախեցել երեկվա դեպքից ու հիմա փախել ես… հրեշտակներին առիթ բռնելով, հը՞… Ճիշտն ասա, տղա ջան:

ՍԱՍՈՒՆԻԿ- Չէ-չէ, քեռի, վախենալուս պատճառով չեմ թողել քաղաքը. բոլորն են վախենում, բայց էլի մնում են իրենց տեղերում… Հրեշտակների մասին միտքը գիշերը ծագեց գլխիս մեջ, երբ նորից արթուն էի մնացել:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Լավ, հավատում եմ քեզ… Բայց մեկ է, դու վտանգավոր ու անհեռանկար գործ ես ձեռնարկել. արի միասին գնանք քաղաք, մի երկու կիլոմետր մնաց, եթե հոգնես, սայլակին կդնեմ ու կտանեմ քեզ… Մեղք ես, տղա ջան, կկորչես, արի գնանք:

ՍԱՍՈՒՆԻԿ- Դուք շատ բարի մարդ եք երեւում, քեռի, շնորհակալ եմ… Չէ, չեմ կարող դատարկաձեռն հետ գնալ. էլի երեխաներ կզոհվեն… դե, մեծերը նույնպես: Մենք չենք կարողանում նրանց լավ պաշտպանել… Ես պահապան հրեշտակներին պիտի գտնեմ: Նրանք բոլորիս կպաշտպանեն… Նրանք կարող են պատերազմին վերջ տալ:

ԿԱՂ ՄԱՐԴ- Չեղավ, դու երազների գերին ես դարձել, չի կարելի էս

վտանգավոր ժամանակներում հեքիաթների հովերով տարվել… Հակառակը, հարկավոր է իրատես, ողջամիտ ու սթափ լինել, տղա ջան: Մենք հաճախ կորուստներ ենք ունենում, որովհետեւ իրատես չենք, չենք ուզում իրականությանը նայել շիտակ հայացքով, որպեսզի ճիշտ եզրակացություններ անենք:

ՍԱՍՈՒՆԻԿ- Իսկ իմ պապիկն ասում էր, որ առանց հեքիաթի մարդիկ շուտ են ծերանում ու մահանում… որ կյանքում լավագույն բաներից շատերը մենք ստանում ենք հրաշալի հեքիաթների շնորհիվ… Դե, դուք վերադարձեք քաղաք, ես իմ ճամփան կշարունակեմ:

ԿԱՂ ՄԱՐԴ- Այ թե ինքնասածի ու կողահաստի մեկն ես… Ձեր տան հասցեն ասա գոնե, տղա ջան, որ մորդ տեղյակ պահեմ քո արկածախնդրության մասին. մեղք է մերդ, կտանջվի քեզ փնտրելով… լեղաճաք կլինի…

ՍԱՍՈՒՆԻԿ- Այ դա ճիշտ եք ասում… Մեր տան հասցեն Է՝ Սասունցի Դավթի փողոց, տուն 60… Կհիշե՞ք…

ԿԱՂ ՄԱՐԴ- Կհիշեմ:

ՍԱՍՈՒՆԻԿ- Խնդրում եմ՝ մայրիկիս ասեք, որ ես շուտով կվերադառնամ… որ ես նրան շատ եմ սիրում, որ քույրիկիս՝ Մարիամիկին էլ եմ անչափ սիրում…

ԿԱՂ ՄԱՐԴ- Կասեմ անպայման… Դե ես գնամ, զգույշ եղիր, ասացի՝ գայլեր կան շրջակայքում: */Շարժվում է տեղից ու հետ նայելով՝ առաջ գնում, ապա կանչում է/.* Անունդ չասիր, անունդ, տղա…

ՍԱՍՈՒՆԻԿ */հեռանալով/*- Անունս Սասունի՞կ է…

ԿԱՂ ՄԱՐԴ- Հաջողություն, Սասունի՞կ…

ՍԱՍՈՒՆԻԿ- Հաջողություն, բարի քեռի…

/Կաղ մարդը առաջ է շարժվում, հետո մեկեն կանգ առնում ինչ-որ բան հիշելով, սայլակը թողնում է՝ շտապ հետ դառնում/.

ԿԱՂ ՄԱՐԴ- Սպասի՞ր, Սասունիկ…

ՍԱՍՈՒՆԻԿ */կանգնում է/*- Հա, քեռի, ի՞նչ է պատահել…

ԿԱՂ ՄԱՐԴ */մոտենալով տղային/*- Աղոտ մի բան հիշեցի. եթե իսկապես հավատում ես, որ կան էդ հրեշտակները, նրանց փնտրիր Արարատի փեշերին…

ՍԱՍՈՒՆԻԿ- Արարատի՞…

ԿԱՂ ՄԱՐԴ- Հա, մեր սուրբ լեռան…

ՍԱՍՈՒՆԻԿ- Հասկացա, քեռի, շնորհակալ եմ… հաշվի կառնեմ ձեր խորհուրդը:

ԿԱՂ ՄԱՐԴ- Դե, չգիտեմ՝ ուրիշ ինչ ասեմ… Բայց լավ կլինի՝ շուտ հետ դառնաս տուն: Մենք քեզ համար շատ ենք անհանգստանալու: */Թփթփացնում է տղայի ուսին եւ հետ գնում/:*

ՍԱՍՈՒՆԻԿ- Ցտեսություն, քեռի ջան, ես ձեզ չեմ մոռանա… Երբ վերա-

դարձա, քաղաքում մի օր կհանդիպենք: Ես ձեզ կպատմեմ, թե ինչի հասա… ամեն ինչ կպատմեմ: */Նայում է հեռացող Կաղ մարդու հետեւից. վերջինս, առանց հետ շրջվելու, ձեռքը բարձրացնում եւ հրաժեշտ է տալիս Սասունիկնին: Տղան պատասխանում է նրան եւ շարունակում ճանապարհը՝ զննողաբար նայելով շրջապատը: Լսվում են հրետանային զարկերի հեռավոր ձայներ: Կանգնում է, մտահոգ նայում հետ՝ հեռուն/:* Քաղաքը կարծես թե նորից են ռմբակոծում… */Արագաքայլ վերսկսում է առաջ շարժվել, ապա կանչում է/.* Հրեշտակնե՜ր… մեր պահապան հրեշտակներ, որտե՞ղ եք, երեւացե՜ք… */Օդում հայտնվում են երկու ռմբակոծիչ, որոնք ռումբեր նետելով մոտակայքում արագ անհետանում են: Այդ պահին Սասունիկը պառկում է ճամփեզրի ծառի տակ՝ այդպես պաշտպանվում: Նա նորից ճանապարհ է ընկնում թշնամական ինքնաթիռների հեռանալուց հետո/:* Սա ի՞նչ է՝ ես հրեշտակներին եմ կանչում, իսկ հայտնվում են թշնամու ինքնաթիռները… Գուցե՞ թշնամու հետախույզ-կապավորները իմ խոսքը որսում են… եւ հիմա ռմբակոծիչներով փորձում են խանգարե՞լ ինձ… Երեւի ես չպիտի բարձրաձայն խոսելով գնամ… Բայց միայնակ գնալիս… Էսպիսի ժամանակ չես կարող ինքդ քեզ հետ չզրուցել… Ես էսպես սրտապնդում, քաջալերում եմ ինձ… Ի՞նչ անեմ՝ լուռումունջ ճամփաս շարունակեմ… Շատ տխուր կլինի, բայց ստիպված եմ… Ես տնից դուրս գալուց առաջ երդվել եմ, որ ամեն ինչ կանեմ՝ պահապան հրեշտակներին գտնելու համար: Հիմա մի լուռ մնալը հոգս եմ սարքել ինձ համար… Կլռեմ էնքան, մինչեւ կգտնեմ հրեշտակներին… Գնացինք, Սասունիկ… */Հանկարծ լսվում է գայլերի ոռնոց/:* Վահ, հիմա էլ գայլերն են ուզում ինձ խանգարել… */Թաքնվում է մոտակա թփի մեջ: Հայտնվում է մի արծիվ եւ դանդաղ պտտվում Սասունիկի գլխավերեւով/:*

ԱՐԾԻՎ- Մի վախեցիր, Սասունիկ, դուրս արի… Ես քեզ կպաշտպանեմ:

ՍԱՍՈՒՆԻԿ */դուրս գալով թփից/*- Ո՞վ է խոսում ինձ հետ… Ինչ էլ տարօրինակ ձայն ունի:

ԱՐԾԻՎ */իջնում եւ կանգնում է Սասունիկի դիմաց/*- Ես եմ՝ Արծիվը… Ես կուղեկցեմ քեզ՝ մինչեւ հասնես քո նպատակին:

ՍԱՍՈՒՆԻԿ */ուրախացած/*- Արծի՜վ… որքան եմ սիրում արծիվներին… Եվ դու խոսե՞լ գիտես… Եվ դու անու՞նս գիտես…

ԱՐԾԻՎ- Հա… Լեզու առա էն օրից, երբ սկսվեց պատերազմը… Մարդկանց ոչ միայն գործով, այլեւ խոսքով պիտի օգնել. որպեսզի նրանք չզոհվեն կրակի տակ, որպեսզի նրանք կարողանան պաշտպանել իրենց տունն ու քաղաքը:

ՍԱՍՈՒՆԻԿ- Ապրես, Արծիվ, դու շատ խելոք ու մարդասեր ես երեւում… Մենք կընկերանանք, չէ՞…

ԱՐԾԻՎ- Իհարկե, ես դրա համար էլ հետեւում եմ քեզ… Բայց շարունա-

կենք ճանապարհը: Ես վերեւից ցածր կթռչեմ, իսկ դու քայլիր… Կուզենայի քեզ հետ քայլել, բայց ես վատ քայլորդ եմ, դանդաղաշարժ… */Արծիվը օդ է բարձրանում/:*

ՍԱՍՈՒՆԻԿ */Ճանապարհ է ընկնում/*- Դե դու թռչելու համար ես, Արծիվ, քայլելը մեր գործն է՝ մարդկանց… Ասում ես՝ ինձ հետեւե՞լ ես, ինչու՞…

ԱՐԾԻՎ- Ես քեզ աննկատ հետեւում էի էն պահից, ինչ դուրս եկար քաղաքից… Ես տեսա ու լսեցի, թե ինչ ես խոսել սայլակով փայտ տանող էն կաղ մարդու հետ… Գիտեմ՝ ուր ես գնում եւ ինչու: Քո ցանկությունն ինձ շատ հուզեց: Որոշեցի ընկերակցել ու օգնել քեզ. դու քաջ, անձնուրաց ու հրաշալի տղա ես երեւում… Դու իրոք պետք ես քաղաքին, գուցեեւ դառնաս նրա փրկիչը…

ՍԱՍՈՒՆԻԿ- Շատ զգացված եմ քո խոսքերից, սիրելի Արծիվ, ես ասես նոր ավյունով ու վճռականությամբ լցվեցի… Իսկ դու հատուկ անուն ունե՞ս…

ԱՐԾԻՎ- Իմ հայրն ու մայրը ինձ Փետրացից էին անվանում…

ՍԱՍՈՒՆԻԿ- Ինչու՞ հենց Փետրացից…

ԱՐԾԻՎ- Երբ մանուկ էի՝ տեղի-անտեղի վիճում-կռվում էի ընկերներիս հետ… փետուրներս ցցած… Էդպես էլ կոչեցին՝ Փետրացից:

ՍԱՍՈՒՆԻԿ- Բայց դա ավելի շատ մականվան պես է, չէ՞… Փետրացի՜ց…

ԱՐԾԻՎ- Հա… դե ես վարժվել եմ դրան: Դու երբ ուզենաս, էդպես կարող ես դիմել ինձ:

ՍԱՍՈՒՆԻԿ- Լավ, բայց ինձ ավելի շատ դուր է գալիս, երբ քեզ ասում եմ՝ Արծի՜վ… Բարձր ու վեհ է հնչում: */Դադար/* Ուզում եմ մի կարեւոր բան ասել քեզ, Արծիվ ընկեր. քո օգնությունը իսկապես կարող է շատ մեծ լինել ոչ միայն ինձ, այլեւ՝ շատերի համար… Դու նույնպես հավատում ես, չէ՞, որ պահապան հրեշտակները կան եւ նրանց պետք է գտնել ու վերադարձնել քաղաք…

ԱՐԾԻՎ- Իհարկե, հավատում եմ: Նրանք իսկապես կան, ես իմ աչքով եմ տեսել:

ՍԱՍՈՒՆԻԿ- Իրո՞ք… Որտե՞ղ, ե՞րբ ես տեսել… հիմա ու՞ր են նրանք…

ԱՐԾԻՎ- Ես տեսա նրանց, երբ հեռանում էին քաղաքից. դա էն օրն էր, երբ սկսվեց պատերազմը… Նրանք շատ վախեցած ու այլայլված էին:

ՍԱՍՈՒՆԻԿ- Բայց ինչու՞ հեռացան նրանք, չէ՞ որ պիտի մնային քաղաքում ու պաշտպանեին մարդկանց… հատկապես երեխաներին:

ԱՐԾԻՎ- Չգիտեմ, Սասունիկ, չգիտեմ… Հրեշտակները նույնպես պատերազմ չեն սիրում, նրանց երեւի վախեցրել է հրանոթների ու ռմբակոծիչների ահասարսուռ դղրդյունը կամ գուցե՞… */Դադար/:*

ՍԱՍՈՒՆԻԿ- Գուցե ի՞նչ, Արծիվ…

ԱՐԾԻՎ- Կամ գուցե՞ նրանց թվացել է, թե մարդկանց այլեւս պետք չեն

պահապան հրեշտակներ, որ մարդիկ իրենք ինքնուրույն են հոգում իրենց կարիքները, չեն ուզում ապավինել այլոց… աստվածներին, հրեշտակներին…

ՍԱՍՈՒՆԻԿ- Բայց դա թյուրիմացություն է, չէ՞, Արծիվ… Ինչպե՞ս կարելի է հրաժարվել պահապան հրեշտակներից… Մարդիկ ամենազոր չեն, նրանք չեն կարող ինքնուրույն իրենց պաշտպանել արկերից ու ռումբերից:

ԱՐԾԻՎ- Չգիտեմ, Սասունիկ, չգիտեմ… Էդ հարցերը կտաս հրեշտակներին, երբ հանդիպես նրանց:

ՍԱՍՈՒՆԻԿ */տխուր ձայնով/*- Մեր թաղամասում արդեն հինգ հոգի են զոհվել, երկուսը՝ երեխա… Չգիտեմ՝ որքան են զոհվել ամբողջ քաղաքում ու… մարտադաշտում… Հայրս էլ է էնտեղ: */Դադար/* Լսիր, Արծիվ, դու կարո՞ղ ես հորիցս մի տեղեկություն բերել…

ԱՐԾԻՎ- Անշուշտ… Եթե շատ ես ուզում, հիմա կարող եմ թռնել ետ ու տեսնել հորդ…

ՍԱՍՈՒՆԻԿ- Դա ինչքա՞ն ժամանակ կխլի…

ԱՐԾԻՎ- Մի… երեք ժամ… Նկատի ունեցիր, ընկեր, որ ես ռեակտիվ ինքնաթիռ չեմ: Բացի դրանից, պետք է զգույշ լինեմ, որ չընկնեմ հրետակոծության ու օդային ռմբահարումների տակ:

ՍԱՍՈՒՆԻԿ- Շնորհակալ եմ քո պատրաստակամության համար, իմ ընկեր Արծիվ… Բայց՝ չէ, հորս տեսակցելու հարցը թողնենք հետագային: Հիմա մեզ պետք է շտապել, որ գտնենք հրեշտակներին: Ես ընտրում եմ էդ անելիքը: Հայրս գոհ կմնա իմ ընտրությունից… Շտապենք, Արծիվ: */Արագացնում է քայլերը/:*

ԱՐԾԻՎ- Սպասիր, նախ, պետք է գայլերից պաշտպանվել, նոր…

ՍԱՍՈՒՆԻԿ- Ի՞նչ…

ԱՐԾԻՎ- Էդպես. մինչ մենք սրտագին զրուցում էինք, ոհմակը անաղմուկ մոտեցել է մեզ. տեսնու՞մ ես…

ՍԱՍՈՒՆԻԿ */նկատելով գայլերին, տագնապած/*- Հա… հիմա ի՞նչ պիտի անենք…

ԱՐԾԻՎ- Մի վախեցիր, դու նորից մտիր թփի մեջ, իսկ ես նրանց հեռու կքշեմ: Գիտեմ՝ ոնց վախեցնել նրանց:

/Սասունիկը մտնում է թփի մեջ, Արծիվը օդ է բարձրանում, ուժգին կոնչում եւ թեւերի ուժեղ թեւաբախումներով փորձում է գայլերին հեռու քշել: Կոնչալու հետ մեկտեղ սուր արտաբերում էր՝ «փախ… փախ… փախ»: Գայլերը, երկուսից բացի, նահանջում եւ հեռանում են/:

ՍԱՍՈՒՆԻԿ */թփի միջից/*- Գայլերը փախա՞ն…

ԱՐԾԻՎ */օդից/*- Համարյա, մնացին էն երկու կատաղին… Կարող ես դուրս գալ ու տեսնել, չվախենաս:

ՍԱՍՈՒՆԻԿ */դուրս է գալիս թփից/-* Հա, երկուսը դեռ մնում են. ի՞նչ են ուզում մեզնից…

ԱՐԾԻՎ- Պարզ չէ՞… իմ ու քո մարմինն են ուզում… Հիմա նրանց մարմին ցույց կտամ, նայիր: */Օդից շեշտակի հարձակվում է փոքր-ինչ հեռվում կանգնած երկու գայլի վրա եւ ահեղասաստ գոչյուններով՝ բուղ… բուղ… բուղ, նրանց սարսափի մատնում: Գայլերը ընկրկում եւ փախչում են հեռու/:* Կորան էդ վայրենիները, հիմա կարող ենք հանգիստ շարունակել մեր ճանապարհը:

ՍԱՍՈՒՆԻԿ */շարունակելով ճանապարհը/-* Ի՞նչ էլ քաջ էին ձեւանում էդ երկուսը:

ԱՐԾԻՎ- Զույգ են՝ էգ ու արու, դրանց վաղուց եմ ճանաչում, ամենագիշատիչն են էս շրջանում. հոտերից ու նախիրներից շատ ոչխար ու անասուն են ճանկել, ընտանի շատ թռչուններ խժռել: Մի խոսքով՝ ամենահանցավորներն են էստեղի գայլերի մեջ:

ՍԱՍՈՒՆԻԿ- Մի օր նրանց դատը կանենք, չէ՞, Արծիվ…

ԱՐԾԻՎ- Անպայման: Հնար ունենային՝ օդում ինձ էլ կհալածեին էդ անաստված գայլերը:

ՍԱՍՈՒՆԻԿ- Իսկ ի՞նչ են նշանակում քո էդ «փախ-փախը» եւ «բուղ-բուղը»…

ԱՐԾԻՎ- Իմ ձայնային զենքերից են, պապիցս եմ ժառանգել. դրանք հակառակորդների վրա ուժեղ, շշմեցուցիչ ազդեցություն են թողնում, հատկապես՝ «բուղ-բուղը». սա օգտագործում եմ առավել բարդ իրավիճակներում… վախից չիշիկ են անում տակները…

ՍԱՍՈՒՆԻԿ */ծիծաղելով/* - Հա-հա-հա… տեսա՝ գայլերը չիշիկ անելով փախա՞ն…

ԱՐԾԻՎ- Իրո՞ք… Իմ սուր աչքը դա չի տեսել… Լավ, Սասունիկ, հիմա ասա, թե ինչ ես նկատում էս պահին…

ՍԱՍՈՒՆԻԿ- Ինչ եմ նկատու՞մ… */Շուրջը նայելով/* Կարծես թե արտասովոր ոչինչ չկա… Խաղաղ ու հանգիստ է:

ԱՐԾԻՎ- Հա, հանգիստ է, գայլ ու ինքնաթիռ չկան, բայց պիտի նկատես, որ շուտով մթնելու է, իրիկնաժամ է:

ՍԱՍՈՒՆԻԿ- Հա, իսկապես… Արի գիշերը շարունակենք մեր ճանապարհը, որ ժամանակ շահենք… շուտ գտնենք հրեշտակներին:

ԱՐԾԻՎ- Անձնվեր ու խիզախ բան ես ասում, ընկեր, բայց՝ չէ, առանձնապես լավ գաղափար չէ: Նախ, ես գիշերը շատ վատ եմ տեսնում, գիշերով թռչելն ինձ համար անչափ դժվար ու բարդ է, երկրորդ՝ մենք պետք է հանգստանանք, որ վաղը կարողանանք երկար ճամփա կտրել… Միանգամից պետք չէ ուժասպառ լինել:

ՍԱՍՈՒՆԻԿ- Եվ երրորդ, մեզ հետապնդող գայլերին միանալու են շնա-

գայլերը. նրանց հետ կռվելն արդեն շատ դժվար կլինի… Զգուշության գործոնը. հասկանում եմ:

ԱՐԾԻՎ- Հա, դա էլ կա, ինչու՞ թաքցնել… Խիզախության հետ պետք է նաեւ զգույշ ու խելամիտ լինել:

ՍԱՍՈՒՆԻԿ- Համաձայն եմ, բայց որտե՞ղ պիտի գիշերենք…

ԱՐԾԻՎ- Շուտով մենք մի գյուղ ենք հասնելու, գյուղի ծայրին անտառապահի տունն է, էնտեղ էլ կգիշերենք:

ՍԱՍՈՒՆԻԿ- Դու ճանաչու՞մ ես էդ անտառապահին, նա մենա՞կ է ապրում…

ԱՐԾԻՎ- Հա… մենակ է, բայց նրան հաճախ այցելում են տղան ու թոռները: Ես լավ եմ ճանաչում անտառապահ Սահակին. նա գիտուն, հոյակապ մարդ է՝ հյուրասեր, բնասեր, թռչնասեր…

ՍԱՍՈՒՆԻԿ- Արծվասե՞ր…

ԱՐԾԻՎ- Հա, շատ արծվասերն է: Ասում է՝ միակ աչքս էլ կտամ, միայն թե ինձ հետ մի արծիվ ապրեր:

ՍԱՍՈՒՆԻԿ- Նա միաչքանի՞ է…

ԱՐԾԻՎ- Հա, նա ձախ աչքը նախորդ պատերազմում է լրիվ վնասել: Բայց ակնոց է դնում եւ էդ պակասությունն առանձնապես ուշադրություն չի գրավում:

ՍԱՍՈՒՆԻԿ- Իսկ ինչու՞ դու նրա մոտ չես բնակվում… Մենակ հեշտ չէ ապրելը, չէ՞…

ԱՐԾԻՎ- Չեմ կարող: Ես հիվանդ… վիրավոր եղբայր ունեմ, խնամում եմ նրան… Բայց հաճախ եմ այցելում անտառապահին: */Լռություն/:*

ՍԱՍՈՒՆԻԿ- Արծիվ, դու ձագեր ունե՞ս…

ԱՐԾԻՎ- Երկու ձագ ունեմ, այժմ նրանք մեծ են… Թռել-հեռացել են: Նրանք այժմ աֆրիկյան ինչ-որ երկրում են բնակվում… Հա, մեկ-մեկ այցելում են ինձ… Գիտեմ՝ պիտի հարցնես, ուստի շտապում եմ ասել. ես արու արծիվ եմ, իսկ իմ սիրելի էգ-տիկինը… անցած տարի սպանվեց ինչ-որ տմարդի ձեռքով…

ՍԱՍՈՒՆԻԿ- Շատ եմ ցավում, ընկերս: */Դադար/* Իսկ էդ միայնակ անտառապահի կինը նույնպե՞ս մահացել է…

ԱՐԾԻՎ- Չէ, կինը լքել է նրան, երբ դեռ երիտասարդ էին. երկու երեխան վերցրել ու հեռացել է ամուսնուց…

ՍԱՍՈՒՆԻԿ- Ինչու՞… Ուրիշի՞ն է գտել…

ԱՐԾԻՎ- Դե չէ… Ամուսնուն ասում էր՝ անտառն ավելի ես սիրում, քան ինձ… Էդ պատճառով է հեռացել… Մ՛յ քեզ խանդոտ կին:

ՍԱՍՈՒՆԻԿ- Մ՛յ քեզ խանդոտ կին…

ԱՐԾԻՎ- Հա, էդպես է, Սասունիկ, խանդը բաժանում է մարդկանց, անկախ նրանից, թե դա ինչ տեսակի խանդ է:

ՍԱՍՈՒՆԻԿ- Իսկ քո կինը խանդո՞մ էր քեզ…

ԱՐԾԻՎ- Նա խանդոտ չէր, նա իրոք շատ էր սիրում ինձ, խանդելու ժամանակ էլ չուներ, շատ էր զբաղված ձագերով… Իսկ, այ, ես մի փոքր խանդում էի, սակայն նրան տհաճություններ չէի պատճառում: */Դադար/* Լավ, շտապենք, արդեն մթնշաղ է, շուտ տեղ հասնենք, քանի դեռ անտառապահ Սահակը չի պառկել քնելու:

ՍԱՍՈՒՆԻԿ- Նա էդքան շու՞տ է քնում…

ԱՐԾԻՎ- Հա: Ասում է՝ մթնով քնիր, ցերեկով բանիր… Դե, մի քիչ էլ արագացնենք մեր ընթացքը, Սասունիկ:

/Սասունիկը արագացնում է քայլերը: Արծիվն իր թռիչքով առաջ է ընկնում եւ շուտ հասնում Անտառապահի տան մոտ, այնտեղ էլ՝ տանիքից դիմավորում է Սասունիկին/:

ՍԱՍՈՒՆԻԿ */շունչը տեղը բերելով/*- Անտառապահը տա՞նն է…

ԱՐԾԻՎ- Ծեծիր դուռը, հիմա կիմանանք…

/Սասունիկին է մոտենում սպիտակավուն, հսկա Շունը, կանգնում է նրա դիմաց, նայում տանիքին նստած Արծվին, ապա՝ տղային ու հաչում է/.

ՇՈՒՆ- Հաֆ-հաֆ…

/Սասունիկը մի փոքր ընկրկում է/:

ԱՐԾԻՎ */տանիքից/*- Մի վախեցիր, Սասունիկ, անտառապահի շունն է. զգոն ու խիստ շուն է, բայց բարեկամներին արագ է ճանաչում:

ՍԱՍՈՒՆԻԿ- Հա, խելացի աչքերով է նայում… բարկացած չէ… Տեսնում եմ՝ իր գործը լավ գիտե: */Ծեծում է դուռը: Ներսից լսվում է անտառապահի ձայնը/.*

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Եթե բարի մարդ ես, մտիր, իսկ եթե ոչ՝ չքվիր:

ՍԱՍՈՒՆԻԿ- Մենք բարի ենք, բարի:

ԱՆՏԱՌԱՊԱՀ */տան ներսից արձագանքելով/*- Հա, բարի ձայն եմ լսում, բայց չգիտեմ՝ ով է… Ներս մտիր, բարի ձայն:

ՍԱՍՈՒՆԻԿ */Արծվին/*- Դե, արի, մտնենք միասին:

ԱՐԾԻՎ- Դու մտիր, իսկ ես քիչ հետո կգամ: Չանհանգստանաս, շուտ կվերադառնամ, պետք է: */Թռնում-հեռանում է/:*

ՍԱՍՈՒՆԻԿ- Լավ, ոնց կասես: */Շունը քաշվում է բակի հեռավոր անկյունը: Տղան մտնում է Անտառապահի տունը/:* Բարեւ ձեզ, Սահակ պապի…

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Հազար բարի, տղաս, բարով եկար… Ո՞վ ես, ո՞նց հայտնվեցիր էստեղ…

ՍԱՍՈՒՆԻԿ- Ես Սասունիկն եմ՝ Արծվի ընկերը, Փետրացիցի…

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Մ՜… ուրեմն իմ Արծիվ բարեկամի ընկերն ես… Անչափ ուրախ եմ, Սասունիկ, դու իմ թանկագին հյուրը կլինես… Նստիր, շունչ առ, հոգնած ես երեւում. ջուր կուզե՞ս…

ՍԱՍՈՒՆԻԿ- Հա, շնորհակալ եմ… Վազեցի ու ծարավեցի… Արծիվն

ասաց, որ պետք է շտապել, քանի դեռ անտառապահը չի քնել:

ԱՆՏԱՌԱՊԱՀ */ծիծաղում է եւ մի գավաթ ջուր տալիս Սասունիկին/*- Ուրեմն՝ նա պատմել է իմ մասին... Խմիր, մաքուր, սառը ջուր է, նոր եմ բերել Կաթիլ աղբյուրից:

/Սասունիկը ջուրը խմում է եւ նստում սենյակի աթոռներից մեկին/:

ՍԱՍՈՒՆԻԿ- Քաղցրահամ, անուշ ջուր է: Ես էսպիսի լավ ջուր երբեւէ չեմ խմել:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Հա, մեր ջուրն էդպիսին է... Իսկ ու՞ր է Արծիվը...

ՍԱՍՈՒՆԻԿ- Շուտով կգա... նա մոտերքում է:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Տեսնես՝ ինչ անակնկալ է մտածել թեւավոր բարեկամս... Լավ, մինչ նա կգա ու հացի կնստենք, դու մի քիչ պատմիր քո մասին, տղաս... եւ ասա, թե էս վտանգավոր օրով ինչու ես հեռու քո տուն-տեղից...

ՍԱՍՈՒՆԻԿ- Ես դուրս եմ եկել մեր պահապան հրեշտակներին փնտրելու... Նրանք մեզ շատ պետք են կռվի էս արյունոտ օրերին...

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Պահապան հրեշտակնե՞ր... Ի՞նչ գեղեցիկ ու խանդավառող է հնչում... Բայց, տղաս... */Դադար/:*

ՍԱՍՈՒՆԻԿ- Ուզում եք ասել, որ նրանք գոյություն չունեն, եւ ես զո՞ր եմ նրանց փնտրում, այո՞...

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Դե ես էդքան կտրուկ չեմ մերժում նրանց գոյությունը... սակայն */մի պահ մտածելով/* այլ խորհուրդ կտայի քեզ...

ՍԱՍՈՒՆԻԿ- Ի՞նչ խորհուրդ, Սահակ պապի...

ԱՆՏԱՌԱՊԱՀ */վերհիշելով ինչ-որ կարեւոր բան/*- Հա, կասեմ, բայց սպասենք Արծիվը գա՝ նոր, նրա կարծիքը եւս պիտի լսենք... Հիմա օգնիր՝ սեղան գցենք... Ես էլ նոր եկա, լա՜վ քաղցած եմ: Տեսնենք՝ ինչ ունենք ընթրիքի համար... */Բացում է սառնարանը եւ անմիջապես փակում/* Էլի էս հին սովորությունը... Կռվի հետեւանքով էլեկտրականություն չունենք արդեն մոտ մեկ տարի... սառնարանը չի աշխատում, իսկ ես առաջվա պես բացում-փակում եմ: */Վառում է նավթի ճրագը, ապա բացում պահարանը/* Ունենք հաց, պանիր, կանաչի... եւ մի քիչ եփած ոսպ... Դե, կարո՞ղ ենք բավարարվել էսքանով...

ՍԱՍՈՒՆԻԿ- Հա, Սահակ պապի, հերիք է էդքանը... ես քչակեր եմ:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Իսկ Արծիվը սիրում է ուտել:

/Ներս է մտնում Արծիվը՝ մի սպանված նապաստակ քարշ տալով/:

ԱՐԾԻՎ- Արծիվը սիրում է ուտել իր լավ ընկերների հետ... Ողջո՛ւյն, իմ անտառապահ ընկեր:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Հազար ողջույն, Արծիվ եղբայր, բարով եկար... */ողջագուրվում են/:* Էս ի՞նչ որս ես արել... Նապաստա՜կ... Վաղուց ինձ նապաստակներ չեն հանդիպում... Էդ վախլուկները կռվի ձեներից խրտնել ու փախել են մեր կողմերից...

ԱՐԾԻՎ- Մի քանի քաջերը մնացել են:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Որ մեզ մատաղ լինեն… */Անտառապահն ու Արծիվը թեթեւակի ծիծաղում են/:* Լավ, հիմա ես արագ կմշակեմ նապաստակը ու… լա՜վ կխաշենք… Թե՞ խորովենք, Արծիվ ջան, ո՞նց ես ուզում…

ԱՐԾԻՎ- Դե, դու իմ իրական ճաշակը գիտես: Բայց արա էնպես՝ ոնց սիրտդ է ուզում, բարեկամս, ես կմիանամ քեզ… Հարցրու նաեւ Սասունիկին:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Հա, չեմ մոռացել. Արծիվը հումակեր է, հաշվի կառնեմ… Սասունիկ, իսկ դու ո՞նց ես սիրում ուտել…

ՍԱՍՈՒՆԻԿ- Չնեղանաք, բայց ես նապաստակի միս չեմ ուտի… մեղք է… Նա արկ ու ռումբից պաշտպանվել-փրկվել է, սակայն դարձել է մեր զոհը… */Արծիվն ու Անտառապահը զարմացած իրար են նայում/:* Ես կբավարարվեմ ոսպով ու կանաչիով, Սահակ պապի, մի անհանգստացեք:

ԱՆՏԱՌԱՊԱՀ ԵՎ ԱՐԾԻՎ- Մ… */Լռություն/:*

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Լավ, թող լինի՝ յուրաքանչյուրն ըստ իր ճաշակի, համաձա՞յն եք…

ԱՐԾԻՎ- Համաձայն եմ:

ՍԱՍՈՒՆԻԿ- Թող էդպես լինի:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Ուրեմն՝ պատրաստվենք խնջույքի, թող գոնե մի երեկո ուրախ անցնի պատերազմի օրոք: */Սկսում է նապաստակը մշակել/:*

ԱՐԾԻՎ- Սահակ եղբայր, կանչիր նաեւ թոռնիկներիդ, թող նրանք միանան մեր խնջույքին… նապաստակի միս կհամտեսեն:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Շնորհակալ եմ, բարեկամս… Բայց դու միշտ չէիր ուզում շփվել այլ մարդկանց հետ:

ԱՐԾԻՎ- Էս անգամ բացառություն կանեմ: Սակայն նրանց ներկայությամբ չեմ խոսի, լուռ կմնամ… սովորական անխոս արծվի պես: Դուք էլ ինձ չեք մատնի:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Հա, դու չես ուզում, որ նրանք իմանան քո բացառիկ ընդունակության մասին… Հո ամենուր խոսող արծիվներ չկան… Սասունիկ, մեր Փետրացիցը միակ խոսուն արծիվն է մեր երկրում… գուցեեւ աշխարհում…

ՍԱՍՈՒՆԻԿ- Իսկապե՞ս… Ուրեմն նա հազվագյու՞տ արծիվ է…

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Այո, նա միակն ու անզուգականն է, ուստի զգուշանում է… եւ շա՜տ տեղին. երեխաներ են, իմացան՝ աշխարով մեկ կանեն, նրանց բերանը չես կարող փակել, կտարածեն մեր Արծվի համբավը… հետո ուրիշները հետաքրքրասիրությունից, թե այլ մղումներով կհետապնդեն-կհալածեն նրան ու…

ԱՐԾԻՎ- …ու կսպանեն ինձ… Իսկ ես դեռ կարեւոր անելիքներ ունեմ էս կյանքում ու էս երկրում:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Ապրես, Արծիվ եղբայր: Ուրեմն՝ պայմանավորվեցինք. իմաց տամ թոռնիկներիս՝ թող գան միանան մեր սեղանին:

ՍԱՍՈՒՆԻԿ- Նրանց հորը՝ ձեր տղային էլ կանչեք:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Նրանց հերը կովում է: */Մոտենում է հեռախոսին, որ զանգի/.* Թյու, էլի էս հին սովորությունը... Հեռախոսը չի աշխատում... վաղուց:

ՍԱՍՈՒՆԻԿ- Տան տեղն ասեք, գնամ՝ կանչեմ ձեր թոռնիկներին...

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Կարո՞ղ ես... արդեն մութ է... Գել ու շուն կպատահեն...

ԱՐԾԻՎ- Ես քեզ աննկատ կուղեկցեմ, Սասունիկ... Գնացինք, ես տան տեղը գիտեմ:

/Արծիվն ու Սասունիկը դուրս են գալիս: Բաց մնացած դռնով ներս է մտնում Շունը եւ կանգնում Անտառապահի մոտ/:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Եկա՞ր, Զարզանդ... Ուզում ես օգնե՞լ ինձ, թե՞ քո փայն ես ուզում նապաստակից... Դե, դու խոհարարական հարցերում թույլ ես, առ քեզ մի ոսկոր տամ ու գնա բնիդ մեջ կեր: */Անտառապահը նապաստակի ոտքի մասից ոսկորի մի կտոր է առանձնացնում եւ նետում Շանը, վերջինս օդում հափոում է այն/:* Գնա, եւ հիշիր՝ ինչի համար եմ քեզ հեռացնում սենյակից. դու մի ամիս առաջ ճանկռել ես Զորայրի ոտքը, երեխան վախեցել է քեզնից... Ուր որ է նա իր եղբոր ու քրոջ հետ կլինի էստեղ, չեմ ուզում, որ քո պատճառով թոռնիկս տհաճ հիշողություններ ունենա, իմացա՞ր... */Շունը գլխով է անում/:* Դե գնա ու չնեղանաս ինձնից... մարդկային կարգերն էսպիսինն են: */Շունը հեռանում է սենյակից: Անտառապահը մշակում է նապաստակը. նախ, մի մեծ կտոր առանձնացնում, հում վիճակում դնում է սեղանին՝ Արծվի համար, մնացածը սկսում է խորովել վառարանի մեջ: Անտառապահը աշխատում է ու միաժամանակ մենախոսում/.* Փառքդ շատ, Տեր աստված, որ պահպանում ես մեր անտառը... Էս վերջին մի տարվա մեջ շատ արկ ու ռումբ ընկան անտառի վրա. շատ ծառեր վնասվեցին, շատ... Բայց, լավ է՝ մեծ հրդեհներ չեղան... Հա, կրակի առանձին օջախներ առաջացան, բայց հասցրի ժամանակին հանգցնել: Մենակ դժվար է հրշեջ լինելը, էս օրով ո՞ւմ կանչես օգնության... Արծիվն է մեկ-մեկ գալիս, ինձ ձեռք հասցնում, երբ ծուխ է նկատում մեր կողմերում: */Դադար/* Անտառի թե դրսի շատ կենդանիներ հրետակոծությունների ժամանակ պատսպարվում են թավուտներում, անտառը նրանց համար իսկական ապաստարան է... ճամփորդների համար էլ պաշտպանվելու հարմար տեղ է... Սակայն նրանց մեջ անշնորհքները շատ են. մտնում, պաշտպանվում են էնտեղ, հետո ծառերի տակ հաց են ուտում ու մնացորդները, աղբը թողնում-հեռանում են... Ես եմ նրանց հետեւից մաքրություն անում... Կամ առանց իմանալու, առանց նայելու թանկարժեք, հազվագյուտ ծառեր են կտրում-տանում վառարանի համար... Էս պահին ես առանձնապես չեմ հակառակվում նրանց հետ, մարդիկ իրենց ապաստարաններում վառելու

փայտ պիտի ունենան… Մեկ-մեկ նույնիսկ օգնում եմ նրանց, որ փայտ պաշարեն ու տանեն, երբ պիտի, ըստ օրենքի, արգելեմ նրանց, որ չփչացնեն անտառը… Մինչեւ պատերազմը շատ խիստ էի էդ հարցերում. հապա թող փորձեին անօրեն փայտ տանել էստեղից… վայը եկել է դրան: Հիմա ուրիշ ժամանակ է, փայտից բացի ուրիշ վառելիք չկա… Հիմա, նախ, պետք է պահպանվել, որ վաղը մնացած հարցերը կարողանանք լուծել… Մենք պիտի պահպանվենք, մենք պիտի ապրենք… Բայց, մեկ է՝ պիտի ունեցածը պահելով առաջ գնալ: */Խորոված՝ հանում է վառարանից եւ դնում սեղանին: Մեկեն նկատում է, որ բաց մնացած դռան մոտ հայտնվել են մի խումբ նապաստակներ եւ ակնապիշ նայում են իրեն: Անտառապահը ձեռքը թափահարում է աչքերի առջեւով, կարծելով, թե տեսիլք է հայտնվել իր դիմաց/:* Էս ի՞նչ է, էս ի՞նչ նապաստակներ են էստեղ… Թե՞ աչքիս է երեւում… */Մոտենալով նապաստակներին եւ համոզվելով նրանց իսկության մեջ/:* Իսկական են… Ձեր զոհված ընկերոջ հետեւի՞ց եք եկել… Նա արդեն խորոված է, ուշ է, գնացեք… շուտ, գնացեք, հիմա Արծիվը կգա ու ձեզնից էլի կբռնի, նա նապաստակի համար հոգի է տալիս… Փախեք… փի՜շտ, գնացեք… կորեք աչքիցս… կորեք մեր աչքից, թե չէ ձեզ էլի կխփենք: Փախեք ու թաքնվեք, փրկեք ձեզ, հեռու կացեք մեզնից… Մարդկանց հոգսերը հիմա էնքան ծանր են… Կներեք, որ էդ հոգսերի տակ ձեզ չենք խնայում: Շատ եմ ցավում ձեզ համար: */Գոռում է/* Դե կորեք վերջապես, գրողը տանի, ի՞նչ եք խաղում ձեր կյանքի հետ… Կորե՜ք… */Նապաստակները փախչում-հեռանում են: Անտառապահը սկսում է հեւալ: Նստում է աթոռին, մի պահ դադար տալիս/:* Էս ի՞նչ փորձանք էր… լավ է՝ երեխեքը, մյուսները էստեղ չէին, թե չէ կկարծեին՝ խելառվել եմ… Լավ, հավաքեմ զինքս:

/Ներս են մտնում Սասունիկը եւ Անտառապահի երեք թոռները՝ Աստղիկը /12 տարեկան/, Հրայրը/10 տարեկան/ եւ Զորայրը/7 տարեկան/: Նրանք միանգամից աշխույժով են լցնում տունը: Անտառապահը տեղից ելնում, թոռներին գրկում ու համբուրում է/.

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Եկա՜ն, եկա՜ն անուշիկներս…

ՀՐԱՅՐ- Պապիկ, ձենդ հեռվից լսեցինք, ու՞մ հետ էիր խոսում…

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Դե… ոչ ոքի. չգիտե՞ս՝ ես սիրում եմ ինքս ինձ հետ խոսել: */Նայում է դռնից անդին/:* Դե, անտառի ոգիների հետ էի խոսում… Նրանց էի կանչում, վաղուց չեն երեւում…

ԱՍՏՂԻԿ- Էլի պապիկը սկսեց իր հեքիաթները…

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Դե որ չեք հավատում, անցնենք մեր հոգսերին. օգնեք՝ սեղանը գցենք… Աստղիկ, նայիր պահարանը՝ տես ինչ կա՝ դիր սեղանին… Երեխեք, դուք սիրում եք, չէ՞, խորոված նապաստակ…

ՀՐԱՅՐ ԵՎ ԶՈՐԱՅՐ- Հա՜, պապիկ… շա՜տ ենք սիրում:

ՁՈՐԱՅՐ- Ես արդեն խորոված՝ հոտից կռահում էի, թե ինչով ես մեզ հյուրասիրելու, պապիկ:

ԱՍՏՂԻԿ- Իսկ ես չեմ ուտի:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Բան չկա, Աստղիկ ջան, դու էլ Սասունիկի հետ ոսպ, պանիր ու կանաչի կուտես:

/Անաղմուկ ներս է մտնում Արծիվը/:

ՁՈՐԱՅՐ- Արծի՜վը… մեր Արծի՜վը… */Վազում եւ գրկում է Արծվին: Վերջինիս գրկում է նաեւ Հրայրը/:*

ՀՐԱՅՐ- Պապի, էս քո Արծվին հաճախ տեսնում եմ ձեր ու մեր տանիքներին… Դու նրան վարժեցրե՞լ ես…

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Հա: Բայց նրան հանգիստ թողեք, մինչեւ նապաստակը բռնեց՝ շատ քրտնեց… Հոգնած է, թողեք հանգիստ առնի:

/Տղա թոռները շոյում են Արծվին/:

ՀՐԱՅՐ ԵՎ ՁՈՐԱՅՐ- Լավ, հանգստացիր, Արծիվ ջան: */Թողնում են Արծվին ու մոտենում Սասունիկին/:*

ՍԱՍՈՒՆԻԿ- Էդ Արծիվը նաեւ իմ ընկերն է, խնդրում եմ՝ զգույշ եւ սիրալիր եղեք նրա հետ: Նա չի սիրում շատախոս ու չարախոս մարդկանց, նաեւ գարշանք է զգում մորթապաշտներից ու վախկոտներից… */Ժպտալից նայում է Արծվի կողմը/:*

ՀՐԱՅՐ- Դե մենք էդպիսինը չենք, մենք լավ տղաներ ենք:

ՁՈՐԱՅՐ- Հա, մենք լավ տղաներ ենք:

ՍԱՍՈՒՆԻԿ- Ուրեմն՝ Արծիվը ձեզ կհարգի, եւ եթե երբեւէ հարմար ժամանակ ու հնարավորություն ունենա, նա ավելի մոտիկից կընկերանա ձեզ: Ձեր սերն ու հարգանքը նա անպայման կփոխհատուցի: */Դիմելով Արծվին/* Չէ՞, Արծիվ ջան… */Արծիվը կամաց կոնչում է/:* Տեսնու՞մ եք՝ նա բարյացակամ է տրամադրված ձեր հանդեպ, գուցե եւ մտքի մեջ սիրում է ձեզ. չէ՞ որ դուք Անտառապահ Սահակի թոռներն եք, իսկ Անտառապահը Արծվի համար շատ թանկագին մարդ է:

ԱՍՏՂԻԿ */սեղան գցելով ու երեխաների զրույցն ունկնդրելով/*- Հա, Արծիվը ոնց-որ թե պապիկի պահապան հրեշտակը լինի:

ՍԱՍՈՒՆԻԿ */անակնկալի եկած/*- Դու պահապան հրեշտակներին հավատու՞մ ես…

ԱՍՏՂԻԿ- Դե… երեւի հա… Ես զգում եմ, որ նրանք կան… որ նրանք ինչ-որ տեղ սպասում են մեզ… մեր կանչին…

ՍԱՍՈՒՆԻԿ */ուրախացած/*- Ինչ լավ է, որ դու հավատում ես պահապան հրեշտակներին… Իհարկե, նրանք կան, եւ ես ուզում եմ հանդիպել նրանց:

ԱՆՏԱՌԱՊԱՀ */խորոված միսը դնելով սեղանին/*- Սպասիր, Սասունիկ, էդ մասին կխոսենք հետո, հիմա բոլորդ նստեք սեղանի մոտ, խնջույքը սկսում ենք:

/Ներկաները բոլորվում են սեղանի շուրջ: Արծվին եւս աթոռ է հատկացվում, որի վրա նա կանգնում եւ մասնակցում է ընթրիքին/:

ԱՆՏԱՌԱՊԱՀ */բաժակը լցնելով ու բարձրացնելով/*- Բարով տեսանք, հարազատներս: Բոլորիդ առողջություն ու խաղաղություն եմ մաղթում: */Խմում է/:* Կերեք, բարի ախորժակ բոլորիդ:

ՀՐԱՅՐ ԵՎ ՁՈՐԱՅՐ- Քեզ էլ բարի ախորժակ, պապի:

/Բոլորը ընթրում են: Հեռվից հրետանային խուլ որոտների ձայներ են լսվում, սակայն ոչ ոք ուշադրություն չի դարձնում, արագ ու հաճույքով ուտում են/:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Դե, վերջացրի՞ք, երեխեք ջան…

ՀՐԱՅՐ- Հա, պապի, համեղ խորոված ես արել:

ՁՈՐԱՅՐ */լպստելով մատները/*- Շատ համով էր, ապրես, պապի:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Արծվին շնորհակալություն հայտնեք, որսի միսը նա է բերել:

ՀՐԱՅՐ ԵՎ ՁՈՐԱՅՐ- Շնորհակալություն, Արծիվ ջան */Գրկում եւ համբուրում են նրան/:* Ապրես, ապրես:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Իսկ նկատեցի՞ք, տղաներ, որ Սասունիկն ու Աստղիկը խորոված միսը չկերան…

ՀՐԱՅՐ- Հա, պապի, տեսա… Նրանք մսակերներ չեն:

ՁՈՐԱՅՐ- Ոնց կարելի է խորոված միս չուտել… էն էլ նապաստակի…

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Պիտի հարգել յուրաքանչյուրի նախասիրությունը, Զորիկ: */Դադար/* Հիմա, երեխեք, դուք պետք է մեզ ուրախացնեք ձեր երգ ու պարով: Ձեր գեղեցիկ շնորհքը ցուցադրելու ժամանակն է: Լավագույն կատարողին խոստանում ենք մրցանակ: */Երեխայի պես սկսում է հարվածել սեղանին/.* Մենք պահանջո՛ւմ ենք, մենք պահանջո՛ւմ ենք… երգեք ու պարեք…

/Արծիվը աթոռից իջնում եւ թեւերով զարկում է գետնին՝ ընկերակցելով Անտառապահին: Երեխաները ծիծաղում են/:

ԱՍՏՂԻԿ- Տեսե՞ք, Արծիվն էլ է ուզում, որ մենք երգենք ու պարենք…

ՀՐԱՅՐ- Հա՛… Արծվին չենք մերժի… Սկսեցի՞նք…

/Երեխաները, այդ թվում Սասունիկը, փոխնիփոխ կամ միասին հանդես են գալիս երգ ու պարով, ասմունքով: Նրանք մատուցում են հայրենասիրական ու մանկական կատարումներ: Հանդիսատեսները ծափահարում են ելույթ ունեցողներին, իսկ Արծիվը թեւերի թափահարումով քաջալերում է նրանց: Ի վերջո երեխաների փոքրիկ համերգը ավարտվում է/:

ՁՈՐԱՅՐ */սրբելով ճակատի քրտինքը/*- Հոգնեցի, պապի, հերիք է:

ԱՆՏԱՌԱՊԱՀ */ծափահարելով/*- Հա, ապրեք, երեխեք, հանգստացեք: Դուք բոլորդ էլ հրաշալի երգեցիք ու պարեցիք… Իսկ լավագույն կատարող */ժպտալով մեկ-մեկ նայում է երեխաներին/* ճանաչում ենք… Սասունիկին ու Աստղիկին… Համաձա՞յն եք…

ՆԵՐԿԱՆԵՐ- Այո՜… Սասունիկ ու Աստղիկ… հաղթողնե՛ր…

ՀՐԱՅՐ- Իսկ ի՞նչ մրցանակ եք տալիս նրանց, պապիկ…

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Հա, մրցանակը… */Մտորում է/:* Համաձա՞յն եք, որ մրցանակը հաղթողներին տանք պատերազմից հետո… Շատ ավելի հանդիսավոր պայմաններում կհանձնենք պարգեւը: Մինչ էդ թող գաղտնիք մնա, հա՞…

ՆԵՐԿԱՆԵՐ- Հա, թող գաղտնիք մնա:

ԶՈՐԱՅՐ- Իսկ ե՞րբ կավարտվի պատերազմը, պապիկ…

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Շուտով, բալես, շուտով: */Լռություն/:* Դե, դուք մի քիչ շունչ առեք, երեխեք ջան, սեղանը հավաքեք ու պառկեք քնելու… Մայրիկը թույլ է տվել, չէ՞, որ էսօր գիշերեք ինձ մոտ…

ԹՈՌՆԵՐ- Հա՜, պապի, քեզ մոտ կմնանք էսօր… Ուռա՜…

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Բարի, դե դուք ձեր գործին կացեք, իսկ մենք՝ Արծվի ու Սասունիկի հետ դուրս գանք բակ, մի քիչ կզրուցենք էնտեղ, հետո կգանք ու մենք էլ կքնենք: Լա՞վ, երեխեք…

ՀՐԱՅՐ ԵՎ ԶՈՐԱՅՐ- Լավ, պապի:

ԱՍՏՂԻԿ- Ես կհավաքեմ սեղանը, տղաները միայն չխանգարեն ինձ…

/Հրայրն ու Զորայրը ծիծաղում են/:

ՀՐԱՅՐ- Էս անգամ կօգնենք, չենք խանգարի, Աստղիկ:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Դե, մենք ելանք դուրս…

/Մինչ դուրս գալը Զորայրը մոտենում է Անտառապահին եւ հարցնում/.

ԶՈՐԱՅՐ- Իսկ կլինի՞, պապիկ, որ Աստղիկին ու Սասունիկին արծիվ նվիրեք, կամ՝ բազե… մեկական:

ԱՆՏԱՌԱՊԱՀ */ծիծաղելով/*- Զորիկ ջան, դու ուզում ես մեր գաղտնիքը նախապես իմանալ… Չէ, չեմ ասի:

/Անտառապահը շոյում է թոռան գլուխը, ապա Սասունիկի ու Արծվի հետ միասին դուրս են գալիս բակ եւ նստում ծառի տակ դրված նստարանին: Լիալուսին է: Հեռավոր որոտների ձայները հիմա ավելի պարզ են լսվում: Սասունիկը մի պահ ականջ է դնում: Շունը մոտենում է եւ կանգնում Սասունիկի կողքին/.

ՍԱՍՈՒՆԻԿ- Ոնց որ թե քաղաքին խփում են էլի… */Ձեռքը կամաց դնում է Շան գլխին/:* Հիանալի շուն է, էսպիսի մեկին էլ կուզենայի ես ունենալ… */Շանը/* Դու Սահակ պապիի պահապան հրեշտա՞կն ես…

/Շունը գլխով է անում եւ կամաց հաչում/.

ՇՈՒՆ- Հաֆ-հաֆ…

ՍԱՍՈՒՆԻԿ- Ապրես: Չթողնես, որ նրա վրա գել ու գազան հարձակվեն: Չթողնես, որ նրան մոտիկ արկեր պայթեն:

/Շունը գլխով է անում եւ կամաց հաչում/.

ՇՈՒՆ- Հաֆ-հաֆ…

/Սասունիկը ժպտում եւ շոյում է Շանը/:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Շուտով ամեն ինչ կավարտվի: Պատերազմը երկար չի ձգվի. սա շատ անարդար պատերազմ է մեր դեմ, անարդար բաները երկար չեն կարող ձգվել:

ՍԱՍՈՒՆԻԿ- Բայց մինչ էդ էլի զոհեր կունենանք…

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Ցավոք, այո… ես ամեն օր աղոթում եմ տղայիս ու մեր մյուս կռվող զինվորականների ողջության համար:

ԱՐԾԻՎ */միանալով նրանց խոսակցությանը/*- Աղոթքը քիչ է, եղբայր Սահակ, պետք է ձեռնարկել ուրիշ քայլեր եւս, որ զոհեր չլինեն, կամ… շատ քիչ լինեն, հատկապես խաղաղ բնակիչների մոտ, հատկապես… երեխաների շրջանում:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Ի՞նչ անենք…

ԱՐԾԻՎ- Սասունիկը լավ գաղափար ունի. պետք է գտնել ձեր… մեր պահապան հրեշտակներին:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Հա՜… Իմ տատը, որ մաքրասիրտ կին էր, շատ էր հավատում էդ պահապան հրեշտակների գոյությանը, նրանց մասին հետաքրքիր պատմություններ է ինձ պատմել… Բայց պիտի ասեմ, որ հորս պատմածն ու իմ կարդացածն ավելի են տպավորել ինձ. ես էդ պատմությանն ավելի եմ հավատում:

ՍԱՍՈՒՆԻԿ- Ի՞նչ պատմություն է, Սահակ պապի…

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Խոսքս Փոքր Միհերի պատմության մասին է: */Սասունիկին/* Դու գիտե՞ս՝ ով է Փոքր Միհերը…

ՍԱՍՈՒՆԻԿ- Գիտեմ՝ մեր էպոսի հերոսներից է, Սասնա ծռերից… Դավթի որդին:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Ապրես… Ես խորհուրդ կտայի՝ գնալ ու կանչել Փոքր Միհերին. նա Ագռավաքարում փակված է՝ աշխարհից ու մարդկությունից խռով: Պետք է նրան իմաց տալ, որ մենք դժվարին կացության մեջ ենք հայտնվել, որ իր հայրենի ժողովուրդը զոհեր է տալիս պատերազմում. թող դուրս գա՝ պաշտպանի իր ժողովրդին:

ԱՐԾԻՎ- Բայց նա կլսի՞ մեզ …

ՍԱՍՈՒՆԻԿ- Նա կկատարի՞ մեր խնդրանքը, Սահակ պապի, նա դուրս կգա՞ իր ժայռե ամրոցից…

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Չգիտեմ, պետք է փորձել… Եթե անգամ նա դուրս չգա իր փակ քարանձավից ու չգա օգնության, համոզված եմ՝ մի բարի ու օգտակար խորհուրդ կտա ձեզ. նա իմաստուն ու փորձված այր է, նա մեր ժողովրդի պատմությունը քաջ գիտե, գուցեեւ ասի, թե որտեղ են ապաստանել պահապան հրեշտակները…

/Արծիվն ու Սասունիկը մի պահ իրար են նայում, մտածում/:

ԱՐԾԻՎ- Ի՞նչ կասես, Սասունիկ… Ես կարծում եմ՝ արժե հետեւել Անտառապահի խորհրդին:

ՍԱՍՈՒՆԻԿ- Փորձենք: */Դադար/* Այո, արժե Փոքր Միերին կանչել: Եթե նա չարձագանքի կամ հրեշտակների տեղը չհայտնի, կշարժվենք դեպի Արարատի կողմերը, ինչպես Կաղ մարդն ասաց…

ԱՐԾԻՎ- Լավ: Ուրեմն՝ վաղը մենք ճանապարհ ենք ընկնում դեպի Ագռավաքար:

ՍԱՍՈՒՆԻԿ- Այո:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Ուրախ եմ, որ իմ խորհուրդը հաշվի եք առնում… պարոնայք: */Դադար/:* Բայց ասա ինձ, Սասունիկ, ինչու՞ ես էդքան հույս դրել պահապան հրեշտակների վրա… Կարծում ես՝ եթե անգամ վերադառնան, նրանք կկարողանա՞ն պաշտպանել մերոնց…

ՍԱՍՈՒՆԻԿ- Այո, Սահակ պապի, համոզված եմ՝ հրեշտակները կպահպանեն մեզ, որովհետեւ… որովհետեւ նրանք սիրում են մեզ, մենք էլ նրանց ենք սիրում:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Այո՜… սերը փրկարար ուժ ունի: Ինչպես մի խելոք մարդուց եմ լսել, եթե սերն է առաջնորդ դառնում, ապա պատերազմը նահանջում է: */Լռություն/:* Լավ, մի քիչ հիանանք էս լիալուսնով ու գնանք քնելու. դուք պետք է լավ հանգստանաք, որ վաղվա ձեր առաքելությունը հասցնեք ժամանակին ու հաջողությամբ կատարել:

ԱՐԾԻՎ- Մեր Անտառապահը ճշմարիտ է… ինչպես հաճախ է պատահում:

ՍԱՍՈՒՆԻԿ- Շնորհակալ եմ ձեզնից, Սահակ պապի: Ձեր պահապան հրեշտակին էլ կգտնենք ու կբերենք:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Թող Աստված լսի քո անուշ ձայնը, իմ փոքրիկ բարեկամ: */Դադար/:* Հա, չմոռանամ հիշեցնել, Սասունիկ. դու Արծվի հետ վաղը վտանգավոր ճանապարհ ես անցնելու, լավ կլիներ՝ զենք ունենայիր հետդ…

ՍԱՍՈՒՆԻԿ- Ի՞նչ զենք…

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Ես երկու որսորդական հրացան ունեմ, մեկը կտամ քեզ… Կրակել գիտե՞ս…

ՍԱՍՈՒՆԻԿ */ոգեւորված/*- Հա, կրակել կարող եմ, պապս է սովորեցրել, նա ինձ մեկ-մեկ իր հետ որսի էր տանում:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Լավ: */Դադար/:* Ներիր, Սասունիկ, որ քեզ խաղալիք, գիրք կամ ուրիշ հաճելի նվեր տալու փոխարեն հրացան եմ տալիս… Էհ, ժամանակներ, ժամանակներ…

ՍԱՍՈՒՆԻԿ- Հա, պապի, հիմա զենքի ժամանակներ են, ի՞նչ անենք…

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Շատ եմ ցավում, Սասունիկ, որ քո, մեր երեխաների մանկությունը էսպիսի դաժան ժամանակներում է անցնում… Ձեզ անհոգ ուրախանալ, զվարճանալ է պետք, մինչդեռ մեծերին հավասար տանջվում

եք, եւ ժամանակից շուտ եք հասունանում, շատ շուտ... Երեխա ես, բայց ոնց որ արդեն զինվորացու լինես. չգիտեմ՝ լա՞մ, թե՞ խնդամ... */Գրկում է Սասունիկին, նրա գլուխը հենում իր կրծքին/:*

ՍԱՍՈՒՆԻԿ- Սահակ պապի, մի մտածիր էդքան, կանցնի էս պատերազմը, հետո մենք էլի երեխաներ կդառնանք:

ԱՆՏԱՌԱՊԱՀ */ուրախացած/*- Հա՞... Դե, տես, հա, հանկարծ չմոռանաս խոստումդ, թե չէ շատ կնեղանամ:

ԽԱՍՈՒՆԻԿ- Լավ, Սահակ պապի, լավ: Մեր մանկությունը նորից ետ կբերեն մեր հրեշտակները:

/Անտառապահը, Սասունիկն ու Արծիվը միաժամանակ հիանում են լիալուսնով, ապա վեր են կենում, որ մտնեն տուն: Շունը նայում է լուսնին, հետո, ասես ունկնդրելով հեռավոր որոտների ձայները, կամաց ոռնում է/.

ՇՈՒՆ- Ու՜...

/Բոլորը նայում են Շանը/:

ԱՐԾԻՎ- Քո շունը, ընկեր Սահակ, մի օր կխոսի, նրա սրտում կուտակված շատ ասելիք կա:

ԱՆՏԱՌԱՊԱՀ- Ուր էր թե խոսեր, մշտական զրուցակից կունենայի, թե չէ աչքս ջուր է կտրում, մինչեւ յուրային մեկը գալիս է... Անծանոթներին էլ եմ հոժար, թող գան, միայն թե ինձ հետ սրտանց խոսեն, սրտանց...

/Մոտակա ախոռից լսվում է ձիու վրնջյուն/:

ԱՐԾԻՎ- Շեկոդ է, Սահակ, նրան մոռացել ենք... Նա էլ մի օր կխոսի:

/Ծիծաղելով տուն են մտնում/:

ՊԱՏԿԵՐ Բ

/Վաղ առավոտյան Սասունիկն ու Արծիվը արթնանում եւ անաղմուկ հեռանում են տնից: Տղան ուսին որսորդական հրացան է կրում: Նրանք որոշ ժամանակ անխոս ճանապարհ են անցնում/:

ԱՐԾԻՎ */Սասունիկի գլխավերեւով թռչելով/*- Տեսնում եմ՝ դժվար է հրացանը քեզ համար տանելը, տուր, ինքս կտանեմ, երբ պետք լինի, կտամ քեզ. ես կրակել չգիտեմ, իմ զենքը մագիլներս են եւ կտուցս:

ՍԱՍՈՒՆԻԿ- Շնորհակալ եմ, եղբայր Արծիվ: Իսկապես ծանր զենք է, առ, վերցրու, բայց երբ հոգնես, հետ կտաս, լա՞վ...

ԱՐԾԻՎ- Լավ:

/Արծիվը իջնում՝ Սասունիկից վերցնում է հրացանը, եւ այդպես զենքը մագիլների մեջ առած՝ թռչում է՝ օդից առաջնորդելով տղային: Հանկարծ հետեւից լսվում է մեկի կանչը՝ Սասունի՛կ, Արծի՛վ: Նրանք հետ են շրջվում եւ տեսնում հեւասպառ իրենց մոտեցող Աստղիկին/:

ՍԱՍՈՒՆԻԿ ԵՎ ԱՐԾԻՎ- Աստղի՞կ…

ԱՍՏՂԻԿ- Սպասեք… ուզում եմ միանալ ձեզ… Ուզում եմ ձեզ հետ փնտրել մեր պահապան հրեշտակներին…

ԱՐԾԻՎ- Պապիկից թույլտվություն ստացե՞լ ես…

ԱՍՏՂԻԿ */հավասարվելով նրանց/*- Կներեք… ոչ… Վախեցա, որ պապին թույլ չի տա… Ես կօգնեմ ձեզ, որ արագ գտնեք հրեշտակներին: Ես էլ եմ ուզում հանդիպել նրանց ու ասել սրտիս ուզածը:

ՍԱՍՈՒՆԻԿ- Բայց մենք, նախ, գնում ենք Փոքր Միերի մոտ…

ԱՍՏՂԻԿ- Գիտեմ, ես լսել եմ անցած գիշերվա ձեր խոսակցությունը բակում… կներեք: Ես իմացա, որ մեր ընկեր Արծիվը խոսել գիտե… Այ դա իսկական հրաշք էր ինձ համար. հիացմունքից պարեցի… Ամբողջ գիշեր չեմ քնել:

ԱՐԾԻՎ- Ուրեմն՝ անքուն ես…

ԱՍՏՂԻԿ- Անքուն եմ, բայց շատ ուժ ունեմ՝ ձեզ հետ երկար ճանապարհ անցնելու: Եվ միտքս էլ առույգ է: Այ կտեսնեք՝ Փոքր Միերին կհանդիպենք ու նոր կգնանք հրեշտակների մոտ:

ԱՐԾԻՎ- Դու կարծում ես, որ էդպե՞ս կլինի…

ԱՍՏՂԻԿ- Այո, ինձ էդպես է թվում… Մենք կվերադառնանք հրեշտակների ու Փոքր Միերի հետ:

ՍԱՍՈՒՆԻԿ- Դու գուշա՞կ ես…

ԱՍՏՂԻԿ */ծիծաղելով/*- Դե, չէ, ես ի՞նչ գուշակ… Ուղղակի ինձ էդպես է թվում…

ԱՐԾԻՎ- Սասունիկ, ի՞նչ կասես՝ Աստղիկը միանա՞ մեզ…

ՍԱՍՈՒՆԻԿ- Թող միանա, ավելի ուժեղ կլինենք:

ԱՐԾԻՎ- Դե ուրեմն՝ գնացինք… սլացա՞նք, արեւը շուտով կվառի, պետք է շտապել:

ՍԱՍՈՒՆԻԿ */ժպտալով/*- Գնացի՞նք, Աստղիկ…

/Երեքով շարունակում են ճանապարհը: Արծիվը, մի փոքր առաջ ընկած, օդից հետախույզի պես զննում է ձգվող ճանապարհը եւ մոտակա վայրերը/:

ԱՐԾԻՎ */զիլ կոնչալուց հետո/*- Ես տեսնու՛մ եմ Ագռավաքարը… Տեսնում եմ նաեւ կարճ արահետը, որ տանում է էնտե՛ղ…

ՍԱՍՈՒՆԻԿ- Հա, ցույց տուր էդ արահետը, էդտեղով կգնանք… Աստղիկ, չես հոգնել, չէ՞…

ԱՍՏՂԻԿ */թաքցնելով հոգնածությունը/*- Չէ, գնանք, շուտ տեղ հասնենք…

ԱՐԾԻՎ- Արահետը զառիվերով է ձգվում… կարո՞ղ եք հաղթահարել…

ՍԱՍՈՒՆԻԿ- Կարող ենք:

ԱՐԾԻՎ- Աստղիկ, օգնե՞մ քեզ…

ԱՍՏՂԻԿ- Չէ-չէ, կարիք չկա, ինքս կանցնեմ զառիվերով:

ԱՐԾԻՎ- Դե եկեք իմ հետեւից:

ՍԱՍՈՒՆԻԿ- Առաջնորդիր մեզ, Արծիվ եղբայր:

/Արծիվը օդից ցույց է տալիս այն արահետը, որ պետք է անցնեն: Ճամփորդները հետեւում են նրան: Շուտով հասնում են Ագռավաքարի մոտ: Արծիվը կանգնում է ժայռի վրա, հրացանը դնում կողքին/:

ԱՐԾԻՎ- Հասանք... Փոքր Միերն էստեղ է... Շունչ առնենք ու կանչենք նրան...

ՍԱՍՈՒՆԻԿ ԵՎ ԱՍՏՂԻԿ- Հա: */Հոգնաբեկ նստում են ժայռատակի մի քարի վրա/:*

ԱՐԾԻՎ */կանգնում է նրանց մոտ/*- Եթե նա չարձագանքի, զուր չսպասենք էստեղ, շարունակենք ճանապարհը, հա՞...

ՍԱՍՈՒՆԻԿ- Էդպես էլ կանենք, Արծիվ ջան, մենք զուր ժամանակ կորցնելու իրավունք չունենք:

ԱՍՏՂԻԿ- Նա կարձագանքի, մի մտածեք... Դե, կանչիր, Սասունիկ...

ԱՐԾԻՎ- Սպասիր, Սասունիկ... */Արագորեն վերցնում է հրացանը եւ տալիս տղային/:* Ուսիդ առ, էսպես ավելի տպավորիչ կերեւաս Փոքր Միերի աչքին:

ՍԱՍՈՒՆԻԿ- Հա, իսկապես: */Կանգնում է, հրացանը առնում ուսին, ապա ձեռնափերը դնում է բերանի մոտ՝ հեռավոր կանչի համար/*- Փոքր Մհե՛ր... Փոքր Մհե՛ր... */Լռություն/:*

ԱՍՏՂԻԿ- Թող ես կանչեմ... Փոքր Մհե՛ր... Փոքր Մհե՛ր... */Լռություն/:*

ԱՐԾԻՎ- Թողեք ես կանչեմ... Փոքր Մհե՛ր... Փոքր Մհե՛ր... */Լռություն/:*

ԱՍՏՂԻԿ- Մհե՛ր... Միերի՛կ... */Ծիծաղում են/:*

ՍԱՍՈՒՆԻԿ- Չի պատասխանում... Էս ինչքան է խռովել մեզնից... Եկեք երեքով կանչենք...

ԱՍՏՂԻԿ ԵՎ ԱՐԾԻՎ- Հա, փորձենք:

ԲՈԼՈՐԸ- Փոքր Մհե՛ր...

/Ժայռի ներսից լսվում է Փոքր Միերի բամբ ձայնը/.

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Ի՞նչ կա... Ովքե՞ր եք... Ի՞նչ եք ուզում ինձնից...

ՍԱՍՈՒՆԻԿ- Ուզում ենք քեզ տեսնե՛լ, խնդրում ենք՝ դուրս արի...

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Շատերն են ուզում ինձ տեսնել... հեռացեք...

ԱՍՏՂԻԿ- Չենք կարող հեռանալ առանց քեզ տեսնելու... Մենք կարեւոր բան ունենք քեզ հաղորդելու:

ՓՈՔՐ ՄՀԵՐ */մեկուսի, ինքնիրեն/*- Աղջկա ձայն եմ լսում. աղջիկներն ի՞նչ գործ ունեն էստեղ... Կարծես թե եկվորները շատ կարեւոր բան են ուզում ինձ հայտնել... Վաղուց ինձ էսպես չեն կանչել... */Չին հեծած դուրս է գալիս ժայռից եւ գոչում/.* Ի՞նչ կա, ինչու՞ եք ինձ անհանգստացնում...

ԱՍՏՂԻԿ ԵՎ ՍԱՍՈՒՆԻԿ- Ի՞նչ հոյակապ նժույգ է...

ՍԱՍՈՒՆԻԿ */զգաստանալով/*- Կներեք, սիրելի ու թանկագին Փոքր Միեր. մենք շատ կարեւոր հարցով ենք եկել ձեզ մոտ… Երեւի գիտեք, որ մեր երկրում պատերազմ է…

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Չէ, չգիտեմ, ինձ ոչ ոք ոչինչ չի ասել: */Նստղելով Սասունիկին/.* Էս ի՞նչ է՝ նույնիսկ երեխաներն են զինվել…

ՍԱՍՈՒՆԻԿ */կմկմալով/*- Դե… դե… դաժան… արյունալի պատերազմ է… Մենք ակամա մասնակից ենք դառնում…

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Վատ է, շատ վատ է: Բայց մեր ժամանակներում էլ էր էդպես. մի՞թե ոչինչ չի փոխվում… */Դադար/:* Դե, պատերազմները դաժան ու արյունալի են լինում, պարզ է… Բուն ասելիքդ ասա, տղա:

ՍԱՍՈՒՆԻԿ- Մենք զոհեր ենք տալիս, մեր քաջ զինվորների հետ զոհվում են նաեւ անմեղ խաղաղ բնակիչներ… երեխաներ… */Լսվում են հեռավոր հրետակոծության ձայներ/:*

ՓՈՔՐ ՄՀԵՐ */մի պահ ականջ դնելով հեռավոր ձայներին/*- Էդ ձեր կռի՞վն է…

ԱՍՏՂԻԿ- Այո, դյուցազուն Միեր, խնդրում ենք…

ՓՈՔՐ ՄՀԵՐ */արագ ընդհատելով նրան/*- Ի՞նչ եք խնդրում, գնացեք ձեր կռիվն արեք: Հանգիստ թողեք ինձ, ես վաղուց չկամ ձեր կռվի ու խաղաղության մեջ, ինձ դուրս եք թողել:

ՍԱՍՈՒՆԻԿ- Բայց դուք կամովին եք փակվել էստեղ, ձեզ ոչ ոք չի պարտադրել… Եվ հետո՝ խնդրում ենք, նախ, մինչեւ վերջ լսեք մեզ՝ նոր մերժեք. մերժելն էնքան հեշտ է:

ԱՐԾԻՎ- Ճիշտ է ասում Սասունիկը՝ աշխարհը լիքն է մերժումով:

ՓՈՔՐ ՄՀԵՐ */զարմացած նայելով Արծվին/*- Էս արծիվն ո՞վ է…

ԱՐԾԻՎ- Փետրացիցն եմ:

ՓՈՔՐ ՄՀԵՐ */մի պահ ուշադիր նայելով Արծվին/*- Հա, իմացա… Դե, տղա, շարունակիր խոսքդ:

ՍԱՍՈՒՆԻԿ- Մենք խնդրում ենք, որ դուք գաք ու օգնեք մեզ, որպեսզի հաղթենք թշնամուն, որ պատերազմն ավարտվի, որ…

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Որ-որ-որ… միանգամից ասեք, որ ես էլ նահատակվեմ վերջնականապես էդ կռվում… Տղա, ժամանակները փոխվել են, հիմա ուրիշ կարգի կռիվներ են՝ շա՜տ ավելի կատաղի, կործանարար… Ես ընդամենը սրով, նիզակով, նետ ու աղեղով եմ կռվում, ի՞նչ կարող եմ անել էդ… էդ մետաղյա հրեշների դեմ…

ԱՍՏՂԻԿ- Միայն ձեր ներկայությունը մեծ ուժ ու քաջալերանք կտա մերոնց… Պատկերացնո՞ւմ եք՝ ինչ ոգեւորություն կտիրի մեր ժողովրդի մեջ, երբ իմանան, որ Փոքր Միերը միացել է իրենց պայքարին…

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Ծխի պես արագ կանցնի էդ ոգեւորությունը… Ուժ ու քաջալերա՞նք… դա հերքի չէ էսօրվա կռիվների համար, որտեղ ահեղագոչ

հրազեն են օգտագործում. իմ ժամանակներում նման ավերիչ զենքեր չկային, մեր կռիվներն ավելի մարդկային էին: */Դադար/* Բայց զուր եմ էսքանը բացատրում, միեւնույն է՝ դուք ձեր ասելիքն եք պնդելու... Կա նաեւ մի ուրիշ խանգարող հանգամանք...

ՍԱՍՈՒՆԻԿ- Ի՞նչ հանգամանք...

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Ես երդվել եմ, չէ՞, որ Ագռավաքարից դուրս եմ գալու լոկ էն ժամանակ, երբ ցորենը ընկույզի չափ դառանա... երբ արդարությունը հաղթանակի աշխարհում...

ԱՐԾԻՎ- Պետք չէ գերի մնալ անհեռատես երդումներին: Եվ հետո՝ արդարությունը երբեք չի հաղթանակելու աշխարհում, քանի դեռ կան ուժեղներ ու թույլեր, վայրագներ ու բարեկիրթներ, աստվածներ ու մարդիկ...

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Աստվածներն ու մարդիկ ի՞նչ կապ ունեն էս խնդրի հետ, Փետրացից...

ԱՐԾԻՎ- Որովհետեւ աստվածների ու մարդկանց միջեւ էլ չկա փոխըմբռնում:

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Հըմմմ... ես իմ աստվածներին շա՜տ էի սիրում...

ԱՐԾԻՎ- Իսկ նրանք քե՞զ...

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Չգիտեմ... եւ սիրում էին, եւ մոռանում ինձ...

ԱՐԾԻՎ- Տեսնո՞ւմ ես... Հիմա ի՞նչ կասես վերջնական՝ գալի՞ս ես մեզ հետ՝ քո ազգակիցներին օգնելու, նրանք անողոք փորձության մեջ են, թե՞ շարունակելու ես քո անպտուղ ինքնաբանտարկությունը...

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Չգիտեմ... ես պետք է դեռ մտածեմ... Հեշտ չէ էսպես թողնել քո անձնական մեծ պատմությունը ու խառնվել այլոց հոգսերին...

ԱՍՏՂԻԿ- Էդ այլոքը դարձյալ քոնն են, նրանց պատմությունը դարձյալ քո պատմությունն է:

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Չգիտեմ, ես պետք է դեռ մտածեմ ձեր խնդրանքի վրա...

ՍԱՍՈՒՆԻԿ- Լավ, մտածեք, թեեւ ժամանակը խիստ շտապեցնում է մեզ... Մինչեւ կորոշեք, թանկագին Փոքր Միեր, խնդրում ենք՝ գոնե ասեք, թե որտեղ կարող են գտնվել մեր պահապան հրեշտակները...

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Հա՜... դուք փնտրում եք Նաիրյան հրեշտակներին... մեր հրեշտակներին... Ի՞նչ է՝ նրանք նորից լքե՞լ են ձեզ...

ՍԱՍՈՒՆԻԿ- Այո-այո, մենք Նաիրյան հրեշտակներին ենք փնտրում, մեր հինավուրց երկրի հրեշտակներին... Դժբախտաբար, այո, նրանք մեզ թողել-հեռացել են... մեզ մենակ են թողել...

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Ինչու՞...

ՍԱՍՈՒՆԻԿ- Չգիտեմ... Կարծես թե նրանք վախեցել են էս ահեղ կռվից ու հեռացել են...

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Ամեն ինչ կռվի վրա մի բարդեք, ձեր մեղքն էլ խոստովանեք, ձեր մեղքը: */Դադար/:*

ԱՐԾԻՎ- Մեր մեղքն էլ կա, բայց հիմա դրանք քննելու ժամանակը չէ… Եթե գիտեք հրեշտակների տեղը, ասեք, դյուցազուն, ժամանակը շատ թանկ է:

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Նրանց փնտրեք Մասսյաց վիհում, Արարատ լեռան վրա. երբ հրեշտակները մեծադղորդ արհավիրքի շունչ են զգում, սովորաբար պատսպարվում են էնտեղ:

ՍԱՍՈՒՆԻԿ */ուրախացած/*- Կաղ մարդն էլ ասաց, որ Արարատի կողմերում են լինելու…

ԱՐԾԻՎ- Ուրեմն՝ դեպի Մասսյաց վիհ, բարեկամներս, շտապենք…

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Եթե կարողացաք հրեշտակներին համոզել, որ վերադառնան ձեզ հետ, հետդարձին ինձ իմաց արեք, ես էլ կմիանամ ձեզ… Հասկացեք, ես միայնակ մեծ քաջագործություններ չեմ կարող անել:

ՍԱՍՈՒՆԻԿ- Հասկանում ենք… շնորհակալ ենք:

ԱՍՏՂԻԿ- Պատրաստ սպասեք մեր կանչին, սիրելի Փոքր Միեր: Ցտեսություն…

ՍԱՍՈՒՆԻԿ- Ցտեսություն, խռովյալ դյուցազուն… Միեւնույն է՝ մենք քեզ սիրում ենք:

/Աստղիկը, Սասունիկը եւ Արծիվը արագ հեռանում են/:

ՓՈՔՐ ՄՀԵՐ- Ցտեսություն… */Սպասում է այնքան, մինչեւ եկվորները անհետանում են տեսադաշտից, հետո քթի տակ խոսելով՝ մտնում է ժայռի մեջ/:*

ՊԱՏԿԵՐ Գ

/Սասունիկը, Աստղիկը եւ Արծիվը զննողաբար քայլում են անդունդի եզրով եւ մտմտում իրենց անելիքը/:

ԱՐԾԻՎ- Հաստատ սա է Մասսյաց վիհը… Ես էս տեղերում մի անգամ եղել եմ, երբ հայրս ինձ ծանոթացնում էր Արարատյան դաշտավայրին… Վերեւից տեսա՝ շատ խորն է… Հիմա մենք կամ պետք է իջնենք վիհ՝ հանդիպելու նրանց, կամ պետք Է կանչենք, գուցե լսեն մեզ ու հայտնվեն…

ԱՍՏՂԻԿ- Որքան գիտեմ՝ հրեշտակները ուժեղ լսողություն ունեն. կանչենք, նրանք երեւի արձագանքեն մեզ…

ՍԱՍՈՒՆԻԿ- Հա, դա հեշտ տարբերակ է, փորձենք: Եթե չլսեն, նոր կիջնենք վիհը: */Կանչում է/.* Հրեշտակնե՜ր… Նաիրյան հրեշտակնե՜ր… */Լռություն/*

ԱՍՏՂԻԿ- Հրեշտակնե՜ր… Նաիրյան հրեշտակնե՜ր… */Լռություն/*

ԱՐԾԻՎ- Կանչելու իմ հերթն է, սպասեք… Հրեշտակնե՜ր, Նաիրյան հրեշտակնե՜ր… */Լռություն/*

ՍԱՍՈՒՆԻԿ- Փորձենք երեքով կանչել, ինչպես Փոքր Միերին դուրս կանչեցինք:

/Երեքով կանչում են՝ «Հրեշտակնե՛ր... Նաիրյան հրեշտակնե՛ր»: Լռություն/:

ԱՐԾԻՎ- Չէ, էս անգամ մեր եռամիասնությունն արդյունք չտվեց... Ես հիմա կիջնեմ վիհ, իսկ դուք սպասեք էստեղ:

ՍԱՍՈՒՆԻԿ- Սպասիր, ես էլ եմ գալիս:

ԱՍՏՂԻԿ- Ես էլ եմ գալիս:

ԱՐԾԻՎ- Չէ-չէ, էնտեղ շատ վտանգավոր է, դա շատ խոր վիհ է, կարող եք էնտեղ ջարդուխուրդ լինել... Ես թեւեր ունեմ, թռչելով կզննեմ հատակն ու խորշերը... Եթե հրեշտակներն, իրոք, էնտեղ են ծվարել, անպայման կտեսնեմ նրանց, եւ ձեր անունից կասեմ էն ամենը, ինչ-որ պետք է:

ԱՍՏՂԻԿ- Նրանք կարող են եւ անտեսանելի դառնալ, հատկապես իրենց համար անհաճո պահերին... Հնարավոր է եւ չտեսնես նրանց, Արծիվ...

ՍԱՍՈՒՆԻԿ */Արծվին/*- Հա, քեզ տեսնելով՝ կարող են եւ ավելի զգուշավոր դառնալ՝ մտածելով, թե ինչ-որ դավ է նյութվում իրենց դեմ... Ներող եղիր, Արծիվ ջան, հրեշտակները շատ քմահաճ արարածներ են... Շնորհակալ եմ քո անկեղծ ու սրտացավ ջանքերի համար, բայց պետք է ես էլ քեզ հետ գամ, երկուսիս կլսեն ու կհավատան: Իսկ դու, Աստղիկ, սպասիր էստեղ, մենք շուտով կվերադառնանք:

ԱՐԾԻՎ- Որ էդպես է, Սասունիկ, նստիր մեջքիս, մենք էդպես մեկտեղված կիջնենք վիհ ու կգտնենք հրեշտակներին. դու միայնակ չես կարող իջնել ներքեւ, վիհը շա՜տ անդնդախորն է, մահացու վտանգավոր...

ՍԱՍՈՒՆԻԿ- Լավ, բայց դու կարո՞ղ ես ինձ մեջքիդ տանել, ես էնքան էլ թեթեւ չեմ...

ԱՐԾԻՎ- Իսկ ես էդքան էլ ծեր ու անուժ չեմ. նստիր, նստիր, Սասունիկ:

ՍԱՍՈՒՆԻԿ */հրացանը տալիս է Աստղիկին/* - Աստղիկ ջան, սա պահիր մոտդ, հրացանը քեզ ուժ կտա, մենակ չես վախենա:

ԱՍՏՂԻԿ- Բայց ես կրակել չգիտեմ:

ԱՐԾԻՎ- Բան չկա, երբ կարիք լինի, դա ուղղիր հայտնված չարակամի վրա, կվախենա ու կփախչի:

ՍԱՍՈՒՆԻԿ- Հա, պետք չէ զենքով միշտ կրակել, դրա ներկայությամբ իրենց զուսպ են պահում վատ արարածները... Դե, մենք գնացինք, Աստղիկ, չվախենաս, մենք հոգով ու մտքով քեզ հետ ենք: */Նստելով Արծվի մեջքին/:*- Ի՜նչ լավ է... Ոնց որ փափուկ բարձ լինի տակս...

ԱՐԾԻՎ- Հաճոյախոսում ես... Պինդ բռնիր, թռնում ենք...

ԱՍՏՂԻԿ- Զգույշ եղեք... Չտարվեք ուրիշ բաներով...

ՍԱՍՈՒՆԻԿ- Լա՜վ... շուտով կգանք, Աստղիկ ... Սպասիր մեզ, չվախենա՜ս...

/Արծիվն ու Սասունիկը թռչում են վիհի մեջ/:

ԱՍՏՂԻԿ */նստում է եւ հրացանը պահում գոգին/*- Աղջկան թողեցին էստեղ մենակ ու իրենք թռան... Տեր Աստված. մի բան չպատահի նրանց... Էդ վիհում մութ ու մշուշ է... Նրանք ո՞նց պիտի կողմնորոշվեն... Իսկ եթե ժայռերին բախվե՞ն... Իսկ եթե... հրեշներ ու վիշապներ լինեն էնտեղ ու հարձակվեն նրանց վրա՞... Տեր Աստված, պահպանիր Սասունիկին ու Արծվին... */Վախից դողացնում է, ապա կանգնում է ու սրտակեղեք կանչում/.* Հրեշտակնե՜ր... Նաիրյան հրեշտակնե՜ր...

/Վիհից հայտնվում է Հրեշտակապետը՝ իր մեծ թեւերով, գեղեցիկ ու պատկառելի կերպարանքով/:

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Դու մե՞զ էիր կանչում, աղջիկ...

ԱՍՏՂԻԿ */Վախենում ու ապշում է, հրացանը ակամա փորձում է ուղղել Հրեշտակապետի վրա, բայց արագ կռահելով նրա ինքնությունը, զենքը ցած է գցում/*- Դու... դու... դու... Նաիրյան հրեշտակների՞ց ես...

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Ես նրանց Հրեշտակապետն եմ... Իսկ դու ո՞վ ես, ինչու՞ ես մեզ կանչում, ինչպե՞ս հայտնվեցիր այստեղ...

ԱՍՏՂԻԿ- Ես Աստղիկն եմ... Բերդաձորից... Մենք փնտրում ենք ձեզ:

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Մենք՝ ովքե՞ր...

ԱՍՏՂԻԿ- Ես՝ Սասունիկի ու Արծվի հետ... Նրանք իջան վիհը՝ ձեզ փնտրելու... Ձեր քույրերն էնտե՞ղ են... Մենք ձեզ շատ կանչեցինք, բայց պատասխան չստացանք ձեզնից:

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Մենք վիհի ամենաներքեւի անձավներում ենք ապաստանել, այնտեղ աշխարհի ձայները չեն հասնում... Ես հենց նոր բարձրացել եմ, որ տեսնեմ՝ ինչ է կատարվում վիհի շրջակայքում, Արարատյան դաշտում... Հետախուզական թռիչք եմ կատարում: */Նայում է հեռուները, հոգոց քաշում/:* Ասում ես՝ ձերոնք իջել են վիհը մեզ փնտրելու՞... Բայց դա շատ վտանգավոր արարք է, այս վիհում միայն մենք ենք լավ կողմնորոշվում, մեկ էլ մի երկու չարք, դրանց շուտով կքշենք: */Դադար/* Ես իջնեմ՝ ձերոնց գտնելու. նրանք մեծ վտանգի են մատնել իրենց... Սպասիր այստեղ, աղջիկ, ես շուտով կվերադառնամ: */Հրեշտակապետը արագ սուզվում է վիհի մեջ/:*

ԱՍՏՂԻԿ- Բոլորն ինձ մենակ են թողնում... Ինչ արած, պիտի սպասեմ: */Մի պահ գլխահակ նստում է, ապա հրացանը առած՝ վեր կենում, շրջում ու երգում է/.* Թռչեի մտքով տուն,/ Ուր իմ մայրն է անքուն,/ Տեսնեի այն առուն... */Ընդհատում է երգելը/:* Ձոհված հորեղբորս սիրած երգն է... Նրանից էլի երգեր եմ սովորել... Երեւի հորեղբայրս հիմա էլ, երբ ողջ չէ, շատ է կարոտում իր հայրենի տունը, իր մայրիկին՝ իմ աննման տատիկին... Հրեշտակները դա ավելի լավ կիմանան... Գուցե՞ նրանք կարողանում են տեսակցել մեր նահատակների հոգիների հետ... */Մտախոհ վերեւ է նայում/:*

Բայց նրանց ուշադրությունը ես հիմա չպետք է շեղեմ նման հարցերի վրա, հիմա մենք շատ ավելի կարեւոր, անհետաձգելի գործ ունենք… Փոքր Միերն էլ իր ժայռե տանը հաստատ սպասում է մեզ սրտատրոփ, երեւի եղունգներն է կրծում անհամբերությունից… Ծա՜տ հետաքրքիր մարդ է Փոքր Միերը, ես նրան հասկանում եմ. երդվել ու էսքան երկար ժամանակ իր խոսքի գերին է եղել, երբ իր հայրենիքում էնքա՜ն ճակատագրական բաներ են կատարվում… Մեկը պետք է, որ համոզի նրան՝ ետ կանգնեցնի իր երդումից, որպեսզի նորից մտնի իր ժողովրդի մեջ, ապրի ու տառապի նրա հետ, կռվի ու հաղթանակի նրա հետ… Մեզ ոնց որ թե հաջողվեց Միերին… մեզնով անել, ինչպես տատս կասեր: */Հայտնվում է մի չարք եւ հեռվից հետեւում Աստղիկին. վերջինս նկատում է չարքին, վախեցած, բայց խոսքին վստահություն տալու ձիգով գոչում է/.* Ես գիտեմ՝ դու ով ես… դու… դու չարքն ես… հեռացիր… */Հրացանը ուղղում է նրա վրա/:* Հիմա հրեշտակները կգան ու քեզ բզիկ-բզիկ կզնեն… Կորիր, չարք, ինձ չես վախեցնի քո էդ այլանդակ տեսքով:

ՉԱՐՔ- Դե-դե էդպես մի հոխորտա վրաս… հետո ի՞նչ՝ զինված ես, վախենամ՝ կրակել չգիտես…

ԱՍՏՂԻԿ- Չէ, հիմա կկրակեմ քեզ վրա, կորիր… */Շարժում է անում, իբր պատրաստվում է կրակել/:*

ՉԱՐՔ */մի փոքր մոտենալով/*- Հանգի՜ստ, հանգի՜ստ… Տեսնում եմ՝ քաջ ու հանդուգն աղջիկ ես, բայց միեւնույն է՝ կարգին էլ վախեցար ինձ տեսնելով, թեեւ զինվածը դու ես… Եւ դա բնական է, որովհետեւ ես Չարքն եմ՝ քեզնից ուժեղ ու հնարամիտ… Ես քեզ հաճույքով հիմա կտանեի էնտեղ, ուր որ պետք է… Լավ նվեր կլինեիր մեր չարքապետի համար, նա հրացանով աղջիկ երբեւէ չի տեսել:

ԱՍՏՂԻԿ- Հեռացի՜ր… չմոտենաս ինձ… հիմա հրեշտակները կգան… Քեզ կծվատեն նրանք:

ՉԱՐՔ- Հա, էդպես է… դուք՝ մարդիկդ, չեք կարող կարգին ապրել առանց հրեշտակների, միշտ թաքնվում եք նրանց թիկունքում… Հապա փորձեք ինքնուրույն ապրել էս աշխարհում… կարծում ես՝ հե՞շտ է… Հեռու տար զենքդ, ես քեզ վնաս չեմ պատճառի:

ԱՍՏՂԻԿ */հրացանը իջեցնելով/*- Եթե չարքերը չլինեն, մենք ինքնուրույն կպաշտպանեինք մեզ… Գիտե՞ս՝ որքան չարքեր կան նաեւ մարդ արարածների մեջ… չարքանման մարդիկ… ձեզնից են վարակվել:

ՉԱՐՔ- Խնդիրը դուք եք… պետք չէ ձեր բոլոր դժբախտությունների պատճառները բարդել չարքերի վրա: */Դարձյալ մոտենալով/* Մի վախեցիր, ասացի՝ ես քեզ ձեռք չեմ տա, տեսնու՞մ ես՝ ընդամենը մի փոքր բանավիճում եմ քեզ հետ: Ես հիմա կհեռանամ քեզնից մեծ ափսոսանքով… գիտե՞ս՝ ինչու…

ԱՍՏՂԻԿ- Ինչու՞...

ՉԱՐՔ- Ես հեռվից լսում էի Հրեշտակապետի խոսակցությունը քեզ հետ. նրա ձայնում վճռական, տիրական ու սիրակարոտ երանգներ զգացի...

ԱՍՏՂԻԿ */զարմացած/*- Չարքերը նույնպես զգու՞մ են...

ՉԱՐՔ- Հա, բայց մեր ձեւով՝ չարքավարի... Համ էլ մի ընդհատիր ինձ, թող ասելիքս ավարտեմ... Եթե ես քեզ գերեվարեմ, ձեր էդ Նաիրյան հրեշտակները կհալածեն ինձ ու ցեղակիցներիս, անպայման կբռնեն մեզ ու բզիկ-բզիկ կանեն. նրանք իրոք մեզնից զորեղ են ու նպատակասլաց, եւ գուցե արդարությունը նրանց կողմն է...

ԱՍՏՂԻԿ- Այո, նրանք շատ արդարամիտ ու մարդասեր են:

ՉԱՐՔ- Համամիտ եմ, նրանց վարքում ինչ-որ խոր իմաստ ու խորհուրդ կա, չարքերս խորապես նախանձում ենք նրանց... Մենք անմտորեն վատնում ենք մեր ուժն ու հնարամտությունը: Անկեղծ ասած՝ ոչ մի գեղեցիկ բան չկա մեր արարքներում. միայն հոշոտում, հետապնդում, չարախնդություն, արյունալի խրախճանքներ... կարծես թե էդքանը...

ԱՍՏՂԻԿ- Հիացած եմ քո անկեղծությամբ, Չարք:

ՉԱՐՔ- Էսպիսի պահեր էլ են լինում, ինչ արած: */Դադար/* Երանի ձեզ, գոնե դուք ունեք ձեր հրեշտակներին, իսկ մենք բացարձակ մենակ ենք էս աշխարհում... */Մի պահ ականջ է դնում/:* Դե, ես գնացի... Նաիրյան հրեշտակների թեւաբախումների ձայներն եմ լսում, ուր որ է նրանք կլինեն էստեղ... Հաջողություն քեզ, աղջիկ: Հրեշտակապետին էլ հայտնիր, որ մենք էսօր հեռանալու ենք Մասսյաց վիհից:

ԱՍՏՂԻԿ */տագնապած/*- Իսկ ո՞ր եք գնալու...

ՉԱՐՔ- Դեպի արեւմուտք... Էնտեղ մեզ ավելի ազատ ենք զգում... Հաջողություն քեզ, քաջ աղջիկ: */Չքվում է/:*

ԱՍՏՂԻԿ- Գնաց, փառք Աստծո... Լավ է՝ չարքերը դեպի մեր կողմերը չեն գնում... */Հայտնվում է Հրեշտակապետը մի խումբ հրեշտակների ու Սասունիկի հետ: Սասունիկի ձախ ձեռքը փետուրներով վիրակապված է/:* Եկա՞ն, եկա՞ն մերոնք... հրեշտակնե՞ր... Սասունի՞կ... */Ցնծագին ողջագուրվում է նրանց հետ, ապա մեկեն զգաստանում/.* Իսկ ո՞ր է Արծիվը... Ձեռքդ ինչու՞ է վիրակապված, Սասունիկ...

ՍԱՍՈՒՆԻԿ- Մի փոքր վիրավորվեցի... Բան չկա, Հրեշտակապետը ժամանակին վրա հասավ ու մեզ տիրություն արեց մյուս հրեշտակների հետ... Այ Արծվի բանը մի քիչ լուրջ է:

ԱՍՏՂԻԿ */տագնապած/*- Ի՞նչ է պատահել նրան...

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Երբ նրանք իջնում էին վիհը, բախվեցին մի ժայռի, ընկան... Ասում էի, չէ՞, որ վիհում շատ դժվար է տեղաշարժվելը, հատկապես՝ անծանոթների համար... Արծիվը ջարդել է մի թեւը եւ ոտքը. նա պետք է ապաքինվի, նրան դեռ չի կարելի տեղաշարժվել:

ԱՍՏՂԻԿ- Նա պետք է միայնակ մնա վիհում…

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Ոչ-ոչ, մեր հրեշտակ քույրերից մեկին խնամակալ եմ նշանակել, նա կխնամի Արծվին այնքան ժամանակ, մինչեւ լիովին կվերականգնվի: Հետո նրանք կմիանան մեզ… Մենք Սասունիկի հետ արդեն պայմանավորվել ենք:

ՍԱՍՈՒՆԻԿ- Հա, Աստղիկ, մի անհանգստացիր, ամեն ինչ կարգին է: Հրեշտակներն իրենց անելիքը հիանալի գիտեն. նրանց միայն պետք է վստահել:

ԱՍՏՂԻԿ- Ես լիովին վստահում եմ նրանց: */Հիացմունքով նայում է հրեշտակներին/:* ԻնչքաՆ գեղեցիկ ու գրավիչ են… ՈՆց կարելի է նրանցից հեռու ապրել…

ՍԱՍՈՒՆԻԿ- Լավ, Աստղիկ, դու նրանցով հիանալու դեռ շատ առիթներ ես ունենալու, հիմա պետք շարժվենք:

ԱՍՏՂԻԿ- Ի՞նչ երթուղով ենք շարժվում…

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Նախ, գնում ենք Ագռավաքար՝ Փոքր Միերին վերցնելու…

ՍԱՍՈՒՆԻԿ- …ապա սլանում ենք մեր քաղաք… Էդպես պայմանավորվեցինք, չէ՞… */նայում է Հրեշտակապետին ու հրեշտակներին/:*

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ ԵՎ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ- Այո-այո…

ՍԱՍՈՒՆԻԿ- Դե ուրեմն՝ թռաՆք…

/Հրեշտակապետն ու հրեշտակները Սասունիկին ու Աստղիկին իրենց գրկի մեջ են առնում եւ օդ բարձրանում: Հրեշտակներից մեկն առանձին վերցնում է հրացանը: Աստղիկը հասցնում է օդում Հրեշտակապետին ասել/.

ԱՍՏՂԻԿ- Էդ չարքերը էսօր լքելու են Մասսյաց վիհը… նրանք արեւմուտք են գնում…

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Ճարներն ինչ, ստիպված են… Նրանք անելիք չունեն Մասսյաց տիրույթում:

ԱՍՏՂԻԿ- Իսկ դուք ինչու՞ էիք հեռացել մեզնից…

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Մեր հանդեպ հավատ չկար, մենք ավելորդ զգացինք մեզ… Մինչդեռ հրեշտակներն ու մարդիկ միշտ պետք է լինեն կողք-կողքի. մեզ համար էլ է դժվար առանց մարդկանց…

/Միառժամանակ երեւում են հրեշտակաց երամը, Սասունիկն ու Աստղիկը, ապա բոլորը անհետանում են տեսադաշտից: Հեռվում հրետանային թնդյուններ են լսվում/:

ՊԱՏԿԵՐ Դ

/Սասունիկը հասակակից տղաների հետ խաղահրապարակում ֆուտբոլ է խաղում: Հայտնվում է մայրը եւ հեռվից մի առ պահ դիտում որդու խաղը, ապա կանչում է անհանգիստ ձայնով/.

ՍԱՍՈՒՆԻԿԻ ՄԱՅՐ- Սասունի՜կ, տուն արի… կարող է ռմբակոծություն սկսվել…

/Սասունիկը ընդհատում է խաղը եւ վազում մոր մոտ/:

ՍԱՍՈՒՆԻԿ- Մայրիկ, պատերազմն արդեն ավարտվել է, մոռացե՞լ ես… ռմբակոծություն չի լինի:

ՍԱՍՈՒՆԻԿԻ ՄԱՅՐ- Ա՜խ, տղաս, ներիր, մոռացել եմ… Բայց կարո՞ղ է, չէ՞, նորից ռմբակոծություն սկսվել…

ՍԱՍՈՒՆԻԿ- Չէ, մայրիկ, չի սկսվի, մի անհանգստացիր, գնա տուն:

/Լսվում է խաղահրապարակի տղաներից մեկի կանչը/.

ՏՂԱ1- Սասունի՜կ, շուտ արի, Սասունիկ… Խաղը պիտի ավարտենք:

ՏՂԱ2- Դե արի՜… Էլի մամայի բալա՞ դարձար…

ՍԱՍՈՒՆԻԿ */արձագանքելով կանչողներին/*- Դե ձեններդ կտրեք, սպասեք… */Դառնալով մորը/.* Գնա, մայրիկ, քիչ հետո կգամ:

ՍԱՍՈՒՆԻԿԻ ՄԱՅՐ */շոյում է որդու գլուխը/*- Ա՜խ, որդիս… ո՞նց կհպարտանար հայրդ քեզնով… Դե լավ, մի քիչ խաղա, արի տուն, դեռ դասերդ պիտի պարապես:

ՍԱՍՈՒՆԻԿ- Լավ, մայրիկ, մի երկու գոլ էլ խփեմ ու գամ:

ՍԱՍՈՒՆԻԿԻ ՄԱՅՐ- Լավ, սպասում եմ: */Գնում է/:*

/Սասունիկը վերադառնում է խաղահրապարակ ու շարունակում խաղը: Հանկարծ նկատում է քիչ հեռվում կանգնած Հրեշտակապետին. վազելով մոտենում է նրան/:

ՍԱՍՈՒՆԻԿ- Բարե՜ւ, սիրելի Հրեշտակապետ… */Գրկախառնվում է նրա հետ/:* Եկել ես նայես՝ ո՞նց եմ ֆուտբոլ խաղում…

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Լավ ես խաղում… բայց հայտնվելուս նպատակն այն է, որ քեզ հրաժեշտ տանք… */Եմքով ցույց է տալիս հեռվում աննկատ խմբված հրեշտակներին/:*

ՍԱՍՈՒՆԻԿ- Հրաժե՞շտ… վերադառնում եք Մասսյաց վի՞հ… Դուք հիասթափվե՞լ եք մեզնից…

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ */ծիծաղելով/*- Դե չէ, հակառակը, ոգեշնչված ենք ձեր տոկունությամբ ու խիզախությամբ…

ՍԱՍՈՒՆԻԿ- Էդ դեպքում ի՞նչ հրաժեշտ, ինչու՞…

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Դե, մնաս բարով չէ, պարզապես քեզ ցտեսություն ասելու ենք եկել… Փոքր Միհրը Արծվի միջոցով լուր է ուղարկել, որ մեր

արեւելյան սահմաններում այնքան էլ հանգիստ չէ, թեեւ պատերազմն ավարտվել է: Գնում ենք այդ գոտու առաջին գծում ու սահմանամերձ բնակավայրերում հերթապահելու… Նորից կվերադառնանք, մի մտածիր: Մենք ուխտ ենք կապել, չէ՞, որ ձեր քաղաքը հավիտյանս կլինի մեր պահպանության տակ:

ՍԱՍՈՒՆԻԿ */ոգեւորված/*- Այո…

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Հիմա այստեղ խաղաղ է, վտանգավոր ոչինչ չկա… Դե գիտես՝ հրեշտակների մեր խումբն այնքան էլ մեծ չէ, որ ամենուր ու միաժամանակ կարողանանք հսկել ողջ Հայոց երկիրը…

ՍԱՍՈՒՆԻԿ- Հասկանում եմ… ամեն ինչ ճիշտ եք անում, սիրելի Հրեշտակապետ… Բարի ճանապարհ եւ շուտափույթ բարի վերադարձ…

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Այո-այո… Դու էլ քեզ լավ պահիր, մորդ խնամքիդ տակ առ, նա դեռ սրտով շատ կոտրված է: */Դադար/* Ներիր, Սասունիկ, որ չկարողացանք հորդ մշտապես մեր պահպանության տակ պահել… Գիտես՝ մեր ուժերը բավարար չեն նման անդադար հսկողության համար:

ՍԱՍՈՒՆԻԿ- Գիտեմ, մտքովս անգամ չի անցնում՝ ձեզ մեղադրել: Լրիվ հակառակը՝ մենք ձեզ շատ երախտապարտ ենք. ինչ եկաք մեր քաղաք, այդուհետ՝ պատերազմի ընթացքում էստեղ ոչ մի խաղաղ բնակիչ ու երեխա չզոհվեց…

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Բայց մարտադաշտում շատ գործ անել չհասցրինք…

ԽԱՍՈՒՆԻԿ- Ինչ որ հասցրել եք, դա էլ քիչ չէ, Հրեշտակապետ. չլինեիք դուք՝ զոհեր ավելի շատ կլինեին մեր զինվորականների շրջանում…

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Շնորհակալ ենք քո հասկացողության համար, Սասունիկ… Դե, մենք գնանք… Հա, չմոռանամ ասել, որ հայրդ հոյակապ գնդացրորդ էր, Փոքր Միհրին էլ սովորեցրեց իր ռազմական արհեստը… Մեր մարտիկները շատ էին ոգեւորված Միհրի ներկայությամբ:

ՍԱՍՈՒՆԻԿ- Հա, գիտեմ… Փոքր Միհրն էլ հորս սովորեցրել է նետ ու աղեղ, նիզակ բանեցնել, նաեւ՝ կռվել սրով: */Ծիծաղում է/* Իսկ Արծիվն ո՞ր է…

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Նա էլ է գալիս մեզ հետ… Ահա եւ նա, նույնպես եկել է քեզ ցտեսություն ասելու… */Հայտնվում է Արծիվը/:*

ԱՐԾԻՎ- Ողջույն, Սասունիկ եւ… ցտեսություն. կարծում եմ՝ Հրեշտակապետը բոլոր անհրաժեշտ խոսքերը քեզ ասել է: */Ողջագուրվում է Սասունիկի հետ/:*

ՍԱՍՈՒՆԻԿ- Հա, Արծիվ եղբայր… Գնաս բարով, քեզ լավ պահիր… */ժպտալով/* ժայռերին չզարկվես… Եթե պետք լինի, կանչեք ինձ, սիրով ու անմիջապես կմիանամ ձեզ:

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ- Դրա կարիքը չի լինի, դու քո գործերով ու խաղերով զբաղվիր… Ցտեսություն:

/Սասունիկը գրկախառնվում է հրեշտակների ու Արծվի հետ, սրբում աչքերում առաջացած արցունքները եւ ձեռքը թափահարելով՝ նրանց բարի երթ է մաղթում: Հրեշտակներն ու Արծիվը օդ են բարձրանում/:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐ- Ցտեսություն, Սասունիկ…

ՍԱՍՈՒՆԻԿ- Ցտեսություն… իմ սիրելի Նաիրյան հրեշտակներ… Ցտեսություն…

/Երբ նրանք անհետանում են տեսադաշտից, մեր հերոսը կրկին վերադառնում է խաղադաշտ ու տրվում խաղին: Լսվում է ծիծեռնակների աշխույժ ճռվողյունը/:

ՎԵՐՋ

փետրվար, 2019

ՏԻՐԱՆ. ՈՍԿԵԲԵՐԱՆ ԱՅՐԸ

/պատմագեղարվեստական դրամա 5 արարով/

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

Տիրան՝ թատերգակ
Տրդատ Ա՝ հայոց արքա
Արքունապետ
Հազարապետ
Սենեկապետ
Քրմապետ
Արքունի քուրմ
Հանդերձապետ
Ներքինի
Բանբեր
Դերասաններ
Պարերգակներ
Նախարարներ եւ պալատականներ
Պահնորդներ
Սպասավորներ եւ մատուվակներ

Գործողությունները տեղի են ունենում մ.թ. առաջին դարի 60-ական թվականներին, Մեծ Հայքի Արտաշատ մայրաքաղաքում եւ Տուրուբերան ամրոցում:

ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ

/Արքունի պալատի սրահ: Տրդատ Ա-ն արքունապետի եւ ներքինու հետ ըմբոշխնում է պարերգակ կանանց ելույթը: Մուտքի մոտ կանգնած են զինակիր երկու պահնորդ, քիչ հեռու հերթապահում են երկու սպասավոր, որոնք ստեպ-ստեպ գինի են մատուցում արքային ու արքունապետին: Տրդատ Ա-ն շուտով ձանձրանում է միապաղաղ մերկապարից ու երգից/:

Տրդատ Ա- Վերջ, վերջ, այլեւս չեմ ուզում, թող հեռանան ձեր պարերգակները... Նրանք ինձ ավելի շատ ձանձրացնում են, քան կրակ բորբոքում իմ մեջ... Մի՞թե ձեզ մոտ մի այլ հետաքրքիր բան չկա, որ ցուցադրեք ինձ... Գրեթե այս նույնը տեսնում էի մեր պարթեւական պալատներում:

Ներքինի- Ձերդ վսեմություն, իմ արքա, կանանոցում ամենաշնորհալիները սրանք են... Թերեւս կարելի է նոր պարեր ու երգեր հորինել եւ ի ցույց հանել, բայց ժամանակ է պետք եւ... */Դադար/*

Տրդատ Ա- Եւ ի՞նչ...

Ներքինի- Մեկը, որ կհորինի նոր երգեր ու պարեր:

Տրդատ Ա- Ուրեմն չկա՞ այդպիսի բանիմաց մեկը ողջ Հայքում...

Արքունապետ- Անշուշտ, կան. ձերդ պայծառափայլություն, նման շնորհաշատ ստեղծարարներ կան Հայոց աշխարհի գրեթե բոլոր գավառներում... Նրանցից ամենաարժանավորներին ու անվանիներին շուտով կկանչենք Արտաշատ, եւ նրանք հատուկ ձեր պատվին նոր ելույթներ կպատրաստեն պարերգակների հետ: */Պարերգակներին նշան է անում, որ հեռանան. նրանք լքում են բեմը: Ներքինին եւս, խոնարհվելով արքայի առաջ՝ հեռանում է/:*

Տրդատ Ա- Իսկ Արտաշատում այս պահին նման արվեստավորներ չկա՞ն, արքունապետ Միհրան...

Արքունապետ- Մի քանի տարի առաջ, արքա, երբ հռովմեացիները հիմնահատակ ավիրեցին Արտաշատը, մեր բազմաշնորհ աստված Տիրի սպասավորները ցրվեցին հայոց տարբեր քաղաքներ կամ պանդխտեցին այլ երկրներ՝ այնտեղ իրենց շնորհքի համար ասպարեզ գտնելու հույսով... Հիմա, երբ կրկին խաղաղություն է տիրում, նրանք, համոզված եմ, շուտով ուրախությամբ կվերադառնան մեր սքանչելի քաղաք:

Տրդատ Ա- Իմաց արեք ձեր արվեստարարներին, որ շտապեն վերադառնալ. Արտաշատը շուտով կվերակառուցվի եւ կդառնա ավելի գեղեցիկ

ու բարեկեցիկ քաղաք բոլոր բնակիչների համար… այդ թվում՝ ստեղծարարների համար:

Արքունապետ- Թող հայոց վեհաշուք աստվածները հովանի լինեն ձեր բարի ծրագրերի ու մտադրությունների իրականացման գործում, մեր արքա. ժողովուրդը կհավատա, կհարգի ու կպաշպանի շինարար արքային:

Տրդատ Ա- Ես կձգտեմ լինել այդպիսին. փափագս է, որ Արշակունիների անունը հայերի մեջ վերածվի վեհության ու բարեգործության խորհրդանիշի: Ես առաջին Արշակունի արքան եմ Հայաստանում, եւ նպատակս է՝ ամրապնդել մեր գերդաստանն այստեղ՝ որպես հայոց երկրի լիիրավ տիրակալ եւ նրա… հարազատ գերդաստաններից մեկը: Իմ քաղաքական ու տնտեսական ծրագրերի մասին ես առաջիկայում կխոսեմ արքունի խորհրդում, կարծում եմ՝ նախարարները կպաշտպանեն ինձ:

Արքունապետ- Կասկած մի ունեցեք, արքա, մեր ավագանին հեռատես է, կպաշտպանի ձեզ:

Տրդատ Ա- Բարի… այդ դեպքում, արքունապետ Միհրան, շարունակենք մեր օգտակար զրույցը հայ արվեստավորների մասին, ես դա կարեւոր հարց եմ համարում: Պարթեւները, գիտես, նույնպես գիր ու արվեստ են սիրում, եւ ես, ժառանգական իմ ձիրքով պիտի հետեւեմ, թե իմ թագավորած երկրում ինչպես պետք է զարգանա հայերի մշակույթը… Հուսով եմ, որ այն ինձ համար շուտով հոգեհարազատ կդառնա: Եթե պետք լինի՝ Պարթեւստանի թագավոր եղբորս կխնդրեմ աջակցել մեզ այս հարցում: */Դադար/* Եվ այսպես, արքունապետ, հնարավո՞ր եք համարում առաջիկայում մեզ նոր, ոգեշնչող… հոգեհաճ երգուպար հրամցնելը… Այդպես մենք կդատենք նաեւ, թե ինչ ստեղծարար ներուժ կա այստեղ…

Արքունապետ- Անշուշտ, արքա, շուտով դուք նոր… բարձրարվեստ երգ ու պարի ակնդիրն ու ունկնդիրը կլինեք, դուք անպայման զմայլվելու եք այդ նոր ելույթներից… Բայց, միաժամանակ, տեր իմ, ես կուզենայի ձեզ այլ բան եւս առաջարկել, նախեւառաջ, որպես նորություն ձեր ժամանցի եւ հոգեմտավոր ճանաչողության համար…

Տրդատ Ա- Եվ ի՞նչ նորություն է դա…

Արքունապետ- Թատրոն… բեմական ներկայացում…

Տրդատ Ա- Այո, գիտեմ՝ ինչ է դա. ժամանակին հունաց եւ հռովմեացոց կողմերում առիթ եմ ունեցել դիտելու մեկ-երկու թատերական ներկայացում. Հայաստանում, ուրեմն, նույնպե՞ս կա թատրոն…

Արքունապետ- Այո, արքա, եւ հին ավանդույթներ ունի հայոց թատրոնը… Դեռ հարյուր տարի առաջ, Արտավազդ երկրորդ թագավորի օրոք, Տիգրանակերտում, ուր քաղաքային մեծ թատրոն էր գործում, հայ թատերգակները բեմադրել են հույն նշանավոր ողբերգակների թատերգություններից… օրինակ՝ Եվրիպիդեսի «Բաքոսուհիները»… Ավելին. Արտավազդ ար-

քան ինքը թատերգություններ էր գրում, բեմադրվում էին նաեւ դրանք այստեղ՝ Արտաշատում:

Տրդատ Ա- Արտաշատում կա՞ր քաղաքային թատրոն…

Արքունապետ- Ցավոք, ոչ, արքա… այստեղ՝ արքայական պալատում էին խաղում դերասանները: Հա, մի տեսակ պալատական-ազնվականական թատերախումբ էր գործում այստեղ… Ուզում եմ հուսալ, մեր արքա, որ ձեր օրոք Արտաշատում կկառուցվի քաղաքային բացօթյա թատրոն… բոլոր բնակիչների եւ հյուրերի համար:

Տրդատ Ա- Տեսնե՞նք, տեսնենք… այնքա՞ն բան կա կառուցելու եւ վերակառուցելու, չգիտես՝ որտեղից սկսես: */Դադար/* Ձերոնք այստեղ՝ պալատում ի՞նչ լեզվով են խաղացել թատրոնը… հայերե՞ն…

Արքունապետ- Ոչ, արքա… ոչ… Բնագրի լեզվով՝ հունարեն կամ հռովմեացոց լեզվով են խաղացել… Այդ ժամանակներում դեռ թատերգությունների թարգմանությունների ավանդույթը չէր սկզբնավորվել. այ հիմա ուրիշ բան… Հիմա մերոնք նաեւ հայերեն են խաղում, նաեւ սեփական ստեղծագործություններն են ի ցույց հանում արհեստավարժ թատերգակները: Նրանք երբեմն շատ համարձակ գործեր են բեմ հանում. ոչ միայն հունական անշառ ողբերգություններ ու կատակերգություններ, այլեւ՝ քաղաքական սատիրայի ոգով գրված թատերկեր են մատուցում… Եվ նրանց մեջ ամենահմուտը եւ ամենաշնորհալին Տիրա՞նն է… Ոսկեբերան մո՜գը… Նրան այդպես են կոչում իր կախարդիչ արվեստի համար: Նրա թատերախաղում մի ձգողական մոգություն կա… Իրոք, մեծ թատերգու է Տիրանը. ես տեսել եմ նրա առինքնող խաղը, լսել նրա դյութիչ խոսքը… Հրաշալի ձայն ունի եւ գեղեցիկ կերպարանք. իսկը ստեղծված է բեմի համար:

Տրդատ Ա- Տիրա՞ն… Անգամ՝ Ոսկեբերա՞ն… Նրա մասին ինձ դեռ ոչ ոք ոչինչ չի ասել:

Արքունապետ- Վերջին տարիները, արքա, խառնակ էին, գիտեք. պատերազմ, ավերմունք… ո՞վ կմտաբերեր Տիրանին ու նրա խաղընկերներին այդպիսի ժամանակներում… Լսել եմ, որ նա հիմա Տիգրանակերտում է, փորձում է այնտեղ վերականգնել վաղեմի թատրոնը:

Տրդատ Ա- Ուրեմն՝ ժամանակն է՝ նրան հրավիրենք այստեղ եւ հրահանգենք, որ նա թատրոնը վերածնի Արտաշատում… ավելի մեծ թափով ու արվեստով: Ի վերջո, մայրաքաղաքն Արտաշատն է… լավագույն բանները հարկ է սկսել այստեղից:

Արքունապետ- Այո, Ձերդ մեծություն, դուք շատ իմաստուն գաղափար եք վեր հանում: Ես առաջիկա օրերին Տիրան Ոսկեբերանին կկանչեմ այստեղ եւ կհրահանգեմ, որ նա, նախ, մի ուշագրավ ներկայացում պատրաստի ի պատիվ ձեզ, արքա:

Տրդատ Ա- Դու գիտես, արքունապետ, որ ես հաջորդ ամիս պետք է

մեկնեմ Հռովմ՝ Ներոն կայսրից թագս ետ ստանալու համար: Նրանց հետ կնքած պայմանագրով ես պետք է պաշտոնապես Հայոց արքա օծվեմ Հռովմի ձեռամբ... այս է հիմա կարգը, ի՞նչ արած... ես հիմա էլ արքա եմ, թագ ու գահ ունեմ՝ տեսնում ես, բայց քաղաքական պատշաճությունը հաճախ պահանջում է անել բաներ, որ բնավ քո սրտով չեն: */Դադար/* ես մտադիր եմ Ներոն կայսրին հրավիրել Արտաշատ... Մեծ տոնակատարություն կանենք նրա պատվին. քաղաքական պատշաճություն է... ի՞նչ արած... Այնպես որ՝ ձեր այդ թատերգու Տիրանին իմ անունից պատվիրիր, որպեսզի մի հոյակապ ներկայացում պատրաստի, որն արժանի լինի եւ իմ, եւ Ներոն կայսեր աչքին ու մտքին... Կայսեր գալստյանը կխաղան: Իսկ եթե Ներոնը չժամանի... ոչինչ... նրանք կխաղան արքունիքի եւ մեր քաղաքացիների համար: Լավ վարձատրություն եմ խոստանում Տիրանին եւ նրա թատերախմբին. ոսկով:

Արքունապետ- Հրամանդ, մեր արքա. սիրով եւ ուրախությամբ հանձն կառնեմ այդ գործի բարեհաջող կատարման վերահսկողությունը: Ես թատրոն շատ եմ սիրում:

/Փութաջան ներս է մտնում ներքինին/:

Ներքինի */ծնկալից տոնով/*- Ներող եղեք, իմ արքա, պիտի հայտնեմ նորություններ...

Տրդատ Ա- Ի՞նչ նորություն, ներքինի...

Ներքինի- Կանանոցում մի աղջիկ հայտնաբերեցի... նա հետաքրքիր ձիրքի տեր է, կարող է ձեզ լավ զվարճացնել...

Տրդատ Ա- Ի՞նչ ձիրք ունի...

Ներքինի- Նա ծաղրանմանակում է երեւելի մարդկանց... Այնպես զվարճալի է դա անում:

Տրդատ Ա */զայրագին նայելով ներքինուն/*- Կորիր աչքիցս, տխմար, իմ գործն այստեղ միայն զվարճանալը չէ: */Ներքինին վախեցած դուրս է ճապարում: Դառնալով արքունապետին/.* Ասաց՝ ծաղրանմանակու՞մ է այդ աղջիկը... Հավանաբար նրա հերոսներից մեկն էլ ես լինեմ ապագայում, այո՞... կամ գուցե արդեն ծաղրանմանակում է ինձ...

Արքունապետ- Չարժե մտահոգվել, արքա, մենք նման հանդգնություն թույլ չենք տա ինչ-որ աղջկա... հարեմից...

Տրդատ Ա- Ընդամենը կախաղան կհանենք կամ կգլխատենք նրան, չէ՞... Բայց մարդիկ ընդմիշտ կմտապահեն ու կհիշատակեն արվեստալից ծաղրը: */Մտախոհ նայում է արքունապետին, ապա՝ անորոշ հեռուն/:* Նայիր, որ այդ Ոսկեբերան կոչվածը կարգին թատրոն մատուցի մեզ, հակառակ դեպքում նրա հետ կպաժվես եւ դու, արքունապետ Միհրան:

Արքունապետ- Հրամանդ, արքա: */Խոնարհում է գլուխը Տրդատ Ա-ի առջեւ/:*

ԱՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ

/Արքունիքի սրահներից մեկը, որտեղ արքունապետը խորհրդակցում է արքունի քուրմի ու հանդերձապետի հետ/:

Արքունապետ- Կարծես թե մենք ըստ էության խոսեցինք մեզ հետաքրքրող խնդիրների շուրջ... Դուք ունե՞ք հարցեր...

Արքունի քուրմ- Ոչ, տիար...

Հանդերձապետ- Ոչ, արքունապետ...

Արքունապետ- Այսպիսով ամփոփենք մեր հավաքը. մեկ անգամ եւս լսեք իմ խնդրանքն ու հանձնարարականը... Պատվելի արքունի քուրմ, դուք ընձեռված առիթներով արքա Տրդատին պարզաբանեք մեր հավատքի առանձնահատկությունները, պատմեք մեր աստվածների մասին:

Արքունի քուրմ- Բարի, արքունապետ: Ես նրան կպատմեմ նաեւ հայոց պատմության հիշարժան ու կարեւոր դրվագների մասին:

Արքունապետ- Երախտապարտ կլինենք ձեզ, արքունի քուրմ, շարունակեք այդ ոգով, խնդրում եմ:

Արքունի քուրմ- Պետք չէ խնդրել, արքունապետ Միհրան, ես իմ պարտքն եմ կատարում:

Արքունապետ- Շնորհակալ եմ... Իսկ դու, հանդերձապետ, նոր հագուստներ կարիր արքայի համար... հայկական ոճով: Կարո՞ղ ես...

Հանդերձապետ- Իհարկե, արգո արքունապետ: Ես այնպիսի հանդերձներ կկարեմ արքայի համար, որ նա բնավ չտարբերվի Արտաշեսյան արքաներից:

Արքունապետ- Թող լինի նաեւ մի քիչ յուրահատուկ:

Հանդերձապետ- Ես նորաոճ տարրեր կմտցնեմ:

Արքունապետ- Ապրես:

/Շտապ ներս է մտնում բանբերը եւ զեկուցում/.

Բանբեր- Ներեցեք, արգո արքունապետ, մուտքի մոտ անհամբերությունից աղմուկ է բարձրացնում, ուզում է ներս մտնել...

Արքունապետ- Ո՞վ է այդ անհամբերն ու անկարգը...

Բանբեր- Տիրան թատերգակը... Ձեր հրահանգով ես նրան բերել եմ, նա պալատում է... արդեն կես ժամ...

Արքունապետ */ուրախացած/*- Տիրանն այստե՞ղ է արդեն... */Արքունի քուրմին եւ հանդերձապետին/* Տիարք, դուք ազատ եք: */Ճապարում է դեպի մուտքը: Նրան հետեւում են արքունի քուրմը, հանդերձապետը եւ բանբերը. վերջիններս հեռանում են: Արքունապետը տեսնում է մուտքի մոտ ան-*

համբերությունից պտույտ եկող Տիրանին եւ զվարթագին կոչում/. Մ, մեծարգո թատերգու, ուրախ եմ վերջապես ձեզ տեսնելու համար: Համեցեք ներս: */Թեւանցուկ է անում եւ ներս տանում Տիրանին/:*

Տիրան */դժգոհ տոնով/*- Ես շատ սպասեցի ձեր դռան մոտ...

Արքունապետ */մտերմական տոնով/*- Ներող եղիր, թատերգու... Նոր արքա ունենք... գործերը սովորականից շատ են... Բայց տեսար, չէ՞, թե ես ինչ փութաջանությամբ ելա քեզ ընդառաջ... Դա հազվադեպ է պատահում, որ դիմավորեմ ինձ մոտ կանչվածներին. իմ արարքը կարող ես համարել հարգանք ու սեր առ քո մեծությունը:

Տիրան- Իսկ գուցե ես դա համարեմ սիրաշահելու կամ... քծնանքի դժվար քողարկված քա՞յլ... Իմ սիրտը ահա շահե՞լ են ուզում մեծավոր մարդիկ... շողոքորթությամբ, ծածուկ քծնանքով... */Այստեղ եւ այդուհետ թատերգուի շարժուձեւը հաճախ արտիստիկ ոճով է դրսեւորվում, իսկ խոսքն երբեմն արտահայտվում է չափածո ռիթմով/:*

Արքունապետ- Օ ոչ, Տիրան, ես ինչու՞ պիտի քծնեմ քեզ, դու իմ իշխանն ու արքան չես: Ես ի սրտե հարգալից ու... ակնածալից եմ քո հանդեպ. այդքանը:

Տիրան- Լավ, համարեք, որ սիրտս մի փոքր շոյված է ձեր խոսքերից, արգո արքունապետ... Բայց իմացած եղեք, որ նախկինում կային ժամանակներ, երբ արքաններն իրենք սիրաշահել են թատերգակներին, ասացողներին ու երգիչներին... Ճիշտ է՝ հայոց երկրում նման դեպք կարծես թե չի հիշատակվում, բայց այ հունաց ու հռովմեացոց կողմերում թագավորներն ու իշխանազունք հաճախ էին հոտնկայս խմում թատերգուների կենացը եւ նրանց խնդրում... չէ՝ թախանձում՝ պատվել իրենց ինչ-որ թատերախաղով... Կամ խնայել... չերգիծել իրենց... Այո, արքունապետ, սեր ու վախ կար թատրոնի հանդեպ, մենք մի ա՜յլ կարգի արքաներ էինք... բեմերի վրա, մարդկանց սրտերում: Մենք իշխո՜ւմ էինք թագավորների ու մարդկանց վրա:

Արքունապետ- Գուցե՞ ժամանակն է, որ այդ սերն ու վախը սերմանվեն նաեւ հայոց երկրում՝ հանդեպ թատրոնն ու նրա երեւելիները...

Տիրան- Թող մեծն Արամազդը իր աստվածային ողջ շքախմբով լսի ձեր խոսքը եւ սատարի, որ այն իրականություն դառնա... Սակայն, արգո արքունապետ, ասեք վերջապես, թե ինչու եք ինձ կանչել արքունիք... Ճիշտ է՝ ձեր բանբերն ինձ մշուշոտ ինչ-որ հաճելի անակնկալի մասին էր ակնարկում, բայց ես գիտեմ, որ արքունիքներում հաճախ են մտափոխվում... Ինչ-որ զանցանքի համար պատի՞ժ պիտի կրեմ, թե՞ ինձ համար ընծաներ եք պատրաստել տիգրանակերտյան իմ բուռն գործունեության համար... Ես այն հոգի՞ն չեմ, որ արքունիքի աչքից վրիպեմ... Ո՞վ է ինձ փորձում թիրախ դարձնել...

Արքունապետ- Անկեղծ ասած, թատերգու, պատիժ կլինի, թե շռայլ նվիրատվություն… դա մեծապես կախված է քեզնից… */Խորհրդավոր հայացքով նայում է Տիրանին/:* Այսպիսով, Տիրան, պիտի հայտնեմ քեզ, որ Տրդատ արքան կամենում է, որ դու մի հիանալի թատերական ներկայացում պատրաստես… ի պատիվ իրեն եւ Հռովմի Ներոն կայսեր… Հնարավոր է՝ մոտ ապագայում Ներոն կայսրը ժամանի Արտաշատ. մեր արքան կամենում է գեղեցիկ ու բովանդակալից տոնակատարությամբ նշել կայսեր գալուստը… Դե, ի՞նչ կասես, կարո՞ղ ես մի հիանալի գործ բեմադրել առաջիկա ամիսներին… Արքան լավ վարձք է խոստացել քո գործի համար… ոսկով… Կարծում եմ՝ քսակը բավական ծանր կլինի:

Տիրան- Արքան ցանկանում է քծնել ու հաճոյանա՞լ Ներոնին… եւ դա՝ իմ միջոցո՞վ… Օ, ինչպիսի՜ գործիք ես պիտի դառնամ մեծերի ձեռքին… */Վճռական/* ես ասում եմ՝ ոչ: Ես այդ Ներոնի թիկունքը երբեք չեմ շոյի իմ այս մաքուր ձեռքերով: Ես երբեք, երբեք չեմ դառնա պարթեւ Տրդատի շողոքորթության շողուն գործիքը:

Արքունապետ- Կամա՜ց, Տիրան, այդպես պետք չէ արտահայտվել… */Նայում է շուրջը/:* Մի շտապիր մերժել արքային. դու երեւի կռահում ես, թե նման արարքը ինչով է հղի…

Տիրան- Իհարկե, կռահում եմ, ինձ մի լավ զնդան է սպասում կամ… մի լավ կառափնարան…

Արքունապետ- Ապրես, ուրեմն մենք պետք է ամեն ինչ անենք, որ Տիրան Ոսկեբերանին ազատենք այդ չար բախտից… Դու Մեծ Հայքին շատ ես պետք, Տիրան, քո թատերախաղերը մեծ հույս ու լավատեսություն են ներշնչում մեր ժողովրդին:

Տիրան- Իրո՞ք… Այդ դեպքում ինչու՞ արքունիքը կամ իշխանաց տները մի փոքր հոգ չեն տանում ինձ ու իմ թատերախմբին… Մինչ օրս ես ու ընկերներս նույնիսկ մի համեստ կացարան ու փորձավայր չունենք… Մենք թափառական կյանք ենք վարում, մենք հիմնականում անհատույց ենք մեր ներկայացումները հրամցնում մեր հայրենակիցներին… Տիգրանակերտի ավերված թատրոնի բեմահարթակին… մյուս քաղաքների հրապարակներում… մարդաշատ վայրերում, բացօթյա, ցրտին թե շոգին… Սոսկ ինչ-որ մանր մետաղադրամներ են նետում մեզ… Տեսնո՞ւմ եք, արքունապետ, թե ինչ համեստ, ասեմ՝ աղքատիկ հագուկապ ունեմ վրաս… Սա դեռ իմ լավագույն հանդերձն է: Իսկ հույն թատերգակները իշխանավարի էին ապրում… հիմա էլ… Բայց խոսքս բողոք ու գանգատ չհամարեք, արքունապետ. ես բողոքական չեմ, ես իմ հայրենական ապահով դաստակերտը, իմ անզուգական Գողթն հայրենիքը թողել եմ, որ ծառայեմ Տիր աստծուն. սա իմ աստվածահաճո եւ հայահաճո ճակատագիրն է… Ես Ոսկեբերանն եմ՝

ձեր ներքին ձայնը, ձեր անկեղծ ճիչը, եւ ձեր կարոտը, ձեր երազանքը… հոգու խայտաՆքը…

Արքունապետ- Այո-այո, Տիրան, ճշմարիտ ես ասում: Իսկը ժամանակն է, որ դու լավ վերաբերմունքի արժանանաս: Հիմա հիանալի հնարավորություն ունես՝ մի փայլուն ներկայացմամբ շահել արքայի… արքունիքի համակրանքն ու աջակցությունը: Դու կարող ես ձեռքբերել այդ ցանկալի վիճակը: Միայն մի փայլուն ներկայացում, Տիրան…

Տիրան */մտածում է/*- Մի պայմանով, արքունապետ. ներկայացման թեման եւ նյութը ես պիտի ընտրեմ:

Արքունապետ- Օրինակ, ի՞նչ կարող ես առաջարկել…

Տիրան- Օրինակ, կուզենայի ներկայացնել իմ ասք-դրաման՝ նվիրված արքայից-արքա Տիգրան Մեծին. թող պարթեւ Տրդատ թագավորը եւ հռովմեացի Ներոն կայսրը քաջ իմանան, որ Մեծ Հայքը եղել է հզոր երկիր եւ ունեցել է Տիգրանի պես անգերազանցելի արքա: Թող իմանան, որ այդ վեհատեսիլ հիշողությունը խթանում է մեզ՝ հայերիս՝ ապրել ու մաքառել Հայոց աշխարհը վերստին հզոր, անկախ ու ազատ երկիր վերածելու անմարելի հույսով… Թող քաջ իմանան օտար տիրակալները, որ մենք խեղճ ու անզոր ժողովուրդ չենք, թող իրենց ականջներին օղ անեն, որ մեզ երկար չեն իշխի օտար բռնակալները… Կգա՜ նորից մեր հայ արքաների ժամանակը:

Արքունապետ- Տիրա՜Ն, Տիրա՜Ն Ոսկեբերան… Որքա՜Ն երազանք ու հայկական ոգի կա քո մեջ. խանդավառում ես բոլորիս, նաեւ՝ հայ նախարարներիս, երբ թվում է, թե նրանք հիմա մտահոգված են լոկ իրենց դիրքն ու ամրոց-կալվածքները պահպանելու խնդրով… Նախարարներիցս շատ-շատերը նույն ցավն ու երազանքն ունենք, ինչ դու, Ոսկեբերան Տիրան… Բայց պիտի հիշել, որ գոյությունի ունի, ցավոք, քաղաքական նպատակահարմարություն կոչվածը. այն պետք ծառայեցնել ի օգուտ մեր երկրի ու նրա քաղաքացիների… Եթե մենք հիմա դուրս գանք բեմ եւ Տիգրան Մեծի գովքն անենք, մեր դեմ կկատաղեցնենք մեր ներկայիս արքային ու Ներոն կայսրին, նրանք մեզ ըմբոստ, ապստամբ ու անհավատարիմ կհայտարարեն եւ ցից կհանեն… Այդ հեռանկարից պետք է խույս տալ, Տիրան, հարկ է ավելի սթափ ու հեռատես լինել:

Տիրան- Հարմարվենք օտար արքաներին ու վերջնականապես ճզմվե՞նք նրանց արնատենչ ճիրանների տակ… Կտրե՞նք մեր շիտակ լեզուները… ա՞յդ եք ուզում ասել, արքունապետ…

Արքունապետ- Ոչ-ոչ, Տիրան, ասածս այդ իմաստը չունի, միտքս հետեւյալն է. հարկ է խոհեմաբար գործել այնպես, որ դրսեկ… օտար արքաները… մտնեն մեր հայկական ծիրի մեջ… հայանան, դառնան յուրային, քանի դեռ չենք կարող բնիկ հայ արքա ունենալ: Իսկ ընդվզելու համար միշտ

էլ առիթներ կլինեն… Վստահեցնում եմ, որ հիմա դրա առիթը չկա:

Տիրան- Դուք, արքունապետ, կարծում եք, որ պարթեւ Արշակունի Տրդատին կարելի է հայացնե՞լ… Ախր նա զտարյուն պարթեւ է… Արյունը ինչպե՞ս կփոխես…

Արքունապետ- Ես հավատում եմ, Տիրան, որ մեր հայ հոգին, ոգին, հավատքը, լեզուն, մշակույթը… մեր զարմն այնքան ազդու եւ գրավիչ են, որ կարող են Արշակունիներին հայացնել ի վերջո… անշուշտ, ոչ մի տարվա մեջ կամ՝ մի արքայի օրոք… Ես երկար ու դժվարին ճանապարհ եմ առաջարկում, բայց՝ հուսալի ու արդասավոր… Հավատա խոսքերիս, Տիրան, հավատա փորձառությանս:

Տիրան- Ձեր ներքին ձայնը դա՞ է ասում…

Արքունապետ- Այո… հաստատապես:

Տիրան */մտածում է/*- Լավ, արքունապետ, ասենք՝ հասկացա ձեր միտքը, թեպետ շա՜տ առարկություններ ունեմ… Եթե իսկապես մեր հոգեւոր ներուժը ցուցանելու հարկ կա, ապա կարող ենք ներկայացնել հունական դասական ողբերգություններից մեկը կամ… հռովմեական քաղաքական սատիրայի մի նմուշ…

Արքունապետ- Արդո եւ սիրելի Տիրան, արի կանգ առնենք հունական որեւէ դրամայի վրա. անշառ նյութ է, եղբայր, ոչ ոք չի կարող ձեզ կամ մեզ մեղադրել կանխակալ ու միտումնավոր ընտրության մեջ:

Տիրան */մտածում է/*- Լավ, համաձայն եմ… Կներկայացնենք Սոֆոկլեսի թատերկերից մեկը, հատկապես, որ այդ ողբերգակից մինչ օրս Հայքում դեռ ոչինչ չի բեմադրվել… Սոֆոկլես կխաղա՞նք, այն էլ՝ հայերեն:

Արքունապետ- Բարի, բարի, Տիրան, լիովին համաձայն եմ, թող լինի Սոֆոկլես… հայերեն: */Դադար/:*

Տիրան- Արդո արքունապետ, ես ունեմ մի պայման եւս…

Արքունապետ- Ի՞նչ պայման, Տիրան, հուսամ՝ դու անհնարին բան չես ուզում…

Տիրան- Ես պահանջում եմ նաեւ, որ Տրդատ արքան Արտաշատում թատրոն կառուցի եւ վերականգնի Տիգրանակերտի թատրոնը:

Արքունապետ- Հըմմ… բարդ հարց է, բայց խնդրանքդ անպայման կփոխանցեմ արքային… Կարծում եմ՝ նա կընդառաջի: Թեեւ հռովմեացոց հետ պատերազմից հետո այնքա՜ն բան կա կառուցելու Արտաշատում եւ Մեծ Հայքի այլ քաղաքներում…

Տիրան- Չգիտեմ… պետք է կառուցել: Համարեք, որ թատրոնը Հայոց աշխարհի կարեւոր բերդաքաղաքներից մեկն է:

Արքունապետ- Տիրան, ես քեզ լավ եմ հասկանում: Կհամոզեմ արքային, որ, նախ, Արտաշատում թատրոնի կառուցման համար միջոցներ հատկացնի… Ուրեմն՝ պայմանավորվեցի՞նք վերջնական…

Տիրան- Արգո արքունապետ, մի պայման եւս… դե, հասկանու՞մ եք՝ ինձ համար չեմ խնդրում…

Արքունապետ- Ի՞նչ նոր խնդիրք է, Տիրան…

Տիրան- Արքունապետ, պետք է ձեռնամուխ լինել հայ գրերի ստեղծմանը եւս… Դուք նույնպես գրագետ մարդ եք, գիտեք, որ մենք հիմնականում գրում ենք հունարեն… Երբ հայերեն գրավոր խոսք է պետք լինում, օգտվում ենք հունական այբուբենից… Ինչու՞, արքունապետ… մի՞թե մենք արժանի չենք մեր սեփական գիրն ունենալու… Իմ եւ մեր թատերախմբի անունից… չէ, ամբողջ հայ ժողովրդի անունից պատվիրիր արքային, որ նա քայլեր ձեռնարկի մեր սեփական այբուբենը ստեղծելու համար… Գոնե այդպես կհամոզվենք, որ նա՝ պարթեւ Տրդատը, ինչպես դուք եք ասում՝ հայանում է… գոնե հայամետ է դարձել…

Արքունապետ- Ախ, Տիրան, Տիրան… Որքա՜ն մեծ են քո երազանքները… Բայց եւ որքա՜ն գեղեցիկ ես երազում, գրողը տանի… Մի տեսակ նախանձում եմ քեզ:

Տիրան- Դե ինչ, մեր այդ պատվիրանը եւս կփոխանցե՞ք արքային…

Արքունապետ- Անշուշտ, Ոսկեբերան, բայց մի ակնկալիր, որ այդ բոլոր ցանկությունները արագ կյանքի կկոչվեն:

Տիրան- Ես միշտ պահանջելու եմ այդ ամենը՝ թատրոն, հայոց գրեր…

Արքունապետ- Ուրեմն՝ լիովին պայմանավորվեցինք. Տիրան Ոսկեբերան. դուք հիանալի ներկայացում եք հրամցնում մեզ, իսկ մենք շռայլորեն վարձատրում ենք ձեզ, նաեւ՝ հետեւողականորեն կփորձենք ի կատար ածել ձեր հայկական մեծ երազանքները…

Տիրան- Հենց այդպես, արքունապետ, հակառակ պարագայում չեմ երաշխավորում, թե ինչ ներկայացումներ եմ մատուցելու մեր քաղաքացիներին հայոց հրապարակներում…

Արքունապետ- Շատ լավ: */Իրար ձեռք են սեղմում եւ թեթեւակի ողջագուրվում: Արքունապետը ծափ է զարկում, ներս է մտնում մատռվակը եւ գինի մատուցում արքունապետին ու Տիրանին/:*

Արքունապետ- Այսպիսով… նշում ենք մեր պատմական պայմանավորվածությունը… */Բաժակ են զարկում, ըմպում գինին/:*

ԱՐԱՐ ԵՐՐՈՐԴ

/Արքայական սրահում ժողովի են նստել Տրդատ Ա-ն, քրմապետը, հազարապետը, արքունապետը, սենեկապետը, այլ պալատականներ ու նախարարներ: Նրանք ամփոփում են Հռովմ կատարած ուղեւորությունը/:

Տրդատ Ա- Կարծում եմ՝ բոլորդ գոհ մնացիք այդ ուղեւորությունից, չէ՞… Հռովմը մեզ փառահեղ ընդունելություն ցույց տվեց. կատակ բան չէ՝ երեք հազար հոգու պատվել…

Ներկաներ- Այո-այո, արքա…

Սենեկապետ */քծնալից տոնով/*- Ներոն կայսրը ձեզ շատ մեծարեց… Պիտի ասեմ, որ դա միայն քաղաքական պատշաճ վարմունք չէր, իմ արքա:

Տրդատ Ա- Հապա ի՞նչ էր, սենեկապետ… Կայսրերը անիմաստ պատիվներ չեն շռայլում:

Սենեկապետ- Նա տեսավ, որ գործ ունի մեծ արքայի հետ… Բացի դրանից, նա ձգտում էր առավելագույնս ձեզ իր կողմը գրավել. դուք նրա համար թանկ ու կարեւոր դաշնակից եք:

Տրդատ Ա- Այդ մեկը՝ այո: Իհարկե, Ներոնը ուզում է, որ ես նրա հավատարիմ դաշնակիցը լինեմ:

Սենեկապետ- Եվ շատ գեղեցիկ թագ է նվիրել ձեզ… ոսկյա, ադամանդազարդ…

Տրդատ Ա- Դե, եթե ես Խարպուտի մոտ չջախջախեի նրա զորքերը, նա թագ չէր տա ինձ… Բայց դուք էլ թանկ ու գեղեցիկ նվերներ ստացաք Հռովմում, չէ՞…

Սենեկապետ- Այո-այո, իմ արքա, մենք լիքը սնդուկներով ենք տուն վերադարձել… Մեր երեք հազար հոգանոց շքախմբից ոչ ոք անուշադրության չի մատնվել:

Տրդատ Ա- Հա, երեւում է, ձեզ էլ են փորձել մի լավ կաշառել…

Արքունապետ- Իսկ դա նշանակում է, որ Մեծ Հայքի շահը այսուհետ պետք է ստորադասվի հռովմեական շահին…

Տրդատ Ա- Դե, արքունապետ, մենք թեեւ կախվածություն ունենք Հռովմից, բայց եւ դաշնակիցներ ենք, իսկ դաշնակցությունը միակողմանի չի լինում, այն փոխզիջումային է… փոխշահավետ… Մի բան նրանք կզիջեն, մի բան՝ մենք:

Հազարապետ- Հուսով եմ, որ մենք այնքան չենք զիջի, որ նրանք ի վերջո տրորեն մեզ…

Տրդատ Ա- Թող այդ հոռի մտքերդ, հազարապետ, ես նման բան թույլ չեմ տա… Կանենք ինչ-որ շոյիչ քայլեր, Հռովմի սիրտը կշահենք այնքան, որ նա վերջնականորեն իր մտքիցը հանի Հայաստանին ստրկացնելու ցանկությունը: Մենք պետք է ուժեղ դուրս գանք Հռովմի հետ դաշնակցությունից:

Սենեկապետ- Այո-այո, արքա, Հռովմը կարող է մեզ շատ բան տալ:

Տրդատ Ա- Եվ արդեն տվել է, չէ՞… առաջին պտուղները… Ներոն կայս-

ը մեզ նվիրել է երկու միլիոն դինար՝ Արտաշատը վերակառուցելու համար… Մեծ գումար է՝ նույնիսկ Հռովմի համար:

Արքունապետ- Հռովմը հիմնահատակ ավերել է Արտաշատը, ինքն էլ պարտավորված է զգում օգնել՝ վերակառուցելու մեր քաղաքը:

Տրդատ Ա- Կարող էր եւ պարտավորված չզգալ, արքունապետ… Շատ է պատահել, չէ՞, թշնամիները ավիրել ու հեռացել են առանց աչք թարթելու, մոռանալով թողած մոխրակույտերը… Պատերազմի դաժան սովորություններից է: */Լռություն/* Հազարապետ Գնունի, պիտի Հռովմից բերած գումարները առավելագույն արդյունավետությամբ ծախսել, այնպես, որ մեր մայրաքաղաքը նորից գեղեցիկ ու բարեկարգ տեսք ստանա… չէ, նախկինից լինի առավել գեղեցիկ ու հարմարավետ բոլոր բնակիչների համար… Հարկ է նաեւ այնպես գործել, որ գումարներ խնայվեն՝ մյուս քաղաքներում եւս բարեկարգումներ անելու նպատակով: Արքունական գանձարանից եւս մեծ հատկացումներ կլինեն:

Հազարապետ- Այդպես էլ կգործենք, մեր արքա: Շուտով տեղ կհասնեն Ներոնի խոստացած արհեստագործները, նրանք կմիանան մերոնց, եւ վերակառուցման աշխատանքները մեծ թափ կստանան:

Տրդատ Ա- Շատ լավ: */Հայացքը դանդաղ պտտեցնում է ներկաների վրայով/:* Ես որոշել եմ Արտաշատը վերանվանել Ներոնիա… ի պատիվ Հռովմի կայսեր… Սա մեր այն շոյիչ քայլերից մեկն է, որի մասին քիչ առաջ ասացի: Հարկ է Հռովմի թիկունքը մեկ-մեկ շոյել… Կա՞ն հիմնավոր առարկություններ…

Արքունապետ- Բայց ինչու՞ Արտաշատը վերանվանել, արքա, մեր հինավուրց մայրաքաղաքն է… Այդպես մենք մեզ շատ ենք նվաստացնում… Գուցե՞ Մեծ Հայքի փոքր ու ավերված քաղաքներից մեկը վերանվանենք Ներոնիա… Ժողովուրդն էլ կհասկանա մեր արածի իմաստը: Թե չէ՝ միանգամից Արտաշատը…

Հազարապետ- Արքունապետ Միհրանը ճիշտ է ասում, արքա: Պետք չէ Արտաշատին ձեռք տալ… Մի ուրիշ քաղաք վերակոչեք… Նաեւ այն մտահոգությունն ունեմ, որ Ներոնը վարկաբեկված կայսր է իր կայսրությունում, նա մայրասպան է… Պետք չէ մայրասպանի անունով կոչել մեր մայր քաղաքը:

Արքունապետ- Կամ նրա՞ անունով, որ հրկիզել է տվել Հռովմի թաղամասերը եւ հեռվից քրքջալով ու երգելով դիտել այդ զարհուրելի տեսարանը… Ախր նա խելագարի մեկն է:

Տրդատ Ա- Դե այդ ամենն ասեկոսեներ են… Ոչ ոք իրականում չգիտի, թե ինչպես է մահացել Ներոնի մայրը կամ ինչպես են հրկիզվել հռովմեական թաղամասերը… Հռովմի մեր աղբյուրները հայտնում են, որ Ներոնի

թշնամիներն են այդ անապացուցելի ենթադրությունների հեղինակներն ու տարածողները:

Արքունապետ- Դե ծուխն առանց կրակի չի լինում, արքա... խնդրում ենք՝ հրաժարվեք այդ մտքից:

Տրդատ Ա */վճռական/*- Ոչ, ես արդեն խոստացել եմ Ներոնին: Նա չի ների ինձ, եթե խոստումս չկատարեմ: Նա իր զայրույթը կթափի ոչ միայն ինձ, այլեւ ողջ հայերի վրա... Վերջ, որոշված է՝ այսուհետ Արտաշատը կկոչվի Ներոնիա: */Լռություն/* Դե, այդքան մի տրտմեք... Ո՞վ գիտե, թե մի քանի տարի հետո ինչեր կփոխվեն...

Սենեկապետ- Արքան շատ հեռատես է... Հիմա կկոչվի Ներոնիա, իսկ վաղը... դարձյալ կարող է Արտաշատ կոչվել...

Տրդատ Ա- Այո, սենեկապետ... Թեեւ շողոքորթի մեկն ես, բայց եւ խորաթափանց միտք ունես: */Դադար/* Ես ուզում էի իմ այս որոշումը հրապարակել Ներոն կայսեր գալստյան առաջին օրը. նա ինձ խոստացել էր այցելել Արտաշատ: Բայց հիմա գիտեմ, որ Ներոնը Հայաստան չի գա... առնվազն տեսանելի ապագայում: Իսկ մենք չենք սպասի, կկատարենք մեր քայլն առանց նրա ներկայության: Ուրեմն, սենեկապետ, պատրաստիր հրովարտակ Արտաշատի վերանվանման մասին, այսօր կկնքեմ այն... Վաղը տեղյակ կպահեք արտաշատցիներին:

Սենեկապետ- Հրամանդ, իմ արքա:

Տրդատ Ա- Բարի... Ձեզ պիտի հայտնեմ իմ կողմից հղացված մի կարեւոր որոշման մասին եւս, դա մտադիր էի անել մի փոքր ավելի ուշ, բայց, տեսնելով ձեր տխուր ու մտահոգ դեմքերը՝ ազդարարում եմ հիմա, հուսամ՝ ձեր տխրությունը գոնե մի քիչ կփարատվի... Մենք կկառուցենք Գառնի տաճարը... մեր միջոցներով, առանց օտարների օժանդակության... Մի գեղեցիկ ու հավերժական տաճար՝ հայկական ոգով:

Ձայներ- Լավ է, լավ է...

Քրմապետ- Եվ այն կնվիրենք Միհրին, չէ՞, արքա...

Տրդատ Ա- Թող Միհրին նվիրվի... Տեսնում եմ՝ այդ աստծուն Հայաստանում շատ են սիրում:

Քրմապետ- Այո, արքա, այդպես է:

Տրդատ Ա- Ես Ներոնին մոգական ծեսերի եմ ծանոթացրել, որ կիրառվում են Հայաստանում: Ներոնը ինձնից է լսել հայոց Միհր աստծո անունը: Միհրի պաշտամունքը մուտք կգործի հռովմեական դիցարան:

Քրմապետ- Այդպես հոգեւոր մերձություն կունենանք հռովմեացոց հետ:

Տրդատ Ա- Այո, քրմապետ, ճիշտ կռահեցիք հետագա արդյունքը: */Դադար/* Եվ արքունի բաղնիք կկառուցենք Գառնիի գեղատեսիլ վայրում. ընտանիքներով լոգանք կընդունենք, կհանգստանանք... Տաճարում կաղոթեք Միհր աստծուն... Նաեւ մտադիր եմ նույն վայրում մի պալատ կառու-

ցել՝ ի պատիվ թագուհի Խոսրովադուխտ քրոջս:

Սենեկապետ- Ինչ որ կառուցեք Հայաստանում, դա Արշակունիների փառքը կզորացնի… եւ կզորացնի Հայքը, իմ արքա:

Տրդատ Ա- Ասում եմ, չէ՞, որ այս շողոքորթը խորաթափանց միտք ունի:

Հազարապետ- Այո, կառուցելուց շահում ենք բոլորս… բայց եւ գազազեցնում ենք մեր թշնամիներին:

Տրդատ Ա- Դժբախտաբար, այդպես է, հազարապետ Գնունի: */Դադար/* Դե, կարծես թե ավարտեցինք արքունի խորհրդի օրակարգը, ուրեմն՝ ժամանցի ու հանգստի պահն է… Արքունապետ, դու մեզ խոստացել ես հաճելի անակնկալ…

Արքունապետ- Այո, արքա, հիմա ձեր առջեւ իրենց նոր թատերախաղը կներկայացնեն Տիրան Ոսկեբերանը եւ նրա խաղընկեր դերասանները… Վաղուց արքունիքում թատրոն չի կայացել, կարծում եմ՝ դա մեծ բավականություն կպատճառի ներկաներին:

Տրդատ Ա- Դա ա՞յն է, որ պիտի խաղացվեր Ներոն կայսեր սպասված ու չկայացած գալստյանը…

Արքունապետ- Այո, արքա:

Տրդատ Ա- Դե, ուրեմն՝ սկսեք:

/Արքունապետը արագ դուրս է գալիս, ապա վերադառնում Տիրանի եւ նրա հինգ խաղընկերների հետ: Դերասանները խմբվում են սրահի կենտրոնում, ուս-ուսի շրջանաձեւ գրկվում են, խոնարհվում եւ կամացուկ ինչ-որ նշանաբառ փոխանակում իրար, ապա յուրաքանչյուրը զբաղեցնում է ներկայացման համար նախանշված իր տեղը: Դերասաններից երկուսը կին են, նրանցից մեկը մնջախաղով վերապատմում է ներկայացումը: Թատերախաղի ընթացքի վերաբերյալ սենեկապետը ցածրաձայն բացատրություններ է տալիս Տրդատ Ա-ին/:

Տիրան- Սոֆոկլե՞ս… Էդիպ արքան Կոլոնոսո՞մ…

/Տիրանը հանձն է առնում Էդիպ արքայի դերակատարումը եւ սկսում խաղը/.

Տիրան- **Էդիպ**- Ո՞վ դուստր կույր ծերուկի, Անտիգոնե,
Ի՞նչ երկիր ենք եկել եւ ի՞նչ մարդկանց քաղաք,
Թափառական Էդիպուսին ո՞վ է այսօր
Ընդունելու՝ տալով խղճուկ ողորմություն:
Քիչ եմ խնդրում եւ քչից էլ պակաս առնում,
Սակայն դա էլ ինձ լիովին բավարար է,
Քանզի երկար ժամանակը, բնությունս
Ու զրկանքը գոհանալ են սովորեցրել…
Հարցուփորձի համար եկանք քաղաքն այս,
Օտարներ ենք, ինչ պահանջեն՝ պիտի անենք:

Կին դերասան-Անտիգոնե- Օ՜ Էդիպուս, դժբախտ հայրիկ,
այս քաղաքը
Պաշտպանում է պարիսպ. հեռվում նշմարում եմ:
Երեւում է՝ սուրբ վայր է սա, շատ կան այստեղ
Ձիթենիներ, վազեր, դափնիք, եւ փետրախիտ
Սոխակներ են քաղցր երգում պուրակի մեջ:
Տիրան-Էդիպ- Իսկ կարո՞ղ ես ասել, թե մենք ուր ենք եկել…
Կին դերասան-Անտիգոնե- Աթենքը ես ճանաչեցի, այս վայրը՝ ոչ…
Ես տեսնում եմ օտարական տղամարդու…
/Մոտենում է Դերասան 1-ը՝ օտարականի դերակատարը/:
Դերասան 1-Օտարական */Տիրան- Էդիպին/-*
… Ել այստեղից, քանզի մտնել այս սուրբ վայրը չի կարելի:
Տիրան-Էդիպ- Ի՞նչ վայր է սա, աստվածներից ու՞մն է արդյոք…
Դերասան 1-Օտարական- Պահպանում են նվիրական այս տեղն ահեղ
Դիցուհիներ՝ դուստրերն Երկրի ու Խավարի:
Տիրան-Էդիպ- Թող ընդունեն խնդրարկուիս ողորմաբար,
Քանզի այս սուրբ տարածքից ես չեմ գնալու.
Այդ բախտն է ինձ բաժին ընկած…
Դերասան 1-Օտարական- Հանդգնություն չունեմ քեզ դուրս վռնդելու՝
Նախքան հարցնեմ մեր քաղաքում՝ ինչպես վարվել.
Գնամ եւ լուր տանեմ մարդկանց… */Մի կողմ է քաշվում/:*
Տիրան-Էդիպ- Ով զավակս, օտարականն արդեն գնա՞ց…
Կին դերասան-Անտիգոնե- Գնաց, հայրիկ, եւ կարող ես ինձ ամեն բան
Հանգիստ ասել. շրջակայքում ես եմ միայն:
Տիրան-Էդիպ- Ականջ դրեք, բարի զարմեր հին Խավարի,
Ականջ դիր, ով մեծ Պալլասի անվանակից
Աթենք, բոլոր քաղաքներից մեծարելի,
Դուք գթացեք Էդիպուսի այս խղճալի
Ուրվականին, ես այլեւս նախկինը չեմ…
Կին դերասան-Անտիգոնե- Լռիր, արդեն մոտենում է
Թեսեւսը քո հրավերով՝ տիրակալը մեծ Աթենքի…:
/Նրանց է մոտենում Դերասան 2-ը՝ Թեսեւս արքայի դերակատարը/:
Դերասան 2-Թեսեւս- Մինչեւ այսօր շատերից եմ լսել լուրը
Արյունալի քո կուրացման, ծանոթ ես ինձ,
Լայոսի զարմ, այժմ գալով, ճանապարհին
Ես քո մասին էլ ավելի շատ իմացա:
Թշվառ տեսքդ ու հագուստդ հաստատում են,
Թե ով ես դու, եւ, կարեկից քո վիճակին,
Ցանկանում եմ հարցնել՝ արդյոք ի՞նչ խնդրանքով

Եկար ինձ մոտ, իմ քաղաքը, հեգ Էդիպուս,
Ի՞նչ եք ուզում դու եւ դժբախտ ուղեկիցդ...
Տիրան-Էդիպ- Եկել եմ՝ քեզ ընծայելու մարմինս հեգ,
Որ խղճուկ է կերպարանքով, բայց առավել
Օգուտ կտա, քան որեւէ գեղեցիկ բան:
Դերասան 2-Թեսեւս- Ի՞նչ օգուտ ես քո կարծիքով ինձ բերելու...
Տիրան-Էդիպ- Ժամանակին կհասկանաս, վաղ է հիմա...
Երբ մահանամ եւ քո ձեռքով թաղվեմ այստեղ.
Կյանքիս պսակն այդ վախճանը պիտի լինի:
Դերասան 2-Թեսեւս- Եթե դա է խնդրանքը քո, դյուրավ կանեմ...
Տիրան-Էդիպ- Ով սիրելիս, Էգեւսի զարմ, միշտ հեռու են
Ծերությունն ու մահը միայն աստվածներից,
Մյուսների տերն է անպարտ ժամանակը:
Խորտակվում է հողի, մարմնի զորությունը,
Մեռնում՝ հավատն, ու կասկածն է արմատանում,
Եվ հավիտյան կապված չեն նույն մտերմությամբ
Ոչ բարեկամ մարդիկ, ոչ էլ քաղաքները...
Պայծառ օր է, թեբեացիք հաշտ են քեզ հետ,
Բայց անվախճան ժամանակը ընթանալով,
Արարում է բյուր ցերեկներ ու գիշերներ,
Եվ մի օր էլ, փուչ պատճառով, նիզակները
Կջախջախեն միությունը ձեր համերաշխ.
Այնժամ նրանց տաք արյունով գերեզմանում
Կհագենա իմ ննջեցյալ մարմինը պաղ...
Դերասան 2-Թեսեւս- Ո՜վ Էդիպուս, քեզ եմ թողնում ընտրությունը,
Ինչ էլ վճռես՝ համաձայն եմ:
Եվ իմացիր՝ եթե այստեղ չլինեմ էլ,
Իմ անունը քեզ չարիքից կպաշտպանի:

/Մի կողմ է քաշվում: Տիրանը եւ մյուս դերասանները կրկին շրջան են կազմում կորանալով եւ վերստին կատարում իրենց փոքրիկ ծեսը, ապա, արագ հանդերձափոխվելով՝ անցնում են իրենց բեմադրության երկրորդ մասին: Չինվորականի հանդերձ է հագնում նաեւ կին դերասաններից մեկը, իսկ մյուսը շարունակում է մնջախաղը/:

Տիրան- Տիրա՜ն. Տիգրան Մեծը Արածանիո՛ւմ...
Արքունապետ */ակամա, բարձրաձայն/-* Ի՞նչ...

/Տրդատ Ա-ն ձեռքով նշան է անում արքունապետին, որ նա հանգիստ նստի տեղը եւ հետեւի թատերախաղին: Արքունապետը, որ մինչ այդ խանդավառ դեմքով հետեւում էր ներկայացմանը, մեկեն լուրջ ու լարված տեսք է ընդունում, ապա հարցական հայացքով ապարդյուն՝փորձում Տիրանից, հե-

ռակա կարգով, ինչ-որ պարզաբանում ստանալ: Արքունապետի այս գործողությունը մի քանի անգամ կրկնվում է Տիրանի ներկայացման երկրորդ եւ երրորդ մասերի ընթացքում, բայց ավելի հաճախ արքունապետը եւ պալատական հանդիսատեսների մեծ մասը ապշած կամ ոգեշունչ դիտում են մատուցվող տեսարանները/:

Տիրան-Տիգրան Մեծ -Իմ զինակիցնե՜ր, զորավարնե՜ր քաջ,
Դուք իմ պարծանքն ու ուժն եք անխորտակ,
Ձեզ հետ վարել ենք բյուր ու հիշարժան հաղթական մարտեր,-
Ձեր բազկի, սրի, կորովի թափով, հայ զինվորների անձնուրացությամբ
Մեծ Հայքը դարձավ հզոր տերություն՝ հայկական ոգուն
նոր թեւեր տալով:
Մեզ սահմանակից շատ ոստաններ են խոնարհվել
Հայքի զորության առաջ,
Նրան ճանաչել գերիշխան երկիր ու հպատակվել խելամտորեն:
Հայոց աշխարհը շատերի համար եղավ բաղձալի, մի երկիր է նա,
Որ սերմանում է արարչական բարք եւ նոր ջահեր է
Վառում դարերի մրրկող խավարում...
Բայց անդադրում են ախոյանները մեր կենաց հողի,
Հռովմն է անվերջ սուր թափահարում, եւ պարթեւներն են
դավադիր կեցած...
Ահա, տեսնում եք, թե այսօր մեզ ինչ ծանր ձեռնոց է Հռովմը նետել,
Նրա ռազմաշունչ գոռ լեգեոնները հասել են մինչեւ վեհ Տիգրանակերտ,
Իսկ հիմա նրանք օձագալարով շարժվում են դեպի չքնաղ Արտաշատ՝
Իմ բնօրրանը, իմ սուրբ քաղաքը, մայրաքաղաքը մեր գոռ անցյալի...
Մի՞թե թույլ կտանք, որ հռովմեացիք գերեվարեն մեր ոստանը հրաշք,
Որ հրի մատնեն, կործանեն մի փառք, որ մեզ սնել է երկար դարերով...
Իմ զորավարներ, զինակիցներ քաջ, ես ձեզ կոչում եմ
հաղթական մարտի,
Ի զե՜ն եմ կոչում հայոց այրերին, որ դեռ ունակ են սուր ու նետ բռնել,-
Հավաքեք բոլոր հայկազուններին իմ դրոշի տակ
Եվ նրանց հանձնեք իմ ձեռամբ օրհնված սրերն ամրակուռ,-
Մենք կմարտնչենք համախումբ ու սաստ, եւ կջախջախե՜նք
լեգեոններն օտար,
Այնպես, որ նրանց մազապուրծ եղած զինակիրները
Հեւիհեւ վազեն մինչեւ Հռովմ ու գուժեն աղետը իրենց բանակի,
Պատմեն, թե այստեղ՝ Արածանիում ինչպես տրորվեց Լուկուլլոսը նենգ,
Որ իրեն անհաղթ մի զորավար է երեւակայում,- մահ Լուկուլլոսին,
Նրա զորքերը առ ոչինչ կանենք սրբազան ցասմամբ...
Պատրա՞ստ եք մարտի, իմ զորավարներ... հաղթակա՜ն մարտի...

Դերասան 1- **Զորավար 1**- Զորագնդերս պատրաստ են մարտի,
արքայից արքա,
Պատիվ է ու փառք՝ անկոր մարտնչել ձեր դրոշի տակ,
հանուն հայրենյաց.
Սպասում ենք ահա ձեր հրամանին, այս վայրկյանին իսկ
Կարող ենք նետվել թշնամու վրա… Իմ արքա, օրհնեք իմ սուրը նաեւ…
/Հանում է իր սուրը եւ պահում հորիզոնական դիրքով, Տիրան-Տիգրան Մեծը համբուրում է սուրը/:

Տիրան-Տիգրան Մեծ- Իմ օրհնանքը քեզ, զորավար Գեղամ…

Դերասան 2-**Զորավար 2**- Արքա Տիգրան Մեծ, մեզ կոչեք կռվի,
Առաջնորդեք մեզ թեկուզ դեւերի դեմ մարտնչելու,
Դրանց անկասկած կդարձնենք եռուն դժոխքի բաժին:
Մենք ձեզ հետ զորեղ-անպարտելի ենք,
Զորագնդերս պատրաստ սպասում են ձեր հրամանին,
Մարտի կնետվենք միայն հաղթանակ տոնելու համար.
Խնդրում եմ՝ օրհնեք իմ սուրը նաեւ, սիրելի արքա…
/Տիրան-Տիգրան Մեծը համբուրում է մեկնված սուրը/:

Տիրան-Տիգրան Մեծ- Իմ օրհնանքը քեզ, զորավար Սմբատ:

Դերասան 3-**Զորավար 3**- Մեծափառ Տիգրան, արքայից արքա,
Մենք անսասան ենք մեր դեմ ոռնացող թշնամու դիմաց,
Նրա համար մենք արդեն փորել ենք հարմար գերեզման
Արածանիի մացառուտներում:
Գուցե՞ ասեք մեզ, թե Լուկուլլոսին ջարդելուց հետո
Զորագնդերս դեպի Հռո՞վմ եմ շարժելու, թե՞ այլ
Ուղղությամբ եմ ես սուրալու անկանգ…

Տիրան- **Տիգրան Մեծ** */ծիծաղելով/*- Դե դա ռազմական գաղտնիք է
խորին,
այդ մասին ես ձեզ տեղյակ կպահեմ Արածանիում հաղթելուց հետո…

Դերասան 3-**Զորավար 3**- Հրամայեք, իմ մեծազոր արքա,
Զորքս պատրաստ է արշավել այնտեղ, ուր որ կամենաք…

Տիրան- **Տիգրան Մեծ**- Իմ կամքը, գիտես, զորավար Արգամ,
Միայն Մեծ Հայքի շահից է բխում,
Ես կամայական պատերազմների սիրահարը չեմ.
Հայոց գնդերը միշտ մարտնչել են լոկ այն վայրերում,
Որ աղերսվում են մայր Հայաստանի լուսավոր փառքին…

Դերասան 3-**Զորավար 3**- Գիտեմ, իմ արքա, դրա համար ենք
ձեզ խոր հավատում…
Խնդրում եմ՝ օրհնեք իմ սուրը նաեւ:
/Տիրան-Տիգրան Մեծը համբուրում է մեկնված սուրը/:

Տիրան-Տիգրան Մեծ- Իմ օրինանքը քեզ, իմ քաջ զորավար:
Դերասան 4-Զորավար 4- Ահա մեծ արքա, իմ սուրը նաեւ,
Թշնամու մահը երգող իմ սուրը, օրինեք, խնդրում եմ:
Տիրան-Տիգրան Մեծ- Մեծ սիրով նաեւ քո սուրը կօրինեմ,
Առնակ զորավար:
/Համբուրում է իրեն մեկնված սուրը/:
Իսկ հիմա, արգո իմ զինակիցներ, մի պահ լռենք ու մտովի հիշենք,
Թե հայրենական ինչ մասունքներ են մեզ ոգեշնչում,
Թող մեր սրբազան աստվածների հետ
Նրանք հովանի լինեն մեր բազկին,
Որ մեծ եռանդով վաղը մարտնչենք հռովմեացոց դեմ
Եվ խեղդենք նրանց, եւ հաղթենք այդ մեծ ճակատամարտում:
Դերասան-Զորավարներ- Կհաղթենք, արքա... կհաղթենք, արքա:
/Տիրան-Տիգրան Մեծը եւ նրա խաղընկեր-զորավարները մի պահ մտասույզ աղոթողի կեցվածք են ընդունում, ապա կտրական շարժումով հանում են սրերը եւ աներեւույթ թշնամու դեմ միասնական կռվի տեսարան պատկերում. վերջում սրերը բարձրացնում են, «ուռա եւ հաղթանակ» գոչում: Նրանք ավարտում են ներկայացման այդ երկրորդ մասը, կրկին ծիսական շրջան են կազմում, ապա արագ անցնում երրորդ մասին: Տիրանը կերպարանափոխվում է կայսր Ներոնի, դերասաններից մեկը՝ Տրդատ Ա-ի: Հանդիսատեսների մոտ փսփսուքներ են տարածվում/:
Տիրան- Ներոն- Ահ, ժամանե՞լ ես, Հայքի նոր իշխան,
Եկել ես ինձնից թագ ստանալու՞,
Արքա՞ ես ուզում հռչակվել հայոց երկրամասում,
Դու՝ պարթեւների ժառանգ-պատվիրակ...
Դերասան 1- Տրդատ Ա- Այո, մեծափառ կայսր Հռովմի,
Վեհաշուք Ներոն, այր արեգնափայլ,
Ըստ մեր պայմանի՝
Դուք ինձ օծում եք անվիճարկելի Հայոց թագավոր,
Թողեք, որ այնտեղ ես լինեմ արքա
Ու օրինավոր տիրակալ հայոց...
Տիրան-Ներոն- Անվիճարկելի՞... եւ օրինավո՞ր...
Ինչ ծիծաղելի բառապաշար է...
Իշխան, այդ կարգի հավակնությունից իմ սիրտն է խառնում,
Ո՞վ գիտե, թե ես վաղը ում կուզեմ տեսնել թագավոր հայոց
կողմերում...
Դերասան 1-Տրդատ Ա- Բայց... կայսր Ներոն...
Տիրան- Ներոն- Ոչ մի բայց, պարթեւ,
Բավարարվում ենք սոսկ մեր ներկայի պահանջմունքներով...

Ինչ խոստացել եմ, անում եմ հիմա,
Որ չասեք, իբր, Ներոնն իր խոսքին տեր չի կանգնում, չէ…
Ահա քո թագը, դեմս խոնարհվիր եղնիկի նման,
որ քո գլուխը պսակեմ հիմա:
/Դերասան 2-սպասավորից վերցնում է ոսկեհուռ թագը եւ դնում դերասան 1-Տրդատ Ա-ի գլխին/:
Իսկ այժմ երդվիր, որ դու երբեւէ չես ըմբոստանա,
Հնազանդ վարքով դու կծառայես Ներոն կայսրիս ու ամբողջ Հռովմին…
Դերասան 1-Տրդատ Ա- Երդվում եմ, կայսր արեգակնափայլ,
Դու իմ բաղձալի տեր-տիրակալն ես…
Չէ, քիչ եմ ասում… անկեղծ կլինեմ մինչեւ իմ հոգու վերջին անկյունը:
Թագն ի՞նչ է սակայն, հանուն որի ես պիտի հոգս քաշեմ.
Դու իմ աստվածն ես, օ կայսր Ներոն,
Եկել եմ մոտդ երկրպագության,
Դու իմ սիրելի տերն ես հավիտյան,
Ի խորոց սրտի ես քեզ պաշտում եմ, ինչպես որ՝ Միհրին,
Եվ այն բախտը, որ ինձ համար ես դու ընտրել ինքնակամ,
թող իմը լինի,
Քանզի դու ես լոկ իմ հոգին, բախտն ու ճակատագիրը:
Տիրան-Ներոն- Քծնու՞մ ես դու ինձ, խորամանկ պարթեւ…
Ինձ դուր է գալիս պերճ ու շողոքորթ խոսքդ հեռահար:
Դերասան 1-Տրդատ Ա- Իսկ դու թո՞յլ կտաս, պաշտելի Ներոն,
Որ ես ինձ կոչեմ Հայքի մեծ արեւ, հելիո՜ս վեհափայլ,
Որ կոչվեմ նաեւ Հայքի գերագույն տիրակալ ու հայր…
Տիրան- Ներոն */քմծիծաղում է/-* Դե, այդ աստիճան մի գոռոզացիր,
Շատ ես շտապում… երկնքից շողալ:
Ավելի լավ է՝ ասա ճշմարիտ՝ դու իմ երգերից սերտե՞լ ես մի բան,
Որ երգես այստեղ, իմ պալատի մեջ՝
Որպես նորելուկ երգիչ պարթեւաց…
/Հանդիսատես պալատականների մոտ շշուկներ են լսվում, սենեկապետը բարձրաձայն դիմում է Տրդատ Ա-ին/.
Սենեկապետ- Բայց սրանք */մատնացույց է անում դերասաններին/* ծաղրու՞մ են ձեզ, իմ արքա…
/Արքունապետը աճապարում է դերասանների մոտ/:
Արքունապետ- Տիրան, վերջ տվեք, դու բոլոր սահմաններն անցար. չի կարելի, մենք այդպես չենք պայմանավորվել: */Շրջվում է դեպի Տրդատ Ա-ի կողմը/:* Մեր արքա, նրանք իմ վստահությունը չարաշահեցին, ներող եղեք…
Տրդատ Ա */կանգնում եւ այլայլված գոռում է/-* Զնդա՞նը նետեք դրանց…

Արքունապետին նույնպե՞ս… Նրանք ծաղրու՛մ են ինձ… Կգլխատե՛մ բոլորիդ…

Տիրան */անմեղ ձեւանալով/*- Սա ընդամենը… կատակերգություն է… թատրոն…

Սենեկապետ- Ո՛չ, դա իսկական ծաղր է մեր արքայի հանդեպ…

/Արքան մոլեգնած ու փութով շարժվում է դեպի ելքը: Նրան հետեւում է սենեկապետը: Պահնորդները բռնում են դերասաններին ու արքունապետին, որ տանեն: Դերասանները միմյանց են նայում ժպիտով ու ծիծաղով/:

Տրդատ Ա- Կգլխատե՛մ…

Տիրան */գոռում է հեռացող արքայի հետեւից/*- Տրդա՛տ… Դու հայի հոգին չե՞ս ճանաչում… մեզ գլխատելով չե՞ս սպանի…

/Տրդատ Ա-ն շրջվում է մի պահ, նայում Տիրանի կողմը, ոտքը զարկում է գետնին եւ դուրս գալիս, նրա հետ՝ նաեւ սենեկապետը/:

Արքունապետ- Այս ի՞նչ արիր, Տիրան…

Տիրան */ուշադրություն չդարձնելով արքունապետի խոսքին/*- Գնա, գնա, պարթեւ… Դու պարթեւ ես արյամբ, իսկ մենք պարթեւահասակ ենք մարմնապես ու հոգով:

Դերասաններ- Գնա՛, գնա՛, պարթեւ…

/Պահնորդները դերասաններին ու արքունապետին դուրս են հանում: Մնացողներն իրար մեջ տագնապահար քչփչում են/:

ԱՐԱՐ ՉՈՐՐՈՐԴ

/Բանտախցում են Տիրանը եւ նրա երեք խաղընկեր դերասանները: Տիրանը մտախոհ քայլում է խցում, մյուսները նստած են հատակին/:

Դերասան1- Դու այս երեք ամիսներին այնքան ես քայլել զնդանում, որքան չես քայլել մեր բոլոր հյուրախաղերի ընթացքում….

Տիրան- Որովհետեւ մենք այդ ճամփորդությունների ժամանակ մեկ-մեկ ձիեր էինք հեծնում:

Դերասան1- Հա, այստեղ ձի չեն տա մեզ… համ էլ նեղվածք է, իմաստ չունի:

Տիրան- Թող ձիերի հարցը, Վազգեն, հիմա ես խորհում եմ, թե ինչպես մեր վերակացու պահնորդների սիրտը շահենք, որ նրանք մի լուր հայթայթեն մեր Սաթենիկի եւ Ծուշանիկի մասին… Տեսնու՞մ ես, չէ՞, Սուրենի ու Վահանի աչքունքը չի բացվում այսքան ժամանակ… Նրանց սրտից արյուն է ծորում… Դե, սիրելի կանանց մասին տեղեկություն չունենալը իսկապես տանջալից է… կտտանքի մի ձեւ է դա: */Մոտենում է դերասաններ 2-ին ու 3-ին եւ ձեռքերով նրանց ուսերը գրկում/.* Հարազատներս, եղբայրներս…

շատ մի տրտմեք, սիրտս վկայում է, որ շուտով արեւ է ծագելու մեզ համար:

Դերասան2- Արեւ՞... Տիրան, մեզ ուզում են գլխատել, այն աշխարհու՞մ ենք արեւ տեսնելու...

Դերասան3- Իմ արեւը իմ Սաթենիկն է:

Դերասան2- Իմն էլ՝ Շուշանիկը:

Տիրան- Նաեւ մեր արեւն են նրանք, եղբայրք, բայց հիմա պետք է հուսալ ու մի ելք գտնել, քանի դեռ...

Դերասան1- Հա, քանի դեռ չեն գլխատել մեզ... */Լռություն/* Տիրան, իսկապե՞ս մեզ գլխատելու են...

Տիրան- Չէ, հույս չունենաս...

Դերասան1- Ինչու՞...

Տիրան- Որովհետեւ մեր պարանոցներն այնքան ամուր են, որ Տրդատը համապատասխան կացին չի գտնի ողջ Հայաստանում... Իսկ մինչեւ գնա Պարթեւստանից կացին բերի, մենք կփախչենք այստեղից: */Մոտենում է վանդակաճաղերին եւ գոռում/.* Պահնո՜րդ... վերակացու՜...

/Բանտարկյալներին է մոտենում պահնորդ-վերակացուն/:

Պահնորդ- Ի՞նչ կա, դերասան...

Տիրան- Էլի ու էլի թախանձում-պաղատում ենք՝ մի լուր իմացեք մեր խաղընկերուհիների մասին...

Պահնորդ- Միայն կասեմ, որ նրանց դեռ կառափնարան չեն տարել եւ նրանք այստեղ՝ բանտում չեն, իսկ թե ուր են տարել՝ չգիտեմ... Մեր պահնորդներից ոչ ոք չգիտի:

Տիրան- Բայց դու հարցուփորձ արա դրսի մարդկանց... պալատականների հետ շփվում եք, նրանցից թաքուն իմացեք: Այդ պալատականներից ոմանք հաստատ գիտեն մեր կանանց տեղը, նրանք գաղտնապահությամբ առանձնապես չեն փայլում, բավական է միայն նրանց մի փոքր թեքես գրգռիչ թեմայի վրա... եւ նրանք քեզ շա՜տ հետաքրքիր բաներ կպատմեն, անգամ՝ արքայի սիրային գաղտնիքներից... Հը՞, ի՞նչ կասես, բարեկամ... Իմացիր, խնդրում եմ, մեզ շատ է պետք այդ տեղեկությունը:

Պահնորդ- Իսկ դուք ինչպե՞ս վարձահատույց կլինեք մեզ...

Տիրան- Դե... մենք մեծ հարստություն չունենք, որ մի կարգին բան նվիրենք քեզ քո բարի ծառայության համար... Մեր ունեցած-չունեցածն այստեղ է, խցում...

Պահնորդ */ծիծաղում է/*- Կարծում եք՝ ձեր խուցը դատա՞րկ է... Չէ, տիարք, դուք ճիշտ չեք գնահատում իրադրությունը... Ես զորագնդի նախկին հրամանատար եմ, ինձ պատիժով են այստեղ ծառայության կարգել, հուսամ՝ ժամանակավորապես... Ես բավական բան գիտեմ մարդկանց ու նրանց կարողությունների մասին... Դե լավ, կարճ կապեմ, առաջարկում

եմ հետեւյալ պայմանը. ես ձեզ համար հայթայթում եմ ձեր ուզած տեղեկությունը, իսկ դուք մեզ համար… */Երկիմաստ ժպիտով նայում է Տիրանին, ապա մյուս դերասաններին/:*

Դերասան 1- Իսկ մենք ի՞նչ պիտի անենք…

Պահնորդ- Իսկ դուք մեզ՝ պահնորդներիս համար խաղում եք այն թատրոնը…

Տիրան- Ո՞րը… Էդի՞պը… Տիգրան Մե՞ծը…

Պահնորդ- Չէ՜… Դե, էն… որտեղ Ներոնը մեր արքային թագադրում է ու նվաստացնում…

Տիրան */ծիծաղում է, նրան ձայնակցում են խաղընկերները/*- Մեծ սիրով, եղբայր, ինչպես կասեք, ամեն օր պատրաստ ենք ձեզ համար Տրդատի տնազն անել */ծաղրանմանակելով/.*

Իսկ դու թու՞յլ կտաս, պաշտելի Ներոն,

Որ ես ինձ կոչեմ Հայքի մեծ արեւ, հելիո՜ս վեհափայլ,

Որ կոչվեմ նաեւ Հայքի գերագույն տիրակալ ու հայր…

/Պահնորդը քահ-քահ ծիծաղում է/.

Պահնորդ- Վա՜յ, մեռնելու բան ես ասում… դերասան… */շարունակում է քահ-քահ ծիծաղել/:*

Տիրան- Չէ, չմեռնես, դու մեզ պետք ես:

Պահնորդ- Լավ… պայմանավորվեցինք: */Ծիծաղելով հեռանում է/:*

Տիրան- Այդ մարդը իրոք կարող է մեզ լավ ծառայություն մատուցել:

Դերասան 1- Իսկ եթե մեր բանտային ելույթի մասին տեղյակ պահեն Տրդատի՞ն…

Տիրան- Չէ, պահնորդները այդ գաղտնիքը կպահեն, թե չէ մատնած կլինեն նաեւ իրենց… Ինքզինք հո չեն մատնի:

Դերասան 1- Լավ, ուրեմն՝ նախ, սպասենք, թե ինչ լուր է բերում…

Տիրան- Այո: */Նստում է դերասաններ 2-ի եւ 3-ի մոտ/:* Սպասենք…

/Բեմական հնարքով խորհրդանշական սպասողական վիճակ է պատկերվում լույս ու խավարով: Թվում է՝ անցել է մի քանի օր: Բանտախուցը տանելի լուսավորվում է: Տիրանը եւ մյուս դերասանները նստած են հատակին, տեսնելով մեկեն հայտնված պահնորդին՝ ընդոստ կանգնում են/:

Դերասաններ- Ի՞նչ կա, պահնորդ… նորություն կա՞…

Պահնորդ- Այո: Դժվարությամբ, բայց պարզեցի, որ ձեր կանանց պարտադիր աշխատանքի են ուղարկել Կաչաղակաբերդ… Խաչենի կողմերը:

Տիրան- Աստված քեզ պահապան, արգո պահնորդ, լավ լուր բերիր մեզ: Կարեւորը՝ որ նրանք ողջ են:

Դերասան 1- Հա, եւ գիտենք նրանց տեղը:

Դերասաններ 2 եւ 3 */տագնապած/*- Հարկադիր աշխատա՞նք… Ի՞նչ պիտի անեն այնտեղ…

Պահնորդ- Կարծեմ՝ պիտի մասնակիցը դառնան վերակառուցվող բերդի շինարարությանը…

Դերասան 2 - Կդիմանա՞ն այդ ծանր գործին… Ախր նրանք շատ են փխրուն…

Դերասան 3- Սաթենիկը պարսպի քար ո՞նց կբարձրացնի…

Տիրան- Բայց մեր դերասանուհիններն այդքան էլ փափկասուն չեն, եղբայրք: Եթե ձեզ դիմանում են, շինարարական գործերին էլ կդիմակայեն, մինչեւ նրանց ետ կբերենք:

Դերասան 2- Ետ կբերե՞նք իրոք, Տիրան…

Տիրան- Անշուշտ:

Դերասան 3- Բայց մենք բանտարկված ենք, մահապատժի սպառնալաքի տակ… Այդ ի՞նչ լավատեսությամբ ես ուզում մեզ սփոփել, Տիրան…

Տիրան- Համբերեք, իմ լավատեսությունը միշտ էլ հիմնավոր է եղել: Շուտով արեւը կծագի:

Դերասան 3- Ուրիշների համար:

Տիրան- Նաեւ մեզ համար… Պահնորդին հարցրեք:

Պահնորդ- Պահնորդին նման հարցերի մեջ մի ներքաշեք: Ես միայն ուզում եմ հիշեցնել, տիարք, որ ես իմ հանձնառությունը կատարեցի, հիմա ձեր պատասխանի հերթն է, ինչպես պայմանավորվել ենք:

Տիրան- Այո-այո, արգո պահնորդ, ե՞րբ եք ուզում ձեզ համար Տրդատ ու Ներոն խաղանք…

Պահնորդ- Այսօր գիշերը… խաղաղ ժամ կլինի, մեր լավագույն հինգ պահնորդներն էլ ներկա կգտնվեն:

Տիրան- Բարի, թող լինի գիշերը. միեւնույն է՝ մենք գրեթե չենք քնում:

Պահնորդ- Ուրեմն՝ մինչ կեսգիշեր, տիարք դերասաններ: Ես գնացի:

Տիրան- Տիար… նախկին զորավար, իսկ ի՞նչ լուր ունեք արքունապետից… Ես խղճի խայթ եմ զգում նրա առիթով… Նա դեռ բանտու՞մ է, թե՞…

Պահնորդ- Չէ, արքայի բարկությունը իջավ եւ արքունապետին ազատ արձակեց բանտից, բայց նրան ազատեց նաեւ արքունապետի պաշտոնից եւ ետ ուղարկեց իր Տուրուբերան հայրենիք:

Տիրան- Լավ է՝ ողջ-առողջ է Միհրան իշխանը… Մի օր Տուրուբերան կգնանք՝ նրան տեսակցելու: Նա արժանի է մեր սրտաբաց այցին… Մեր կիսատ մնացած ներոն-տրդատյան ներկայացումը կխաղանք նրա ու իր ընտանիքի համար: Համենայն դեպս, հայրենասեր մարդ է… Սակայն վախ կա մեջը, ինքը դա հեռատեսություն է անվանում… Հեռատես-վախկոտ՝ ահա մեր նորօրյա արքունական այրերի իրական նկարագիրը:

Պահնորդ- Ես չգիտեմ, թե ինչու են քեզ Ոսկեբերան կոչում: Ավելի շատ կծում ու խայթում ես, քան գովասանք ձոնում երեւելի մարդկանց…

Տիրան- Ոսկեբերան եմ, որովհետեւ ոսկե խայթեր կան իմ լեզվի տակ:

Պահնորդ- Բայց քեզ լսելը օգտակար ու հետաքրքիր է, չեմ թաքցնում: Այնուհանդերձ, արքունապետին խնայել արժեր, նա մաքուր այր է՝ առանց հոգու ախտի… Մենք միասին կռվել ենք Անտիոքի կողմերում, քաջ գիտեմ նրան: */Հեռանում է/:*

Դերասան1- Ճշմարիտ… Մեր արգո իշխանին լա՜վ հարվածի տակ դրինք…

Տիրան- Եղբայր, նաեւ նման հարվածներով պիտի մեր երկրի դեմքն ու ոգին պահենք:

Դերասան1- Համամիտ եմ, եղբայր. հարվածենք ու հարվածե՞նք…

Տիրան- Դե, տիարք, քանի որ մենք հիմա լավ լուր ունենք եւ մեր տրամադրությունը մի փոքր բարձրացել է, եկեք վերսկսենք փորձերը… Մենք դեռ պետք է ավարտին հասցնենք Տիգրան Մեծին նվիրված բեմադրությունը… Ի՞նչ կասեք…

Դերասան1- Հիանալի՜ գաղափար:

Դերասան3- Հա, վերսկսենք փորձերը:

Դերասան2- Համաձայն եմ՝ պարապենք, թե չէ կմոռանանք, թե ինչ է թատրոնը:

Դերասան3- Ես իմ խոսքը «Տիգրան Մեծ» խաղից լիովին հիշում եմ, կարող ենք այդ ներկայացումն արագ իր լրումին հասցնել:

Դերասան2- Ես էլ եմ հիշում:

Տիրան- Ապրեք, տղաներ… Ուրեմն՝ սկսենք… Բայց, նախ, դառնանք մեր խորհրդանշական նախաբանին:

/Բոլորով շրջան են կազմում եւ կատարում իրենց նախախաղային ծեսը: Այնուհետեւ սկսում են թատերափորձը/:

ԱՐԱՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

/Սույն արարը տեղի է ունենում արքունապետի հայրենական ամրոցում: Արդեն նախկին արքունապետ Միհրանը ընդարձակ սրահում ետուառաջ է քայլում անհամբեր ու սպասողական: Ներս է մտնում սպասավորը/:

Սպասավոր- Իշխան, հյուրերը ժամանեցին: Նրանք հենց նոր բերդից ներս անցան:

Արքունապետ- Նրանց անհապաղ ուղեկցիր ինձ մոտ: */Սպասավորը խոնարհվում եւ արագ դուրս է գալիս: Արքունապետը մոտենում է մուտքին եւ սպասում այնտեղ: Լսելով եկողների ձայները, բացում է դուռը: Հայտնվում են Տիրանը, երեք դերասանները եւ պահնորդը/:* Ինչպես տեսնում ես, Տիրան, ես քեզ դարձյալ ընդառաջ ելա…

Տիրան- Օ՜ թանկագին արքունապետ… Ուրեմն ձեզ մո՞տ են մեզ բե-

րել… Ի՞նչ մեծ անակնկալ է… */Ողջագուրվում է արքունապետի հետ/:*

Արքունապետ- Այո, ինձ մոտ, Տուրուբերանի իմ հայրական կալվածքը… Ի՞նչ է՝ զինակից ընկերս ձեզ չի՞ ասել…

Տիրան- Ոչ, նա շատ գաղտնապահն է:

Պահնորդ- Սիրելի իշխան, բարով տեսանք:

Արքունապետ- Բարով տեսանք, թանկագին Մերուժան */ողջագուրվում է պահնորդի հետ/:* Բարեհաջո՞ղ տեղ հասաք, հո՞ ձեզ չհետապնդեցին…

Պահնորդ- Ոչ, իշխան, մեզ համար փախուստի շատ հարմար ժամանակ էր… Արքունիքում, բերդում հիմա այնպիսի խառնակ շրջան է, որ հազիվ թե կառավարիչները նպատակահարմար գտնեն զբաղվելու փախստականներով…

Տիրան- Հա, նրանք հիմա չեն հետաքրքրվի ինչ-որ դերասաններով եւ խռովարար պահնորդով, հիմա շատ ավելի կարեւոր հոգսեր ունի Տրդատը…

Արքունապետ- Ի՞նչ է, Արտաշատում խառնակությունն՞ են սկսվել…

Պահնորդ- Ոչ անմիջապես Արտաշատում… Արքայի հետ այժմ լուրջ տարաձայնությունների մեջ են Գուգարաց բդեշխը, Անգեղ տունը, Մանդակունիները, Խորխոռունիները, կարծեմ էլի մի քանի նախարարական տներ… Տրդատը զորաջոկատներ է ուղարկել նրանց հայրենիքներ՝ սաստելու եւ վերահսկողության տակ պահելու նպատակով… Այնպես որ, հիմա արքունիքն ու նրա գործակալները մեզնով հետաքրքրվելու ժամանակ չունեն:

Արքունապետ- Կարեւոր տեղեկություններով ես եկել, սիրելի իմ զինակից… Բայց ո՞րն է մեր նախարարների դժգոհության բուն պատճառը, դա քեզ հայտնի՞ է, Մերուժան…

Պահնորդ- Իմ լսածով, իշխան Միհրան, Տրդատն ուզում է նախարարական բոլոր տներից առանձին զորաջոկատներ կազմել եւ ծառայության ուղարկել Պարթեւստան… Բացի դրանից, հարկերն է բարձրացրել:

Արքունապետ- Մեր նախարարների հակառակությունը տեղին է: Նրանց դուր չի գա նաեւ, որ արքան պարթեւական նիստուկաց է փորձում արմատավորել Արտաշատում եւ այլուր… Բոլորս պետք է զգոն լինենք, որ նման բան տեղի չունենա. հակառակը՝ Արշակունի Տրդատին ու նրա հետնորդներին հարկ է ուղղորդել դեպի հայկական հուն:

Տիրան- Դուք նման գիծ էիք վարում արքունիքում, իշխան, սակայն, ինչպես տեսանք, դա ավարտվեց ձեր բանտարկությամբ ու պաշտոնանկությամբ… Ներիր, իշխան Միհրան, դրանում ես իմ մեղքն ունեմ. իսկապես չէի կարծում, որ մեր անկեղծ թատերախաղերը կհանգեցնեն նման հետեւանքների…

Արքունապետ- Ամ, Տիրան, Տիրան… Որտեղ պետք է՝ կարճատես ես,

եւ որտեղ պետք է՝ անչափ հեռատես ես… Դու ազնվորեն ես խորհում ու գործում. ուր էր թե՝ մեր հայրենակիցներից շատերն ունենային քո մտքի ազատության ու գործելու համարձակության օրինակները… Լավ, ծանր թեմաները թողնենք մի կողմ, առաջիկայում մենք շատ ժամանակ ենք ունենալու՝ քննելու մեզ հուզող բոլոր հարցերը: Հիմա ես բարի գալուստ ասեմ նաեւ մեր դերասաններին, նրանք կարծես թե անտեսված մնացին… */Դերասաններին/* Տիարք, բարով եկաք մեր ամրոցը, ձեզ այստեղ զգացեք, ինչպես տանը:

Դերասաններ */խոնարհաբար ողջունելով/*- Բարով տեսանք, արքունապետ:

Արքունապետ- Ես հիմա արքունապետ չեմ, գիտեք */ծիծաղում է/:* Իսկ եթե այդ պաշտոնի անվանումը ձեզ շատ է դուր գալիս, կարող եք ինձ դիմել՝ նախկին արքունապետ…

Դերասաններ 2 եւ 3- Այո… նախկին արքունապետ…

Դերասան 1- Դուք մեր պատճառով տուժել եք… ներող եղեք, իշխան:

Արքունապետ- Դե, նման մտատանջություններ մի ունեցեք. իմ գնահատականը հետեւյալն է՝ ես ձեր շնորհիվ այժմ իմ հայրական դաստակերտում եմ եւ հեռու արքունական ճղճիմ միջավայրից: Նորից տուն վերադառնալն ինձ համար իսկական ձեռքբերում է: Արքունապետի պաշտոնը անցյալ հարյուրամյակում ավանդաբար տրվել է մեզ՝ Բզնունիներիս… Հիմա Տրդատ արքան լավ առիթ ունի փոխելու արքունապետական ժառանգորդությունը: Դա հայոց շատ տներ կցանկանան: Իսկ մենք՝ Բզնունիներս, կզբաղվենք մեր շինությունների ամրացմամբ, կշենացնենք մեր հայրենի Տուրուբերանը… Ես, ի մասնավորի, անձամբ կաջակցեմ նաեւ մեր հայրենակիցների հոգեւոր կերպարի պահպանությանն ու պայծառացմանը… Դա քի՞չ է…

Տիրան- Ոչ, իշխան Միհրան, քիչ չէ, դա իսկապես շատ է: Թող յուրաքանչյուր ոք շենացնի իր հայրենի տարածքը, եւ մենք կլինենք ծաղկուն ու զորեղ երկիր, անհաղթելի երկիր, այնպիսին, որ թույլ չի տա օտար արքաների գերիշխանություն: */Դադար/* Իշխան, եթե ձեր հանձնառության մեջ մի փոքր որոշակիացում էլ մտցնեք, մենք շատ ավելի ուրախ ու երախտապարտ կլինենք…

Արքունապետ- Ի՞նչ որոշակիացում, Տիրան…

Տիրան- Կխոստանա՞ք, որ կաջակցեք մեր փոքրիկ թատերախմբին, որ մենք լավ պայմաններ ունենանք՝ թատրոնը Հայոց աշխարհում տարածելու, ավելի արժեքավոր ներկայացումներ պատրաստելու համար…

Արքունապետ- Իսկ ի՞նչ ես կարծում, թատերգու, ես ինչի՞ համար եմ ձեզ ապաստան տալիս… Նրա համար, որ այսուհետ եւս ծառայեք թատրոնին: Դուք Հայքի հազվագյուտ ստեղծարարներից եք. գիտեմ՝ թատրո-

նով կարելի է կրթել ու ոգեշնչել մեր ժողովրդին: Անհոգ մնա, Տիրան, ես հնարավորը կանեմ, որ դուք նոր ու հրաշալի ներկայացումներ ունենաք այստեղ, մյուս նահանգներում:

Տիրան- Երախտապարտ ենք ձեզ, իշխան Միհրան: */Տիրանը եւ դերասանները ի տես արքունապետի խոնարհում են գլուխները/:* Ես մի նոր թատերգություն կստեղծեմ, որտեղ գլխավոր հերոսը դուք կլինեք, որպես հայ հայրենասեր իշխան…

Արքունապետ */երկիմաստ ժպտալով/*- Դու ինձ քծնու՞մ ես, Տիրան, ուզում ես սիրտս շահե՞լ…

Տիրան- Օ ոչ-ոչ, իշխան… */Ծիծաղում է/* Հասկացա՜, պարտքս եք վերադարձնում… Երբ առաջին անգամ հանդիպեցինք արքունիքում, այն օրը ես ձեզ կասկածեցի քծնանքի մեջ:

Արքունապետ- Լավ հիշեցիր… Ես անգամ արքային չեմ քծնել: Իմ այդ վարքագծին ծանոթ է իմ զինակից ընկեր Մերուժանը, կարող է վկայել:

Պահնորդ- Այո-այո, իշխանը իրեն շատ ազնիվ էր պահում նաեւ սպարապետի հետ լարված հարաբերություններում:

Տիրան- Հիմա ոչ մի նշույլ չեմ կասկածում ձեր… անքծնալից, պայծառհոգի վարքին: Շնորհակալ եմ ձեր վարքի ու էության համար, իշխան: Երկուսիս կարելի է վարքակիցներ կոչել: Բայց պիտի ասեմ ի սրտե, արգո իշխան. մենք քաջ հասկանում ենք, թե դուք ինչ մեծ ռիսկի եք դիմում՝ ապաստան տալով մեզ… Դուք նորից կարող եք արժանանալ Տրդատի զայրույթին. այս անգամ երեւի նա ձեզ չների… Իշխան, առաջարկում եմ միայն մի քանի օր հյուրընկալել մեզ այստեղ, ապա թողեք, որ մենք հեռանանք: Մենք կփորձենք մեզ պահպանել հայոց հեռավոր նահանգներում…

Արքունապետ- Անհոգ մնա, Տիրան, եթե պետք լինի, տարիներով էլ կպահեմ ձեզ: Ես իրավիճակին ավելի լավ եմ տիրապետում եւ գիտեմ՝ ինչպես պիտի վարվենք այսուհետ. դուք այստեղ կմնաք այնքան ժամանակ, որքան հանգամանքները դա կթելադրեն, նաեւ՝ որքան իմ սիրտը կուզի… Հուսամ՝ իմ սրտին դեմ չեք գնա: Եվ պիտի հայտնեմ, վերջապես, որ այստեղ հյուրընկալվելու եք ոչ միայն դուք… Կարծես թե մոռացել եք նրանց, արգո դերասաններ… */Ծափ է զարկում: Ներս է մտնում սպասավորը. դիմում է վերջինիս/:* Ներս ուղեկցիր մեր հյուր կանանց: */Սպասավորը փութով հեռանում է: Դերասանները տարակուսանքով ու հարցական միմյանց են նայում, ապա արքունապետին/:*

Տիրան- Ես կռահու՜մ եմ… ես հասկանու՜մ եմ… Ինչպիսի՜ անակնկալ է իշխանը պատրաստել մեզ համար…

Դերասան 1- Ես էլ հասկացա… դա մե՜ծ նվեր կլինի բոլորիս…

Դերասաններ 2 եւ 3- Ի՜նչ… ի՜նչ…

Արքունապետ- Դե, ձեր թատերախումբը պետք է լրվի, չէ՞… Հա, Տի-

րան, մեր ամրոցում եւ մերձակա գյուղերում կան ջահելներ, որոնք կարող են մասնակցել ձեր ներկայացումներին. կարո՞ղ ես նրանց ներգրավել հետագա թատերախաղերում…

Տիրան- Մեծագույն սիրով, իշխան, վաղուց ես համալրում չեմ ունեցել իմ թատրոնում, մեզ նոր ուժեր պետք են:

Արքունապետ- Բարի:

/Ներս են մտնում դերասան կանայք՝ սպասավորի ուղեկցությամբ: Տեսնելով խաղընկերներին՝ նրանք ճիչ ու ուրախությամբ վազում են նրանց մոտ/:

Դերասան 2 */գրկի մեջ առնելով ընկերուհուն/*- Շուշանի՜կ… իմ անգի՜ն Շուշանիկ…

Դերասան 3 */գրկի մեջ առնելով ընկերուհուն/*- Սաթենի՜կ, իմ հրա՜շք Սաթենիկ…

Տիրան- Դե թողեք՝ մենք էլ գրկենք մեր հրեշտակներին:

Դերասան 1- Հա, մեզ էլ հերթ տվեք:

/Տիրանն ու Դերասան 1-ը նույնպես գրկախառնվում ու ողջագուրվում են կին դերասանների հետ/:

Տիրան- Ողջ-առո՞ղջ եք… լա՞վ եք, աղջիկներ…

Կին դերասաններ- Լավ ենք… լավ… երախտապարտ ենք բոլորիդ…

Տիրան- Իշխան Միհրանին ու նրա զինակից Մերուժանին երախտապարտ եղեք: Մեր այս ազատությունն ու հանդիպումը նրանց մտքի ու գործողությունների արգասիքն են:

/Կին դերասանները խոնարհվում են արքունապետի ու պահնորդի առաջ/:

Կին դերասաններ- Շնորհակալ ենք… Թող մեր աստվածները ձեզ պահապան լինեն:

Արքունապետ- Ապրեք, աղջիկներ, դուք խիզախ ու տոկուն եք… Դե հիմա, երբ բոլորս հավաքվել ենք, գնանք ճաշատուն. դուք երկար ու դժվարին ճանապարհ եք կտրել, նախ՝ ձեզ հարկ է մի լավ սնվել ու հանգստանալ:

Տիրան- Իսկ այնուհետեւ, մի փոքր հանգիստ առնելուց հետո, ես առաջարկում եմ ձեզ, սիրելի իշխան, որ դուք թույլ տաք՝ ձեր ամրոցի բոլոր բնակիչների առջեւ ներկայացնել Տիգրան Մեծին նվիրված մեր թատերգությունը. այն ամբողջացրել ենք բանտում գտնվելու ժամանակ: Այսօրվա մեր ելույթը կլինի այդ թատերգության ամբողջական առաջնախաղը: Դա մի իսկական ցուցք կլինի՝ մտքի, աչքի, հոգու ու ոգու համար: Ի՞նչ կասեք, իշխան…

Արքունապետ- Ուրախ կլինենք՝ տեսնելու ձեր ցուցքը, Ոսկեբերան… Հիմա հանգիստ հոգով կնայեմ Մեծն Տիգրանին նվիրված թատերախաղը:

Գնացինք: */Բոլորը դանդաղ, զրուցելով շարժվում են դեպի ելքը/:*

Տիրան- Այո, Տրդատի մոլեգին ձայնը այստեղ չենք լսի՝ «ես ձեզ կգլխատե՛մ»... */ծաղրանմանակելով/* «ես ձեզ կհոշոտե՛մ»... */ծիծաղում է/:*

Դերասան1 */շարունակելով Տիրանին/*- Դուք ինձ ծաղրու՛մ եք...

Արքունապետ- Գիտե՞ք՝ այդ Տրդատը տգետ ու անհասկացող չէ, բայց նա պարթեւ է՝ նրանց պատվիրակը... Հասցրի նկատել, որ նա ուզում է դուր գալ մեզ՝ հայերիս, եւ ամեն ինչ անում է, որ նրա տոհմը՝ Արշակունիները, հիմնավորապես երկար իշխեն Հայքում...

Տիրան- Այ դա վատ լուր եք ասում, իշխան:

Արքունապետ- Ի՞նչ արած, պետք է իրականությանը սթափ աչքով նայել:

Պահնորդ- Տիրան, իսկ դուք այստեղ չե՞ք խաղալու էն զավեշտալի ցուցքը՝ թատրոնը, որտեղ Տրդատի ու Ներոնի տնազն եք անում... Ծա՜տ զվարճալի էր... Ծա՜տ ծիծաղեցինք... Եթե ինձ դուր եկած չլիներ ձեր էդ թատերախաղը, ես հաստատ ձեր փախուստը չէի կազմակերպի:

Տիրան- Երախտապարտ ենք քեզ, արգո Մերուժան. դու թատերական ուժեղ հոտառություն ունես, եւ համարձակ այր ես: Հռովմեական թեմայով այդ սատիրան Բզնունիներին կմատուցենք, երբ նրանք կամենան... Իսկ դու չէ՞ր ցանկանա գործակցել մեզ հետ. հիմա մենք որոշ չափով բախտակից ընկերներ ենք, կարծում եմ՝ նաեւ համախոհներ. քեզ հարմար դերեր կտամ մեր հետագա խաղերում...

Պահնորդ- Դե, ինձնից ի՞նչ դերասան...

Տիրան- Պահնորդի... զինականի դերեր կխաղաս... նաեւ՝ զորավարի: Մեր ներկայացումներում լիքը նման դերեր կան:

Պահնորդ- Մինչեւ հայոց բանակում իմ դիրք ու աստիճանի վերականգնումն առանձնապես կարեւոր զբաղմունք չունեմ... Գուցե՞ իսկապես թատրոնին նվիրեմ էդ ժամանակահատվածը, Տիրան, հը՞...

Տիրան- Ուրախությամբ խնդրում եմ քեզ, Մերուժան, դարձիր իմ դերասան ընկերը...

Պահնորդ- Բայց ինձ երես չտաս, թե չէ կխաբվեմ. ես ընդամենը զինվորական եմ:

Տիրան- Խոստանում եմ՝ քեզ ոչ մի գովասանք, միայն քննադատություն կլսես ինձնից:

/Առանձին լսվում են դերասանների երկխոսությունները/:

Դերասան 2- Ձեռքերդ կոշտացել են, Ծուշանիկ, շա՞տ ես չարչարվել...

Կին դերասան-Ծուշանիկ- Դե, ցախ ու բանջար էինք հավաքում, հաց ու ջուր էինք տանում շինարարներին, նրանց հագուստներն էինք լվանում գետում... Հա, Սուրեն, կարգին չարչարվում էինք, հեչ դերասանի գործեր չէինք անում... Ծուտով էլի կնրբանան ձեռքերս, կտեսնես:

Դերասան 3- Սաթենիկ ջան, ինչքա՞ն ես արեւհարվել…

Կին դերասան-Սաթենիկ- Դե արեւի տակ շատ էինք մնում… Իսկ դու լրիվ գունատ ես, Վահան, արեւի երես չես տեսել հինգ ամիս… իմ չգլխատված բանտարկյալ…*/կամաց ծիծաղում են/:*

Դերասան1 */լսելով ընկերների խոսակցությունը/*- Ոչինչ-ոչինչ, շուտով բոլորդ կվերակագնվեք ձեր սովորական չափ ու ձեւի մեջ: Իսկ մինչ այդ դիմահարդարման նյութերից կօգտվեք, կարծում եմ՝ դրանցից այս ամրոցում կան… Իշխանը պիտի որ հոգացած լինի, նա շա՜տ հեռատես մարդ է:

Տիրան- Եվ շա՜տ թատերասեր… Հենց դա է փրկում մեզ:

/Տիրանը հավասարվում է արքունապետին եւ նրա ականջին, մյուսների համար անլսելի, ինչ-որ բան փսփսում: Արքունապետը կամաց ծիծաղելով՝ գլուխն օրորում է: Բոլորը դուրս են գալիս/:

ՎԵՐՋ

փետրվար, 2019

Ծանոթագրություն.

Երրորդ արարում Սոֆոկլեսի «Էդիպ արքան Կոլոնոսում» թատերկից քաղված մեջբերումներն՝ Արամ Թոփչյանի թարգմանությունից /Սոֆոկլես. «Ողբերգություններ», «Զանգակ» հր., Երեւան, 2016/:

Չափածո մյուս հատվածները հեղինակային են:

ԱՐՔԱՆ ԵՎ ՀԵՐՈՍՆԵՐԸ

/գերիրական դրամա 5 արարով/

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

Արքա Մաքրին Թեյ
Խորհրդական Շամիր
Ծրագրավորող Սոս Զովյան
Գրող Փանուկ Գոյան
Նախարար Բեյ Լաթիմ
Արքայի եղբայր Սամիր
Պահնորդ
Համակարգչային աշխատակիցներ

Ֆաուստ
Համլետ
Դոն Ժուան
Ոդիսեւս
Դոն Կիխոտ
Աննա Կարենինա
Փոքրիկ Իշխան
Նավապետ

ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ

/Արքան իր ընդարձակ ու շքեղ առանձնասենյակում «երկխոսում» է թութակի հետ/:

ԱՐՔԱ- Դու բոլորից լավ ես կրկնում ինձ, Թութո… Իմ կամքն անթերի կրկնում ես… Հա, իմ լավագույն կամակատարն ես, բայց՝ անշահասեր, մաքրասիրտ. պաշտոնդ կբարձրացնեմ շուտով, դու շատ ավելին արժես, քան ինձ ծառայող էդ շողոքորթների ու խարդախների բանակը, որ ինձ պաշարած է պահում գիշեր ու զօր… Դե, Թութո, ասա */վանկատելով/* Գե-նե-րալ-ներդ տգետ ու վախ-կոտ են: */Թութակը կրկնում է՝ գեներալներդ տգետ ու վախկոտ են/:* Ապրես, Թութո: Իսկ հիմա ասա */վանկատելով/* Նա-խա-բար-ներդ գող ու կա-շա-ռա-կեր են: */Թութակը կրկնում է՝ նախարարներդ գող ու կաշառակեր են/:* Ապրես, ապրես, իմ ճշմարտախոս ընկեր… Իսկ հիմա, Թութո, ասա */վանկատելով/* Եղ-բայր-ներդ ըն-չա-քաղց ու նենգ են: */Թութակը կրկնում է՝ եղբայրներդ ընչաքաղց ու նենգ են/:* Ապրես, իմ ազնիվ բարեկամ… Իսկ հիմա ասա */վանկատելով/* Ար-քա-յա-կինն ու ար-քա-յա-դուստ-րերը… ա-նա-ռակ են: */Թութակը փորձում է կրկնել, բայց չի հաջողվում/:* Ի՞նչ, համամիտ չե՞ս ինձ հետ, Թութո… Քո սեփական կարծի՞քն էիր ուզում ասել, թե՞ պարզապես ծանրագույն ճշմարտությունները քո ու-ժերից վեր է հաստատելը, հը՞, Թութո… Լավ, քեզ չեմ ստիպում, որ հստակ դիրքորոշում հայտնես. գուցե ես խտացնում եմ գույները, իրավունք ունես ինձ հետ չհամաձայնվելու: Բայց նկատի ունեցիր, իմ ազնիվ բարեկամ, ես էդ կանանց, նաեւ ինձ շրջապատող որկրամոլների, սինլքորների եւ քսու քամելիոնների ոհմակին լավ եմ ճանաչում… Չես պատկերացնում, Թութո, թե որքան տխուր ու տաղտկալի է նման միջավայրում ապրելն ու թագավորելը. ես ամեն օր գոյության պայքար եմ մղում…

/Ներս է մտնում խորհրդական Շամիրը/:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Ներեցեք, արքա, ես պետք է տեղյակ պահեմ ձեր այսօրվա հանդիպումների ժամանակացույցի մասին…

ԱՐՔԱ- Դե, Շամիր, ի՞նչ օր ես նախատեսել ինձ համար…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Ժամը 12-ին ձեզ կայցելի Մեծ Բրիտանիայի դեսպանը:

ԱՐՔԱ */ջղային տոնով/*- Բայց ես նրան ընդունել եմ ընդամենը մեկ շաբաթ առաջ… Ի՞նչ է ուզում էդ պարարտ… */զսպելով իրեն ու ավելի հանգիստ տոնով/* Լավ, թող գա, ես գիտեմ՝ ինչ է ուզում, բայց չի ստանա. նա կարծում է, թե կարող է ճնշում գործադրել ինձ վրա… Նրանց ապրանքների վրա դրված բարձր մաքսատուրքը կպահպանենք, չէ՞, Շամիր…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Անշուշտ, արքա… Ժամը 13-ին ձեզ ընդունելության կգա Պակիստանի արտգործնախարարը:

ԱՐՔԱ- Օ՜ֆ… ո՞նց եմ գարշում էդ կարգի լպրծուններից… Նրանք շարունակ քծնում ու սպառնում են… Եվ ինչու՞ է թվում էդ պակիստանցուն, թե կրոնը բավարար հող է՝ միասին կեղտոտ գործեր անելու համար… Ես դա կասեմ նրան, ճակատին կասեմ, որ իրեն հավաքի եւ չփորձի այլեւս մեզ պարզամիտ երեխաների տեղ դնել: Թող իմանա պակիստանցին, որ Քամարի արքա Մաքրին Թեյը */աջով խփում է իր կրծքին/* չի մասնակցում կեղտոտ խաղերի… Հաջորդը, Շամիր:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Ժամը 14-ին հանդիպում ունեք հրեական համայնքի ներկայացուցիչների հետ:

ԱՐՔԱ- Այո, ես խոստացել եմ ունկնդրել նրանց. տեսնենք՝ ինչ խնդիրներով են մտահոգ… Հրեաների հետ պետք է շատ խելամիտ վարվենք, թե չէ Աստծո անեծքը կիջնի մեզ վրա:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Այո… Դուք, Ձերդ գերազանցություն, ցանկություն եք հայտնել այսօր ներկա գտնվել նորագույն տեխնոլոգիաների ազգային կենտրոնի բացմանը. դա տեղի կունենա ժամը 16-ին, որից հետո դուք արդեն կարող եք գնալ ձեր եղբայր Ռոշանի աղջկա հարսանիքին…

ԱՐՔԱ- Ա՜, հարսանիք էլ ունենք, ես մոռացել էի… Նվերները պատրա՞ստ են…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Այո, արքա:

ԱՐՔԱ- Նվերները ուղարկեք, ես հավանաբար չգնամ, ավելի կարեւոր գործեր ունեմ… ոչ պաշտոնական:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Ռոշանը ձեր եղբայրների մեջ թերեւս ամենագնահատելի մարդն է, նա շատ կնեղանա ձեզնից, արքա:

ԱՐՔԱ- Թող նեղանա… Թող հասկանա, որ չի կարելի արքա եղբորը զրպարտել:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Նա շատ է զղջացել դրա համար, ներում է խնդրել ձեզնից:

ԱՐՔԱ- Իմ զայրույթը դեռ չի անցել… Լավ, վերջացրի՞նք, Շամիր:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Ձեզ հետ շտապ տեսակցել է ուզում ներքին անվտանգության նախարար Բեյ Լաթիմը: Նա ձեր ընդունարանի նախասրահում սպասում է:

ԱՐՔԱ- Ասա, թող ներս գա: */Խորհրդականը դուրս է գնում: Արքան նորից դիմում է թութակին/.* Թութո, ասա */վանկատելով/՝* Բեյ Լա-թի-մը կույր ու խաո-նա-կիչ է: */Թութակը կրկնում է Արքայի խոսքը: Այդ պահին ներս է մտնում նախարար Բեյ Լաթիմը. նա լսում է թութակի կրկնող ձայնը, եւ նեղացածի տեսք ընդունելով՝ կանգնում է արքայի առաջ/:* Նույնիսկ չես ողջունում արքայիդ, Լաթիմ… Ի՞նչ է պատահել…

ՆԱԽԱՐԱՐ */անտրամադիր/*- Աստված ձեզ պահապան… հազար ողջույն, արքա: Եկա ձեզ հայտնելու, որ ձեր կրտսեր եղբայր Սամիրը իր մերձավոր ընկերների շրջապատում երեկ հայտարարել է, որ շուտով գահը ժառանգելու է ձեզնից…

ԱՐՔԱ */զայրացած/*- Էլի նույն բանը… Նա երեւի հարբած է եղել, այո՞…

ՆԱԽԱՐԱՐ- Այո, արքա… Կամ՝ խմած է ձեւանում…

ԱՐՔԱ- Իմ անունից հրահանգիր Սամիրին, որ այլեւս հարբեցողությամբ չզբաղվի եւ ընկերական նման երեկույթներ չկազմակերպի, տեսնենք՝ այդուհետ իրեն ոնց կպահի: Եթե շարունակի կրկնել իր ցնորական գահատենչությունը, նրա հարցը կլուծեմ… իմ այս ձեռքով */թափահարում է բռունցքը/:*

ՆԱԽԱՐԱՐ- Լավ, Սամիրին կփոխանցեմ ձեր հրահանգը, եւ կհետեւենք նրան:

ԱՐՔԱ- Բարի, ուրի՞շ…

ՆԱԽԱՐԱՐ- Ձերդ գերազանցություն, ինչպե՞ս վարվենք ապստամբների այն խմբի հետ, որ արդեն երեք տարի բանտում է առանց դատ ու դատաստանի… Դուք խոստացել եք այս օրերին անդրադառնալ նրանց հարցին, միջազգային հանրությունը շարունակում է հարձակումներ գործել մեզ վրա այդ կապակցությամբ:

ԱՐՔԱ- Ազատ արձակեք նրանց եւ… արտաքսեք երկրից: Ապստամբությունը շատ վատ տարբերակ է երկրում բարեփոխումներ անելու համար: Պետք է քայլ առ քայլ առաջ գնալ, եւ ոչ թե ինքնակործան ոստյուններ գործել… Արտաքսեք նրանց, հետագայում գուցե նրանց ներում շնորհենք:

ՆԱԽԱՐԱՐ- Հեռատես որոշում է, արքա: Ես հիմա կգնամ ու համապատասխան կարգադրություններ կանեմ… Ես վերջացրի, թույլ տվեք գնալ:

ԱՐՔԱ- Կարող ես գնալ, Լաթիմ… Եվ միշտ այնպես գործիր, որ մենք արտառոց նոր հարցերի մեջ չխրվենք:

ՆԱԽԱՐԱՐ- Հրամանդ, արքա */թեթեւակի խոնարհվում ու հեռանում է/:*

ԱՐՔԱ */կրկին դիմելով թութակին/*- Լսեցի՞ր, Թութո, իմ կրտսեր եղբայր Սամիրը տենչում է իմ գահը… Ասա */վանկատելով/* Սա-մի-րը տխ-մար ու սրի-կա է: */Թութակը կրկնում է Արքայի խոսքը/:* Ապրես, Թութո… Գիտե՞ս՝ Սամիրը իմ կրտսեր եղբայրն է, ես նրան սիրում եմ, բայց նա… տխմար ու սրիկա է… Ի՞նչ անեմ, Թութո… */Թութակը կրկնում է՝ ի՞նչ անեմ/:* Հա՜, դու էլ չգիտես պատասխանը, բարեկամս… Լավ, ուրեմն ամեն ինչ թողնենք՝ ինչպես կա. թող Սամիրը մնա տխմար ու սրիկա… եւ թող մնա իմ եղբայրը: */Դադար/* Որքա՜ն գարշելի ու տաղտկալի է էս ամենը, Տեր աստված… Ո՞նց եմ հոգնել ամենքից… էդ խարդախներից ու թափթփուկներից… տականքներից… Նրանցից գարշահոտ ձանձրույթի ամպեր են արտազատվում: */Դադար/:* Ես երազում եմ նոր շրջապատ ունենալ, շփվել ու ընկե-

ռանալ նոր ու աննման մարդկաց հետ… մաքուր, գեղեցիկ, վեհանձն, համակրելի ու խանդավառող արարածների հետ… Կարոտ եմ այնպիսի մարդկանց, որոնց ներսից ասես արեւ է ճառագում կամ… լուսին է ելնում… թեկուզեւ փոքրիկ աստղեր դուրս գան… Որտե՞ղ են նրանք… Ծրջապատիս մարդիկ ինձ շուտով ներքուստ կայլանդակեն վերջնականապես, ապա եւ կկործանեն ֆիզիկապես: Ինձ պետք են անհատներ, որ ինձ կներշնչեն ու կօգնեն՝ նոր հայացքով նայել աշխարհին ու մարդկանց, նրանց հետ ընդհանուր… հաճելի լեզու գտնելու կարողություն կարթնացնեն իմ մեջ… ինձ, Աստծո հաճությամբ, կարժանացնեն վերածնվելու շնորհին… Օգնեն, որ ես անսայթաք ու բարեհաջող իշխեմ… Այդպիսի մարդիկ պետք է որ լինեն, չէ՞, Թութո… */Դադար/:* Լռում ես, իմ լավ բարեկամ: Քո լռությունն անհամաձայնություն է ինձ հետ, գիտեմ, բայց դա չի նշանակում, թե ճշմարիտը դու ես: Իմ երազանքի մարդիկ ինչ-որ տեղ հաստատ կան, Թութո… նրանց գտնել է պետք… կամ՝ ստեղծել: Թե չէ՝ մահացու ձանձրախտն է համակել ինձ… այն արդեն քայքայում է իմ ներսը. ես դրան երկար դիմակայել չեմ կարող: Ես ընդամենը մարդ արարած եմ, թեեւ հսկայական իշխանություն ու հարստություն ունեմ… Ոչինչ չարժեն այդ իշխանությունն ու հարստությունը հոգու հարմարավետության ու իսկական բերկրանքի համեմատությամբ, Թութո… */Դադար/:* Ծամի՜ր…

/Շտապ ներս է մտնում խորհրդական Ծամիրը/:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Այո, արքա, լսում եմ…

ԱՐՔԱ- Ինձ մահացու ձանձրախտն է հետապնդում, Ծամիր, պետք է մի ելք գտնել…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Հա, գիտեմ, արքա, էդ մասին մի երկու անգամ արդեն խոստովանել եք: */Դադար/* Ուզու՞մ եք՝ էն ծրագրավորողին կանչեմ ձեզ մոտ, նա ուզում էր ձեր միտքն ու հոգին զվարթացնող, հետաքրքիր ու նշանակալից մի բան առաջարկել… Դուք հետաձգեցիք նրա հետ հանդիպումը:

ԱՐՔԱՆ- Էն հայի մասի՞ն է խոսքը, որ համակարգչային ընկերություն է հիմնել որդիներիս համար…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Այո, Ձերդ գերազանցություն. նա տասնյակ նոր ու չլսված ծրագրեր է ստեղծել, նաեւ հմուտ ձեռներեց է… Որդիներդ կարող են հաստատել:

ԱՐՔԱ- Լավ… վաղը առավոտյան էդ ծրագրավորողին կանչիր ինձ մոտ… Չէ, ես կգնամ նրա աշխատավայրը, անակնկալ կմատուցեմ:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Ուրեմն վաղվա ձեր առաջին հանդիպումը նախատեսենք… ժամը 11-ին… Հարմա՞ր է, արքա…

ԱՐՔԱ- Հարմար է, Ծամիր… Ազատ ես: */Խորհրդականը դուրս է գնում: Արքան դարձյալ դիմում է թութակին/.* Թութո, ասա */վանկատելով/* խոր-հր-

դա-կան Ծա-միրը… չէ, նրան խնայենք… Նա իմ ընկերն է ուսանողական տարիներից, նա լավ ու ազնիվ ընկեր է… Դու հանգստացիր, Թութո՝ իմ հլու ու ճշմարտախոս կամակատար, իսկ ես տեսնեմ՝ էս պահին ոնց է գվվում աշխարհը… */Մոտենում է համակարգչին եւ թռուցիկ ծանոթանում համացանցային լրահոսին/:* Ահա թե ի՞նչ… Հը՛մ… Ինչպիսի՜ հիմարություն… Այ քեզ ստահակներ… Դե զզվեցի… կորեք ձեր էդ ստոր խարդավանքներով: */Վեր է կենում, նայում ձեռքի ժամացույցին/:* Մինչեւ բրիտանացի դեսպանի հետ հանդիպումը դեռ 35 րոպե ունեմ: */Հանում է հագի վերին շորերը, կանգնում գլխիվայր/:* Թութո, դու էլ յոգա պարապիր… փորձիր գլխիվայր կանգնել, էսպես ուրիշ կերպ ես տեսնում մարդկանց ու աշխարհը…

ԱՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ

/Համակարգչային ընկերության սրահում ծրագրավորող Սոս Զովյանը եւ 4-5 աշխատակից՝ մոնիտորների առջեւ նստած՝ սուզվել են գործի մեջ: Ներս է մտնում Արքան՝ խորհրդականի եւ գրողի ուղեկցությամբ: Նրանք կանգ են առնում սրահի կենտրոնում/:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Ահա, Ձերդ գերազանցություն, հայ ծրագրավորող Սոս Զովյանը… */Ձեռքը առաջ մեկնելով՝ ցույց է տալիս ծրագրավորողին: Վերջինս լսելով իր անունը՝ հետ է նայում եւ փութով կանգնում: Մյուս աշխատակիցները նույնպես արագ ոտքի են ելնում/:*

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Ներեցեք… Ձերդ գերազանցություն… Չնկատեցինք՝ ինչպես մտաք մեզ մոտ…

ԱՐՔԱ- Մի անհանգստացեք… Արքայի այցերն երբեմն այսպես պետք է աննկատ լինեն: */Մոտենում է ծրագրավորողին եւ ձեռքով բարեւում նրան: Վերջինս թեթեւակի խոնարհվում է, նույնկերպ են վարվում մյուս աշխատակիցները/:* Դե, ինչպե՞ս է իմ հայ բարեկամը…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Շնորհակալ եմ, Ձերդ գերազանցություն, աշխատում ենք նոր ծրագրերի վրա: Ձեր որդիները բոլոր պայմանները ստեղծել են արդյունավետ աշխատանքի համար:

ԱՐՔԱ- Այս ընկերությունում դու ունե՞ս փայաբաժին…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Ոչ, արքա, ես այստեղ վարձու մասնագետ եմ… Բարձր աշխատավարձ եմ ստանում, շնորհակալ եմ:

ԱՐՔԱ- Որդուս՝ Զուրաբին կասեմ, որ քեզ էլ մշտական փայաբաժին հատկացնի: Կարծում եմ՝ դու արժանի ես դրան:

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Շնորհակալ եմ, Ձերդ գերազանցություն:

ԱՐՔԱ */նայում է աշխատակից ներկաներին/*- Ձեր անձնակազմը… որա-

կապես ու քանակապես… բավարարու՞մ է գաղափարներդ իրագործելու համար…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Առայժմ՝ այո, Ձերդ գերազանցություն:

ԱՐՔԱ- Երբ նոր մասնագետներ պետք լինեն, չքաշվես, ասա այդ մասին տղաներին կամ՝ ինձ:

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Շնորհակալ եմ, Ձերդ գերազանցություն:

ԱՐՔԱ- Իսկ հիմա, բարեկամս, անդրադառնանք այն ծրագրին, որ դու ուզում էիր ինձ ներկայացնել ամիսներ առաջ…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Այո-այո, Ձերդ գերազանցություն, հիանալի հիշում եմ, սպասում էի, թե երբ կցանկանաք տեսնել… Այն դեռ ոչ ոքի չեմ ցուցադրել:

ԱՐՔԱ- Հիմա, պարոն Սոս, կարո՞ղ ես քո այդ ծրագրի… շնորհանդեսն անել մեզ համար…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Իհարկե, արքա: Ուզում եք բոլորի… */հայացքով ընդգրկում է ողջ սրահը/* մասնակցությա՞մբ ներկայացնեմ այդ ծագիրը…

ԱՐՔԱ- Իսկ ինչու՞ ոչ… Այդտեղ որեւէ գաղտնիք կա՞… պետական, ռազմական, առեւտրային…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Ոչ, Ձերդ գերազանցություն: Պարզապես կարծում էի, թե ծրագիրը միայն ձեզ պետք է մատուցվի:

ԱՐՔԱ- Ոչինչ, թող քո եւ իմ գործընկերները նույնպես տեղյակ լինեն:

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Շատ լավ… Հիմա, խնդրում եմ՝ տեղավորվեք աթոռներին, որ հարմարավետ լինի ձեզ համար՝ հետեւելու շնորհանդեսին… */Ծրագրավորողը եւ աշխատակիցներից երկուսը արագորեն աթոռներ են հրամցնում Արքային ու նրա երկու ուղեկիցներին, որոնք նստում են փոքրինչ հեռու՝ ազատ թողնելով սրահի կենտրոնը: Ծրագրավորողը զբաղեցնում է իր տեղը, բայց արդեն՝ դեմքով դեպի այցելուները/:* Սկսեցինք… */Արագորեն տկտկացնում է համակարգչի ստեղնաշարի վրա/:* Ծրագիրը կոչվում է՝ Գրական հերոսները եւ մենք… Ես ստեղծել եմ հանրահայտ գրական կերպարներից յոթի հոլոգրամները եւ հիմա հերթով նրանց կներկայացնեմ. նրանք կարող են խոսել… պատմել իրենց մասին, անգամ պատասխանել ձեր որոշ հարցերի… Առայժմ՝ այդքանը: Այսպիսով՝ առաջին կերպար՝ Դոն Կիխոտ… */ցույց է տրվում Դոն Կիխոտի հոլոգրամը/:*

ԱՐՔԱ- Դոն Կիխո՞տ…

ԳՐՈՂ- Այո, Ձերդ գերազանցություն… Իսպանացի գրող Սերվանտեսի ստեղծած հերոսն է… Նա շա՜տ զվարճալի կերպար է:

Դոն Կիխոտի հոլոգրամ- Բարեւ ձեզ… Ես Լամանչեցի հիդալգո Դոն Կիխոտն եմ… Հիսուն տարեկան եմ… Ունեմ մի զրահ, մի ծեր ու լղար ձի, անունը՝ Ռոսինանտ… Շատ ասպետական վեպեր եմ կարդացել, եւ դրանց շշմեցնող ազդեցության տակ դարձել եմ թափառական ասպետ: Իմ երեւ-

ակայության մեջ պատկերվում են մարտեր, արկածներ, ասպետական սխրագործություններ… Ես չեմ ցանկանում նկատել, որ ժամանակները փոխվել են, եւ այլեւս չկան թափառական ասպետներ… Պանդոկը ինձ թվում է դղյակ, հողմաղացները՝ հսկա հրեշներ, ոչխարի հոտը՝ հակառակորդի զորք, թեթեւաբարո կանայք՝ ազնվազարմ օրիորդներ…

ԱՐՔԱ- Մ՛յ քեզ խելառ… Բայց իրոք շատ զվարճալին է…

Դոն Կիխոտի հոլոգրամ- Ես փորձում եմ պաշտպանել ճնշվածներին, երկրի երեսից վերացնել բռնությունն ու անարդարությունը…

ԱՐՔԱ- Ահա թե ի՞նչ…

Դոն Կիխոտի հոլոգրամ- Բայց ես իմ պայքարի մեջ միշտ անհաջողության եմ մատնվում, ծաղրուծանակի ենթարկվում, սակայն երբեք չեմ հրաժարվում իմ նպատակներից, չեմ հուսահատվում:

ԱՐՔԱ- Այ թե համառ խենթն է այս Դոն Կիխոտը…

Դոն Կիխոտի հոլոգրամ- Հա, չմոռանամ ասել, որ իմ սրտի տիրուհին է Ալդոնսա Լորենսոն, բայց ես նրան անվանում եմ Տոբոսի Դուլսինեա: Իսկ իմ զինակից ընկերն է Սանչո Պանսան. նա միշտ ավանակով է շրջում… հա-հա-հա… */քրքջում է/:*

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Համառոտ՝ այսքանը Դոն Կիխոտից: */Անջատում է հոլոգրամը/:* Ձերդ գերազանցություն, կցանկանայի՞ք, որ նա մեկ-մեկ ընկերակցեր ձեզ…

ԱՐՔԱ- Անշուշտ, պարոն Սոս… Դոն Կիխոտի հետ չես ձանձրանա… կարծում եմ:

ԳՐՈՂ- Այո, Արքա, նա անչափ հետաքրքիր արարած է, նրա հետ կարելի է անմոռանալի օրեր անցկացնել:

ԱՐՔԱ- Այդպես էլ կանենք… Հաջորդը:

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Հաջորդը… Ֆաուստն է… */Ցույց է տալիս Ֆաուստի հոլոգրամը/:*

ԳՐՈՂ- Պարոն Զովյան, իսկ ո՞ւմ ստեղծած Ֆաուստն եք դուք մեզ մատուցում…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Գյոթեի Ֆաուստի հիման վրա եմ նրա հոլոգրամը պատրաստել:

ԳՐՈՂ- Արքա, այս Ֆաուստի հեղինակը գերմանացի գրող Յոհան Վոլֆգանգ ֆոն Գյոթեն է: Շատ գրողներ են անդրադարձել Ֆաուստի կերպարին, սակայն Գյոթեի ստեղծած կերպարը ամենահաջողվածն ու ամենագրավիչն է: Նա երկար տարիներ է աշխատել այդ գրքի վրա, բայց այդպես էլ լիովին չի ավարտել…

ԱՐՔԱ- Տեսնո՞ւմ եք, թե ինչ բանիմաց խորհրդական ունեմ… Ապրեք, Փանուկ Գոյան:

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Հիմա Ֆաուստը հակիրճ կներկայացնի իրեն…

Ֆաուստի հոլոգրամ- Բարեւ ձեզ, Ձերդ գերազանցություն եւ ներկաներ… Իմ կերպարի հիմքում ընկած է գերմանացի գիտնական, բժիշկ եւ գրբաց Ֆաուստի մասին լեգենդը: Ես՝ որպես գիտնական, մեծ հաջողությունների եմ հասել, սակայն մշտապես դժգոհ եմ իմ կյանքից, ինձ ոչինչ չի գոհացնում ու բավարարում…

ԱՐՔԱ- Այս մարդը բնույթով նման է ինձ:

Ֆաուստի հոլոգրամ- Ի վերջո ես դաշինք եմ կնքել սատանայի հետ… իմ հոգին փոխանակել եմ անսահման գիտելիքի հետ:

ԱՐՔԱ- Հանուն ինչի՞…

Ֆաուստի հոլոգրամ- Որպեսզի անսպառ լինի իմ մեջ գործունեության ոգին… Ես խռովահույզ, բուռն հանճար եմ, ով իր ողջ կյանքը նվիրաբերել է գիտությանը, իմ համբավը տարածվել է աշխարհով մեկ… Երկիր մոլորակի տարբեր ծագերից բազմաթիվ աշակերտներ են գալիս ինձ մոտ ուսում առնելու: Բայց ես գիտեմ, թե որքան չնչին են իմ գիտելիքները բնության չբացահայտված գաղտնիքների համեմատ…

ԱՐՔԱ- Այո, աշխարհը դեռ լիքն է գաղտնիքներով…

Ֆաուստի հոլոգրամ- Ես ուզում եմ վերափոխել աշխարհը, իմանալ տիեզերքի օրենքները, գտնել դրանք վերափոխելու ուղիները, քանի որ այս ողորմելի աշխարհը ես համարում եմ արհամարհանքի արժանի իրողություն…

ԱՐՔԱ- Ինչպիսի՜ ճշմարիտ ու զորեղ խոսքեր…

Ֆաուստի հոլոգրամ- Ինձ չեն հրապուրում ոսկին ու փառքը, իշխանությունն ու երկրային վայելքները: Իմ ձգտումներն անչափ մեծ են, բարձր ու վեհ, համամարդկային: Ես մարդկանց համար որոնում եմ գեղեցիկն ու կատարյալը, ուզում եմ դրախտ կառուցել երկրի վրա…

ԱՐՔԱ- Հետաքրքի՜ր է… Շատ ուժեղ տիպ է երեւում…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Ֆաուստից առայժմ այսքանը… */Անջատում է հոլոգրամը/:*

ԱՐՔԱ- Սպասեք, պարոն Սոս, թող այդ Ֆաուստը մի քանի խելոք դատողություններ եւս անի, ուզում եմ տեսնել, թե նա ինչպես է մտածում…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Սիրով, Ձերդ գերազանցություն: */Միացնում է Ֆաուստի հոլոգրամը/:* Ֆաուստ, մի քիչ խոսիր մարդկանցից ու կյանքից…

Ֆաուստի հոլոգրամ- Խնդրեմ… Գործն այսօրվա մի թող վաղվան, /Ձուր մի կորցրեք եւ ոչ մի օր, /Մարդն ինչ գտնի հնարավոր, /Պիտի որսա հաստատակամ: /Այնուհետեւ ոչ մի անգամ/ Բաց չի թողնի գտածը նա, /Եվ գործն առաջ միշտ կընթանա… */Դադար/* Չեն էլ հասկանում մարդիկ ապիկար, /Առանց քրտինքի՝ չիք երջանկություն, /Թե ունենան էլ իմաստության քար, /Ձուր է, չեն դառնա նրանք իմաստուն…

ԱՐՔԱ- Նա կասկածում է իմ իմաստության վրա…

Ֆաուստի հոլոգրամ- Կասկածն անգղ է՝ կյանք հոշոտող… Ամբոխն ինչքան էլ լինի վատ,/ Մարդը դարձյալ մարդով է մարդ:

ԱՐՔԱ- Լավ, հերիք է… Անշուշտ, շատ խելացին է այդ Ֆաուստը:

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ */անջատելով Ֆաուստի հոլոգրամը/*- Ձերդ գերազանցություն, Ֆաուստը ձեզ համար գրավի՞չ կերպար է…

ԱՐՔԱ- Իհարկե… Նա էլ կընկերակցի ինձ… անհրաժեշտության դեպքում…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Բարի, անցնենք հաջորդին… Ոդիսեւս: */Միացնում է հոլոգրամը/:*

ԳՐՈՂ */Արքային/*- Հունական Իթակե կղզու արքան էր…

ԱՐՔԱ- Ոդիսեւսը արքա՞ էր…

ԳՐՈՂ- Այո, Ձերդ գերազանցություն… Նրան փայլուն ձեւով գրական կերպավորում է տվել հույն մեծ բանաստեղծ Հոմերոսը… Նրա վիպերգությունն այդպես էլ կոչվում է՝ «Ոդիսական»: Այն գրվել է մթա. 8-րդ դարում:

Ոդիսեւսի հոլոգրամ- Բարեւ ձեզ, տիարք… Ես Լաերտի որդին եմ, մասնակցել եմ Տրոյական պատերազմին… Հոմերոսը չլիներ՝ մարդիկ վաղուց մոռացել էին այդ սխրալից ու քաջահանդես պատերազմը… Այնքան էլ համամիտ չեմ, բայց ես սերունդներին ներկայանում եմ որպես խորամանկության ու հնարամտության մարմնացում… Ես թեեւ կապ ունեմ աստվածների հետ, բայց ավելի շատ կապեր ունեմ մարդկանց հետ:

ԳՐՈՂ- Եվ կանանց հետ, արքա… Ոդիսեւսի կյանքում կանայք ճակատագրական դեր են խաղացել:

ԱՐՔԱ- Կնամո՞լ է…

ԳՐՈՂ- Չէի ասի… ավելի շատ կնամեծար է… Գիտի, թե կնոջը ինչպես պետք է սիրել…

ԱՐՔԱ- Կարգին տղամարդ է:

Ոդիսեւսի հոլոգրամ- Իմ տղամարդկության վրա թող ոչ ոք չկասկածի, վկա՝ աստվածներն ու պատմությունը… Տրոյական պատերազմից հետո ես տասներկու տարի թափառումների մեջ եղա. ոմանք կարծում են, թե ես դիտավորյալ եմ արկածներ փնտրել տունդարձիս, որ ուշ վերադառնամ կնոջս՝ Պենելոպայի մոտ, ինչ է թե՝ մեր սրտերը սառել են միմյանց հանդեպ… Դա ճիշտ չէ: Ես պարզապես դժվարությունների ու փորձությունների մարդ եմ, ինձ չեմ դավաճանել երբեւէ, չեմ դավաճանել նաեւ ինձ սիրողներին… Պենելոպան ինձ միշտ սիրել է, ես էլ՝ նրան:

ԱՐՔԱ */Գրողին/*- Պենելոպան նրա օրինական կի՞նն է…

ԳՐՈՂ- Այո, արքա:

ԱՐՔԱ- Եվ օրինական կնոջը սիրե՞լ է անվերապահ… անգամ թափառումների երկար տարիների՞ն…

ԳՐՈՂ- Այո, արքա:

/Արքան զարմացական գլուխն օրորում է/:

Ոդիսեւսի հոլոգրամ- Ես Կալիպսոյի գրկում անգամ տենչում էի Պենելոպային…

ԱՐՔԱ- Միասեր մարդ է երեւում Ոդիսեւսը. հազվագյուտ մարդկային հատկանիշ…

ԳՐՈՂ- Դոն Ժուանի ուղիղ հակապատկերն է…

ԱՐՔԱ- Դոն Ժուանն ո՞վ է…

ԳՐՈՂ- Նույնպես շատ ուշագրավ գրական հերոս է… Բազմաթիվ կանանց ու գրող-հեղինակների է հրապուրել… Կարծում եմ՝ Դոն Ժուանն էլ կա այս ծրագրում…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ */անջատելով հոլոգրամը եւ արձագանքելով Գրողին/-* Այո, կա: Ձերդ գերազանցություն, Ոդիսեւսը ձեզ հետաքրքրե՞ց, նա ձեզ կարո՞ղ է ընկերակցել…

ԱՐՔԱ- Անպայման… Նա շատ ուշագրավ բաներ կունենա ինձ պատմելու…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Բարի… Հիմա՝ հաջորդը:

/Ներս է մտնում պահնորդը եւ արքային փոխանցում ձեռքի հեռախոսը/:

ՊԱՀՆՈՐԴ */Արքայի ականջին, կամաց/-* Ձերդ գերազանցություն, գեներալ Բենինն է հատուկ ծառայությունից, ասում է՝ հրատապ է…

/Արքան վերցնում է հեռախոսը եւ հեռանում սրահի մի անկյունը: Ներկաները կանգնում են: Արքայի հեռախոսազրույցը գրեթե չի լսվում. միայն մի պահ բարձր հնչում է «ահաբեկչությունՆ» հարցական բառը: Հետո արքան հեռախոսը փոխանցում է պահնորդին/:

ԱՐՔԱ- Ներեցեք, պարոն Սոս, ես պետք է շտապ հեռանամ, անհետաձգելի գործ բացվեց: Քո այդ ծրագիրը կշարունակենք դիտել առաջիկա որեւէ օր: Բայց նախապես ասեմ, որ մտահղացումդ արտակարգ ու փայլուն է… Ես գրականության գիտակ չեմ, վերջին գեղարվեստական գիրքը կարդացել եմ… */նայում է խորհրդականին/:*

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- …մոտ երեսուն տարի առաջ… համալսարանի առաջին կուրսում… Հյուգոյի «Փարիզի Աստվածամոր տաճարն» էր:

ԱՐՔԱ- Այո… գիտակ չեմ, սակայն համոզված նշում եմ, որ քո… հոլոգրամյան հերոսները բավական արտասովոր ու տպավորիչ մարդիկ են, նրանց հետ կարելի է կարգին ընկերանալ… առավել եւս, եթե…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Եթե նրանց նաեւ մարմնավորենք…

ԱՐՔԱ- Ապրես, կռահեցիր, բայց ես երեւի շատ առաջ սլացա մտովի…

ԳՐՈՂ- Ձերդ գերազանցություն, այնքան սրընթաց է մեր կյանքը վերափոխվում, որ չգիտես, թե վաղը ինչ նոր ու անհավատալի բաներ կմատուցեն մեզ… Բայց եւ կարեւորն այն է, որ մենք շարունակում ենք երազել մարդկային կատարյալ ու հրաշալի օրինակների մասին: Նրանք մեզ ներշն-

չում ու հուսադրում են: Այդպիսին են քիչ առաջ մեզ ներկայացված գրական հերոսները, նրանց նման մարդիկ հազիվ թե գտնվեն արդի աշխարհում…

ԱՐՔԱ- Իսկ գարշելի ու մերժելի մարդիկ… հակահերոսներ՝ որքան ասես կան մեր շուրջ. էլ դավադիրներ ու ահաբեկիչներ, էլ խավարամիտներ ու դավաճաններ, գողեր ու կաշառակերներ, այլասերվածներ, անհոգիներ, մարդասպաններ, մոլագարներ… Նրանք ամեն օր իրենց տխեղծ վարքով ապացուցում են, թե ինչպիսին չպետք է լինի մարդ արարածը: */Դադար/* Դե լավ, տխուր նոտայով հրաժեշտ չտամ ձեզ. մենք, պարոն Սոս, կարծում եմ՝ հաճախ ենք հանդիպելու քեզ հետ… Լավ տրամադրություն եմ մաղթում բոլորիդ, իսկ ինձ դեռ ծանր օր է սպասվում… Հաջողություններ բոլորիդ, ցտեսություն:

ՆԵՐԿԱՆԵՐ- Ցտեսություն, Ձերդ գերազանցություն:

/Արքան արագաքայլ դուրս է գնում, նրա հետ նաեւ՝ խորհրդականը, գրողը եւ պահնորդը: Նրանց մինչեւ մուտքի մոտ ուղեկցում է ծրագրավորողը, ապա նա վերադառնում է իր տեղը, եւ սրահում գտնվողները նստում ու լռելյայն շարունակում են աշխատել/:

ԱՐԱՐ ԵՐՐՈՐԴ

/Արքան իր առանձնասենյակում փակ աչքերով պառկած է բազմոցին: Ներս է մտնում խորհրդականը/:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ */ցածրաձայն/*- Մաքրին…

ԱՐՔԱ- Այո…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Քնա՞ծ եք…

ԱՐՔԱ */բացելով աչքերը եւ նստելով տեղում/*- Ուր էր թե կարողանայի քնել էս ժամին, Շամիր… Ես դարձյալ խորը մելամաղձի ու ընկճախտի մեջ եմ, չգիտեմ՝ երբ կհաղթահարեմ էս անտանելի վիճակը… կամ ընդհանրապես կհաղթահարե՞մ…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Այո, դուք կարող եք այդ ծանր զգացողություններից ձերբազատվել… Ես լավ լուր ունեմ:

ԱՐՔԱ */կանգնելով/*- Վաղուց լավ լուրերով չես գալիս ինձ մոտ, Շամիր, հատկապես էն ահաբեկչությունից հետո… Իմ հեռավոր երկու ազգականին սպանելն ազդանշան եղավ, որ ինձ համար երկար շարունակվելու են տխրամած ու գաղջ օրերը… Արդեն մոտ մեկ տարի ես շանթահարվածի պես եմ… Ասա, ի՞նչ կա…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Ձեր պատվիրած ծրագիրը հաջողությամբ իրագործել են.,.

ԱՐՔԱ- Ի՞նչ ծրագիր… հիշեցրու, մոռացել եմ…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Գրական էն հերոսների մարմնավորումների նախագիծը… Նախանշվածից շատ ավելի փող ծախսվեց, ավելի քան 50 միլիոն դոլար, բայց ի վերջո ստացվել է:

ԱՐՔԱ- Ոչինչ, իմ անձնական հաշիվներից կփակեք ծախսերը:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Էն հայ ծրագրավորողի գլխավորությամբ աշխատանքային խումբը, կարելի է ասել, իսկական հրաշք է գործել. եթե տեսնեիք այդ… գրեթե լիովին կենդանի մարդակերպ արարածներին… Միայն չափազանց սուր ու գիտուն աչքը կարող է զանազանել, որ նրանք արհեստական են… Հոյակապ են աշխատել տղերքը, նրանք լրացուցիչ վարձատրության են արժանի, արքա…

ԱՐՔԱ- Սպասիր, ինքս կգնահատեմ նրանց աշխատանքը… */Զվարթացած/* Ե՞րբ կարող եմ տեսնել… իմ նոր ընկերներին…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Հենց հիմա, նրանք իրենց արարիչ ծրագրավորողի հետ նախասրահում սպասում են ձեր հրավերին…

ԱՐՔԱ */բացականչելով/*- Արդեն այստե՞ղ են… Ներս կանչիր, արագ:

/Խորհրդականը շտապ դուրս է գնում եւ քիչ անց վերադառնում ծրագրավորողի, գրողի, Դոն Կիխոտի, Ֆաուստի, Ոդիսեւսի, Դոն Ժուանի, Համլետի, Աննա Կարենինայի եւ Փոքրիկ Իշխանի հետ: Գրական հերոսների արտաքինը եւ շարժումները մի փոքր ռոբոտանման են/:

ԱՐՔԱ- Օհո՜… ինչպիսի հրաշալի խումբ է… ծանոթ դեմքերով…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Բարեւ ձեզ, Ձերդ գերազանցություն: */Մոտենում է Արքային եւ թեթեւակիորեն խոնարհվում: Արքան սեղմում է նրա ձեռքը/:*

ԱՐՔԱ- Ուրախ եմ, պարոն Սոս, որ պատվերս կատարել եք… Իրո՞ք հաջողությամբ… */Խուզարկու, բայց եւ բարեհաճ հայացքով նայում է Հերոսներին/:*

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Այո, Ձերդ գերազանցություն, ինքներդ հիմա կհամոզվեք… Մենք մարմնավորել ենք յոթ գրական հերոսի՝ արհեստական բանականությամբ, բնութագրական խառնվածքով ու կերպարանքով… Նրանք գիտեն խոսել, դատել ու բնավորություն բանեցնել իրենց կերպարին հատուկ տիրույթում: Փորձարկումների ժամանակ շեղումներ չեն եղել:

ԳՐՈՂ- Իմ առաջարկությամբ կերպարների որոշ բացասական գծեր չեն ներմուծվել ծրագիր…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Այո… Որպեսզի, արքա, դուք շարունակ դրական էներգետիկ դաշտում գտնվեք:

ԱՐՔԱ- Այսինքն՝ նրանք կատարյալ դրական մարդի՞կ են…

ԳՐՈՂ- Չէի ասի, Ձերդ գերազանցություն… Նրանք նախեւառաջ մարդկային լավագույն որակներին հետամուտ անհատներ են, եւ շատ վառ խառնվածք ունեն… Նրանց հետ չեք ձանձրանա, եւ շատ նոր բան կսովորեք:

ԱՐՔԱ- Լավ… */Շարունակում է ուշադիր նայել Հերոսներին/* Հիմա կարո՞ղ եմ ավելի մոտիկից ծանոթանալ նրանց հետ…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Իհարկե, Ձերդ գերազանցություն, դրա համար ենք եկել:

ԱՐՔԱ- Բարի… Սկսենք տիկնոջից: */Գլխով ցույց է տալիս Աննա Կարենինային: Ծրագրավորողը բարեկիրթ ձեւով բռնում է Ա.Կարենինայի ձեռքը եւ նրան ուղեկցում Արքայի մոտ/:*

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Ձերդ գերազանցություն, Աննա Կարենինան է:

Ա.ԿԱՐԵՆԻՆԱ- Ողջույն, արքա: Ինձ կերտել է ռուս գրող Լեւ Տոլստոյը: Ես սրտի ու ճակատագրի ձայնին հավատացող կին եմ… */Փոքր-ինչ սեթեւեթանքով/* Դուք ամուսնացա՞ծ եք, Ձերդ գերազանցություն…

ԱՐՔԱ- Կնոջս անունը Սինա է: Ունեմ երեք որդի եւ երկու դուստր, ունեմ նաեւ երեք թոռնիկ: Իսկ դուք ուրիշ ի՞նչ գծերով եք նշանավոր… Միակ կինն եք այս խմբի մեջ, երեւի շատ եք յուրահատուկ…

Ա.ԿԱՐԵՆԻՆԱ- Անշուշտ, յուրահատուկ եմ, արքա… Բայց կանացի գաղտնիքները հեշտությամբ չեն շռայլվում: Միայն կասեմ, որ ես գիտեմ՝ ինչ է իրական երջանկությունը եւ ինչ է դժբախտությունը… Արքա, բոլոր երջանիկ մարդիկ նման են իրար, յուրաքանչյուր դժբախտ՝ դժբախտ է յուրովի:

ԱՐՔԱ- Ես դժբախտ եմ, Աննա… Ես մեռնում եմ ձանձրախտից, ինձ հալածում են մարդկային ոչնչությունները… Չգիտեմ՝ որտեղ է ելքը…

Ա.ԿԱՐԵՆԻՆԱ- Մարդուն միշտ կարելի է փրկել, բայց փրկում են նրան, ով չի ուզում կորչել:

ԱՐՔԱ- Խելացի կին եք երեւում, Աննա Կարենինա: Կարծում եմ՝ ձեզ հետ դեռ շատ շփումներ կունենանք… */Ծրագրավորողին/* Խնդրեմ, հաջորդին ներկայացրեք:

/Ծրագրավորողը թեւանցուկ Արքայի մոտ է բերում Համլետին/:

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Ձերդ գերազանցություն, Համլետն է… ամենանշանավոր գրական հերոսներից մեկը աշխարհում:

ԱՐՔԱ- Լսել եմ նրա մասին, հայտնի անուն է:

ՀԱՄԼԵՏ- Ճիշտ եք, արքա… Ով մի փոքր նեղության մեջ է հայտնվում, իմ խոսքերն է կրկնում՝ լինե՞լ, թե՞ չլինել… առանց հասկանալու դրանց խորիմաստ եւ ստույգ հարցադրումը… Հա, հիշեցնեմ, որ ինձ կերտել է անգլիացի թատերգու Վիլյամ Շեքսպիրը:

ԱՐՔԱ- Ասում են՝ պալատական կյանքը լավ գիտես, Համլետ…

ՀԱՄԼԵՏ- Գիտեմ հինգ մատիս պես: Պալատում միշտ խարդավանքն է իշխում… Այնտեղ հաճախ են տեղավորվում առաջնակարգ սրիկաները:

ԱՐՔԱ- Ինչպես մեզ մոտ:

ՀԱՄԼԵՏ- Թագավորը թիվ մեկ թիրախն է իր երկրում, իսկ երբ թիրախ ես, կասկածում ես ամեն ինչի վրա. անգամ աստղերին ես կասկածում,

լուսնին, արեւին, ճշմարտության վրա ես կասկածում, սիրո վրա… Երեւի այդ ամենը դուք արդեն զգացել եք ձեր մաշկի վրա, արքա…

ԱՐՔԱ- Ցավոք, այո: Եվ այդ ամենն է նաեւ պատճառը իմ այս անբուժելի թվացող տաղտկահարության ու ընկճախտի:

ՀԱՄԼԵՏ- Երբ ուրիշներին լավ ճանաչես, արքա, կճանաչես նաեւ քեզ… ու մեկ-մեկ խորշանք կզգաս ինքդ քեզնից… Եվ գիտե՞ս՝ ինչու, արքա…

ԱՐՔԱ- Ինչու՞…

ՀԱՄԼԵՏ- Որովհետեւ մարդկային կյանքը թունավորված է եսապաշտությամբ… Որովհետեւ ժամանակն իր շավղից դուրս է սայթաքել, եւ ոչ ոք այն ուղղել չի կարող:

ԱՐՔԱ- Դու մտադիր ես նման տխրապատիր խոսքերո՞վ փարատել իմ սեւակնած անձկությունը…

ՀԱՄԼԵՏ- Իմ ամենամեծ ծառայությունը թերեւս այն կլինի, արքա, որ ձեզ ցույց տամ, թե պալատում ինչպես են խմորվում դավադրությունները, ինչպես կարելի է խույս տալ յուրայինների ագրեսիայից…

ԱՐՔԱ- Ուրեմն՝ դու այդ ասպարեզում լավ խորհրդական կլինես ինձ համար, Համլետ… */Ծրագրավորողին/* Հաջորդը…

/Ծրագրավորողը թեւանցուկ Դոն Ժուանին բերում է Արքայի մոտ/:

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Ահա եւ Դոն Ժուանը, Ձերդ գերազանցություն: Նրա անունը հիշատակել ենք դեռ հոլոգրամների ցուցադրության ժամանակ:

ԳՐՈՂ- Ձերդ գերազանցություն, Դոն Ժուանը շատ ինտրիգասերն է, բայց բարեմիտ ինտրիգասեր է:

ԴՈՆ ԺՈՒԱՆ- Բարով տեսանք, արքա: Ինձ շատերն են մշակել ու կերպավորել, սակայն հիմա ես այստեղ ներկա եմ անգլիացի պոետ Ջորջ Գորդոն Բայրոնի… հավաստագրով:

ԱՐՔԱ- Դուք ինչո՞վ եք այդպես առանձնահատուկ, որ շատ գրողներ են ցանկացել ձեզ իրենց երկերի հերոս դարձնել…

ԴՈՆ ԺՈՒԱՆ- Ես կանանց գիտակ եմ, լավ եմ ճանաչում նրանց հոգին ու մարմինը, ազատամիտ եմ ու ռոմանտիկ, միշտ փնտրում եմ գեղեցկությունը՝ արտաքին ու ներքին… Հուսով եմ՝ ձեր պալատում չեմ ձանձրանա… Կին աշխատակիցներ շա՞տ ունեք այստեղ, արքա…

ԱՐՔԱ- Շատ չեն, Դոն Ժուան, եւ բոլորն էլ գտնվում են իմ հոգածության ներքո, որպեսզի չբռնանան նրանց վրա: Մեր տղամարդիկ երբեմն անհարկի կրքոտ են, իսկ մեր կանայք՝ ավելորդ նրբազգաց:

ԴՈՆ ԺՈՒԱՆ- Սիրում եմ նրբազգաց ու առաքինի կանանց. նրանց վրա, ինչպես ասում են՝ սիրային շատ էներգիա ես ծախսում: Որքան շատ էներգիա, այնքան շատ սեր:

ԱՐՔԱ- Քեզ կնոջ մարմի՞նն է նախեւառաջ հրապուրում… Այսինքն՝ սեքսի համա՞ր ես պայքարում…

ԴՈՆ ԺՈՒԱՆ- Օ՜ ոչ, արքա, դա վարկաբեկիչ վարք կլիներ ինձ համար. ես դեպի կնոջ մարմինն եմ շարժվում նրա հոգու միջով… Կնոջը սիրտն է առաջնորդում, նա հազար տենչ ունի սրտում: Հաճախ հենց կանայք են իմ գլուխը տանում… Ես ջենթլմեն եմ, արքա, ինձ սիրային զարտուղի ու էժանագին ուղիները չեն գրավում:

ԱՐՔԱ- Դու շա՞տ կանանց ես սիրել մինչեւ հիմա…

ԴՈՆ ԺՈՒԱՆ- Օ՜ շատ, արքա… Հրաշալի կանայք այնքան շատ կան կյանքում… Նրանց մեծարել է պետք սիրով:

ԱՐՔԱ- Լավ, դեռ ես կունկնդրեմ քո սիրո դասերը… */Ծրագրավորողին/* Հաջորդը:

/Ծրագրավորողը գնում եւ Արքայի մոտ է տանում Փոքրիկ Իշխանին՝ ձեռքը նրա ուսին դրած/:

ԱՐՔԱ- Եվ ո՞վ է մեր այս փոքրիկ ընկերը…

ՓՈՔՐԻԿ ԻՇԽԱՆ- Ես Փոքրիկ Իշխանն եմ, Ձերդ պայծառափայլություն… Բարեւ ձեզ:

ԱՐՔԱ- Օհո՜… պայծառափայլություն… Վաղուց ինձ ոչ ոք այդպես չի դիմել… Շնորհակալ եմ, Փոքրիկ:

Փ.ԻՇԽԱՆ- Չարժե, Ձերդ պայծառափայլություն: Ես ֆրանսիացի գրող Անտուան Սենտ Էքզյուպերիի կերտած հերոսն եմ… Անկեղծ ասած՝ ողջ աշխարհում ինձ շատ-շատերն են սիրում, չգիտեմ՝ ինչու այդքան շատ… Ես պարզապես մի երազկոտ ու բարի տղա եմ, ուրիշ ոչինչ:

ԱՐՔԱ- Երեւի շատ ես երազկոտ եւ շատ ես բարի, իսկ դրանք բացառիկ մարդկային հատկանիշներ են: Դու է՞լ ես պաղպաղակ շատ սիրում մյուս երեխաների պես…

Փ.ԻՇԽԱՆ- Առանձնապես՝ ոչ, ես ուրիշ հետաքրքրություններ ունեմ, դրանք կարող են ձեզ անիմաստ ու ծիծաղելի թվալ, բայց եթե անգամ ծիծաղեք, ես ձեզնից չեմ նեղանա:

ԱՐՔԱ- Ինչու՞… Երեխաները սիրում են նեղանալ:

Փ.ԻՇԽԱՆ- Ես երեւի բացառություն եմ: Երեխաները պետք է ներողամիտ լինեն մեծահասակների հանդեպ. նրանք հաճախ են սխալներ գործում:

ԱՐՔԱ */ծիծաղում է/*- Բայց դե հիանալի ասացիր, Փոքրիկ Իշխան… Ուրեմն քեզ հետ հարաբերվելիս ես վախ չունենա՞մ, թե կարող ես ինձնից նեղանալ…

Փ.ԻՇԽԱՆ- Ոչ:

ԱՐՔԱ- Հիանալի՜ է…

Փ.ԻՇԽԱՆ- Չնայած հենց նոր ծիծաղեցիք, ես տեսնում եմ, որ դուք շատ տխուր արքա եք…

ԱՐՔԱ */տխուր/*- Ճիշտ եք նկատել, Փոքրիկ:

Փ.ԻՇԽԱՆ- Երբ շատ տխուր եմ լինում, նայում եմ, թե արեւը ինչպես է մայր մտնում…

ԱՐՔԱ */մի պահ մտածելով/-* Այսօր երեկոյան մենք միասին կգնանք արեւամուտը նայելու. լա՞վ, Փոքրիկ…

Փ.ԻՇԽԱՆ- Համաձայն եմ, եւ այդ ժամանակ ձեզ կասեմ, թե ինչպես ամեն մարդ պետք է իր աստղը գտնի…

ԱՐՔԱ- Պայմանավորվեցինք, Փոքրիկ Իշխան: */Ծրագրավորողին/* Հաջորդը… Սպասիր… Բայց չէ՞ որ ես արդեն ճանաչում եմ մյուսներին… հոլոգրամներից… Ահա՝ Դոն Կիխոտն է, Ֆաուստը, Ոդիսեւսը… */Մոտենում եւ ձեռքով բարեւում է նրանց/:* Նրանց մասին վերջին ժամանակներս ես հաճախ եմ մտածել. նրանք շատ ուժեղ եւ իմաստուն արարածներ են, մյուսները՝ նույնպես… Շատ տպավորված եմ, պարոն Սոս. ձեր աշխատանքային թիմը հոյակապ գործ է կատարել, դուք մեծ պարգեւավճար կստանաք… Բայց կարո՞ղ ես ասել… հարցս վերաբերում է նաեւ գրող Փանուկ Գոյանին… մեր հիասքանչ հերոսները իրենց ինչպե՞ս են զգում կողք-կողքի, նրանք համատեղելի՞ են մի խմբի մեջ, ունա՞կ են, այսպես ասած՝ թիմային գործողությունների…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Կարծում եմ՝ այո, Ձերդ գերազանցություն… Նրանք ասես նույն ուղու ճամփորդներն են…

ԳՐՈՂ- Ձերդ գերազանցություն, նրանց միջեւ հոգեւոր կապ գոյություն ունի: Նրանց նախամայրը նույնն է՝ Բարություն-Գեղեցկություն անվամբ: Նրանք փոխլրացնում են միմյանց, եւ հարկ եղած դեպքում հասնում են մեկմեկու:

ԱՐՔԱ- Իսկ տիկին Աննա Կրենինան միայնակ չի՞ զգա իրեն տղամարդկանց շրջապատում…

Ա.ԿԱՐԵՆԻՆԱ- Ծոյված եմ, արքա, ձեր հոգատար հարցից. անհոգ եղեք, ես լավ ընկերախմբում եմ, այստեղ ինձ ոչ ոք չի նեղի: Կարծում եմ՝ նույնիսկ Դոն Ժուանը եղբայրաբար կվերաբերվի ինձ… Չէ՞, Դոն…

ԴՈՆ ԺՈՒԱՆ- Դուք անհանգստանալու ոչինչ չունեք, տիկին Աննա: Ես ոչ մի ոտնձգություն չեմ անի ձեր հանդեպ, ընկերական ազնիվ վերաբերմունք կցուցաբերեմ… Դե, ճիշտն ասած՝ կնոջ հանդեպ եղբայրական զգացում դրսեւորելն ինձ համար դեռեւս անհասկանալի երեւույթ է…

ԱՐՔԱ- Դա էլ դու կսովորես, Դոն ժուան:

ԴՈՆ ԺՈՒԱՆ- Կփորձեմ, արքա:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Նրանք իսկական ասպետներ են, Ձերդ գերազանցություն, իրենց խոսքի տերը… Նրանք կարծես թե այստեղ համախմբվել են կամովին, մի ներքին ձայնով, հատուկ առաքելություն իրականացնելու նպատակով… Սա էլ իմ տպավորությունն է, արքա:

ՖԱՈՒՍՏ- Անգամ՝ երբ մենք հեռու էինք իրարից, ու կարծես թե շփում-

ներ չկային մեր միջեւ, մենք, միեւնույն է, հեռակա կարգով միասնաբար կատարել ենք նույն գործը՝ քննել ենք աշխարհի ու մարդու բանը, օգնել ազատազրկվածին ու խավարի մեջ թաղվածին, սատարել իմացությունն ու վեհանձնությունը… Մենք միասին ու առանձին-առանձին քարոզում ենք, որ պետք է հավատալ կյանքին ու մարդուն, կյանքը մեզ սովորեցնում է բոլոր իմաստուններից ու գրքերից առավել համոզիչ կերպով:

ՈԴԻՍԵՎՍ- Արքա, մեր այս մեծապատիվ խումբը կարող է ցույց տալ, թե միասին ինչպես պետք է հաղթահարել խոչընդոտներն ու վերահաս դժվարությունները, ինչպես պետք է տոկալ ու հավատալ, որ կգա նաեւ վերադարձի ու վերածնության ժամանակը… Մենք այսպես կողք-կողքի յուրովի երջանիկ ու արդարացված ենք զգում… Մի՞թե այդպես չէ, ընկերներ…

ՀԵՐՈՍՆԵՐ- Այդպես է, այդպես…

ԴՈՆ ԿԻԽՈՏ- Արքա, դուք միայն ասեք, թե ովքեր են ձեր ախոյանները, եւ մենք միասնաբար նրանց հախիցը կգանք… Վկա՝ իմ սուրը: */Հանում է սուրը՝ ասես պատրաստվելով մենամարտի: Բոլորը ծիծաղում են/:*

ՖԱՈՒՍՏ- Պայմանավորվենք, որ բոլոր հարցերը կլուծենք առանց սրի, Դոն Կիխոտ: Արյամբ լուծված հարցերը նոր խնդիրներ են ծնում…

ԴՈՆ ԿԻԽՈՏ- Համամիտ եմ, եղբայր Ֆաուստ, իմ սուր միտքն էլ հերիք է: */Մյուսները թույլ ծիծաղում են/:*

ԱՐՔԱ- Լավ, այսպես ծիծաղով ու խաղաղասիրաբար էլ կգործենք հետագայում… Սիրելի հերոսներ, ես շատ մեծ հույսեր եմ կապում ձեզ հետ, ուզում եմ հավատալ, որ ինձ հուսախաբ չեք անի: Մենք կփորձենք ձեր տեսակի լույսով ու ներըմբռնողությամբ փոքր-ինչ բարեփոխել իմ հոգեկան ու մտավոր կացությունը, նաեւ՝ մեր միջավայրը, մեր ժամանակը… Աստված մեզ հետ: */Դադար/* Խորհրդական, իմ անունից կարգադրիր արարողապետին, որ այսօր երեկոյան մի գեղեցիկ երեկույթ կազմակերպի ի պատիվ մեր Հերոսների: Հրավիրեք նաեւ իմ զավակներին ու եղբայրներին… Թող ներկա գտնվեն նաեւ ձեր երեխաները, խորհրդական, Փանուկ Գոյան եւ պարոն Սոս… Իսկ հիմա գնացեք: Կհանդիպենք երեկոյան… Շամիր, ասա, որ Հերոսներին տեղավորեն իմ հարկաբաժնի սենյակներում… Թող նրանք ինձ մոտիկ գտնվեն:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Լավ, արքա:

/Բոլորը դուրս են գնում Արքայից բացի: Նա արագ մոտենում է հեռախոսին եւ կարճ մի համար հավաքում/:

ԱՐՔԱ */լսափողով/*- Լաթիմ, բռնեցի՞ք էն կապավոր ստահակին… Լավ, ես ինքս նրան առաջինը կհարցաքննեմ… */Լսափողը ցած է դնում/:* Ինչու՞ են էդ օտարերկրացի սրիկաները կարծում, թե Քամարում կարող են մարդասպանների ու ահաբեկիչների որջ հիմնել ու մնալ աննկատ… Մի՞թե նրանց թվում է, թե Մաքրին Թեյը կույր ու խելապակաս է, կամ՝ մեռած է…

Էս երկրի պատվի ու ապահովության համար, նախ, ես եմ պատասխանատու, ես: */Բռունցքով հարվածում է կրծքին/:* Աստված չանի՝ պարզվի, որ եղբայրներս կամ իմ կառավարության անդամներից որեւէ մեկը կապված է նրանց հետ. նման տականքներին ինքս մահապատժի կենթարկեմ: Աստված չանի… */Հագի վերին շորերը հանում է եւ ծալապատիկ նստում. որոշ ժամանակ այդպես նա յոգա է պարապում/:*

ԱՐԱՐ ՉՈՐՐՈՐԴ

/Իր առանձնասենյակում խորհրդականը մտահոգ ետ ու առաջ է քայլում: Նա մերթընդմերթ մոտենում է հեռախոսին ու զանգում, բայց պատասխան չստանալով՝ շարունակում է քայլել: Թափով ներս է մտնում Արքայի կրտսեր եղբայր Սամիրը/:

ՍԱՄԻՐ- Նորություն չկա՞, Ծամիր…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Ոչ, զանգերիս չի պատասխանում… Նա իր հեռախոսն անջատել է:

ՍԱՄԻՐ- Գոնե գիտե՞ս՝ որտեղ է նա… ինչ է անում…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Ասել է, որ մի ամսով ուզում է առանձնանալ Բահամյան կղզիներում…

ՍԱՄԻՐ- Նա այնտեղ չէ, ես մարդ եմ ուղարկել՝ «սանրել» են էդ կղզիները… Իսկ ովքե՞ր են նրա ուղեկիցները… Ջահել կանա՞նց է վերցրել հետը…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Չէ, նա մեկնել է էն… գրական հերոսների հետ: Դուք գիտեք նրանց մասին: Հա, իր հետ տարել է նաեւ ծրագրավորողին, գրող Գոյանին եւ իր թութակին:

ՍԱՄԻՐ- Այ թե ի՜նչ… Արքան խելքը տվել է էդ արհեստական մարդկանց… էդ ռոբոտներին, իսկ մեզ բանի տեղ չի դնում… */Զայրացած ձեռնափերն է ոլորում/* Իսկ էդ ծրագրավորողի ու գրողի ընտանիքներից հետաքրքրվե՞լ եք, գուցե նրանք կապվել են հարազատների հետ…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Նրանք ընտանիքներ չունեն, միայնակ են ապրում… Ես կարծում եմ, որ դեռեւս մեծ տագնապ բարձրացնելու կարիք չկա, արքան պարզապես միառժամանակ կտրվել է… ճղճիմ միջավայրից, նա ուզում է վերգտնել իր հոգեկան հավասարակշռությունը, խանդավառվել, լուսավորվել…

ՍԱՄԻՐ- Խանդավառվե՜լ… լուսավորվե՜լ… Մենք էլ մնանք էսպես ճնշված ու խավարի մեջ, հա՞…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Ուրիշ որեւէ տեղեկություն չունեմ:

ՍԱՄԻՐ */հեգնանքով/*- Անգամ քեզ չի իրազեկում իր քայլերի մասին: Նրա աջ ձեռքն ես իբր, նրա ամենավստահելի մա՜րդը…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Նա շուտով կապի մեջ կմտնի… կվերադառնա…

ՍԱՄԻՐ- Դրանք քո բարի ցանկություններն են, Շամիր… հասկանում եմ քեզ… Իսկ եթե նրան որեւէ բա՞ն է պատահել… արտակարգ մի բան, ասենք՝ մահափորձ… առեւանգում… պատանդառություն… Չէ՜, էդ դեպքում մեզ որեւէ տեղեկություն հասած կլիներ, մեր հատուկ ծառայություններն արդեն երկու ամիս ապարդյուն փորձում են գտնել նրա հետքերը…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Արքան այնքան անձարակ չէ, որ չկարողանա պաշտպանել իրեն: Նա մի որոշ ժամանակով հանգստի ու լիցքավորվելու կարիք ունի… Կտեսնեք՝ շուտով նա կվերադառնա եռանդով ու լավատեսությամբ լի:

ՍԱՄԻՐ */զայրացած/*- Ես քո լավատեսությունը բնավ չեմ կիսում, Շամիր, դու միայն քո ծառայական ու ընկերական բնազդով, միակողմանիորեն պաշտպանում ես նրան: Հասկացիր՝ նա արհամարհում է մեզ… Ասա՝ ինչպե՞ս է հնարավոր ամբողջ երեք ամիս բացակայել երկրից եւ գաղտնի պահել գտնվելու վայրը… Ամբողջ երեք ամիս չկա՜ արքան… Դա խայտառակում է իրեն ու երկիրը:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Արքան շատ է սիրում իր երկիրն ու ժողովրդին:

ՍԱՄԻՐ- Հիմա քո խոսքերը ոչինչ չարժեն, Շամիր, իրավիճակը այլ բան է ցույց տալիս: */Դադար/* Իմ կարծիքով՝ նա փախել է Քամարից… մեզնից… բոլորից… Իսկ Քամարում կենսական ու հրատապ շատ խնդիրներ են կուտակվել… Առանց արքայի միջամտության դրանք ավելի են բարդանում… Եթե առաջիկայում եւս նա շարունակի բացակայել, մենք ստիպված կլինենք արմատական որոշում կայացնել…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ */տագնապած/*- Ի՞նչ արմատական որոշում…

ՍԱՄԻՐ- Անվտանգության խորհուրդը նրան գահաթող կհայտարարի եւ արքա կհռչակվեմ ես… Ես եմ, չէ՞, գահաժառանգը… Ես պետք է, չէ՞, մտածեմ ներկա անորոշ ու մտահոգիչ կացությունից ելք գտնելու մասին… այն էլ՝ օրինական ճանապարհով: Անարքա երկիրը մատնվում է քաոսի, չեմ կարող թույլ տալ: Ես անձնական նկրտումներով չեմ առաջնորդվում, հավատա:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Անվտանգության խորհրդի բոլոր անդամները համաձա՞յն են ձեր տեսակետին…

ՍԱՄԻՐ- Այո… բացառությամբ խորհրդարանի խոսնակ Արդուն Լեյքի… Դե նա ավելորդ դեմոկրատ ու մաքրինական է ուզում երեւալ:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Բայց արքան ողջ է, օրենքը թույլ չի տալիս նրան գահաթող հայտարարել առանց իր ցանկության:

ՍԱՄԻՐ- Բայց դու անգամ չգիտես՝ արքան ո՞ղջ է, թե՞ ոչ…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Մի՞թե կարծում եք, որ նրան կարող են… */խոսքը կիսատ է թողնում/:*

ՍԱՄԻՐ- Ես իրավունք չունեմ որեւէ բան բացառելու… Եվ հետո՝ եթե արքան անհետանում է, դա հավասարազոր է մահացած լինելուն. ահա օրինական հիմքը, որով կառաջնորդվի անվտանգության խորհուրդը որոշում կայացնելիս: */Դադար/* Չկարծես, Շամիր, թե ես արագորեն ուզում եմ օգտվել իրավիճակից ու գահը վերցնել. ես իմ ավագ եղբայր Մաքրինին… արքային շատ եմ սիրում, թեեւ մեկ-մեկ խաղացել եմ նրա պատվի ու հոգու հետ… Դե, չարաճճիություններ են՝ կրտսեր եղբորը հատուկ… Ինձ իսկապես մտահոգում է ներկա իրավիճակը… երկիրը կառավարելիությունից կարող է դուրս գալ, եւ դրանից կօգտվեն մեր ներքին ու արտաքին թշնամիները. չի կարելի նման բան թույլ տալ, Մաքրինը դրա համար ճակատս չի պաչի… Այո, գիտեմ՝ այս երկիրը նրա համար թանկ է, բայց ինչու՞ հիմա այն բարձիթողի է նրա կողմից… Եվ մյուս ցավալի հանգամանքը. ինչու՞ է նա ինձ, քեզ, մյուս յուրայիններին, ամենքիս թողել անգիտության մեջ, արհամարհել բոլորիս… Կարող էր, չէ՞, իր մտադրությունների մասին տեղյակ պահել մեզ… Ինձ մեծ ցավ է պատճառում նրա շեշտված արհամարհանքը: Խելքը տվել է ինչ-որ արհեստական գրքային հերոսների… Ինչ-որ ռոբոտների թակարդում է հայտնվել…

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ- Նա կվերադառնա:

ՍԱՄԻՐ- Դու միայն հույսեր ես փայփայում, Շամիր, փուչ հույսեր… կեղծ ու անօգուտ՝ արքայի նախասիրած էն հերոսների պես: */Դադար/* Ես ճանաչում եմ իմ եղբորը. նա իր վճիռն արդեն կայացրել է: Մենք էլ կկայացնենք մեր վճիռը… */Արագ դուրս է գալիս/:*

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ */մնալով մենակ, ինքնիրեն/*- Տեր Աստված, մի՞թե հանուն իշխանության կարելի է այսքան անզգամ լինել… Նա չգիտե նույնիսկ՝ եղբայրը ո՞ղջ է, թե՞ ոչ, բայց գահի խնդիրն է սրընթաց լուծում… */Տագնապած/* Իսկ եթե գիտե՞… */Մոտենում է հեռախոսին ու զանգում. լսվում է հեռախոսային օպերատորի ձայնը՝ «գիծը անջատված է»: Ցած է դնում լսափողը, մտախոհ փլվում բազկաթոռին/:*

ԱՐԱՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

/Բեմը կահավորված է ինչպես զբոսանավի տախտակամած. այստեղ են արքան, ծրագրավորողը, գրողը եւ յոթ հերոսները: Հնչում է հաճելի երաժշտություն ծփացող ծովի ֆոնին: Առանձին սեղանի վրա դրված են գինու եւ հյութի շշեր, մրգեղեն, խորտիկներ ու թխվածքաբլիթներ: Ներկաները ճաշակում են դրանք եւ զրուցում՝ զույգերի բաժանված: Դոն ժուանը թեւան-

ցուկ շրջում է Աննա Կարենինայի հետ: Ֆաուստը ինչ-որ բան է պարզաբանում գրողին: Ծրագրավորողն իր մասնագիտության վերաբերյալ բացատրություններ է տալիս Ոդիսեւսին: Դոն Կիխոտը հպարտ քայլելով՝ զվարճալի ինչ-որ բան է պատմում Փոքրիկ Իշխանին՝ նրա ձեռքը բռնած: Բոլորի մոտ իշխում է լավ տրամադրություն, բացառությամբ թերեւս արքայի ու Համլետի, որոնք լարված երկխոսում են բեմի առաջնամասում/:

ՀԱՄԼԵՏ- Ոչ-ոչ, արքա, պետք չէ գնալ նման քայլի… քեզ չեն հասկանա ու գնահատի… Կկարծեն, թե դու վախկոտ դասալիք ես…

ԱՐՔԱ- Ե՞ս եմ դասալիք… Բայց ես խիզախ մարդու համբավ ունեմ իմ երկրում, ես երբեք չեմ երկնչել որեւէ դժվար կացությունից. բոլորը գիտեն այդ մասին, հազարավորները կարող են վկայել… Երբ, օրինակ, երկու տարի առաջ ահաբեկիչները գրավել էին մեր մայրաքաղաքի տեխնոլոգիական համալսարանի մասնաշենքերից մեկը, ես եմ միայնակ մտել այնտեղ ու բանակցել նրանց հետ… Մեր բոլոր պատանդներին ազատել ենք, հարյուր հոգուց ավելի… երկուսը զոհվեցին միայն, իսկ այդ ահաբեկիչների մեծ մասին, նրանք տասներեք հոգի էին, ես եմ ոչնչացրել իմ ինքնաձիգով… Չէ՞, ինձնից դասալիք ու վախկոտ ոչ ոք չի կարող սարքել:

ՀԱՄԼԵՏ- Մյուս անցանակալի հանգամանքն այն է, արքա, որ ձեր հրաժարականը կարող են շատերը մեկնաբանել որպես դավադրություն ձեր գահաժառանգ եղբոր կողմից… Մարդիկ մեքենայաբար կարծելու են, թե նա է ստիպել ձեզ հրաժարվել գահից՝ պատճառաբանելով ձեր չհայտարարված ու երկար արձակուրդը…

ԱՐՔԱ- Ես չեմ թողնի, որ իմ կրտսեր եղբոր վրա նման կասկած ընկնի… Ծուտով նա է լինելու արքա, եւ չի կարելի թույլ տալ, որ երկրի նոր առաջնորդը ընկալվի որպես դավադիր ու հեղաշրջող. նա այդպես շատ խոցելի կլինի… Ես մանրամասնորեն այնպես կներկայացնեմ իմ հրաժարականի շարժառիթներն ու դրդապատճառները, որ մանուկն անգամ հասկանա՝ ոչ ոք դավադրություն չի կազմակերպել իմ դեմ, ես իմ հոժար կամքով եմ թողնում գահը:

ՀԱՄԼԵՏ- Արքա, ամեն ինչ անցողիկ է՝ գահը, թագավորությունը, իշխանությունը, աստիճանը, պարտավորությունը, ստորությունը, դավաճանությունը… սերը, երջանկությունը… Այդ ամենին փոխարինելու են գալիս նոր կրքեր ու մոլություններ: Ցանկալի չէ, որ դուք գործեք ինչ-որ անսանձ կրքի ուժով, հետո, երբ կիրքն անցնի, զղջաք ձեր արարքի համար…

ԱՐՔԱ- Ես կրքով չեմ առաջնորդվում, Համլետ, այլ՝ անկեղծ զգացմունքով ու հավատամքով: Չեմ պատկերացնում, թե ինչը կարող է պատճառ դառնալ ափսոսանքի ու ինքնամեղադրանքի… Չեմ զղջա: Ես ուզում եմ ապրել որպես մարդ անհատ՝ իմ անձնական հետաքրքրություններով ու հոգու կանչերով. չեմ ուզում շարունակ խաղալ մի դեր, այն էլ՝ արքայի, որն

աստիճանաբար, օր-օրի ոչնչացնում է իմ բուն էությունը… Ես ուզում եմ վերածնել ու պահպանել իմ այն բնատուր կերպարը, որ սաստիկ աղարտվել է իմ արքայավարության անցած տասնհինգ տարիներին. ես դարձել եմ խստաբարո ու կասկածամիտ, ինքնամփոփ ու ջղային… Ես հաճախ որոշումներ եմ կայացնում, որոնք շատ հեռու են անվիճելիորեն իրավացի ու հիմնավոր լինելուց: Ինձ սկսել են հետապնդել տարբեր վախեր ու սարսափներ…

Չես հավատա՝ այս զբոսանավի վրա անգամ ես ինձ դեռեւս հանգիստ չեմ զգում. թվում է՝ ուր որ է կխորասուզվենք… Իսկ նախկինում, մինչեւ իշխանության անցնելս, ես նման վախեր չունեի: Ձեր՝ Հերոսներիդ շնորհիվ ես հիմա անհամեմատ ինձ լավ եմ զգում, ես ասես հարազատների, հոգեկիցների միջավայրում եմ… Միասին անցկացրած այս երեքուկես ամիսը ուղղակի իդիլիա է…

ՀԱՄԼԵՏ- Ծնորհակալ ենք, արքա… Գրող Գոյանը գուցե՞ մի գիրք գրի ձեր մասին, եւ ձեր կերպարն էլ դառնա մերի նման վառ ու հիշարժան… Ես կխոսեմ այդ մասին գրողի հետ:

ԱՐՔԱ- Չէ-չէ, պետք չէ, նման կերպարները պատվերով չեն ստեղծվում, թող ամեն ինչ իր բնական հունով ընթանա…

ՀԱՄԼԵՏ- Կարո՞ղ ենք ենթադրել, որ ձեզ, ենթագիտակցորեն, խորը փառասիրությունն է առաջ մղում. կարծես թե դուք քողարկված փափագ ունեք՝ համալրելու մեր՝ Հերոսներիս շարքերը…

ԱՐՔԱ- Կտրականապես ոչ, Համլետ:

/Արքային ու Համլետին են մոտենում Դոն Կիխոտն ու Փոքրիկ Իշխանը/:

ԴՈՆ ԿԻԽՈՏ */թեթեւակի գլուխ տալով նրանց/*- Ներեցեք, որ ընդհատում ենք ձեր զրույցը. ես ու Փոքրիկ Իշխանը, արքա, որոշեցինք ձեզ դիմել մի հույժ կարեւոր հարցով…

ԱՐՔԱ- Խնդրեմ, սիրելի ասպետ… */ժպտալից/* Ձեր ցանկությունը կլինի նաեւ իմ ցանկությունը:

ԴՈՆ ԿԻԽՈՏ- Արքա, կարո՞ղ եք հրամայել, որ մեր նավ բերեն իմ Ռոսինանտ ձին…

ԱՐՔԱ- Իսկ ձին ի՞նչ պիտի անեք նավի վրա… */Հարցական նայում է մերթ Դ.Կիխոտին, մերթ Փ.Իշխանին/:*

ԴՈՆ ԿԻԽՈՏ- Իմ Ռոսինանտը այս զարմանահրաշ միջավայրում, ծովի մեղմանուշ ծփանքի տակ թեւեր կառնի, նա Պեգաս կդառնա, եւ մենք Փոքրիկ Իշխանի հետ կթռչենք նրա սիրելի մոլորակներից մեկը…

ԱՐՔԱ- Դա ճի՞շտ է, Փոքրիկ Իշխան…

ՓՈՔՐԻԿ ԻՇԽԱՆ- Այո, Ձերդ պայծառափայլություն: Մենք Դոն Կիխոտի հետ ցանկանում ենք, նախ, թռչել Խոսող թիթեռների մոլորակ, ուզում ենք նրանց հյուր կանչել մեզ մոտ…

ԱՐՔԱ- Բարի, Ռոսինանտը շուտով կլինի այստեղ… եւ դուք ձեր փափագը կիրագործեք: Հետո մեզ էլ կտանեք Խոսող թիթեռների մոլորակ, չէ՞…

ՓՈՔՐԻԿ ԻՇԽԱՆ- Իհարկե, Ձերդ պայծառափայլություն:

ԴՈՆ ԿԻԽՈՏ- Կեցցե մեր բարեսիրտ արքան… Գնացինք, Փոքրիկ Իշխան: */Բռնում է Փոքրիկ Իշխանի ձեռքը եւ հեռանում նրա հետ: Արքան ու Համլետը մեղմ ծիծաղում են/:*

ՀԱՄԼԵՏ- Ամենահետաքրքիր ու համակրելի զույգն է մեր խմբում… Ոնց գտան իրար…

ԱՐՔԱ- Այո՜… */Նայում է հեռուն, ապա ասես սթափվելով՝ վերսկսում կիսատ մնացած խոսակցությունը/.* Հա, շարունակեմ միտքս. Համլետ, ուզում եմ ապրել այնպես, ինչպես ձեզնից յուրաքանչյուրը՝ սեփական շիտակ ու առինքնող կերպարի սահմաններում… Ես էլ առաքինի ու գեղեցիկ գծեր շատ ունեի. ընկերասեր էի, մարդամոտ, գթառատ ու բարեվարք. գիտե՞ս՝ ինչքան բարեգործություններ էի անում մինչեւ արքա դառնալս. հայրս ինձ նախատում էր դրա համար, ասում էր՝ մի շռայլիր մեր հարստությունը, քեզ, միեւնույն է, ի սրտե երախտահատույց չեն լինի… Բայց ես ուրիշների երախտապարտության համար չէի անում նվիրատվություններս, այլ՝ իմ հոգեկան հաճույքի ու մարդկային նկարագրիս հավատարիմ լինելու համար:

ՀԱՄԼԵՏ- Մեկ է, որքան էլ փորձես լինել զգաստ՝ ինչպես սառույց, մաքուր՝ ինչպես ձյուն, անարատ՝ ինչպես բյուրեղ, դարձյալ զերծ չես մնա զրպարտությունից…

ԱՐՔԱ- Իրավ… Հաճախ շշուկներ էի լսում, թե ես այլոց ընդամենը փշրանքներ եմ նետում թալանով տիրացած հարստությունից… Դրանից ես շատ էի նեղսրտվում, չհասկացվածությունն ինձ մեծ ցավ է պատճառում… Գուցե հենց այդ պատճառով ես իմ բարեսիրությունը հաճախ գաղտնի եմ պահել… Թագավորական տարիներին ես այնքան եմ փոխել կարծիքս բարեվարքության վերաբերյալ, որ ինձ հիմա կարելի է ծայրահեղ հոռետես… սկեպտիկ համարել, մինչդեռ ես մաքուր ընծայաբերողի երջանկությունն եմ ունեցել: */Դադար/* Ես ուզում եմ գտնել իմ նախկին «ես»-ը, ապրել նրա ճշմարիտ օրենքներով ու լույսով… Կարծում ես՝ պակա՞ս քաջություն, խելք ու կամք է պետք նման ձեռնարկի հաջողությունն ապահովելու համար. դա արքա լինելուց շատ ավելի դժվար գործ է, Համլետ:

ՀԱՄԼԵՏ- Գիտեմ… */Մի փոքր երկար ու մեղմաժպիտ նայելով Արքային/* Պիտի ասեմ, Մաքրին Թեյ, որ դուք անզուգական արքա եք. իմ՝ Համլետյան ժամանակներում չկային նման տիրակալներ… Ես հիացած եմ ձեր գաղափարով. ուշադրություն մի դարձրեք, թե քիչ առաջ ինչպես էի կասկածի տակ առնում ձեր մտահղացման իրավացիությունն ու նպատակահարմարությունը: Ուզում էի ձեր հաստատակամության սահմանները ստուգել…

Դուք գիտակցում եք ձեր արարքի վեհությունը, միաժամանակ կանխատեսում եք այն խոր չըմբռնողությունը, որով շամփրելու են ձեզ շատ-շատերը՝ ձեր գերդաստանից, յուրայիններից, հայրենակիցներից… աշխարհից…

ԱՐՔԱ- Բայց ես… այդ չըմբռնողների վրա, ներեցեք, թքած ունեմ:

ՀԱՄԼԵՏ */ծիծաղելով/*- Դուք գիտեք նաեւ՝ երբ եւ ում վրա թքել. դա մեծ արվեստ է:

ԱՐՔԱ- Ոչ ոք ամենքից սիրված, հասկացված ու գնահատված չէ: Յուրաքանչյուրն ունի ընդդիմախոսների իր բազմությունը՝ մեծ թե փոքր… Ես շատ ընդդիմադիրներ ունեմ՝ քաղաքական, տնտեսական, ներազգային, միջազգային, գերդաստանային… կառավարական… Իմ կառավարությունում այլախոհներ կան, որոնց հսկողության տակ պահելն ամեն արքայի գործ չէ… Իմ կրտսեր եղբայր Սարիմը՝ թագաժառանգը, տնտեսական զարգացման նախարարը… իմ ամենահզոր ընդդիմախոսն է… Նա ազնիվ է իր մղումներում ու տեսակետներում, սակայն երբեմն ծայրահեղությունների է հասցնում սովորական մի հարց կամ… կեղծ ու հիմար լուրեր է տարածում գինովցած ժամանակ… Ես նրան արգելել եմ ալկոհոլային խմիչքներ օգտագործել, բայց հիմա չգիտեմ, թե նա ինչպես է հետեւում իմ հրահանգին… Երեքուկես ամսվա ընթացքում շատ բան կարող է փոխվել… Երեւի նա շատ է նեղացել, որ այսքան ժամանակ չեմ կապվել նրա հետ… Կարծում եմ՝ ժամանակն է նրան տեղյակ պահել իմ որոշման մասին… */Հանում է հեռախոսը, որ զանգի/:*

ՀԱՄԼԵՏ- Իսկ դուք համոզվա՞ծ եք, որ նրանք ձեզ արդեն գահընկեց չեն արել… հեռակա կարգով…

ԱՐՔԱ */անակնկալի եկած/*- Ի՞նչ… Դա հնարավոր չէ՞…

ՀԱՄԼԵՏ- Ամեն ինչ հնարավոր է, արքա: Հեղաշրջումները՝ բռնի, կոպիտ, փափուկ, թավշյա… անգամ՝ եղբայրական… պատմության սովորական երեւույթներից են: Դրանք միշտ էլ սեւ մրուր են թողնում բյուրավոր մարդկանց սրտերում, կամ՝ ոգեշնչում են բյուրավորներին… Ես ուղղակիորեն ձեզ տեղյակ պահեցի իմ կանխազգացման մասին… Բառերս թեեւ թռչում են վերեւ, սակայն մտքերս մնում են ներքեւ… Ծանր մտքերը թեւավոր չեն դառնում:

/Մեկեն ինքնաձիգի կրակոցներ են լսվում, գնդակներ են սուրում ներկաների գլխավերեւով: Համլետն անմիջապես մարմնով ծածկում է արքային, արագորեն նույնն են անում Ոդիսեւսն ու Դոն Կիխոտը, ապա նրանց հետեւում են մյուս Հերոսները: Նրանք արքային առնում են իրենց խիտ օղակի մեջ: Վերջում արքային պաշտպանելու են գալիս գրողն ու ծրագրավորողը, որոնք կրակոցների սկզբում, նախ, վախեցած կուչ են գալիս, հետո կողմնորոշվում են արտակարգ իրավիճակում: Ա.Կարենինան ակամա փարվում է Դ.Ժուանին, իսկ Փ.Իշխանը՝ Ա.Կարենինային: Կրակոցները դադարում են/:

ՈԴԻՍԵՎՍ- Նայեք, նայեք՝ ահա էն նավակից էին կրակում մեզ վրա… Նա հիմա սրընթաց հեռանում է… */Ցույց է տալիս հեռուն: Բոլորը նայում են Ոդիսեւսի մատնանշած ուղղությամբ/:*

ՀԱՄԼԵՏ- Այո՜… Ցավոք, մենք նրանց հետեւից չենք կարող հասնել… Էդ ստահակները ճողոպրեցին վերջին նապաստակների պես:

Ա.ԿԱՐԵՆԻՆԱ */բաց թողնելով Դոն Ժուանին/*- Էս ի՞նչ զուլում էր… Մեզ ուզում էին սպանե՞լ… ինչու՞…

ԴՈՆ ԺՈՒԱՆ- Մենք ու՞մ ենք չարիք գործել, որ մեր մահն են տենչում…

ԱՐՔԱ- Հանգստացեք, խնդրում եմ… Նրանց թիրախը ես էի… Նրանք ինձ էին ուզում սպանել… */Արքան դուրս է գալիս «օղակումից»/:*

ՁԱՅՆԵՐ- Ինչու՞… Ինչպե՞ս թե…

ԱՐՔԱ- Սա արդեն չորրորդ մահափորձն է իմ դեմ… Ես կպարզեմ, թե ովքեր են էդ ստահակներն ու կազմակերպիչները եւ կպատժեմ նրանց խստորեն: */Դադար/* Հո շատ չվախեցա՞ք…

ՁԱՅՆԵՐ- Ոչ-ոչ, արքա…

ՖԱՈՒՍՏ- Մենք ի՞նչ… մենք անմահ ենք, չէ՞… Եթե անգամ մեզ հիմա շարքից հանեն, մեր արարիչ ծրագրավորողը նորից կարող է մեզ վերստեղծել: Մենք քեզ համար էինք մտահոգ, արքա…

ՈԴԻՍԵՎՍ- Մենք թույլ չենք տա, որ ձեր կյանքի վրա որեւէ մեկը բռնանա, արքա: Մենք կհաղթենք ստահակների դեմ պայքարում:

ԱՐՔԱ- Դուք անձնազոհ արարածներ եք: Դուք կրկնակի հերոսներ եք: Գրողն ու ծրագրավորողն էլ իրենց վտանգեցին հանուն ինձ. խիստ զգացված եմ… Անչափ երախտապարտ եմ բոլորիդ: */Կարճ դադար/* Խնդրում եմ՝ մոռացեք այս տխուր միջադեպը եւ վայելեք ծովի բուրմունքն ու միմյանց ընկերակցությունը:

Ա.ԿԱՐԵՆԻԱՆ */Փ.Իշխանին/*- Գնանք, փոքրիկս… */Ծոյելով Փ.Իշխանի գլուխը՝ իր հետ տանում է նրան: Արագ նրանց են միանում Դ.Ժուանը եւ Դ.Կիխոտը/:*

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ */Գրողին/*- Թափ տվեք ձեր տաբատը, պարոն Գոյան… */Գրողը փութով մաքրում է տաբատը/:* Գնանք…

/Բոլորը ցրվում եւ անցնում են իրենց առաջվա խաղաղ զբաղմունքին, ասես ոչինչ չէր պատահել: Արքան ու Համլետը շարունակում են ընդհատված զրույցը/:

ՀԱՄԼԵՏ- Այս միջադեպը հուշում է, որ ձեր չարակամները հանգիստ չունեն ձեր կապակցությամբ… Ինձ թվում է, որ կրակողները ուզում էին ահաբեկել ձեզ… միայն… սպանելու հանձնառություն չունեին…

ԱՐՔԱ- Ինձ էլ է այդպես թվում…

ՀԱՄԼԵՏ- Իմ կարծիքով՝ կատարվածը առնչվում է խմորվող հեղաշրջման հետ…

ԱՐՔԱ- Իսկապե՞ս...Հեղաշրջման միտքն ուզում եմ հեռու վանել ինձնից... Չէի ցանկանա, որ իմ եղբայրը կամ մեկ ուրիշը իրենց այդ աստիճան ստորացնեին...

ՀԱՄԼԵՏ- Արքա, դուք գիտեք, թե իշխանության փիլիսոփայությունն որքան խուլ է բարոյախոսության առջեւ... եւ մարդկությունը հաշտվել է դրա հետ:

ԱՐՔԱ- Այո... ցավոք: */Դադար/* Ինչեւէ, զանգեմ Սարիմին: Ես արդեն վերջնական վճիռս կայացրել եմ:

ՀԱՄԼԵՏ- Սպասեք, արքա, կարծում եմ՝ նախ, հարկ է տեղյակ պահել մեր հասարակությանը */ցույց է տալիս ներկաներին/:* Նրանք արժանի են, որ առաջինն իրենք իմանան ձեր... ճակատագրական որոշման մասին:

ԱՐՔԱ- Համաձայն եմ: */Բարձրաձայն դիմելով ներկաներին/.* Բարեկամնե՛ր... խնդրում եմ՝ մոտեցեք մեզ, կարեւոր նորություն ունեմ հայտնելու ձեզ:

/Ներկաները հավաքվում են Արքայի մոտ/:

ԴՈՆ ԺՈՒԱՆ */ով նորից թեւանցուկ է Աննա Կարենինայի հետ/-* Կարծես թե արքան մեզ նոր անակնկալ ունի մատուցելու...

Ա.ԿԱՐԵՆԻՆԱ- Նրա դեմքը լարված է, Ժուան, նայիր... Սիրտս վկայում է, որ արքան ինչ-որ ծանրագույն խոհի ազդեցության տակ է...

ԱՐՔԱ */փորձելով մի քիչ հանդիսավոր երանգ տալ խոսքին/-* Երեքուկես ամիս մտորելուց հետո... բոլոր մանրամասները կշռադատելուց հետո... ես հենց նոր վերջնականապես վճռեցի, որ... հրաժարվում եմ Քամարի արքայի գահից...

ՆԵՐԿԱՆԵՐ- Ի՞նչ... ինչպե՞ս թե... ինչու՞...

ԱՐՔԱ- Դրդապատճառները զուտ մարդկային են... Ես մահու չափ հոգնել ու ձանձրացել եմ մարդկանց ագահությունից, ստորությունից, դավաճանությունից, երեսպաշտությունից, կաշառասունությունից, փոքրոգությունից, մորթապաշտությունից, նենգությունից, այլասերվածությունից, անգթությունից... եւ մյուս այն բոլոր արատներից, որոնցով թաթախված են ինձ հետ գործակցող... սպասարկող... ենթակա ու անենթակա մարդիկ... Իշխանությունը դաժան ու անխնա փորձաքար է նրանց համար, ովքեր գայթակղություն են ունեցել մտնելու իշխողների ու կառավարիչների վերնախավ... Ես թույլ մարդ չեմ, ինձ ոչ մի գահ ու իշխանություն չի կարող այլասերել այն աստիճան, որ ես մոռանամ իմ մարդկային բարի ու լուսավոր ակունքները. ես որոշել եմ տիրություն անել այդ ակունքներին եւ... ընկերակցել ձեզ ... ցմահ, որպես ձեր անշահախնդիր ու նվիրյալ ընկեր... */Քար լռություն/* Դե, ի՞նչ կասեք, հավանությո՞ն եք տալիս իմ որոշմանը...

ԳՐՈՂ */դժվարությամբ արտաբերելով բառերը/-* Ձերդ գերազանցություն... ի՞նչ է պատահել, ինչու՞ եք հրաժարվում գահից... Քամարը ձեզ

նման արքայի կարիք ունի՝ խելոք, բանիմաց, մարդասեր, հեռատես… նորի զգացողությամբ տոգորված…

ԱՐՔԱ- Գահը ժառանգելու է իմ կրտսեր եղբայր Սարիմը, դա գիտես, Փանուկ Գոյան: Մենք նրան կօգնենք, որ նա էլ հետամուտ լինի այն արժանիքներին, որ դուք նշեցիք… ես արքայական ձանձրախտից ու խորշանքից մեռնում եմ… Մի՞թե կցանկանայիք, որ ես վաղաժամ լքեմ այս սքանչելի աշխարհը …

ԳՐՈՂ- Ոչ-ոչ, արքա… */Ներկաներից ոմանք ձայնակցում են գրողին/:*

ԱՐՔԱ- Այդ դեպքում, պարոն Գոյան, պատրաստվեք ինձ համար գրելու հրաժարականի… հրաժեշտի խոսք, այնպիսին, որ մեծ տպավորություն թողնի ամենքի վրա, որ ունկնդիրները ցանկանան ոչ միայն լսել, այլեւ կարդալ նորից նոր, որպես խոստովանության բարձր նմուշ… որպես ընտիր գեղարվեստին համարժեք տեքստ: Եվ թող ձեզ օգնի այդ գործում դոկտոր Ֆաուստը… Կարո՞ղ եք, դոկտոր Ֆաուստ…

ՖԱՈՒՍՏ- Ինչու՞ չէ… Կարող ենք գրել այնպիսի խոսք, որ մյուս երկրների արքաները եւս ցանկանան գահաթող լինել…

ԱՐՔԱ- Մյուսներին հանգիստ թողնենք, դա իրենց գործն է… Պատրաստեք սեւագիրը քիչ առաջ հնչեցրած իմ նկատառումների հիման վրա, երեկոյան կմիանամ ձեզ, եւ միասին կսրբագրենք վերջնական տարբերակը: Ես ուզում եմ իմ հրաժարականի մասին հայտարարել վաղը, կհասցնե՞ք…

ԳՐՈՂ ԵՎ ՖԱՈՒՍՏ- Այո-այո:

ԱՐՔԱ- Շատ լավ:

ՖԱՈՒՍՏ- Բայց ասեք ճշմարիտը, արքա. ձեզ ստիպե՞լ են հրաժարվել գահից… Պարտադրե՞լ են, որ, այսպես ասած՝ կամավոր հրաժարականով հեռանաք արքայական պալատից… Մեր եւ ձեր օրերում իշխանափոխությունը հաճախ մնում է մութ պատմություն, մշուշոտ մոտիվներով պարուրված…

ՈԴԻՍԵՎՍ- Դա ձեր հակառակորդների գո՞րծն է, արքա… Գուցե՞ քիչ առաջվա մահափորձի ազդեցությամբ եք նման վճռի հանգել…

ԱՐՔԱ- Ոչ մի նման բան, սիրելի Ֆաուստ եւ Ոդիսեւս: Ինձ ոչ ոք չի պարտադրել: Ես մահափորձերից չեմ վախենում, իմունիտետ ունեմ: Սա իմ որոշումն է, բացարձակապես իմը… Քամարում անակնկալի են գալու՝ իմանալով իմ անսպասելի քայլը… Ես այնպիսի թույլ արքա չեմ, որ որեւէ մեկը, որեւէ ուժ հանդգնի ինձ հեռացնել գահից. անգամ իմ երկար բացակայությունից հետո նրանք դա չեն հանդգնի…

ԴՈՆ ԺՈՒԱՆ- Արքա, մարդիկ շատ են փոխվում տիրակալի բացակայության ժամանակ, շատ պտուտակներ այլ կերպ են պտտվում… Բայց ինձ ուրիշ հարց է հետաքրքրում. ասեք անկեղծորեն, խնդրում եմ՝ կանայք դե՞ր

են խաղացել ձեր որոշման մեջ… Գուցե՞ նրանք են ձեզ բնազդորեն կամ ենթագիտակցորեն հասցրել այդ որոշմանը…

ԱՐՔԱ- Միակ կինը, որ կարող է ինչ-որ բացասական դերակատարություն ունենալ իմ հետագա ճակատագրի հարցում, դա իմ օրինական կինն է՝ Սինան, իմ հինգ զավակների մայրը: Բայց նա վաղուց լուռումունջ իր կյանքով է ապրում, գրեթե չի խառնվում պալատական անցուդարձին: Նա միայն երբեմն բռնկումներ է ունենում… խանդից…

Ա.ԿԱՐԵՆԻՆԱ- Ինչպես ցանկացած օրինավոր ու ազնիվ կին:

ԱՐՔԱ- Այո… Սինային հպարտություն է տալիս իմ արքայական տիտղոսը, նա երբեք չի ցանկանա, որ ես հրաժարվեմ գահից… Ոչ, Դոն Ժուան, կանայք այս հարցում դերակատարություն չունեն:

ՖԱՈՒՍՏ- Արքա, իսկ դուք գործե՞լ եք այնպիսի արարք, որի համար խղճի խայթ եք զգում եւ հիմա որոշել եք զերբազատվել դրանից հրաժարականի գնով…

ԱՐՔԱ */մի փոքր մտածելուց հետո/*- Ոչ, խորամիտ Ֆաուստ. կարծում եմ՝ չկա մի բան, որ կարելի է իմ աչքը խոթել դրա հեղինակը՝ նախաձեռնողը լինելու համար: Ես միշտ հետեւել եմ, որ խիղճս չտանջի, դրա համար իմ կարգադրությունների ու հրամանների մեծ մասը կոշտ չեն եղել, ինձ նույնիսկ մեղադրում են ավելորդ փափկությանս համար:

ՖԱՈՒՍՏ- Իսկ ձեր զավակնե՞րը… Հնարավո՞ր է, որ նրանցից մեկնումեկը արքայական նկրտումներ ունի…

ԱՐՔԱ- Օ՜, ոչ, դոկտոր Ֆաուստ… Իմ բոլոր երեք որդիները գիտեն, որ գահաժառանգը կրտսեր եղբարս է, ուստի նրանք այս հարցում որեւէ առանձին շահագրգռություն չեն կարող ցուցաբերել, եթե անգամ ցանկանան:

ՈԴԻՍԵՎՍ- Իսկ ձեր եղբայրնե՞րը… Գուցե նրանց միջեւ են տարաձայնություններ խորացել կամ… գաղտնի համաձայնություն է կայացել, եւ նրանք որոշել են իրենց նպատակին հասնել արտակարգ միջոցներով… Ես գիտեմ, թե գահը ինչպես է գրգռում յուրայիններին…

ԱՐՔԱ- Չեմ կարծում… ավելի շուտ համոզված եմ, որ իմ հինգ եղբայրները դավադրություն չեն ձեռնարկի իմ դեմ… Նրանք ընդհանրապես միասնաբար ոչինչ չեն կարող անել… ցավոք: */Դադար/* Տեսնում եմ՝ դուք շատ կասկածներ ունեք. հիմա ես կզանգեմ կրտսեր եղբորս՝ Սամիրին, կիմանամ կացությունը եւ նրան կհայտնեմ իմ որոշման մասին… Ինքներդ կհամոզվեք, որ ոչ մի արգահատելի բան տեղի չի ունեցել իմ դեմ նրանց կողմից… */Ձեռքի հեռախոսով զանգում է/.* Սամի՞ր… ես եմ… Ո՞նց ես… Բոլորդ ողջ-առո՞ղջ եք… Ներիր, որ էսքան ժամանակ չեմ կապվել քեզ հետ… Հա, Խաղաղ օվկիանոսում նավարկում ենք… շուտով Սիդնեյ կհասնենք… Ինձ մոտ ամեն ինչ լավ է… Ես կարեւոր որոշում եմ կայացրել,

զանգել եմ՝ քեզ տեղեկացնեմ… Քամարում առաջինը դու կիմանաս էդ մասին… */Լռություն/* Ի՞նչ… Ի՞նչ… Ականաջներիս չեմ հավատում… Ճշմարի՞տ ես ասում, թե՞ հերթական չարաճճիությունդ է… Ե՞րբ եք ինձ գահաթող արել… */Լսելով պատասխանը՝ գունատվում-մռայլվում է/* Դու… դու… */շուրջն է նայում, զսպում զայրույթը/* Ես… ես… */Երկար դադար: Ապա հեռախոսը նետում է ծովը/:*

ՆԵՐԿԱՆԵՐ- Ի՞նչ եղավ… արքա… ձեր եղբայրն ի՞նչ է ասում…

ԱՐՔԱ */դժվարությամբ արտաբերելով բառերը/*- Նա ասում է… որ մի շաբաթ առաջ ինձ գահաթող են արել… երկարատեւ… անհարգալից բացակայությանս համար… որ գահաթող են արել՝ պետության շահերից ելնելով…

ՖԱՈՒՍՏ- Իր շահերից ելնելով:

/Արքան լռելյայն ու տրտում հեռանում է տախտակամածի/բեմի/ հեռավոր աջ անկյունը, ուր դրված է իր թութակի վանդակը: Բոլորն ուշադիր հայացքով հետեւում են նրան: Արքան մի փոքր երկար նայում է թութակին/:

ԱՐՔԱ- Թութո, ասա */վանկատելով/* Սա-մի-րը իս-կա-կան տա-կանք է… */Թութակը կրկնում է Արքայի ասածը/:* Ապրես… */Վերադառնում է Հերոսների մոտ/:*

ԱՐՔԱ- Ներեցեք… ձեզ մենակ թողի…

ՈԴԻՍԵՎՍ- Արքա, նրանք ձեզ զրկեցին գահից… վերջին առնետների պես:

ԴՈՆ ԺՈՒԱՆ- Դա հեղաշրջո՞ւմ է…

ԱՐՔԱ */տրտմագին/*- Ի՞նչ կարող եմ ասել…

ՀԱՄԼԵՏ- Ձեւով շատ մոտ է հեղաշրջմանը… Բայց եւ վերապահումներ պետք է անել կատարվածին քաղաքական նման գնահատական տալու համար: Եթե անգամ հեղաշրջում է, ապա դրա ակամա հիմնական նախաձեռնողը… արքա Մաքրին Թեյն է…

ԱՐՔԱ */վերգտնելով իրեն, զուսպ/*- Արդեն… նախկին արքա… Ներեցեք, որ ես կամենում էի այլ բան ապացուցել ձեզ… Դավադիրներ… այո, միշտ էլ գտնվում են յուրայինների մեջ… */Քմծիծաղով/* Որքա՜ն ողորմելի ու քստմնելի են մարդիկ… */Դադար/:*

ՀԱՄԼԵՏ- Արքա, գուցե՞ փոխեք ձեր որոշումը… Քամարում ձեր յուրայիններն ու հարազատները տմարդություն են հանդես բերել, նրանք չսպասեցին, որ դուք կամավոր հրաժարվեք գահից… ձեզ հարմար պահի: Դուք հիմա գահընկեց արվածի վիճակում եք, կարող եք վերականգնել ձեր իրավունքները եւ նորից անել այն, ինչ կամենում եք…

ԱՐՔԱ- Օ՜ ոչ, ես չեմ ուզում խրվել գահի համար գզվռտոցի մեջ… Ինձ չեն հասկանա իմ հայրենակիցները… Թող ինձ դատողները հաշիվ տան իրենց խղճի ու Աստծո առաջ…

Ա.ԿԱՐԵՆԻՆԱ- Արքա, դուք հիմա շատ խոցված ու վիրավորված եք, տեսնում ենք դա: Պետք է դիմանալ... Մենք կսփոփենք ձեզ:

ԱՐՔԱ- Երախտապարտ եմ ձեզ, տիկին Աննա, երախտապարտ եմ բոլորիդ... Բայց խնդրում եմ՝ եկեք չկենտրոնանք իմ զգացողությունների ու իմ դեմ գործած տմարդության վրա, ինչպես Համլետն է ասում... Նայենք առաջ: Հիմա ինձ հուզող գլխավոր հարցն այն է, թե կնվազի՞ իմ հանդեպ ձեր հարգանքը գահաթողությունից... գահընկեց լինելուց հետո...

ՁԱՅՆԵՐ- Ոչ-ոչ, արքա, ի՞նչ եք ասում...

Ա.ԿԱՐԵՆԻՆԱ- Հավանական է՝ մենք քեզ ավելի սիրենք... Իսկ սերը, պարոնայք, չափազանց շատ բան է նշանակում, անհամեմատ ավելի շատ, քան դուք կարող եք հասկանալ: Եվ հետո, արքա, ձեր արածն իսկական խենթություն է, նաեւ դրա համար ձեզ կսիրենք, որովհետեւ ամեն խելոք բան այնպես ձանձրալի է... Իսկ դուք ձանձրախտից եք փախչում, չէ՞...

ԱՐՔԱ- Այո. սիրելի Աննա:

ՈԴԻՍԵՎՍ- Տրոյական պատերազմից հետո, տունդարձի երկար տարիներին ես առանձնապես չէի հիշում իմ արքա լինելը, մի սովորական ռազմիկի պես էի ապրում այդ ընթացքում... Այնպես որ, Մաքրին Թեյ, դուք արագ կվարժվեք ձեր նոր... շարքային քաղաքացու կարգավիճակին, ես ձեզ այդ հարցում օգտակար կլինեմ:

ԱՐՔԱ- Շնորհակալ եմ, Ոդիսեւս, քո ընկերության կարիքը հավանաբար շատ զգամ...

ԴՈՆ ԿԻԽՈՏ- Բայց այսուհետ ո՞վ կլինի մեր արքան... Կյանքը առանց արքաների ինչ-որ չեմ պատկերացնում...

ԱՐՔԱ */ծիծաղելով/*- Դուք կլինեք մեր արքան, Դոն Կիխոտ... Արքան մեռավ, կեցցե նոր արքան... Համաձա՞յն եք...

ԴՈՆ ԿԻԽՈՏ- Պետք է մտածեմ...

ԱՐՔԱ- Ավելին ասեմ, ասպետ. ես կլինեմ քո Սանչո Պանսան, հը՞...

ԴՈՆ ԿԻԽՈՏ- Պետք է մտածեմ... ասացի... Ես դեռ չգիտեմ՝ Դոն Կիխոտ լինե՞լն է ավելի լավ, թե՞ արքա լինելը...

ԱՐՔԱ */շարունակելով ծիծաղել/*- Դե լավ, մտածիր:

ՓՈՔՐԻԿ ԻՇԽԱՆ- Ձերդ պայծառափայլություն, միեւնույն է՝ դուք մեր արքան կմնաք ընդմիշտ... Մենք, Դոն Կիխոտի հետ, շուտով նրա Ռոսինանտ ձիով... Պեգասով նոր մոլորակներ կհայտնաբերենք եւ դրանցից մեկը կկոչենք ձեր անունով...

ԱՐՔԱ- Շնորհակալ եմ, Փոքրիկ: */Դադար/* Իսկ ի՞նչ կասի մեր մեծաշնորհ ծրագրավորողը, նա այսքան ժամանակ լուռ էր... Երեւի մենք նրան հնարավորություն չտվեցինք արտահայտվելու... Ասա, իմ հայ բարեկամ, դու կշարունակե՞ս համագործակցել մեզ հետ, թե՞ դու միայն արքաների ու նրա մերձավորների պատվերներն ես կատարում...

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Ի՞նչ եք ասում, Ձերդ գերազանցություն… Դուք ինձ համար կշարունակեք արքա մնալ, եւ ես սիրով կկատարեմ ձեր բոլոր պատվերները:

ԱՐՔԱ- Շնորհակալ եմ, պարոն Սոս, որ դու վերաբերմունքի փոփոխության խնդիր չունես: Բայց պիտի ասեմ, որ ես այսուհետ քո ընկերն ու բարեկամը կլինեմ հիմնավորապես, առանց արքայական կոչման ու ձեւականությունների. հարկ է լինելու հարմարվել նոր իրավիճակին…

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Կհարմարվեմ, արքա: Իմ գործի կապակցությամբ ասեմ, որ շուտով կավարտենք նոր կերպարների՝ Շվեյկի, Քվազիմոդոյի, Քաջ Նազարի, Ջուլիետայի ու Շահրեզադեի մարմնավորումները… Ներեցեք, արքա, որ հարցնում եմ. միջոցները կբավարարե՞ն, որ մենք շարունակենք այս նախագծի աշխատանքները… Ստեղծված կերպարների պահպանությունը նույնպես շատ ծախսատար է: Մենք ձեզ հետ խոսել ենք նաեւ այլ նախագծերի մասին՝ առավել մասշտաբային ու աննախադեպ…

ԱՐՔԱ- Միջոցների առնչությամբ անհոգ մնա, դրանք դեռ լիուլի կբավարարեն շատ նախագծերի… Իմ անձնական ֆինանսական մեծ կարողությունները ես այսուհետ կտրամադրեմ հենց նման ծրագրերի:

ՀԱՄԼԵՏ- Իսկ ձեր եղբայր նոր արքան չի՞ բռնագրավի ձեր կարողությունները…

ԱՐՔԱ- Այդ մեկը հաստատ նա չի կարող անել. կա բանկային անձեռնմխելության արգելք:

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ- Ուրեմն՝ մենք նոր հորիզոններ կնվաճենք նոր տեխնոլոգիաների ասպարեզում…

ԱՐՔԱ- Այո, եւ եթե կամենում ես, նոր նախագծերի մի մասը կարող ես իրագործել քո հայրենիքում, ես կսատարեմ քեզ նաեւ այդ ուղղությամբ: Հայրենիքի համար միշտ պետք է հոգ տանել, թե չէ վերածվում ես անանուն թափառականի, ավար ես դառնում մեծ հափշտակիչների ու ավազակների ձեռքին:

ԾՐԱԳԱՐԱՎՈՐՈՂ- Շնորհակալ եմ, արքա: Իմ գործընկերները Հայաստանից վերջերս առաջարկել են համատեղ մի ծրագիր ստեղծել, որը մեր հայրենակիցների համար չափազանց կարեւոր է լինելու պաշտպանական ու անվտանգային նկատառումներով. շատ կուզենայի այդ նախագիծը իրագործված տեսնել…

ԱՐՔԱ- Դու խնդիր չունես, պարոն Սոս, երբ կարիք լինի, մեկնիր երկիրդ, աշխատիր նաեւ այնտեղ, դու իմ… մեր պատանդը չես… Հիմա իսկ կարող ես մեկնել, դու ազատ մարդ ես:

ԾՐԱԳՐԱՎՈՐԱՂ- Շնորհակալ եմ, արքա:

ԱՐՔԱ- Նույնը վերաբերում է նաեւ գրող Փանուկ Գոյանին… Մեծաշնորհ գրող, չմոռանաք, որ դուք ազատ անհատ եք, եթե անգամ ինձ մոտ գտն-

վում եք ծառայության մեջ: Երբ կամենաք, կարող եք լքել մեր նավը, եւ միանալ մեզ ձեր ուզած պահին եւ ուզած ժամկետով... Մենք դեռ երկա՜ր ենք նավարկելու համաշխարհային օվկիանոսով, շա՜տ երկար...

ԳՐՈՂ- Շնորհակալ եմ, արքա:

/Արքան մոտենում է ելքին ու կանչում/.

ԱՐՔԱ- Նավապե՜տ...

/Հայտնվում է նավապետը/:

ՆԱՎԱՊԵՏ- Այո, Ձերդ գերազանցություն...

ԱՐՔԱ- Նավի ուղղությունը փոխեք դեպի Բալի կղզի...

ՆԱՎԱՊԵՏ- Լսում եմ: */Դուրս է գալիս/:*

ԱՐՔԱ */դիմելով բոլորին/*- Մենք մի քանի օր լավ ժամանակ կանցկացնենք Բալի կղզում... տոնականորեն կնշենք իմ գահաթողությունը... Հետո պարոնայք Փանուկն ու Սոսը կարող են հեռանալ իրենց գործերով... միառժամանակ, իսկ մենք Հերոսների հետ կշարունակենք մեր անվերջանալի ու հեքիաթային ճամփորդությունը...

ԴՈՆ ԿԻԽՈՏ- Ուռա՜... */գլխարկը հանում եւ օդ է նետում/:* Ռոսինա՜նտս, արքա, Ռոսինանտս չմոռանա՜ք...

ՈԴԻՍԵՎՍ- Վաղուց այսպիսի ճամփորդություն չեմ ունեցել... Պենելոպան այս անգամ երեւի ավելի երկար սպասի ինձ...

ՖԱՈՒՍՏ- Ուրեմն՝ նոր աշխարհներ կճանաչենք... նաեւ՝ մարդկային հոգու նոր աշխարհներ... */Մոտենալով Ա.Կարենինային եւ Դ.Ժուանին/.* Պատրանք է ունայն կարճ կյանքը երկրի, / Երկինքն է միայն օրրանն իղձերի: / Այստեղ ենք հասնում մեր երազածին, / Մեզ վեր է հանում հավերժ կանացին... */Դիմելով Դոն Ժուանին/.* Սովորիր, եղբայր...

ԴՈՆ ԺՈՒԱՆ- Դոկտոր Ֆաուստ, կնոջ հանդեպ սիրո մեջ ես սիրում եմ ազատությունը, ես երբեք չեմ համաձայնի սիրտս չորս պատի մեջ փակել: Ես ճամփորդում եմ, որ կանանց միջոցով ճանաչեմ ու վայելեմ աշխարհը...

ԱՐՔԱ */որ աննկատ մոտեցել էր նրանց/*- Որքան հասկանում եմ՝ կանայք ձեզ գործունյա են դարձնում, այո՞, Դոն Ժուան...

ԴՈՆ ԺՈՒԱՆ- Անշուշտ, արքա. գործերն են որոշում, ոչ թե խոսքերը...

ՀԱՄԼԵՏ */առաջանալով բեմեզր/*- Շնորհակալ լինենք մեր գահընկեց... գահաթող արքային, որ մեզ նոր եզերքներում հնչեղ կերպարների, պայծառամիտ մարդկանց հետ ընկերանալու հնարավորություն տվեց... Մաքրին Թեյը իմաստուն ու մեծահոգի մարդ է. մեր գոհաբանությամբ պատվենք նրան մեր նորովի լինելության համար:

ՆԵՐԿԱՆԵՐ- Շնորհակալ ենք, արքա: */Մոտենում, սեղանից բաժակներ են վերցնում, զարկում իրար/:*

ԱՐՔԱ- Ձեր հանճարեղ էության կենացը, ընկերներ...

ՖԱՈՒՍՏ- Ձեր կենացը, արքա, ձեր լուսաշող դեմքի կենացը, դուք ձեր

պայծառությունն անհատական վարքագծով ապացուցեցիք. վարքը հայելի է, որի մեջ յուրաքանչյուրն իր դեմքն ու հոգին է ցուցանում:

/Բոլորը խմում-դատարկում են բաժակները/:

ԴՈՆ ԿԻԽՈՏ- Փոքրիկ Իշխա՞ն... դու արդեն գինի՞ ես խմում... Դեռ վաղ չէ՞...

Փ.ԻՇԽԱՆ- Դոն Կիխոտ, ես հյութ խմեցի, բայց նա էլ է գինովցնում այսօր... Ուզում ես թռչե՞լ... թռչել դեպի անանուն աստղերը...

/Թեթեւակի ճոճվելով՝ Փ.Իշխանը շարժվում է դեպի բեմի առաջնամաս: Արքան եւ Դոն Կիխոտը հետեւում են նրան եւ ապահովության համար Փ.Իշխանին երկու կողմից առնում իրենց թեւերի տակ: Մյուսները միանում են նրանց եւ միասին տարվում ծփացող ծովի ու հորիզոնի հմայուն տեսարանով: Հնչում է հեռուներ կանչող երաժշտություն/:

ՖԱՈՒՍՏ */Հուշիկ մոտենում է արքային եւ լսելի շշնջում նրա ականջին/*- Արքա, այնուհանդերձ հիշեք, որ դուք ժամանակավորապես եք փրկված. չէ՞ որ մենք՝ Հերոսներս, արհեստական արարածներ ենք... Ձեզ իսկական մարդիկ են պետք, իսկական:

ԱՐՔԱ- Գիտեմ... Բայց այդ հոգսը թող մնա հետագային: Դեռ վայելելու շատ բան ունենք...

ՎԵՐՋ

ապրիլ, 2019

ԿԱՌԱՓՆԱՐԱՆԻՆ ԻՋԱԾ ԱՂԱՎՆԻՆ
ՏՐՈՐԵԼՈՎ ԴԱՀՃԻ ՈՏՔԵՐԸ

/ազգային-քաղաքական դրամա 9 տեսիլով/

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

Փայլակ Զինք՝ հրապարակախոս
եւ պատգամավոր
Սեպուհ արքեպիսկոպոս Մաթյան՝
պատրիարք
Նաթան արքեպիսկոպոս
Տեր-Կորյուն՝ քահանա
Սարկավագ
Մեհմեդ 2՝ սուլթան
Մեհթի՝ սուլթանի
պալատական կառավարիչ
Դատախազ
Սրբուհի՝ Զինքի կինը
Զոհրապ՝ Զինքի որդին /15 տարեկան/
Մելինե՝ Զինքի դուստրը /17 տարեկան/
Գործարար Մուրադ
Բժիշկ Հակոբ

Մանկավարժ Զարեհ
Մայր Արաքսի
Ռուբեն՝ Մ. Արաքսիի որդին
Բագրատ Չամչյան
Էրխան Աքճամ՝ թուրք գրող
Լեյլա՝ Է.Աքճամի կինը
Խորհրդարանի նախագահ
Հավատացյալներ
Պատգամավորներ
Ժանդարմներ
Գործակալներ
Չարագործներ
Մարդասպան

ՏԵՍԻԼ 1

/1453թ. հուլիս, Կոստանդնուպոլիս: Սուլթանը շրջում է բյուզանդական շքեղ ոճով հարդարված իր նոր նստավայրում, զննում ու տնտղում կահկարասին ու պատերի նախշազարդերը եւ իբր իմիջայլոց `զրուցում իրեն ուղեկցող պալատական կառավարչի հետ/:

Սուլթան - Այ թե նրբաճաշակ են էս բյուզանդացիք... ո՞նց են ձեւավորել արքունական պալատը... Շատ են երեւակայել, անթիվ գույներ, պատկերներ ու գծեր են միախառնել... Խոսք չունեմ՝ մեծ տաղանդով են արել էս ամենը, բայց ինձ դուր չի գալիս... Մի ամիս է անցել, իսկ ես դեռ չեմ հարմարվել էս միջավայրին. պիտի փոխել տանք էս զիզի-բիզի բաները, օսմանյան ոճ կներդնենք էստեղ՝ ավելի հարազատ... բարձր ու ազդեցիկ... չէ՞, Մեհթի...

Կառավարիչ – Իհարկե, մեծն սուլթան, մերն ավելի բարձրակարգ ու հոյակապ պետք է լինի, այնպես, որ բոլորն իմանան՝ նոր տերերը առավել քաղաքակիրթ ու զարգացած են, չկասկածեն, որ հենց նրանք իրավունք ունեն տիրելու էս քաղաքին ու երկրին:

Սուլթան - Այ թե մեծամիտն ես, Մեհթի... դու ինքդ քո խոսքերին չես հավատում, բայց փորձում ես լսողությունս շոյել: */Դադար/* Որպեսզի ասածդ կատարվի, պիտի երկար դարեր տքնենք, ու դեռ հայտնի չէ՝ կհաջողվի՞ լիովին օսմանացնել Բյուզանդիան ու հարակից տարածքները, թե՞... */Լռություն/* Լավ, ասում ես՝ ինչպե՞ս վարվենք էդ հայերի հետ... Գիտես՝ ամենից ուժգին նրանց ջոկատներն էին դիմադրում իմ ասկյարներին... Բոլորին սրի՞ քաշեմ, թե՞ աքսորեմ անապատները... Նրանք հիմա կարող են լռել ու հնազանդվել, բայց թաքուն կքայքայեն դժվարությամբ նվաճած տերությունս:

Կառավարիչ – Տեր իմ, կարծում եմ՝ պետք է ավելի հեռատես լինենք եւ ավելի խորամանկ. առայժմ պետք չէ կոտորել ոչ հայերին, ոչ հույներին, ոչ ասորիներին ու հրեաներին, նրանց արդարանալու հնարավորություն պետք է տալ: Պոլիսը նրանց քաղաքն էր երեկ, հիմա արդեն մերն է. նրանք ցանկացել են պաշտպանել իրենց քաղաքը. իսկ դա նշանակում է, որ պոլիսցիները սեփական ունեցվածքի գինը գիտեն:

Սուլթան- Թեեւ շատ ապիկար դուրս եկան էդ հարցում, չէ՞... Փորձեցին պաշտպանել իրենց քաղաքը, բայց պարզվեց, որ նրանք առանձնապես ընդունակ չեն մեր դեմ կռվելու... Պոլիսի ամբողջ ունեցվածքը հիմա իմն է, մերն է, այսինքն՝ նրանք հիմա ոչինչ են, ոչի՞նչ...

Կառավարիչ- Իմ ասածն էն է, մեծն սուլթան, որ կարիք չկա միանգամից ջարդարար ու ելուզակ երեւալ, աչքի ընկնել իբրեւ գերեվարող ու զավթիչ, ինչպես նրանք են ասում… Պետք է ցույց տալ, որ մենք ազատարարների պես ենք մտել Պոլիս, եկել ենք ավելի ծաղկեցնելու էս քաղաքը, եկել ենք նրանց հետ միասին նոր կյանք կառուցելու… Բայց քաղաքը կվերակառուցենք որպես… օսմանյան վեհափառ մայրաքաղաք…

Սուլթան - Եւ այն կկոչվի այսուհետ… Ստամբուլ… Կջնջենք Կոստանդնուպոլիս անունը պատմության էջերից, այն ոչ ոք չպետք է բարձրաձայնի հիմա, վաղը եւ հավիտյանս:

Կառավարիչ- Մարդկության հիշողությունը դժվար է ջնջելը, տեր իմ, գուցեեւ անհնարին, բայց հարկ է ջանք թափել էդ ուղղությամբ:

Սուլթան – Հա, գիտեմ: */Դադար/* Բայց ձեռքերս քոր են գալիս, Մեհթի, ուզում եմ մի լավ դաս տալ էդ հայերին, հետո անցնել Ստամբուլի ու իմ կայսրության վերաշինությանը…

Կառավարիչ – Մեծն սուլթան, արի էս անգամ էդ դասը տանք առանց արնահեղության. մեր հերոսական զորքն արդեն պոլիսցիների շատ արյուն է թափել քաղաքը գրավելու ժամանակ, շատերին էլ գերեվարել ենք: Ներկա պահին հարկ է այլ կերպ նվաճել տեղացիների կամքն ու հարգանքը:

Սուլթան – Հարգա՞նք… ինչ-որ վերացական ես խոսում. միանգամից ասա՝ ի՞նչ ես առաջարկում… եւ ընդհանրապես՝ մի ծամծմիր խոսքդ, Մեհթի, սովորիր կարճ ու դիպուկ խոսել:

Կառավարիչ- Մեր զինվորները, մեծն սուլթան, շատ ավերածություններ են գործել Պոլիսը… Ստամբուլը գրավելիս. պետք է վերակառուցել այն: Առաջարկում եմ վերակառուցման հիմնական աշխատանքներում ներգրավել հայ արհեստավորներին ու վարպետներին, ինչպես եւ՝ հրեաներին…

Սուլթան- Ի հակակշիռ հույների, չէ՞…

Կառավարիչ- Այո-այո, տիրակալ:

Սուլթան */գոհունակ ծիծաղում է/* - Այ թե խորաթափանց միտք ունես, Մեհթի…

Կառավարիչ */շողոմալից ժպտում է սուլթանին/*- Թող օտար արհեստավորները իրենց ձեռքերով մեզ համար վերակառուցեն Պոլիսը, վերակառուցեն որպես Ստամբուլ: Դա այլազգիների համար ավելի խիստ պատիժ կլինի, քան նրանց սպանելն ու աքսորելը:

Սուլթան- Եվ նրանց որոշ արտոնություն ու ազատություն կտանք, ասենք… ձեռք չենք տա նրանց կրոնին, թող պաշտեն իրենց Աստծուն, բայց թաքուն կդրդենք, որ հակվեն դեպի մահմեդականություն… Երբ պետք լինի, ուժով դավանափոխ կանենք:

Կառավարիչ- Մեծն սուլթան, արտոնությամբ մենք կմեղմացնենք պո-

լիսցիների՝ մեր հանդեպ արդեն սրված ատելությունը եւ նրանց կդարձնենք մեր գործակիցները:

Սուլթան */քահ-քահ ծիծաղում է/* - Այ թե պատմական թատրոն պիտի խաղանք, հա՜... Ուրեմն խաղանք էդ թատրոնը, Մեհթի: */Դադար/* Բայց ես լրիվ բավարարված չեմ լինի, եթե միայն այդպես գործենք. գոնե մի քանիսին պատժել է պետք... հրապարակայնորեն... Կսկսենք հայերից:

Կառավարիչ- Բայց ո՞ւմ պատժենք, սուլթան, նրանք գրեթե բոլորը նույն մեղքի ու անմեղության տակ են...

Սուլթան- Նախ, կպատժենք մեր դեմ կատաղի կռված հայկական ջոկատի հրամանատարին... Հը՞... */Սեւեռուն նայում է Մեհթիին. վերջինս լարված սպասում է սուլթանի վերջնական որոշմանը/:* Չէ՜, կասեն՝ օսմանները տեղի լավ ռազմիկներից վախենում ու վերացնում են նրանց... Կպատժենք... ը՜մմմ... էն հայ քահանային, ով ասում էր, թե թուրք զավթիչներին քրիստոնյա աստված մի օր սրբել-տանելու է... Դու էիր էդ լուրը հայտնել ինձ:

Կառավարիչ- Քահանա Հովհանի՞ն... Բայց նա էդ խոսքն ասել է վիրավորանքի ու ցասման պահին, երբ մեր ասկյարները ծեծել են նրան իր վանքում. դրա համար չարժե մահապատժի ենթարկել խեղճ քահանային, սուլթան:

Սուլթան- Արժե, արժե, Մեհթի: Նա խեղճ չէ, նա ըմբոստ է, նա անիծել է մեզ... Իսկ եթե նրա անեծքը մեր դեմ սկսի գործե՞լ մի օր...

Կառավարիչ- Դուք երբեք սնահավատ չեք եղել, տեր իմ, հիմա ինչու՞ հանկարծ կարեւորում եք մի ինչ-որ փոքր, բանավոր ըմբոստություն... */Դադար/* Պիտի զգուշացնեմ ձեզ, որ քահանա Հովհանը մեծ հեղինակություն ունի Պոլիսի քրիստոնյաների մոտ եւ նրա մահապատիժը խորը վրդովմունք կառաջացնի հայերի եւ նրանց հավատակիցների շրջանում... Հնարավոր է՝ էդ կրակը երկար ժամանակ չկարողանանք մարել...

Սուլթան- Դա կահաբեկի բնիկ պոլիսցիներին, նրանք երկար ժամանակ կապրեն վախի մեջ, իսկ վախի կրակում տապակվողներին կառավարելն ավելի հեշտ է, Մեհթի. վերջապես հասկացիր կառավարման հիմնարար օրենքները... Լավ, պատրաստիր հրովարտակ էդ անիծյալ քահանային գլխատելու մասին... Մահապատիժը՝ Պոլիսի... Ստամբուլի կենտրոնում:

Կառավարիչ */փոքր-ինչ չոր/*- Հրամանդ, սուլթան: */Ուզում է դուրս գնալ/:*

Սուլթան- Սպասիր, Մեհթի. մյուս հրովարտակով հայ եւ հրեա վարպետների համախմբում ենք ազադարարում Ստամբուլում... հանուն նրա վերակառուցման... */Լռություն/* Ստամբու՜լ... Չէ մի չէ՝ Կոստանդնուպոլիս... երկար ու անձոռնի անուն է... Պատմության փոփոխությունն անուններից է սկսվում:

/Կառավարիչը գլուխ է խոնարհում եւ շարժվում դեպի ելքը, ապա կտրուկ

շրջվում է եւ փութով վերադառնում ու ծնկի գալիս սուլթանի առջեւ/:

Կառավարիչ */աղերսալից ձայնով/*- Մեծն սուլթան, աղաչում եմ, Պոլիսը... Ստամբուլը արյան մայրաքաղաք չդարձնեք, դա շատ ծանր է նստելու մեր տերության ու օսմանցիների վրա... Մեր սուրը նաեւ բարեգթությամբ պիտի պսակենք, մենք միայն էդպես կարող ենք երկար իշխել այստեղ:

Սուլթան */զարմանքով/*- Էդ ի՞նչ բարի սատանա է մեջդ մտել, Մեհթի... Հո քրիստոնյա չե՞ս դարձել...

Կառավարիչ- Չէ-չէ, սուլթան, ես մուսուլման եմ, էսպես էլ կմեռնեմ, բայց ասում եմ իմ երկար տարիների փորձից ելնելով՝ ուժն ու բռնությունը տեւական իշխելու համար բավական չեն:

Սուլթան- Հասկացա. դու բարի եւ ուժեղ օսմանցի մուսուլման ես ուրեմն, եւ նմաններով ես տեսնում մեր ապագան...

Կառավարիչ- Սուլթանը անսահման ճիշտ է:

Սուլթան- Կխորհեմ դրա վրա, սակայն նախապես ասեմ, որ հազիվ թե իմ մտապատկերում որեւէ արմատական փոփոխություն կատարվի... Քո առաջարկած վարքագծով մենք չենք կարող Եվրոպան նվաճել. դու չես մոռացել, չէ՞, Մեհթի, որ մենք նման նվիրական ծրագիր ունենք... Օսմանյան կայսրությունը դեռ իր լրումին չի հասել: Եթե մենք էդ ծրագիրը չիրագործենք, մեզ շուտով կվտարեն Պոլիսից... ողջ Անատոլիայից կվտարեն... մեզ կքշեն դեպի մեր սիբիրյան ելման դիրքերը: Հիշիր դա, */կիսածաղրական տոնով/* բա-րե-հոգի Մեհթի: Խղճահարությամբ... բարեգթությամբ կայսրություն չես ստեղծի... Իսկ հիմա աճապարիր ու հրամանս կատարիր: */Կառավարիչը խոնարհվում ու հեռանում է: Երբ հասնում է մուտքին, սուլթանը կանչում է նրա հետեւից/.* Հետ արի, Մեհթի:

/Կառավարիչը վերադառնում է սուլթանի մոտ/:

Կառավարիչ- Լսում եմ, մեծն սուլթան:

Սուլթան- Հրովարտակում ավելացրու, որ կպատժվի մի հույն եւս... Նա կգլխատվի հայ քահանայի հետ:

Կառավարիչ */դժվարությամբ արտաբերելով բառերը/*- Բայց... հույնին ինչի՞ գլխատենք, սուլթան...

Սուլթան */մի կարճ պահ մտածելով/*- Հա, նաեւ հրեայի ավելացրու... Ինքդ էլ ընտրիր հույն եւ հրեա մահապարտներին: */Դադար/* Այսպիսով... */խստացնելով ձայնը/* այդ երեքի՝ հայի, հույնի եւ հրեայի պատիժը նշանակում ենք հաջորդ կիրակի, այսինքն՝ վեց օր անց, Ստամբուլի կենտրոնական հրապարակում. պա՞րզ է, Մեհթի...

Կառավարիչ */կմկմալով/*- Պարզ է... հրամանդ ի կատար, մեծն սուլթան:

Սուլթան- Դե գնա հրովարտակները պատրաստիր ու... ճաշից հետո

բեր, որ կնքեմ… իմ այս աջով… */աջ ձեռքը բռունցք է անում, ձախով շոյում աջ մատնեմատին հագցված ուսկեհուռ ու խոշոր կնքամատանին: Կառավարիչը խոնարհվում ու դուրս է գալիս: Սուլթանը շարունակում է զննել պալատի ինտերիերը, ապա կրկնում է բոպեներ առաջ արտասանած խոսքը՝ ասես ստուգելով իր իրավացիությունը/.* Բարեգթությամբ կայսրություն չես ստեղծի… Եւ չես պահի:

ՏԵՍԻԼ 2

/1895թ. սեպտեմբեր, Ստամբուլ: Դատարկ ու կեղտոտ նրբանցք: Քիչ հեռվից լսվում են կատաղի ծեծուջարդի աղմուկ-աղաղակ, տնքոցներ ու հայհոյանքներ, ավելի հաճախ կրկնվում է «Իրավունք եք ուզում… դե ստացեք» մոլեգին խոսքը: Ձայնային այդ չարագուշակ խառնակչությունը խորհրդանշում է թուրք ժանդարմերիայի ու խուժանի արյունալի բռնությունը հայ ցուցարարների նկատմամբ:

Բեմում հազիվհազ տեղաշարժվելով հայտնվում է Բագրատ Ղամչյանը՝ արնաշաղախ ու ծանր վիրավոր: Նա դժվարությամբ նստում է գետնին՝ հետ նայելով, ահաբեկված ու այլայլված: Բ.Ղամչյանն ուզում է պարզել՝ արդյո՞ք իրեն հետապնդում են/.

Ղամչյան */հեւալով, բառերը հատ-հատ ու դժվարությամբ արտաբերելով/-* Կարծես թե… էդ գազաններից պրծա…

/Վայրկյաններ անց հայտնվում են 4-5 չարագործներ՝ մահակներով ու երկաթե ձողերով զինված: Ղամչյանը փորձում է կանգնել ու փախչել, բայց ուժասպառ փլվում է գետնին/:

Ղարագործ 1 */առաջինը մոտենալով Ղամչյանին, սատանայաբար խնդմնդալով/-* Նա ուզում է փախչել, տեսե՞ք… */ծանրորեն հարվածում է վիրավորին/:*

Ղարագործ 2- Չի՜ փախչի… նա մեր որսն է: */Ուժգին հարվածում է Ղամչյանին, նա վերջնականապես փովում է գետնին/:*

Ղարագործ 3 */ուզում է իր բաժին հարվածը հասցնել զոհին. բարձրացնում է երկաթե ձողը, սակայն ձեռքն օդում քարանում է/-* Մեր հարեւան վարժապետ Բագրատ Ղամչյանն է… Մեր ընտանիքի հետ լավ բարեկամություն էր անում… Ինձ տառերն է սովորեցրել… Չէ, ես նրան չեմ խփի:

Ղարագործ 4 */իրենց խմբի ավագը/-* Դե ի՞նչ եղավ քեզ, օղուլ, խփիր-սպանիր դրան…

Ղարագործ 3- Չէ, ինձ հանգիստ թողեք, ես նրա սպանությանը չեմ մասնակցի: */Հետ-հետ է գնում, ապա վազելով՝ հեռանում/:*

Ղարագործ 4- Դու գիտես… */Հարվածում է արյան մեջ կորած Ղամչյա-*

նին, հետո ուշադիր ու դիվային քմծիծաղով նայում հոգեվարքի մեջ գտնվողին/: Լավ, վերջ տանք սրան: */Մեկ անգամ եւս հարվածում է Չամչյանին. նա դադարում է շնչել/:*

Չարագործ 1- Վերջապես սատակեց… Գնացինք, դեռ էլի գործեր ունենք անելու:

/Չարագործներն արագ հեռանում են: Խոշտանգված ու սպանված Բ.Չամչյանը անշարժ փռված է գետնին, իսկ մահագույժ աղմուկ-աղաղակը դեռ շարունակվում է/:

ՏԵՍԻԼ 3

/1915թ. ապրիլ, Ստամբուլ: Աուրբ Աստվածածին եկեղեցում ժամերգություն է: Ներկա հավատացյալները ինքնասույզ ունկնդրում են Տեր-Կորյուն քահանայի երգեցիկ խոսքը/:

Տեր-Կորյուն- «Լցաք առաւոտու ողորմութեամբ քով, ցնծացաք եւ ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց… Ուրախ եղաք փոխանակ աւուրցն՝ յորս խոնարհ արարեր զմեզ եւ ամացն՝ յորս տեսաք զչարչարանս…»

/Ներս են մտնում երեք թուրք ժանդարմ, որոնցից երկուսը հրացաններով են: Ժամերգությունն ընդհատվում է, բոլորը տագնապալից նայում են անկոչ համազգեստավորներին: Ընդհուպ խորանին է մոտենում անզեն ժանդարմը՝ ներխուժածների գլխավորը/:

Ժանդարմ- Քահանա Կորյուն, այստե՞ղ է գրող Վարուժանը…

Տեր-Կորյուն */մի պահ հայացքը պտտեցնելով ներկաների վրա/-* Ոչ:

Ժանդարմ- Իսկ որտե՞ղ է նա…

Տեր-Կորյուն- Չգիտեմ… Ինչու՞ եք փնտրում նրան…

Ժանդարմ */չլսելու տալով քահանայի հարցը, դիմելով բազմությանը/-* Ձեզնից որեւէ մեկը գիտի՞, թե որտեղ կարող ենք գտնել գրող Վարուժանին… */Լռություն/* Լավ, նրան հետո կգտնենք… Բայց էս պահին պետք է մեկին տանենք:

Տեր-Կորյուն եւ ներկաներ- Ո՞ւմ պիտի տանեք… ու՞ր եք տանում…

Ժանդարմ- Դուք իմ հարցին չպատասխանեցիք, բայց ուզում եք, որ ես ձեզ պատասխանեմ. չի լինի… Ուրեմն մենք հիմա կտանենք… */քմծիծաղելով ու մի կարճ պահ տնտղելով ներկաներին/* կտանենք… քահանա Կորյունին…

Ներկաներ- Ինչու՞ քահանային…

Ժանդարմ */հեգնանքով/-* Որովհետեւ նա մեզ դուր է գալիս:

Առանձին ներկաներ- Ինձ տարեք… ինձ տարեք…

Տեր-Կորյուն- Սպասեք, իմ սրբասուն հավատացյալներ, նրանց ես եմ պետք… ես էլ կգնամ: */Իջնում է խորանից եւ մոտենում ժանդարմներին/:*

Ժանդարմ- Քահանա Կորյուն, մենք քեզ միառժամանակ կկալանավորենք:

Ներկաներ- Ինչո՞ւ… Նա հանցանք չի գործել… */Հավատացյալները խմբվում են ժանդարմների մոտ, որ կանխեն քահանայի կալանավորումը: Հրացանակիր ժանդարմները զենքը ուղղում են հավատացյալների վրա/:*

Տեր-Կորյուն */տագնապով/-* Հետ քաշվեք, պետք չէ, կկրակեն ձեզ վրա… Ինձ շուտով բաց կթողնեն, սա թյուրիմացություն է… ընդամենը…

Ժանդարմ */քմծիծաղով/-* Դուք միշտ էլ թյուրիմացության զոհ եք եղել, քահանա… */Հրամայաբար/* Գնացինք:

/Հրացանակիր ժանդարմները թեւանցուկ են անում Տեր-Կորյունին եւ մյուս ժանդարմի գլխավորությամբ նրան տանում դեպի ելքը: Կես ճանապարհին Տեր-Կորյունը գլուխը ետ շրջելով՝ բարձրաձայնում է/.

Տեր-Կորյուն- Եթե սխալ դատ են սկսել իմ դեմ, ապա մեր աստված սրանց դաժանորեն պատժելու է, հավատացե՞ք… Եվ շարունակեք աղոթել, սիրելիներս…

Ժանդարմ */Տեր-Կորյունին հրելով/-* Գնա-գնա, մի հոխորտա. դեռ չգիտեք ձեր գլխին գալիքը… Էս օրը դեռ շատ երկար եք հիշելու:

Հավատացյալ 1 */կամաց, կողքին կանգնածին/-* Էսօր ի՞նչ օր է…

Հավատացյալ 2- Ապրիլի 24-ը…

/Ժանդարմներն ու Տեր-Կորյունը դուրս են գալիս: Մի պահ քար լռություն է տիրում եկեղեցում, ապա սարկավագը վերսկսում է ժամերգությունը/.

Սարկավագ- Հայեա, Տէր, ի ծառայս քո եւ ի գործս ձեռաց քոց, եւ առաջնորդեա որդւոց նոցա, եղիցի լոյս Տեռան Աստուծոյ ի վերայ մեր: Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր, եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ…

/Հավատացյալներն արձագանքում են «Ամեն» եւ խաչակնքում/:

ՏԵՍԻԼ 4

/2017թ. հունիս, Ստամբուլ: Դատախազն իր առանձնասենյակում մտասույզ կարդում է «Ակոս» թերթը: Մի անկյունում նստած են սեւազգեստ երկու գործակալները: Ներս է մտնում Փայլակ Զինքը՝ թղթապանակը թեւի տակ: Նա փոքր-ինչ տարակուսած կանգ է առնում՝ նայելով մերթ դատախազին, մերթ անկյունում նստածներին/:

Դատախազ */իբր ուշացումով նկատելով Զինքի հայտնվելը/-* Ա՜, պարոն Զինք, եկաք ուրեմն… */Վեր է կենում եւ կեղծավոր ժպիտով ընդառաջ գնում*

նրան, մեկնում է ձեռքը եւ բարեւում/: Բարով տեսանք, նստեք: */Իր հսկա գրասեղանին կից սեղանիկի մոտից աթոռ է հրամցնում Զինքին, ինքն էլ տեղավորվում նրա դիմաց՝ թափուր թողնելով իր մեծ բազկաթոռը/:*

Զինք */նստելով/-* Մենք պայմանավորվել էինք առանձնազրույց ունենալ, դեմ առ դեմ, բայց այստեղ ներկա այլ մարդիկ կան */գլխով ցույց է տալիս անկյունում նստած երկու հոգուն/:*

Դատախազ- Դե, ուշադրություն մի դարձրեք, նրանք իմ... օգնականներն են. համարեք, որ դա արարողակարգային պահանջ է, որից չեմ կարող խույս տալ:

Զինք- Ես նման օգնականների հաճախ եմ հանդիպում վերջերս... Նրանք ինչ-որ շատ են նման իրար:

Դատախազ- Պարոն Զինք, խնդրում եմ՝ ուշադրություն մի դարձրեք, համարեք, որ մենք երկուսով ենք, նրանք չկան:

Զինք- Ուղղակի ես ասում եմ, որ մենք պայմանավորվածություն ունեինք... ուրիշ ոչինչ:

Դատախազ- Մենք կարող ենք զրուցել անկաշկանդ ու ընկերավարի... Դուք խորհրդարանի պատգամավոր եք եւ հայտնի հրապարակախոս-խմբագիր, ինչպես ասում են՝ հանրային մարդ եք, այսինքն՝ ձեզ համար խնդիր չի կարող լինել երեք մարդու ներկայությամբ ազատ արտահայտվելը:

Զինք- Ոչ մի խնդիր: */Նկատելի սարկազմով/* Կարող եք ձեր ամբողջ անձնակազմին եւս հրավիրել մեր զրույցին, պարոն դատախազ:

Դատախազ */չլսելու տալով, գրասեղանից վերցնելով թերթը/-* Պարոն Զինք, ես կարդացի ձեր հերթական հոդվածը հայկական թեմայով, եւ ինձ համար հարցականներն ավելացան... Դուք գրում եք, որ Թուրքիայում բազմաթիվ ծպտյալ հայեր կան, նշում եք երկու հարյուր հազար թիվը... Փաստական ի՞նչ տվյալներ ունեք նման հայտարարություն անելու համար, պարոն Զինք...

Զինք- Անկասկած ունեմ, պարոն դատախազ: */Բացում է թղթապանակը եւ առանձին թղթեր հանձնում դատախազին/:* Ահա, կարող եք ծանոթանալ... Ես երկար ուսումնասիրել եմ այդ հարցը, տասնյակ տեղեկությունների հիման վրա համադրումներ ու եզրահանգումներ եմ արել: Ես ոչինչ չեմ հորինում, պարոն դատախազ. իմ էլեկտրոնային փոստը լեցուն է հարյուրավոր ծպտյալ հայերի նամակներով, ամեն օր նոր նամակներ եմ ստանում... Ծպտյալ հայերի նախնյաց գերակշիռ մասը բռնությամբ դավանափոխ է եղել 1915-ին. այդկերպ ֆիզիկապես փրկվել են:

Դատախազ */թռուցիկ նայելով ստացած թղթերը/-* Լավ, ես սրանք հետո կկարդամ, եւ երեւի կարիք լինի դարձյալ հանդիպելու...

Զինք- Դե դուք ինձ տեւական հարցաքննության տակ եք ուզում վերցնել...

Դատախազ- Ոչ-ոչ, պարոն Զինք, սա հարցաքննություն չէ, ես նման իրավունք չունեմ. դուք պատգամավոր եք եւ օգտվում եք անձեռնմխելիության իրավունքից: Ձեզ հարցաքննելու համար իրավական առանձին արգելքներ պիտի հաղթահարել: Ես հիմա ձեզ հետ ընկերական-բարեկամական զրույց եմ վարում, որ փարատեմ իմ որոշ կասկածներ ու մտահոգություններ… Այս զրույցին դուք ներկայացել եք ձեր հոժար կամքով, ձեզ ոչ ոք չի պարտադրել: Կարող էիք եւ չներկայանալ:

Զինք- Ես գիտեմ, թե այս երկրում ինչ ձեւերով են պարտադրում: */Դադար/* Լավ, պարոն դատախազ, շարունակենք մեր, այսպես կոչված՝ ընկերական-բարեկամական զրույցը:

Դատախազ- Շարունակենք… Պարոն Զինք, դուք հայտարարում եք, որ Թուրքիայի նախկին հայաբնակ շրջաններում գանձագողերը ակտիվացել են եւ պղծում են հայկական հին գերեզմանատեղիները. իսկապե՞ս…

Զինք- Այո, ահա… */թղթապանակից հանում եւ դատախազին է փոխանցում լուսանկարներ/:* Մեր թուրք ընկերներն են լուսանկարել… Գանձագողերը շրջում են ոչ միայն գերեզմանավայրերով, պարոն դատախազ, նրանք վայրագ պեղումներ են անում նաեւ հայերի նախկին տնամերձ տարածքներում, որ հիմա թուրքերին ու քրդերին են պատկանում. պատկերացրեք՝ դա դուր չի գալիս նաեւ ներկայիս տերերին:

Դատախազ- Ահա թե ինչ… Իսկ ինչու՞ ոստիկանությունը նման տեղեկություններ չի հաղորդում…

Զինք- Ոստիկանությունը տեղյակ է, բայց լռում է. ինքներդ եզրակացրեք, թե՝ ինչու…

Դատախազ- Պետք է փաստերով խոսել:

Զինք- Իրավապահներին զգուշացրել են գանձագողերի ասպատակությունների մասին, սակայն ոչինչ չեն ձեռնարկում:

Դատախազ- Ես կզբաղվեմ այդ հարցով, պարոն Զինք. գանձագողերին կսաստենք:

Զինք- Տեսնենք…

Դատախազ- Անհոգ եղեք, իմ խոստումն ապարդյուն չի լինում: */Գրասեղանից վերցնում է թերթի մի այլ համար ու բացում/.* Պարոն Զինք, ձեր նախկին հոդվածներից մեկում բառացիորեն գրում եք. մեջբերում եմ */կարդում է/՝* «Ոչ հնարավորություն եմ ունեցել քայլելու ապրիլի 24-ի երթերին, ոչ էլ նախնիներիս հիշատակին ինչ-որ հուշարձան կանգնեցնելու: Սակայն իմ ուսերին վերցրեցի նրանց՝ իմ կյանքի մեջ ապրեցնելու պարտականությունը: Իսկ երբ ուժս ներում էր՝ անգամ ապագայիս մեջ փոխադրելու»: Պարոն Զինք, չե՞ք կարծում, որ դուք՝ հայերդ, անհարկի շահարկում եք ապրիլի 24-ը…

Զինք- Ոչ, ես այդպես չեմ կարծում, ճիշտ հակառակը. մենք, ինչպես

հարկն է, չենք կարողանում այս հարցը բարձրացնել իր ողջ խորությամբ ու ընդգրկումով… Դա միայն հայկական ողբերգություն չէ, դա համամարդկային ողբերգություն է, որի ոչ միայն հեղինակը, այլեւ կրողն է Թուրքիան:

Դատախազ- Մի՞թե…

Զինք- Այո, պարոն դատախազ. ընդհանրապես դահիճն էլ իր ներքին աղետն ունի, որ երկար ժամանակ մնում է չգիտակցված: Իսկ ճշմարտությունից ոչ ոք չի կարող թաքնվել: Թուրքիան պետք է առերեսվի իր պատմության հետ, հակառակ դեպքում նա կհայտնվի ապագայի լուսանցքում:

Դատախազ- Ես մտադիր չեմ ձեզ հետ բանավիճելու, բայց ապագան հանգիստ թողնենք. մենք չգիտենք, թե ապագայում ինչ է լինելու… */Սեղանին դրված շշից ջուր է լցնում իր եւ Զինքի համար: Թափով խմում է եւ շարունակում հարցաքննել/:* Դուք նույնպես աշակերտական երդում եք տվել դպրոցում, չէ՞… «Թուրք եմ, շիտակ եմ, աշխատասեր եմ»:

Զինք- Այո…

Դատախազ- Ի՞նչ էիք զգում այն ժամանակ, երբ արտասանում էիք այդ խոսքերը…

Զինք- Չեմ հիշում այն ժամանակվա զգացածս, սակայն հիմա ասում եմ՝ «Շիտակ եմ, աշխատասեր եմ, հայ եմ»: Թուրք չեմ:

Դատախազ- Չե՞ք կարծում, որ այդ խոսքերը կարող են դիտվել որպես վիրավորանք թրքությանը…

Զինք- Դա չափազանց սխալ մեկնաբանություն կլիներ: Իմ նպատակը թուրքերին ստորացնելը չէ, խնդիրը հոգեվիճակս նկարագրելն է:

Դատախազ- Ես ձեզ հասկանում եմ, բայց բոլորը չէ, որ ճիշտ կըմբռնեն ձեզ: */Լռություն/* Հիմա այսպիսի հարց, պարոն Զինք, կարող եք նաեւ չպատասխանել: */Կանգնում է, մի երկու քայլ կատարում դեպի Զինքի թիկունքը/:* Դուք շատ համարձակ ելույթներ եք ունենում, չե՞ք վախենում… չէ՞ որ մեր մոլեռանդ ազգայնականները երբեմն անվերահսկելի են դառնում…

Զինք */նույնպես վեր է կենում, կանգնում դատախազի դեմ-դիմաց/*- Ես կենդանի մարդ եմ, բնականաբար՝ վախենում եմ… Ես գրել եմ, դա էլ պետք է որ կարդացած լինեք. ես այս երկրում ինձ աղավնու պես եմ զգում, դողում եմ օտար մարդկանց ներկայությամբ, բայց եւ հավատում եմ, որ աղավնիներին ձեռք չեն տա… Իսկ եթե մեռնել է պետք, ապա իմ մահը պետք է լինի ոտքի վրա՝ կանգնած, ոչ թե պառկած՝ անկողնում:

Դատախազ */սեւեռուն նայում է Զինքին, ապա շրջվում ու մի փոքր հեռանում է/* - Մենք պարտավոր ենք հոգալ ձեր անվտանգությունը, դուք պետք է մեր երկրում ձեզ ապահով զգաք… Բայց դա կախված է նաեւ ձեզնից, պարոն Զինք: Ուստի խնդրում եմ՝ մի արեք այնպիսի հանդուգն

հայտարարություններ ու քայլեր, որ կարող են գրգռել մեր ազգայնականներին…

Զինք */քմծիծաղ տալով/*- Պետք չէ ինձ զգուշացնել, պարոն դատախազ, հատկապես, որ ձեր խոսքն առավելս սպառնալիքի պես է հնչում:

Դատախազ- Ես չեմ սպառնում, պարոն Զինք, հավատացեք: Ավելին. ես կարող եմ ոստիկանությունից պահանջել, որ ձեր անվտանգության համար թիկնապահ տրամադրեն ձեր տեղաշարժերի ժամանակ…

Զինք- Շնորհակալ եմ, պետք չէ: Ես լավ գիտեմ իրավիճակը, գիտեմ մեր ու ձեր պատմական վարքը: Ես գիտեմ՝ ինչպես ու դեպի ուր եմ գնում…

Դատախազ- Դեպի ո՞ր, պարոն Զինք, չե՞ք ասի…

Զինք */ցույց տալով սեղանիկին դրված թղթապանակը/*- Այդ թղթապանակի մեջ շատ հետաքրքիր ու կարեւոր փաստագրություն կա մեր երկու ժողովուրդների անցյալի ու փոխհարաբերությունների մասին. կարդացեք, պարոն դատախազ, այդ տեղեկատվությանն արժե տիրապետել, դա ձեզ կօգնի իմանալ, թե իրենց պատմությանն ու իրավունքին տեր կանգնել կամեցող մարդիկ դեպի ուր են պարտավոր շարժվել… Մինչ նոր հանդիպում, պարոն դատախազ: */Սեղմում է դատախազի ձեռքը եւ հեռանում/:*

Դատախազ- Ցտեսություն, պարոն Զինք: */Նայում է հեռացող Զինքի հետեւից: Նրա գնալուց հետո մի պահ մտախոհ անշարժանում է, ապա վերցնում թղթապանակն ու ընկղմվում իր բազկաթոռի մեջ: Մտածում է, ապա բացում թղթապանակն ու փորձում կարդալ, բայց ինչ-որ բան հիշելով՝ բարձրացնում է գլուխը եւ նայում անկյունում նստած գործակալներին/.* Դե ինչ, ամեն ինչ լսեցիք ու ձայնագրեցիք. կարող եք գնալ:

/Գործակալները ոտքի են կանգնում/:

Գործակալ 1- Այո, պարոն դատախազ, շնորհակալ ենք մեզ հյուրընկալելու համար, մենք գնանք:

Դատախազ- Բայց իմ կողմից զգուշացնում եմ՝ նայեք, որ ոչ մի բռնություն չկիրառվի նրա հանդեպ, ձեր հետախուզական ծառայությունը հաճախ է չափն անցնում: Դուք՝ գործակալներդ, նույնպես պատասխանատու եք նրա անվտանգության համար:

Գործակալ 1- Պարզ է:

Դատախազ- Մենք նոր գլխացավանքի մեջ չպետք է ընկնենք, դեռ չենք ձերբազատվել փաստաբան Ժիրայր Մամուլյանի սպանության տհաճ հետեւանքներից…

Գործակալ 2- Հետախուզությունը նրա սպանության մեջ մեղք չունի, պարոն դատախազ:

Դատախազ */ջղային տոնով/*- Ձայնդ, գործակալ… բոլորս մեղք ունենք: */Դադար/* Դրսի աշխարհը մեզ մեղադրում է ազգային խտրականության,

ժողովրդավարական արժեքների ոտնահարման մեջ: Մենք այդ քաղաքակրթական վայրիվերումների մեջ պետք է կարողանանք խուսափել այն ամենից, ինչը չի խոցում մեր ազգային արժանապատվությունը… եւ մեր պետության կայունությունը. հասկացա՞ք…

Գործակալներ- Հասկացանք, պարոն դատախազ… Ցտեսություն ձեզ:

Դատախազ */ձեռքը թափ տալով՝ դուրս գալու կիսաարհամարհական նշան է անում/*- Գնացեք… գնացեք ու լրտեսեք՝ ինչպես հարկն է: */Գործակալները դուրս են գալիս: Դատախազն իր խոսքը շարունակում է միայնության մեջ/.* Բայց լրտեսեք մեր իրական թշնամիներին: */Վեր է կենում, մոտենում պատուհանին եւ մի րոպե մռայլ նայում դուրս: Ապա վերադառնում է իր տեղը եւ խորասուզվում թղթապանակի ընթերցանության մեջ/:*

ՏԵՍԻԼ 5

/2017թ. օգոստոս, Ստամբուլ: Փ.Զինքի բնակարանի հյուրասենյակը: Պատուհանի մոտ մտախոհ կանգնած է Սրբուհին: Ներս է մտնում Զինքը՝ մի փոքրիկ ծաղկեփնջով/:

Զինք- Բարի երեկո, սիրելիս. կներես, որ այսքան ուշացա */մոտենում, գրկում-համբուրում է կնոջը եւ ծաղկեփունջը տալիս նրան/:* Քո սիրած զանգակածաղիկներն են:

Սրբուհի */ծաղկեփնջից հոտ է քաշում մեղմ ժպտալով, ապա հուշիկ ազատվում է Զինքի գրկից/*- Ինչու՞ ուշացար այսքան, Փայլակ, մենք պայմանավորվել էինք ընտանյոք գնալ ծովափին ընթրելու, չէ՞…

Զինք- Այո-այո, սիրելիս, ես էլ շատ էի ուզում, բայց անհետաձգելի ու շատ կարեւոր գործ բացվեց, չէի կարող զանց առնել:

Սրբուհի- Ի՞նչ գործ, Փայլակ, դու վաղուց անկարեւոր գործերով կարծես թե չես զբաղվում, բայց դրանից մեր ընտանեկան կյանքը չպիտի տուժի. մի՞թե ճիշտ չեմ…

Զինք- Ճիշտ ես, ճիշտ ես, սիրելիս, բայց եթե իմանաս, թե այսօր ինչ հյուրեր եմ ունեցել իմ գրասենյակում, ինձ չես նախատի…

Սրբուհի- Ի՞նչ հյուրեր…

Զինք- Էրզրումի կողմերից ծպտյալ հայեր էին ինձ այցի եկել, մոտ տաս հոգի… Նրանք ուզում էին, որ ես լսեի իրենց պատմությունները եւ այդ ամենի մասին թերթում գրեի… Շիտակ, իրենք իրենց վերգտնող ու հարգող իսկական հայեր են: Մոտ հինգ ժամ ես նրանց լսում էի ու ձայնագրում… Ինչ պատմություններ են՝ մեկը մեկից սրտահույզ ու հիշարժան… Ուզում են իրենց նախնյաց հավատքին դառնալ, բայց նրանք նաեւ զգուշա-

վոր են, ասեմ՝ վախեցած… Նրանք գիտեն, որ իրենց համար հեշտ չի լինի վերահայացման ուղին:

Սրբուհի- Ասում ես՝ Էրզրումի կողմերի՞ց են…

Զինք- Այո, Սրբուհի, որտեղից քո պապերն են: */Կրկին գրկում է կնոջն ու բաց թողնում/:* Գիտե՞ս՝ ինչ եմ մտածում. պետք է ստեղծել մի կազմակերպություն… մի հիմնադրամ, որը կզբաղվի դավանափոխ ծպտյալ հայերի իրավունքների վերականգնման հարցերով… Նրանց իրավական ու բարոյական լուրջ աջակցություն է պետք:

Սրբուհի- Քեզ վրա ավելի ուժգին կհարձակվեն թուրք ազգայնականները, Փայլակ… Դու մտածե՞լ ես այդ մասին…

Զինք- Մտածել եմ, Սրբուհի, անհոգ մնա: Որպեսզի մենք միանգամից ուժեղ գրոհի տակ չընկնենք, սկզբնական շրջանում այդ հիմնադրամը կզբաղվի նաեւ Թուրքիո ազգային մյուս փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությամբ. դու գիտես, թե այդ ասպարեզում որքան ահռելի աշխատանք կա անելու… Դու կօգնես ինձ, կլինես այդ կազմակերպության հիմնական համակարգողներից մեկը. չէ՞ որ դու էլ նման տուժյալներից մեկի ժառանգն ես, այդ ցավին քաջածանոթ ես առաջին ձեռքից… Ի՞նչ կասես, սիրելիս, ե՞րբ սկսենք աշխատանքը… վա՞ղը…

Սրբուհի- Փայլակ, ես ուզում էի քեզ հետ ուրիշ… ավելի կարեւոր հարց քննարկել:

Զինք- Ի՞նչ հարց, սիրելիս…

Սրբուհի */մի պահ լռում է՝ ասելիքն ընդգծելու եւ արժեւորելու համար/-* Մեր ընտանիքն ուզում է, որ մենք… թեկուզ մի որոշ ժամանակով, Ամերիկա տեղափոխվենք… Մեր բարեկամները խոստացել մեզ օգնել այնտեղ գտնվելու ժամանակ:

Զինք- Ի՞նչ… Այսինքն՝ մեր ընտանիքը առանց ինձ որոշել է Ամերիկա տեղափոխվելու հա՞րց լուծել, Սրբուհի…

Սրբուհի- Դե, առանց քո համաձայնության մենք նման որոշում չենք կարող կայացնել. ուզում էի ասել, որ մենք երեքով այդ կարծիքին ենք… Մենք վախենում ենք, Փայլակ, մենք քեզ… բոլորիս համար սարսափելի վախենում ենք:

Զինք- Այդ երբվանի՞ց ես վախին անձնատուր եղել, Սրբուհի ջան. ես քեզ գիտեմ որպես արիակամ կնոջ, ով պատրաստ է ինձ հետ քայլել ամենուր… Մի՞թե փոխվել է քո վարքագիծը… քո վերաբերմունքը իմ հանդեպ…

Սրբուհի- Դե չէ, ես նույնն եմ, պարզապես իրավիճակը ստիպում է ավելի սթափ նայել մեր շուրջ կատարվող դեպքերին… եւ համարժեք եզրակացություններ ու քայլեր կատարել:

Զինք- Իմ հեռատես կի՜նը… */Մտածում է՝ ակնդետ նայելով Սրբուհուն/:*

Ուրեմն՝ դուք երեքով արդեն նույն մտքին եք… Զոհրապին էլ ես արդեն մտափոխել, հա՞… Կանչիր երեխեքին, ընտանեկան խորհուրդ կանենք:

Սրբուհի- Լավ, բայց հիշեցնում եմ՝ քանի որ դու քեզ ժողովրդավար ես համարում, ուրեմն մեծամասնության կարծիքը կլինի որոշիչ, համաձա՞յն ես…

Զինք */տարակուսած նայելով կնոջը/-* Լավ, համաձայն եմ:

Սրբուհի- Բարի, հիմա երեխեքին կանչեմ: */Դուրս է գալիս եւ քիչ անց վերադառնում Զոհրապի ու Մելինեի հետ: Զավակները ողջագուրվում են հոր հետ/:*

Զինք- Դե, ո՞նց եք, երեխեք ջան…

Մելինե եւ Զոհրապ- Լավ ենք, հայրիկ, դու ո՞նց ես…

Զինք- Լավ եմ, անուշիկներս, լավ եմ: Քոլեջում պարապմունքները հաջո՞ղ են անցնում…

Մելինե- Այո, հայրիկ:

Զոհրապ- Դե, ոչինչ, հայրիկ, ուղղակի շատ ավելորդ առարկաներ են մեզ պարտադրում, գլխացավանք է…

Զինք- Բան չկա, պիտի հաղթահարել: */Մեկ-մեկ նայելով ներկաներին/:* Հիմա մենք ընտանեկան խորհուրդ կանցկացնենք, եղեք առավելագույնս անկեղծ ու համարձակ: Մեր այս որոշումից, հնարավոր է՝ կախված լինի իմ… մեր ընտանիքի ապագան: Դե, խորհրդի օրակարգը թող հրապարակի մայրիկը… Զգուշացնեմ, որ միանգամից կքվեարկենք, քանի որ մենք բազմիցս քննարկել ենք այս հարցը, նոր ավելացնելու բան հազիվ թե լինի, բայց եթե կա՝ խնդրեմ: Պարզապես ուշ ժամ է, չեմ ուզում դարձյալ բանավեճերի մեջ խրվենք եւ մեր գիշերային հանգիստը փչացնենք… Բարի՞…

Ներկաներ- Այո:

Զինք- Խոսքը քոնն է, Սրբուհի:

Սրբուհի- Օրակարգում մի հարց ունենք. ովքե՞ր են համաձայն, որ մեր ընտանիքը տեղափոխվի Ամերիկա…

/Սրբուհին անվարան բարձրացնում է ձեռքը, նրան հետեւում է Մելինեն: Զոհրապը տատանվում է. նախ, դանդաղ բարձրացնում է ձեռքը, ապա հոր զարմացական հայացքը տեսնելով՝ իջեցնում է: Բոլորն իրար են նայում/:

Զինք- Ձայները կիսվեցին: Ուրեմն այս խնդրին կանդրադառնանք մեկ անգամ եւս… երկու ամիս անց, երբ որոշ հարցեր ինձ ու ձեզ համար շատ ավելի հստակ կլինեն. եղա՞վ…

Զոհրապ եւ Մելինե- Այո, հայրիկ:

Զինք- Սրբուհի ջան, ինքդ տեսար, որ մեծամասնությունը որոշեց հարցին նորից անդրադառնալ երկու ամիս անց… Այսպիսով՝ ընտանեկան խորհուրդն ավարտված է: Երեխեք ջան, դուք գնացեք քնելու, իսկ ես ու

մայրիկը դեռ մի քիչ կզրուցենք… Ես, թեեւ ուշ ժամ է, նաեւ մի փոքր կընթրեմ, ահավոր քաղցած եմ: */Սրբուհուն/* Գնանք, խոհանոց, սիրելիս, տեսնենք՝ քո խոհարարական տաղանդն ինչ նոր փայլատակումներով կարող է մեզ զարմացնել… Հա, ծովափնյա ընթրիքն էլ տեղափոխում ենք վաղը:

Սրբուհի- Եթե, իհարկե, քեզ հաջողվի ժամանակին ազատվել վերահաս գործերից…

Զինք- Կարծում եմ՝ վաղը բախտս կբերի:

/Զինքը գրկում է Սրբուհու ուսը եւ նրա հետ դուրս գալիս: Դուրս են գալիս նաեւ Զոհրապն ու Մելինեն: Անմարդ սենյակի լույսը մեկեն անջատվում ու միանում է, այդպես՝ 3-4 անգամ: Խոհանոցից լսվում է Սրբուհու դժգոհ ձայնը. «Մեր լույսն ուզում են կտրե՞լ, ի՞նչ է…»/:

ՏԵՍԻԼ 6

/2017թ. սեպտեմբեր, Ստամբուլ: Հայոց թեմի պատրիարքարանում թեժ քննարկվում է Փայլակ Զինքի գործունեությունն ու հասարակական վարքը՝ նրա ներկայությամբ: Պատրիարքի եւ առանձին թեմականների հետ հավաքին ներկա են նաեւ համայնքային խորհրդի մի շարք անդամներ/:

Պատրիարք */դիմելով Զինքին/-* Որդիս, մեկ անգամ եւս տագնապով կրկնում եմ, որ թուրքերը չեն ներելու քո հանդուգն ու հայանվեր կեցվածքը… Աղաչում եմ, ավելի զուսպ եղիր քո հրապարակումներում ու ելույթներում, մենք քո ապահովության համար ենք դողում:

Ներկաներ- Այո… այո…

Զինք- Իսկ այստեղ ներկաներից ո՞վ ունի ապահովություն… Ընդհանրապես Թուրքիայում ապահովություն եղե՞լ է վերջին վեց հարյուր տարվա ընթացքում, նույնիսկ թուրքերի համար… Հիմա դուք ասում եք՝ թուրքերը ինձ չեն ների… Այսինքն՝ ինձ կչեզոքացնեն՝ կբանտարկեն կամ կգյուլլեն, չէ՞…

Ներկաներ- Այո…

Զինք- Դե հերն էլ անիծած, թող… Հո առաջին անգամ չեն հայ մտավորական ոչնչացնում… Գոնե պետք է տրորել դահձի ոտքերը… Ես չեմ ասում՝ զենք պարզենք նրանց դեմ: */Ինչ-որ բան հիշելով/.* Սպասեք, մոռացա հարցնել. սրբազան հայր, այս հավաքը կնոջս՝ Սրբուհու հորդորո՞վ եք նախաձեռնել…

Պատրիարք- Ոչ-ոչ, որդիս, սա մեր թեմական խորհրդի նախաձեռնությունն է: Գաղափարը Նաթան արքեպիսկոպոսինն է */նայում է Նաթան արքեպիսկոպոսին/,* ինձ էլ նրա հետ համահեղինակ համարեք: Մենք գուցե ավելին գիտենք քո կացության մասին, քան տիկին Սրբուհին… Մենք պարտավոր ենք կանխել քեզ սպառնացող ամեն մի չարիք. մենք չենք հաշտ-

վի այն մտքի հետ, թե քեզ կարող են բանտարկել կամ... գնդակահարել: Մենք չենք կարող նման կորուստ թույլ տալ մեր համայնքում, որն առանց այն էլ դանդաղ մարում է:

Զինք- Հարգելիներս, ես պատգամավոր եմ, ես օգտվում եմ անձեռնմխելիության իրավունքից, ինչո՞ւ եք այդքան տագնապում...

Նաթան արքեպիսկոպոս- Էհ-էհ, մի՞թե դու այդքան դյուրահավատ ես... Հիշեցնեմ քեզ, որդիս, որ ձեր խորհրդարանի պատգամավորներից 10 հոգու... ակտիվ ընդդիմադիրներին զրկել են անձեռնմխելիությունից ու բանտարկել. քեզ էլ նույնը կանեն... Հա, ի դեպ հիշեցնեմ, որ քեզ անցյալ տարի արդեն 6-ամսյա բանտարկության են դատապարտել:

Զինք- Դե, դատարկ բան է:

Նաթան արքեպիսկոպոս- Ոչ, նրանք քեզ դրանով արդեն նախազգուշացրել են, պարոն Զինք: Դու նրանց համար այս պահին ամենամոլի ընդդիմադիրն ես. իշխանություններին ուղղակի չես քննադատում, բայց հարցեր ես բարձրաձայնում, որոնք ուղղակի ցնցում են թուրքական պետության հիմքերը... Քո դեմ որսն արդեն սկսված է... Աղաչում ենք, Զինք, հետ կանգնիր քո հանդուգն ելույթներից, խնայիր քեզ ու մեզ...

Զինք- Սրբազան հայրեր, իմ հոգու ձայնն է մղում այդ քայլերին, իմ Աստված է հուշում, թե ինչպես ապրենք այս երկրի վրա...

Բժիշկ Հակոբ- Պարոն Զինք, մենք քեզ շատ ենք սիրում, գիտես, դու մեր խիղճն ես, մեր ձայնը, մեր երազանքը... բայց կրակի հետ ես խաղում: Կգա ժամանակը, երբ դու, մենք ազատորեն կխոսենք մեր ցավից ու պահանջներից...

Զինք- Բայց ե՞րբ կգա այդ ժամանակը, բժիշկ Հակոբ, ո՞վ կբերի մեզ այդ ժամանակը... Դա ինքնիրեն չի գալիս: Եկեք բացի սպանողներից ու սպանվողներից, մի քիչ էլ ապրողների, կենդանի մնացածների մասին մտածենք. նրանք արժանի են դրան:

Գործարար Մուրադ- Համամիտ ենք, պարոն Զինք. ուրեմն հիշիր, որ ապրող մեր հայկական համայնքը Ստամբուլում առավել վտանգվում է, երբ քո խրոխտ ու արժանապատիվ ձայնն է հնչում... Այդ իրավիճակը ցավալի պարադոքսի պես է, բայց դա է փաստը: Եթե դու վտանգված ես, նշանակում է վտանգված ենք նաեւ մենք: Դու մեզ փորձության չես ուզում մատնել, չէ՞, սիրելի Զինք...

Զինք- Իհարկե՝ ոչ, պարոն Մուրադ. ավելին՝ ես ուզում եմ այնպիսի միջավայր ստեղծել, որ ամենքս ապահով լինենք բոլոր առումներով, ասենք՝ քո գործարարության ընթացքում խոչընդոտների չհանդիպես, նոր կապիտալ ձեռք բերես, որի մի մասը միշտ էլ հատկացրել ես մեր համայնքի կարիքներին:

Գործարար Մուրադ- Իմ կապիտալը հանգիստ թող, պարոն Զինք. ան-

կեղծորեն եմ ասում՝ այդ հարցն ինձ բնավ չի մտահոգում՝ կապիտալ կկորցնեմ, թե նորը կշահեմ… Հիմա ինձ ու մեզ անհանգստացնողը քո ապահովության խնդիրն է… Գիտես, թե նրանք */ձեռքով դուրսն է ցույց տալիս/* հարցերը ոնց են լուծում. մի խուլիգան կուղարկեն քո հետեւից եւ */ձեռքով կրակելու նշան է անում/* … թրըխկ… Իսկ այդ խուլիգաններին նախօրոք լավ պատրաստում են. հաշվեհարդարի վճիռներն էլ վերեւներում են կայացվում:

Ներկաներ- Այո… այո…

Բժիշկ Հակոբ- Քո գրասենյակի պատուհաններն անցած ամիս քարկոծել են, չէ՞, եւ ոստիկանությունը հայտարարել է, թե խուլիգաններն են արել… Լավ է, որ գրասենյակում ոչ ոք չկար, թե չէ վիրավորներ կարող էին լինել…

Գործարար Մուրադ- Եվ բժիշկ Հակոբը */ցույց տալով նրան/* պիտի աճապարեր ձեզ վիրակապելու… թողնելով իր կլինիկայի հիվանդներին:

Բժիշկ Հակոբ- Բան չկա, ես միշտ պատրաստ եմ բոլորիդ վիրակապելու… Բայց Աստված մի արասցե, որ գործը հասնի դրան:

Մանկավարժ Զարեհ- Պարոն Զինք, գուցե՞ միառժամանակ դադար տաք, հը՞… Գիտենք՝ գրեթե օր չի լինում, որ ձեզ բացատրությունների համար չկանչեն իրավապահ մարմիններից… Խորհրդարանական ձեր սուր ելույթներն ու հրապարակումները գրգռում են թուրքերին… բորենին ուզում է նորից հոշոտել… Պետք է խույս տալ դրանից: Ձեր ֆիզիկական ներկայությունն անգամ մեզ համար շատ ոգեւորիչ է: Դադար առեք միառժամանակ, պարոն Զինք, հետո գուցե ուրիշ ձայներ էլ միանան ձեզ…

Զինք- Եթե լռեմ, կասեն՝ ես սխալվել ու մեղա եմ գալիս, կամ էլ՝ վախեցել եմ… */Դադար/* Հուսամ՝ բոլորդ հասկանում եք՝ ես մեր ազգակիցների ազատ, իրավահավասար գոյության ու բարօրության համար եմ պայքարում… ես սնափառ ու արկածախնդիր չեմ, ես խորապես չեմ ուզում, որ ձեզնից որեւէ մեկի մազն անգամ պակասի… Շարունակ գլխումս է մեր մեծ պոետի խոսքը՝ «Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի»: */Կանգնում եւ դանդաղ քայլում է ներկաների առջեւով/:* Ես ձեզնից հատուկ աջակցություն չեմ ուզում՝ ոչ հրապարակայնորեն, ոչ էլ մասնավոր կարգով: Բայց գոնե ինձ մի սանձեք ձեր տեղի ու անտեղի մտավախություններով ու սրտապատառ հորդորներով… Դուք ճիշտ եք, բայց ես ավելի ճիշտ եմ:

Մայր Արաքսի- Ախ-ախ, որդիս, որքան համառն ու պայծառն ես, որքան ազնիվն ու զոհանվերը… */Վեր է կենում եւ գնում գրկում Զինքին/* Ես աղոթում եմ քեզ համար ամեն Աստծո օր, աղոթում եմ քո լուսավոր ու բաղձալի նպատակների համար… Մենք բոլորս այստեղ քեզ նման ենք խորհում ու երազում, մենք բոլորս թաքուն երանի ենք տալիս քեզ, որ այդքան արիություն ունես ամբարած քո մեջ: Թող օրհնյալ լինի քո ուղին, որդիս:

Բայց… */հեկեկալով՝ վերադառնում, նստում է տեղը/* սիրտս վատ բան է գուշակում, որդիս, իմ աննման Փայլակ…

Զինք */Մայր Արաքսիին փորձում է հանգստացնել/*- Դե-դե, Մայր Արաքսի, այդքան շուտ արցունքներ մի հեղիր ինձ համար, հանգստացեք… */Մայր Արաքսին հանդարտվում է: Զինքը շարունակում է քայլել/:* Դուք գիտեք իմ տոհմի պատմությունը. մեր տոհմական զոհերի շղթան գրեթե երբեք չի ընդհատվել… Մեր ամեն սերնդի ժամանակ օսմանցիք մահապատիժներով ու լլկանքներով հիշեցրել են մեզ, որ մեր նորկայությունը իրենց համար բնավ ցանկալի չէ: Այդպես է՝ եկվորները միշտ ատելությամբ են լցվում բնիկների հանդեպ… Դե, իհարկե, խոսքս բոլորին չի վերաբերում, թուրքերի մեջ միշտ էլ գտնվել են վեհանձն մարդիկ… Ցավոք, ատելությունն ուժ է հաղորդում, բայց եւ, բարեբախտաբար, ատողներին խոցելի ու քստմնելի է դարձնում աշխարհի առաջ: Ինչ որ դուրս է մարդկայնության շրջանակից, այն պատմության ահեղ դատաստանին է արժանանում:

Պատրիարք- Ե՞րբ կգա այդ ահեղ դատաստանը, որդիս… մենք պետք է կարողանանք ապրել մինչեւ այդ ժամանակները, չէ՞… Ուստի լրացուցիչ խոհեմությունը չի խանգարի, որ մենք միամտորեն չգրգռենք բո-… նրանց */հետ է նայում՝ դեպի սենյակի խորքը, ասես ինչ-որ մեկից զգուշանալով՝ իջեցնում է ձայնը/.* Մենք շատ-շատ կորուստներ ունեցանք անցյալում նաեւ մեր անհեռատեսության հետեւանքով… Որդիս, անտեղի մի հրապուրվիր նոր ժամանակների բերած գաղափարներով. դրանք գալիս ու գնում են, իսկ մեր ախոյանը շարունակ մեր կողքին է */դարձյալ հետ է նայում/* իր բաց երախով… Զուսպ եղիր, որդիս, մեր խնդիրների մեջ հրապարակավ դեռ այդքան մի խորացիր, մենք բոլորս մահացու վտանգի առաջ ենք…

/Ներս է մտնում մի երիտասարդ՝ Ռուբենը, եւ կամաց բարեւելով ու ներողություն խնդրելով՝ հանգիստ կանգնում մուտքի մոտ/:

Մայր Արաքսի */ուրախացած, ինքնաբուխ/*- Տղաս է՝ Ռուբենը… */Կողքին նստածին/.* Երեւի անհանգստացել ու եկել է իմ հետեւից… Սրտի նոպաներ եմ ունենում…

/Ռուբենը մորը հեռվից ձեռքով ողջունում է: Ներկաները մի պահ սեւեռվում են Ռուբենի վրա, ապա կարճ դադարից հետո շարունակում քննարկումը/:

Նաթան արքեպիսկոպոս- Գուցե կգան ժամանակներ, երբ մենք թուրքերի հետ կկարողանանք հաշտություն կնքել ու խաղաղ ապրել կողք-կողքի, սակայն դրա համար դեռ երկար ճանապարհ պիտի անցնել… Դեռեւս այս երկիրը մի հսկայական կառափնարան է հիշեցնում, ու եթե անգամ հանդգնում ես տրորել դահճի ոտքերը, դա սփոփանք չէ, դա նպատակ լինել չի կարող… Սիրելի Զինք, դու նման ես այդ կառափնարանին իջած

աղավնու, որի վրա ընկած է հսկայական յաթաղանի ստվերը: Թռիր, Զինք, փրկիր քեզ, փրկիր քեզ ու մեզ՝ դա ենք ասում քեզ…

Ներկաներ- Այո… այո…

Նաթան արքեպիսկոպոս- Առայժմ հարկ է խելացիորեն դիմակայել մեր գոյության դեմ ծառացած մարտահրավերներին, մինչեւ բարի ժամանակներ… Մենք դարձյալ մտահոգ ենք մեր ֆիզիկական գոյության խնդրով: Եթե մեզ այստեղ ֆիզիկապես ոչնչացրին վերջնականապես, ապա ոչ մի գերարդար ելույթ այլեւս մեզ անհրաժեշտ չի լինի:

Զինք- Ես կոկորդս պատռում եմ հենց դրա համար, որ նրանք նոր պատրվակ չգտնեն մեզ ոչնչացնելու. ի լուր աշխարհի եմ աղաղակում, որ մենք վտանգված ենք: */Դադար/* Չեմ կարծում, թե նրանք կհամարձակվեն մեզ ձեռք տալ այսքանից հետո, աշխարհի աչքի առաջ: Հիմա Թուրքիան առաջվա փակ ու ինքնագլուխ երկիրը չէ, ուր ինչ ուզենան՝ անեն, հիմա մոլորակի չորս ծագերից բոլորն են տեսնում, թե ինչ է կատարվում այստեղ… */Ներկաներից շատերը գլուխներն օրորում են/:* Չէ, սրբազան հայրեր, լռելն այլեւս մեզ համար ապահովություն չէ… Նայեք մեր համայնքին, տեսեք՝ որքան ենք մնացել այժմ. վերջին հարյուր տարում այստեղ մեզնից ոչ ոք չի աղաղակել մեր ցավերի մասին, եւ ի՞նչ, ապահո՞վ էինք… Եթե՝ այո, ապա ինչո՞ւ են մեր եղբայրներն ու քույրերը շարունակ հեռանում այս երկրից… Որովհետեւ միշտ տեսնում ու զգում են, որ հագուստի տակից դաշույն կա իրենց դեմ ուղղված… */Ներկաներից ոմանք գլխի շարժումով հաստատում են ասվածը/:* Բայց սա նաեւ մեր երկիրն է, եւ մենք այստեղ էինք նրանցից առաջ, մենք պետք է շարունակենք ապրել այստեղ նրանցից ոչ պակաս իրավունքներով ու ազատությամբ… Ես ընդամենը սա եմ ուզում ասել ամենքին:

Ռուբեն */խանդավառված/-* Հոյակա՜պ է… կեցցեք, պարոն Զինք…

/Ներկաների մի մասը կշտամբանքով նայում է Ռուբենին, Զինքը, Մայր Արաքսին եւ այլոք խրախուսական ժպտում են երիտասարդին/.

Պատրիարք */մտահոգ/-* Արդեն երիտասարդներն էլ են վարակվել Զինքի կամքով. սա էլ նոր տագնապ է մեզ համար: */Կանգնում է՝ խոսքն ուղղում Զինքին/.* Որդիս, մենք քեզ հետ ենք հոգով ու մտոք, եւ մենք */ցույց տալով ներկաներին/* երեւի բացառությամբ մեկի */նայելով Ռուբենի կողմը, ապա ուղղվելով դեպի Զինքը/* մի թախանձանք ունենք քեզ. մի փոքր դադար վերցրու… մի քանի ամիս, գուցե մի տարի, որոշ ժամանակով մի բորբոքիր հայկական խնդիրը: Մի քանի ամսով հանգստացիր արտերկրում… Հայաստան մեկնիր, մոտիկից ճանաչիր մեր հայրենիքի վերջին պատառը: Հիմա դու նրանց */հետ է նայում/* թիվ մեկ թիրախն ես, քեզ հետ ամեն ժամ կարող են հաշվեհարդար տեսնել… Մենք ուզում ենք ապահովագրել քեզ ակնհայտ վտանգից: Խոստացիր, սիրելի Զինք, որ միառժամանակ դադար

կվերցնես, հանուն քեզ, հանուն մեզ, հանուն մեր Աստծո… Դա խնդրում եմ քեզնից որպես պատրիարք, որպես հայ մարդ, որպես այս համայնքի համար պատասխանատու, որպես քո բարեկամ…

Զինք */մի պահ խորհում է, ապա մոտենում պատրիարքին ու համբուրում նրա աջը/-* Սրբազան հայր, ես խոնարհվում եմ ձեր, մյուսների իմաստության ու սրտակցության առաջ… բայց… բայց այս պահին ոչինչ խոստանալ չեմ կարող: Ես խոստում ունեմ մեր ժողովրդին ու մեր Աստծոն… Թաքուն ուխտ ունեմ, այն չեմ դրժի:

Ռուբեն */ոգեշնչված/-* Պարոն Զինք, ես ձեզ հետ եմ, ես ձեր կողմնակիցն եմ, ես ձեր զինակիցն եմ… Ես ձեզ հետ կգամ՝ ուր կասեք… */Մյուսներին/* Հասկացեք՝ նա մեր ուղեվարն է, նա մեր ապագան է:

Պատրիարք */սաստ ձայնով/-* Բայց նախ պետք է ներկան ապրել, պարզամիտ… */Ձայնը մեղմացնելով/* Ախ, ջահելներ, ջահելներ, երանի ես էլ ձեր տարեկիցը լինեի ու երազանքով լեցուն ձեզ նման…

Զինք */նայելով ժամացույցին, պատրիարքին/-* Սրբազան հայր, ներեցեք, ես պետք է գնամ, միջազգային համաժողով է ընթանում, ելույթ պիտի ունենամ:

Պատրիարք- Դարձյալ մեր մասի՞ն պիտի խոսեք…

Զինք- Բայց մի՞թե մեզ համար այս պահին կա ավելի հրատապ թեմա, սրբազան հայր… Դե, ես գնամ, ողջություն եմ մաղթում բոլորիդ, ամենայն բարիք ձեզ: Ցտեսություն: */Համբուրում է պատրիարքի աջը, ձեռքը օդում թափահարելով՝ ոտքի կանգնած ներկաներին հրաժեշտ է տալիս ու հեռանում: Անմիջապես անտեսանելի անկյունից հայտնվում են այն նույն սեւազգեստ երկու գործակալը, որոնք ներկա էին դատախազի հետ Զինքի հանդիպմանը: Գործակալները հընթացս, իմիջայլոց հաջողություն են մաղթում սենյակում գտնվողներին եւ աճապարանքով դուրս գալիս/:*

Առանձին ներկաներ */զարմացած նայելով գործակալների հետեւից/-* Ովքե՞ր են էս անկոչ մարդիկ…

Պատրիարք- Վաղօրոք եկան ու պնդերեսորեն մնացին… Ասացին՝ վերեւից հրահանգ է: */Մտահոգ/* Չգիտեմ՝ ով է նրանց տեղյակ պահել մեր հավաքի մասին: Բայց մեծ հաշվով՝ թքած նրանց վրա, մենք գոնե մեր տանը ազատ պիտի խոսե՞նք, թե՞ չէ…

Գործարար Մուրադ- Նրանք բոլորիս հետեւում են…

Բժիշկ Հակոբ */քմծիծաղով/-* Հա, վիրահատարան էլ են խցկվում…

Ռուբեն */փութաջան մոտենալով մորը/-* Մայրիկ, լա՞վ ես…

Մայր Արաքսի- Հա, զավակս… Ինչու՞ եկար, ես տուն կգայի մենակ:

Ռուբեն- Որ էդպես է, մայրիկ, դու հանգիստ տուն գնա, իսկ ես շատ չեմ ուշանա…

Մայր Արաքսի- Հասկացա, որդիս, գնա… Նայիր՝ Փայլակին բան չպատահի:

Ռուբեն- Անհոգ մնա, մայրիկ: Դե, ես շտապեմ: Ցտեսություն ձեզ, հայրենակիցներ:

Առանձին ձայներ- Ցտեսություն, Ռուբեն:

/Ռուբենը շտապ դուրս է գալիս: Մայր Արաքսիին է մոտենում պատրիարքը/:

Պատրիարք- Հրաշալի որդի ունես, քույր Արաքսի… Աստված նրան պահապան:

Մայր Արաքսի- Շնորհակալ եմ, սրբազան հայր:

Պատրիարք- Երեւի եկել է ժամանակը, որ մենք Զինքից, Ռուբենից, նրանց համախոհներից սովորենք… Բայց հոգուս մեջ մեծ ահ կա, քույր Արաքսի, ես քեզ նման վատ կանխազգացում ունեմ…

Բժիշկ Հակոբ- Ես էլ:

Մանկավարժ Զարեհ- Ես էլ:

Նաթան արքեպիսկոպոս- Ես էլ:

Գործարար Մուրադ- Ես էլ:

Մայր Արաքսի- Իսկ ես կարծում էի, թե միայն իմ կանացի հոգին է շատ զգայուն… Դե որ այդպես է, եկեք նորից խելք-խելքի տանք, բայց առանց ավելորդ հույզերի…

/Ներկաները շրջապատում են պատրիարքին ու Մայր Արաքսիին եւ գաղտնախորհուրդ, կամացուկ խորհրդակցում միմյանց հետ/:

ՏԵՍԻԼ 7

/2017թ. հոկտեմբերի սկիզբ, Ստամբուլ: Է.Աքճամի առաձնատան պարտեզում ընտանեկան-բարեկամական խնջույքից հետո նարդի են խաղում Զինքը եւ Աքճամը, իսկ նրանց կանայք՝ Սրբուհին ու Լեյլան, տղամարդկանցից փոքր-ինչ հեռու, թեւանցուկ շրջում են եւ մտերմիկ զրուցում: Անկյունում երեւում է տարբեր ուտեստներով ու խմիչքներով ծանրաբեռնված սեղանը/:

Աքճամ */մի քիչ նյարդայնացած/-* Էլի չի տալիս էս անտեր զառը… փոքր թվերով ու՞ր պիտի հասնեմ…

Զինք- Դե դու զառերից էդքան մի դժգոհիր, էրխան, դրանք անշունչ առարկաներ են, չգիտեն՝ ինչ են անում եւ ինչու…

Աքճամ- Բայց էս զառերն իրենց անշունչ տեղով էսօր թաքուն պայմանավորվել են, որ քեզ հաճախ բարձր զույգեր նվիրեն, էն էլ իմ հարկի տակ… Սա դավադրություն չէ՞…

Զինք */իբր լուրջ տոնով/*- Իսկական դավադրություն է: Պարզիր՝ հո հատուկ ծառայությունները չե՞ն կազմակերպել…

Աքճամ */մի պահ դադարեցնելով խաղը, լրջանալով/*- Ի դեպ, Փայլակ, նրանք նաեւ ինձ չեն հանգիստ տալիս, ինձ էլ են հետեւում:

Զինք- Սպասելի է…Նրանք կարծում են, թե դու հայերի օգտին քարոզչություն ես անում:

Աքճամ- Բայց եթե քարոզչություն եմ անում, ապա միայն հանդուրժողականության ու համերաշխության, երկխոսության ու համատեղ ապրելու օգտին…

Զինք- Միանգամայն ճիշտ է, բարեկամս, բայց այդ ամենն իշխանություններն ընկալում են որպես հակաթուրքական գաղափարներ. դա շատ տխուր ու մտահոգիչ երեւույթ է… Համենայն դեպս, չի խանգարի, որ դու էլ զգուշավոր լինես. հորդորում եմ, ընկեր:

Աքճամ- Ինչքան դու ես զգուշավոր… */Զառերը նետում եւ վերսկսում է խաղը/.* Երկու շաբաթ անց իմ նոր գրքի շնորհանդեսն է Ամերիկյան համալսարանում, չմասնակցե՞մ, լսարանի առաջ չխոսե՞մ այդ հարցերի մասին, որոնք գրքիս առանցքային թեմաներն են…

Զինք- Անշուշտ, պիտի խոսել, ոչ մի ազնիվ մարդ չպետք է խուսափի համամարդկային գաղափարները հրապարակավ արծարծելուց ու պաշտպանելուց. թե չէ առաջ գնալու փոխարեն դարձյալ կհայտնվենք միջնադարյան բարքերի թունախեղդ ճահճում…

Աքճամ- Մենք հիմա էլ ճահճում ենք:

Զինք- Լավ, առայժմ թողնենք այս ծանր թեմայով խոսակցությունը, մեր գեղեցիկ կիրակին չփչացնենք… Դու հիմա հաշիվն ասա, Էրխան:

Աքճամ- Երեք- երեք:

Զինք */զառերը վերցնում ու մի պահ գնահատող հայացքով նայում է խաղադաշտին/*- Տեսնու՞մ ես՝ ինչ է կատարվում, ընկերս… Ես քեզ մարս անելու հիանալի շանս ունեմ:

Աքճամ- Իրո՞ք… */ուշադիր նայում է խաղաքարերին/* Հա, մարս հնարավոր է, բայց ո՞վ գիտե, թե զառերն ինչ անակնկալ կարող են մատուցել…

Զինք- Ես առաջարկում եմ խաղն այսպես էլ վերջացնել, թող լինի ոչ ոքի, հակառակ դեպքում ընդհանուր հաղթանակն իմը կլինի 5:3 հաշվով: Համաձա՞յն ես…

Աքճամ- Թող լինի այդպես. խելամիտ առաջարկություններից հրաժարվելը հիմարություն է: */Փակում է նարդու խաղատախտակը/:* Գնանք գարեջուր խմելու:

/Վեր են կենում/:

Զինք- Մեր գնալու ժամանակն է, Էրխան. երկու օր անց ես կարեւոր ելույթ ունեմ խորհրդարանում, պիտի նախապատրաստվեմ:

Աքճամ- Գիտեմ. այնպես կանես, որ քո խոսքի տոնայնությունից շատ չգրգռվեն:

Զինք- Կփորձեմ…

Աքճամ- Գիտե՞ս, Փայլակ, թե մերոնք ինչու են ամեն գնով փորձում հրաժարվել ցեղասպանության ճանաչումից…

Զինք- Ասա:

Աքճամ- Մերոնք գիտեն, որ ցեղասպանությունը սարսափելի վատ բան է, դրա համար չեն ուզում, որ նման ծանր մեղքը խոստովանեն ու պատասխան տան. ամաչում են սաստիկ:

Զինք- Գրեթե համամիտ եմ մեկնաբանությանդ… Բայց էլի մտանք կնճռոտ հարցերի քննության մեջ. զերծ մնանք: */Դադար/* Կուզենայի էլի մնալ քո հիանալի պարտեզում, վայելել ձեր ընտանիքի ընկերակացությունը, բայց ժամանակին գնալը նույնպես կարեւոր է:

Աքճամ- Գարեջուր կխմենք՝ նոր կգնաք:

/Թեւանցուկ նրանց են մոտենում Սրբուհին ու Լեյլան/:

Լեյլա- Դե, ինչպե՞ս ավարտվեց ձեր մենամարտը, պարոնայք…

Աքճամ- Խաղաղ դաշն կնքեցինք… Փայլակի առավելությամբ:

Սրբուհի- Այսինքն ի՞նչ… ոչ ոքի՝ հօգուտ Փայլակի՞…

Զինք- Խաղն ավարտեցինք խաղաղասիրական արդյունքով՝ երեք-երեք: Պաշտոնական արդյունքը դա է: */Կատակով/* Տիկին Լեյլա, Էրխանին չպատժես, որ ջախջախիչ առավելության չի հասել իմ նկատմամբ. ոչ ոքին էլ վատ չէ:

Լեյլա */ծիծաղելով/*- Դե, ի՞նչ եք ասում, պարոն Զինք… Ես նրան կպարգեւատրեմ, որ կարողացել է ձեզնից ոչ ոքի կորզել: */Մոտենում եւ համբուրում է Աքճամի այտը եւ սեթեւեթում/.* Շնորհավորում եմ, ամուսնյակս…

/Բոլորը ծիծաղում են/:

Լեյլա- Ուրեմն՝ եկեք ամուսնուս հաջողությունը նշենք սեղանի մոտ… Համեցեք: */Ձեռքը մեկնում է դեպի խնջույքի սեղանը/:*

Զինք- Տիկին Լեյլա, ես արդեն ասացի Էրխանին, որ մեր գնալու ժամանակն է:

Սրբուհի- Ինչու՞ ենք շտապում, Փայլակ ջան, երեխեքը դեռ ծովափին են, թող կարգին լոգանք ընդունեն, մենք էլ…

Զինք- Դու գիտես, սիրելիս, որ ես կարեւոր ելույթի պիտի նախապատրաստվեմ… Զանգիր, թող երեխեքը գան:

Սրբուհի */մի փոքր տրտմած/*- Լավ… */հանում է հեռախոսը եւ զանգում/:*

Աքճամ- Մինչ երեխեքը կվերադառնան, անցնենք սեղանի մոտ:

/Բոլորը շարժվում են դեպի թերավարտ խնջույքի սեղանը/:

ՏԵՍԻԼ 8

/2017թ. հոկտեմբերի 6, Անկարա: Թուրքական խորհրդարանում նիստ է/:

Խորհրդարանի նախագահ- Այժմ ելույթի իրավունք ենք վերապահում պատգամավոր Փայլակ Զինքին:

/Ամբիոնին է մոտենում Փ.Զինքը, ձեռքին՝ մեծ թղթապանակ: Նիստերի դահլիճում քար լռություն է տիրում/:

Զինք- Հարգելի գործընկերներ… Ես այսօր կրկին պիտի անդրադառնամ ինձ համար, իմ ժողովրդի համար ամենացավոտ հարցին՝ հայերի ցեղասպանության ճանաչմանը… */Հայացքը պտտեցնում է դահլիճով մեկ՝ ասես ստուգելու ներկաներից յուրաքանչյուրի ռեակցիան/:* Վերջին ժամանակներս տարածում է գտել այն միտքը, թե պատմությունը չի կարող էական ու որոշիչ փաստարկ լինել ներկայիս քաղաքական հիմնախնդիրները լուծելու համար. ձեզ ասում եմ վստահաբար, հակադարձելով այդ մտայնության կողմնակիցներին՝ առանց պատմության հետ առերեսվելու եւ առանց պատմական անուրանալի փաստերը հաշվառելու չի կարելի եւ հնարավոր չէ վարել արդյունավետ, արդար ու ժողովրդավարական քաղաքականություն, ուղենիշներ, որոնց, կարծես թե, հետամուտ է ուզում լինել ժամանակակից Թուրքիան… Ես ուզում եմ ձեզ տեղյակ պահել իմ տոհմի պատմության առանձին դրվագների մասին, որպեսզի ձեզ համար պարզ լինի, թե ես ինչու եմ երիցս շահագրգիռ այս խնդիրը հանրայնացնելու եւ այն պետականորեն լուծելու համար… */Ջուր է խմում ամբիոնին դրված բաժակից/:* Դրվագ առաջին. 1453թ. հուլիսին, երբ օսմանյան թուրքերը դեռ նոր էին գրավել Կոստանդնուպոլիսը… Պոլիսը, ինպես մենք՝ հայերս ենք սիրում ասել, Մեհմեդ 2-ի հրամանով քաղաքի կենտրոնական հրապարակում գլխատվել է իմ ապուպապ Տեր-Հովհան քահանան… նրա հետ նաեւ հույն եւ հրեա երկու հոգեւորական՝ հանիրավի, ցուցադրական մահապատիժներով բնիկ պոլիսցիներին վախի ու հնազանդության ճիրաններում պահելու նպատակով: Ես քահանա Տեր-Հովհանի արյունակից ժառանգորդներից եմ՝ հեռավոր ծոռներից մեկը, եւ այսօր ուզում եմ խնկարկել նրա հիշատակը այստեղ՝ խորհրդարանում */խաչակնքում է/:* Դրվագ երկրորդ. 1895 թվականի սեպտեբերի 18-ին, Պոլիսի Բաբը Ալի հրապարակում, խաղաղ ցույցի ժամանակ խուժանը սպանել է իմ ապուպապ Բագրատ Չամչյանին… Ես նրա կոռն եմ, Աստված նրա հոգին լուսավորի: Դրվագ երրորդ. 1915-ի ապրիլի 24-ին, Պոլիսի Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցում, առավոտյան ժամերգության պահին ձերբակալվել, ապա մի շաբաթ

անց, աքսորի ճանապարհին, խոշտանգվելուց հետո սպանվել է Տեր-Կորյուն քահանան, քանի որ նա հրաժարվել էր կրոնափոխ լինել… Տեր-Կորյունը համեստ ու մաքուր հայ հոգեւորական էր, թուրքական իշխանությունների դեմ բողոքական չէր. նրան սպանել են միայն իր ազգային ինքնության ու քրիստոնեական հավատքի համար… Տեր-Կորյուն քահանան իմ պապն էր, ես նրա ծոռն եմ: */Հայացքը կրկին պտտեցնում է դահլիճով մեկ/:* Նմանօրինակ եւ ավելի ահասարսուռ դրվագներ կարող է հիշատակել յուրաքանչյուր հայ, որի նախնիք հրաշքով ողջ են մնացել 1915-ի ողբերգական իրադարձություններից հետո… Սա մի պատմություն է, որ չես կարող մոռանալ, սա մի պատմություն է, որ պետք է պետական մակարդակով դատապարտվի, նախ, Թուրքիայում, ապա ամբողջ աշխարհում:

Ձայն դահլիճից */խոսողը չի երեւում, բղավելով/*- Դե հերիք է ձեր հին երգը երգեք… Սպանեցիք թողիք…

Ձինք- Դու սուս մնա, Ահմեդ Քուչօղլի, դու պատմություն սովորիր, հետո նոր ձայն հանիր… Եվ չխանգարեք այլեւս իմ ելույթի պահին: */Խիստ հայացքով նայում է երեւացող ու չերեւացող ներկաներին/:* Շարունակեմ. 1908-1915 թվականներին ձերբակալվել ու ոչնչացվել են թուրքական խորհրդարանի յոթ հայ պատգամավոր. նրանք են՝ Գրիգոր Զոհրապը, ով նաեւ անվանի գրող էր ու իրավաբան */թղթապանակից հանում եւ ցույց է տալիս Զոհրապի դիմանկարը, նույնը անում է այլ անուններ հիշատակելիս/*… Պետրոս Հալաջյանը… Նազարեթ Տաղավարյանը… Կարապետ Փաշայանը… Հովհաննես Սերենկյուլյանը… Օնիկ Դերձակյանը… Համբարձում Բոյաջյանը… Նրանք մեր գործընկերներն էին, նրանք խորհրդարանում պաշտպանում էին ոչ միայն հայերի, այլեւ Թուրքիո բոլոր քաղաքացիների իրավունքները… 1915-ի ապրիլի 24-ին ձերբակալվել, ապա դաժանաբար սպանվել են նաեւ հայ մեծանուն բանաստեղծներ */ցույց տալով դիմանկարները/* Դանիել Վարուժանը… Սիամանթոն… Ռուբեն Սեւակը… եւ շատ ուրիշ հայ մտավորականներ… Աստված նրանց հոգիները լուսավորի: */Կարճ դադար/* Ես ի լուր ամենքիդ հայտարարում եմ՝ հայ-թուրքական հարաբերություններն անհրաժեշտ է դուրս բերել 1915 մետր խորություն ունեցող ջրհորից: Ուստի, որպես առաջին քայլ, առաջարկում եմ ստեղծել խորհրդարանական հանձանժողով՝ հետաքննելու հիշատակածս զոհերի սպանության հանգամանքները… Առայժմ իմ պահանջն այսքան է: */Լռություն: Ձինքը թղթապանակը վերցնելով՝ շարժվում է դեպի պատգամավորական դահլիճի իր նստատեղը/:*

Խորհրդարանի նախագահ- Մենք դեռ կքննարկենք նման հանձնաժողով ստեղծելու նպատակահարմարության հարցը… Անցնենք մյուս ելույթներին… Ահմեդ Քուչօղլի, խնդրեմ…

ՏԵՍԻԼ 9

/2017թ. հոկտեմբերի 7, Ստամբուլ: Փողոցում Զինքը թերթ կարդալով՝ դանդաղ մոտենում է հնաշունչ, բայց նորոգ շենքի շքամուտքին: Նրան երկու քայլ հեռավորության վրա ուղեկցում է Ռուբենը, ով ստեպ-ստեպ աջ ու ձախ է նայում/:

Զինք */ընդհատելով ընթերցումը՝ կանգնում ու հետ է նայում/-* Դե, երկու քայլ մնաց, ես հասա խմբագրություն, Ռուբեն. շնորհակալ եմ, գնա տուն, եւ իմ անունից բարեւիր Մայր Արաքսիին:

Ռուբեն- Անպայման, պարոն Զինք, կբարեւեմ. հա, մայրիկն ինձ է սպասում, դեղ պիտի տանեմ…

Զինք- Ուրեմն աճապարիր, եղբայր… Օգնության կարիք կա՞… */Ձեռքը տանում է գրպանը/:*

Ռուբեն- Չէ-չէ, պարոն Զինք, շնորհակալ եմ, ամեն ինչ կարգին է, ես արդեն աշխատում եմ, աշխատավարձ եմ ստանում… Դե, ցտեսություն ձեզ: */Ձեռքով հրաժեշտ է տալիս Զինքին եւ հեռանում/:*

Զինք- Ցտեսություն, Ռուբեն ջան: */Նրա հետեւից, Ռուբենի համար արդեն անլսելի, մենախոսում է/.* Ինչ հրաշալի երիտասարդներ ունենք, նրանց հետ կարելի է համազգային ամենակնճռոտ հարցերը լուծել:

/Զինքը մի երկու քայլ առաջ է շարժվում՝ նորից թերթ կարդալով: Կանգնում է, սեւեռվում ինչ-որ հրապարակման վրա: Անաղմուկ նրան է մոտենում սպորտային հագուստով մի երիտասարդ՝ մարդասպանը. նա վերնաշորի տակից հանում է ատրճանակը եւ երկու անգամ կրակում Զինքի ծոծրակին: Զինքը ընկնում է/:

Մարդասպան */փախչելու պես հեռանալով՝ գոչում է/-* Գյավո՛ւր…

/Հայտնվում են երկու գործակալները եւ մոտենում ընկած Զինքին. նրանցից մեկը շոշափում է սպանվածի քներակը/:

Գործակալ 1- Մեռած է… գնացինք:

/Գործակալներն արագորեն լքում են բեմը: Բայց Գործակալ 2-ը փութով վերադառնում է, Զինքի գրպանից հանում նրա ձեռքի հեռախոսը եւ վազելով դուրս գալիս: Շտապ ներս է մտնում Ռուբենը, տեսնելով ընկած Զինքին՝ անակնկալից քարանում է/:

Ռուբեն */հասկանալով կատարվածը՝ ողբաձայն գոռում է/-* Պարոն Զի՜նք… Աստված իմ, էս ի՞նչ արին ձեզ… */Մոտենում, ծնկի է գալիս ընկածի առաջ, ձեռքը դնում նրա գլխին/:* Ինչու՞ շուտ հեռացա… Պիտի սպասեի, մինչեւ դուք մտնեիք շենք… */Գլխիկոր նստում է/:* Չկարողացա կանխել ձեր սպանությունը… ներեցեք, պարոն Զինք… ես ետ եկա, որ թերթի վերջին

համարները տանեմ մայրիկին… Հիմա ի՞նչ պիտի ասեմ նրան. ձեզ չկարողացա պաշտպանել… Ներիր, մայրիկ, ներիր, Զինք՝ իմ մեծ եղբայր…

/Ռուբենը պառկում է Զինքի կողքին: Լռություն: Մի աղավնի է իջնում սպանվածի մոտ, հետո, ասես լսելով ինչ-որ ձայներ՝ վախեցած թռչում է դուրս: Հայտնվում են պատահական անցորդներ, որոնք տեսնելով գետնին փռվածներին՝ գլխահակ կանգնում են, հետո իրենք եւս պառկում են նրանց կողքին: Քիչ անց փողոցը ծածկվում է պառկած մարդկանցով: Այդպես նրանք իրենց նույնացնում են Զինքի հետ: Բեմի խորքում լուսավորվում է մեծ էկրանը, որի վրա երեւակվում է անխոս շարժվող մարդկանց մեծ բազմությունը՝ միանման պլակատներով՝ «Ես էլ եմ Զինք»: Հետո բազմության միջից աղավնիների երամ է թեւածում երկինք՝ ծածկելով նրա կապույտը: Էկրանն անջատվում է, բեմը՝ մթնում: Մի ճրագ է վառվում հեռավոր անկյունում, որ դանդաղ մոտենում ու հեռանում է, մոտենում ու հեռանում է: Լսվում է աղավնիների ղունղունոցը/:

ՎԵՐՋ

սեպտեմբեր, 2019

ՄՈՆՈԴՐԱՄԱՆԵՐ

ԵՍ ՏԵՍՆՈՒՄ ԵՄ ՁԵԶ...
ԱՅԴՔԱՆ ՄԵՆԱԿ ՄԻ ԵՂԻՐ
ԿԱՐՄԻՐ ՔԱՄԻ

ԵՍ ՏԵՍՆՈՒՄ ԵՄ ՁԵԶ

/Բեմում՝ պահակետ: Լսվում են հատուկենտ կրակոցներ: Առավոտ: Զայրացած ներս է մտնում երիտասարդ սպան: Ինքնաձիգը գրեթե շպրտելու պես ցած է դնում/:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍՊԱ - Թյու, ես քո մերը... Մի քանի օրով արձակուրդ էի ուզում, իսկ ինձ պոստ ուղարկեց. անհոգի, անաստված շանտղա... ես քո մերը, Տարզան, մի օր քո էդ հսկա ջամդաքը սապոգիս տակ եմ տալու, շուն-շան որդի... Հրամանատարությունդ ինձ վրա՞ ես բանեցնում, փոխանակ էն անգետ նորակոչիկների հետ խելք ու հոգի տաս՝ նրանց կարգին զինվոր դարձնես... Ինչ էլ լավ պատճառ է գտել ինձ պատժելու. ասում է՝ նոր պոստ է, լավ, խելամիտ ժամապահություն անող է պետք սկզբնական շրջանում, որ ձեռի հետ էլ տեղանքը զննի-ուսումնասիրի, տեսնի՝ էդ վայրում հակառակորդն իրեն ոնց է պահում... Տո հիմար, ո՞նց պիտի պահի՝ հակառակորդի պես... Ոնց-որ մյուս պոստերում՝ գիշեր-ցերեկ նրանց սնայպերները կրակելու են մեզ վրա, փորձելու են էս բարձր դիրքը նորից ետ վերցնել... Ո՞նց չնկատեմ՝ էդ շանտղեն ամենակարեւոր բառերը աղավաղված է ասում, լրջանալով եւ դեմքի մկանները ձգելով. էսպես հրամայեց՝ հըկարակորթին մի լավ կուզումնասիրես, նրան բեռանացի արա... Դու՛ ես իմ հակառակորդը, շան որդի, որ չթողիր մի քանի օրով արձակուրդ վերցնեի, գնայի պարզեի, թե ինչի Նարեն էսքան երկար լռում է... Ես նրան սիրում ու հավատում եմ, նա վատ բան չի անի իմ հանդեպ... բայց ո՞վ գիտե, մեծ աշխարհ է... մեկ էլ տեսար մի հաստավիզ, ջիպով գյադա նրան խելքահան արեց՝ Եվրոպա, Ամերիկա խոստանալով... Նարեի ցավը տանեմ, նա ինձ հուսախաբ չի անի, չի հիասթափեցնի... շուտով արձակուրդ կգնամ եւ ամեն ինչ լավ կլինի... Արձակուրդի հարցում մայոր Պապիկյանը կօգնի, նա հասկացող, սրտացավ մարդ է, ցմփոր կապիտան Տարզանի պես չի... Սա դեռ կապիտան է, բայց արդեն կարգին փոր է գցել... Շատակեր գոմեշ... Հա, ուտելուց բացի մեր ռոտնին մեկ էլ պատժելում է լավ... Երեք տարի մնաց պայմանագրիս ավարտին, երեք տարի՞ էլ դեռ պիտի օյիններ խաղա գլխիս... ես քո մերը... Գուցե մի օր համարձակություն ունենա ասի, թե ինչի ինձ չի սիրում եւ առիթի դեպքում ուզում է ինձ նեղել ուժը զորածի չափ... Նրա տնազն եմ անում ընկեր-տղերքի մոտ, երբ մեկ-մեկ հավաքվում ենք մի շիշ թթի օղու շուրջ եւ ուրախանում՝ մեր լեզվին ու մտքին ազատություն տալով... Ինչ-որ մեկը իմ դերասանությունների մասին հասցրել է էդ նրբազգաց ցմփորին... Առաջ նա շատ սիրալիր էր իմ նկատմամբ, հաճախ էր գովում ինձ մյուս սպաների մոտ, որ ուղեղ ունեմ, պինդ եմ, աչքաբաց, իբր՝ եթե կռիվ սկսվեց՝ գունդ էլ կղեկա-

վարեմ, ինչ դասակ… Ինձ անտեղի հրաման-կարգադրություններ չէր անում, հիմա իր հավեսին ուզում է ինձ տեղը դնել… Թե ասեմ՝ վատ ու անպետք հրամանատար է՝ չէ, կռված զինվորական է, փորձ ունի, բայց հումորի զգացումն է պակաս, նոր ու ջահել սպաներիս դեռ լրիվ չի վարժվել: Գոնե կանգներ ու անկեղծորեն ասեր, թե ինչի է վերաբերմունքը փոխել իմ հանդեպ, ես էլ էնպես կբացատրեի, որ նա չէր նեղանա… Սուրբ հո չի՞, մարդ ենք, չէ՞, թող նա էլ իմ տնազն անի, թե էդքան շնորհք ունի. ճակատը կպաչեմ… Թյու, Տարզան, ես քո մերը… Չէ, ես մեծահոգի եմ, ոխ չեմ պահի, բայց արածդ տղամարդկություն չէ, շանտղա, ինձ արձակուրդ պիտի տայիր մի երկու օրով, որ հոգիս խաղաղեցնեմ, թե չէ էսպես զայրացած ու նեղսրտված դիրք պահե՞լ կլինի… Ես քո մերը… Լավ, ինձ հանգստանալ է պետք հիմա, ուրեմն… ուրեմն պիտի հրամայեմ ինձ… լեյտենանտ Հրաչ Մարկոսյան՝ ոտքի, զգաստ…

(Լսվում է երկու կրակոց եւ մոտիկից սուրացող գնդակների սուլոց: Հրաչը անակնկալի եկած արագ նստում է խրամատում):

-Թյու, ես ձեր մերը, մոռացել էի սնայպերների մասին. լավ է, որ էս անգամ մի քիչ քոռ դուրս եկան: Միշտ էդպես քոռ մնաք, սրիկաներ:

(Ինքնաձիգով մի կրակահերթ է արձակում հակառակորդի ուղղությամբ եւ վերադառնում ապահով դիտակետ):

-Լավ, հիմա Տարզանին թողնեմ՝ ձեզնով զբաղվեմ, հրկարակորթ բիձեր…

(Հեռադիտակով նայում է շփման գծից անդին):

-Ըհը, էս դիմացի պոստը դատարկ է, ավելի հեռու եք ճողոպրել, հա՞, էդքան շա՞տ եք վախեցել էն օրվա մարտից… հա՜, մերոնք լավ հասցրին ձեր վզակոթին, յոթ զոհ եք թողել խրամատում ու փախել… ախր ինչու՞ էիք ուզում ձեր դիրքերը առաջ տալ, ձեր քամակները քո՞ր էին գալիս… Հիմա ո՞նց եք՝ մի քայլ առաջ էիք ուզում գալ, երկու քայլ հետ գնացիք, ճիշտ Լենինի ասածի պես… Ըհը, վերջապես տեսա ձեր ամենամոտիկ պոստը… համարյա երկու կիլոմետրի վրա եք… Ափսոս, մոտիկ լինեիք՝ բարձրաձայն իրար հետ մտքեր կփոխանակեինք. թշնամիներ ենք, բայց՝ կոլեգաներ, խոսելու ընդհանուր բան կունենանք… Իմ առաջին հերթապահություններից մեկը հիշեցի. Գեւոյի հետ էինք՝ էն մեր բոնցքամարտիկի (հիմա նա Եվրոպայի առաջնության է գնացել)… Հա, էս Գեւոն բամբ ու հզոր ձայն ունի, մի քիչ էլ թուրքերեն գիտի… Գիշեր էր, կանչեց նրանց կողմը եւ ժամ հարցրեց. մեկն էնտեղից նեղսրտված արձագանքեց՝ յոթ շրջան եք վերցրել, բայց ժամացույց չունեք *(ասում է բարբառահայերենով, թուրքի առոգանությամբ)*… Դե, մենք, ժամացույց ունեինք, պարզապես միանգամից չէինք ուզում նրանց հետ խոսակցության մեջ մտնել վիրավորանքներով ու հայհոյանքներով, ոնց-որ սովորաբար ընթանում են մեր սահմանային

զրույցները: */Դադար/:* Նոր «բետերներ» եմ տեսնում… երեւի իրենց արտադրածն է, մի քանի օր առաջ տելեով տեսա՝ իրենց զորահանդեսին գոռոզ-գոռոզ ցույց էին տալիս նոր բԷԷմպԷ-բետերներ՝ իրենց ասելով՝ սեփական արտադրության… Տո ձեր սարքածը ի՞նչ պիտի լինի որ, մի սովորական նոնակ-ավտոմատով դրանց հախիցը կգանք… Իսկ եթե հանկարծ որակով ու պի՞նդ են… Հա, համաձայն եմ, թշնամուն թերագնահատել պետք չէ, մեկ էլ տեսար կարգին զինտեխնիկա են արտադրում. ուրեմն՝ պիտի կարգին հակահարված տանք… Ոնց կուզենայի դրանց էդ նոր տեխնիկան կռվի մեջ տեսնել… Գուցե՞ մի փոքր, էսպես ասած, լոկալ մարտ հրահրեմ նրանց հետ, հը՞… մերոնց կբացատրեմ, թե Տարզանն է հրամայել…

-Լսում եմ, պարոն Տարզան, թշնամուն մարտի մեջ ներքաշել ու ոչնչացնել… *(Ավտոմատային երկար կրակահերթ է արձակում, հետո նետում 2-3 նոնակ):*

-Ափսոս, մեր դիրքում ականանետ, հրանոթ չկա, որ ուղիղ նշանառությամբ խփեմ… Լավ, տեսնեմ կարձագանքե՞ն…

(Հեռվից լսվում է ավտոմատային կրակահերթ, ապա խրամատի վրայով սուրացող գնդակների ձայն է հնչում):

-Ընդամենը էդքա՞նը… դա՞ է ձեր պատասխանը… Տո եկեք, մի հատ փորձեք էս դիրքերը ետ վերցնել, բա դուք թասիբ չունե՞ք… Մենակ եմ, եկեք, գուցե հաջողվի՞… Թյու, ես ձեր մերը… չեք ուզում կռվել, ավելի վատ ձեզ համար. հիմա ես էնպես կտնտղեմ ձեր տարածքը, ձեր թույլ ու կարեւոր տեղերը էնպես կՃշտեմ, որ հարկ եղած դեպքում մի քանի կրակոցով ձեր էդ դիրքից էլ հետ շպրտվեք… Դուք, մեկ է, հրադադարի արժեքը չհասկացաք, մտածում եք, որ դա մեզ քնեցնելու ձեւ է, որ գաղտագողի փորձեք վրա պրծնել ու մեզ հետ վանել. լինելու բան չէ, պարոն հակառակորդ:

(Միաժամանակ հեռադիտակով ուսումնասիրում է հակառակ կողմի դիրքերը):

-Ոնց-որ մի պոստ էլ աջի վրա են դրել… էնտեղ մի լղարիկ զինվոր է երեւում, հաստատ մի խեղՃ նորակոչիկ է, միանգամից «թեժ» կետ են բերել, իսկ էդ նավթ ուտող օլիգարխների լակոտները երեւի հիմա աշխարհի սիրունիկ ծովափերին ֆոֆռում են… Ըհը, էս էլ պեյզաժի ամենագլխավոր ֆիգուրը՝ ոչխարի հոտը, չոբանն էլ 12-13 տարեկան մի տղա… Հերդ ու՞ր է, այ լակոտ, որ քեզ են ուղարկել էս վտանգավոր տարածքում չոբանություն անելու, բա որ հանկարծ մեր դիրքերից մեկի խելքին փչի կրակել հոտի վրա… ախր ոչխարների հետ դու էլ վարի կգնաս… Էհ, խղՃում եմ թշնամու ժառանգներին, քրիստոնյա հայ եմ ախր, ուրիշ կերպ ես սխալ կլինեմ… Էհե՜յ, ես Հրաչ Մարկոսյանն եմ, դուք ինձ չե՞ք ուզում Ճանաչել… էդ-

քան քոռ ու քառ մի եղեք, ձեր նախնիք ջայլամներն էին, հա՞... */Դադար/* Տխուր է, երբ յուրայիններդ ու թշնամիներդ քեզ չեն ճանաչում, թե՞ ձեւացնում են՝ իբր չեն ճանաչում: Դե, թող մեկը դուրս գա եւ անկեղծորեն ասի. «Հա, իմացանք, Հրաչ Մարկոսյանն ես, բայց ձենդ էդքան գլուխդ մի քցիր...» Հեռվում ոնց-որ զորամաս եմ տեսնում... բեռնատարներ, մի քանի տանկ... պահ, դրանցից մեկի վրա դրոշ կա տնկած... չտես շանտղեք, ձեր Իլհամ բաբայի նկարը փակցնեիք, ավելի դիտարժան կլիներ... Կազինոյի էդ հարիֆը հիմա մեր բախտի վրա է խաղում, ուռած դեմքով Հեյդարօղլին հա՜ կռվից է խոսում... Բա էդ ո՞ր էիր, երբ մերոնք հորդ իշխանության օրերին տարածքներ էին հետ առնում... Գայիր մի կրակոցով էլ դու դիմադրեիր: Հեյդար պապայի շվաքի տակ երկար չես դիմանա, էդ ժառանգած խանությունդ տապալվելու է: Ե՞րբ պիտի հասկանաք, որ ձեր ապագան մեզ հետ նորմալ հարեւանություն անելու մեջ է... Հերս ճիշտ է ասում՝ թշնամությունը անվերջ չպետք է լինի, գոնե իրար տանել-հանդուրժել է պետք... Օ՜, մի ջահել աղջիկ եմ տեսնում ճանապարհին. Էս ո՞ր է գնում... գուցե նա մեր պրապորշչիկ Սերգոյի՝ Բաքվի իր էն ընկերուհին է, որին սիրահարված էր... Ոնց էր պատմում էդ մասին... Երեւակայեմ, թե էդ աղջիկը հիմա ինչ-որ բան է փնտրում էս տեղանքներում... գուցե՞ Սերգոյին է թաքուն փնտրում... սիրային ֆանտաստիկ ֆիլմի լավ դրվագ կլիներ... Էհեյ՜, թուրք օրիորդ, Սերգոն քեզ հիշո՞ւմ է... բայց հիմա ամուսնացած է, երեխաներ ունի... Գնա քո բանին... Սերգոյիս գտնեմ՝ էս եղած-չեղած լուրը տամ նրան:

(Լսվում են ակտիվ կրակոցներ պահակետի ուղղությամբ: Ապա թեթեւ զինտեխնիկայի կրակոցներ են հնչում: Հրաչը կենտրոնացած զննում է հակառակորդի տարածքը):

-Շունչանորդիք հարձակում են սկսել իմ դիրքի վրա... Ոնց էլ շատ մոտեցել են... Երեւի տեսան, որ մենակ եմ, որոշել են դիրքը ետ գրավել... Առ ձեզ, բա էսպիսի դիրքը կտա՞ն... Ոչ էլ օգնական ուժեր կկանչեմ. Հայկոյի սովորեցրած եղանակով ետ կքշեմ... Շանորդիք, մտածում եք, որ ես կթողնեմ-փախնեմ, ինչ է թե նեղացա՞ծ եմ Տարզանից... Ես ձեզ հիմա մարտ ցույց կտամ:

(Խրամատի երկայնքով արագորեն փոխելով իր դիրքը՝ սկսում է անընդմեջ կրակել հակառակորդի ուղղությամբ, օգտագործելով նռնակներ ու գնդացիր, թողնելով տպավորություն, որ դիրքում մի ջոկատ է հերթապահում):

-Դե, ինչի՞ առաջ չեք գալիս, դե եկեք... Հասկացաք, չէ՞, որ ես ձեզ դիրք հանձնողը չեմ... Նահանջեցիք, հա՞... դե կորեք, ես ձեր մերը: Եթե թողնեի պոստը, մերոնք կասեն, որ Տարզանի ոխն էի ուզում հանել, նրա վրա գործ էի ուզում բարդել... Չէ՜-հա, Տարզանի մերը...

(Շրջվում է եւ հեռադիտակով զննում «այսսահմանային» տարածքը):

-Էս էլ մեր զորամասը... Սերգո, ու՞ր ես... Մուտքի մոտ էս ո՞վ է կանգնած կանանց հետ... Եկել են իրենց փափլիկ երեխաներին տեսության, տեսնեն՝ բա զորանոցում ոնց են ուտում, քնում, չիշիկ անում... Հաստատ Տարզանը կլինի նրանց հետ զրուցողը... Էդ ցմփորը երեւի մաղարիչ է դրստում ծնողներից, որ զինվոր-երեխեքին տեսակցելու հնարավորություն տա, գուցե վրան էլ՝ մի 2-3 օր արձակուրդ, եթե, իհարկե, շռայլ գտնվեն իր հանդեպ... Ես քո մերը, Տարզան, բանակի ստվերային երեւույթներն ուզում ես անթերի հավերժացնել... Հետո ի՞նչ՝ չորս երեխա ունես, դա արդարացո՞ւմ է... Սպայական ռոճիկը չի՞ բավարարում... տո, գնա հող մշակիր, անասուն պահիր, մի խոսքով՝ ֆերմերություն արա, շատ եկամուտ կունենաս, ի՞նչ ես շքմեղանքով էդ մարդկանց բուռը մտել, ես քո մերը... Որքան լավ զինվորական ես, նույնքան էլ վատ մարդ ես... Կռվի կգնամ քեզ հետ, բայց հացի չեմ նստի... հա, Սաքոյի ասած՝ լեւի չեմ գնա հետդ, Տարզանչիկ...

(Ցած է դնում հեռադիտակը, մտքերի մեջ սուզվում մի պահ: Ապա հանում է բջջային հեռախոսը եւ սիրո ու տագնապի հաղորդագրություններ ուղարկում Նարեին: Հետո հեռադիտակով կրկին անցնում է յուրային տարածքի ուսումնասիրմանը):

-Գլխավոր մայրուղու վրա ջիպերի շարասյուն եմ տեսնում... իշխանավոր-օլիգարխնե՞րն են, թե՞ աղա-տղերքի ուրիշ խումբ է... ջոկել չի լինում... Ու՞ր են էդպես կազմակերպված սլանում... Էհ, ուր ուզում են թող գնան, ես նրանց ոչ նախանձում եմ, ոչ էլ նրանց հանդեպ մաղձություն ունեմ շատերի պես. ցավում եմ միայն, որ անարդարություն դեռ շատ կա, որքան անարժան մարդ է դիրք ու կյանք վայելում: Ուրիշների սխալները գրեթե տառ առ տառ կրկնում ենք... բա ու՞ր մնաց մեր բազմադարյա իմաստությունը, ինչո՞ւ էսքան դանդաղ ենք ազատվում արատներից... ե՞րբ լրիվ կազատվենք, թե՞ սա անտեղի երազանք է... Չպետք է զիջենք էդ եվրոպացիներին ու ամերիկացիներին, ախր մեզ ավելի շատ է պետք էդ արդար ու բարգավաճ երկիր կոչվածը... Մենք փոքր ածու ենք... էհե՛յ, Խորենացի, որտե՞ղ ես, դուրս արի, էնպես կուզենայի հետդ զրուցել... Չէ՛, չէ՛, ողբ չեմ ասելու, ես լալկաններից չեմ, ոգեւորության, հպարտության բաներ էլ ունենք... օրինակ, թե ինչպես ազատագրեցինք մեր ինքնության ու արժանապատվության տարածքները... Քո գրքին արժանի մի լավ գլուխ կստացվի մեր նորօրյա գործերի պատմությունը... Ես եմ ասում՝ Հրաչ Մարկոսյանս, ով դպրոցում պատմություն առարկայից միշտ գերազանց էր ստանում:

(Նոթատետրի մեջ ինչ-որ բան է գրառում, ապա կրկին շարունակում է հեռադիտակային ուսումնասիրությունը հայրենի ուղղությամբ):

-Ի՜նչ շքեղ, հրաշալի բնապատկեր է... Աստված էլ կուզենար էստեղ իր

ամառանոցները ունենալ… *(Երգում է):* Երազ իմ Երկիր, հայրենի,/ Երազ իմ, երազ, երազ… */Դադար/* Երբ պայմանագրիս ժամկետը լրանա ու զորացրվեմ, ա՜յ Կաչաղակաբերդի հարեւանությամբ մի գողտրիկ հյուրատուն եմ կառուցելու… միայն բարեկամ-ընկերներիս համար. ամռանը կվայելենք էդ հրաշք բնությունը… Հա, մոլորված-ուշացած անցորդներին էլ տեղ կտամ… Էն բլրի լանջին Վաղոյենց գյուղն է… դեռ կիսավեր է, պատերազմից հետո շատ դժվար է ուշքի գալիս. թուրքերը նման քանի՜ բնակավայր ավերեցին… Հիմա մեր կարեւոր գործը արագ վերակառուցվելը պիտի լինի… էսքան տարի է անցել, բայց ավերակվածը, տնազուրկները դեռ շատ են, իսկ ճարպիկ-ընչաքաղց շան տղերք կան, որ տներ ունեն ոչ միայն էստեղ, այլեւ դրսում՝ մեկը մեկից շքեղ, դղյակակերպ… Ա՜յ, դրանցից մեկը տեսնում եմ, Մատաղաշենում… Երեք հարկանի զիլ, հսկա տուն է, պարաբոլիկ անտենան էլ՝ տանիքին… Մի հատ գնդակ չխփե՞մ էդ տարելկային… Չէ, Հրաչ, հեռու մնա էդ էժանագին քայլերից… Ասում են դրա տերը մայրաքաղաքից է, էս գոտում աղյուսի գործ է դրել, հետն էլ շատ հողեր է առել ու մշակության տվել… Էդ տանը տարվա մեջ հազիվ 1-2 շաբաթ է լինում… Գոնե էդ գյուղի անտուն, սարայներում ապրող ընտանիքներից մեկին ժամանակավորապես տեղ տար… ագահ ու ժլատ շանորդի… Չէ, չեղավ, Հրաչ ջան, բա քեզ սազու՞մ է բամբասես… Անկեղծ եմ ասում՝ թույն ու նախանձ չունեմ էդ ունեւորների հանդեպ, թեեւ գիտեմ՝ ինչ անմաքուր աղբյուրներով են էդ հարստությանը տիրացել… Սիրտս էդ չունեւորների համար է ցավում, ախր մեր աղքատ ու անտուն ազգակիցը խարան է բոլորիս համար:

Իմ ծառայակից-պաշտոնակից Արմանը էստեղ լիներ հիմա, կասեր՝ Հրաչ, վերջ տուր էդ պուպուլիզմիդ… Լսում եմ, պարոն, վերջ տալ պոպուլիզմին, բայց նախեւառաջ դուք՝ պարոն իշխանավորներ, պատգամավորներ, դիմադիրներ ու ընդդիմադիրներ, մեծ ու փոքր գործիչներ, դուրսպրծուկներ ու սինլքորներ… տեսնու՜մ եմ, տեսնում եմ բոլորիդ, իմ աչքի առաջ եք, այ ափիս մեջ, ախր էս բարձունքից, գրողը տանի, իսկապես ամեն ինչ ավելի լավ է երեւում… Դե, վերջ տվեք ձեր անմաքուր գործերին, տղամարդավարի ու շիտակ գործի կպեք, թե չէ գիտեք՝ ինչի տեր եմ ես…

(Թափահարում է՝ աջ ձեռքով՝ ինքնաձիգը, ձախով՝ հեռադիտակը):

-Լավ, լավ, ոնց որ շատ ոգեւորվեցի ու չափն անցա. մեր ներքին հարցերը պիտի լուծենք մեկտեղ՝ իրար լսելով ու ընդառաջելով, առանց աղմուկ-աղաղակների, ես դրա կողմնակիցն եմ: Ամենագլխավորը՝ մեր ներսում երբեք արյուն չպետք է հեղենք… համաձայն եք, չէ՞, էհե՜յ, իմ երկրի խելոք բնակիչներ… Ինչ լավն էիք դուք կռվի ժամանակ, հիմա ավելի լավը եղեք, էս խաղաղությամբ, էս կապույտ երկնքի տակ… Ախր էնքան էլ դժվար չէ, կրկնակի լավը եղեք, խնդրում եմ, ցմփոր Տարզանի պես գծուծ

ու քինախնդիր մի եղեք… աշխարհը մեզ է նայում… Տո աշխարհի հերն էլ անիծած, մեզ չի ուզում ճանաչել… շատ նեղմիտ ու անհեռատես է… էդ ի՞նչ է կատարվում քեզ հետ, այ աշխարհ…

(Հեռադիտակով զննում է այլ հորիզոններ, ասես ճգնում է տեսնել աշխարհի վիճակն ու կեցվածքը):

-Աշխա՜րհ, աշխա՜րհ… ախր շատ սիրուն ես… գունագեղ, կենսախինդ, բայց էս ինչքա՞ն հեռու ես մեզնից… անհասանելի, անմատչելի. դու էս ինչքան ես մեկուսացած մեզնից… Դու՞ ես մեզնից վանվել, թե՞ մենք ենք գիտակցված թե ակամա հեռացել ու օտարվել քեզնից, ինչ է թե մեր լեզվով հնչող ցանկություններն ու երգերը սառը լռությամբ ես ընդունում կամ գուցե՝ թաքուն թշնամանքով… Մենք քեզ համար ոնց-որ անճանաչ, նորահայտ մի կենդանի ենք մոլորակի էս հսկա կենդանաբանական այգում… Ու՜խ, էս ինչեր եմ տեսնում՝ երկնաքերներ, աշտարակներ, ավտոներով լեցուն խճուղիներ, նավեր, ինքնաթիռներ, արբանյակներ… */Դադար/* Չէ, ներքեւ նայեմ, վերեւի հետ ընդհանրապես կապ ու հասկացողություն չկա… Բայց էս ահավոր գեղեցիկ, կանաչ ու կապույտ տեղանքին անհարիր բաներ էլ եմ նկատում՝ աչք ծակելու չափ անհասկանալի բաներ… հրաձգություն, բողոքի վիթխարի ցույցեր ծեծ ու ջարդով… մի խոսքով՝ իսկական կռվի տեսարաններ՝ աջ ու ձախ… Տեր Աստված, ուրիշ տեղերում էլ է արյուն թափվում. ողբամ զքեզ, արար աշխա՜րհ… Ուրեմն թշնամությունը աշխարհի նաեւ ուրիշ վայրերի այցելուն է, իսկ ես կարծում էի, թե այն սոսկ մեր տարածաշրջանի մշտական հյուրն է… Ահա՜, կիսաանապատային մի տարածքում ակտիվ փոխհրաձգություն եմ տեսնում… ըհը, տանկերն էլ գործի անցան, բավական դիպուկ են խփում… Ձախից՝ մեծ բլրի վրա մի պահակետ է երեւում եւ մի զինվորական… սա ինչո՞ւ է մենակ էնտեղ… Երեւի իրենց Տարզանն էլ քնած չէ, նույնպես տեղի-անտեղի, հաճախ էլ նրբանկատորեն պատժում է իր դուրը չեկող ջահել սպաներին… Բայց էն խեղճը ինչի՞ է էդքան անհանգիստ, ոնց-որ տեղում պտույտ գա ոտքերի տակ օձ տեսածի պես… էհե՜յ, բախտակից, քո թշնամու՞ց ես էդպես վախենում… ո՞վ է թշնամիդ… էլի՞ թուրքը… Չէ-հա, ի՞նչ ենք էսպես թուրքին «սրբացրել» որպես անգերազանցելի թշնամի… թուրք եւ թշնամի բառերը վաղուց հոմանիշներ ենք դարձրել, ինչը բնավ մեր օգտին չի խոսում. շա՜տ ենք կարեւորել թուրքին, այնինչ ամենակարեւորը մեզ համար մե՛նք պետք է լինենք… Մեր շատ ազգակիցներ իրենց տեսակը միայն թուրքի հետ հարաբերության մեջ են շեշտում, իսկ մնացած շատերի հետ պատրաստ են նույնիսկ ձուլվելու եւ ազգազերծվելու… Անչափ տխուր թեմա է, բայց մի օր էս հարցում բոլոր անորոշությունները պիտի հստակեցնենք, որ կարողանանք առաջ շարժվել մեր դեմք ու հոգով… Լավ, աշխարհիս բանին անցնեմ… Էս էլ հաստատ Թուրքիան է… Ահա եւ Արեւմտյան Հայաստա-

նը… Ինչ էլ էս պահին ասեմ՝ սխալ ու ցավագին է լինելու, ուստի, ինչպես կասեր բանաստեղծը՝ լռությունն, լռությունն անսահման… Ծովափնյա ինչ չքնաղ եզերք է, որքա՜ն հանգստացողներ կան… մեր հաստավիզներից էլ էնտեղ կլինեն, ախր նրանց համար ինչ կարեւորություն, թե որտեղ են մսխում իրենց շաբաշ փողերը… Դե, գրողի ծոցը կորեք… Ծովը… շատ խաղաղ էլ ծփում է… Տեր Աստված, մի ծով չմնաց մեզ. ո՞նց եմ տոչորվում ծովի կարոտից… Մեր լեռներից մեկը գուցե փոխանակե՞նք մի համեստ ծովի հետ, հը՞, թեկուզ՝ ծովածոցի… Լավ, քիչ մը բարձրանանք… Էս ի՞նչ պատկառազդու ամբոխ է հավաքվել գեղատեսիլ Ալպերում… էդ վայրը հեռուստացույցով հաճախ են ցույց տալիս, համարյա սերտած գիտեմ՝ էնտեղ ինչ կա… Հա, աշխարհի բոսերը նորից ժողովի են հավաքվել. մի քիչ կխոսեն աշխարհի դարդ ու ցավից, հետո կգնան որեւէ գիշերային ակումբ եւ մի լավ կկայֆոտվեն… Նրանք լա՜վ գիտեն խրախճանել եւ ուրախանալ… Բայց մինչ այդ պետք է արարողակարգը խստիվ պահպանել, նրանց համար էականը դա է: Հիմա ամերիկացի եւ ռուս նախագահները առանձնազրույցի են անցնում… Hello, привет… թեթեւ գրկախառնություն, շաբլոն ժպիտներ, բարեմաղթանքի հնամաշ խոսքեր… ասես երկու եղբայրներ են զրուցում… դե, ասենք՝ խորթ եղբայրների պես… Բայց նրանք իրականում դեռ թշնամիներ են, առնվազն՝ հակառակորդներ… թույլ տան՝ մեկը մյուսին կոչնչացնի իր միջուկային հարվածներով… Սակայն զսպող մի բան կա նրանց մեջ, տես՝ ոնց են բարեկրթորեն շփվում իրար հետ… Չէ՞, նրանցը եթե թշնամություն էլ է, ապա քաղաքակիրթ թշնամություն, միմյանց ատում են, բայց հանդուրժում են իրար, նույնիսկ՝ ընդհանուր նպատակներ են հետապնդում, համաձայնագրեր ստորագրում, փոխայցելություններ կատարում: Կարելի՞ է նման բան պատկերացնել մեր ու թուրքի միջեւ… Մենք ի՞նչ ընդհանուր նպատակներ կարող ենք ունենալ… Դուք մտածեք էդ մասին, իսկ ես մի փոքր էլ շրջեմ աշխարհում… Կարոտել եմ շրջագայությունները… Ծուտով երեսուն տարեկան կդառնամ, բայց մինչեւ հիմա մեկ անգամ միայն հաջողվեց դուրս գալ էս տարածաշրջանից ու մի փոքր հեռուներում ֆռռալ… Հետաքրքիր օրեր էին… Ոնց-որ Հիմալայներն եմ տեսնում… քիչ ներքեւ Չինաստանն է… Այ, իսկապես հիանում եմ էս ժողովրդով… չինացի առ չինացի՝ միլիարդից անցան: Ծուտով մի հատ էլ կմիլիարդանան, եւս մի հատ էլ, եւ ողջ աշխարհը այլեւս կարելի է կոչել Չինաստան: Իսկ հետո շատ ծիծաղելի են երեւալու էսօրվա մեր բոլոր միջպետական ու ազգամիջյան խժդժություններն ու հակամարտությունները… Բայց չշտապենք իրադարձություններից առաջ ընկնել, ինչպես ասում են, չէ՞ որ համաձարակներ կան, երկրաշարժեր, համաշխարհային պատերազմներ եւ էլի ինչ-որ աղետներ, որոնց անունը մեզ դեռ հայտնի չէ… Ես հավատում եմ էն խոսքին, որ՝ ով չի ուզում ջնջվել, նա չի ջնջվելու… Ի՞նչ

ենք ուզում մենք, հը՞... միայն թուրքի հետ մեր հարաբերությունները՞ պարզել, թե՞ անկախ նրանից՝ էլի ապրել հազարամյակներ...

Դուք ի՞նչ կասեք, հը՞, դուք, որ հիմա իմ դիմաց եք ու իմ տեսադաշտում... ես ձեզ էնքան լավ եմ տեսնում, եւ եթե լավ կամենաք՝ դուք եւս կտեսնեք ինձ՝ էստեղ, պահակետում, մենակ, Տարզանի կողմից պատժված, Նարեից՝ լռված...

(Լսվում է ռադիոկապի խշրտոց, ապա եւ մեկի փոքր-ինչ ծույլ ձայնը. «Եղնիկ-10, եղնիկ-10, ընդունիր»):

-Հա, ընդունեցի, ասա, «Եղնիկ-10-ը» լսում է:

Ռ. -«Պատրաստվիր ցած իջնել, հիմա կգան քեզ փոխարինելու»:

-Էսքան շու՞տ... հետաքրքիր է... Լսեք, հո որեւէ բան չի՞ պատահել էդտեղ... մերոնց հետ...

Ռ.- Չէ, հանգիստ մնա, քեզ արձակուրդ են տալիս, քո ուզած արձակուրդը:

-Եղավ... ես քո մերը...

«Ի՞նչ ասացիր...»

-Ոչինչ, քեզ չէր ուղղված:

(Անջատում է ռադիոն):

-Տարզա՞ն, խիղճդ տանջել է, հա՞... Բա որ խիղճ ունես, ու՞մ էր պետք էս թատրոնը... թե՞ առանց թատրոնի ոչ մի բան չի բացահայտվում ու չի կարգավորվում... *(Հեռադիտակով շարունակում է զննել դահլիճը):* Տարզա՞ն, ու՞ր ես... ես քո մերը... դե, էս անգամ սիրով ու ջիգյարով եմ ասում, առանց հետին մտքերի, եղբոր պես...

(Բջջային հեռախոսով նորից հաղորդագրություն է ուղարկում Նարեին:

Հերոսի նախորդ եւ այս SMS գործողությունը կարելի է ցույց տալ էկրանին):

հուլիս-օգոստոս, 2009թ.

ԱՅԴՔԱՆ ՄԵՆԱԿ ՄԻ ԵՂԻՐ

Գործող անձը.
Մոտ 35 տարեկան գեղեցկատես մի կին

/Վայելուչ հագնված՝ հերոսուհին հանգիստ քայլում է փողոցում: Բարձրաձայն հնչում է նրա մտովի մենախոսությունը/:

- Հրաշալի՜ առավոտ է, իսկ ես ընդամենը աշխատանքի պիտի գնամ էսպիսի աննման օրով… Տնից մինչեւ աշխատավայր ձգվող էս երեք կանգառ տարածությունն իմ միակ ուրախությունն է, գրեթե՝ երջանկության չափ… Դե, հոգ չէ, որ մի կես ժամ շուտ եմ դուրս գալիս տնից, որպեսզի ոտքով հանգիստ հասնեմ աշխատատեղս, եւ հասնել ժամանակին՝ առանց մի րոպե ուշանալու: Նույնիսկ ոտքով բարձրանամ էդ 12-րդ հարկը, ուր տեղավորված է մեր բաժանմունքը, վերելակ չմտնեմ… Ոչ ոք չգիտի, որ ինձ համար հաճելի է գտնվել ու աշխատել էդտեղ՝ շենքի վերջին հարկում… Ես շատ եմ սիրում լինել բարձունքներում, էնտեղից միշտ մտովի թռչում եմ. կարեւոր չէ, թե ինչ ուղղությամբ կթռչես, կարեւորը գետնից պոկվելն է, օդում սավառնելը, վերեւից աշխարհին նայելը… Համենայն դեպս, էդպես եմ պատկերացնում, քանի որ դեռ չեմ թռել, նույնիսկ օդապարիկով չեմ թռել, միայն՝ ինքնաթիռով եմ մեկ-մեկ վերեւներում հայտնվել, բայց դա իմ թռիչքը չէ, այլ՝ ինքնաթիռինը… Հետաքրքիր է, թե ովքեր են թռչելու մեծ ցանկություն ունեցողները… Ի՞նչն է ծնում նրանց էդ ցանկությունը, ինչու՞ են նրանք չիրականացող թռիչքի մեջ պատկերացնում իրենց մաքուր երջանկության ակունքը… Ես նրանցից մեկն եմ, սակայն ես ինձ լավ ճանաչողներից չեմ… Ինչի՞ց է իմ էս այրող թռիչքակարոտը… Ինչու՞ եմ ես ներքուստ էսքան զվարթ ու… այլայլված միաժամանակ…

/Վերեւից տղամարդու ձայն է լսվում/.

Վերեւի ձայն- Որովհետեւ դու շատ մենակ ես:

/Հերոսուհին տեղում քարանում է, ապա կարկամած արձագանքում սեփական ձայնով/.

-Ի՞նչ… Ո՞վ ես դու…

Վ. ձ.- Ես մի մարդու հոգին եմ… Նկատեցի ձեզ առավոտվա էս աճապարող ամբոխի մեջ:

-/*Հեգնանքով*/- Հոգի՞… Գուցե Աստվա՞ծ ես…

Վ.ձ.- Չէ-չէ, Աստված չեմ… Էսքան ժամանակ է՝ երկնքում եմ, ես նրան անգամ հեռվից չեմ տեսել:

-Ինչքա՞ն ժամանակ ես էդտեղ…

Վ.ձ.- Հինգ տարի:

- Իսկ ո՞վ է էն մարդը, որի հոգին նկատել է ինձ էս հազարների մեջ… ես ճանաչո՞ւմ եմ քեզ…

Վ.Ձ.- Դուք կուշանաք աշխատանքից. քայլեք ու շարունակեք զրուցել ինձ հետ:

-Փողոցում էսպես բարձրաձայն խոսելով գնա՞մ… Չե՞ն ասի՝ էս գիժն ո՞վ է…

Վ.Ձ.- Ձեր ձեռքի հեռախոսի ականջակալը դրեք, հեռախոսն էլ ձեռքում պահեք. կմտածեն, որ դուք հեռախոսով եք խոսում…

-Բայց դու հնարամի՜տն ես… */Կատարում է Վերեւի ձայնի խորհուրդը: Նրա հետ հետագա երկխոսության ընթացքում հերոսուհին քայլում է ականջակալով ու հեռախոսը ձեռքին/:*

- Լավ, երեւի մի քիչ անտակտ արձագանքեցի ձեզ… Տեսա՞ք՝ անցա քաղաքավարական տոնի… Դե, չե՞ք ուզում ներկայանալ…

Վ. Ձ.- Իմ անունը ձեզ ոչինչ չի ասի… Հակոբ… ես էլ ձեզ նման մեկն էի… թռչելու անզուսպ ցանկություն ունեի… եւ մի օր ջախջախվեցի ժայռի վրա:

-Ինչու՞, ի՞նչ է պատահել…

Վ.Ձ.- Դելտապլանս խափանվեց, եւ ես ցած գահավիժեցի…

-Ցավում եմ… Շատ երիտասարդ էիք երեւի…

Վ.Ձ.- Պատահարի օրը մոտ քառասուն տարեկան էի:

-Հիմա ինչքա՞ն եք…

Վ.Ձ.- Մոտ քառասունհինգ:

-Ուրեմն՝ հինգ տարի է՝ ձեր հոգին սավառնում է երկնքում:

Վ.Ձ.- Այո… Բայց ես հիմա թռչելուց էն հաճույքն ու երջանկությունը չեմ զգում, ինչ ողջությանս ժամանակ էր… Էստեղ միայն հոգիդ է թռչում, մարմինդ չկա: Առանց մարմնի հոգու համար էլ է տխուր:

-Հիմա դուք էդտեղ՝ երկնքում այլեւս ոչ մի բաղձալի ուրախություն ու մեծ ցանկություն չունե՞ք…

Վ.Ձ.- Դե, կան երկնային որոշ հաճույքներ, բայց դրանք երկրայինի հետ չես համեմատի… Հիմա իմ ամենամեծ բավականությունն էն է, որ փնտրում եմ մեր քաղաքում քայլող միայնակ մարդկանց եւ փորձում մխիթարել ու օգնել նրանց…

-Մեր քաղաքում միայնակ մարդիկ շա՞տ են…

Վ.Ձ.- Շա՜տ-շատ են… իմ մոտավոր հաշվարկով՝ բնակչության 2/3-ից ավելին: Անգամ երեխաների մեջ կան շատ միայնակներ… Իսկ տարեցները գրեթե լիովին միայնակ են:

- Ո՞նց եք ընտրում ձեր զրուցակիցներին, առաջնորդվում եք հատուկ չափանիշներո՞վ…

Վ.Ձ.- ես ամեն օր ուշադիր հետեւում եմ միայնակների երթին եւ գտնում

ամենից ուժեղ տառապողին… Օրվա մեջ լոկ մեկ հոգու հետ եմ շփվում:

-Բայց ո՞նց եք տարբերում, թե էդ մեծ ամբոխի մեջ ով է ամենից շատ տառապում մենությամբ… Դուք հատուկ շնորհքո՞վ եք օժտված, թե՞ հատուկ սարք ունեք…

Վ.Ձ. */Ծիծաղում է/*- Հատուկ սարք չունեմ… Էստեղ ընդհանրապես սարքերի կարիք չկա… Երեւի մենության գծով շնորհք ունեմ, էստեղ եմ ձեռք բերել:

-Նայում եք եւ անսխալ ախտորոշում ձեր ներքին զգացողությամբ, այո՞…

Վ.Ձ.- Ոչ: Ամենամենակին տարբերում եմ լուսային յուրահատուկ ճառագայթումով. որքան խորն է մարդ իրեն մենակ զգում, էնքան ուժգին է նրա լուսաճառագայթումը: Ես ուշադիր զննում եմ, թե բազմության մեջ ում լուսային քուլան է ամենից մեծը եւ ամենավառ ցոլարձակողը… Այն ուլտրակարմրավուն է:

-Մենության լուսաքուլան կարմրավո՞ւն է…

Վ.Ձ.- Ուլտրակարմրավուն, դուք այն չեք տեսնում… Տեսնելն իմ մենաշնորհն է:

-Լավ… Ուրեմն էսօր ամենաուժեղ միայնակը ե՞ս եմ…

Վ.Ձ.- Դե… հա… Անկեղծ ասած՝ երկուսդ էիք. մի կին էլ կար, նա ավելի տարիքով էր, վաթսունն անց…

-/Ծիծաղելով/- Պարզ է՝ ընտրել եք երիտասարդին:

Վ.Ձ.- Չթաքցնեմ մեղքս՝ ձեր գեղեցիկ ու հմայիչ դեմքն էլ իր կարեւոր դերը խաղաց…

- Գեղեցկությամբ էդքան շա՞տ եք հրապուրվում…

Վ.Ձ.- Դե չէ, ոչ էդքան… Պարզապես դուք նման եք իմ ընկերուհուն…

-Նա ո՞ղջ է…

Վ.Ձ.- Այո-այո: Նա շատ ծանր տարավ իմ մահը:

-Եթե հասցեն ասեք, կգնամ նրան տեսակցության: Կտեսնենք, թե ձեր կարոտը նա ոնց է հաղթահարում…

Վ.Ձ.- Կարծում եք, որ նա հիմա անհոգ զվարճանու՞մ է…

-Ոչինչ պետք չէ բացառել: Բայց ավելի լավ է կրկին հավատաք, որ նա շարունակ սգում է ձեր անդառնալի բաժանումը… եւ մտադիր չէ սեր գտնել մեկ ուրիշի գրկում: */Լռություն/* Ինչու՞ եք լռում, արդեն լքեցի՞ք ինձ…

Վ.Ձ.- Չէ, էստեղ եմ… Պիտի ձեզ ասեմ, որ իմ նախկին ընկերուհին արդեն կապվել է մեկ ուրիշ տղամարդու հետ… գուցեեւ արդեն ամուսնացել է… Ես ոչ մի անգամ չտեսա իմ ընկերուհուն ամենամիայնակների շարքում…

-Հուսանք, որ էդ տղամարդը գոնե նման է ձեզ…

Վ.Ձ.- Նման չէ, նույնիսկ հակապատկերս է:

-Ցավում եմ… Իսկ դուք գեղեցի՞կ էիք…

Վ.Ձ.- Ի՞նչ ասեմ… տգեղներից չէի… Գիտե՞ք՝ ես արդեն համակերպվել եմ. երբ ընտելանում եք մահվան եւ դրան հաջորդող այլ գոյությանը, այսինքն՝ հոգեկյանքին, ընտելանում ես նաեւ երկրային կյանքում կատարվող դառն ու աղետալի միջադեպերին: */Դադար/* Իսկ ո՞ր է ձեր ընկեր տղամարդը, ինչպիսի՞ն է նա…

-*/Խրագին/*- Ես ամուսնացած էի… շատ կարճ տեւեց: Իմ տղամարդը… Մանվելը, զոհվեց պատերազմում…

Վ.Ձ.- Խորապես ցավակցում եմ… Ենթադրում եմ, որ դուք նրան շատ եք սիրել…

-Շատ…

Վ.Ձ.- Հասցրի՞ք երեխաներ ունենալ…

-Չէ… ամեն ինչ անհավատալի ձեւով դասավորվեց…

Վ.Ձ.- Հիմա հասկանու՞մ եք, թե ձեր միայնության լուսապսակը ինչու է էդքան մեծ ու վառ… */Դադար/* Դուք ամեն օ՞ր եք էդ վիճակում…

-Գրեթե այո… Էսօր ամուսնուս զոհվելու տասներեքերորդ տարելիցն է լրանում…

Վ.Ձ.- Պարզ է… Ես ուզում էի ձեզ ասել, որ մենության տառապանքը կարելի է գոնե կիսով չափ մեղմել:

-Ուրիշների հետ կապվելո՞վ…

Վ.Ձ.- Դե, դա հանրահայտ միջոց է, իրոք՝ օգտակար… Բայց ես ձեզ այլ բալասան եմ ուզում առաջարկել:

-Ինչպիսի՞…

Վ.Ձ.- Փոխեք ձեր երազանքը, ընտրեք մեկ ուրիշը՝ ավելի բարդն ու … իրագործելին…

-Համարում եք, որ թռչելու իմ երազանքը պիտի փոխեմ մեկ ուրիշո՞վ…

Վ.Ձ.- Այո, հատկապես, որ ձեր էդ ցանկությունը միայնությամբ է պայմանավորված… Իսկ մենք ուզում ենք մեղմել ձեր մենությունը:

-Մե՞նք… Ձեզ հետ ուրիշ հոգինե՞ր էլ կան…

Վ.Ձ.- Հա, բայց մի վախեցեք, նրանք իմ ընկեր-համախոհներն են, մեկ-մեկ օգնում են ինձ, որ ճիշտ կողմնորոշվեմ…

-Նրանք հիմա լսու՞մ են մեր խոսակցությունը…

Վ.Ձ.- Այո, բայց եթե ուզում եք, կարող եմ ասել՝ հեռանան…

-Ինքներդ որոշեք… ինձ համար մեկ է: */Դադար/* Իսկ դուք համոզվա՞ծ եք, որ ես ուզում եմ ազատվել իմ միայնությունից…

Վ.Ձ.- Եթե որեւէ մեկն ինձ փորձում է համոզել, որ ինքը չի ուզում միայնությունից ձերբազատվել, ապա ես նրան պատասխանում եմ, որ նա կամ ինքնախաբեությամբ է տարված, կամ՝ խելացնոր է…

-Հիմա ես դրանցից ո՞րն եմ…

Վ.Ձ.- Ինքնախաբեությամբ եք տարված:

-Հիմա ես ի՞նչ պետք է անեմ…

Վ.Ձ.- Դուք պետք է ձեր ամուսնու հիշատակը անմար պահեք ձեր սրտում, ինչը դուք փայլուն արել եք մինչեւ հիմա: Բայց եւ չպետք է լինել էդքան միայնակ… Իմ խնդիրը հենց դա է. մոտենում եմ մարդկանց եւ կամացուկ նրանց ասում՝ մի եղեք էդքան միայնակ:

-Էդ դեպքում ասեք, թե ինձ նմանը ուրիշ ինչ երազանք կարող է կրել, որ մենության ծանրությունը գոնե կիսով չափ թեթեւանա…

Վ.Ձ.- Ասենք… մի հսկայական ջերմոց ունենալ եւ ամառ-ձմեռ էնտեղ վարդեր աճեցնել, թեկուզ ուրիշ ծաղիկների հետ… Կամ էլ, ասենք… երեխա որդեգրել. որբեր շատ կան մեր երկրում, աշխարհում…

- Որդեգրությո՞ւն… Էդ մեկն ամենեւին չեմ պատկերացնում, Էդ դերն ոնց որ թե ինձ համար չէ… Բայց ահա վարդեր շատ եմ սիրում, հատկապես՝ կարմիրը: Ամուսինս ինձ հաճախ էր կարմիր վարդեր նվիրում:

Վ.Ձ.- Տեսնո՞ւմ եք՝ երազանքն ու օգտակարը կարող են միմյանց հետ լավ շաղկապվել. դուք միշտ վարդերով շրջապատված կլինեք, եւ կթվա, թե էդ ամբողջը ձեր ամուսինն է նվիրել:

-Համոզված եք, որ ջերմոցային էդ վարդաստանը իմ մենության համար բալասա՞ն կլինի…

Վ.Ձ.- Համոզված եմ: Բայց դա ի՛ մ առաջարկած տարբերակն է, ավելի լավ է՝ դ ո՛ւ ք ընտրեք ձեր նոր երազանքը:

-Լավ…

Վ.Ձ.- Ուրեմն ես ձեզ հաջողություններ եմ մաղթում: Չէի ցանկանա ձեզ կրկին հանդիպել:

-Ինչու՞… կքննարկեինք ձեր մեթոդի արդյունքները. մի՞թե ձեզ համար հետաքրքիր չէ, թե ձեր գտած ամենամիայնակները ոնց են ապրում ձեր խորհրդատվությունից հետո… Ի՞նչ կասեք… */Լռություն/* Ինչու՞ եք լռում… դուք գնացե՞լ եք… հեռացել եք առանց ցտեսություն ասելու՞… Նույնիսկ անունս չհարցրիք… Մի՞շտ եք էդպես վարվում… */Լռություն/* Լավ, ի՞նչ ասեմ, գնաս բարով: */Նայում է ժամացույցին/* Ոնց որ թե ուշանում եմ աշխատանքից… */Մի փոքր արագացնում է քայլերը: Բարձրախոսով հնչում են նրա մտորումները/:*

- Բայց ես ինչու՞ նրան ողջ ճշմարտությունը չասացի, ինչու՞ ցանկացա էդ երկնային հոգու աչքին ավելի տուժած ու տառապյալ երեւալ… Սա ի՞նչ թուլություն է, սա ի՞նչ հակում է՝ կարեկցանքի ավելի մեծ բաժին կորզել դիմացինից… Ես մեկ-մեկ նման շեղումներ եմ թույլ տալիս. ախր Մանվելը իրականում զոհված չի համարվում… նա անհետ կորել է… անհայտ զինվոր է… արդեն տասներեք տարի: Ինչու՞ էդ հոգի Հակոբին չասացի, որ ամուսնուս ճակատագիրը մինչ օրս անհայտ է… */Դադար/* Էն ժամանակ

բոլոր հարազատներով անվարան մտածեցինք, որ նա մարտի ժամանակ ծանր վիրավորվելուց հետո գերեվարվել է… եւ հույս տվեցինք մեզ… Իսկ Կարմիր խաչը վաղուց մեզ վստահեցնում է, որ սահմանից էն կողմ հանգամանորեն հարցուփորձ են արել, չկա ոչ մի տեղեկություն նրա մասին… Մինչդեռ Մանվելի մայրիկը ամենքին հայտարարում է, որ իր տղային թուրքերը հեռու չեն տարել, Մանվելը իբր նրանց սահմանամերձ գյուղերից մեկում է, իբր էնտեղ նրան թաքուն պահում են… դեռեւս չբացահայտված նպատակով… Իսկ ես մտածում եմ… թող պապանձվի լեզուս… Մանվելը սպանված է… Էդ միտքը մեծ մեխի պես խրվել է ուղեղիս մեջ, ի՞նչ անեմ… Չգիտեմ ինչու՝ համոզված եմ, որ նրան վիրավոր տարել՝ հետո սպանել են, տեսնելով, որ նա լուրջ ու տեւական բուժման կարիք ունի… Էնտեղ ո՞վ կցանկանա հակառակորդի զինվորին տեւական բուժում տալ… */Դադար/* ես դադարել եմ Մանվելին սպասելուց, ես չեմ հավատում նրա վերադարձին. դա իսկական հեքիաթ կլիներ… Նույնիսկ փոքր տարիքում ես հեքիաթներին առանձնապես չէի հավատում: Բայց դա չի նշանակում, թե չսպասելով ամուսնուս… ես իբր չեմ սպասում նրան… իբր ես ուրիշին եմ ցանկանում, ուրիշին եմ փնտրում, որ կողքիս տղամարդ ու ամուսին լինի… Եթե ես իսկապես նման բան ցանկանայի, դա կանեի վաղուց, շատ այրիների պես… Ճշմարիտ եմ ասում՝ ես նորից ամուսնանալու մտադրություն չունեմ, թեեւ երկրպագուներ հայտնվում են շարունակ, եւ հաճախ՝ լուրջ առաջարկություններով… */Կանգ է առնում եւ ուշադիր նայում դեպի աջ/* Ահա, օրինակ, ա՛յ էն մեկը՝ մայթին կանգնած սպիտակ վերնաշապիկովը… Արդեն մի տարի՝ նա անօգուտ հետամտում է ինձ. մի քանի անգամ մոտեցել եւ… խնդրել է ձեռքս. մերժել եմ ու կմերժեմ միշտ: */Շարունակում է քայլել/* Թեպետ, ճիշտն ասած, իմ տարեկիցներից ու բախտակիցներից շատերը չեն դիմադրի նման գայթակղությանը. էդ տղան սիրունատես է, լավ բիզնես ունի, դեռ ամուրի է… եւ ինձնից փոքր է յոթ տարով… Ասում եմ՝ ախպեր ջան, գնա մի ջահել ու սիրուն աղջիկ գտիր, ամուսնացիր հետը, ի՞նչ ես կպել ինձ, ես քեզ հետ երբեք զույգ չեմ կազմի, գնա, էլ մոտ չգաս… Ասում է՝ ինչու՞, ի՞նչս է պակաս… Ասում եմ՝ քեզ մոտ պակաս բան չկա, տղա ջան, նույնիսկ սպասվածից ավելին է, պակասն ինձ մոտ է, հասկանու՞մ ես… Ես դատապարտված եմ միայնության, եւ դրանից փրկություն չկա… Դե, պարզ է՝ նա չի հասկանում բացատրությունս, գլուխը կախում է, ապա անմեղ-անմեղ հարցնում. «Իսկ գուցե փորձենք, հը՞, գուցե միանանք ու մենակությունդ անցնի՞…» Չէ, հակադարձում եմ, դու չես հասկանում՝ չի անցնի… Վերջ, գնա բանիդ… Բայց ու՞մ ես ասում. նա դեռ անկարող է լքել ինձ… Ճիշտ է՝ արդեն մի երկու ամիս է՝ չի մոտենում ինձ իր միօրինակ առաջարկությամբ ու հարցերով, դրա փոխարեն հեռվից է հետեւում ինձ՝ ասես սպասելով հրաշքի… Բայց ես հրաշագործ չեմ, ես ըն-

դամենը մի անուղղելի միայնակ եմ: */Կանգնում նայում է աջ կողմը/* Տես՝ մայթով էդպես զուգահեռ կքայլի իմ հետեւից մինչեւ աշխատավայրս, գործից հետո էլ նույն ձեւով՝ հեռվից կուղեկցի ինձ բանկից մինչեւ տուն… Դե նա սիրահարված է ինձ, սակայն անհասկացողի մեկն է, ինչն ինձ համար ավելի որոշիչ հանգամանք է: */Դադար/* Չմտածեք, թե ես մի կատարյալ սուրբ եմ եւ ուզում եմ հիմա ձեր աչքին երեւալ բարոյական իմ ողջ շքեղությամբ. ես կին եմ, այսինքն՝ ունեմ իմ մեղքը… Հա, պիտի խոստովանեմ, որ ես էդ սպիտակ վերնաշապիկովի հետ մի գիշեր եմ անցկացրել… Մեր ծանոթության առաջին ամսին էր… Գործից հետո էր, հրավիրեց իր սրճարանը մի բաժակ սուրճի… Չուզեցի շատ գոռոզը երեւալ, գնացի, նստեցինք… Սուրճին ավելացան շամպայնը, գինին, կոնյակը… Երեւի հարբելու ցանկություն էր ծագել մեջս… Մի խոսքով՝ հաջորդ առավոտը ես աշխատանքի եմ գնացել նրա բնակարանից… ներքուստ հոշոտված ու կողոպտված… Չեմ ուզում ասել, որ զղջում եմ արածիս համար. զղջումը ոչինչ չարժե. գուցե հակառակը, շնորհակալ եմ էդ տղային, որ նման հնարավորություն տվեց, որպեսզի ես ինձ ավելի լավ ճանաչեմ… Հասկացա, որ չի կարելի ունենալ փոքրիկ նահանջներ անգամ, ինքդ հետո զզվում ես քեզնից… Հա, դա իմ միակ գիշերն էր ուրիշ տղամարդու հետ… Մանվելից հետո: */Կանգնում, հոգոց է հանում: Նայում է ժամացույցին/.* Ուշանում եմ: */Սկսում է արագ քայլել/* Էհ, ի՞նչ կա որ, էսօր էլ թող ես ուշանամ. մեր բաժանմունքում ես առայժմ միակն եմ, որ վերջին հինգ տարում ոչ մի անգամ չեմ ուշացել եւ չեմ բացակայել աշխատանքից: Ինձ դրա համար ոչ ոք չի պարգեւատրում, բայց պարտաճանաչությունս հարգում են եւ, գուցե ձեւականորեն, հաշվի են նստում հետս… Էսօր կմտնեմ տնօրենի մոտ եւ կխնդրեմ, որ ինձ արտոնյալ վարկ տրամադրի… վարդաջերմոցի համար… Չէ, չի մերժի, իսկ եթե հանկարծ ծամծմի ու պատճառաբանի, թե բանկը ճգնաժամի մեջ է եւ ցածր տոկոսով վարկ չի կարող հատկացնել… էն ժամանակ կասեմ, որ իր ու բանկում տաքուկ տեղավորված մերձավորների աստղաբաշխական ռոճիկները թող կրճատի, եթե ճգնաժամ է… Բանկային վերնախավը մեզնից 10-15 անգամ բարձր աշխատավարձ է ստանում, երբ գործի հիմնական ծանրությունն ընկած է մեզ վրա՝ միջին աշխատողներիս… Իմ ուժերից վեր է արդարությունը վերականգնել, բայց հարկ եղած դեպքում անկեղծանում ու դիվոտում եմ նրանց առաջ… Թող միայն մերժի իմ դիմումը, ես տնօրենի ճակատին ավելին կասեմ, քան հիմա մտածում եմ… Դե, մարդ եթե անառակի մեկն է, նրան հեշտ է պատին դեմ տալ… Ես իմ մտքինը հաստատ կասեմ, հետո, պարզ է… դիմումս կգրեմ եւ ընդմիշտ կլքեմ էդ ագահանոցը… անառականոցը… փողանոցը… Ինքներդ գիտեք, թե որքան դժվար է լինում աշխատել նրանց հետ, որոնց արդեն բարձրաձայն ասել ես նրանց անբարո կերպարի հիմնական մանրա-

մասները… */Դադար/* Միեւնույն է՝ վարդաստան-ջերմոցի գաղափարից չեմ հրաժարվի. ուրիշ բանկից վարկ կվերցնեմ, թող որ՝ ավելի բարձր տոկոսով, կարեւորը, որ ես կունենամ վարդերով պճնված իմ տարածքը, իմ շուրջը միշտ կսոսափեն անթիվ ծաղիկներ… եւ գուցե այլեւս ես մենակ չլինեմ էդ անթիվների մեջ… Գուցե վերեւի էն ձայնը ասել է ինձ համար ամենակենսական ճշմարտությունը… */Հանկարծ կանգնում է եւ իր սեփական ձայնով բացականչում/.* Տեր Աստված, էն ո՞վ է կանգնած բանկի մուտքի մոտ… Ինչքա՜ն նման է Մանվելին… */Վազում է/* Ոնց որ թե Մանվելի նիհար օրինակն է… Մի՞թե իմ սիրելի մեռյալը հարություն է առել, մի՞թե իմ մենության լուրը հասել է նրան… Մանվե՜լ… */Շնչասպառ վազում է դուրս/:*

ՎԵՐՋ

նոյեմբեր, 2018թ.

ԿԱՐՄԻՐ ՔԱՄԻ

Գործող անձը.
60-65 տարեկան տղամարդ

/Հերոսը հիվանդանոցային հագուստով պառկած է աղոտ լուսավորված հիվանդասենյակի մահճակալին: Նրա ձախ ձեռքին միացված է կաթիլայինի ռետինե խողովակը/:

- Էս ինչքա՜ն դանդաղ է անցնում ժամանակը… Կարո՞ղ է՝ էս բժիշկներն ինձ վրա փորձարարություն են անում… Գիշերներն էլ են կաթիլային միացնում: Արդեն երեք գիշեր է՝ սրա պատճառով անքուն եմ… Դե, ճիշտն ասած՝ միայն կաթիլայինի պատճառով չեմ անքնության մատնվել. բուժքույրն ասում է, թե ես կարող եմ էսպես միացված քնել՝ մինչեւ հեղուկի ներթափանցման էդ երկու ժամն անցնի… չէ, մեկ ժամ հիսուն րոպե… Եթե ցանկանաս, կքնես՝ ասում է: Ցանկանում եմ քնել՝ չի ստացվում: Միայն ոտքս չէ բորբոքված… */բարձրացնում է աջ ոտքը, շոյում վիրակապված սրունքը/,* ուղեղս ավելի է բորբոքված. ի՞նչ մտքեր ասես՝ վխտում են էնտեղ… Դե, հա, ախտահարված մտքեր էլ կան, որ ավելի են անհանգստություն պատճառում, քան էս հիվանդությունը… Կարմիր քամի՜… Ինչ էլ անուն են դրել էս գեշ ցավին… Բժիշկն ինձ պարզաբանեց, որ սա վարակիչ հիվանդություն է, առաջանում է… ի՞նչ ասաց… */բարձի տակից հանում է մի թուղթ, նստում ու վառում հիվանդասենյակի լույսը, ապա կարդում է/.* առաջանում է… հե-մո-լո-տիկ- ստրեպ-տո-կո-կերով ախտահարվելիս, բնորոշվում է մաշկի, մաշկային ավշային անոթների, լորձաթաղանթների բորբոքային երեւույթներով… */թուղթը ծալում, դնում է գրպանը/:* Էսքանը գրել եմ բժշկի թելադրությամբ, որ հիշեմ… Հա, ոտքիս սրունքային մասի մաշկը այլանդակ ձեւով բորբոքվել է… Չմոռանամ ինձ հիշեցնել նաեւ, որ էս հիվանդությանը նպաստող գործոններից է օրգանիզմի անհատական նախատրամադրվածությունը: Դե, ես էլ մտածում եմ, որ իմ օրգանիզմը հատուկ հակվածություն ունի էս ցավի նկատմամբ… Կարմիր քամի՜… */երգում է/* «Օ քամի, քամի, մի պոկիր տերեւը վերջին»… */դադար/* Չէ, չեմ վախենում էս հիվանդությունից. մի բանի անունն որ քամի լինի, ի՞նչ վախենաս. քամի է՝ կգա ու կանցնի… Դե, ճիշտ է՝ ուժեղ քամին անցնում է ավերածություններ անելուց հետո: Բայց իմ ի՞նչը սա կարող է ավերել… ոտքս… Էհ, իմ ընկերներից ոմանք իրենց ոտքերը կորցրել են ջահել-ջիվան տարիքում, պատերազմի ժամանակ… Հիմա որ ես ոտքակորու՛յս լինեմ՝ մի մեծ ցավ չէ՝ ոչ ինձ համար, ոչ էլ առավելս՝ ուրիշների: Ես կարմիր քամուն իմ թշնամին չեմ համարում, սա էնքան փոքր բան է իմ կյանքում մոլեգնած

կարմիր քամիների համեմատ… Սամումներ, մրրիկներ են անցել իմ ապրած օրերով, իմ կյանքի բովանդակ երակներով… Դրանց գույնը, հա, ալ կարմիր էր, ավելի ճիշտ՝ արնաերանգ, կամ հենց՝ արնագույն: */Փորձում է բացել ոտքի վիրակապը/* Չէ՞, սրա կարմրից ուղղակի զզվում եմ… */Վիրակապը թողնում է նույն ձեւով, կանգնում: Այդուհետ հերոսը կաղալով քայլում է եւ մենախոսում կաթիլայինը իր հետ քարշելով/:* Կարմիր քամի՜… Երբ ես կորցրի իմ ութ տարեկան որդուն, դա իմ կյանքի առաջին ուժգին ցնցումն էր… ոչ թե սաստիկ քամի, այլ մի իսկական պտտահողմ՝ տոռնադո… Ես ինձ միանգամից որբացած, մեղավոր ու անհեռանկար զգացի… Գուցե դա նաեւ նրանից էր, որ Գեւորիկը իմ միակ տղա զավակն էր… Թե ինչպես դիմակայեցի էդ պտտահողմին, միայն ինձ է հայտնի ու Աստծուն… Որդուս կորստից հետո ես ինձ թույլ չտվեցի հոգով կոտրված ու ընկճված, անուժ ու թուլակամ երեւալ. ի՞նչ կասեն երկու աղջիկներս, ի՞նչ կասի կինս… Ես ինձ երբեք թույլ չտվեցի լալկանի պես տրտնջալ ու գանգատվել, ճակատագրի էդ հարվածը ես ամբողջովին վերցրի ինձ վրա, որ տնեցիները ավելի քիչ տառապեն… Դե, դա արդեն խառնվածքի գիծ է, պատերազմի ժամանակ էլ էի էդպես վարվում. հաճախ էի մարտերի ընթացքում ինձնից ավելի ջահել տղաներին ետ պահում եւ թշնամու կրակը վերցնում ինձ վրա: Նման մարտերից մեկի ժամանակ էլ ուսից վիրավորվել եմ… երկու մետրի վրա հանկարծակի հայտնված թուրք զինվորի դիմահար կրակից… Վրիպել է, կպել է միայն ուսիս: */Ծիծաղում է, աջ ձեռքով շոշափում ձախ ուսը/:* Բայց սա ի՞նչ է իմ տեսած մյուս վիրավորումների ու… բզկտումների համեմատությամբ… մանրո՛ք… Ուժեղ կարմիր քամիներ եղան իմ ապրած պատերազմի օրոք: Աչքիս առաջ տեսա մեծ եղբորս եւ երեք զինակիցներիս զոհվելը… միանգամից… Ամեն ինչ ակնթարթորեն կատարվեց, ոչինչ չէի կարող անել… իսկապես… Գրադի արկը ընկել էր ուղիղ նրանց վրա… Թե ես ու մնացած հինգ ընկերներս, որ նրանց հետ էինք նույն խրամատում, ոնց ենք ողջ մնացել՝ չգիտեմ… Շատ հեղված հարազատ արյուն տեսա էդ չորս տարիներին… Պատերազմի գրեթե էդ ողջ ընթացքում կարմիր քամին էր ոռնում… Կինս ասում էր, թե էդ իր աղոթքներն են ինձ ողջ պահել… Կի՜նս… */Դադար/* Նրա կորուստը նույնպես շատ ուժեղ ցնցեց ինձ… Նրա մահը ինձ համար ուղղակի անըմբռնելի ու անտանելի էր… Դե, նկատի ունեմ նրա… բարոյական մահը, ֆիզիկապես նա դեռ ողջ է, հիմա տեղափոխվել, ապրում է Ռուսաստանում… Երեւի հասկացավ, որ այլեւս չպիտի հայտնվի իմ տեսադաշտում… Կնոջս դավաճանությունը մի նոր սաստիկ կարմիր քամի եղավ իմ կյանքում. դա պատերազմից երեք տարի անց էր, երբ ես դեռ զինվորական ծառայության մեջ էի… Ես նրան բռնացրի մի լղպորի հետ… մեր տանը… մեր անկողնում… Ես կարող էի մեր ծառայակիցներից մեկի պես վարվել՝ ավտո-

մատը վերցնել ու էդ… բոզին գնդակահարել տեղում իր սիրեկանի հետ… Անկեղծ ասած՝ չգիտեմ՝ ինչու եմ նման բան ասում. էն պահին նման միտք չէր ծագել իմ գլխում… ես ապշանքից համրացել ու այլայլվել էի, շանթահարվածի պես փլվել էի ննջասենյակի դռան մոտ… Աղջիկներս ասում են՝ մոտ երկու ժամ էդպես անխոս փլված-նստած էի… Հետո կնոջս մի կերպ ասացի, որ ինքն այլեւս մեռած է ինձ համար… Ամեն ինչ թողեցի նրան ու աղջիկներիս՝ բնակարան, գույք, դրամական միջոցներ, հեռացա եւ նոր տուն դրի ինձ համար… */Դադար/* Էդ կարմիր քամուց հինգ տարի անց ամուսնացա մեկ ուրիշի հետ… մենակությանը վերջնականապես չէի ուզում վարժվել… Բայց նոր կնոջս հետ միասին երկար չապրեցի, ընդամենը մեկուկես տարի… Չէ, նա չի դավաճանել ինձ… Ճիշտն ասած՝ շատ լուրջ պատճառ չկար բաժանվելու. պարտաճանաչ, մաքրասեր, սիրունատես կին էր… բայց շատ էի ձանձրանում նրա հետ, նա մի տեսակ, ասես, տաղտուկի դիցուհի լիներ… Կիրք չունեի նրա հանդեպ, դե սիրո մասին խոսելն էլ ավելորդ է… Երբ բաժանվում էինք, հանգիստ հեկեկում էր… ասում էր՝ ի՞նչ մեղք եմ գործել, ինչի՞ չես ուզում ապրել ինձ հետ… Ասացի, որ ինքը ոչ մի մեղք չունի, ինքը լավ կին է, էդ ամուսնության հավեսս է կորել… Էդպես գրեթե անաղմուկ բաժանվեցինք… Վերջերս տեսա էդ կնոջը… իր նոր ամուսնու հետ: Կանխատեսում եմ, որ դա նրա հերթական կարճատեւ ամուսնությունն է լինելու: Նրա նոր ամուսնուն հեռվից ճանաչում եմ՝ անհանգիստ, հախուռն մարդ է, երկար չի դիմանա էդ… ճահճացած կնոջ գրկում… Լավ, Աստված նրանց հետ, թող մի բարձի ծերանան: Մեզնից խոսենք, թե չէ կթվա՝ բամբասում եմ կանանցից… */Դադար/* Ես մի նավակ եմ, որին չի կարելի ափ հանել ու պահել ավազում լռված. ինձ միշտ նավարկե՛լ է պետք գետերով ու ծովերով… Երեւի հասկացաք՝ այլեւս չցանկացա ամուսնանալ, ու էսպես կյանքս ձգվում է արդեն մոտ քսան տարի… Արդյունքների մասին ինքներդ դատեք. ինձ հետ ավելի հաճախ հարաբերվում են որպես այրիացած, դժբախտ ու մոլորված տղամարդու՝ անընտանիք, առանց ընտանեկան ջերմության… Իմ ընկեր-բարեկամները հաճախ են կարեկցանք… ավելի շուտ՝ խղճահարություն դրսեւորում իմ հանդեպ, ինչին ես միշտ հակահարված եմ տալիս ափաշկարա կամ կոծկված ձեւով: Սակայն հետո հասկացել եմ, որ պետք չէ քեզ հետ շփվողին շարունակաբար ասել, թե քո կարեկցանքն ու խղճահարությունը քեզ պահիր, ես դրա կարիքը չունեմ… թեեւ աշխարհում էդ ո՞ր կենդանին կարեկցանքի կարիք չունի… Ժամանակին ես ուժեղ ու միայնակ տղամարդու կերպար էի ստեղծել ինձ համար, եւ էդ դերով մարդկանց առջեւ հանդես եմ գալիս … որոշակի հաջողություններով: Մինչդեռ իմ փխրուն ու զգայուն հոգին ստույգ գիտե, թե որքան ծանր է նման դերակատարությունը… Պիտի ասեմ, որ

միաժամանակ հաճելի է: Ինձ հաճախ են դիմում օգնության տարբեր հարցերով. դրամական պարտքեր, փոխարինումներ, միջնորդություններ եւ այլն, եւ այլն… Մի անգամ երիտասարդ ծանոթ մի կին իր վեց ամսական փոքրիկին երեկոյան բերեց իմ տուն եւ խնդրեց մի երկու ժամով պահել, մինչեւ ինքը կվերջացնի մի շատ կարեւոր գործ. ասաց՝ փոքրիկիս միայն ձեզ եմ վստահում… Համաձայնվեցի ու… մի անքուն գիշեր անցկացրի էդ հիվանդ երեխայի հետ… Երկուսով… լացեցինք նաեւ. երեխայի սնունդը վերջացել էր, ջերմություն ուներ. ինչ-ինչ բաներ ձեռնարկեցի, որ փոքրիկի մոտ ձգնաժամը չխորանա… Մի խոսքով՝ երեխային մորը վերադարձրի լուսաբացին, էն նույն վիճակում, ինչպես հանձնել էր, գուցե՝ մի փոքր էլ լավ: Հետո իմացա, որ էդ փոքրիկի մայրիկը պարզապես խրախճանասերի մեկն է, կամ մեր՝ տղամարդկային արդի լեզվով ասած՝ կայֆարի՞կ է… Նա ոչ մի լուրջ ու հրատապ գործ էլ չուներ, էդ գիշեր ընկեր-ընկերուհիներով հավաքվել էին մեկի ամառանոցում ու … կարելի է պատկերացնել, թե ինչպես են զվարճացել… Ահա էդպես ինձ մեկ-մեկ շահագործում են: */Դադար/* Ես մեր քաղաքում շատ ծանոթներ, ընկեր-բարեկամներ ունեմ: Երբ փողոցում քայլում եմ, հանդիպող երկուսից մեկը բարեւում է ինձ… Ընկերներիցս մեկը ճշտում է, թե երկուսից մեկուկեսն է բարեւում… Ոմանք լավ օգտվում են իմ էդ, ինչպես ասում են՝ հանրաճանաչությունից, հատկապես ընտրությունների ժամանակ… Մի տաս-քսան հոգու շոշափելի աջակցել եմ, որ նախագահ, պատգամավոր, քաղաքապետ ու ավագանու անդամ ընտրվեն, եւ ոչ մի փոխհատուցում չեմ ակնկալել իմ ծառայության դիմաց, նրանցից ոմանք ինձ նույնիսկ շնորհակալություն չեն հայտնել: Իմ հպարտությունը թույլ չի տալիս, որ ես առեւտրի մեջ մտնեմ էդ փառասերների ու կարիերիստների հետ: Նրանց մեծ մասը իրականում վատ մարդիկ են… Մեկը կար, բարձր պաշտոն էր զբաղեցնում, տարիներ առաջ օգնել եմ, որ նրա կուսակցությունը ամենաշատ ձայները հավաքի: Դրանից որոշ ժամանակ անց նա հասավ նրան, որ ինձ ազատեն աշխատանքից,- ընդամենը բաժնի վարիչ էի,- ինչ է թե՝ այլեւս ես նրա քաղաքական համակիրը չեմ… Դա քաղաքական… չէ, ինչ քաղաքական, տմարդի, տհաճ, կարմիր քամի էր ինձ համար… Դե, էդ փուչ վրիժառուն մտածում էր, թե ես անգործ ու սոված կմնամ, եւ ստիպված կգնամ նրա առաջ վիզ կծռեմ. բայց ես շնորհք, ուղեղ ունեցողի մեկն եմ, սեփական մի գործ սկսեցի ու մինչ օրս հաջողությամբ պահում եմ ինձ եւ օգնում ուրիշներին… Ազնվորեն եմ ասում՝ իմ բարությունից օգտվածների թիվը մեծ է: Ինձ համար դա էնքան էլ կարեւոր հանգամանք չի դիտվի, եթե չլիներ էսօրվա վիճակը… Երեկ բուժքույրն իբր իմիջիայլոց հարցրեց, թե ինչու՞ ինձ տեսակցության եկողներ չկան. էդ բուժքույրն էլ է կարեկցում ինձ… Ասացի՝ ես ոչ ոքի չեմ հայտնել, որ հիվանդանոցում եմ, չեմ սիրում մարդկանց նեղություն պատ-

ճառել: Բուժքույրն էլ թե՝ համարյա ողջ քաղաքը գիտի, որ ես հիվանդանոցում եմ, հատուկ հայտնելու կարիք չկա. զարմանալի է, թե ինչու այցելուներ չկան… Մի պահ ես էլ զարմացա. իսկապես, երրորդ օրն է՝ էստեղ եմ, իսկ ինձ դրսից տեսակցության ոչ ոք չի եկել, իմ հիվանդասենյակ մտնում են միայն բուժծառայողները եւ հիվանդանոցում բուժվող մարդիկ: Բայց համոզված եմ՝ եթե ես որեւէ մեկին զանգեմ ու ասեմ, թե հիվանդ պառկած եմ, անպայման կգա ինձ տեսակցության: Բայց… իմ ասելուց հետո միայն… Իսկ որ իրականում գիտեն իմ վիճակն ու չիմացության են տալի՞ս… Այ սա չեմ հասկանում, բայց եւ չեմ կարեւորում: Իբր որ եկան՝ ի՞նչ պիտի փոխեն իմ վիճակում. ոչ բժիշկ են, ոչ հրաշագործ… Կգան եւ կարեկցանքի ու խղճահարության ցույց կանեն էստեղ ու կգնան գոհ: Բնավ պետքս չէ: Էս կարմիր քամին ես առանց նրանց թատրոնի էլ կհաղթահարեմ… */Դադար/* Աղջիկներիս պարագայում խնդիրն ուրիշ իմաստ ունի. նրանք չգիտեն, որ ես հիմա հիվանդանոցում եմ, թե չէ անմիջապես կթռնեն-կգան իրենց հեռու քաղաքներից… Նրանք գրեթե ամեն օր զանգում՝ որպիսությունս են հարցնում… Դե, ճիշտն ասած՝ գրեթե ամեն օր զանգողը մեծս է՝ Լուսիկը, իսկ փոքրը՝ Մարգոն, զանգում է … ըմմմ… գրեթե շաբաթը մեկ: Դե պարզ է՝ հաճախ նաեւ ես եմ նրանց զանգում: */Ուշադիր նայում է կաթիլայինի դեղատոպրակին/* Ոնց որ թե վերջանալու վրա է… Բուժքո՛ւյր… Թող գա հանի ասեղը… Չկանչեմ էլ՝ ինքը ժամանակին կգա, իր գործը կանի. պարտաճանաչ, ուշադիր բուժքույր է: */Դադար/* Հա, աղջիկներիս ցավը տանեմ, ո՞նց կուզենայի, որ նրանք հիմա մոտս լինեին… Բայց պիտի խոստովանեմ, որ ես նրանց առնչությամբ էլ կարմիր քամու տակ ընկա… Շատ դողացրի, շատ վախեցա նրանց հետագա ճակատագրի համար, երբ նրանք… ամուսնալուծվեցին… Ինձ ասես մերկացրել ու շիկացրած ձողով շամփրում էին… Իսկ նրանց ասես վեջն էլ չէր, համենայն դեպս, ինձ էդպես էր թվում… Երկուսի հետ էլ դեպքը պատահեց նույն տարում եւ նույն ամսում, մի շաբաթվա տարբերությամբ… Նախ, Մարգոն ամուսնալուծվեց, հետո՝ Լուսիկը… Ինձ երբ տեղեկացրին իրենց էդ «քաջագործության» մասին, իսկույն թռա մոտները, բայց բանը բանից անցած էր արդեն: Նախ, Լուսիկի մոտ եղա, ապա՝ Մարգոյի. գրեթե նույնատիպ պատմություն, նույնօրինակ պատճառաբանություններ լսեցի նրանցից… Խոսեցի նաեւ փեսաների հետ. լավ տղաներ են, ես նրանց իմ որդիների պես էի սիրում: Նրանք հաստատեցին իմ կասկածներն ու մտավախությունը… Աղջիկներիս վարքում նրանց մոր արյունն էր գլուխ բարձրացրել… Հազար ափսոս… Ես շատ էի փափագում, որ նրանք չկրկնեին իրենց մոր ճակատագրական սխալը, էդպես մեծ հարգանք դրսեւորած կլինեին իրենց ընտանիքի, ամուսնու եւ իրենց հոր հանդեպ… Հազար ափսոս՝ չկարողացան: Նրանք չկարողացան հավատարմության կանթեղը

իրենց ձեռքում ամուր պահել… Կատաղեցի, աղմկեցի, ապտակեցի աղջիկներիս… անօգուտ գուցե… Երկուսն էլ կարծես պայմանավորված՝ ասում էին՝ պապ ջան, բանի տեղ մի դիր, նոր, ավելի լավ ամուսին կգտնենք, մենք հաշվի կառնենք էս դասը… Եվ դա ասում էին էնքան ինքնավստահ, որ ես մի փոքր լավատեսությամբ տուն վերադարձա: Թեեւ նեղսրտված էի առավելս, անչափ վիրավորված ներքուստ… Անկախ նրանց արարքներից՝ ես շատ եմ անհանգստանում աղջիկներիս համար: Ի՞նչ անեմ, նրանք իմ հարազատ զավակներն են, եւ ես նրանց շարունակեցի սիրել հայրական նույն սրտով, շարունակեցի միաժամանակ փրփրել ու փրփրել իմ նրսում, բոլորի աչքից աննկատ… Նրանց պատճառով հիասթափությունը մեկ-մեկ էնպես է վառում էությունս, որ մարդ ուզում է գլուխը պատովը տալ, բայց ես ինձ զսպել գիտեմ: */Դադար/* Չկարծեք, թե աղջիկներիս մոտ մեղքի զգացումն ընդհանրապես բացակայում է. նրանք, անշուշտ, իրենց մեղավոր են զգում, եւ դա, գիտե՞ք՝ ոնց է արտահայտվում. նրանք ավելի ուշադիր դարձան իմ հանդեպ, այդուհետ ավելի հաճախ են զանգում ինձ, եւ ամեն տարի պարտադիր այցելում են ինձ, արդեն հինգ տարի, կանոնավորապես: Նրանց ամուսնության տարիներին էդպես չէր, պատճառը ամուսիններն ու երեխաները չէին… Հա, Լուսիկն ու Մարգոն երկուական երեխա ունեն՝ տղա ու աղջիկ: Լուսիկը իր տղային իմ անունով է կոչել՝ Վահա՜ն… էն ժամանակ էլ նրանք ուզենան՝ ավելի կապված կլինեին ինձ հետ: Աղջիկներս մեծամասամբ ինքնակամ մարդիկ են, հիմա իմ միջոցով իրենց մեղքի մի մասն են քավում: Նրանք կարծես թե գիտեն՝ ինչպես պետք է ապրեն. դա լավ է, բայց, միեւնույն է, շատ եմ անհանգստանում նրանց համար… Երեկ Լուսիկը զանգեց ու գաղտնիքի կարգով ասաց, որ Մարգոն պատրաստվում է երկրորդ անգամ ամուսնանալ… Մարգոն ինձ էդ մասին ոչինչ չի հայտնել, երեւի ուզում էր անակնկալ մատուցել… */Նայում է կաթիլայինին/* Լրիվ վերջացել է, իսկ բուժքույրը դեռ չկա… */Բացում է հիվանդասենյակի դուռը, կանչում/* Բուժքո՜ւյր… Կարինե՜… */Դուռը փակում, վերադառնում է, նստում մահճակալին/:* Մի քիչ էլ սպասեմ, չեկավ՝ ինքս կհանեմ կաթիլայինը: */Դադար/* Լավ, Մարգոս էս ի՞նչ նոր փեսացու է գտել, տեսնես հա՞յ է… Զանգեմ՝ փորձեմ ճշտել ինչ-որ բան… Հիմա նրանց մոտ՝ Ամերիկայում, ցերեկ է, չի անհանգստանա զանգիցս: */Սեղանից վերցնում է ձեռքի հեռախոսը եւ հավաքում համարը/* Մարգո՞… բարեւ, ջանիկս, ո՞նց ես, երեխեքը ո՞նց են… Ես էլ եմ լավ, ասի՝ տեսնեմ ինչ նորություն կա քեզ մոտ… Չէ-չէ, ուղղակի մի քիչ անքնություն ունեմ… Լուսիկը մի բան է ասել քո անձնականի վերաբերյալ, ճի՞շտ է… Փեսացուդ ո՞վ է… Լավ, լավ… Դե, եթե հարսանիքով եք անում, պիտի գամ… Չէ-չէ, գումար չուղարկես, ես ունեմ, դու հո գիտես, որ վաստակել կարողանում

եմ… Լավ, երբ ամեն ինչ կոնկրետացնեք, իմաց տուր… Ի՞նչ… դե դու քեզնով զբաղվիր, Լուսիկն իր անելիքը գիտի… Հաջողություն, բալիկս, քեզ խելոք պահիր… Պաչիկներ երեխեքին… Հաջող… */Անջատում է հեռախոսը, դնում սեղանին/* Մարգոն ասում է՝ մի երկու ամիս հետո հարսանիք են անելու, փեսացուն Հայաստանից նոր տեղափոխված ամուրի երիտասարդ է, դեռ որեւէ արհեստ ու մասնագիտություն չունի, բայց, իբր, իմ սրտով է լինելու… Հետո Լուսիկի համար լավ ու վերջնական փեսացու կգտնի՝ ասաց… Պարծենկո՜տ… Բայց դե Լուսիկն էլ հո կորածի մեկը չի, ինքն էլ է իր հարցերը լուծում ուզածի պես… Չէ, ոնց որ Մարգոն նկատել է, որ մեծ քույրը մարդկանց մի քիչ վատ է ճանաչում՝ շատ է դյուրահավատ. ուրեմն՝ թող օգնի քրոջը, որ ճիշտ ու սթափ քայլերով առաջ շարժվի… Լավ, էս մասին երեքով կխոսենք հարսանիքի օրը, Լուսիկն էլ կլինի էնտեղ: */Երգում է/.* «Հարսանիք, հարսանիք, պապունց տանը կնանիք…» */Երգում ու կաթիլայինը որպես զուգընկերուհի առած՝ պարում-պտտվում է: Հանկարծ կանգ է առնում/.* Հա, չմոռանամ, մի խնդիր եւս ունեմ իմ առջեւ դրած. պիտի Լուսիկի հետ համոզենք Մարգոյին, որ նա ընտանյոք, իր նոր ամուսնու հետ, վերադառնա հայրենիք. չեմ ուզում, սաստիկ չեմ ուզում, որ իմ ժառանգներն էնտեղ օտարի փայ դառնան… */Դադար/* Չեկավ բուժքույրը, գուցե քնով է անցել. իրավունք ունի, երեք փոքրահասակ երեխայի մայր է, շատ է հոգնում եւ տանը, եւ հիվանդանոցում… Լավ, գնամ մեր բուժքրոջը տեսության… */Կաթիլայինը քարշելով՝ դուրս է գալիս միջանցք, հասնում «Բուժքույրերի սենյակ» գրությամբ դռանը, կամացուկ բացում եւ իսկույնեւեթ փակում է այն, այլայլված քարանում տեղում, ապա շտապում է իր սենյակը եւ փլվում մահճակալին/:* Տեր Աստված, էն ի՞նչ էր անում էդ աղջիկը… */Խոսում է շատ հուզված/* Եվ ու՞մ հետ էր էդպես լկստվում… ինչ-որ մի կիսածերուկ չոփուր բժշկի հետ… Ինչու՞, ինչու՞… ոնց կարելի է… Երեք երեխայի մայր ես, ընտանիքատեր… Հետո ի՞նչ՝ ամուսինդ երկու տարի է՝ չի գալիս Ռուսաստանից, արտագնա աշխատանքը հո հեշտ չէ, երեւի ուզում է լավ վաստակած վերադառնալ… Հետո ի՞նչ՝ նա էնտեղ կարող է կապված լինել ուրիշ կնոջ հետ… Հետո ի՞նչ՝ նյութական խնդիրներ ունես… Դու պարտավոր ես մաքուր սպասել քո ամուսնուն, մինչեւ հստակություն կլինի ձեր ընտանիքում: */Դադար/* Բայց ես ինչի՞ եմ էսպես դատախազի նման մեղադրում էդ կնոջը, իրավունք ունե՞մ… Հա, հա, ունեմ. հարցնում եմ քեզ, Կարինե՜, ինչու՞ ես վերջնականապես ապականում քո ընտանիքը, ապականում մեր շրջապատը… Մյուս կարինեներին եմ ասում՝ ինչու՞ եք էսպես կարմիր քամիներ բորբոքում մեր շուրջ, ինչու՞ եք մեզ տագնապի ու խռովքի մատնում, ու՞ր մնաց ձեր հոգու ազնվությունը, թե՞ արդեն դուք մոռացել եք, թե դա ինչ է… */Դադար/* Տեր Աստված, քիչ է մնում շնչահեղձ լինեմ… Էս ի՞նչ է փոթորկվում իմ ներսն ու խեղդում ինձ…

Գնամ, գնամ էստեղից, թե չէ կարմիր քամին ինձ կսպանի էստեղ… */Փութկոտ իրենից անջատում է կաթիլայինը, հիվանդանոցային հագուստը հանում ու հագնում քաղաքացիական-սեփականը եւ դուրս գալիս, ապա նույն աճապարանքով վերադառնում է սենյակ եւ վերցնում հեռախոսը/:* Ամեն ծանր հիվանդություն իր բուժամիջոցն ունի, էդ մենք չգիտենք, թե՝ որն է, որովհետեւ լավ չենք փնտրում… Եթե մենք չգտնենք բալասանը, կարմիր քամին կոչնչացնի մեզ հերթով եւ խումբ առ խումբ, բոլորիս… Կարմիր քամին վարակիչ հիվանդություն է, զգուշացեք… Լուսի՜կ, Մարգո՜, առաջինը ձեզ եմ ասում՝ զգուշացե՛ք, կարմիր քամին վարակի՜չ է… */Դուրս է գալիս, ապա շտապ վերադառնում/:* Իսկ մեզ սովորեցրել են, չէ՞, որ վարակներից նախեւառաջ պիտի պաշտպանվել մաքրությամբ. մաքուր ձեռքե՛ր, մաքուր մարմի՜ն, մաքուր հոգի՜… Գնամ, գնամ իմ տունը, էնտեղ կարմիր քամի չկա: */Դուրս է գալիս: Հեռվից լսվում է նրա ձայնը/.* Մաքուր մարմի՜ն, մաքուր հոգի՜…

ՎԵՐՋ

նոյեմբեր, 2018թ.

ՄԻՆԻԴՐԱՄԱՆԵՐ

ԳՈՂԸ ԵՎ ԲԼՈԳԵՐԸ
ՄԵԿԸ, ՈՐ ՅՈԹ ԱՐԺԵ
ԴԱՏԱՐԿ ԹՌՉՆԱՎԱՆԴԱԿՆԵՐ
ԴՐԱԽՏՈՒՄ ԱՐՏԱՍՎՈՂԸ
ՄԱՐԴՈՒ ԳՐՊԱՆՈՒՄ

ԳՈՂԸ ԵՎ ԲԼՈԳԵՐԸ

Գործող անձինք.

Բլոգեր՝ մոտ 30 տարեկան
Գող՝ մոտ 40 տարեկան

/Բարձր թփուտի մեջ թաքնված բլոգերը տեսախցիկով նկարահանում է հեռվում՝ կամրջի բարձրադիր երկաթե հենաձաղի վրա կանգնած մարդուն. թվում է՝ վերջինս պատրաստվում է ինքնասպանության: Բլոգերն անհամբերությունից ձակատի վրա գոյացող քրտինքն է սրբում եւ մենախոսում/.

ԲԼՈԳԵՐ- Դե, ցատկիր, ցատկիր, շան որդի, ի՞նչ ես նազուտուզ անում... Որոշել ես ինքնասպանություն գործել՝ ցատկիր ուրեմն... Արդեն կես ժամից ավելի քո ցատկին եմ սպասում... Բլոգումս ցնցող տեսանյութերի իսկական դեֆիցիտ է, վաղուց նման բան չէր եղել: Մի շաբաթ է՝ ինքնասպանության, սպանության, բռնաբարության կադրեր չունեմ. բախտը երես է թեքել ինձնից... Բլոգս դիտողների թիվը կտրուկ նվազել է: Ես ո՞ւմ եմ պետք առանց ցնցող տեսանյութերի... Ինձ դրանցով են գնահատում, ես դրանցով եմ վաստակում... Ես իմ տեսակի մեջ լավագույն բլոգերն եմ աշխարհում: */Լռություն/* Ի՞նչ... փոխանակ ցատկի՝ հիմա էլ հեռադիտակով է նայում... Ու՞մ է նայում... Գուցե՞ նկատել է ինձ... Չէ, ոնց որ թե հեռու տեղեր է զննում... կամ ինչ-որ մեկին է հետեւում... Չէ՜, սրա մտքին ինքնասպանության ցանկություն չկա, էսքան էլ զուր ժամանակ կորցրի: */Դադար/* Իջնում է... թյու, ես քո մերը... Գնում է... գնա-գնա, ուրիշը կգա, սիրտս վկայում է, որ էսօր մեկնումեկը իրեն կամրջից ցած կնետի... ինքնասպանության համար հարմար օր է, սիրտս է վկայում: */Անջատում է տեսախցիկը, վառում ծխախոտն ու նստում/:* Ես իմ դիրքերը չեմ զիջի... ուրիշ շշմե-

ցուցիչ սյուժեներ կգտնեմ, նոր ու ցնցող բաներ, հիմա դրա ժամանակներն են: Ես իրավունք չունեմ ժամանակից հետ մնալ:

/Հետեւից հայտնվում է Գողը, ով ատրճանակը ուղղելով Բլոգերի վրա՝ չոր հրամայում է/.

ԳՈՂ- Վեր կաց, ձեռքերդ դիր ծոծրակիդ եւ դանդաղ շուռ արի իմ կողմը... */Բլոգերը անակնկալի եկած՝ բերանից բաց է թողնում ծխախոտը եւ ճշտորեն կատարում Գողի հրամանը/:* Էս ինչո՞վ ես զբաղված, ընկեր... */Քմծիծաղով/* Ինձ էիր նկարահանում, հա՞... Կարծում էիր՝ ինքնասպանություն՞ պիտի գործեմ... Ուզում էիր սեփական մա՞հս նկարել... Ինչու՞... Պատասխանիր առանց ստելու, տանել չեմ կարող սուտասան մարդկանց, նրանց վրա հաճույքով կրակում եմ... Դե ասա, ի՞նչ նպատակով ես էստեղ թաք կացել տեսախցիկով...

ԲԼՈԳԵՐ */կմկմալով/*- Ուզում էի... ինքնասպանություն տեսանկարել...

ԳՈՂ- Որ ի՞նչ անես... Հա, զուր էլ հարցնում եմ, կմտածես՝ անտեղյակ միամիտի մեկն եմ... Որ նկարածդ յութուբ-մութուբ խցկես, չէ՞... */Բլոգերը գլուխը կախ լռում է/:* Դե, մի ամաչիր, հաստատիր ասածս, կամ հերքիր... Պարզ խոսիր, դու ամաչկոտներից չես:

ԲԼՈԳԵՐ- Հա... ճիշտ եք:

ԳՈՂ- Քաղաքավարի ես, հետս դուքով ես խոսում. ճիշտ ես անում, ես՝ որպես գող, շատ ավելի հարգանքի եմ արժանի, քան դու... Ես ընդամենը գողանում եմ, էն էլ՝ խոշոր գողերից, իսկ դու ուրիշների մահերով շուռներ ես սարքում ու փող ձեռք գցում. արյունոտ, կեղտոտ փողեր են... Դու մտածե՞լ ես, որ քո էդ այլանդակ գործով ինքնասպանություն ես քարոզում... մարդկանց մոտ մութ բնազդներ ես արթնացնում... Մտածե՞լ ես էդ մասին...

ԲԼՈԳԵՐ- Չէ...

ԳՈՂ- Դու շատ կարճամիտ մարդ ես, քո մտքին միայն քո հիմար շուռն է... մտքիդ միայն փողն է: Հիմա ի՞նչ անեմ քեզ հետ...

ԲԼՈԳԵՐ- Բաց թող ինձ... խնդրում եմ... Ինձ մի սպանիր... այլեւս էս գործով չեմ զբաղվի: Կարող ես քեզ վերցնել տեսախցիկը...

/Գողը վերցնում է տեսախցիկը/:

ԳՈՂ- Ես, միեւնույն է, պիտի բռնագրավեի հանցանքի քո գործիքը... */Մի պահ մտածում է/:* Հիմա դու կգնաս ու կկանգնես էնտեղ, որտեղ քիչ առաջ ես էի կանգնած...

ԲԼՈԳԵՐ */վախեցած/*- Ինչու՞...

ԳՈՂ- Դու կցատկես էնտեղից, իսկ ես կնկարահանեմ:

ԲԼՈԳԵՐ- Չէ-չէ, ի սեր Աստծո, ինձ մի պարտադրիր նման բան անել, ես

մեռնել չեմ ուզում… դու ինձ սպանության ես հարկադրում:

ԳՈՂ- Ոչ ոք չի ուզում մեռնել, անգամ ինքնասպանները: Նրանք մինչեւ վերջին վայրկյանը սպասում են, թե ով կկանգնեցնի իրենց…

ԲԼՈԳԵՐ- Որտեղի՞ց գիտեք…

ԳՈՂ- Ես մինչեւ գող դառնալս մի երկու անգամ փորձել եմ ինքնասպան լինել…

ԲԼՈԳԵՐ- Եվ ձեզ օգնությա՞ն են եկել…

ԳՈՂ- Հա, բախտս բերել է:

ԲԼՈԳԵՐ- Հիմա այլեւս նման ցանկություն չի՞ ծագում ձեր մեջ…

ԳՈՂ- Ինքնասպանությա՞ն… */Ծիծաղում է/* Չէ, բնավ: Ես ինքս կանխում եմ ուրիշների փորձերը:

ԲԼՈԳԵՐ- Իսկ էն ժամանակ ինչու՞ էիք ուզում ցած նետվել…

ԳՈՂ- Շատ թշվառ վիճակում էի… պարտքերի մեջ էի խրված…

ԲԼՈԳԵՐ- Հիմա լա՞վ է ձեր վիճակը…

ԳՈՂ- Ավելի քան լավ… պարզապես նախանձելի:

ԲԼՈԳԵՐ- Իսկ ինչու՞ էիք կանգնել կամրջի բարձր հենաճաղին… Իսկապես կարծում էի, թե ուզում եք ինքնասպան լինել…

ԳՈՂ- Մի ժամանակ հենց էդ կետից էի ուզում ցած նետվել… Հիմա դա իմ լավագույն դիտակետն է:

ԲԼՈԳԵՐ- Դուք հեռադիտակով կարծես թե ինչ-որ բան էիք փնտրում…

ԳՈՂ- Հաստատ ոչ քեզ… պատահաբար աչքովս ընկար: Ես Գետափի շքեղ առանձնատներն էի ուսումնասիրում… Մի հոյակապ նոր պլան ունեմ:

ԲԼՈԳԵՐ- Գողությա՞ն…

ԳՈՂ- Խոշոր ու տեղին կողոպուտի… Շարքային գողությունից խիստ տարբեր բան է. իմ գործերը խորը բովանդակություն ունեն… Էդ տները, որ ասում եմ, արժանի են կողոպուտի, ինքդ գիտես:

ԲԼՈԳԵՐ- Հա:

ԳՈՂ- Կուզե՞ս մասնակցել… Այ, թույլ կտամ դա նկարահանել…

ԲԼՈԳԵՐ- Դուք ինձ ուզում եք գո՞ղ դարձնել…

ԳՈՂ- Ավելի լավ է լինել ինձ նման գող, քան քեզ նման… քեզ նման… սինլքոր… */Դադար/* Լավ, եթե սրտովդ չէ առաջարկությունս, կարող ես հրաժարվել… Գնա, ցցվիր իմ դիտակետում: */Ատրճանակը մոտեցնում է նրան/:*

ԲԼՈԳԵՐ- Եթե ուզում ես ինձ սպանել, ավելի լավ է սպանիր էստեղ, ես կամրջից ցած չեմ կարող նետվել… ես շատ եմ վախենում բարձրությունից… Ես ի վիճակի չեմ ինքնասպանության:

ԳՈՂ- Ցած նետվել պետք չէ. մի քանի րոպե կկանգնես էնտեղ, ես կգամ

ու քեզ, իբր համոզելով, կիջեցնեմ… որպես մտափոխ ինքնասպանի… Էդ ամբողջը կնկարահանենք, հետո տեսանյութը կդնենք համացանցում:

ԲԼՈԳԵՐ- Չէ-չէ, նման բան մի արեք, խնայեք ինձ:

ԳՈՂ- Բայց ես պետք է քեզ պատժեմ որեւէ ձեւով… Եթե չպատժեմ, դու շարունակելու ես քո հիմար օյինբազությունները: */Դադար/* Գնա կանգնիր կամրջի հենաձաղին…

ԲԼՈԳԵՐ */գոռում է/*- Ո՞չ…

ԳՈՂ- Գոռալով չէ:

ԲԼՈԳԵՐ */դժվարությամբ զսպելով իրեն/*- Գիտեմ: */Լռություն/:* Լավ, համաձայն եմ… ձեր մյուս առաջարկությանը…

ԳՈՂ- Այսինքն՝ վերջնական ընտրությո՞ն կատարեցիր…

ԲԼՈԳԵՐ- Հա, մասնակցում եմ ձեր կողոպուտին… եւ նկարահանում եմ:

ԳՈՂ- Լավ:

ԲԼՈԳԵՐ- Էդ կադրերը կդնենք յութուբում, չէ՞…

ԳՈՂ- Տեսնենք…

/Գողն ու Բլոգերը ցածրաձայն ինչ-որ բան են պայմանավորվում, ապա երկուսով հեռանում են/:

ՎԵՐՋ

մարտ, 2019



ՄԵԿԸ, ՈՐ ՅՈԹ ԱՐԺԵ

Գործող անձինք.

Ճարտարագետ
Գործարար
Անցորդներ

/Ճարտարագետն ու Գործարարը պանդոկում գարեջուր են խմում/:

Գործարար- Ի՞նչ եղավ քո նոր նախագիծը...

Ճարտարագետ- Տնօրենների խորհուրդը մերժեց:

Գործարար- Բայց հոյակապ, հեռանկարային գաղափար էր, քեզ նման ճարտարագետի նախագիծը ո՞նց կարելի է մերժել... Ձեր ընկերությունը կարգին շահույթներ կստանար...

Ճարտարագետ- Գործարար ես, ու քո մտքում միայն շահույթն է... Հիշիր, ընկեր, միշտ չէ, որ մարդիկ առաջնորդվում են շահախնդրությամբ:

Գործարար- Հապա ուրիշ ինչո՞վ...

Ճարտարագետ- Մարդիկ ավելի շուտ հարմարվող, վախկոտ ու անբարո են՝ ի վնաս իրենց իսկական օգուտի ու շահի:

Գործարար- Դու էլի խտացնում ես գույները... Ազնիվ, բարոյական ու օրինավոր մարդիկ շատ կան:

Ճարտարագետ- Քիչ են... Երեւի 7-ից հազիվ մեկը...

Գործարար- Համամիտ չեմ, գոնե ասա՝ երկուսից մեկը:

Ճարտարագետ- Ոչ, 7-ից մեկը: Արի գրազ գանք... Հազար դոլար:

Գործարար- Համաձայն եմ, թող գրազ լինի: */Իրար ձեռք են սեղմում/:* Բայց ո՞նց կապացուցես...

Ճարտարագետ- Գնացինք:

/Դուրս են գալիս պանդոկի ետնաբակ/:

Ճարտարագետ */Գրպանից հանում է ատրճանակը/*- Հիմա մենք էսպիսի մի ստուգիչ թեստ կանենք. դու նստիր գետնին, իսկ ես իբր կամենում

եմ քեզ սպանել… Դու քեզ պահում ես իմ գերու պես… կամ՝ պատանդի, ոնց կուզես:

Գործարար- Էդ ի՞նչ ատրճանակ է, հո մարտական չէ՞… լիցքավորված…

Ճարտարագետ- Մի վախեցիր, գազով ատրճանակ է, մոտս միշտ պահում եմ, ինքնապաշտպանության համար:

Գործարար- Պարզ է:

Ճարտարագետ- Ուրեմն, երբ անցորդ հայտնվի, քեզ վրա կգոռամ՝ «Հիմա շանսատակ կանեմ, շան որդի…» Չնեղանաս… եւ ատրճանակի փողը կսեղմեմ գլխիդ: Տեսնենք՝ անցորդները ոնց կարճագանքեն…

Գործարար- Լավ:

/Գործարարը նստում է գետնին: Մի փոքր սպասում են: Հայտնվում է առաջին անցորդը՝ մոտ 40 տարեկան մի տղամարդ/:

Ճարտարագետ */Գործարարի քունքին մոտեցնելով ատրճանակը/*- Կսատկացնեմ քեզ, շուն-շան որդի… */Աչքի տակով նայում է անցորդին: Վերջինս ճողոպրում է/:* Տեսա՞ր… Սա՝ մեկ:

Գործարար- Մի շտապիր… Դեռ մինչեւ 7-ը պիտի հասնես:

Ճարտարագետ- Ծուտով կհասնենք:

/Քիչ անց հայտնվում են երկու կին: Ճարտարագետը դեռ չհասցրած իր խոսքն ասել Գործարարին, կանայք ճչալով փախչում են հեռու/:

Գործարար- Կանայք է՞լ են հաշիվ էս փորձի մեջ…

Ճարտարագետ */ծիծաղելով/*- Անշուշտ, նրանք էլ մարդիկ են, եւ շատ ավելի խոսուն:

/Տեսարանը, նույնօրինակ խոսքերով, կրկնվում է եւս երեք անգամ. նոր անցորդներից մի պատանի ու երիտասարդ, հերթով արագ անհետանում են՝ չտեսնելու տալով միջադեպը: Վեցերորդ անցորդը՝ միջին տարիքի մի տղամարդ, տեսնելով զինված Ճարտարագետին ու Գործարարին, մի պահ կանգնում, երկմտում է՝ մոտենա՞լ նրանց, թե՝ չէ. ի վերջո նա ձեռքը թափ է տալիս ու հեռանում: Յոթերորդ անցորդն է հայտնվում՝ մոտ 70 տարեկան մի տղամարդ/:

Ճարտարագետ */Գործարարի քունքին մոտեցնելով ատրճանակը/*- Կսատկացնեմ քեզ, շան որդի… կեղտոտ կենդանի… հիմա կկրակեմ գանգիդ… */Աչքի տակով նայում է անցորդին: Վերջինս մի պահ հապաղում է, ապա վճռական մոտենում է Ճարտարագետին ու Գործարարին/:*

Անցորդ մարդ- Չկրակես, ընկեր, մարդուն մի սպանիր… թող նրան… սպանել պետք չէ, մեծ սխալ գործած կլինես:

Ճարտարագետ- Բայց քո ի՞նչ գործն է, բիձուկ… Կորիր էստեղից: */Ատրճանակը ուղղում է նրա վրա/:*

Անցորդ մարդ- Մարդը հավի ճուտ չէ, որ հեշտությամբ սպանեք՝ դեն

նետեք… Մեղք է մարդ սպանելը, Աստծու ստեղծածն է: Մի սպանիր:

Ճարտարագետ- Քարոզ մի կարդա գլխիս, ասացի՝ կորիր աչքիցս: */Գոռում է/.* Կորիր, թե չէ քեզ էլ կսպանեմ, սրան էլ…

/Անցորդ մարդը ընկրկում եւ ետ-ետ է գնում: Հեռանալով՝ բարձր կանչում է/.

Անցորդ մարդ- Ոստիկանությունն… ոստիկանությունն…

Գործարար */վեր կենալով/-* Հա… յոթից մեկը իմ կյանքն ուզեց փրկել:

Ճարտարագետ- Համոզվեցի՞ր… ընդամենը յոթից մեկը:

Գործարար- Դա վատ ցուցանիշ է, չէ՞…

Ճարտարագետ- Ընդհանրապես՝ ոչ: Աշխարհը էդ յոթից մեկերի վրա է կանգնած… դեռ կանգնած է: Հիմա դու մտածիր գրազդ տալու մասին:

Գործարար- Կտամ… վաղը:

Ճարտարագետ- Իսկ նկատեցի՞ր՝ միայն ամենատարեցը հանդգնեց մեզ խանգարել…

Գործարար- Հա, ինչու՞… Որ կյանքն ապրել է արդեն եւ կորցնելու ոչինչ չունի՞, թե՞ իր հումանիստական դեմքն էր ուզում ցույց տալ…

Ճարտարագետ- Ամեն տարիքում կյանքը քաղցր է… Էդ բիձուկը էդպես կվարվեր նաեւ երիտասարդ տարիքում:

/Թեթեւ աշխուժությամբ վերապատմելով կատարվածը՝ հեռանում են: Լսվում է մոտեցող ոստիկանական մեքենայի ազդանշանը/:

ՎԵՐՋ

մարտ, 2019

ԴԱՏԱՐԿ ԹՌՉՆԱՎԱՆԴԱԿՆԵՐ

Գործող անձինք.

Թռչնավաճառ
Թռչնապաշտպան
Երիտասարդ կին
Տղա երեխա՝ ութ տարեկան

/Թռչնավաճառը իր խանութում, սեղանին գլխահակ՝ խոմփացնում է: Անշշուկ ներս է մտնում Թռչնապաշտպանը եւ բացելով առաստաղից կախված վանդակները՝ թռչուններին հերթով վերցնում ու պատուհանից ազատ է արձակում: Վերջացնելով իր գործը՝ Թռչնապաշտպանը լռելյայն, ոտնաթաթերի վրա հեռանում է: Դատարկ թռչնավանդակները ճոճվում են, եւ այդ պատկերը պահպանվում է ողջ ներկայացման ընթացքում: Թռչնավաճառը արթնանում է, ոտքի կանգնում եւ կիսանինջ մենախոսում/.

ԹՌՉՆԱՎԱՃԱՌ- Էս ի՞նչ քաղցր քնով ընկա... Էս ի՞նչ խաղաղ ու հանգիստ է մեզ մոտ... */Շուրջն է նայում, տեսնում դատարկ թռչնավանդակները եւ սթափվում/.* Տեր Աստված, էս ի՞նչ է... ու՞ր են թռչուններս... */Մոտենում է դռնբաց վանդակներին՝ ցավագին բացականչելով/.* Սոխակնե՞րս... թութակնե՞րս... դեղձանիկնե՞րս... արտույտնե՞րս... կեռնեխնե՞րս... խաչկտուցնե՞րս... սերինոսնե՞րս... ամուրիկնե՞րս... սարյակնե՞րս... Մեկն անգամ չի մնացել... */Դադար/* Նա է, նա է էս տմարդությունը գործել, հաստատ նա է... Բոլորին թռցրել է էդ սրիկան... Հիմար, տխմար... */Թութակի պես կրկնում է՝ հիմար, տխմար... հիմար, տխմար: Նկատելով ներս մտնող երիտասարդ կնոջն ու նրա որդուն, անմիջապես լռում է/:*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԻՆ- Բարեւ ձեզ, պարոն: Եկել ենք տղայիս համար երկու դեղձանիկ եւ երկու թութակ գնելու, երեկ պայմանավորվել ենք ձեզ հետ:

ԹՌՉՆԱՎԱՃԱՌ */տխրագին/*- Ցավում եմ, տիկին… չկա ոչ դեղձանիկ, ոչ թութակ… ոչինչ չկա… Բոլորին թռցրել են. տեսնո՞ւմ եք դատարկ վանդակները…

/Կինը եւ երեխան զարմանքով նայում են դատարկ վանդակներին/:

Ե.ԿԻՆ- Ինչպե՞ս թե… ո՞վ է թռցրել…

ԹՌՉՆԱՎԱՃԱՌ- Էն կեղծավոր ու անիծյալ Թռչնապաշտպանը… Ինձ զգուշացրել էր, բայց ես չէի հավատում, որ կհանդգնի նման բան անել… Քիչ առաջ քնով էի անցել, եկավ ու արձակեց թռչուններին: Ասում է՝ */նմանակելով/* նրանք պետք է ազատ ապրեն բնության մե՛ջ… */Հայրագին/* Հիմար, տխմար… Ախր էդ փոքրիկ, հեզ թռչունները դրսում երկար չեն դիմանա, գիշատիչները անմիջապես նրանց վերջը կտան… Էլ արծիվ ու բազե, էլ գիշանգղ ու ուրուր, էլ մարդ ու գել… Էստեղ գոնե ապահով է նրանց համար… Գիտե՞ք, տիկին, էս թռչունները */ձեռքով ցույց է տալիս բաց վանդակները/* տներում, լավ խնամքի դեպքում, ապրում են մինչեւ 25 տարի, իսկ վայրի բնության մեջ նրանց կյանքը ավելի կարճ է:

Ե.ԿԻՆ- Իրո՞ք, դա ես չգիտեի… Ուրեմն 25 տարի նրանք մարդկանց ուրախություն են պատճառում նրանց բնակարաններում… Երեւի նաեւ իրենք են ուրախանում…

ԹՌՉՆԱՎԱՃԱՌ- Այո, տիկին: Եվ եթե մարդը ուրախ է, նա բնությանը շատ քիչ վնաս է պատճառում, թռչուններին՝ նույնպես. Թռչնապաշտպանը դա չգիտե:

Ե.ԿԻՆ- Դրսում թութակի ու դեղձանիկի ձայն հազվադեպ կլսես… Էլ չեմ ասում, որ նրանց տեսնելը գրեթե անհնար է:

ԹՌՉՆԱՎԱՃԱՌ- Ճշմարիտ եք, տիկին, հազվադեպ կլսեք ու կտեսնեք նաեւ սոխակներին, ամուրիկներին, խաչկտուցներին, սերինոսներին… հազարավորներին: Նրանց երեսն անգամ չեք տեսնի: */Ներողամտորեն/* Տիկին, եկեք… մի տաս օրից, ես նոր թռչուններ կունենամ:

/Երեխան սկսում է լացել/:

ՏՂԱ ԵՐԵԽԱ- Ես հիմա եմ ուզում… դեղձանի՛կ… թութա՛կ… հիմա՛…

Ե.ԿԻՆ- Տեսնո՞ւմ եք, պարոն, նա հիմա է ուզում, նա տաս օր չի համբերի:

ԹՌՉՆԱՎԱՃԱՌ */շփոթված/*- Մի վայրկյան, հիմա… */Վերցնում է ազատված երկու թռչնավանդակ եւ մեկնում երեխային ու մորը/:* Ահա, վերցրեք… դեղձանիկների ու թութակների վանդակներն են, նվիրում եմ… Շուտով թռչուններն էլ կգան… հեռվից կչվեն ու կգան մեզ մոտ: Դու շուտով կտեսնես նրանց, բալիկս: */Վանդակներից մեկը վերցնում է Ե.Կինը, մյուսը՝ երեխան. վերջինս լացը գրեթե կտրում է: Թռչնավաճառը շոյում է տղայի գլուխը/:* Ապրես:

Ե.ԿԻՆ */սեթեւեթանքով/*- Ժամանակավորապես շնորհակալ ենք… Պա-

րոն, իսկ ո՞վ է էդ Թռչնապաշտպան կոչվածը… երեխիս լացացրեց… չէ՝ դժբախտացրեց: Դուք էդ ավազակի հասցեն գիտե՞ք, պարոն…

ԹՌՉՆԱՎԱՃԱՌ- Անշուշտ: */Թղթի վրա գրառում է կատարում եւ տալիս Ե.Կնոջը/.* Ահա… Իսկ ի՞նչ եք մտադիր անել, տիկին…

Ե.ԿԻՆ- Ես էդ սանձարձակին դատի կտամ երկու հոդվածով. նախ, որ վնասել է ուրիշի սեփականությունը, եւ հետո, որ ցավ է պատճառել որդուս: Ձեր նյութական վնասը կհատուցի, իսկ մեզ բարոյական վնասի փոխհատուցում կտա… մեկ միլիոն դրամ. իմ երեխայի լացը այսօր արժե մեկ միլիոն դրամ, առնվազն… Ցտեսություն ձեզ, պարոն: Դուք նոր դեղաձնիկներ ու թութակներ ձեռք բերեք, մենք անպայման կգնենք: Մենք ձեր հավատարիմ հաճախորդն ենք: Գնանք, Վարուժանիկ: */Երեխայի ձեռքը բռնած՝ դուրս է գալիս/:*

ԹՌՉՆԱՎԱՃԱՌ */Խոսում է նրանց հետեւից/*- Մի քանի օրից կստանամ էդ թռչնակներին, համեցե՛ք, տիկին… Շնորհակա՛լ եմ… Նստացրե՛ք նրան՝ էդ Թռչնապաշտպան կոչվածի՞ն… */Ապա՝ ինքն իրեն/.* Հիմար… տխմար… հիմար… տխմար… */Մոտենում է դատարկ թռչնավանդակներին եւ դրանց ճոճումը հերթով արագացնում: Ապա վերադառնում է վաճառասեղանի մոտ եւ այնտեղից հետեւում վանդակների ճոճքին: Նկատելով, որ դրանցից մեկը դանդաղում է, նորից արագություն է հաղորդում «դանդաղկոտին»: Այս տեսարանը կարող է երկարել/:*

ՎԵՐՋ

մարտ, 2019

ԴՐԱԽՏՈՒՄ ԱՐՏԱՍՎՈՂԸ

Գործող անձինք.

Ուղեւոր՝ մոտ քառասնամյա տղամարդ
Աստված
Ադամ
Եվա

/Մութ բեմում չարագուշակ տարածվում են գահավիժող օդանավի աղմուկը եւ ուղեւորների աղաղակները: Լսվում է օդանավի ծանր ու պայթուցիկ հարվածը գետնին, ապա տիրում է լռություն: Բեմը լուսավորվում է: Գետնին պառկած է Ուղեւորը՝ սկզբում անշարժ, ապա հետզհետե կենդանության նշաններ է ցույց տալիս, եւ, ի վերջո, վերգտնում է գիտակցությունը/:

Ուղեւոր- Տեր Աստված, կարծես թե ողջ եմ մնացել... */Դժվարությամբ նստում, ապա եւ կանգնում է/:* Ես... կարծես թե նույնիսկ ջարդվածքներ չունեմ... */Շոշափում է մարմնի տարբեր մասերը/:* Հա, ողջ-առողջ եմ... փրկվել եմ: */Նայում է շուրջը/:* Ի՜նչ գեղեցիկ է... Ինչ-որ ծանոթ պատկեր է... Որտե՞ղ եմ ես... */Խոտոր շարժվում է՝ զմայլված տեսածով/:* Բայց ո՞ւր են մյուս ուղեւորները... Միայն ե՞ս եմ փրկվել... */Նկատում է հեռվում հայտնված Ադամին ու Եվային՝ մերկ մարմինների ամոթույքները թզենու տերեւներով ծածկած: Նրանք ակնապիշ մոտենում են Ուղեւորին/:* Դուք ովքե՞ր եք... Բայց, գրողը տանի... կարծես թե ես ձեզ ճանաչում եմ... Դուք... դուք...

Ադամ- Դու ճիշտ ես՝ մենք Ադամն ու Եվան ենք:

Եվա- Ամեն եկվոր միանգամից ճանաչում է մեզ:

Ուղեւոր- Այսինքն...

Եվա- Այսինքն՝ դու դրախտում ես... Դու հիմա դրախտի պարտեզում ես:

Ուղեւոր- Այսինքն... ես մեռած եմ... բայց ողջ եմ դրախտու՞մ... այո՞...

Ադամ- Չէ, դու ընդհանրապես ողջ ես: Դրախտից դուրս էլ ողջ կլինես:

Ուղեւոր- Բայց դա ինչպե՞ս է հնարավոր... Բոլոր ուղեւորները զոհվել են, միայն ե՞ս եմ փրկվել... Մի՞թե նման ավիաաղետից հետո հնարավոր է ողջ մնալ...

Ադամ- Դա Աստծո գործն է... Երեւի նա կամեցել է, որ դու փրկվես:

Ուղեւոր- Մենք թռչում էինք 11 հազար մետր բարձրության վրա, երբ մեր օդանավը հանկարծակի սկսեց գահավիժել... Ինչպե՞ս կարելի է նման անկումից հետո կենդանի մնալ... նույնիսկ ջարդվածքներ չստանալ...

Եվա- Ադամն ասաց, չէ՞, որ դա Աստծո գործն է... Աստված նման տարօրինակ ու անհասկանալի բաներ հաճախ է անում:

Ադամ */փոքր-ինչ խիստ տոնով/*- Եվա, ասել եմ, չէ՞, որ Աստծուն պետք չէ քննադատել:

Եվա- Բայց ես չեմ քննադատում, ես միան իմ անկեղծ կարծիքն եմ հայտնում:

/Մեկեն հայտնվում է Աստված/:

Աստված- Բարի օր, իմ արարածներ:

Ադամ եւ Եվա- Բարի օր, Տեր Աստված:

Ուղեւոր- Աստվա՞ծ... Բարի օր, բարի օր...

Աստված- Ադամ, հանգիստ թող Եվային, ես նրան թույլ եմ տալիս ազատ արտահայտվել, դա կնոջը պետք է... Ինչ մնում է մեր Ուղեւորին, ասեմ, որ նրան հենց այնպես չեմ փրկել. նա օդանավի 250 ուղեւորներից միակն էր, որ չէր աղաղակում, այլ մտքում միայն կրկնում էր՝ Տեր Աստված, փրկիր ինձ... Մյուսներն աղաղակում էին անիմաստ, կամ սատանային էին վկայակոչում... Ես աղետյալ օդանավից պիտի մեկին փրկեի, ընտրեցի նրան: */Մատնացույց է անում Ուղեւորին/:* Դե, ինչպե՞ս ես քեզ զգում...

Ուղեւոր- Լավ եմ... շնորհակալ եմ, Տեր Աստված, որ փրկեցիք կյանքս... Ինձ անգամ դրախտի արժանացրիք:

Աստված- Այո, դու արժանի ես դրան: Քեզ դրախտում մի ապարանք կնվիրեմ եւ այստեղ կվայելես քո հետագա կյանքը:

Ուղեւոր- Ի՞նչ... ես պետք է ցմահ մնամ դրախտու՞մ...

Աստված- Դու այստեղ մահ չունես, անմահ կլինես:

Ուղեւոր- Չե՜մ ուզում, Տեր Աստված, ինձ վերադարձրու Երկիր, թող ես շարունակեմ իմ երկրային կյանքը... */Ցույց տալով Ադամին ու Եվային/.* Չեմ ուզում այս ինքնասիրահարված զույգի ընկերակցությամբ հավերժ ապրել այստեղ...

Ադամ- Ինքնասիրահարվա՞ծ... */Նայում է Եվային/* Նա ճի՞շտ է ասում, Եվա...

Եվա- Այս մարդը */մատնացույց է անում Ուղեւորին/* խելառ է երեւում...

Եվ հետո՝ ինչու՞ ես ինձ հարցնում, Ադամ, դու քեզ նայիր… Մի՞թե իսկապես դու ինքնասիրահարված չես…

Ադամ- Երդվում եմ՝ ոչ:

Եվա- Ուրեմն՝ սիրահարված ես ի՞նձ… այո՞…

Ադամ */կմկմալով/*- Դե… ճիշտն ասած, դեռեւս չգիտեմ… */Դադար/* Մեր նոր եկվորը միանգամից մեզ ներքաշեց դժվար հարցերի մեջ… այսպես չի կարելի. նա չգիտե՝ դրախտն ինչ է…

Եվա- Կամ լավ գիտե՝ դրախտն ինչ է… եւ ինչ է երկիրը… Մեզնից հաստատ փորձառու է երեւում:

Աստված- Լռեք, Ադամ, Եվա, դուք անվերջ վիճում եք, ես ձեզ այդպես չեմ արարել: */Դառնալով Ուղեւորին/* Դու այստեղ չես ճանձրանա, ես քեզ էլ կին կնվիրեմ՝ գեղեցիկ, խելացի, կրակոտ… Ավելին, քան Եվան է:

Եվա- Տեր Աստված, մի՞թե…

Աստված- Լռիր, Եվա, քո խոսքերն անօգուտ են: */Ուղեւորին/* Դե, ի՞նչ կասես…

Ուղեւոր- Ես արդեն կին ունեմ՝ գեղեցիկ, խելացի, կրակոտ… */Աղերսագին/* Ինձ ետ ուղարկիր իմ երկիրը, Տեր Աստված, աղաչում եմ… */Սկսում է երեխայի պես հոնգուր-հոնգուր լացել ու արտասվել/:*

Աստված- Դե լավ, հանգստացիր… Տեսնում եմ՝ դու հաստատակամ ես քո տենչանքում:

Ուղեւոր */զսպելով լացը, լրջմիտ/*- Այո, Տեր Աստված, իմ կամքն անփոփոխ է, ինձ իմ երկրային կյանքն է պետք, առանց դրա ես այստեղ… կենդանի մեռյալ կլինեմ… Կենդանի մեռյալ՝ դրախտում:

Աստված- Այո, դա անպատվություն կլիներ դրախտին:

Եվա- Ասա, եկվոր, իսկ ի՞նչն է քեզ այդպես անկասելի ձգում երկրում… Ես ու Ադամը շատ կուզենայինք իմանալ այդ մասին:

Ուղեւոր- Ես այնտեղ եմ ծնվել ու մեծացել… Ես ինձ այնտեղ լիարյուն մարդ եմ զգում: Այնտեղ ես ընտանիք ունեմ՝ երեք երեխա, կին, տուն, շուն, պարտեզ…

Եվա- Դրախտի պարտեզից լա՞վն է քոնը…

Ուղեւոր */շուրջն է նայում/*- Չէի ասի… բայց այն իմն է, իմ տնկած ու խնամած պարտեզը… Հա, կինս ու երեխաներս էլ են խնամում, բայց՝ անկանոն:

Եվա- Երեխանե՛ր… Լսո՞ւմ ես, Ադամ…

Ադամ- Դե, մեր ընտանեկան տարաձայնություններն այստեղ մի բացահայտիր, Եվա: Ես քեզ հարյուր եմ ասել, որ երեխաների հարցը վերջնական կլուծենք, երբ Աստված մեզ դրախտում կացության մշտական իրավունք տա…

Ուղեւոր */հեգնանքով/*- Դուք դեռ դրախտի քաղաքացիություն է՞լ չունեք… Իսկ ինձ թվաց, թե դուք բնիկ տեղացի զույգ եք:

Աստված- Ադամ, Եվա, դրախտում մշտական կացության համար պետք է փորձաշրջանը հաջող անցնեք: Փորձաշրջանը դեռեւս ավարտված չէ, եւ ես լուրջ կասկածներ ունեմ, որ դուք այն հաջողությամբ կպսակեք…

/Ադամն ու Եվան հարցական նայում են իրար: Դադար/:

Ուղեւոր */նեղսրտված/*- Տեր Աստված, հիմա դուք ինձ բաց չե՞ք թողնում…

Աստված */մի պահ խորհելուց հետո/*- Բայց դու այստեղ շատ պետք ես, որդիս, ես արարչական նոր ու մեծ ծրագրեր ունեմ… նաեւ՝ քեզ հետ կապված:

/Լսելով Աստծո պարզաբանումը, Ուղեւորը մեկեն պոկվում է տեղից ու անհետանում/:

Եվա- Ո՞ր փախավ այդ մարդը… Ինչպե՞ս կարելի է փախչել դրախտից…

Ադամ- Փախավ իր տուն:

Աստված- Նա քաջ գիտե, թե ինչ սեր ու կիրք են իրեն առաջնորդում:

Ադամ- Դուք մտադիր չե՞ք նրան վերադարձնել մեզ մոտ, Տեր Աստված…

Աստված- Ոչ: Նա իմ լավագույն արարածներից է, ես նրա կամքը պետք է հարգեմ. ուրեմն՝ գնաս բարով ասենք նրան… Գնաս բարով, որդիս: */Ձեռքի մի շարժում է անում, եւ բեմը միանգամից մթնում ու առկայծումներով է լցվում, ապա լրիվ լուսավորվում է/:* Նա վերադարձավ իր աշխարհը, ես նրա համար շատ բարիք նախատեսեցի այնտեղ: */Դառնալով Ադամին ու Եվային/.* Իսկ ձեզ նորից եմ ասում՝ Կենաց ծառին ձեռք չտաք:

Ադամ- Լավ, Տեր Աստված… Լսեցի՞ր, Եվա…

/Աստված անհետանում է: Եվան երկիմաստ ժպիտով մոտենում է փոքրինչ հեռվում սոսափող Կենաց ծառին եւ երկար ու հմայված նայում դրան/:

ՎԵՐՋ

ապրիլ, 2019

ՄԱՐԴՈՒ ԳՐՊԱՆՈՒՄ

Գործող անձինք.

Գրպանատեր
Հարկահավաք
Գրպանահատ
Կին վերահսկիչ

/Բեմը ձեւավորված է գրպանի տեսքով: Այնտեղ թղթադրամի ու մետաղադրամի խորհրդանշական դեկորներ ու պատկերներ կան: Հարկահավաքը փութով խողովակներ է միակցում իրար: Հայտնվում է Գրպանահատը/:

Գրպանահատ */տեսնելով Հարկահավաքին, անակնկալի եկած/*- Դու ո՞վ ես... էդ ի՞նչ ես անում...

Հարկահավաք */նույնպես անակնկալի է գալիս/*- Ես... ես Հարկահավաքն եմ, իսկ դու ո՞վ ես...

Գրպանահատ- Ես էլ Գրպանահատն եմ: */Ծիծաղելով/* Ոնց տեսնում եմ՝ մենք կոլեգաներ ենք...

Հարկահավաք- Մենք ի՞նչ կոլեգա... Ես՝ Հարկահավաք, դու՝ Գրպանահատ:

Գրպանահատ- Բայց նույն գործին ենք, չէ՞... Կարծում ես՝ չկռահեցի՞, թե ինչ ես ձեռնարկել...

Հարկահավաք- Ի՞նչ...

Գրպանահատ- Մարդու գրպանից լեւի... իմա՝ ձախ գիծ ես քաշում քեզ համար... Իսկական գողություն: Կլասիկ:

Հարկահավաք- Միանգամից սկսեցիր վարկաբեկել ինձ, ասածներիդ համար պատասխան պիտի տաս:

Գրպանահատ- Եվ կտամ:

Հարկահավաք- Հասկացիր՝ պետության համար եմ քաշում, ինձ համար չէ, եւ հետո՝ սա ձախ գիծ չէ, այլ՝ օրինական: Ինձ հանձնարարել են պետական բյուջեի եկամուտներն ավելացնել, ես էլ ահա նոր գիծ եմ քաշում:

Գրպանահատ- Մարդու գրպանից նոր գիծ եք քաշում, որ ձեր աշխատավարձներն ու պարգեւավճարներն ավելացնեք:

Հարկահավաք- Նաեւ՝ մյուսների աշխատավարձները, թոշակները, նպաստները…

Գրպանահատ- Էդ հավաքագրումների ժամանակ էնքա՞ն բան եք մասհանում ձեզ համար… Ես ավելի ազնիվ եմ:

Հարկահավաք- Ինչո՞վ ես ազնիվ…

Գրպանահատ- Ես շատ ավելի քիչ բան եմ տանում մարդու գրպանից, ընդամենն էնքան, որ ընտանիքիս գոյությունը պահեմ, իսկ դուք ուղղակի կողոպտում եք մարդուն:

/Հայտնվում է Գրպանատերը: Ճանաչելով ներկաներին եւ նկատելով ձգվող խողովակաշարը՝ օրորում է գլուխը/:

Գրպանատեր- Տղերքը եռուն գործի մեջ են, հա՞… Հիմա էլ արդեն համատե՞ղ են գործում Հարկահավաքն ու Գրպանահատը…

Գրպանահատ- Չէ-չէ, եղբայր, ես էդ կողոպտիչ Հարկահավաքի հետ գործ չունեմ, պատահական հանդիպեցինք էստեղ:

Հարկահավաք- Մենք արդեն էսէմէսով հայտնել ենք ձեզ, պարոն Գրպանատեր, որ նոր հավաքագրումներ ենք անելու, խողովակաշարը դրա համար է:

Գրպանատեր- Բայց ձեր ասածից ավելի լայն խողովակաշար եմ տեսնում:

Հարկահավաք- Քո աչքին է էդպես երեւում…

Գրպանահատ- Հա, շատ մեծ խողովակաշար է: Երեւի նրանք որոշել են նոր դղյակներ գնել… գուցեեւ՝ էկզոտիկ կղզիներ…

Հարկահավաք- Չայնդ կտրիր, ողորմելի ջեբկիր:

Գրպանահատ- Ինքդ սսկվիր, մեծապատիվ կողոպտիչ:

Գրպանատեր - Դուք երեւի իրար ավելի լավ եք ճանաչում…

/Հայտնվում է Կին վերահսկիչը/:

Կին վերահսկիչ- Բարեւ ձեզ, պարոնայք… էս ի՞նչ խառնաժողով է ձեզ մոտ…

Գրպանատեր- Նոր խողովակ են քաշում իմ գրպանից:

Կին վերահսկիչ- Հա, հրահանգ կա վերեւից:

Գրպանահատ */քմծիծաղով/*- Իսկ դուք ինչու՞ եք մտել մարդու գրպան, տիկին, դու՞ք էլ եք թոցնողներից…

Կին վերահսկիչ- Ինձ մի վիրավորեք, ես վերահսկիչ եմ. եկել եմ ճշտելու, թե ով որքան է տանում…

Գրպանատեր- Հետաքրքի՞ր է… Դե, ասեք՝ հիմա ում որքան է բաժին հասնում…

/Կին վերահսկիչը զննում է առկա «դրամամիջոցները» եւ հաշվարկներ կատարում/:

Կին վերահսկիչ- 25 տոկոսը տանում է պետությունը, 2 տոկոսը գրպանահատը, 60 տոկոսը մնում է Գրպանատիրոջը…

Գրպանահատ- Տեսա՞ք՝ ամենաքիչը իմն է… Ես շա՜տ համեստ գող եմ:

Գրպանատեր */հեգնանքով/*- Հանձարեղ թվաբանությունն… Գուցե ասեք, տիկին վերահսկիչ, թե ձեր քողարկած 13 տոկոսը ում է բաժին հասնում:

/Կին վերահսկիչը ակնդետ նայում է Հարկահավաքին/:

Հարկահավաք- Ինչու՞ ես ինձ նայում… քեզ նայիր:

Կին վերահսկիչ- Դե… էդ 13 տոկոսը վերցնում են պետական պաշտոնյաները:

Գրպանատեր- Արդեն 13 տոկոսի են հասցրել, սրանց նայեք… Մինչեւ հիմա 10 տոկոս էր:

Գրպանահատ- Իսկ իմ բաժինը միշտ նույնն է մնում՝ 2 տոկոս: */Դադար/:*

Հարկահավաք- Ես մի առաջարկություն ունեմ. եկեք նոր վերաբաշխում անենք. իրոք, էնքան էլ արդար չէ էս վիճակը…

Գրպանատեր- Ի՞նչ վերաբաշխում…

Հարկահավաք- Մի րոպե, եկեք էստեղ… */Դիմում է Կին վերահսկիչին ու Գրպանահատին/.* Նախ, առանձին քննարկենք, հետո Գրպանատիրոջը ներկայացնենք մեր պայմանավորվածությունը: */Երեքով մի կողմ են քաշվում եւ ցածրաձայն ու բուռն քննարկում, մեկ-մեկ լսվում են նրանց արտահայտած որոշ թվեր ու բառեր՝ «10… 2, 11… 65… քիչ է, շատ է»/:*

Գրպանատեր- Համբերությունս սպառվեց… */Գրպանից հանում է ատրճանակը եւ մոտենալով՝ այն ուղղում է եռյակի վրա/.* Կորեք աչքիցս, թե չէ բոլորիդ շանսատակ կանեմ, կորեք… Իմ գրպանում դուք միայն փողն եք տեսնում. աչք ունեցեք ու տեսեք, թե էնտեղ որքան տառապանք, տանջանք, հուսախաբություն ու հիասթափություններ կան… Բա դրանք ինչու՞ չեք ուզում բաժանել բոլորի հետ… Կորեք, գիշատիչ շահամոլներ: */Հարկահավաքը, Գրպանահատը եւ Կին վերահսկիչը վախեցած հեռանում են: Գրպանատերը նայում է դրամական դեկորներին ու պատկերներին, հոգոց հանում/.* Դու իմ կյանքը դժոխքի ես վերածել, փող, անիծյալ փող… դժոխք… փողի դժոխք… */Ոտքով հարվածում է դեկորներին, պատռում պատկերները, ապա ատրճանակը թափահարում է հեռացածների հետեւից/:* Թողեք գոնե ինքս բաշխումը կատարեմ, գողեր… հափշտակիչներ… Թողեք ձեզ բան տալու եւ կարեկցելու թեկուզ մի փոքրիկ ցանկություն մնա մեջս… թողեք…

ՎԵՐՋ

ապրիլ, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴՐԱՄԱՆԵՐ 5
Գիշերային դեղատուն 6
Մխիթարված խենթը 50
Դարպասի մոտ նստած գայլը 98
Արամազդի յոթերորդ գալուստը 122
Ապոլոնը Բեւեռային պողոտայում 162
Վերակենդանացում կամ՝ ում նվիրել սիրտը 194
Նաիրյան հրեշտակներ 226
Տիրան. ոսկեբերան այրը 260
Արքան եւ հերոսները 294
Կառափնարանին իջած աղավնին 330

ՄՈՆՈԴՐԱՄԱՆԵՐ 359
Ես տեսնում եմ ձեզ… 360
Այդքան մենակ մի եղիր 370
Կարմիր քամի 379

ՄԻՆԻԴՐԱՄԱՆԵՐ 389
Գողը եւ բլոգերը 390
Մեկը, որ յոթ արժե 394
Դատարկ թռչնավանդակներ 397
Դրախտում արտասվողը 400
Մարդու գրպանում 404

ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԹԱՏԵՐԱԽԱՂԵՐ

Սրբագրիչ՝ Թ. Մաթեւոսյան
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Գծանկարները՝ Ռ. Պետրոսյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա. Խաչատրյանի

www.vogi-nairi.am
Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.: +374 97252323

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափը՝ 70x108 1/16:
Ծավալը՝ 25.5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 300:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան, 25